



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

12 SEP 2013

891-99-82

4-93

13 APR 2011

# Վ Տ Ա Կ

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

...Մշտադալար ուրիշեր  
Աստ ծոցի մէջ քո ջըրնը՝  
Ճկուն ուսմն ու տերև  
Թող թաց աննն տապ օրին՝...  
Գ - Տ - Ա - Կ - Բ - Ի - Ղ - Ի

1002  
8921

Խմբագրութիւնը

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Կ. Մարտիրոսյանցի

Орбелиановская ул., № 1-2

ТИФЛИСЬ

Типография К. Мартиросянца

1901



731-89

53 40210 3  
50 51



**Խմբագրութեան կողմից**

Այս ժողովածուին մասնակցելու կոչին պատասխանեցին գրեթէ բոլոր հայ յայտնի գրողները: Հայկական ժամանակակից ինքնուրոյն գրականութեան արդիւնքի մի հաւաքածու է, որ դնում ենք հրապարակի վրայ: Այստեղ իրանց լուծման նւիրել են հայ նահապետ-գրողից սկսած՝ մինչև ամենանոր, լուսին սկսնակ, բոլոր յուսատու հեղինակները:

Ժողովածուի նպատակի մասին խօսել հարկ չենք համարում. այդ պարզ է և ամենքին յայտնի: Եւ, շատ ուրախ ենք, որ բոլոր մեր գրողները ձեռք ձեռքի են տալիս այս ժողովածուի մէջ՝ մի աւելի բարձր նպատակի համար:

Մեր կոչին՝ քիչերն եղան, որ չը պատասխանեցին: Ինչ պատճառներով որ նոքա չը կամեցան աշակցել ձեռնարկին, այնուամենայնիւ, սիրում ենք յուսալ, որ սրտով մօտ են և համակրում են այս գործին:

Ձնորհակալութիւն բոլորին:

Վ. Փ.

1901. Մոսկվա.

Дозволено цензурою  
С.-Петербургъ, 22 марта 1901 года.

17th Nov 1790

Dear Sir

I have the honor to acknowledge the receipt of your letter of the 14th inst. in relation to the above mentioned business. I am sorry to hear that you are not well, and I hope that you will soon be able to attend to your affairs. I have been thinking of writing to you for some time, but have been so busy that I have not had time to do so. I am, Sir, your obedient servant.

I am, Sir, your obedient servant.

Yours faithfully,  
J. M. M.

*Faint handwritten text at the top of the left page.*

*Faint handwritten text in the middle of the left page.*

*Large block of very faint handwritten text covering the lower half of the left page.*

**U B U 6 E A E Q P 6**

\* \* \*



ենք միասին դնում էինք ճանապարհ.  
Դու վաստակած՝ յանկարծ վհատ կանգ առար...

Դու ասացիր. «Տես, երկիրքն էլ մթազին

Գու փոթորիկ է պատրաստում մեր գլխին»:

Բարդ-բարդ ամպեր թող կուտակին՝ թանձրանան,  
Ըմպրոպ ճալթի, շանթեր փայլին մեր վրան.

Չը վհատինք, և միշտ յառնջ անվրդով—

Գիտեմ, ընկեր, տեղ կը հասնենք արևով:

Եւ մենք հասանք, անցանք զժլար ճանապարհ,  
Պահ մի կրկին արևն ելաւ ոսկեվառ.

Բայց չխարւիս դու այս փայլից կարճատև—

Դեռ շտտ փորձանք բախտը կ'հանէ մեր առջև:

Կը զայրանայ, կը կատաղի չարութիւն,  
Եւ դէմ առ դէմ մենք կը տեսնենք թշնամուն.

Նա սպառազէն և ահարկու, մենք անգօր,

Եւ մեր շարքեր կը նօսրանան օրէ ցօր:

Եւ կը իլէ նա մեղանից լաւերին,

Եւ կը հասնեն սգոյ օրեր մեզ բաժին.

Բայց հաւատն, կը տառապենք մենք երկար,

Բայց և կապրենք - մեռնելու չէ սերմն արդար...

Բեղմնաւորած անկաճների արիւնով

Դարձեալ երկիրն պտուղ կը տայ երկունքով.


Օրը կը գայ, կը զազարի փոթորիկ,

Եւ յաղթութիւն կը վաստակեն մեր որդիք:

Յ. Յովնաննիսեան



# Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ը



Ես լսել դու այն հրաշալի երգը, սիրոյ երգը...

Ա՛խ, ես լսեցի այն երգը իմ ամբողջ կեանքում միայն մի անգամ: Ո՞վ էր երգում այդ հրաշալի երգը: Արդեօք աստղերն էին երգում, թէ ծաղիկները. արդեօք ծո՞ւփն էր երգում թէ իմ սիրտը...

Ես այդ չգիտեմ. — շատ կարճ միջոցում լսեցի այդ սրբազան, չքնաղ երգը, որ մինչև այժմ զօղանջում է հոգումս:

Եղել է, չի եղել, շատ հին ժամանակում մի հրաշագեղ, փարթամ աշխարհում մի արքայադուստր է եղել. թարմ ու պայծառ, ինչպէս ծիրանի արշալոյսը ձիւնապսակ լեռնազաղաթներին, չքնաղ ու նազելի, ինչպէս եղնիկը անտառի աղբիւրի մօտ, նորաբողբոջ և կենսալից, ինչպէս մայիսեան կոկոնը վայրի վարդի:

Այդպէս պայծառ, թարմ ու չքնաղ է եղել նա:

Արքայադուստր ամբողջ կառուցած էր սեպ ու բարձր ժայռերի կատարին, մի հրաշակերտ և հոյակապ ամրոց, ուր ապրում էր նա իր գեղեցիկ նաժիշտներով: Արշալոյսին արևը ամենից շուտ ողջունում էր նրան—այդ չքնաղ արեգակին, և լեռների հովասուն ամբրոսը զուրգուրում էր նրա զիշերայ պէս սև ու սիրուն մազերի հիւսքը:

Ո՞վ կարող է սպրել առանց ընկերի, — քարերը միայն և քարասիրտները: Երբ մարդուս սիրտը հասունանում է ծաղկեբողբոջի պէս և օրօրում է անուշ երազներով՝ այն ժամանակ սիրտը որոնում է մի ընկեր-սիրտ՝ նրան սիրելու և ամբողջապէս նւիրելու սիրածին:

Հասաւ այդ նւիրական օրը, — և արքայադուստր սիրտն էլ սկսեց երազել մի ուրիշ, հեռու, մտերիմ, անյայտ սրտի մասին:

Հասկացաւ արքան, նրա հայրը. հասկացաւ թէ ինչն է իր դուստրը այնպէս երազուն, տխուր և մտորուն...

Եւ արքան ուղափոխեց մուսետիկներ աշխարհի ամեն կողմերը յայտնելու որ իր դուստրը պիտի իրեն փեսացու ընտրէ: Թող գան արքայազներ, իշխանազներ, շնորհալի մարդիկ, թող մրցեն իրար հետ: Եւ արքայադուստրը իրեն սրտի ուզածով՝ կ'ընտրէ իր ցանկալին, անշուշտ ամենաքաջին կամ ամենաշնորհալուն: Եւ եկան հեռաւոր աշխարհներից, ծովերի այն կողմի աշխարհներից երիտասարդ արքայազներ, իշխանազներ, շնորհալի մարդիկ. ամենքն էլ զարդարած գեղեցիկ և թանգազին-ղգեստներով, շրջապատւած սոււար ծառաներով: Եկան և բոլորը հիւրասիրեցին արքայի պալատում:

Բայց և ամեն օր դալիս էին նոր-նոր երիտասարդներ, մրցակիցներ: Սիրոյ այդ ուխտաւորներին վերջ չը կար:

Ամեն առաւօտ, արքայի և պալատականների հետ, բոլոր երիտասարդ մրցակիցները հաւաքւում էին արքայադուստր ամրոցի տակ, մրցման հանդէսի համար:

Ամեն առաւօտ արքայադուստրը իր նաժիշտներով, ինչպէս լուսինը աստղերի հետ, բարձր պատշգամբից, ինչպէս երկնքից, ողջունում էր և զիտում մրցող փեսացուներին:

Սէրը, արևի պէս, ջերմացնում և կեանք է տալիս մարդկանց, սէրը թե և տալիս մարդկանց և լեզու՝ համբերին:

Փեսացուները ցածրից նայում էին վերև՝ չքնաղ կոյսին, ողևորում էին, յափշտակւում նրա ջնաշխարհիկ գեղեցկութեամբ, և բոլորի հոգում վառւում էր մի աննկարագրելի, անյաղթելի բոց, կարով...

Եւ սկսում էր մրցումը:

Մի տեղ ձիարշաւում էին, միւս տեղ ըմբշամարտում, մի  
ուրիշ տեղ սրով և նիզակով մենամարտում... Իսկ մի այլ տեղ  
էլ, զանազան մարդիկ, իրենց զանազան շնորհքներով էին մրցում:

Քայց ամեն օր, ամեն ժամ զայլիս էին նոր-նոր մրցա-  
կիցներ, և սիրոյ այդ ուխտաւորներին վերջ չկար:

Եւ մրցութեան վերջին յաղթանակը ամեն երեկոյ մնում  
էր անորոշ, իսկ սիրոյ այդ չքնաղ գեղեցկուհին, — անգին  
մրցանակը, — վերջալոյսին իր նաժիշտներով մնաս բարև էր  
տալիս յոգնած, վիրաւոր մրցողներին և առանձնանում իր շա-  
տրրւաններով օրօրուն պարտէզները...

Մրցումը պիտի տեւէր ամենաշատը քառասուն օր: Վեր-  
ջին օրւայ երեկոյեան ամենայաջող մրցողը կարժանանար իր  
յաղթական գլուխը հանգչեցնելու արքայադստեր սրտի վրայ:

Արդէն անցել էին երեսուն և ինն օր՝ մրցման տենպային  
օրեր, ուր նրբան սրտերի յոյսեր ջախջախեցին ու որքան մար-  
դիկ վշտահար հեռացան, անյոյս հեռացան...

Մնացել էր միայն մի օր, — ամենախորհրդաւոր, ճակա-  
տագրական օր, երբ պիտի վճուէր կոյսի բախտը, երբ հանդէս  
պիտի ելլէր բախտաւորը:

Արքայադուստրը ցնորքների մէջ սուգած մեկուսացել էր  
գրախտային պարտիզի մի ծառախիտ անկիւն և երագում էր...  
վաղը, այդ պահին, կը լուսաւորւին ամրոցի բուրդերը գոյն-  
զգոյն ճրագներով, կը հնչէ երաժշտութիւնը, արքան նստած  
գահիճում իշխանների մէջ՝ կողջունէ իր միակ, բախտաւոր  
դստեր, որ իր յաղթական փնտայի ձեռքը բռնած՝ կը ներկայա-  
նար հօրը՝ օրհնութիւն առնելու... Վաղը, օ, դեռ նրբան  
ժամանակ կար մինչև վաղը. ինչպէս պէտք էր անցկացնել այդ  
գիշեր, այդ անհամբեր, երկար, լուռ գիշերը: Անհամբերութիւ-  
նից նա տանջւում էր. նրա հոգում անցնում էին դէմքեր՝ տղա-  
մարդկանց քաջ, խրոխտ դէմքեր... «Արդեօք ո՞վ է, ո՞վ է լի-  
նելու իմ սրտի տէրը», հարցնում էր նա ինքն իրեն. «զանձիս  
կէսը կըտայի նրան, ով որ հիմա գուշակէր իմ փեսացուն»...

Դեռ այդպէս երկար, երկար նա երագում էր...

Լուռ, անգորր գիշեր էր, լուսինը կարապի պէս նոր էր  
սկսել լեռների գլխից ընկնել երկնքի մուգ-թաւշեայ ծովը լո-  
զանալու... Աստղերը, երկնքի այդ վառ-վառ ծաղիկները, բու-  
րում էին եթերային ոլորտում և հիասքանչ ամբրոսը տարած-  
ւում էր երկրի վրայ. նա գգում էր այդ արբեցած էր նրա-  
նով և հողին ծծում էր երկնային բուրմունքը... Այնպէս  
լիքն էր նրա հոգին, այնպէս խանդակաթ արոփում էր նրա  
սիրտը և մաքուր սէրը ծփում, որ նա և՛ արտասուել էր ու-  
զում և՛ ժպտալ: Քայց այնպէս տենչում էր գրկել մի սրտի, մի  
հարազատ սրտի. գրկել, սեղմել իր սրտին և թռչել, սլանա-  
նալ եթերային տարածութեան մէջ և համբուրել աստղերը,  
հազար-հազար աստղերը...

Եւ ահա հեռու, հեռու, անյայտ տեղից, զուցէ հեռու,  
հեռու, անյայտ սրտից՝ լսեց նա մի երգ, մի մարմարուն, մի  
թալուկ, մի հեզ երգ: Նրան այնպէս թւաց թէ նա գրկել է  
իր սիրածին և սաւառնում է երկնքում և աստղերը երգում են  
այդ հրաշալի երգը... Նա սևեռեց աչերը աւելի որոշակի դէ-  
պի աստղերը և լարեց լսելիքը... Իսկ հնչում էր երգը, զօղան-  
ջում էր երգը — մի զիւթական, հողբուղիս երգ, որ աղբիւրի-  
պէս բղխում էր անհունութիւնից և խոխոջում յաւերժութեան  
վայրերով. մի գերասքանչ երգ...

Ո՞վ կարող է նկարագրել այդ երգը: Մեր լեզուն անգոր է.  
մեր հոգին միայն կարող է լսել այն. լսել միայն... Եւ ո՞չ մենք  
— բոլորս կարող ենք լսել այդ. այդ երգը միշտ է զօ-  
ղանջում տիեզերքի մէջ, բայց մենք չենք կարող լսել...

Քայց ո՞վ էր երգում այդ երգը...

Կոյսը յափշտակւած լսում էր: Չէր շարժւում: Նրա հո-  
գին ծծում էր ամեն մի հնչիւնը...

Եւ նրան թւում էր, որ հասկանում էր այդ երգը, որը և  
այնպէս էր ասում նրան — «Առանց արևի երկիրը կը ստուէր,  
և՛ մարդիկ, և՛ ծաղիկները. կեանքը չէր լինի. իսկ առանց  
սիրոյ արևը պէտք չէր:

Սէրն է արևների արևը...

«Ո՞վ կարող է հասնել սիրուն՝ արևին, — ոչ ոք: Մեր սրբ-  
տի նւիրական երազներն ու իզձերը միայն կարող են թւակո-  
խել սիրոյ սահմանները... Բայց մեր սիրտը միշտ երկրում կը  
մնայ՝ արևի — սիրոյ կարօտ...» Այդպէս էր հասկանում նա:

Նրան թւում էր երբեմն թէ աստղերն էին երգում, կամ  
տիեզերքի անհաս խորքերից աստղ-սրտեր. կամ զիշերային ան-  
գորը շղարշների մէջ՝ մտախոհ լեռնազաղաթները. կամ կէս-  
գիշերի ուշացած թռչունները, որ հով գեփիւռի թւերի վրայով  
զալիս-հանդչում էին ամրոցի բուրգերի վրայ կամ պարտիզի  
մութ սօսիների ճիւղքերում:

Նրան թւում էր դարձեալ, թէ աստղերն էին երգում,  
կամ լեռնային լանջերի ծաղիկները՝ քնքուշ բողբոջների խոր-  
քերից, կամ անտառի խորհրդաւոր շշուռն էր այդ, կամ այ-  
րերի եղնիկների մնջիւնը... կամ հեռաւոր ծովերն էին երգում,  
համբուրելով դալար ափերը... դուցէ անապատն էր երգում,  
կամ մի մարդկային սիրտ, մի հովիտ, մի երգչի սիրտ...

— Մարդկային սիրտը միթէ կարող է այդպէս վեհ ու  
հրաշալի, խորն ու վսեմ երգել. մտածում էր նա, խորասուզ-  
ւած՝ լսելով երգը:

Երբ լսելիքը լարած դէպի հեռունները՝ անսահման վայրե-  
րից էր սպասում լսել այդ երգը՝ այն ժամանակ նրան թւում  
էր թէ իրեն մօտ, շատ մօտիկ, հէնց իր սիրտն էր երգում,  
բայց որ ուշադիր էր լինում իր սրտին՝ այն ժամանակ երգի  
կախարդական, վերասլաց հնչիւնները ծորում էին անհուն ե-  
թերից:

Եւ դեռ լսում էր խորասուզ... Աստղերը չքացան, ար-  
շալոյսը վառեց իր խարոյկը լեռների գազաթին, թռչունները  
զարթնած սառաւնում էին օդում, և գեղջկուհիները ծորում  
դէպի ազբիւրն էին շտապում:

Այն ժամանակ, կոյսին թւաց, որ երգը լռեց. բայց իր  
հոգում դեռ հնչում էր նրա վեհափառ արձագանքը:

Վերջին օրն էր, — քառասուններորդ օրը՝ ճակատագրական  
օր: Կրկնակի քանակութեամբ ժողովել էր ամբոխը դիտելու  
փեսացուներին, որոնք օրհասական տաղնապով պատրաստում  
էին մրցել: Եկել էր արքան իր իշխաններով և նախարարնե-  
րով: Եւ բոլորը լարւած՝ սպասում էին կոյսին, որ պիտի դուրս  
գար պատշգամբ, ողջունէր և սկսէր վերջին, ճակատագրա-  
կան, խորհրդաւոր մրցահանդէսը:

Ահա դուրս եկաւ կոյսը, բայց ոչ առաջւայ պէս ուրախ և  
պայծառ. նրա աչերի մէջ մի հեղ թախիժ էր երևում: Բոլորը  
նայում էին նրան. խոնարհ ողջոյն տւեց կոյսը ամենքին և  
ասաց մեղմիկ.

— Ազնիւ մրցակիցներ, մինչև այժմ ես փափագում էի  
իմ սիրտը տալ ամենաքաջին կամ յաջողին. բայց այժմ փոխ-  
ւեց իմ սրտի իզձը. երեկ զիշեր ես լսեցի մի հրաշալի երգ, մի  
դիւթական ձայն, որը բովանդակ հոգիս գրաւեց-կախարդեց...  
Ո՞վ էր այդ երգը երգողը, ո՞վ էր, թող հանդէս դայ. նա է իմ  
սրտի տէրը...»

Ինչպէս ծովն ուժգին հողմից, այնպէս և յուզեց ամբողջ  
ժողովուրդը. տարածւեց մի խուլ շշուկ. բոլորը տխրեցին. բայց  
լինջ կարող էին անել. նրանք այնպէս էին կարծում, թէ ար-  
քայագուստը խաղում է իրենց սրտերի հետ:

Այն ժամանակ արքան խօսեց.  
«Անխորտակելի է իմ դատեր կամքը. ես չեմ կամենում  
նրա սիրտը կտրել. թող հանդէս ելնի երեկւայ երգողը, սվ ո՞ր  
էլ լինի»: Տիրեց մի խոր լուսթիւն, և ոչ ոք հանդէս դուրս  
չեկաւ:

Այս անգամ արքան հրամայեց, որ ամենքը մէկ-մէկ եր-  
գեն կոյսի առաջ, որպէս զի նա ձայնը ճանաչէ և գտնի իր  
փափագելին:

Այդ ժամանակ սկսեց մի ասարօրինակ տեսարան: Իւրա-  
քանչիւրը իրար յետևից, հերթով, ներկայացաւ կոյսի առաջ  
և սկսեց երգել: Ամենքը երգեցին. օրեր տւեց: Երբ վերջացաւ սի-  
րոյ սխտաւարների այդ նոր մրցումն էլ, այն ժամանակ արքայի  
հրամանով եկան մայրաքաղաքից, քաղաքներից և գիւղերից

ամեն դասի մարդիկ, — քաղաքացիներ, վաճառական, վարդապետ, երգիչ. եկան հովիւներ, ցնցոտիների մէջ աղքատներ, չափահասներ, նոյն իսկ ծերեր, և երգեցին... Անթիւ, անհամար ձայներ՝ կոպիտ կամ քաղցր, սուր կամ նուրբ, հնչեցին կոյսի առաջ. բայց նա ոչ ոքի հաւանութիւն չտուեց. և ինչպէս կարող էր, — նրա հոգում դեռ դողանջում էր այն հիասքանչ, սրբազան երգը:

Դեռ շարունակում էր այդ ձանձրալի փորձը. իշխանագն փեսացուները յուսահատուել — հեռացել էին, իսկ կոյսը արդէն վաղուց էր համոզուել, որ այն երգը երբէք լսելու չէ այդ մարդկանցից... որ այն երգիչը մի անյայտ սիրտ է, որին պէտք էր որոնել:

Եւ նա վճռեց թողնել իր հօրն ու արքայական կենցաղը և ընկնել — թափառել աշխարհի մէջ, երկրի ոլորտներում և գտնել չնաշխարհիկ երգչին...

Մի գիշեր, ծպտեալ, զաղտնի կերպով դուրս եկաւ ամլոցից մէն-մենակ, գնաց դէպի լեռները, հետքը կորցրեց և այնտեղից ձանապարհ ընկաւ դէպի հեռուները... Մտնում էր մարդկանց խմբերի, խնջոյքների մէջ, ուր որ երգ էր հնչում. գնում էր լեռներ՝ հովիւների, լճերի ափը՝ ձկնորսների մօտ, — ամեն տեղ ուր մարդ կար և լսում էր ամենքի երգը. բայց ոչ մէկը չէր նմանում այն հրաշալի երգին. ինչքան խաւարը լոյսից, նոյնքան էլ մարդկանց երգը հեռու էր այն երգից:

Թափառեց օտար ժողովուրդների մէջ, երկրի հեռաւոր անկիւններ, բայց ոչ մի տեղ չգտաւ իր երգի նմանը...

Իսկ այն երգը շարունակ, միշտ դողանջում էր նրա հոգում, և խթանի պէս նրան անխոնջ թափառել էր տալիս:

Մի անգամ վերջալոյսի ժամանակ նա տեսաւ, որ մի գեղեցիկ, կորովի երիտասարդ՝ նստած իր ամենհի նժուղի վրայ իր հեծեղադօրքի հետ՝ անցնում էր յաղթական գնացքով: Երիտասարդը վերադառնում էր կոււի դաշտից, հայրենիքի թշնամուն յաղթած: Բոլորը ուրախ էին, և հսկարտ. նրանց աչքերը

փայլում էին, և աշխույժով խրխնջում էին նժուղները:

Երբ կոյսը տեսաւ երիտասարդին, լսեց նորից այն հիասքանչ երգը, նրան թւաց որ այդ քաջ երիտասարդն էր երգողը: Մօտ վճռեց, փարւելու և գրկելու նրա նժուղի ոտքերը, բայց երիտասարդը հպարտութեամբ մերժեց և լուռ անցաւ...

Այն ժամանակ նրան, արքայազն կոյսին, այնպէս պարզ թւաց, որ իր սիրտն է երգողը. բայց երբ լսելիքը ուշադիր լարեց դէպի սիրտը, — այն ժամանակ նա զգաց, որ երգը ծորում էր հեռւից, ծովի ալիքներից, կղզու նոճիների խորքից: Չտապեց դէպի ծովը, փարւեց ափին, ուր ալիքները նժուղների պէս մոնչելով՝ արշաւում էին դէպի ափը փրփրած-սպիտակ բաշերով. իսկ կղզին լուռ էր և մշուշի մէջ... Այն ժամանակ նրան թւաց, թէ իսկ և իսկ աստղերն էին երգում. և նա լարեց լսելիքը դէպի երկինք, բայց աստղերը լուռ էին և նրանց համը ձաճանչները ողողում էին նրա լափշտակած ձակաւոր...

Եւ երբ ամբրոսական ղեփիւռը շոյեց նրան, նա այնպէս զգաց թէ ղեփիւռը բերում էր ծաղիկների բողբոջից այն նւիրական երգի վեղդեղանքները: Փափաղով փարւեց ծաղիկներին՝ վարդին-շուշանին, մանուշակին ու նարգոսին, բայց նրանք լուռ շրջեցին մաքուր թերթիկները և մեղմ, անուշ բուրեցին... Բազկատարած-ընկել էր դալարի վրայ և երազում էր, և երբ վերկացաւ — կանգնեց, նկատեց մօտիկ տեղում խըրճիթի մի մեղմ լոյս: Յոգնած էր. շտապեց այնտեղ. դուռը բաղխեց, բացին և նա ներս մտաւ: Կրակի առաջ նստած էր մի չափահաս կին, զրկում մի մանուկ. իսկ ծնկների վրայ դուռխը դրած՝ նիրհել էր մի պատանի, — նրանց մայրն էր այդ կինը, հոգսերով և գորովով լիքը: Երբ կինը նրան տեսաւ, կամացուկ դրեց բարձի վրայ պատանու դուռխը, վեր կացաւ, սիրով բարևեց արքայադստեր, որ մի աղքատի էր նմանում այժմ, և խնդրեց նստել կրակի մօտ... Երբ կոյսը այս ամենը տեսաւ — փղձկաց նրա սիրտը. անհուն կարօտով փաթաթեց կնոջ պառանոցով, ընկաւ նրա գիրկը և սրտաբուղխ լացեց. իսկ կինը

731-89 1092 8231



մխիթարում էր նրան և զուրգուրում. այն ժամանակ կոյսին թւաց, որ մայրական սիրտն էր երգում այն սրբազան, երկնային երգը...

Եւ երբ երկար լացելուց յետոյ, Հանգստացաւ և նստեց, նրա Հայեացքն ընկաւ լուսամուտից դէպի դուրս. — մեզմ գիշեր էր. աստղերը աչերի պէս՝ բաց-խուփ էին անում, շրշում էին Հասկերը, ծփում էր ծովը և ծղրիտը ծղրում, — այն ժամանակ նրան թւաց, որ այդ վայրկեանը ամենավեհ վայրկեանն է իր կեանքում. և նրա Հոգին բուռն ու խորին թափով յուզեց և այնքան իրապէս թւաց իրեն, թէ ամբողջ բնութիւնը՝ իր սիրտը, մայրական սիրտը, աստղերը, ձիւնափառ լեռները, խոփու ժայռերը, դուլալ աղբիւրները, ծովերը, Հաւքերը, ծաղիկները — ամենքը, ամենքը ի միասին երգում են այդ մեծ, տիեզերական, վեհազքանչ երգը...

Բայց նորից կասկածեց և նորից սկսեց թափառել գտնելու երգչին: Եւ այսպէս անցան երկնա-երկնա տարիներ. կնճիւններ նստան նրա չքնաղ ճակտին, սրայծառ ճակտին. նազելի Հայեացքը թորշոմեց և սև մազերի մէջ փայլեցին սպիտակ շողքերի նման մետաքսի թելեր:

Տեսաւ, որ անցաւ երիտասարդութիւնը, ծերանում է. բայց վերջնականապէս Հաստատ չկարողացաւ իմանալ թէ ինչ էր այն երգը, որ մինչև այժմ դեռ զօղանջում էր իր Հոգում, և արդեօք ո՞վ էր կամ ինչն էր երգողը:

Եւ լսեց մի անգամ, որ մօտակալ քաղաքում մի շատ իմաստուն մարդ է ապրում, որ ամեն բան զիտէ... Ուղի ընկաւ դէպի այն իմաստունի մօտ, նրան յայտնելու իր դադտնիքը և լուծումն ստանալու: Եկաւ իմաստունի մօտ և բոլորը, ինչ զիտէր այն երգի մասին, ինչ զգացել էր՝ ասաց և լացեց...

Այն ժամանակ իմաստունը յուզեց արքայադստեր բախտով և խոր մտածելուց յետոյ, պատասխանեց.

— «Զաւակս, այդպէս երգ չկալ բնութեան մէջ. այդ երգը միայն քո սրտումն է. քո սիրտն է երգում այդ. քո մա-

քուր, սուրբ, երազուն սիրտը. և երանի քեզ, որ ունիս մի այդպիսի վսեմ սիրտ, որը կարողացել է երգել այդ տիեզերական երգը, սիրոյ ամենավսեմ երգը... Հանգստացիր, զաւակս, և վերադարձիր Հայրենի տունդ»...

Այն ժամանակ նա նորից լսեց այն վսեմ երգը. բայց այս անգամ ո՞չ սրտի խորքից, այլ որոշակի կերպով հեռու, շատ հեռու տեղից, տիեզերքի անեզր ասիերից... Եւ կոյսը իմաստունին առանց մի խօսք ասելու՝ դուրս վազեց և աւելի բուռն յափշտակաւձ, քան առաջ էր, հիացած՝ ուղի ընկաւ դէպի հեռուները, հեռուները...

Ո՞ր է նա այժմ. — ամեն տեղ և ո՞չ մի տեղ:

Չնտ դարեր են տնցել այն օրից, երբ նա թողեց իր ամբողջ և սկսեց թափառել. շատ ժողովուրդներ են եկել աշխարհ ու գնացել այն օրից .. բայց նա դեռ տպրում է և շարունակում է իր անեզր ուղին դէպի տիեզերքի անհունները, անսահմանները՝ գտնելու այն երգը, նրա երգչին...

Ա՛խ, միթէ այդ երգը չէ բանաստեղծութիւնը, — նւիրական սէրը դէպի մարդը, երկիրը, աստղը, տիեզերքի խորքերը. բանաստեղծութիւնը, որին մարդկային Հոգին, թափառող-որոնող Հոգին՝ դարերից ի վեր ձգտում է, ձգտում անդուլ և չաւերժ...

Ա. Խասնակեան



# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

## «ՄԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ»

Նոքա լալիս են գրունէ գուռ ընկած —  
 Աւերակ երկրի անտուն զաւակներ,  
 Որպէս անկանաչ ոստերից պոկւած  
 Աշնան ուժասպառ, գրժգոյն տերւեներ:

Նոքա լալիս են... Եւ մենք անաարբեր,  
 Մենք անհոգ որդիք ծիծաղկոա բախտի,  
 Ո՛հ, լոկ խօսքով ենք նոցա եղբայրներ...  
 «Կուշտը քաղցածին կամաց կը բըրդի»:

2.

## ԱՂԵՐՍ

Ասաւանձ, աոնր ոյժ, տոնր զօրութիւն կըրելու  
 Մեր կեանքի խաչն այս օրերում չարաշուք.  
 Մի տար զայլին մեզ անողորմ լախելու,  
 Որպէս անպարտ մի գառնուկ:

Աղերսում ենք յանուն խաչիդ զօրութեան,  
 Որ սլաշտպան է անկեալների: Խաչդ առած՝  
 Մենք տանջեցինք, մենք բարձրացանք Գողգոթան...  
 Մեզ նոր ոյժ տուր, Հայր գըթած:

3.

## ԱՆՎԵՐՋ ՄԱՔԱՌՈՒՄՆ

Մէհնէ, որ բախտը նորից չարաչար  
 Մեզ խաբեց կեանքում... Եւ այսօր մեր շուրջ  
 Տիրել է սպանիչ, անթափանց խաւար,  
 Ձե՛ն շողում էլ մեզ ոչ յոյս, ո՛չ անուրջ...

Եւ սըրտից հանւանձ, և աչքից ընկանձ,  
 Ապրում ենք անմասն կեանքի խնճոյքում.  
 Մեր գարունն—անվարդ, մեր ճրագը—մարած,  
 Թոյն է ծովացել մեր տանջւած կըրծքում...

Մենք օրօրոցից ուսանք մաքառել,  
 Կրոււի մէջ անցաւ բովանդակ մեր կեանք.  
 Կրոււենք աննահանջ, քանի չենք մեռել.  
 Կրուուան է միայն և՛ մահ, և՛ փրկանք...

4.

## ԴԷՊԻ ԳՈՐԾ

Պէպի գործ, եղբայր... Հերիք է, որ քան  
 Անձնատուր եղած դու անգոր լացին,  
 Կեանքըդ ողբացիր, սգուրի նման,  
 Զոնր սպասելով վառ լուսաբացին:

Դէպի գործ... Անբեկ, երկաթի կամքով  
 Հարթիր քո ուղին—վտղ թէ անազան—  
 Քո հարթած ուղին կը ծածկւի ծաղկով.  
 Ա՛յլ ուղի չունի քո լոյս—ապագան...

ԹՈՂ ՄԵՋ ԶԸ ՍԻՐԵՆ...

**Թ**ո՞ղ մեզ չը սիրեն... Թո՞ղ հալածանքի  
Թոյնով շաղախի մեր հացն հանապաղ.  
Մեր հոգին—ազբիւր անգուսպ տենչանքի,  
Այնտեղ չեն մարիչ անուրջն ու երագ...

Այնտեղ մշտավառ մեր մըտորումներ,  
Որպէս վառճողեր մութ ամպերի տակ,  
Որպէս փըշերում փըթթող ծաղիկներ,  
Մեզ խոստանում են դարնան արեգակ...

Թո՞ղ մեզ չը սիրեն... Մենք սիրենք իրար,  
Սիրենք՝ տանջելու, սիրենք՝ կըռւելու.  
Օ՛, իմ հայրենի չարաբախտ աշխարհ,  
Այդ սէրն է միայն քեզ կեանք շընչելու...

ԱՂՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐ

**Թ**ափում են աշնան դեղնած տերևներ  
Եւ մեռնում կեանքը թոշնող պարտիզում.  
Ես լուռ դիտում եմ այդ ախուր պաակեր  
Եւ դառն մտքեր են իմ կուրծքը յուզում...


Հայրենի աշխարհ, մեր վարդ-յուսերի  
Եւ դու աւերած, ամայի պարտէզ,  
Չըրջում ենք ցիր-ցան, քո կըրծքից հեռի,  
Աշնան հողմահար տերևների պէս...

Ալէքսանդր Ժատուրեան

Ա Ի Ե Տ Ե Ա Ց Ե Ր Կ Ր Ո Ւ Մ

(Մի գլուխ՝ առնիւ աշխատութիւնից).

«Lasciate ogni speranza  
O' voi che entrate»!  
(Դանտէ „Դժոխք“ կրկ III)



Խոնար երեկոյեան նկարիչ Հրանտը  
երկար զբօսնել չը կարողացաւ:  
Հաղիւ հասել էր մեծ կամուրջի  
մէջ տեղը, որ ցուրտ զգաց, վերա-  
դարձաւ և մտնելով Ալէքսան-  
դրեան այգին, նրա միջով ուղեց

տուն դնալ:

Մութն էր այդիւմ: Փողոցի դռան մօտ՝ լապտերների լույ-  
սը աղօտ շառաւիղներով սփռւում էր մինչև նոր մատուռ-  
այնուհետև տարածւում էին մթին ծառուղիներ և հեռաւոր  
խաւար խորշեր, որոնցից երբեմն երևան էին դալիս հապճեպ  
անցորդներ և զիշերային կանանց սուերներ: Գռան մօտ՝ մի  
տեղացի պարասորդ միայն կար կանգնած, որ ծխում էր և  
դիտում փողոցի անցուդարձը:

Մատուռի առջևից նա դէպի ձախ ծուեց և ուզում էր  
անցնել, երբ պատահամբ դառնալով, նկատեց բեռնաւորած  
մարդկանց մի խումբ, որ այդին էր մանում: Բոլորն էլ ուսերի  
վրայ կրում էին անկողին, պալուսակ, հին վերարկու կամ հը-

Նամաշ եափուհի. ձեռքերին անտաշ զաւազան, զլուխնին փոքրիկ փափախ կամ Ֆէս, իսկ իրենք ցեխոտ և յոգնած:

Մատուռի ձախ կողքին, ծառերի տակ եկւորները կանգ առին, իջեցրին իրենց բեռը. մի քանիսը տեղն ու տեղ կձկւելով՝ նստեցին, ուրիշները քրտնաթոր ճակատնին սրբել սկսեցին, իսկ մէկը, որ ամենից հասակաւորն էր, շուրջը նայեց և շարած, հարցուց միւսներին.

—Ա՞յժմ որ կողմը պիտի գնալ:

Հրանտը լսելով հայերէն բառեր, մօտեցաւ հետաքրքրութեամբ: Ո՞վքեր էին այդ օտարականները, որ այդպէս ողորմելի վիճակի մէջ, իրենց գնալու տեղն իսկ չը գիտէին:

—Ո՞րտեղացի էք. հարցուց նա:

Վանեցի զաղթականներ էին: Երկաթուղիով էին քաղաք հասել. կայարանից շալակիլ էին ունեցածնին և Մալխասի թէյատունն էին որոնում: Բոլորն էլ երիտասարդներ էին. երեքը մինչև իսկ պատանիներ: Բաւական թափառել էին Երևանի կողմերում, յետոյ էջմիածին գնացել: Հայրիկը նրանց մի-մի «բան» էր տւել և ճամբել: Մտածելով որ Թիֆլիզում հայեր շատ կան, գոյութիւն ունի մի բարեգործական ընկերութիւն, որ գաղթականներին օգնում է, ենթադրելով որ նրանք մի գործ կամ մի կտոր հաց պիտի կարողանային գտնել հարուստ ազգակիցների մէջ—շտապել էին Աովկասի մայրաքաղաքը գալ: Աննպարհին, հայրենակիցներ ասել էին, որ Մալխասի թէյատան մէջ կարիլի էր զիշերել և որ այդ թէյատունը գտնւում էր «Շարմուկայում»:

—Այտեղ նստել չէ կարելի, ասաց Հրանտը—ես ձեզ կը տանեմ: Եւ աշխատեց աղօտ լոյսի մէջ՝ գննել նրանց:

Գաղթականներ նա տեսել էր եկեղեցիների գոների առջև փողոցների մէջ, բայց երբէք խմբովին: Գէմքերը սարդ չէր երևում, բայց տեսաւ որ սրանք սովորական, բոլորովին ցնցոտիների մէջ շրջող գաղթականներից չէին: Հնամաշ, ցեխոտ էր սրանց հագուստը, բայց եւրոպական էր, Վանի տեղական կտորից կարած. մէկը մինչև իսկ օսլայած կեղտոտ շապիկ ունէր, թէև առանց վզկապի:

Փափագ զգաց գաղթողների—իրենց բերնից լսել կոտորածները, երկրի դուրսեան մասին: Մի տեսակ նեղսրտութեամբ և կարճ բառերով սկսեցին պատասխանել նրա հարցերին: Երևի յաճախ պատմելուց՝ ձանձրացել էին: Պատմածներից միայն այսքան յայտնի եղաւ, որ Վանեցի 800 երիտասարդների կոտորածից յետոյ, թիւրք կառավարութիւնը անխնայ ոչնչացնել էր ճգնում երկրի բոլոր երիտասարդ ութերը: Ուստի և ամեն ոք ցան ու ցրիւ, զանազան ուղղութեամբ խուսափում էին երկրից և սահմանի վրայ միանալով, մտնում էին ռուսական ազատ հողը: Այսքան յայտնի եղաւ, որ սուրն ու կրակը, հարստահարութիւնն ու հալածանքը նստացնում էին երկրի հայ ազգաբնակչութիւնը. ո՞վ ինչ կարողացել էր՝ կորցել էր և զլուխը կորցրածի պէս՝ դուրս նետւել հրդեհի միջից: Գնացել էր՝ ուր որ լինէր, ինքն էլ չը գիտենալով թէ ետևում ո՞վ ողջ մնաց, ինչ կանգուն մնաց. ինքն էլ չը գիտենալով իր ապագայի մասին. առանց փողի, առանց որոշ յոյսերի, առանց ու է մտադրութեան: Փախել էին—ահա բոլորը:

Եւ այդ ամենը, Հրանտը լսում էր իրենց—հալածականների բերնից, սառը, կտրուկ և սոսկալի խօսքերով:

—Էլ երկրում ո՞վ մնաց ուրեմն. ասաց նա յուզւած:

—Էլ ո՞չ ոք. մըմնջեց ծառի աակ կկգած մի պատանի:

—Ծեր, կին և մանուկ միայն. լրացրեց մի ուրիշը:

Ապա լռեցին:

Մի տեսակ քարացման մէջ՝ նկարիչը շարունակեց գննել այդ յոգնած ու վշտաբեկ գէմքերը, որոնք այնքան—գրեթէ անտարբեր ձևերով—պատմեցին սոսկալի բաներ: Աշմարիտ է, նա յաճախ կարդացել էր այդ բոլորի մասին, լսել էր այս և այն նկարագրողից, բայց ոչ իրենց—հալածականների էր խօսեցրել և ոչ էլ այնքան տպաւորութիւն էին թողել իր վրայ ուրիշներից լսածները: Այժմ ահա, բարբարոսութեան զոհերը աչքի առաջ, նկուն, յոգնած, միմեանց ասածները լրացնելով, պարզ, անպաճոյճ խօսքերով այնպիսի բաներ էին պատմում, որ կարծես թէ նոր էր լսում: Սիրտը ուռում էր յուզմունքից.

չը կարողացաւ ո՛չ մի մխիթարական, ո՛չ մի սիրտ պնդացնող խօսք արտասանել:

Սկսել էր ցուրտ քամի. անձրև էր սպասուում: Հոկտեմբերի այդ օրերը միմեանց յաջորդող անձրևային եղանակներէ խաղալիք էին. երկինքը միշտ ամպոտ, օդը խոնաւ և փողոցները ցեխ:

Գաղթականները ելան: Զալակեցին, ուսերի վրայ առին ամեն ինչ և հետևեցին նկարչին: Ի՛լ ո՛չ ոք չը խօսեց: Լուսթեամբ մտան Բագարնայա փողոցը: Նայում էին առանց հետաքրքրելու. ո՛չ մէկը հարց չէր տալիս տեսածների մասին. ամեն ոք քարշ էր դալիս՝ անխտիր կոխելով ցեխը կամ նեղ մայթը:

Փողոցում սկսել էր գիշերային արբշիւ կենդանութիւն: Երաժշտութեան, երգերի և արբեցողների խուպոտ ձայներ միմեանց խառնւած՝ դուրս էին վիժում ստորին զինետներէ: Մի արբած, ընչացքը սրբելով և օւնայով՝ դուրս էր նետուում խանութից. գարշելի դէմքով մի կին, մայթի վրայ կանգ առած, լրբենի խօսքերով կատակում էր կինտօների հետ. բաց զինետան ներսում երևում էին՝ օդու գաւաթներ ձեռքերին՝ խմողներ, որոնցից մէկն էլ սպիտակ գոգնոցով, երերում էր, պատէ պատ կաշում և ձեռքերը շարժելով՝ բռուերի հեղեղ դուրս տալիս բերնից...

Նկարիչը դէմքը կնճռեց: Ո՛րքան ստոր, լպիրշ, ո՛րքան անխիղճ էին թւում այժմ այդ բոլոր երգերը, գւարճութիւնը. ո՛րքան այժմ նրան զգելի էր երևում այդ ամբոխը, որի «անկեղծ, պարզ» գւարճութիւններն ու խօսակցութիւնը նա առաջ խիստ նկարչական էր համարում: Իսկ այժմ, կուզենար որ այդ բոլորը լռէին և որ ամեն ոք քարանար սարսափից, որ ամենքը գլխարկ հանէին իր ետևից շարէշար քայլող թշւառութեան առաջ...

Քիչ հեռու բացւում էր մտավաճառների և նպարավաճառների շարքը: Մտնում էին այնտեղ: Խանութների առջևից կախւած էին մորթած ոչխարներ, ներսում կիտւած էին կանաչեղէն, պտուղ. նստոտած ու կանգնած՝ գւարճախօսում

էին պարարտ, հաստլիկ, կլորիկ խանութւորներ: Մէկի մօտ, փողոցի ափին դրած կրակարանի վրայ ճենճերում էր մի քանի շիշ խորոված, որ մտի հոտ էր սփռում դէպի անցորդները: Աւելի ցած՝ ձկնավաճառներն էին. հաւաքւում էին, ծախում մի կողմից և մէկն էլ հնչեղ ձայնով դեռ շարունակում էր զսփասանել ապրանքը:

Այդ բոլորը զրգուում էր այժմ նկարչին. քիչ էր մնում աքացիով տապալէր խորովածը. կոստութեամբ դէն հրեց մայթի վրայ կանգ առած մի հաստափոր մտավաճառի և քիչ մնաց կռուփով ջարդէր մի ձկնավաճառի, որ տեսնելով զաղթականներին, գոռում էր.

— Կռօները էլի եկան!...

Յաճախ էին տեսել. ծագրում էին:

Քիչ յետոյ երևաց Մալխասի թէյատան վերնայարկի պատշգամբ լուսաւոր և լի յաճախորդներով:

Հրապարակի վրայ կենդանութիւնն տւելի էր: Անցնում էին ձիաքարշներ՝ դանգաՀարելով. կառքերը դրդղիւնով սրանում էին աջ ու ձախ. զինետներէ կանչեր ու խուպոտ երգեր էին դուրս վիժում. ստորերկրեայ մի խուլ նւագարան, կարծես գետնի խորքերից, դուրս էր նետում մի պարերգ. ձախ կողմում, ճիշտ թէյատան մեծ դռան մօտ, բաց զինետան մէջ, կեղտոտ սեղանի շուրջը, զինու սև կժերի սուջև՝ մի խումբ լեռնական վրացիներ՝ հնչեցնում էին իրենց ինքնատիպ երգերը...

— Ահա թէյատուներ. ցոյց տւաւ ձեռքով նկարիչը:

Չէնքի առաջ բազմութիւն կար: Թիւրքահայեր էին. խայտաբղետ և այլազան հագուստներով: Նրանք նկատեցին եկուորներին և շրջապատեցին: Գտնւեցան խկոյն ծանօթներ, մինչև իսկ բարեկամներ, ազգականներ. լուեցին բացազանջութիւններ.

— Վնոյ, Մարկոս, այդ դո՛ւ ես, Աստուած քեզ բարին տայ, քեզ չէին սպանել...

— Բարի տեսանք, Ստեփան, դու է՛լ թողիւր երկիրը.

— Աստուած տունդ աւիրի, Խեչօ, դո՛ւ ինչու եկար, որք յայտով թողիւր կինդ ու գաւակներդ...

Յետոյ խմբով ու խօսակցելով թէյատուն ելան: Քիչ յե-

տոյ ծանր դուռը ճռնչաց, մի տաք, զրեթէ հեղձուցիչ օդի հոսանք դուրս սլացաւ. ապա՛ ծուխ, խառն ՚ի խուռն ձայներ և Հրանտն իրեն գտաւ մշուշային լոյսով ողողած մի սրահի մէջ:

Դէմ առ դէմ՝ թէյամաններով լի մեծ կայանքն էր. մէջ տեղում դարսւած էին կարմիր լերկ սեղաններ և աթոռակներ. պատերի վրայ՝ երկու լամպ, մի ժամացոյց, երկու պատկեր, ապա՛ ներգիլէներ, նրանց կլկլոցը, այս-այն կողմ նստոտած թէյ խմողներ—սև, արևակէզ, կոշտ դէմքեր...

Կաղ Մալխասը ցատկեց կայանքի վրայից և մօտ վազեց. և մինչ նորեկները դուան մօտ գետին էին շարտում իրենց բեռները, միև սրահից և պատշգամից էլ ներս լցեցին նոր, կնճռալից, տխուր դէմքեր:

Նկարիչը հետաքրքրութեամբ և լուզած՝ դիտում էր այդ բոլորը: Ո՛չ մի անգամ չէր մտել այդպիսի տեղ. պահ մի շշմեց. չնտոյ, նկատեց, որ եկւորներին նստեցրին մի սեղանի շուրջ, կիտեցին նրանց մօտ, սկսեցին հարցնել «երկրից»—իրենց տուն ու տեղից: Զատերի աչքերը թրջւում էին. ոմն ծիւելու էր տալիս, մի ուրիշը թէյ էր դնում նրանց առաջ, և, քիչ առաջ լուող ժիտորային խօսակցութիւնը այժմ դադարել, մի բնդհանուր ճնշող, տխուր լուծիւն էր թաղաւորում սրահի մէջ:

Ամենքն սպասում էին լուրեր—տխուր, ողորմելի լուրեր լսելու հայրենիքից. սրա մահը, նրա սպանուելը, միևսի բանտարկուելը, չորրորդի անհետանալը...

Օգը նորից ծանրանում էր: Ճաք ջրի շոգին, ներգիլէների ծուխը թանձրանում և լամպերի լոյսը մեռելային, ցորենադոյն տեսք ստանալով, սրահին քարայրի կերպարանք էին տալիս:

Նկարչին ոչ ոք ուշք չը դարձրեց և հա կանգնած մնաց դուան մօտ ու դիտում էր: Մալխասն անգամ, գործը թողած, գոգնոցը արձակել, մի կողմ շարտել և մօտեցած նորեկներին, թողնում էր քիչ շունչ առնեն, որպէս զի ինքն էլ տեղեկութիւններ հարցնէր:

Ահա ուրեմն մի նոր խումբ ևս—մտածում էր Հրանտը

կանգնած տեղում— ահա երիտասարդ, թարմ ոյժերը՝ բնաւէր, անյոյս, որ զալիս էին աւելացնելու Կովկասում թափառող, հասարակական բարերարութեամբ ապրող թշուառների մեծ թիւը: Ահա ուրեմն մի խումբ ևս հայրենիքը թողնող բնակիչների, որոնք ցրել-հարւելու, վատասերելու էին ճնշող, փչացնող հանգամանքների ազդեցութեան տակ. տանջւելու, քաղցելու, ողորմողների դռների առաջ քարշ էին գալու, ապաստարանները լեցնելու, զթութեան առաջ ստորանալու, բարձրագոյն բարերարութեան առաջ խոնարհւելու և դուցէ իսկ ծաղրուելու... Թողել էին այնտեղ իրենց տունն ու տեղը, կիւնն ու մայրը, ծնողն ու որդիները. թողել հողն ու գործը անտէր, անխնամ՝ փչանալու, ոչնչանալու... Մի ամբողջ երկիր խաբիւլել էր և կարօտ՝ նորից կանգնելու:

Եւ այժմ այդտեղ— վերւում, յոգնած ու ցեխաթաթախ, նստած իրենցից առաջ եկած և դուցէ արդէն բթացած հայրենակիցների մէջ, պատմում էին նոր աւերածութիւնների, պատմում նոր սպանւածների, տանջւողների մասին...

Ամեն ոք իրն էր հարցնում: Կենդանի էր եղբայրը, ապրում էր հայրը, կանգուն էր տունն ու այգին. հալածանքը մեղմանում էր, սովից քանի հոգի էին մեռել, ո՞վքեր էին բանտի մէջ նահատակում, որոնց էին կախել, հրացանել, յօշոտել. ո՞վ կար առողջ և ինչ էր մնացել կանգուն՝ հայրենիքում...

Այս սոսկալի հարցերն էին լսում այդտեղ, ծանր մթնոլորտի մէջ, բոլորած լերկ-կարմիր սեղանների շուրջ, մշուշապատ լոյսի տակ, լարւած, մտաւած և յուսաբեկ դէմքերի առաջ:

Ահա հները, որոնք գլխի վերւից՝ ուշադրութիւնից լարւած հայնացքներով ականջ էին դնում. կէս լուսաւոր և կէս սուտերի մէջ մի քանի գլուխներ, որոնք արտայայտում էին անձկութիւն և անյագ սպասողութիւն. ձեռքերի վրայ կրօթնեցրած այլ գունատ երեսներ, որոնց վրայից հոսող արտասուց կաթիլները շողում են տխուր լոյսի տակ:

Ամեն կողմ կիզւած, սև դէմքեր— մի բազմութիւն թրջւառների. ամեն ոք հրում է միևսին, ուղում է ինքն առաջ

Հարցնել. լուր չունի կնոջից, որդիներից — ո՞րք են. նամակ չունի Հորից — չեն սպանել... Մի կողմն էլ, թէյամանը ձեռքին՝ մօտեցել է սպասաւորը սպիտակ դոզնոցով, զլիաբաց, մտացել է որ գործ ունի, ուզում է խրալինների մասին հարցնել:

Եւ այդ բոլոր գէմքերը նրբան ակօռած են, նրբան գունատ ու վտիտ, բայց ուշիմութեամբ լի աչքեր, բանիմացութեամբ փայլող ականարկներ և ապա՝ դառնութիւն ու վիշտ արտայայտող շրթունքներ...

Ահա և կարճ, կաղլիկ, ընչեղ Մալխասը, որ զլուխը քաշ, ճակատի տակի հայեացքով, մի ձեռքը դրպանի մէջ, միւսով իր կարճ մեղեխիկը անշարժ բռնած, լսում է, անյադութեամբ լսում...

Գետնի վրայ ընկած են ողորմելի, զգգլւած անկողիններ, սպայուսակներ ու վերարկուներ, որոնց վրայ են ելել շատերը. աւելի լաւ տեսնելու, աւելի լաւ լսելու համար: Ոչ ոք չէ մընացել կայանքի մօտ, որահում կամ պատշգամբում: Թէյատան վերջին ծառան խոկ, մի տասներեքամեայ մանուկ, գետին է դրել դաւաթները և ձեռքերը պարզած, զողոջուն, անհամբեր, կռացել է գէպի նորեկներն ու ամբողջ արտայայտութեամբ կարծես ուզում է հարցնել.

— Իսկ մայրս... կենդանի է մայրս...

Ահ, անբախտ մարդիկ, արմատախիլ եղած զալար բոյսեր. չէ որ նրանց դեռ ոչ ոք չէր այցելել այդ սրանդուխտ անկիւններում, ուր դաժան փոթորիկները բերել՝ կիտել էին միմեանց վրայ և ուր նոքա այժմ խօսում էին իրենց տնաւուր երկրի, սովատանջ մնացողների մասին. չէ որ ոչ ոք դեռ չէր հետաքրքրել, երբ նոքա անօթի, ծարաւ, ընկած չոր տախտակների վրայ, ապրում էին միայն վիշողութիւններով, երազում իրենց երկրի, լեռների, ընտանիքի մասին և երբ այդպէս, պատմողների շուրջը ժողովւած, կրկնում էին այն անասելի սոսկումները, որոնք արիւնով ողողեցին հայոց դաշտերն ու մլքերը, որոնք փլատակների փոխեցին նրանց տունն ու ինչքը: Կըրկնում էին թէ ինչպէս մաղապուրծ եղած, մտան «աւետեաց երկիրը» և մինչև այժմ դեռ ոչ մի յոյս, ոչ մի օգնութիւն...

Ո՞րպիսի ահաւոր նիւթ պատկերացնելու: Միմեանց ևտեւից, կտաւի վրայ դրոշմելու այդ բոլորը՝ կից այն արիւնոտ բծերին, որոնք կարմրեցրին 19-րդ դարու պատմութեան վերջին էջերը, որոնց առաջ ապառաժ կտրեց միայն քաղաքականութիւնը, որոնք միայն դուժ, անօղուտ և բարձրագոյց զթութիւն հրաւիրեցին, բայց ոչ արդարութիւն... և ահա այդ տեսակ դուժը, փուչիկների մէջ մղւած քամու նման՝ ցնդեց և գետնի վրայ թողեց ոչնչանալու մի ամբողջ հալածւած, տարագիր և սովամահ ժողովրդի...

Նկարել, այո՛, նկարել այդ բոլորը, դնել նրա մէջ արտիստիքական ողու և զգայնութեան բոլոր խանդը և այնպէս նրկարել, որ ոչ ոք չը հեռանար պատկերներից՝ առանց... արտասելու...

Արտասելո՞ւ... Բայց ինչ արդիւնք ուրեմն դրանից՝ այդ կիտւած թշւառութեան համար: Նորից գուժ, նորից բարեւարական ցուցամուտիւններ — անցողական մի թեթեւ յուզում միայն պերճութեան խաւերի մէջ. նորից տուղ, ստորացնող ձեռքեր, թէ՛ միայն գովասանք՝ ուղղւած դէպի արտիստը, որ կարողացել էր կորզել իրականութիւնից մի կտոր և դնել կրտաւի վրայ...

Այդ միայն պիտի լինէր Հրանտի յուզման, զայրույթի արտայայտութիւնը. բաւական էր այդքանը. զոհ կը լինէր այդ արդիւնքով, լրացումն կըստանան իր մէջ զարթնող բուռն կրկիծն ու վառւող զայրույթը...

Երկար, դեռ երկար կը մնար Հրանտը դռան մօտ կանգնած, այդպիսի մտքերով յուզւած, եթէ յանկարծ չը լսէր որ թէյատան սրահի մէջ տնրել էր խորին լուութիւն և նորեկներից մէկը, թէյը խմած, քիչ հանգստացած, զլուխը թեւին և ակնարկը իրեն ուղղւած բազմաթիւ կսկծալից գէմքերի, պատմում էր...

Ու նրա խորունկ տխրութեամբ լի ձայնը, կցկտուր խօսքերը՝ սթափեցրին ն՛արչին:

Եւ նա սկսեց ականջ դնել:

Կոտորածի մասին էր պատմում. վանի կոտորածի. նոր էր

տեղի ունեցել և հները չը գիտէին մանրամասնութիւնները =  
Կարգացել էին, պատմել էին տւել տեղացիներին, սակայն ոչ  
մի անուն, ոչ մի մասնաւոր, իրենց սրտին աւելի մօտիկ բան  
գեռ չէին լսել:

Այժմ, ականատեսներ էին նրանց առաջ և ամեն ոք անձ-  
կութեամբ լսում էր:

Հրանտը մի քայլ արաւ և մօտ գնաց լսելու. բայց մէկէն,  
դուրը ցնցեց, սրահի դռան կափարիչը հրեց և առանց մի  
խօսք ասելու՝ դուրս ելաւ:


Ի՞նչ հարկ նորից լսել եղածների մասին. միթէ այնքան  
չէր կարգացել, միթէ քիչ առաջ այդ նոյն մարդիկ չը պատ-  
մեցին իրեն բոլորը՝ Ալէքսանդրեան այգու ծառերի տակ:

Եւ վերջապէս այժմ հարցը դրանում չէր. հարկաւոր էր  
մի բան, մի զօրեղ բան մտածել այդ թշուառութիւնների հա-  
մար: մի բան... ինքն էլ չը գիտէր թէ ինչ: Մտածել, շար-  
ժւել, ամեն մարդու ցնցել, ամեն ինչ տակն ու վրայ անել և  
ամենքի ուշքը դարձնել այդ ահաւոր տառապանքների կողմը:  
Ամենքին ստիպել նայելու, ոչ միայն նայելու, այլ և օգնելու,  
այլ և զայրանալու... արդարութեան ուշադրութիւնը հրաւի-  
րել և եթէ հարկ լինէր, նոյն իսկ բռնութեամբ այդ ուշա-  
դրութիւնը կորզել, ստիպել որ նա գայ, տեսնէ և գատէ...

Ու ճակատը վճռականութեան կնճիռներով ակօսած, նը-  
կարիչը իջաւ Մալխասի թէյանից և փողոց ելաւ:

Սկսել էր արդէն մի բարակ, բայց չարատե անձրև, որ  
ցօղում էր փողոցները և ցուրտ քամուց օրօրւած՝ բաղխում էր  
դռներ ու լուսամուտներ...

Վ. Փափազեան



\* \* \*

**Ա**խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,  
Յր ու արև չըտեսանք.  
Վախ, մեր կեանքը սևով անցաւ,  
Աշխարհից բան չ'իմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն  
Աշխարհի ճոխ սեղանից.  
Մենք աշխարհի խորթ-տղէրքն ենք,  
Մեզ փայ չըկայ աշխարհից:

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ,  
Քարից-հողից հաց քամէ.—  
Բեռով հացը հարուստին տայ,—  
Հարուստն ուտէ, վայելէ...

Խեղճ աղքատը դառը գատի,  
Դատարկ նստի... Ե՛լ, աշխարհ,  
Իլ ինչու ես քարը թողնում  
Քարի վրայ, քար-աշխարհ...

Ախ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,  
Յր ու արև չըտեսանք.  
Վախ, մեր օրը սևով անցաւ,  
Աշխարհից բան չ'իմացանք:

Ա. Դասակեան



# Դ Ա Ր Ձ Ը



Աչքից հեռացած, մտքից մոռացած,  
Իրանք անլեզու, աշխարհս անխրաւ:  
(Խ. Արուիան. Վերս Հայաստանի)

## Ա

եռ ձմեռ էր, ցուրտ, ձիւնաշատ ձմեռ.  
խտասիրտ, մռայլ երկնքից մի հատիկ  
ջերմացնող շող անդամ չէր իջնում ան-  
ճար թշուառի դողդոջուն մերկութեան  
վրայ: Ինչ որ մարդկային էակներ, լուռ  
ու գունատ, ինչպէս ստւերներ, որոնք  
կրում էին իրանց վրայ աշխարհի գձուձ  
գթասրտութեան ամենատեսակ նմուշ-  
ներ, խայտաբղէտ ցնցոտիների մի նող-  
կալի կոյտ, արագ-արագ անցնում էին այս ու այն պատի տակից  
և շտապով ծածկւում ամենատեսակ բների, դարշահոտ գոլորշի  
արձակող գետնափորների մէջ, ուր թանձր խաւորում անշար-  
ժացած գաղջ օդը տալիս էր նրանց տչն, ինչ որ մերժում էր  
ժլատ անկարեկից երկինքը — գոմերը տաք էին: Քայց միայն  
գոմը չէր, ուր թշուառութիւնն ապաստան էր գտել. այն բոլոր  
աւերակները, բոլոր «բէխէր» համարւած և երեսի վրայ ձրդ-  
ւած խրճիթները, կիսածածկ մարաքները, հին գետնափոր մտ-  
ռանները, մի խօսքով այն բոլոր անկիւնները, որ խաւար, երկ-  
չոտ դիւղն իր սանձարձակ բաց մռայլ երևակայութեամբ չար  
ոգիների բնակութեանն է յատկացնում, այդ դաժան ձմրանը

մարդկանց բնակարան էր դարձել: Յոյր այդ դարշելի բների  
մէջ, ուր անասուններից աւելի վատթար վիճակում անարդ-  
ուում էր մարդ արարածը, թշուառութեան հետ միասին ներս  
էր թափանցել երկչոտ կերպով նաև մարդկային ողորմածու-  
թիւնը, թէև սա շատ աւելի թույլ էր քան զարհուրելի չարի-  
քը, նոյնպէս ցնցոտիների մէջ էր կոյուլած, նոյնպէս խեղճ էր  
ու երկչոտ, որպէս այդ մերկ դողդոջուն մարմինները, բաց և  
այնպէս՝ դա ողորմածութիւնն էր, այն չաւտեսական գունատ  
ճամբորդը, որ դարերի հետ միաժամանակ անվերջ վազում է  
ցաւոտ աշխարհի անսահմանութեան մէջ, վազում է չարիքից  
առաջ անցնելու, նրա ճանապարհը փակելու համար, սակայն  
ի գնւր... Գեռ հոյր և արագընթաց է չարիքը և ողորմածու-  
թեան հրաշագործ ձեռները դեռ չեն կարողացել բուժել չարի-  
քի բացած բոլոր վէրքերը, սփոփել բոլոր վշտահար, վիրաւոր  
սրտերը, սրբել բոլոր արտասուքները: Ա՛ւշ, նա միշտ ուշ է  
հասնում. այն ժամանակ միայն, երբ թշուառները չարիքի ծան-  
րութեան տակ մռնչում են ցաւից, դալարում, տապալկում են  
դժոխային բոցերի մէջ: Նզովում են անողորմ երկինքը, որ վերջ  
չի տալիս իրանց՝ թշուառ դոյութեանը. օ, միայն այդ ժամանակ  
է հասնում այդ խղճալի ողորմածութիւնը ու մի քանի կաթիլ  
ջուր քամում կիսախանձ, ճենճերոտ շրթունքների մէջ:

Այս անգամ էլ նա ուշացաւ, չափից դուրս ուշացաւ, բաց  
էլի եկաւ, մտաւ թշուառութեան բոլոր որջերը. դարձեալ ու-  
ժասպառ, դարձեալ խեղճ և գունատ էր նա ինչպէս միշտ,  
բաց և այնպէս կարողացաւ խաւարում հնչւող հեծեծանքների  
վրայ մի առ ժամանակեայ լուութիւն տարածել, որ սակայն  
այնքան նման էր գերեզմանական լուութեան, մեռելային խա-  
ղաղութեան: Այլքանով էլ դուհ եղան թշուառները. լուռ էին  
և համբերութեամբ կրում էին իրանց սև ճակատաղիւրը. չէ՞ որ  
խեղճութիւնը խտասպահանջ չէ, մի կաթիլ ջուր, մի փշուր  
հաց, մի տաք անկիւն, մի ցնցոտի և քանի-քանի շրթունք-  
ներ օրհնութիւն են մրմնջում: Այսպէս էին այդ խաւար որջերը,  
այնտեղ ծւարած խեղճերը վայելում էին այն հանդիստը, որ  
տալիս է վիրաւորին իր կսկիճը մի քանի վայրկեան մեղմա-

ցնող սպեղանին, և օրհնում էին: Թշուառութեան անապատում մօլորած մի կարաւան էր այն, որին զարհուրելի փոթորիկն ստիպել էր գետին փռել, պինդ բռնել իրարից, կծկել սպասելով թէ երբ կըպարզւի հորիզօնը, ուր կըհասնի ճակատագրի այդ անսիրտ խաղի վախճանը և երբ կըզայ փրկութիւնը: Սպասում էին աչքերը մուսլ հորիզօնին ուղղած. բայց չարիքի աշխարհաւեր, զարհուրելի փոթորիկը շարունակում էր դեռ, փրկութիւնը չըկար ու չըկար: Եւ յանկարծ բոլոր այդ մուսլ որջերի մէջ անցաւ մի շշուկ, մի հատիկ բառ էր լուում ամենմի բերանից. «վերադարձնում են», «վերադարձնում են», կըրկնում էին ամենքը: Զարունակող փոթորիկի միջից այդ թափառական դժբախտ կարաւանը յետ պիտի տանէր իր ցաւերի հսկայական բեռը, որ այնքան յոյսերով բերել էր աշխարհին ցոյց տալու, դարման խնդրելու. և որքան հեռւից և ինչ զընով էր բերել... ով է վերադարձնում, երբ, և ինչու համար. այդ համարեա ոչ ոք չըզիտէր. մարդիկ վաղուց մոռացել էին, թէ ով է տնօրինում իրանց բախտը. ցաւերի մէջ անզգայացած նրանք դարձել էին ոչխարների մի հօտ, որ շարժում էր, ուր նրան տանում էին, իսկ երբ ձգում էին մենակ իր կամքին, միակ առաջնորդը մնում էր երկիւզը, յորատեւ, յարածուն երկիւզը: «Վերադարձնում են», բայց ուր. այդ գիտէին նրանք, միայն այդ — վերադարձնում են այնտեղ, որտեղից եկել են, վերադարձնում են դէպի «երկիր», դէպի վաթան: Քոլորանկիւններում, ուր բոյն էին դրել խեղճերը, խօսում էին երկրից, վաթանից. ուհ, վաթան. նրանք չըզիտէին օրհնէն, թէ տնիծեն այդ անունը: Վերադարձի միտքը նրանց երեւակայութեան մէջ զարթեցնում էր երկու պատկեր. մինը հայրենիքի անզուգական պատկերն էր, իր չքնաղ տեղով, զրաւիչ այն բոլոր քաղցրիկ վայելքներով որ տալիս է մարդուն սեպհական խրճիթը, սեպհական օջաղը, արտը, այգին, սեպհական ջուրն ու հողը, լեռն ու ձորը, սեպհական արևն ու երկինքը: Այդ դիւթիչ պատկերին անբաժան նրանց երեւակայութեան մէջ ցցում էր մի ուրիշը, սարսափելին, արիւնուռտը. դա չարիքի դժոխային պատկերն էր իր բոլոր ահաւորութեամբ. անհնարին էր լիշել

մէկն առանց միւսի, անհնարին էր նրանց զատել իրարից: Քայց պանդուխտների համար վաթանն այնքան քաղցր էր, նրա պատկերն այնքան գրաւիչ էր, որ խեղճերն աշխատում էին չըմտածել միւս արիւնոտ պատկերի մասին, չըլիշել չարիքը, վայելել մոռացութեան պարզեւած անդիտակից երջանկութիւնը, որ բոլոր թշուառների միակ մխիթարութիւնն է կեանքի ծանր օրերում: Ի՞նչեք չէին տայ, որ այդ մոռացութիւնը յարատեւ, յաւիտեան լինի, որ իրանք կարողանան թեւ առնել, թռչել դնալ և հայրենիքի դիւթիչ պատկերին փարել, նրա սուրբ հողը համբուրել: Քայց հնարաւոր էր մոռանալ, ինչ որ տեսել էին, ինչ որ կրել էին, քարերը կ'ազդակէին նրանց չորս կողմում. չէ որ ճանապարհի հէնց սկզբից նրանք պիտի տեսնէին իրանց ահաւոր անցեալի և նոյնքան ահաւոր մօտիկ սպառազլի իսկական պատկերը իր անողորմ իրականութեամբ, չէ որ հէնց սահմանից էր սկսում այն հսկայ դերեզմանատունը, որ նրանց վաթանն էր համարում: Գժւար էր մոռանալ, բայց վերադարձնում են, ինչ պէտք էր անել:

Ամեն անգ հասաւ. ամեն տեղ լուեց այդ միաժամանակ և տխուր և ուրախ լուրը, թէ վերադարձնում են: Այստեղ էլ էին խօսում այդ մասին. այն, այս առանձնացած խրճիթում, ուր ամբողջ տարի էր, ինչ բոյն էր դրել մի վաաբախտ ընտանիք:

Երեկոյ էր, ձմերային այն ցուրտ երեկոներից մէկը, որոնք իրանց յանկարծահաս խաւարով ուշ զիշերն են լիշեցնում: Խրճիթի մէջ առատ ծուխ արձակելով՝ պլպլում էր ճրագը. թիթեղեայ մի փոքրիկ մրօա աման, որի նեղ կոկորդից դուրս ցցւած պատրոյզը դանդաղութեամբ ծծում էր ամանի ներսի նաֆթը և իր պղտոր բոցով մրի մանրիկ հատիկներ կազմելով՝ փռում էր խրճիթում սև փոշու անձրև և խեղդող խանձրահոտ: Խրճիթում մարդիկ էին սպրում, բայց ձայն չըկար, ասես թէ կեանք չըկար, երեխաներ կային՝ աղմուկ չըկար: Հիւանդ էլ կար, նա էլ լուռ էր, չէր անքում. այսպէս են նրանք, միշտ հնազանդ ու համբերատար. չարիքը կարող է հազար կերպարանք առնել, հազար ձևով հարւածել, բայց մշտատե ցաւերին

սովոր մարմինը կրում է լուռ, դժբախտները չեն հառաչում, չեն դալարում իրանց անկողնի մէջ:

Ոսկօի գլխավերևում նստած էր Մարգարիտը և խնամուածեռով անդուգար յարգարում էր աղոտ ծածկոյթի ու փալանների ծէնները, որ մի կերպ պատսպարի հիւանդի վտիտ մարմինը: Վաղուց էր հիւանդ Ոսկօն. ճանապարհին մրսեց և Ն... զիւղը հասնելով՝ պառկեց և այլ ևս չըվերկացաւ: Այսօր նրա դրութիւնն առանձնապէս ծանր էր երևում. շնչառութիւնըն անկանոն էր, աչքերը բորբոքած, այտերը ծածկւած տենդային չարագուշակ կարմրութեամբ: Նա այրում էր և անդադար ջուր էր խնդրում: Այս բոլոր նշանները վհատեցնում էին Մարգարտին. նա զգում էր, որ հեռու չէ սարսափելի ժամը, երբ ինքը մենակ կրճզի աշխարհի երեսին իր անպաշտպան որբերի հետ. ահա թէ ինչու նա երկչոտ կերպով հետեւում էր հիւանդի դէմքի արտայայտութիւններին, հետևում էր նրա խոր ընկած, չռած աչքերի անզիտակից, թափառական հայեացքին, որով կարծես նա ինչ որ բան էր փնտրում, փախնում էր մանաւանդ երբ հիւանդն իր ոսկորոտ դեղնած ձեռքը դուրս քաշելով փալասի տակից՝ օդի մէջ ինչ որ շարժումներ էր անում, ինչ որ համարում, ցոյց տալիս: Կինը ժամանակ առ ժամանակ ջուր էր մօտեցնում Ոսկօի այրած շրթունքներին և ապա գլուխը ծնկան վրայ կուցրած օրօրում էր մեղմիկ և արտասուում երեսաներից գաղտնի: Թոնրի շրթանը նրատած էր տասներկու տարեկան Գալօն, սա էլ էր լուռ. մօր անհանգստութիւնը, ներքին տաղնապը չէր խուսափում նրա անժամանակ հասունութիւն արտայայտող աչքերի հայեացքից. նրա մանկական զգայուն սիրտը ճմլում էր ցուրց, երբ նկատում էր թէ ինչպէս մայրը օրօրում է գլուխը, ինչպէս լուռ է նա, և Գալօն նայում էր, նայում էր մօրը և մտածում... Երկու ուրիշ փոքրիկներ՝ հինգ տարեկան Ոսկօն և եօթ տարեկան Սիմօնն աւելի անհոգ էին. նրանք մինչև իսկ ընթրում էին այն չոր հացի պատառներով, որ այդ օրը երկսով միասին հաւաքել էին գոնեբից:

Երկու փոքրիկներից մեծը՝ Սիմօնը կամացուկ քաշեց Գալօի թւը.

— Գալօ, ա՛յ Գալօ. վերջինս նայեց եղբօրը հարցական եղանակով:

— Գալօ, ախր ամենքին էլ ուղարկում են երկիր, զիտես.

Գալօն գլխով դրական պատասխանի նշան արաւ ու լռեց. մայրը պատւիրել էր նրան հօր ներկայութեամբ այդ մասին բարձրաձայն չըխօսել. բայց փոքրիկի հոգսը չէր. նա շարունակեց.

— Մենք էլ կերթանք հա՛, Գալօ:

— Հա՛, հա՛, սուս կաց, Սիմօն ջան, կ'երթանք. կամացուկ ասաց Գալօն ու կրկին լռեց:

— Բա ինչի չար Սրքէն այսօր ասում էր, թէ դուք չէք երթալ երկիր, քո ափօն հիւանդ է, ասաց՝ որ դուք կըմնաք այստեղ, միշտ հաց հաւաքելով կապրէք:

— Չէ՛, չէ՛, Սիմօն ջան, Սրքէն սուտ է ասել, ափօն կըլաւանայ, մենք էլ կերթանք. սուս կաց, թող ափօն քնի, որ շուտ լաւանայ:

— Ուսկօ՛, Ուսկօ, մենք էլ կերթանք, Հէ՛, Հէ՛, մենք կ'երթանք մեր երկիր, ափօն կըլաւանայ, կերթանք. Գալօն ասաց, սուս մնանք, որ լաւանայ:

— Ես էլ կըղամ, կօչեց փոքրիկ աղջիկը այնպիսի բողոքող եղանակով՝ ասես որոշած էր նրան չըտանել. Սիմօնն այդ հասկացաւ, և քրոջն աւելի վախեցնելու համար վրայ բերեց.

— Քեզ չենք տանի, Ուսկօ, քեզ չենք տանի. քեզ կըթողնենք այստեղ, մենք կերթանք մեր խօրոտ երկիրը:

Ուսկօն իրաւ որ վշտացաւ. նա դադարեց ծամելուց, իր փոքրիկ շրթունքներն ու այտերն ուռեցնելով՝ վեր ցատկեց տեղից, վազեց դէպի հիւանդ հօր անկողինը և լացակուծած կանչեց.

— Ափօ՛, ափօ՛, Սիմօնը չի թողնում, որ ես էլ երթամ մեր երկիր, ամենքը դնում են, ինձ չեն տանում:

Հիւանդը տխրութեամբ նայեց այդ փոքրիկին, որ բռնւած էր հայրենիք գառնալու տենչով, «ախ» ասաց ու լռեց, աչքե-

ըր փակեց, ասես թէ ինչ որ մտածելով. երևում էր նրա զըլ-  
խում խռնած լիշողութիւնները շատ ծանր էին, որպէս զի  
նա խօսել կարողանար: Փոքրիկն անպատասխան մնալով՝ կանդ  
առաւ երկար, նայեց հօրը, նայեց մօրը, որ օրօրում էր իր գլու-  
խը. ասես թէ հասկացաւ իր հօր վիճակը, և յանցաւորի պէս  
կոտրեա՞ծ յետ գնաց և բռնեց իր նախկին տեղը, սուսկացաւ:  
Հնդհանուր լուսթեան մէջ յանկարծ լուեց Ոսկօի նւագ ձայնը.

— Մարդարիտ:

— Այտեղ եմ, ասա՛ Ոսկօ.

— Երկիր կերթաք Հա՛ա... ինձանից ծածկում էիր... Վա՛խ,  
երկիր, վա՛խ Աստուած:

Մանուկների վէճից հիւանդը հասկացել էր բոլորը:

— Չէ, Ոսկօ, ո՛վ ասաց, թէ կերթանք, առանց քեզ ինչ-  
պէս գնանք:

— Առանց ինձ... իմն՝ էլ չի լինի... գնացէք, Տէրը ձեզ  
հետ...

— Չէ, Ոսկօ, չէ՛, կըլաւանաս, կըլերկենաս, Աստուած ողոր-  
մած է, լայն օրեր կըգան, կերթանք մեր հող ու ջրին կըհաս-  
նենք: Մարդարիտն ասաց այս բոլորը, աշխատելով թաղցնել  
իր յուզմունքը:

— Իմն էլ չի լինի, կրկնեց հիւանդը... գնացէք...

Նա մի քանի բոպէ լուեց:

— Մարդարիտ. կինը դարձեալ կուացաւ հիւանդի երեսին:

— Կնիկ, դու քո Աստուած, ճժերին լաւ տար տեղ հասցրու,  
ո՛ւք. նա նորէն լուեց:

— Մարդարիտ, մեր երկիրն էլ «էնպէս» չի հա՛ա...

— Չէ Ոսկօ, էլ «էնպէս» չի:

— Գէ՛հ, Տէրը ձեզ հետ, գնացէք...

— Կնիկ, ձմեռ է, թէ՛ գարուն.

— Չմեռ է, Ոսկօ, ձմեռ է.

— Մեր երկիրն էլ ձմեռ է հիմա. էնպէս չէ՛.

— Հապա, մեր երկիրն էլ հիմա ձմեռ է:

— Հո՛ւ, կնիկ, մեր սարերի ձիւնը... շատ է, չէ՛... սա-  
բերը բարձր են:

— Չատ-շատ, Ոսկօ, մեր սարերը բարձր են նրա համար:

— Չատ կայ մինչև գարուն.

— Չէ, Ոսկօ, գարունը մօտ է.

— Հա՛, դուք գարնանը կերթաք, մեր երկիրն էլ «էնպէս»  
չի, գնացէք, իմն էլ չի լինի, ինձ էլ գարուն պէտք չի... էս  
երկրում գարուն էլ չըկայ, ծաղիկ չըկայ, մեր երկիր ծաղիկ  
շատ է, չէ՛, կնիկ:

— Հա՛, Ոսկօ, մեր երկիրը խօրոտ է, սուս կաց, որ քունդ  
տանի, լաւանաս, գնանք մեր երկիր:

— Իմն էլ չի լինի, իմը պըծաւ. լսիր, կնիկ, Գալօին չը-  
թողնես մենակ երթայ բաղրեան բուլաղները, էն կողմերը խօ  
զիտես, չարի բնակ է, ահ է:

— Չեմ թողնի, Ոսկօ, դու հանդիստ կաց.

— Ին երբ է մեր չայը <sup>1)</sup> վարարում, կաթնովին <sup>2)</sup> չէ՛...

— Հա՛, կաթնովին, Համբարձմանը:

— Հո՛, կնիկ, մեր չայը զիժ է, դարնանն ինչե՛ր է անում.  
Նա ժպտաց էլ մտածելով իրանց գետի գժութեան մասին. Մար-  
դարիտ, շարունակեց նա. թող Սիմօնն ու Ոսկօն այդ ժամանակ  
անից դուրս չերթան, կըխեղդեն, զիտես ինչպէս կըպատահի,  
մեր դռնից որ դուրս դան... էն կանտջ դտրն է... դարի տակ  
չայն է, կըվազեն դարի գլուխը, ջուրը աակից հողը կերած կը-  
լինի, դարը կըփլի և երեխաները կընկնեն կըխեղդեն. չըթող-  
նես երթան դէպի կանաչ դարը:

— Հա՛, հա, չեն երթայ, դու հտնդիստ կաց:

Հիւանդը լուեց, փակեց աչքերը:

Մտածում էր արդեօք իր վաթանի մասին, անցեալ լիշո-  
ղութիւններ էր փնտրում, թէ խօսելուց յոգնած, ուժասպառ-  
ւած լուեց. իրօք և մէկն էր և միւսը: Խօսելու ժամանակ նը-  
Վատուում էր, որ նա առանձին ջանքեր է գործ գնում մէկիկ-  
մէկիկ լիշել իր վաթանի բոլոր անկիւնները. նոյն իսկ աննշան  
առարկաներն այդ ժամին նրա համար դարձել էին հետաքրքիր:

<sup>1)</sup> Գետ. <sup>2)</sup> Կաթնով — Համբարձման տօնն է կոչուում, որովհետև  
Վաթնով բրինձ են ուտում:



մառը շատ սառն է լինում. Գալօն որ մեծանայ, հուսնձ անի, քրտնած լինի, թող շուտով չըխմի աղբրի ջրից, կըմբսի, կըհի-  
ւանդայ:

— Հն, չի խմի, Ոսկօ, չի խմի:

— Մէկ էլ, մտքիցս էլաւ. կնիկ, էն ուրտեղ է, ուր շատ  
զոխ ու բոխ, խաւրժիլ կայ, կնիկները քաղում են դարնանը.  
էն ուրտեղ է, կնիկ:

— Սև քարի ձորը, Ոսկօ, Սև քարի:

— Հն. Հն, Սև քարի ձորը: Խաւրժիլ ու բոխ շատ կայ չէ  
է... Հիմա ինչքան կանայ... չէ կնիկ. Հիմա շատ կայ խաւրժիլ:

— Ախր գեռ ձմեռ է, Ոսկօ:

— Չմեռ է, ձմեռ է. դարնանը կըլինի, էնպէս չէ... Կնիկ,  
զիտես, դարնանը մենակ չ'երթաս Սև քարի ձորը խաւրժիլի,  
հեռու է, լաւ չի. մենակ մի դնա:

— Մենակ չեմ դնայ, Ոսկօ. միասին կ'երթանք, քեզ հետ  
կ'երթամ:

— Հն, իմն էլ չի լինի, իմը պրծաւ:

Հաւը խօսեց, ու ժապառ հիւանդը գեռ փորձորում էր իր  
թուլացած մառախլապատ միտքը, գեռ դտում էր իր պղտոր  
երևակայութիւնը, իր վիշողութիւնը, որքան կարելի է աւելի  
մանրամասնութիւններ մտաբերելու համար, որպէս զի կարո-  
ղանայ վառ պատկերացնել իր վաթանի սիրուն տեսքը, որ ա-  
լագ-արագ ծածկուում էր խաւարի անթափանցիկ քօղով, հեռա-  
նում, փախչում էր նրանից, կորչում էր անսահմանութեան  
մէջ և նա յաւիտեան, անդարձ. ի դուր էր նա աշխատում բըռ-  
նել, պահել այդ պատկերը, կեանքն էր փախչում, խոյս տա-  
լիս նրանից, տանելով իր հետ ամեն ինչ, և՛ անցեալ, և՛ վիշո-  
ղութիւններ, և՛ վաթան:

Արագի լոյսն այնքան նւաղեց, որ առարկաները խրժի-  
թում քօղապատ էին երևում. Մարդարտի աչքին. հիւանդի  
ձայնը նոյնպէս խօսառ նւաղեց, բայց և այնպէս նա կարողա-  
ցաւ նորէն խօսել թոթովելով.

— Կնիկ, էն ուր կողմից եկանք մենք:

— Էս կողմից եկանք այ, էս կողմից. կինը ձեռքով ցոյց  
տուեց դէպի հարաւ:

— Էդ կողմից էկանք. դէ որ էդպէս է, շուռ տուր իմ ան-  
կողինը, թող երեսս դէպի այն կողմը դառնայ: Կինը կատարեց  
նրա ցանկութիւնը կրօնական երկիւղածութեամբ. նա զգում  
էր մահամերձ ամուսնու այդ վերջին ցանկութեան բոլոր վսեմ  
խորհրդաւորութիւնը. զգում էր խորապէս վայրկեանի բոլոր վե-  
հութիւնը. նա զիտէր մինչև այժմ, որ մեռնողի վերջին ցան-  
կութիւնն է լինում երեսը դէպի աղօթարան դարձրած իր շուն-  
չը փչել, բայց ահա մէկը՝ որ փոխում էր իր աղօթարանը, որ  
իր աղօթքի վերջին մրմունջները արտասանում էր երեսը դէ-  
պի վաթանը դարձրած, որ ուղում էր իր վերջին հայեացքը  
հայրենիքի վրայ հանդչի, դէպի հայրենիքն ուղղած մնայ ժա-  
մանակի տարածութեան մէջ սառած, անշարժացած յաւիտեան:

— Էս էլ աղօթարան է, կնիկ, քաղցր աղօթարան է, այս-  
պէս լաւ է. ասաց Ոսկօն, երբ կինը կատարեց նրա ցանկու-  
թիւնը:

Աիշտ այդ կողմն էր պատուհանը. հիւանդն աչքերը չը-  
ուեց դէպի այդ նեղլիկ անցքը, նայում էր. նայում էր դէպի  
գրսի խաւարը, նայում էր դէպի երկինք անյագ, անդագար:  
Պատուհանի անցքից երևում էր մի հատիկ աստղ վառ ու պըլ-  
պըլուն, նրան էր նայում մեռնողը, և ասես զրաւած նրա  
փայլով, էլ չէր խօսում, այլ միայն նայում էր. ով կարող էր  
իմանալ թէ երկրի և թէ երկնքի մէջ կախած այդ հօգին  
լինչ էր խորհում այդ բոպէին, արդեօք իր մտքերը, իր այրը-  
ւած սրտի կարօտն էր հաղորդում երկնքի լուսատուին, որ իր  
վաթանին հասցնի, թէ վերջին աղօթքներն էր մրմնջում իր  
թշուառ հայրենիքի վերակենդանութեան համար: Երկնք նայեց-  
ի վերջոյ շրթունքները մեղմիկ մրմնջացին.

— Ի՞նչ խօրոտ է.

— Ի՞նչը, Ոսկօ, ինչն է խօրոտ:

— Վաթանն ինչ խօրոտ է, կնիկ, վաթանը չէս անսնում,  
այ:— Նա դառանցում էր— կնիկ, եկաւ ինձ էլ տանի, ես էլ կը-  
ղամ. քիչ էլ կնց, վերեւից կըղամ, այնտեղից կ'երթանք, այ

այնտեղից, վերևից լաւ է, հեշտ է, այնպէս չէ, ներքևն ահ է, արիւն է. ինչքան արիւն կան, ծով է ծով, վրայից կը- թռչենք...

Աստղիկը շարունակում էր ցուրտ-ցուրտ սլլսլլալ. մեռ- նողի տչքերը բորբոքած հետևում էին նրա փայլին. շրն- չառութիւնը թուլացաւ այնպէս, որ հաղիւ մի թեթեւ շռուկ էր լուում. նա այժմ բոլորովին լուեց, ասես տարած աստղիկի փայլով. հեռաւոր վաթանի սիրուն պատկերը նրա համար կար- ծես մարմնացել էր այդ աստղիկի մէջ. նա վառ էր ու պայ- ծառ, հայրենիքը գրաւիչ ու քաղցր: Մէկ էլ յանկարծ նա դուրս հանեց ծածկայթի տակից իր վտխո ձեռները, ինչքան կարող էր դէպի երկնքի լուսատուն մեկնեց, շրթունքները շարժ- ւում էին, նա բաներ էր ասում, բայց խօսքերը կոկորդից դուրս չէին գալիս, թէև նա ջանք էր անում ասել ինչ որ բան. յանկարծ վերջին ոյժերը հաւաքեց, բարձրացաւ տեղից, ձղւեց դէպի աստղիկը ուժգին թափով: Ապա նոյն թափով էլ յետ ընկաւ, բարձի վրան մնաց անշարժ, աչքերն չոճ աստղիկի վրայ, որ շարունակում էր սլլսլլալ խաւար անսահմանութեան մէջ և կարծես կարեկցութեամբ դիտում էր հոգսալից աշ- խարհի մի մոռացած անկիւնում կատարուող այս մեծ տրա- դէզիան: Արագը մարեց. խրճիթը կտրաւ թանձր խաւարի մէջ, հեռւում դարձեալ լուեց շների այլանդակ օւնոցը: Մարգարի- տը սարսափեց, նրան թւաց՝ թէ խրճիթը ւցւեց ոգիներով. մեռելի մերձաւորութիւնը, իր միայնութիւնը, հոգեմաշ խաւա- րը սոսկումով պատեցին նրան, նա դողում էր ամբողջ մարմ- նով. ճարը կտրած՝ նա շօշափելով գտաւ Գալօին, ցնցեց արթ- նացրեց, իր մօտ քաշեց մի կենդանի շունչ լսելու համար: Ե- րեխան հասկացաւ սարսափելի իրողութիւնը. նրանք մօտ կպան իրար և մենաւոր խրճիթի ճնշող լուութիւնը վրդովւեց այրի մօր և որբ դաւակի մեղմիկ հեծկտանքներով:

Խրճիթում ցուրտ էր ու խաւար, դուրան էլ էր խաւար, դուրան էլ էր ցուրտ, խաւար ու ցուրտ էր նաև երկու սգա- ւորների սրտերը. մէկ աստղիկն էր վերևից սլլսլլում իր մեղմիկ յոյսով, բայց նրա շիթերն էլ ցուրտ էին ինչպէս ամբողջ աշխարհը:

Լսյւր բացւեց. վրայ հասաւ մի ամպամած թխպոտ օր- ձիւն էր գալիս: Մայր ու որդի սգաւոր խրճիթից դուրս գալով զանազան կողմեր գնացին. որդին խանութներից պատանք պի- տի մուրար, մայրը՝ քահանայից հոգևոր արարողութիւն. մէկը մամոնայի և միւսն Աստուծոյ պաշտօնեայի դուռը պիտի թա- կէր. դժւար էր որոշել, թէ մուրացկանութեան այս երկու տե- սակից ո՞րն էր աւելի անօրինակ, պատանք, թէ՛ ծիսակատարու- թիւն մուրալը: Խանութները բազմաթիւ էին, շուկան ընդար- ձակ. երեխան չըղիտէր ո՞ր խանութի դուռը բանայ, որ չը- մերժեն. նա անցնում էր կամացուկ մեծ ասպակիներով դռների սուաջից և զգուշութեամբ նայում էր մարդկանց դէմքերին. ասում են, որ երեխաները մարդկանց հոգին ճանաչելու ընդու- նակութիւն ունին, որ բնութիւնը տւել է նրանց այդ ինքս- տինկտը որպէս զօրավիզ իրանց թուլութեան, որպէս միջոց ինքնապաշտպանութեան ընդդէմ չարերի: Խեղճութիւնն ու ան- մեղութիւնը եղբայր դարձած՝ այդ առաւօտ անցնում էին խա- նութների շարքերի առաջից առանց համարձակելու բացել որ և է դուռ. մուսլ ու անհամբոյր չէին շուկայի բոլոր դէմքերը. կային դէմքեր, որոնցից ասես նոյն իսկ անմեղութիւն էր կաթ- կաթում, բայց մանկական անմեղութիւնը վախենում էր առա- ջինից, նրանք նման չէին. դէմքեր կային, որոնց վրայ ժպի- տը ոչ թէ խաղում էր, այլ ասես թէ տպւել մնացել էր պատ- րաստ ամեն մէկի ծառայութեան, սակայն խղճութիւնը փախ- չում էր այդ ժպտից էլ. նրա մէջ մի սարսափելի բան կար. սիրուն աչքեր կային, վառ, պայծառ, մանուկը նայում էր այդ աչք սիրուն աչքերը թարթում էին, երբ բիբերը շարժւում էին այս ու այն կողմը, նա սարսափած փախչում էր. չըկար, չըկար մի դէմք որ մանկանը փտահուութիւն ներշնչէր. չըկար մէկը որ ժպտար այնպէս՝ ինչպէս իր հայրը կըժպտար, նայէր այնպէս ինչպէս իր հայրը կընայէր. թունաւոր էին ժպիտները, սպա- նիչ-շանթող էին հայեացքները և մանուկը փախչում էր



աշխատանքի, որով այդ առարկան ձեռք է բերել. իսկ դձուձ, անսիրտ հարստի ամեն մի կոպէկը ձեռք է բերել բարոյական զարհուրելի տանջանքների զնով. նա իրաւունք ունի դողալ իր գրամի առաջ. զրանց համար նա «հոգի է այրել»: Այս խանութում էլ «հոգի էին այրում» ժպտալով, և Գալօին ասացին «Աստուած տայ». երեխան դուրս գնաց, կրկին սկսեց դիտել խանութների դռները: Ահա մի ուրիշ խանութ. Գալօն կանգ առաւ, մի փոքր դիտեց և ներս մտաւ:

— Ափօս մեռաւ, պատան չըկայ որ թաղենք. ասաց նա կամացուկ:

Մի քանի արշին կտաւ կտրեցին և տւին նրան. զարհուրելի բան կըլինէր, եթէ մարդիկ սովորէին ասել, թէ՛ «պատանն էլ Աստուած տայ»: Այդ ժամանակը դեռ չէր հասել. այդ անողորմ բառերը չարտասանեցին և Գալօն դուրս եկաւ խանութից հօր պատանը թւի տակ. նա շտապով տուն գնաց: Մի քանի ժամից յետոյ քահանայի պատւէրով ժամակարը փորեց մի գերեզման. Գալօն այնտեղ էր և ձեռքերով քաշում էր հողը, մինչդեռ վերեւից ձիւնը թափւում էր ու թափւում: Գաղաղ վերցնող էլ ճարեց և քիչ յետոյ Ոսկօի դիտող փոսի առաջն էր. բաց էին աչքերը, սառած հայեացքը ուղղւած դէպի երկինք, ուր նա կարծես փնտռում էր տակաւին այն աստղիկը, որի մէջ տեսաւ նա վերջին անգամ իր վաթանի պատկերը, որի միջոցով վաթանը կանչում էր նրան: Սակայն աստղիկն էլ չըկար երկնքում. նրա լոյսի փոխարէն ցած էին թափւում ձիւնի թերթիկները, և սպիտակ շերտով ծածկում պանդխտի դիակը, ծածկում նրա բաց աչքերը, մինչդեռ քահանան կարդում էր ազօթքը: Քիչ յետոյ իր յաւիտենական բնակարանում սառն հողաթմբի տակ ծածկեց պանդխտն իր վաթանի կարօտով, իր այրւած սրտով, իր անհուն ցաւերով և ծածկեց յաւիտեան: Երբ Գալօն մօտեցաւ համբուրելու աւետարանը, նրա շրթունքները կամացուկ մըմնջացին՝

— Տէրտէր, «Աստուած տայ»:

Դեռ երբէք այս երկու բառն այսքան ի դէպ, այսքան արդար կերպով չէին արտասանել:

Օրեր անցան, հասաւ դարունը. թշուաւներին վերադարձնում էին. նրանք խմբեր էին կազմում մի «աչքում արցունք», միւսում խնդութիւն», դէպի վաթան ճանապարհ ընկնելու համար: Այդպէս են չոււմ աշնանը՝ թռչունները:

Երեկոյեան Մարգարտի մօտ եկաւ իրանց գիւղացիներից մէկը.

— Մարգարիտ, ասաց. զիշերը պատրաստւիր, էզուց առաւօտ շուտով ճանապարհ ենք ընկնում. աշխատիր, պատրաստ լինիս, որ «էլից» յետ չըմնաս, թէ չէ մենակ կըմնաս, շարած ու խեղճ:

Մարգարիտը խոստացաւ պատրաստ լինել. ինչ ունէր պատրաստելու, բաւական էր երեխաներին զարթեցնել և ձեռքերից բռնել:

Առաւօտեան լուսաբացից դեռ շատ առաջ նրա դուռը թակեցին. ներս մտաւ նոյն հարւանը:

— Դէ, շուտ, Մարգարիտ, երեխաներին վերկացրու, ճանապարհ ենք ընկնում:

— Ես չեմ գնում երկիր. եղաւ Մարգարտի պատասխանը:

Մարդն ապշած մնաց.

— Ի՞նչպէս թէ չես գնում, չէ՞ որ ուղարկում են:

— Ես յետոյ կըգամ.

— Յետոյ... մենակ... ինչ պատահեց քեզ, այ կին. գժեցիր, ինչ է, երեխաներիդ յետուն ես ընկել. խելքի արի, մեղք ես, խեղճ ես, քեզ չես խղճում, դոնէ այս որբերի մասին մտածիր.

— Ես յետոյ կըգամ. կրկնեց Մարգարիտը:

— Տէր Աստուած, ինչու. ինչ պատահեց մի զիշերւայ մէջ:

— Ոչինչ, ես յետոյ կըգամ, Աստուած ողորմած է, էլի դընացող կըլինի:

Զարմացած ու շարած հարւանը գլուխն օրօրելով թողեց, գնաց:

Իրաւ որ զարմանալի էր. ինչ էր Մարգարտի այս յան-

կարծական որոշման պատճառը. ինչ էր պատահել մի զիշեր-  
լայ մէջ:

Մի զիշեր... Հեշտ է ասել. բայց դա մի ամբողջ յաւի-  
տենականութիւն էր, որ անցել էր Մարգարաի գլխով. օ, նա-  
երբէք, երբէք մոռանալ չի կադող այդ սարսափելի զիշերը:  
Ահա թէ ինչ էր պատահել.

Երբ բոլորովին մթնեց, երեխաներն այս ու այն կողմում  
իրանց անկիւններում կծկւեցին, քնեցին: Մարգարիտը մնաց  
նստած թոնրի շրթին. ճրագի խղճուկ լույսը շարունակում  
էր պլպլալ: Երկու ձեռքերով զրկած ծնկները, Մարգարիտը  
քաշ էր ձգել գլուխը կրծքի վրայ և հայեացքը ճրագի բոցին  
ուղղած՝ մտածում էր. որչափ բան կար մտածելու... մինը մի-  
սից սև, մինը միւսից սարսափելի էին այդ մտքերը — երեք  
մանր երեխայ, լեռներ, լեռներ լի հարամիներով, երկար տա-  
ժանելի ճանապարհ, ամեն քայլում արիւն, մահ, վերջն էլ ո՞վ  
զիտէ, ինչ է սպասում... էլ զիւղ կա՞յ... էլ տուն ու տեղ մը-  
նացել է... դո՞նէ Ոսկօն կենդանի լինէր. չըզիտէ երանի ասի  
նրան, թէ խղճայ. ինչ ցաւերով մեռաւ խեղճը, ինչպէս էր  
ուզում աուն դառնալ, վաթանը տեսնել, պիտի մնայ օտար հո-  
ղում, անտէր, անքար, մոռացւած զերեզմանում. նա սկսեց  
ցաւել Ոսկօի վրայ, ո՞վ օրհնել կրտայ զերեզմանը, ո՞վ խունկ  
կրծխի վրան. անխունկ, անաղօթք մեռելը մի ցաւ է տիրոջ  
համար: Այսպէս էր մտածում Մարգարիտը. շատ զիշեր անցաւ.  
դուրսը լուռ էր, խաւար ներսում պլպլում էր ճրագը և նրա  
գողգոջուն բոցին նայում էր Մարգարիտը երկար-երկար: Մէկ  
էլ յանկարծ այդ բոցն սկսեց ձգւել վեր, բարձրացաւ, լայնացաւ  
և զարհուրած Մարգարիտը բոցի փոխարէն իր առաջը տեսաւ  
մի մարդ, մի հիւանդ, զգգուած մարդ. դունատ ու մռայլ դէմ-  
քը կրում էր անհուն ցաւերի կնիք. եղանակը ցուրտ չէր, բայց  
նա գողգոջում էր ամբողջ մարմնով. ցնցոտիները չէին ծած-  
կում նրա մերկութիւնը. ուսի վրայ ձգւած էր մի սպիտակ կը-  
տաւ, որ երկու կողմից մինչև զետին էր հասնում. բայց նա  
այդ կաւառով չէր ուզում ծածկել իր մերկութիւնը, նրան ձեռք  
չէր տալիս և դողում էր, դողում. թշուառութեան ու վշտի մի

սպանիչ մարմնացումն էր այդ պատկերը: Մարգարիտը նայում էր.  
յանկարծ նրա մաղերը զիգացան գլխին, սարսափի դող անցաւ բո-  
լոր մարմնով, նա ճանաչեց Ոսկօին. իսկ և իսկ Ոսկօին, նոյն-  
պէս հիւանդ, նոյնպէս տանջւած, ինչպէս էր նա մահւան ան-  
կողնում: Մարգարիտը փորձեց ճշալ, բայց ձայնը խեղդեց կո-  
կորդում. ուղեց փախչել, անկարող եղաւ մի քաջ անգամ աս-  
նել. ուստի նա փակեց աչքերը, որ դո՞նէ չըտեսնի մեռելի պա-  
կերը. սակայն այդ էլ չ'օգնեց. նա լսում էր Ոսկօի ատամների  
շխկշխկոցը, զգում էր, թէ ինչպէս նա դողում է. երկար մնաց  
այդպէս, ապա կամացուկ գլուխը բարձրացրեց, որ տեսնի, թէ չը-  
հեռացաւ արդեօք ուրուականը. և այդ վայրկենին աչքերը մեռելի  
աչքերին հանդիպեցին. էլ չըկարողացաւ երեսը ծածկել, չըկա-  
րողացաւ փակել աչքերը, խոյս տալ ուրականի տեսքից, նրա  
ցուրտ հայեացքից, որ սակայն այնքան ցաւ, այնքան կսկիծ  
ուներ իր մէջ: Նրանք նայում էին իրար լուրթեամբ: Ոսկօն  
անշարժ էր իր տեղում:

— Ի՞նչ ես ուզում, Ոսկօ, ասաց վերջապէս Մարգարիտը.  
ինչու չես թողնում որ իմ ցաւերի մէջ ապակւեմ դո՞նէ:

— Երկիր էք գնում.

— Գնում ենք դժոխք. գնում ենք ցաւերի աշխարհ, զը-  
նում ենք բոց ու կրակի մէջ. երանի՛քեղ, դնացիր պրծանր,  
թո՞ղ մեզ դո՞նէ հանդիստ:

— Երանի ինձ... ինչու չես ասում՝ վա՛յ ինձ. տես... և  
նա ցոյց տւեց իր մերկ մսերը. վտիտ, կապտած, սարսափելի.  
կնիկ, ցուրտ է, մրսում եմ, մրսում եմ, քննլ չեմ կարողանում.  
ա՛խ, կնիկ, ինչքան սառն է էս երկրի հողը. իմ ոսկորները  
չեն տաքանում, տեղս հանդիստ չէ, մենակ եմ, օտար եմ, պա-  
տան էլ չունեմ. անասառած կնիկ, անպատան մեռել ո՞վ էր  
տեսել աշխարհում. հողն ինձ զրա համար տեղ չի տալիս, ա-  
մենքը պաան ունին, մէկ ես չունեմ. ես դողում եմ, օ, ինչ-  
քան սառն է էս երկրի հողը. մերը տաք է. կամ ինձ էլ տար,  
կամ տուր ինձ պատան:

— Ոսկօ, չէ՛ք բեզ պատանով թաղեցինք:  
Մեռելը ժպտաց, ցուրտ, սպանիչ ժպիտ. և Մարգարիտը

տեսաւ այդ ժպիտն էլ. այդ սարսափելի էր, զոնէ չըժպտար, թո՛ղ միայն արտասուէր, թո՛ղ անիծէր, մեռելի անէճքը իր ժպտից ահաւոր չէ. բայց Ոսկօն ժպտաց ասես զիտմամբ:

—Պատանով թաղեցիք, բայց զո՛ւ առար այդ պատանը, քո՞ ձեռքի աշխատանքով, քանի՛ տարի էս խեղճ ոսկորներս քեզ պահելու համար մաշեցի, ա՛յ կնիկ. էդ բոլորը մի պատան էլ չէր արժի. դու գնացիր պատան մուրացիր ինձ համար. ո՛վ է տեսել պատան մուրան. ա՛ռ, առ այդ պատանը. և նա դայրացած ձգեց ուսի կտաւը, որ ընկաւ, փուռեց նրա ոտները առաջ կազմելով տասնեակ ծալքեր. —Թո՛ղ ես դողամ, շարունակեց նա, անաէր, անախրական, իմ անքար, անխունկ գերեզմանում, էս երկրի սառն հողի մէջ:

—Ախր խունկ էլ ծխեցինք, տէրտէրը բուրվառից թափեց վրադ:

—Տէրտէրի բուրվառից, զո՛ւ էիր ածել այնտեղ, զո՛ւ էիր առել...

Մարգարիտը նորէն լռեց, ինչպէս դատապարտած յանցաւոր:

—Անխունկ մեռել... կրկնեց Ոսկօն և դարձեալ ժպտաց այն սարսափելի ժպտով, որ սառեցնում էր Մարգարտի արիւնըն իր երակները մէջ:

—Ես մեղաւոր եմ. ճչաց Մարգարիտը, գնա՛, Ոսկօ, աման, գնա՛. ես էլ չեմ երթայ երկիր, մինչև զու պատան ու խունկ չ'ուեննաս. թո՛ղ հողուս պարտքը լինի. միայն դու գնա:

Բայց մեռելն ասես չէր լսում նրա խօսքերը, նրա աղերսը. նա շարունակեց պատմել իր ցաւերը.

—Ես խօսմ անթաղ եմ, ա՛յ կնիկ. ես թափառական եմ, գիշերները վեր եմ կենում և նստում եմ սառը փոսի եզրին, նայում եմ իմ աստղին, նրան եմ պատմում ցաւերս, դողում եմ, դողում եմ. աստղն էլ ցուրտ է, և ես արտասուում եմ. ախր դու թաղման վարձը չես առել, գերեզմանս օրհնել էլ չես տւել. էլ ես ինչպէս հանգիստ քնեմ: Օ՛, սառն է այս երկրի հողը, շատ սառն է. պատան էլ լինի, հաղիւ տաքանամ, խունկ էլ լինի, հաղիւ հանգստանամ, աղօթք էլ ասեն, հաղիւ խա-

ղաղւեմ, բայց էլի թող իմ ընկերների պէս լինիմ, թո՛ղ գոնէ գիշերները չըղուրս գամ, թող մնամ գոնէ փոսի մէջ, այնտեղ դողամ: Մի մեծ ժայռ ճարիր, այնպէս, ինչպէս պոկած է սարի կրճքից, այլանդակ ու ծանր, շնա ծանր. սև ինչպէս իմ սիրտը. կարծր ինչպէս աշխարհի սիրտը. գնել տուր այդ ժայռը գերեզմանիս վրայ, թող ճնշի անվերջ, անողորմ կերպով այս ցուրտ, ցաւոտ կուրծքս. թո՛ղ ճնշի յաւիտեան... առանց այդ քարի ես միշտ կը վերկենամ, էնտեղ էլ երթաս, էնտեղ կը դամ, այսպէս կը դամ, ճիշտ այսպէս: Ա՛յ, կնիկ, Աստուած ուրիշ, ո՛ւր ես ինձ այսպէս թողնում ու գնում. տուր ինձ գոնէ խունկ ու աղօթք, քար ու պատան, կամ ինձ էլ տար. սառն է այս երկրի հողը, ա՛խ շատ սառն է... Իսկ այս, աւելացրեց նա, վերցնելով գետին ընկած կտաւը—տար և տիրոջը տուր. և նա թափով ձգեց այդ պատանը խրճիթի մէջ. կտաւը մի քանի ծալքեր արաւ և փուռեց քնած Գալօի վրայ:

Մարգարիտը ճչաց.

—Ի՞նչ ես անում, ա՛յ մարդ, պատանն ինչու ձգեցիր երեսի վրայ. և նա վեր ցատկեց թափով, որ չարագուշակ կը տաւր իլի Գալօի վրայից. ձգեց ձեռները տարածութեան մէջ, և արթնացաւ քրտնքի մէջ կորած: Ոսկօն չըկար, պատանը չըկար. ճրագը վաղուց մարել էր, խրճիթը խաւար էր, չորս կողմը նայեց, երեսը խաչակնքեց, բայց սարսափը չ'անցաւ. երկու ճակատներ էր. նա կրկին խարխափելով դաւա Գալօին, գրկեց, համբուրեց, պինդ-պինդ կպաւ նրա կրճքին, որ լսի նրա շնչառութեան ձայնը, նրա կենդանութեան նշանը, և այդպէս լուռ կացաւ:

Քիչ յետոյ՝ լուսաբացին, հարևանն եկաւ, դուռը թակեց, որ ճանապարհ ընկնեն դէպի վաթան, բայց Մարգարիտն էլ չէր գնում. իր ամուսնուն խունկ ու աղօթք, քար ու պատան էր հարկաւոր և այն ո՛չ թէ մուրալով՝ այլ իր աշխատանքով, իր ճակատի քրտինքով, իր և իր Գալօի աշխատանքով սլտի ձեռք բերէր:

Ամառ էր. Արարատեան հարթութեան սարսափելի ամառը. միջօրէի արևը ճառագայթների փոխարէն ասես երկնքից շիկացած երկաթի շառաւիղներ էր թափում խանձած դաշտերի, մրկած դիւղերի վրայ. երկիրը կարծես հեռում էր շողի ձեռքից, օդը շնչել չէր լինում: Անասպարհների թանձր փոշին աաքացել էր ինչպէս վառ հնոցում. մերկ ոտներով անհնարին էր քայլել. ջրերն առուններում գոլորշիանում էին և շտապ-շտապ փախչում իրանց անհիւրընկալ կանաչադուրկ ասփերից, որ շուտով մայր գետի ծոցում գով հանդիստ դտնեն: Օձերը դուրս էին թափւում իրանց ծակերից, խմբերով դիմում գէպի առուններն իրանց ծարաւը յագեցնելու և ապա շտապով լետ էին գայիս ոլոր-մոլոր և կուտապ դառնում հնձուրի խրձի տակ: Գաշտերում անդ-տեղ միայն կանաչներ էին երևում. մրնացածը գեղին էր. ցորենի արտերը մանաւանդ վաղուց էին հասունացել, չորացել, հասկերը ինչպէս հնոցի վրայ բոված՝ կրուրնձել, ցած էին կախել գլուխները, բաց հունձը դանդաղութեամբ էր առաջ գնում. հնձուրներն օրւայ մեծ մասն անց էին կացնում խրձերի սոււերում. անհնարին էր մանգաղ շարժել. մարդիկ վառւում էին շողից ու ծարաւից: Գաշտերում ոչ մի շշուկ, ոչ մի թռչնի ձայն, բացի այն միակերպ, տաղաուկ բըղ-գոցը, որ չըզիտես ո՞ր միջատի տարօրինակ երգն է այդ տարօրինակ ժամին: Ասկայն այդ սարսափելի շողն ասես թէ չէին զգում ամենևին այն երկու հողին, այն կինն ու երեխան, որոնք մեն-մենակ դաշտի տօթակէզ ամայութեան մէջ դանդաղութեամբ անցնում էին արտից արտ, ուր գործել էր հնձուրի մանգաղը, ուր փռւած էին խուրձերը: Երկու հասկաքաղեր էին նրանք, Մարգարիտն ու Գալօն, որոնք այդ անտանելի շողին հաւաքում էին «խոզանների»<sup>1)</sup> մէջ թափթփոտած հասկերը և ածում այն տոպրակների մէջ, որոնք կախւած էին իւ-

<sup>1)</sup> Հնձած արտը խոզան է կոչւում:

րաքանչիւրի թիկունքից: Արևն էր այրում վերևից իր կիզիչ շողերով, տօթն էր խեղդում կոկորդը չորացնելով, մէջքերն էր ցաւում անդադար բարձր ու ցածր անելուց, փշերն ու ցողունների սուր մնացորդներն էին ծակոտում նրանց մերկ ոտները, որոնք ուռած էին ու բորբոքւած: Այս բոլորի վրայ ուշք չէին դարձնում մայր ու որդի, ասես թէ չէին էլ զգում. նրանք յափշտակւած էին իրանց աշխատանքով. հասկեր էին փրնտւում ուշադիր հայեացքով, մէկիկ-մէկիկ վերցնում և լցնում իրանց պարկերի մէջ սպանիչ դանդաղութեամբ: Քանի անգամ պիտի կռանան ու բարձրանան այդ ուժասպառ մէջքերը, քանի սուր փուշեր պիտի տնկւին ճաքճաքոտած, արիւնակալած մատների ծայրին, քանի արտերի մարդեր պիտի անցնեն մի ծայրից միւս ծայր՝ երկնքից թափւող բոց ու կրակի տակ, մինչև որ լցւին պարկերը, և քանի այդպիսի պարկեր են հարկաւոր, որ թակելով հասկերից՝ ցորեն ստացւի և այդ ցորենի զընով մի թշւառ պանդուխտ խունկ ու աղօթք, քար ու պատան ունենայ: Օ՛, գիտէր հնձուրն արդեօք, որ իր ձեռքից անդադուրութեամբ կամ անհոգութեամբ դուրս պոճած ամեն մի հասկ երախտագիտական զղացմունքով է լցնում այս խեղճերի սրտերը, մոռացնում է իրանց կրած ցաւերը:

Արևը թեքւեց դէպի իր մուտքը. հնձուրները վերկացան իրանց գործը վերսկսելու. միայն մայր ու որդի գեռ շարունակում էին հասկաքաղը. առպրակները մօտ էին լցւելու, երբ մայրը կամացուկ գլուխը բռնեց ու նստեց:

- Մարէ, էլի. հարցրեց Գալօն ցաւակից տխրութեամբ:
- Հն, քե մեռնիմ, էլի դոդս բռնեց. ջնւր, Գալօ, ջնւր.
- Երեխան գլխի «թասակը» հանեց, վազեց դէպի մօտակայ առուն, ջուր ածեց գլխարկի մէջ, վազէվազ լետ եկաւ, մօր դողդոջուն շրթունքներին մօտեցրեց. սա ազահութեամբ ծծեց և գլուխն արտի թմբի վրայ դնելով՝ սկսեց դողալ, դողալ...
- Ջնւր... որդին կրկին ջուր բերեց. հիւանդը նորէն խրմեց տաք հեղուկն առանց կարողանալու մեղմել իր այրող ծարաւը, հանգցնել ներսի կրակը:

Ամրան գեռ սկզբներից Մարգարիտը առաւապում էր տեն-

դով. լեռնային երկրի օդին ու ջրին սովոր կանացի կազմաւածքը չըզիմացաւ օտար երկրի սպանիչ, թունաւոր կլիմային: Ամենայն օր ճաշից յետոյ ճիշտ միւսնոյն ժամին պարբերական տենդը այդ դժբախտ կնոջը գետին էր գլորում օր — աւուր աւելի և տւելի մաշելով, աւելի ուժասպառ դարձնելով նրան: Չընայելով իր այդ հիւանդութեան, հաւատարիմ իր հանդիսաւոր ուխտին, որ նա արել էր այն սարսափելի դիշերը, Մարգարիտն ամենայն օր դաշտ էր դնում հասկաքաղի՝ Գալօի հետ, մինչդեռ Սիմօնը և Ուսկօն մնում էին տանը, կամ աւելի շուտ փողոցներում, մի քանի պատառ հաց էին հաւաքում դռներից, որ երեկոներն ամենքը միասին ուտեն: Չատ ծանր օրեր անցան այս ձևով և Մարգարիտը շարունակում էր աշխատել: Որևէ արտում, որևէ թմբի վրայ կիզիչ արևի տակ տենդով տառապելուց յետոյ, իրիկնապահին Մարգարիտը դաշտերից դէպի տուն էր ուղղում իր քայլերը Գալօի հետ, բայց միշտ մի-մի տոսլրակ հասկերով լի ուտերին: Գաշտերից մինչև դիւղ ճանապարհը երկար էր նըրա համար. ոտքերը հազիւ էին շարժւում. բայց երբ տեսնում էր իր դառն աշխատանքի պտուղը, երբ զգում էր իր մէջքին հասկերով լի տոսլրակի ծանրութիւնը, նա մոռանում էր կրած տանջանքները, մոռանում էր իր թուլութիւնը և զոհ սրտով շարունակում էր իր ճանապարհը դէպի տուն, ուր դուանն իւրար մօտ նստած սպասում էին նրան Սիմօնը և Ուսկօն, փէշերում լցրած չոր հացի պատառներ:

Այսպէս անցան օրեր ու շաբաթներ: Անցաւ նաև ամառը, վրայ հասան աշնանային ցուրտ մառախլապատ օրերը. թխպոտ երկնքից այժմ յաճախ էր մաղում մանր անձրևը, որ այնպէս վհատեցուցիչ, տխուր է լինում սովորաբար: Մարգարիտի վիճակն այժմ աւելի ծանրացաւ. կամաց-կամաց նա նոյնիսկ անկարող էր լինում խրճիթից դուրս գալ և ամբողջ օրեր անց էր կացնում թոնրի շրթին: Մեծ դժւարութեամբ նա կարողացաւ վերջապէս ամառային տօթերին ձեռք բերած ցորենը՝ դրամի վերածել: Վտեցաւ ժամանակը, երբ նա պիտի ազատէր յանձն առած պարտքից: Մի առաւօտ նա վերկացաւ վերջապէս, ոյժ գործ դրեց և սկսեց քայլել դէպի շուկան. նա կանգ առաւ այն

խանութի առաջ, որտեղից Գալօն բերել էր հօր պատանը: Քաղմութիւնը շատ էր ներսում, առւտուրը կենդանի: Մտնել, թէ չըմտնել. մտածում էր նա. բազմութիւնը նրան վախեցնում էր, մի քիչ էլ կանգնեց, բայց շարունակել չէր կարող այդ կացութիւնը. աշնան սառն հովը նրան մրսեցնում էր, թոյլ ոտները դողում էին, ուստի նա մօտեցաւ և դուռը կամացուկ հրեց, ներս մտաւ և կանգնեց անշարժ: «Ողորմութիւն խնդրող է», մրտածեցին ամենքը և խանութի աշակերտը մի քանի կոպէկ դրամ մեկնեց դէպի Մարգարիտը:

— Ողորմութիւն չեմ ուղում, շէն մնաք. Աստուած ձեր մէկը հաղար անի, ես ձեր փողն եմ բերել, ողորմութիւն չեմ ուղում. կրկնեց նա, վախենալով թէ իրան չըհասկացան.

— Ի՞նչ փող:

— Ձեր տւած պատանի դինը. տղաս է տարել պատանը:

Խանութի տէրը մնաց ապշած. այս դողաւած, կմախք դարձած աղքատ կինը, այս խղճալին ողորմութիւն չէր ուղում, դրամը մերժում էր և ինքն էր դրամ բերել. յաճախորդներն էլ զարմացած ու հետտքերբւած շրջապատեցին այս տարօրինակ աղքատին:

— Բաջի, պատանը մենք ձրի ենք տւել, մեր վարձքին ենք տւել:

— Ձէն մնաք, բայց ես չեմ կարող. իմ մեռելը մեղք է, ուրիշի պատանի մէջ մեռել չի դինջանայ, առէք ձեր փողը. Աստուած ձեր մէկը հաղար անի:

— Ա՛յ, կնիկ, փողը պահիր երեխաներիդ համար. ասացին այս ու այն կողմից:

— Չեմ կարող, չեմ կարող. երեխաներիս թող Աստուած պահի, առէք ձեր փողը, ի սէր Աստուծոյ առէք. աղերսում էր Մարգարիտը: Սակայն ի զնուր, վաճառականը յամառութեամբ մերժում էր, ասես թէ այդ դրամն արեան զին լինէր նրա համար. թուում էր, թէ նա վախենում էր այդ դրամից, վախենում էր ձեռք դիպցնել, որովհետև մատները կ'այլուէին. պատանի դին էր, աղքատի պատանի զին:

Մի տարօրինակ պալքար էր կատարւում այդ ժամին այս

աղքատ գողգուհի կնոջ և վաճառականի մէջ. սխալքարի առարկան մի չնչին դումար էր, մի քանի արշին պատանի զին, որ հաւասարապէս անտանելի էր երկու կողմին էլ. կինն աշխատում էր ազատել այդ գրամից իր մեռած ամուսնու մարմնին հանդիստ տալու, իր հանդիսաւոր ուխտը կատարած լինելու համար. վաճառականը նոյնպէս աշխատում էր ազատել այդ գրամից, որովհետեւ նա հաւատացած էր, որ թշուառի պատանի զինը իր գործին մի ծանր անյաջողութիւն կրբերի, որ ինքը կրսնանկանայ, եթէ այդ չորացած ձեռքին զիպած թէկուզ մի հատիկ կոպէկ իր գրամարկոն ընկնի: Ո՛չ մէկը միւսի ներքինը հասկանալ չէր կարողանում և այս պատճառով ամեն մէկը դարմացած էր իր հակառակորդի անհասկանալի յամառութեան վերայ: Մարդարիտը կրկին և կրկին աղերսեց, որ գրամն ընդունեն. նա նոյնիսկ արտասւեց. որչափ էր չարչարել այդ գրամը ձեռք բերելու համար, այժմ ինչու չեն ընդունում, չէ՞ որ իր հալալ աշխատանքն է, իր առողջութեան զինն է, իր կեանքի մի մասն է, որով կամենում է իր ամուսնու յաւիտենական հանգիստն ապահովել. «Տէր Աստուած, մըմնջում էին նրա շրթթունքները արտասուքների միջից,—միթէ աղքատը իրաւունք չունի նոյն իսկ գերեզմանում հանդիստ լինելու»:

Տեսարանը ցաւալի էր. ամենքը զգացւած էին, վաճառականը նոյնպէս. բայց և այնպէս իր ուժից վեր էր համարում ընդունել այդ գրամը, նա դողում էր պատանի գնից: Տեսնելով որ իր բոլոր ջանքերն ի դուր անցան, Մարդարիտը վերև նայեց բացազանչելով՝ «Աստուած դուն վկայ եղիր». ապա ձեռքի արծաթեայ գրամները ձգեց բազմութեան առաջ և դուրս գնաց խանութից:

Հասաւ նաև ս. Խաչի մեռելոց օրը. գերեզմանատունն այդ օրը կենդանացել էր. մեծ ու փոքր, թարմ կամ հին հողաթմբերի վրայ բարձրանում էին զանազան ձևի ու մեծութեան քարեր, անտաշ յուշարձաններ ունայն կեանքերի: Բայց ոչ մի քար այնպէս մեծ չէր, ինչպէս այն, որ ծածկում էր մի մեռաւոր գերեզման. դա Ոսկօի գերեզմանն էր: Մարդարիտը վաղուց բերել էր տեւել այդ քարը սարից, իսկ և իսկ Ոսկօի ու-

գածն էր՝ «Սև՝ ինչպէս իր սիրտը, կարծր ինչպէս աշխարհիւ սիրտը». պանդխտի գերեզմանն էլ չէր կորի, չէր անյայտանայնա անյիշատակարան չէր: Մնում էր խունկն ու աղօթքը. ուր էր Մարդարիտը: Այժմ նա ծանր հիւանդ էր. շուկայից վերագառնալով՝ նա պառկեց և էլ չըվերկացաւ. արդէն քանի օր էր, որ տանից դուրս զալ չէր կարողացել. ուժասպառւած, հիւժւած կմախք էր դարձել նա: Բայց ինչպէս և լինէր, այդ օրը նա ուխտել էր գերեզմանատուն զալ. վաղուց անձկութեամբ էր սպասում նա այդ «մեռելոցին»: Ի՞նչպէս գնալ. գերեզմանատունը մօտ չէր, ինքը մենակ ու թողլ, Գալօն էլ չըկար գոնէ, որ ձեռքից բռնած տանէր մօրը. նա աշնան սկզբից հօտսոյ էր դնացել: Ճարը կտրած՝ հիւանդը վերկացաւ, և սկսեց դանդաղութեամբ, մըջիւնի քայլերով առաջ շարժել մի փայտի վրայ յնւած. նա վճռել էր ինչպէս և լինի գերեզմանատուն հասնել, տեսնել այն հսկայ քարը իր մեռելի վրայ. օրհնել տալ վերջին անգամ իր աչքի առաջ, վճարել տէրտէրին թաղման վարձ և յետոյ թող լինի, ինչ լինելու է: Խրճից մինչև գերեզմանատուն, դա մի ամբողջ ճանապարհորդութիւն էր նրա համար, և այն՝ տաժանելի ճանապարհորդութիւն. ո՞րքան քայլեց, քանի անգամ նստեց, հանդստացաւ, կրկին քայլեց և վերջապէս հեռւից տեսաւ գերեզմանատունը. ամեն կողմից բարձրանում էր խնկի ծուխը. ոչ մի մեռել մոռացւած չէր, միայն Ոսկօն էր սպասում մի խնամոտ ձեռք. ժամեր անցան, Մարդարիտը վերջապէս հասաւ: Խունկ էլ ունէր, կրակի վրայ ածեց. նւիրական ծուխը ոլոր-մոլոր բարձրացաւ գէպի երկինք, տանելով իր հետ նաև սգաւոր այրիի աղօթքի մըմունջները իր ամուսնու յաւիտենական հանդստեան համար: Քահանան էլ եկաւ, գերեզմանն էլ օրհնեցին: Աերջում հիւանդ կինը օրօրելով մօտեցաւ քահանայի աւետարանին և պինդ-պինդ համբուրելով վրան դրեց մի քանի արծաթ դրամ:

Ջարմտցած քահանան ապշած նայում էր մերթ գրամին, մերթ կնոջը, հասկանալ կամենալով թէ ինչ է նշանակում այդ:

— Թաղմելէն է, տէրտէր, աջիդ մեռնիմ, իմ մեռելի թաղմելէնը:

—Այ, կնիկ, քեզանից ո՞վ է թաղմելե ուզում:

—Տէրտէր, Աստուած է վկայ, արդար վաստակ է, ողորմութիւն չէ. չեմ էլ գողացել, մատներովս եմ աշխատել:

—Լաւ ես արել, որդի, որ աշխատել ես. օրհնած, պահիր երեխաներիդ տուր. և քահանան աւետարանի վրայից քարի վրայ ածեց դրամներն ու հեռացաւ:

Մարգարտին թւաց, թէ քահանան իր գլխին մի սարսափելի հարւած տուաւ. աշխարհն կարծես մթնեց նրա համար. գլուխը պտոյտ եկաւ, նրա ոտները դողացին և նա ընկաւ ամուսնու գերեզմանի վրայ նւաղած, գլուխը դրեց քարի վրայ.

—Չէն վերցնում... այնտեղ էլ չըվերցրին... այստեղ էլ չէն վերցնում... հողն աղքատի գլխին...

Քահանան չըհասկացաւ անշուշտ, թէ ինչ ծանր վէրք հասցրեց այս կնոջ առանց այն էլ ցաւոտ սրտին՝ մերժելով նրա լուծման: Գեռ երբէք ողորմութիւնն այդ աստիճան անմիտ, աննպատակ, նոյն իսկ անսիրտ չէր եղել: Ի՞նչ յոյսերով էր սպասում խեղճ այրին այդ «մեռելոցին», իր ցաւերի մէջ դա նրա միխթարութիւնն էր, ի՞նչ օրով հասաւ գերեզմանատուն:

Մարդիկ կամաց-կամաց ցրւում էին գերեզմանատնից, ումանք կարեկցական, ուրիշներն անտարբեր հայեացք էին ձգում դէպի այս կինը, որ շարունակում էր կռացած մնալ իր սիրելու տապանաքարի վրայ. բայց ոչ ոք չըկարողացաւ հասկանալ, որ այդ օրը գերեզմանատնում կիտւած բոլոր վշտերը հաւասար չէին այդ սգաւորի վշտին. չըկար մի սիրտ՝ որ այնքան խորը կերպով ցաւած և այնպէս անսիրտ կերպով վերաւորւած լինէր:

Ժամեր անցան. սգաւոր այրին անշարժ ընկած էր քարի վրայ. խունկը դեռ ծխում էր նրա գլխին մօտիկ, բայց այժմ ո՞չ թէ աղօթք ու գոհութիւն, այլ հառաչանք, միայն հառաչանք էր տանում դէպի Ամենակալի աթոռը, արհամարուած խեղճութեան հառաչանքը, աշխարհին անհասկանալի, անծանօթ ցաւերի հառաչանքը: Արևը մայր մտաւ, կամաց-կամաց խաւարն իջաւ երկրի վրայ. լուութիւնը տիրեց ամեն կողմ, գերեզմանական լուութիւն, որ վրդովւում էր միմիայն մենաւոր

այրի թոյլ, խղճուկ հեծկլտանքներով: Աշնանային երեկոյեան հովը փչեց, ցուրտ էլ էր. Մարգարտը փորձեց վերկենալ, բայց ուժասպառ կրկին ընկաւ գերեզմանի վրայ. մոռացւած էր խեղճ այրին. սարսափը տիրեց նրան. խաւարի մէջ մեռելները մէկիկ վեր էին կենում և ցցւում իրանց քարերի վրայ երկնք, երկնք. միայն Ոսկօն չըկար, նա անշարժ էր իր քարի տակ: Մարգարտը փակեց աչքերը, բայց տեսնում էր ամենքին. ցրտի ու սարսափի դողը անցաւ նրա մարմնով. նա կծկւեց, պինդ-պինդ կըպաւ քարին. ասես դա իր ամուսինը լինէր, որի գրկում սաշտպանութիւն էր փնտռում. քարը ցուրտ էր, շուրջը խաւար. սարսափելի... Երկինքը տեսնում էր, թէ ի՞նչ էր կատարւում ներքեւում. բայց անտարբեր էր թարթում իր փայլուն աչքերը...

Այդ երեկոյ Սիմօնն ու Ոսկօն մենակ մնացին խաւար խորճիթում. երկար սպասեցին, արտասուեցին, «մարէ» կանչեցին, բայց մարէն չըկար ու չըկար... Սիմօնը դիտէր, որ մայրը գերեզմանատուն գնաց, Ոսկօնն առաջարկեց ձեռք ձեռքի բռնել և զնալ մարէին գտնել. նրանք կամացուկ բաց արին խորճիթի դուռը, նայեցին դէպի դուռս. խաւարը սարսափելի էր. հազար ու մի աչքեր էին փայլում այս ու այն կողմում. երկուսն էլ միաժամանակ ճիչ արձակեցին, մէկ էլ «մարէ» կանչեցին և յետ փախչելով խորճիթ՝ ընկան իրար գրկած և լուռ:

Լուսաբացին անցորդները գտան Մարգարտի դիակը ամուսնու գերեզմանի վրայ և այնտեղ էլ հէնց ամուսնու կողքին թաղեցին: Խունկ ու աղօթք, քար ու սպտան չունէր Մարգարտը. նա անաէր-անտիրական մեռել էր:

Ամիսներ անցան. դաղթականների մի ասլ խմբի հետ վաթան էր վերադառնում Գալօն քրոջը շալակած և եղբօր ձեռքից բռնած: Հին սերունդը չըկար այլ ևս. թշուառութեան անապատում նա կորաւ, անյայտացաւ, որպէս զոհ մի դարաւոր քառութեան: Ո՞ր էր զնում այս նոր սերունդը. արդեօք դէպի Երիքով, թէ Բաբելոնեան դետերի ափերին՝ Սիօնը ողբալու...

Ա. Ահարոնեան



## ՊՕԷՏՆ ՈՒ ՄՈՒԶԸՆ

(է ա տ լ ա ծ)

Ստած եմ մի օր ու միտք եմ անում,  
 Ի՛նչ եմ շրջում դէն, չեմ կարողանում  
 Մի հրնար զըտնեմ—ցաւերըս հողամ.  
 Վեր կենամ, ասի, մէկի մօտ զընամ,  
 Կրկին պարտք անեմ, զլուխը քարը,  
 Մինչև որ տեսնեմք ինչ կըլնի ճարը:  
 Այսպէս մոլորեա՞ծ հէնց վեր եմ կենում,  
 Ականջըս յանկարծ մի ձայն է ընկնում.  
 — «Ողջո՛յն Պառնասի զըլխից սրբազան».  
 Ետ նայեմ, տեսնեմ իմ ծանօթ Մուգան:  
 Վեր կաց, բանաստեղծ, կանչում է այսպէս.  
 Վեր կաց, ներշնչելի, դուրս արի հանդէս.  
 Տանջում են ահա եղբարքըդ թշւառ,  
 Հեծում-հալածում աշխարհից աշխարհ.  
 Երկինք են հասել արցունք ու արիւն...  
 Ահա, քեզ համար բերել եմ աւիւն.  
 Հասիր վհատին, ըսփոփիր որբին,  
 Ոյժ տուր պանդուխտին իր երկար ճամբին...  
 Նայիր, եկել է, դարունը ահա,  
 Բազմել է կանաչ սարերի վրայ,  
 Չորերը լրցել, փրուել հովտում,  
 Հաւքերն երգում են, ծաղիկներ փթթում:

Դու էլ ըսթափւիր, երգիր քեզ նման,  
 Ողջունիր շրքեղ գալուստը զարնան:  
 — Հերիք է, Մուգա, երկինքը վկայ,  
 Ի՛նչ համբերելու սիրտ ու տեղ չըկայ.  
 Այնպէս կանեմ քեզ, որ դու մոռանաս  
 Արիւն ու դարուն, պօէտ ու Պառնաս:  
 Անիճւած լինին այն օրն ու տարին  
 Երբ գերի դարձայ ես քո քընարին.  
 Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից  
 Զըրկւած մնացի կեանքում բոլորից,  
 Յարգից ու վարկից,  
 Վայելքից, խելքից...

Աչքովդ էլ այսօր տեսնում ես, ահա,  
 Գնում եմ մէկից պարտք անեմ հիմա,  
 Ով գիտի այն էլ  
 Կարո՞ղ եմ զըտնել...

Այնօր դիմեցի «Հողով բանաստեղծ»  
 Մէկին, որ հէզիս յարգում է անկեղծ,  
 Որ ասում է միշտ, «դու լաւ ես զրում,  
 Բաց ափսոս, ափսոս, որ հայոց երկրում  
 Իսկի չը գիտեն պօէտի տեղը  
 Եւ նա շարունակ ընկնում է նեղը...»  
 Հէնց որ իմ փոքրիկ խնդիրքը լրսեց,  
 Նօթերը կիտեց, այսպէս ըսկըսեց.  
 — Ի՞նչ է, ասաւ, մի գործի չես.  
 Բա երբ պիտի դու ամաչես,  
 Չես ծառայում մի պաշտօնի,  
 Այդ տեսակ էլ մարդ կը լինի. —  
 Անգործ, անբան,  
 Թափառական,

Տեսէք, տեսէք—դատարկ պօէտ...  
 Ի՛նչ, ամաչիր դոնէ բօյէդ,  
 Գնա՛, զընա, մի գործ գըտիր,  
 Հէ՛չ չը լինի—մըշակ մըտիր...»

Եւ ահա այսպէս  
Տառապում եմ ես  
Խրրատելով,  
Նախատելով,

Հոգսերըս անթիւ,  
Ինչ կասես սրբան — բանաստեղծի փառք...  
— Ո՛հ, դու երջանիկ երկրնքի որդի,  
Փամ չէ յիշելու արտաքն այն վատի,  
Վերցրու քնարըդ, մի տրտմիր այդպէս,  
Առաջըդ կանգնած թշնամիդ չեմ ես:  
— Այո, թշնամի, և ոչ միայն հիմի,  
Վաղուց ես դու ինձ եղել թշնամի,  
Գեռ մօրս արգանդում կնքել ես պօէտ.  
Ծնընդեան օրից նորա կաթնի հետ  
Տրւիր ինձ թուլիչ այն ցօղը թագուն,  
Գաղտնի տիրեցիր իմ մատաղ հոգուն:  
Խեղճ մայրըս իսկի պօէտ չէր ուղել,  
Ոչ էլ իր կեանքում անունն էր լրսել.  
Եւ այժմ տըխրում, միշտ լաց է լինում,  
Որ իմ զործերը այսպէս են զընում:  
— Աւաղ, դու դիտես, քո մայրը, պօէտ,  
Գեղջուկ, ռամիկ մի կին է տրդէտ.  
Նա չի հասկանալ երբէք պօէտին,  
Թէկուզ և լինի հարազատ որդին:  
— Լուռ կաց, թշւառ, ինչ ես խօսում.  
Իմ խեղճ մօրն ես տրդէտ ասում.  
Իսկ այն խելօք մարդիկն ապա,  
Որ հասել են մինչ Եւրոպա  
Վամ թէ իրանց խելքի զօրով,  
Ակնարկներով, օրէցօրով,  
Փելիետօնով,  
Հաղար բանով  
Ծաղրում են ինձ, յանդիմանում,  
Միթէ նոյնպէս չեն հասկանում:

— Ո՛հ, Մեղասի \*) ականջը վկայ,  
Ջարմանայու ոչինչ չը կայ,  
Չեն հասկանում բնաւ, բնաւ:  
— Լըռիր, լըռիր, այ անիրաւ.  
Հաղիւ այդքան մեծ մեծ բըրդի  
Նոյն իսկ ծառան առաջնորդի...  
Ո՛վ Արամազդ, շանթ ու կայծակ,  
Ո՛րտեղ հասանք, ինչ իմացանք.—  
Չեն հասկանում... Անմիտ ջահել,  
Գու երևի չես պատահել  
Հըռչակաւոր այն «մըտրակին»,  
Որով նրանք հայոց ազգին  
Գաս են տալիս համեստութեան...  
Ո՛չ, ո՛չ, Մուղա, իմ սիրական,  
Խօսքը մնայ թող մեր միջում,  
Գու դեռ նրանց չես ճանաչում,  
Եւ ճանաչել չես կարող հեշտ.  
Օ՛, այնքան են նրանք պարկեշտ...  
Ա՛յ օրինակ. շատի բանի հետ  
Նըրանք, ինչպէս նաև պօէտ,  
Յօրինում են երգեր ու վէպ,  
Եւ այնպէս է լինում ոտէպ,  
Որ տակաւին իրանց մըտքում,  
Թարգմանում են ողջ աշխարհքում...  
Քայց և այսքան փառքն ահագին  
Ծածկում են կեղծ անւան տակին,  
Ու միշտ այսպէս  
Համեստ ու հեղ,  
Յամառ փակւած մի տաք քունջում,  
Այնպէս... որ դու չես ճանաչում:  
— Ե՛ս ճանաչեմ այդ չըքերին,

\*) Մեղասը այն հարուստ թագաւորն էր, որ չը հաւանեց Ապօլլօնի  
ճրգը: Բանաստեղծութեան զայրացած աստուածը, պատժելու համար, իր  
քննադատի գլուխը զարդարեց իշի ականջներով:

Ո՛հ, խրճալիք իմ աչքերին.  
 Ո՞վ են նրանք—«որոնողներ»,  
 Որ փրնտրածը չեն գրտել դեռ  
 Եւ ոտքելով ամեն անկիւն  
 Հոտ են քաշում զգոնը, թագոնը,  
 Աղմբկում են ամեն ձայնով,  
 Երևում են ամեն ձևով,  
 Օր-ցերեկով կեղծում, խարում  
 Ու միշտ իրանց բեռը կապում...  
 Եւ ինչպէս որ ամեն դործում,  
 Այստեղ էլ են կեղծել փորձում.  
 Բայց հսկայ չի դառնալ թրգուկ  
 Եւ ոչ քրնար—պարկապրզուկ:  
 Ձիրք չեմ տրել նրանց երբէք  
 Որ յօրինեն վէպեր կամ երգ,  
 Եւ ո՞վ է նա, անունն ասա,  
 Մի տող գրքի առանց Մուսա:  
 —Կնաց, կաց, հողիս, մի բարկանար—  
 Դու էլ ես ճիշտ, բայց խօսքըս առ-  
 Ուրիշ երկրում այդպէս կանեն,  
 Որտեղ իրանք շնորհք չունեն,  
     Դիմում են քեզ,  
     Որ դու օգնես...  
 Իսկ մենք ունենք ճոխ լանդարան,  
 Պատրաստ յանդեր շարան-շարան,  
 Խմբադիրներ ունենք կարող,  
 Որ կարող են շինել գրքող,  
 Պօէտ ուղես թէ վիպասան.  
 Եւ, Տէր չանի, թէ բարկացան,  
 Կարող են ողջ կրկին խըլել,  
 Մէկ էլ տեսար—տաղանդ չի էլ...  
 Ունենք երգի հրմուտ վարպետ,  
 Խաղ է անում յանդերի հետ,  
 Ուսուցանում ոգևորել,

Պօէտ դառնալ—երգեր գրել,  
 Դրում այնպէս բարձր ու վրսեւ,  
 Թէ հասկանաս՝ դոչաղ կասեմ.—  
 «Յօղակն ՚ի ճախը յայեր ամբուռ,  
 Խօշիւն դուղել ՚ի յամբ անդուռ,  
 Սաղբի արեգ թընդամբ տըրոփ  
 Զէտ տիր ռումբ ազգու ՚ի յոփ:»  
 —Օ՛, թըշառներ, ինչ լըսեցի.  
 Բայց դու ասա, ՚ի սէր Զևսի,  
 Եւ այդպիսով ո՞վ է կարող  
 Զնորհք առնել, դառնալ գրող:  
 —Ի՛հ, ինչ անենք, թող չը դառնայ.  
 Վարժապետից կը հեռանայ,  
 Կերթայ կապրի առանց հանդի  
 Ու լող կը տայ ծովում կեանքի,  
 Ազատ, ինչպէս քէֆը կուզի,  
 Ոչ սիրտ մաշի, ոչ ծաղր լըսի...  
 Ըս իմ հողին լաւ է այնպէս,  
 Թէ չէ՞ նայիր այս ինչ եմ ես...  
 —Պօէտ ես դու:  
 —Ահա, ես էլ այդ եմ լալիս.  
 Ի՞նչու այս ձիրքն էիր տալիս:  
 Թող լինէի մի կեղեքող,  
 Հաւաքէի միշտ փող ու փող.  
 Առաջ թէև «գաղան» ու «ցեց»,  
 Կը դառնայի շուտով ես «մեծ»,  
     Վեհ բարեբար  
     Ազգի համար,  
 Մեռած օրս էլ պսակ տային.  
 «Իր որբ ազգից՝ միակ հային»:  
 Կամ թէ տէրտէր լինէի թող  
 Խաչը վրդիս մեռել թաղող,  
 Սուփրի վերև միշտ նստէի,  
 Իմ տպրուտը գըրըստէի,

Ազգն էլ աչքը տընկէր վըրաս—  
 Իմ փըրկողը դու ես՝ որ կաս:  
 Թող լինէի հոգով արգէտ  
 Ձըրնակեր մի վարդապետ,  
 Որ կազմէին տըզէտ-գիտուն  
 Իմ անունով կուսակցութիւն,  
 Աջահամբուր միշտ բերէին,  
 Ձեռս ու փէշերս համբուրէին:  
 Ահա այսպէս բան լինէր մարդ,  
 Գնար ապրէր լի ու հանդարտ:  
 Կամ սնդուրած մի ճոխ փմար,  
 Որ ապրում է լոկ իր համար,  
 Ուտում-քընում, ելնում-ուտում,  
 Լի, գոհ, ինչպէս աղբակոյտում  
 Հանգիստ ապրող որդը պարարտ:  
 Կը լինէի չարգի մի մարդ,  
 Նոյն իսկ եթէ գլուխս այնժամ  
 Գատարկ լինէր հազար անգամ  
 Քան թէ հիմա իմ զըրպանը:  
 Ահա կեանքում այս է բանը.  
 Թէ չէ՛ լինել ի ծնէ՛ գերի  
 Մերկ Մուսալի ու երգերի,  
     Որդիք ու կին  
     Թողած բախտին,  
 Մերձաւորի ծաղր ու ծանակ,  
 Ուժից ընկնել անժամանակ,  
 Թէ պօէտ եմ... Օ՛, ո՛չ, Մուսա՛,  
 Մի անարդար պատիժ է սա,  
     Մի բախտ է սև,  
     Ախտակներև...  
     Եւ ինձ մօտիկ  
     Փորձած մարդիկ  
 Դեռ շատ վաղուց նկատեցին.  
 Կըռիւ արին, խըրրաւեցին,

Թէ աշխարհքին մըտիկ արա,  
 Չատն էլ խնդաց խեղքիս վրայ...  
     Իսկ ես, ախ, ես,  
     Միշտ խենթ այսպէս,  
 Գիշեր ցերեկ թերթում գըքեր,  
 Չինում էի դատարկ երգեր,  
 Միշտ քո քամով էի թըռչում,  
 Կեանքից, բախտից հեռու փախչում:  
 — Ա՛յ, ապերախտ, ինչ ես ասում.  
 Այն ո՞ր բախտն ես դու ափսոսում,  
 Որ չեմ արել քեզ իմ ձեռքով. —  
 Աստուածային հըղօր ձիրքով  
 Այս ցած կեանքից հիշտ ու անթև  
 Թըռչել երկինք — վերև՛, վերև՛,  
 Յաւեր, հոգսեր ողջ մուանալ,  
 Գժօխք իջնել, դրախտ գընալ,  
 Անհուն ըզգալ, թովիչ երգել...  
 Ո՞ր բախտից եմ ես քեզ զըրկել:  
 — Օ՛, ո՞ր բախտից. այ սևերես.  
 Ահա շարեմ, փշիւր ու տես: —  
 Ինձ մի անգամ առան տարան  
 Հաշտապահի ուսումնարան.  
     Չատ խօսեցին,  
     Համոզեցին,  
 Թէ կաւարտես այս դպրոցում,  
 Ատեստատը յետոյ ծոցում՝  
     Ուր որ գընաս  
     Տեղ կունենաս,  
 Լաւ փողով տեղ բուղղալտէրի.  
 Խաղէլինդ էլ տարէցտարի  
 Միշտ կաւելցնի քո ռոճիկը,  
 Գուցէ վրան և... աղջիկը:  
 Բայց դու եկար միտքս մըտար,  
 Ինձ չը թողիր տեղըս զաղար,

Գաւթարն աչքիս դարձաւ դաժան,  
Թիւ, կոտորակ, թրւանրշան  
Ուղեղիս մէջ դարձան որդեր,  
Քիչ էր մընում սիրտըս պայթէր:  
Հաշէգիրքը վայր ճրգեցի,  
Քեզ հետ փախայ ու զըրկեցի  
Այն լաւ տեղից, այնքան փողից...

Ապա ընկայ հարուստ խանութ.  
Խաղէլինըս, գործին հըմուտ,  
Մի անունով վաճառական,  
Ինձ խըրատեց, խօսեց այնքան.

— Ա՛յ, օրինակ,

Աղքատ, մենակ,

Քեզ պէս էի մի վախտ ես էլ,  
Հիմի նայիր—ինչ եմ զիղել...  
Մի հինգ տարի թէ որ մընաս,  
Դու էլ ինձ պէս մարդ կը դառնաս...  
Ահա կաստան, հաշւի զիրքը,  
Ողջ տալիս եմ ես քո ձեռքը:  
Քայց ես խաբւած, խենթ երեխայ,  
Այն բոլորը թողի, փախայ,  
Թէ չեմ կարող, ես չեմ կարող,  
Ես զրոզ եմ, զըրո՞զ, զըրո՞զ:

Սակայն էլի բախտըս ժպտաց.

Ձեռս բռնեց, տարաւ լանկարծ  
Ու պիսէրի տըւաւ պաշտօն:  
Գըրում էի և լի և տօն:  
Մեծաւորըս այնքան սիրեց,  
Հին գրչակոթն ինձ նըւիրեց,  
Ընկերներս էլ ինձ դաս տըւին՝  
Ոնց պըլովել խընդրատըւին:  
Քայց դու էլի եկար—զըտար,  
Խաղաղ գործիս մէջը մըտար.  
Ես էլ, քիմարս, իսկոյն և եթ,

Վէճ բաց արի ամենքի հետ,  
Թէ երբ մեզ մօտ կին է գալի,  
Ամեն բան էլ չի կարելի...  
Չի կարելի խեղճ զիւղացուն  
Դերի շինել ողջ տարին բուն,  
Տանել, բերել ու թալանել,  
Այրու պղինձն աճուրդ հանել...  
Այս բոլորը քիչ էր կարծես,  
Այնքան արիւր, սատանի պէս,  
Որ զըրեցի մեծիս սարսաւ,  
Նա էլ՝ կորի, կորի, ասաւ,  
Մենք ենք տալիս քեզ փող ու վարձ,  
Դու, Մուղայի խելքով ընկած,  
Վեր ես կենում մեր դէմ խօսում.  
Այդպէս պիտի մենք չենք ուզում:  
Սակայն Աստուած մե՞ծ է դու՞թով.  
Յայտնի կանտօր ընկայ շուտով,  
Լաւ էր, ասի, այսուհետև  
Կասրեմ ազատ, գործըս թեթև:  
Հետըս եկար, մըտար կանտօր,  
Գործերն արիւր խառնուփընթօր,  
Քո երեսից հէնց միւս տարին  
Իմ պաշտօնից ինձ դուրս արին:  
Աըրկին եղայ ես խայտառակ,  
Համ էլ ընկայ պարտքերի տակ:  
Հօ պօէտի պարտքն էլ զիտես.  
Այդ լոկ պարտք չի ուրիշի պէս,  
Այլ ազգային մի մե՞ծ առակ,  
Վէճ ու վըճիւ ծանր ու բարակ:

Ո՞ր մէկն ասեմ, ո՞րը թողնեմ.

Երբոր տեսան շընորհք չունեմ,  
Այնուհետև քանի անգամ  
Ծանօթ, ընկեր, լաւ բարեկամ—  
Տէրտէրութեան տըւին խորհուրդ.

—Այլ քեզ մեծ ժամ, լաւ ժողովուրդ,  
 Փարթամ քելեխ, յարդ, մեծարանք,  
 Հարստութիւն, Հանդիստ—հեշտ կեանք...  
 Իսկ ես անփորձ, անխելք, չիմար,  
 Ողջ մերժեցի լոկ քեզ համար,  
 Պատրտատ կեանքից, բախտից փախած,  
 Գանձանակի թեփշին թողած,  
 Քնարն առայ,  
 Պօէա դառայ,  
 Երդ ու աաղով մտայ Հանդէս.  
 «Հէյ, Մուղալի ընկերն եմ ես»,  
 Չայն արւեցի ողևորւած:  
 Հա, Հա, Հա, Հա, բիրտ հուհրուաց  
 Ժողովուրդը միաբերան.  
 Թուցրել է խելքն այս խեղճ տղան:  
 Հեռու կորի, խենթ պատանի,  
 Որ անպիտան, գործի, բանի,  
 Ուշք ու միտքըդ արւել երզին,  
 Մի չես նայում այս աշխարհքին:  
 Մենք մարդիկ ենք—գործ ենք անում,  
 Խենթ-մենթ բաներ չենք հասկանում:  
 Ես գոչեցի—խաւար ամբոխ,  
 Գու պաշտում ես հէնց փայլ ու փող,  
 Չես հասկանում դու պօէտին,  
 Ե՛ս, երկրնքի քընքոյշ որդին,  
 Երգում եմ սէր, ճշմարտութիւն...  
 Եւ գընացի խմբադրատուն...  
 —Տէր խմբագիր, պօէտ եմ նոր,  
 Քերել եմ ձեզ ոտանաւոր,  
 Ահա կարդամ ականջ զբրէք,  
 Չեր հանդիսում տեղաւորէք.  
 «Սևորակ աչքեր, սևորակ աչքեր,  
 Հալածում էք ինձ դուք օր ու գիշեր,  
 Նայում էք անթարթ իմ հոգու խորքում...»

Ինչու չէք քընում, ինչու չէք փակում:  
 Բանաստեղծն արդէն տանջանքից յողնել,  
 Ուղում է քընել, լաւիտեան քընել...  
 Գուք էլ քընեցէք, սևորակ աչքեր,  
 Յերեկս անցել է, գիշեր է, գիշեր...»  
 —Ոչինչ, կոկիկ է: Խօսելով անկեղծ,  
 Գուք վատ չէք զրում, պարոն բանաստեղծ.  
 Ամեն մի աողում տասն են վանկերը,  
 Բայց ինձ աղքատ են թըրում յանգերը:  
 Հապա, մի տըրէք ուղղեմ ես հիմա,  
 Տեսէք թէ որքան սահուն դուրս կը դայ:  
 Ուղղում եմ ես միշտ մեր պօէաներին,  
 Այսպէս եմ պօէտ շինել բոլորին.  
 «Սևորակ աչքեր, սևորակ աչքեր,  
 Հալածում էք ինձ դուք ինչպէս քաջքեր...»  
 Ես իսկոյն, ինչպէս հալածւած քաջքից,  
 Փախայ խմբադրից ու իրան աչքից,  
 Երգերըս սղիղ տարայ տըպարան  
 Ու տըրի ազգիս մի նոր երգարան:  
 Այնժամ մտրակող մի թունդ պուրլիցիստ,  
 Յայտնի քննադատ, բազմաղէա ու խիստ,  
 Սաստիկ վրդովւած իմ երգով, զբրքով,  
 Ծաղրի առաւ ինձ իրան «ակնարկով»:  
 Ես դէմ եմ, ասաւ, բանաստեղծութեան,  
 Ջրզեցնում է ինձ այդ երգի Մուղան:  
 Ոչ մըտքեր են պէտք, ոչ ձիրք և ոչ խելք.  
 Բառեր ու յանգեր—և ահա քեզ երդ:  
 Հէնց նոր դուրս եկած այս խակ տղան էլ  
 Գըլխից այս տեսակ բաներ է հանել:  
 Այն օրից քանդուեց մեր ազգի տունը,  
 Փչացաւ, ընկաւ մեր զբարութիւնը,  
 Հին պօէտները երբ որ ողջ մեռան,  
 Նոր մարդիկ եկան ու պօէտ դառան...  
 Սաստում ենք, ծաղրում, դոնէ չեն լըռում.

Ահա թէ մենք ինչ դժուար օրերում  
Պէտք է մաքառենք  
Կուենք ու մաքրենք,  
Հայոց անարդւած Պառնասը ամբիժ  
Ֆանդուզն, ինքնակոչ այս նորեկ խրմբից...»

Արածըդ հիմա հասկանում ես դու.

Բանաստեղծ շինել մի անմեղ մարդու,  
Բերանը դրնել լիմար երգերը  
Ու բերել ձրգել հայոց երկիրը,  
Այն էլ, օ՜ ոճիր, հրնների տեղը.  
Այսքան վերդովել ազդի ուղեղը...

Այս բան է, Մուսա,

Դէ ինքըդ ասա:

—Օ՛, հանգիստ, պօէտ. երգում եմ ահա,  
Վառ Աւրօրայի շողերի վրայ,  
Պատմում ես դու այն խեղճերի մասին,  
Որ միշտ անտեղեակ առաջին լոյսին,  
Չեն հրճում նորա ծագման հանդիսով,  
Եւ միայն կէսօրին, ապուշ երեսով,  
Շնում են մրռայլ, տեսնում քնէած—  
Գրլխների վերև արևը կանգնած...  
Բայց մի՞թէ, իրաւ, հայերը այդպէս  
Մնարդում են ինձ ու չեն սիրում քեզ:  
—Միամիտ Մուղա. ինչ ես պահանջում.  
Ոչ թէ չեն սիրում—չեն էլ ճանաչում:  
Մեր խեղճ տանըցիք սրքան նախատում,  
Բայց ես, միշտ յամառ—չէի հաւատում,  
Մինչև լրսեցի մի մեծ պարօնի,  
Մեր մէջ շատ խելօք ու շատ անւանի.  
Մի օր ինձանից արաւ հարց ու փորձ.  
—Ունես, հարցրեց, մի պաշտօն կամ դարձ:  
—Բանաստեղծ եմ, ես, պատցի հրպարտ:  
—Դրժուար է, ասաւ, երբ անդորձ է մարգ:  
—Բանաստեղծ եմ ես, կրրկնեցի մէկ էլ.

—Հասկացանք, ասաւ, պարապ ես եղել:  
Բայց վերջն աւելի պարզեց խընդիրը,  
Երբ յօղւած վրեց մեր լըրագիրը:  
Բանաստեղծն, ասաւ, թող պանիր շինի,  
Որ հացի, վարձի դառնայ արժանի,  
Թէ չէ՛ յամառի ու մընայ պօէտ,  
Ի՞նչ հաշիւ ունի ազգը նըրա հետ.  
Ազգը հօ նըրան չի խընդրում զըրի,  
Թերթն էլ փող չունի, թէ որ վճարի,  
Թող զընայ, ապրի իրան զըրիչով...  
Այսպէս ենք դատում մեր մաքուր խըղճով.

Ներշնչման համար

Այսպէս է յարմար...

Կարող ենք մենք էլ

Ուժգին մտորակել

Ու ծագրել մի մի,

Որ յառաջ դիմի:

Չէ, գնա՛, Մուսա,

Ուրիշին ասա,

Թէ կարելի է բանաստեղծ լինել

Ու հայոց երկրում երգեր յօրինել:

Եւ, այս բոլորը որ տեսնի, լըսի,

Էլ այս աշխարհքում ո՞ր խենթը կուզի

Ունենալ երգի թէկուզ հէնց հանճար

Ու միշտ խանդարւած տառապել անճար:

—Ո՛հ, կուպիտ երկիր, անհողի մարդիկ:

Դէ, եկ, սիրելիս, տանեմ քեզ երկինք,

Այնտեղ երջանիկ ողիների հետ

Զւարթ կը խնդաս ու կասրես յաւէտ,

Կամ կուզես թռցնեմ, հանեմ Ուլիմպոս,

Որ նեկտար ըմպես, ճաշակես ամբրոս:

—Ա՛յ, անդին Մուսա,

Դրանից խօսա.

Իրաւ, այս կեանքից ես շատ եմ զրզւել:

Ի՞նչ երանութիւն, երկընքում սուզել,  
Այն չքնաղներին, որոնք, անկասկած,  
Նրման չեն իսկի մեր հայոց կանանց,

Լինել միշտ ընկեր

Ու սիրոյ երգեր

Յօրինել,

Չօնել

Երկրային բոլոր հոգսերը թողած...

Կամ, ոտներն հանգիստ ժայռերից կախած,

Նրստել Պառնասի երջանիկ գլխին

Ու բարձրից նայել այս լիմար խալխին...

Բայց ես ունեմ կին, շատ երեխաներ,

Նրանց բանն այնտեղ ի՞նչպէս կը լինէր.

Կարող ենք այնտեղ նրանց համար էլ,

Թէկուզ ասպառիկ, միշտ ասրուստ ճարել:

—Ո՛չ, երբ Պառնասի դագաթ վերանաս,

Ձաւակներ ու կին պիտի մոռանաս...

—Ա՛յ անգութ Մուզա, անխիղճ, անարդար,

Մեր գիւղի տրդէտ քէօխւից էլ վատթար.

Ասա մի տեսնեմ, ի՞նչ եմ արել ես,

Որ տանից տեղից մենակ աքսորես:

Չէ, լաւ է կըրկին, որ այստեղ մընամ,

Ծաղրի, նեղութեան մի կերպ դիմանամ,

Քան մենակ երկինք վերանամ քեզ հետ:

—Քո կամքը լինի, ո՞վ ազատ պօէտ:

Ընտրիր ուր կուգես. երկինք թէ երկիր,

Բայց միշտ, ամեն տեղ քո երգը երգիր

Ու բարձրից նայիր կեանքի տողնապին:

Յիշիր սոսկալի այն չար վիշապին,

Որ, մանուկ օրից, անդադար, անքուն

Հետևում էր միշտ երգի Աստրժուն,

Մինչև որ նորա նետից շանսատակ

Ընկաւ Պառնասի անգունդը անտակ:

Այդպէս աննրկուն մնա՛ միշտ, պօէտ.

Մի՛ ընկնիր մարդկանց չնչին կըրքի հետ.

Կանգնիր միշտ վերև

Ու, ինչպէս արև,

Նայիր լուսաւոր,

Պայծառ ու հրգօր.

Քո կոչումն է դա.

Եւ, ինձ հաւատա,

Բոլոր դանձերը, գոհարներն անգին

Չարժեն խանդարած քո ներշնչանքին:

—Ա՛յ դու սատանայ, է՛լ կուգես խարել,

Սիրուն խօսքերով աչքերըս կապել.

Ա՛յ դու կեղծաւոր, չըքնաղ անպիտան,

Ես լաւ եմ տեսնում այժմ ամեն բան.

Դու ինձ ես մենակ միամիտ զրտել,

Հապա դէ խօսիր ուրիշի մօտ էլ,

Ա՛յ, թէկուզ մեզ մօտ, հէնց իմ կընկանը,

Ասա թէ մենակ փողըջի բանը...

Բայց ինչ եմ ասում, հայոց գրողը

Վաղուց է արդէն ճանաչել փողը:

Եւ երկա՛ր, երկար մեր ողջ հանճարով

Մըտածել ենք մենք զըժւար օրերով—

Գըրողի պըսակ,

Թէ՛ փողի քսակ...

Եւ լաւ ենք վճռել. դէ՛ զնա՛, Մուսա,

Իբրադարանըս շինում եմ կասսա,

Թըքում եմ և քեզ և քո սըսակին,

Երկըրպագում եմ փողի քըսակին:

«Փողի քըսակը, փողի քսակը,

Բարձրացընում է մարգու հասակը,

Գեղեցկացնում է հըրէշ—տըգեղին,

Ոըրբագործում է զարշն ու ազաեղին:

Նրա ոյժն է, որ զարձընում է լոկ

Անասուններին յարդի ու խելօք,

Կոյսին—զառամին. մօտեցնում իրար,

Չարին, վաշխաուլին շինում բարերար,  
 Պրճնում ճակատը լիրբ աւազակի,  
 Կանգնեցնում արձան անվախճան փառքի:  
 Նա է միշտ շարժում դատողի լեզուն,  
 Նա է հասցրնում աղօթքն Աստծուն,  
 Նրա վրայ է աշխարհքը կանգնած,  
 Նա մեր հոգին է, մեր երկրորդ Աստուած:  
 Պօէտն էլ բնաւ թէ խօսել է վատ,  
 Տուժել է սաստիկ, զղջացել է շատ,  
 Եւ այժմ, ահա, խելքի է եկել,  
 Ակսել է նրան օրհնութիւն երգել»:

Երգըս որ լսեց իմ դժբախտ Մուսան,  
 Իս'ոյն հաւաքեց իր փասա-փուսան.

— Դէ, մնաս բարեաւ,

Ասաւ, անիրաւ.

Ես այսքան տարի

Ինչ որ քեզ արի,

Բոլորն ուրացար,

Փողապաշտ դարձար:

*Յովնանէս Թումանյան*



# Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ն Ե Ր

(Պ ա տ կ ե ը ն ե ը)



I

Իֆլիսում, Բեթխալինի <sup>1)</sup> սանդուղքներէ վրայից իջնում էր վաղաժամ ծերացած, նիհար և փոքրահասակ մի մարդ: Հագել էր բոլորովին մաշւած տեղական չուխա, որի վաղեմի դոյնը կարելի էր գտնել զօտից ցած՝ ծալքերի մէջ: Իջնում էր թախծալի դէմքով և կռացած՝ կարծես իր ահադին, ոչխարի մորթու զլխարկի ծանրութիւնից ըստիպւած: Կանգ առաւ մի բուպէ պատի տակ,

սուերի մէջ, ուր կուսանաց անապատի դարբասի մօտ բազմած է սուրբ Ստեփաննոսի սյուտկերը. երեսը խաչակնքեց և մօտեցրեց ասրակիին իր կիտով չափ սպիտակացած և քթի տակ դեղնած բեղերը, նորից խաչակնքեց երեսը, աչքերը դարձրեց երկնքին և շարունակեց ճանապարհը: Նրա թուխ և կնճիոներով սրասած դէմքը վալրկենաբար փայլեց և նորից ծածկեց առաջւայ թախիժով: Նրա ետևից վազում էր մի երեխայ մօտ վեց տարեկան, ցնցոտիների մէջ, որը հասնելով բռնեց վերնադրեստի փեշից և շունչը հազիւ լեա բերելով ասաց — «Հայրիկ, ես էլ կ'երթամ քեզ հետ»: Հայրը ձայն չը հանեց, բռնեց ձեռ-

<sup>1)</sup> Ս. Բեթգեհէմ եկեղեցին, որ շինւած է լեռան կրճքին:

քից և գնաց մի և նոյն ուղղութեամբ: Ճուտով հասաւ մօտա-  
կայ հրապարակը, որի կենդրոնում կայ քաղաքային ջրանցքի  
մի ծորակ. մօտեցաւ և ողջունեց մի հաստավիզ մարդի, որը  
այդ ծորակի կառավարիչն էր: Սա անհոյժ կերպով մեկնեց  
ձեռքը և այնպիսի դէմք ցոյց տուց, որ կարծես սատտիկ զբաղ-  
ւած է և չունի ոչ մի վայրկեան ադատ ժամանակ խօսելու:

— Գիտես, Մինաս, խույ ձայնով խօսեց Աւետիքը (այսպէս  
էր նրա անունը), զիանձ ինչ դրո՞ւթեան մէջ եմ: Մեծ որդիս  
հիւանդ է և տանը մի կտոր հաց անգամ չըկայ...:

— Հա՛, էդպէս է. ընդհատեց նրա խօսքը կառավարիչը, —  
շատերը քեզ պէս դանդաւում են. անպիտան տարի է, թան-  
գութիւն, հիւանդութիւն ամեն անգ...:

Եւ խօսքը չաւտրաած՝ դարձաւ հակառակ կողմ ու վիշոց-  
ների մի կարկուտ ուղղեց տակաւը շալակած մշակին:

Աւետիքը զրպանից հանեց հինաւուրց, ահազին մեծու-  
թեամբ մի մկրատ և ցոյց տալով Մինասին՝ շարունակեց — «Տա-  
նը այս բանը միայն դանւեց, դուրս բերեցի ծախելու, բայց  
չըզիտեմ որքան գնահատեմ»:

Երեխան ամաչում էր և աշխատում էր ծածկել հօր  
քամակին:

— Սա շատ զեղեցիկ բան է. պատասխանեց կառավարիչը,  
— որ դերձակին էլ ցոյց տաս՝ ուրախութիւնով կառնի:

Այդ ասելով նա նորից նստեց իր աթոռին և երկու  
ձեռքով զլուխը բռնելով սկսեց դանդաւել, որ զլուխը սաս-  
տիկ ցաւում է:

Աւետիքը պտտեցրեց ձեռքի մէջ տեղ-տեղ ժանգստած  
մկրատը, կարծես առաջի անգամն էր տեսնում. դրեց նորից  
զրպանը և մնաս բարով ասելով՝ հեռացաւ այնտեղից:

— Էժան չըգնահատես. լուրջ կերպով արտասանեց Մինա-  
սը, — սա շատ զեղեցիկ բան է, ամեն մի դերձակ ուրախութեամբ  
կառնի:

Աւետիքը մտածեց զնալ քաղաքի կենդրոնը, ուր դերձակ-  
ներ շատ կան, բայց ճանապարհին նկատելով մի փոքրիկ ար-  
հեստանոց, որի ճակատին ծուռ կայրած էր յայտադիր «Парт-

ной воени и партикулярной <sup>1)</sup>» մտածեց փոքր ինչ, յետոյ  
արագութեամբ մօտեցաւ վարպետին:

— Ուտան, ասաց նա, — արա տես այս մկրատը, ինչ արժէ:

Գերձակը շարունակելով գործը, աչքերը կիսով չափ դար-  
ձրեց նրա կողմը և պատասխանեց.

— Ոչինչ:

— Բաս պէտք չէ՞ քեզ, չես առնի:

— Չէ:

— Էժան կըտամ:

— Ո՞նց:

— Ինքդ ասա, ինչ կըտաս:

— Մէ՛ շայ <sup>2)</sup>...

— Հէր օրհնած, գողացած խօ չէ.

Գերձակը ուսերը փոքր ինչ բարձրացրեց՝ ու կրկնեց.

— Մէ՛ շայ:

— Սա մի շահանոց բան է, արա՛, լաւ տես:

— Մէ՛ շայ...

Աւետիքը գայրացած հեռացաւ ու մտաւ կաթողիկների  
փողոցը: Երեխան, որ իր հօր դերձակի հետ խօսելու միջոցին  
դիտում էր արհեստանոցի առաջ արեղակի տակ տաքացող կատ-  
ւին, խօսակցութիւնը վերջանալուն պէս՝ մի աքացի հասցրեց  
կենդանուն և վազ տուց հօր ետևից:

Նեղ ու խոնաւ փողոցի միջով անցնելիս՝ Աւետիքին պա-  
շարեց մի սարսափելի հոգս, որ մարդու բարոյական տանջանք-  
ների մէջ ամենակատարեալն է: «Եթէ մեռնի՛ ինչով թաղեմ».  
մտածեց նա: Պինդ բռնեց Արշակի (երեխայի անուն) ձեռքից,  
շտապեց դուրս գալ այդ փողոցից և տըսպէս հասաւ Երևան-  
եան հրապարակը: Այնտեղ էլ զիմեց մի երկու դերձակների,  
բայց անօգուտ:

Այն ժամանակ մեծ քարւանսարտյի մօտ, բազմութեան  
մէջ նա յանկարծ նկատեց երկու քաղաքացիների, որոնք բառ

<sup>1)</sup> «Մասնաւոր և զինւորական դերձակ». գրեա՞ծը տառասխալ-  
ներով լի է:

<sup>2)</sup> Մէկ շահի (Տ կոպէկ):

երևութին խորհում էին իրար հետ լուրջ հարցի մասին: Նրանցից մէկը յայտնի էր քաղաքի մէջ իրրև բարերար: Այդ տիտղոսը նա վաստակել էր էրաւացի կերպով: Տեղական լրագրների մէջ յայտարարել էր հետևեալը. «Քոյոր պանդուխտ հայ մշակներին, որոնք դժբախտ դէպքի գոհ կըլինեն՝ յանձն եմ առնում սեպհական հաշուիս թաղելու»: Իսկ միւսը, որի օրերը արդէն հաշւած էին՝ անգաւակ մարդ էր: Իր խոշոր հարստութիւնը կտակել էր վանքերին. սպինքն, իր մահից յետոյ՝ պէտք է անցնէր վանականների. միմիայն այն պայմանով, որ ինքը թաղւի Թիֆլիսի մայր եկեղեցու դաւթում և տարէն մի անգամ հողահանդիստ կատարւի գերեզմանի վրայ:

Հռչակաւոր հայ բարերարների կտակները մըշտ այսպէս են եղել. այսինքն, որ դեռ իրանք պէտք է մեռնէին, իսկ այնուհետև, երբ իրանց այլ ևս պէտք չէր ոչինչ, բոլոր ունեցածը եկեղեցիների սեպհականութիւն պէտք է դառնար: Նրանք, ի հարկէ, հետևել են երկու նպատակի. անունը անմահացնել այս աշխարհում և արքայութեան բարիքները վայելել այնտեղ: Այս բոլորը իրագործելու համար՝ աշխատել են փողով կաշառել մարդկանց և Աստուծոն:

Երկու քաղաքացիներից մէկը գովաբանում էր միւսին — յայտարարութիւն տարողին և զարմանք յայտնում, թէ ինչպէս առանց ուրիշի խորհուրդի, իր սեպհական խելքով՝ այդպիսի հանձարեղ միտք էր յղացել:

Աւետիքը մի քանի անգամ սրտոյտ գործեց նրանց շուրջը, չըհամարձակեց մօտենալ, բայց վճռել էր անպատճառ զիմել նրանցից մէկին — Յովհաննէս աղային. իսկ միւսը, մեռելների թաղողը, երկիւղ էր ազդում նրան: Սպասեց այնքան, մինչև նրանք իրար ձեռքը սեղմեցին և բաժանեցան: Աւետիքը անխելի քայլերով մօտեցաւ Յովհաննէս աղային, զլուխը մերկացրեց ու խղճալի ձայնով զիմեց.

— Յաւոյ տանեմ, անգա, երեխաս ձեռքիցս գնում է, տանը մի կտոր հաց չըկայ...

— Լաւ, մարդ, ես խօսք թիշկ չեմ. պատասխանեց նա, շարունակելով ձանապարհը, — Ինչ կարող եմ անել քեզ համար...

Աղքատ խօսչես, որ երկու կոպէկ բաշխեմ. որ տամ դու կըվերցնես, լայեղ կանես:

Աւետիքը ուզում էր դետինը մտնել: Մեխեց կանգնած տեղը. չըզիտէր ինչ անել: Ամաչում էր ինքն իրանից, նոյնիսկ փոքրիկ երեխայից: Վերջապէս ոյժերը հաւաքեց, քայլերը ուղղեց զիմացի խանութի կողմ և բաւական համարձակ, համարեա բարկացած ձայնով հարցրեց խանութպանին.

— Մկրատ չե՞ս ուզում, էժան կըտամ:

— Չորան խօսչեմ. ծիծաղելով պատասխանեց ձուկ ծախողը, — մկրատ ինչ կանեմ:

## II

Կոլօլ թաղ կոչուող հրապարակի վրայ, մի մեծ և բաւական անձաշակ տան ներքնալարկում դտնում է մի գինետուն, որ տասնի չափ մշտական այցելուներ ունի. դրանց թւումն է նաև քամանչա ածող կոյր Քէորդը: Նրանք ամբողջ օր զբաղւած են իրանց գործերով, իսկ երեկոյեան հաւաքում են այդտեղ և «քիչ գակուակա և շատ գինիով» իրանց բաւականութիւն տալիս: Չատ յաճախ թուղթ էլ են խաղում, որ մեծ մասամբ վերջանում է կուռով: Նոյն օրը, երբ Աւետիքը մտամոլոր թափառում էր փողոցներում, մի ինչ որ աննշան տօն լինելու պատճառով, նրանք առաւօտից էին հաւաքւել այդտեղ և «ձեռաց» նախաձաշելուց յետոյ, նստել էին թղթի: Պատւիրել էին դախլղար Միխակին զգուշ կենալ ոստիկանի նկատմամբ: Նա, որ իր մասնագիտութեան մէջ վարժ էր և լիշեցնելու կարիք չունէր, բարձրացել էր սանդուղքներից և կանգնել դռան աջ անկիւնում, շշուակեցով արևելեան մի ինչ որ նոր եղանակ: Ներսից շարունակ լսում էին սրախօսութիւնների, սիրալիր հայհոյանքների, ծիծաղի ձայներ: Ժամանակ առ ժամանակ Միխակը մտնում էր ներս և հարցնում հիւրերին, թէ ով ինչ բան է ցանկանում և նրանց պահանջները զոհացնելուց յետոյ, նորից դուրս էր գալիս փողոցը:

Այդ միջոցին անց էր կենում խիստ նիհար ու բարձրահասակ մի երիտասարդ, խունացած եւրոպական տարազով: Երբ

զինետանը Հասաւ, զգուշութեամբ նայեց Միխակի երեսին, կարծես ուզում էր ասել «բարեիր, որ ես էլ պատասխանեմ»:

— Բարի լոյս, վարժապետ, սալբու չինարի պէս ձգւած ման ես գալի ու չես լայեղ անում մեր կողմը մտիկ տալ. զիմեց Միխակը հեղնական ժպտով:

— Աստուծոյ բարին. լուրջ կերպով պատասխանեց երիտասարդը և կանգ առնելով ու ձեռքը մեկնելով խօսակցին, ուղեց սպացուցանել, որ ինքը հպարտ չէ:— Ոչ թէ «բարի-լուս», այլ պէտք է ասել «բարի լոյս». աւելացրեց նա նոյն լրջութեամբ:

— Ի՛հ, ինչ անենք, վարժապետ ջան, ամենքը խօ քեզ պէս ուսում առած չեն լինի. պէտք է եօլա տանես: Արձ, արի Հիմա քո էդ նեղ շալւարը ինձ հագցրու. կարելի բան է, մէկ անգամ որ կռանամ՝ պէտք է պատուի: Արի էս իմ լէն շալւարս քեզ հագցնեմ, կարող ես զիմանալ... Բեղամաղ չըլինես, Հողուզ մատնդ, խօսքի վրայ եմ ասում:

Յարգանքի կարօտ մարդուն բաւական է մի քաղցր խօսք, նրան ամբողջ օր երջանիկ դարձնելու համար:

Այդ երիտասարդին ամբողջ Կօլօլ թաղը ճանաչում էր և ամենքը վարժապետ էին կանչում. յայտնի չէ ինչու համար: Նա երբէք այդ պաշտօնը չէր ունեցել:

— Մեծապատիւ պարոն Միքայէլ, լուրջ կերպով պատասխանեց երիտասարդը, — մահացու մեղք է ինձ հպարտ անւանել: Ոչ թէ դուք, այլ ինչպէս ատեմ — մի հացթուխ, մի թուլուխ-չի՛ համարում եմ ինձ հաւասար: Ի՞նչ անենք, որ ես շատ դրքեր եմ կարդացել. նրանք էլ ինձ նման մարդ են: Ինչպէս Մովսէս Խորենացին ասում է՝ «Ես էլ քիթ ունեմ, նրանք — էլ, ես էլ երկու աչք ունեմ՝ նրանք էլ»: Այդպէս չէ: Անցեալ օր սուրբ Գէորգի բակում, պատարագից յետոյ, ամբողջ ժամ, ժամ ու կէս՝ մի մուրացկանի հետ էի խօսում: Խեղճի ձեռքին կեղծ դրամ էին դրել: Տեսէք ի՞նչ անդուլթ, ցածահողի արարածներ են: Ահագին բազմութիւն շրջապատել էր ինձ. բայց ես ուշք չէի դարձնում, ընդհակառակն, ես շարունակում էի խօսել մուրացկանի հետ... Մինչև անգամ...

— Ես ամեն բան շատ լաւ զիտեմ. ընդհատեց նրա խօսքը Միխակը, — մի նեղանալ, Աստուածդ սիրես, վարժապետ ջան, գործիցդ լետ զցցցի, Հագար ներողութիւն:

— Ոչինչ: Գրագարան էի գնում, լրագրներ պէտք է կարգալի... մի շատ հետաքրքրական բանակուիւ կայ... մտադիր եմ նոյնպէս մի զօրեղ բան գրել... ցտեսութիւն:

— Հն, գորդ, բան միտս եկաւ. եթէ կարելի է, վարժապետ ջան, երկու խօսք ռուսերէն կարդաս: Ասաց Միխակը, բռնեց երիտասարդի ձեռքից և իջեցրեց զինետուն:— Այսօր առաւօտեան կանուխ գորողովոյնը բերեց, աւելացրեց նա. զիտեմ ինչ որ կըլինի, բայց էլի, տեսնենք ի՞նչ է ասում:

— Մեծ ուրախութեամբ, ամենայն սիրով. ասաց վարժապետը և աշխատեց կեղծել, իբր թէ չի նկատում անկիւնում նստողներին, որոնք շարունակում էին թղթախաղը:

— Բարով, վարժապետ, դ՛ու հատեղ ինչ գործ ունես, դու ախոս չես...

— Բարով, վարժապետ, մնց ես խօսում էդ դուրումսդի հետ. զիմեցին մի քանի Հողի իրար ետևից:

— Աստուծոյ բարին ձեզ, պարոններ, պատասխանեց նա, — մի թուղթ պէտք է կարգամ պարոն Միքայէլի համար ու խօսիլոյն գնամ գրագարան:

— Իդ ո՞վ է, Պաճօ, հարցրեց մէկը՝ տախակ քթով կինսոյին:

— Չալւարին թամաշա արէք. նկատեց միւս կինսոն, — ետարբ մնց է հագնում-հանում:

— Նրան հանել կըլինի, ասաց Պաճօն. — մէկ անգամ վայ-վազլախով հագել՝ պրծել է: Սա մեր թաղեցի է... լաւ տղայ է. իսկի մարդու բեղամաղ չի անի:

— Սա մեր վարժապետն է. աւելացրեց, — բայց քիչ «հօպօպներ» ունի:

— Այս թուղթը տանտիրոջ անունով չէ. սա՛ ձեր անունով է. նկատեց այդ միջոցին վարժապետը և այնպիսի հայեացք ձգեց Միխակի երեսին, որ կարծես մի նոր գիւտ արաւ:

— Ա՛՞վ է ասում թէ տանտիրոջս անունով է. ահա՛ երեւում է. «Միխէլ Գալուստով»:

— Պէտք է լինի «Գալստեանց». սա սխալ է, աններելի սխալ է:

— Ի՞նչ ոչինչ, զիմ մէկ է. դու ասա, ի՞նչ է ասում էստեղ, որ զրա՞ծ է «երկու ժամ»:

— Հէնց այդ է էլ... զիշերւայ ժամը երկուսից յետոյ՝ վրպակը պէտք է փակէք:

— Ի՞նչ ես հրամայում, վարժապետ ջան, լնւ կարդա, ուրիշ բան է զրա՞ծ:

Երիտասարդը յօնքերը կիտեց, աշխատելով լրջութիւն աւելացնել իր գէժքին, թուղթը լուսի կողմ դարձրեց, մի քանի ուռսերէն բառեր շտապով արտասանեց և թւերը թափ տալով՝ վրդովւած ձայնով ասաց.

«Ինքը սատանան չի կարող կարդալ, այն աստիճան անգրագէտ է զրա՞ծ... բայց դիտէ՛ք, որ ահագին ոռճիկներ են ստանում... քսան և հինգ, երեսուն, քառասուն ուռլի են ստանում արքունական դանձարանից. հարցնող չըկայ թէ ի՞նչու...»

Միխակը շրթունքները կրծեց և խորամանկ ժպիտ խաղացնելով իր սև աչքերի մէջ՝ սկսեց ափերը շփել:

— Ոչինչ հնար չըկայ. շարունակեց երիտասարդը, — այսօր ևեթ պէտք է գնաք ոստիկանատուն և հարցնէք թէ ի՞նչ են ուզում ձեզանից:

— Իրուտ էդպէս պէտք է անեմ. կըվերկենամ կ'երթամ, կըհարցնեմ թէ «ի՞նչ էք ցանկանում ինձանից»... Զատ շնորհակալ եմ, վարժապետ ջան, նեղութիւն քաշեցիր, ժամանակ էլ կորցրիր...

Այդ միջոցին իրարանցում էր ընկել կինտօների մէջ: Բոլորը բարձրաձայն խօսում էին: Մէկ-մէկ լսւում էր.

— Էդպէս չի կարելի...

— Սրա հերթն է...

— Չէ, հերթը իմն է...

— Տօ, խաղալ չըղիտես...

— Ինքդ չըղիտես...

— Բեհասար նամաղուլ արեցի քեզ հետ խաղացի...

— Հարցրու...

— Ում ուզում ես՝ հարցրու...

— Ղաբուլ եմ, հարցրու...

— Գիզօ ջան, Գիզօ ջան, Ետտուած սիրես՝ ջափա քաշիր, ում հերթն է եթէ թղթերը էսպէս են... Իս ջան տղերքն իրար կերան. դիմեց վարժապետին մի տղամարդ, որ բոլոր ժամանակ ծխում էր ու անխօս՝ հետևում էր խաղին:

Վարժապետը խիստ արագութեամբ մօտեցաւ խաղացողներին, մի կողմից Միխակի ձեռքից պրծնելու համար և միւս կողմից «Գիզօ» չըկրկնել տալու համար: Այդ անունը ստորացնում էր նրա արժանապատուութիւնը: Իր բնակարանի դռան վրայ թիզաչափ մեծութեամբ սպիտակ թղթի վրայ, որը բոլորա՞ծ էր կապոյտ գոյնով՝ զրա՞ծ էր հայերէն ու ուռսերէն «Գրիգորիոս Ամաթեան-Գիլիշնունի». որքան նա չարչարել էր այդ յայտագիրը կազմելու համար: Ազգանունը Ամաթեան էր, բայց անգույնի ցանկութիւն ունէր «եանը» «ունիի» փոխելու: Ամաթունի չէր ուզում, որովհետև Ամատունի ազգանունն արդէն դոյութիւն ունի, որ համարեա միւլնոյնն է. բայց այդ բաւական չէր: Ամաթունի նման էր ամօթ-ունի բառին:

Այդ էլ ոչինչ, եթէ ուրիշ մի մեծ պատճառ չըլինէր: Նա երկիւղ ունէր Ներսիսեան դպրոցի աշակերտներից, որ «Ամաթունին» անշուշտ կըշինէին «ամօթ-չունի»: Վերջապէս խրնդիլը յաջողութեամբ լուծեց: Իր մայրը լինելով Գիլիշան զիւղից. օգուտ քաղեց այդ բանից և կազմեց գեղեցիկ և ճոխ ազգանուն: Չընայած, որ ամբողջ չորս տարի առաջ արձակել էին նրան Ներսիսեան ուսումնարանից, սակայն աշակերտները դեռ շարունակում էին նրան ծաղրի առարկայ դարձնել: Մանաւանդ Քերոբեանը, հանգստութիւն չէր տալիս նրան: Վերջին անգամ էլ «կենդանական խենթ» անունն էր տւել իրան, որ շատ սագում էր, որովհետև Ամաթեանը սովորաբար «կենդրոնական դրախանութի» առաջ էր դրօսնում: Արձակել էին նրան դպրոցի երկրորդ դասարանից, մի աննշան, բայց վերին աստիճանի ծիծաղաշարժ գէպքի պատճառով, որ սու այժմ աւելորդ է պատմել:

— Ահա, ախպէր ջան, դիմեց նրան կինտօն. թղթերը է-

սէնց են դարսած. բախշիր, չեմ ճանչնում քեզ. էս թուղթը են տարայ, էս լաւ տասանոցն էլ սա տարաւ. ես սրա (Հայ-Հոյական խօսքեր)...

— Ասա պրծիր, իժու՞մ ես կասեմ. ընդհատեց Հակառակորդը: Երկար, աղմկալի բացատրութիւններից յետոյ, խօսք տւին Ամաթեանին, լսել նրան իբր դատաւորի:

Տիրեց լռութիւն:

— Բայց ինչպէս էք ցանկանում, Հարցրեց այն ժամանակ Ամաթեանը, — բարոյակա՞ն տեսակէտից գատեմ, թէ՛ իրաւաբանական...:

— Գնա՛, քու սարսաղ Հէրն էլ անիծած. լսեց կինսոյն կողմից:

— Է է՛յ, ուզո՞ւն ախմախ, աւելացրեց միւրը:

Ոմանք ծաղրեցին, ոմանք ծիծաղեցին: Սկսեց սովորական դուռւմ-դոչու՞մներ, իրար չէին Հասկանում. բայց Ամաթեանը գերասան-սիրահարի ձև ընդունելով՝ անողորմ վճիռ էր կայացրել արդէն և զոչում էր.

— Գուք լոյսից զրկւած էք, գուք խաւարի մէջն էք լող տալիս, քաղաքավարութեան նշոյլ չըկայ ձեր մէջ, գուք ամենաստոր աստիճանի վրայ էք կանգնած, գուք, գուք...:

— Ախշարաբար խօսի, ախպէր ջան, Հեգնեց մի ուրիշ կինսո, որ երէկ գրաւ էր գրել իր արծաթեայ գօտին:

Կոյր Գէորդը վերցրել էր իր քամանչան և նւազում էր մենամարտութեան եղանակ, իսկ ինքն էլ ծիծաղելուց թուլանում:

Սղնախեցի Սաքուլը (այսպէս էր կոչում շարունակ ծխող մարդը) մի կողմ շարտեց իր ծխախոտը և բռնելով Ամաթեանի թւից, աղաչում էր դնալ, հեռանալ: Բայց նա լսել անդամ չէր ուզում, նոյն իսկ կրկնապատիկ զայրանում էր:

Միխակն էլ Սաքուլին կր խնդրում Համոզել «էդ տնաքանդներին» լռելու:

Վերջապէս կինսօները զիմեցին սովորական միջոցի, որ յաջողութեամբ վերջ է տալիս այս տեսակ աղմուկներին: Սկրւեցին «ու ո՛ւ, ի ի, ու ո՛ւ»... ծաղր ու ծառակի բացադանչութիւններ և Ամաթեանը կամաց-կամաց քաշեց հեռացաւ:

Սաքուլը յանդիմանեց և Հայհոյեց ամենքին, չըխնայելով և կոյր Գէորդին:

— Ի՞նչ էք ուզում խեղճ մարդուց, աւելացրեց նա, — խելօք է, թէ խելօք չէ, ձեզ խօ վնաս չի տալիս... է՛յ, Պաճօ...:

— Զահրումար, պատասխանեց նա:

— Բաս ես շո՛ւն լինիմ...:

— Ամէն...:

— Թէ քեզ լաւ չըդնքսեմ, մուլա՛փ տո՛ւ, մէ էրկու ստաքան խմեմ...:

Այդ միջոցին յանկարծ Սաքուլի ականջին հասաւ Միխակի ձայնը, որ ասում էր.

— Ինձ պէտք չէ, Աւետիք, մկրատն ո՞վ, ես ո՞վ: Աստուած ողորմած է, կառողջանայ, կըլաւանայ:

— Բաս չե՞ս կարող լաւութիւն անել, Հարցնում էր Աւետիքը, ճնշւած ձայնով:

— Բարիլուս, բիձա, արտասանեց Սաքուլը մօտենալով նրան, - ի՛նչ է պատահել:

— Ոչինչ, երեխէս շատ հիւանդ է... Զրգիտեմ ինչ անեմ:

— Աստուած ողորմած է, ո՞ր երեխան է հիւանդ, ամենապստիկն է, չէ՛:

— Մեծը, Վաղօն է. խօ անսիկ ես... տաքութեան մէջ էրւում է:

Վերջի խօսքը արտասանելիս՝ չըկարողացաւ արտասուքը դսպել: Երեխան էլ կարծես վարակելով հօրից՝ ծռմռեց շըրթուքները և իր փոքրիկ բռունցքներով սկսեց աչքերը արորել:

Սաքուլի սիրտը շարժեց և իրան չըմատնելու համար, հեռացաւ անկիւնը, ուրտեղից մտաւ Միխակի ննջարանը և իր կարմիր թաշկինակով աչքերը սրբեց:

Սաքուլը կտաւի դործարանի բանուր էր քստն և չորս տարի շարունակ, այսինքն գործարանի հիմնելու օրից: Այդ հիմնարկութիւնն երկար տարիների ընթացքում, ենթարկել էր բազմաթիւ փոփոխութիւնների. անթիւ կառավարիչներ, գործակատարներ, բանուրներ փոխւել էին, բայց Սաքուլը մնացել էր անդրգւելի, միւսնոյն պաշտօնի մէջ, միւսնոյն մեքենայի վրայ: Պատանեկական

Հասակից մինչև այսօր նրա Ֆիդիքական կազմաձևի մէջ ա-  
հագրին կերպարանափոխութիւն էր կատարել. աչքերը թուլա-  
ցել էին, քայլաձևը դանդաղացել, բայց նրա ռոճիկի քանա-  
կութիւնը մնացել էր անփոփոխ: Ջրում էր, որ ծերութիւնը  
հասնելուն պէս՝ պէտք է վաճառել այնտեղից և մնայ քաղցած:  
Չէ՞ որ այդ արհեստից դուրս ոչ մի բանի պէտք չէր նա: Փոր-  
ձով դիտէր, որ այնտեղից արձակած պառաւները ստիպւած  
են եղել մուրացկանութեան զիմելու:

Սաքուլի չարքաշ աշխատութեան արդիւնքի կիսից աւե-  
լին՝ Միխակի գրպանն էլ է մտել, իսկ մնացածը՝ իր հիւանդ մօր  
բաժինն էր կազմել: Նա իր սոգատ ժամերն անց էր կացնում  
այս շրջանի մէջ, կամ զինի էր խմում կամ խուղթ խաղում:  
Չնտ անդամ մտադրեց ազատել այդ ախտերից, բայց երբէք  
չըլաջողեց, ինչպէս չըլաջողեց նաև պարտքերից պրծնել:

— Քու արևը չեմ ասի — սուտ չըկարծես — իմ ազիդ արևս  
է վկայ, ասում էր Միխակը, — մկրատը ինձ պէտք չէ. բայց  
որ փող ես ուզում, ինչ անեմ, վերցրու երկու շալ:

— Քիչ է, հոգուդ մեռնեմ:

— Ի՛հ, դու զիտես... Հտակացիր, ա՛ մարդ. ինձ քո մրկ-  
ջատը հարկաւոր չէ. տար, չեմ ուզում. էս երկու շալ էնպէս  
տալիս եմ, բան եմ տալիս. փիէ...

— Լաւ. համաձայնեց Աւետիքը:

Գրպանի մէջ փողի գոյութիւնը դարձանալի կերպով ներ-  
գործում է մարդու ողնաշարի վրայ:

Ծերուկը մէջքը մի փոքր ուղղած և ոտները ամրացած՝  
դուրս եկաւ զինետնից: Առանց ժամանակ կորցնելու՝ գնաց այդ  
փողով սպիտակ և սև հաց, յանձնեց Արշակին և պատուիրեց  
վազտալով տանել տուն:

Այն մեծ շինութեան առաջ, ուր գտնուում է դատաստա-  
նատունը, անցուղարձ անող ժողովուրդից քիչ հեռու քաշւած,  
պատի տակ կանգնել էին երկու հասակաւոր մարդիկ, չափից  
դուրս հին ու կեղտոտ շորերով: Նրանց կազմաձևի ու դէմ-  
քերի վրայ դրոշմւած էր ծայրաւեղ աղքատութեան կնիք:  
Խօսում էին ծածուկ և շարունակ իրանց շուրջը նայում:

— Երեք մանէթից պակաս չըհամաձայնես, ասում էր  
բարձրահասակը, խրատական ձևով:

— Որ երկուսից աւել չի տալիս, ինչ անեմ. պատասխա-  
նեց կարճահասակը:

— Չի տալիս, թող չըտայ, մենք էլ դալիմ կենանք. երե-  
քից մի կոպէկ պակաս չըհամաձայնենք:

— Իսկ եթէ թարսացաւ ու չըտուեց. ինչ անեմ:

— Տօ՛, դու մարդ ես, թէ անասուն. միթէ չես հասկա-  
նում, որ էդ շիլ սատանան հէնց էդ է ուզում, որ պակասեց-  
նի: Մէկ անգամ որ եղաւ, այդպէս էլ կըշարունակուի: Միտդ չէ՞,  
անցեալ տարի, ուղիղ էս ժամանակ հինգ մանէթ էինք վեր-  
ցնում, յետոյ շինեց չորս, յետոյ երեք, հիմա էլ ուզում է եր-  
կու շինել:

— Բաս չեմ հասկանում, էշ իս չեմ. բայց ինչ անեմ, որ  
երեխէքս քաղցած նստած սպասում են, որ մի կտոր հաց տա-  
նեմ: Ի՞նչ կասես, սոված կոտորեմ. ճարս ինչ է. երկու մա-  
նէթով պէտք է համաձայնեմ:

— Գնա՛, համաձայնիր. գայրացած ձայնով խօսեց բար-  
ձրահասակը, — սատկես՝ թէ չըհամաձայնես. հողիդ դուրս գայ՝  
թէ չըհամաձայնես. գնա, գնա՛, քո մարդ ասողին...

— Ի՞նչու ես չարանում, Գուրգէն. ախար լաւ մտածիր է.  
հինգ հոգի երեխաներս, կինս՝ վեց, քոյրս՝ օխտ, ես էլ՝ ութ:  
Օրական ութ գրւանքայ հաց հարկաւոր է թէ չէ, մոմ  
հարկաւոր է թէ չէ, ջուր հարկաւոր է, թէ չէ: Ի՛, խօսում  
ես էլի հեշտ հեշտ...

— Ինչպիսի բաներ ես ասում, կարծես ուզում ես ինձ զար-

մացնել: Բաս ես էլ ինչ եմ, մի չոր գլուխ եմ էլի, քո կարծիքով:

— Գիտեմ, դու էլ ինձ նման ընտանիքի տէր ես, բայց...

Այդ միջոցին դատարանից դուրս եկաւ մի հաստափոր ու շիլ աչքերով մարդ, իւզոտ շորերով, կսկարդով և գունաւոր, բարակ ձեռնափայտով:

Գուրգէնը և իր ընկերը անմիջապէս երեսները հակառակ կողմ դարձրին, աշխատելով անտարբեր ձևանալ:

— Հըմ, ինչպէս վճռեցիք. երկու մանէթով համաձայն էք թէ չէ. հարցրեց շիլը այնպիսի արագութեամբ, կարծես ամեն վայրկեան շատ թանգ արժէր նրա համար:

— Չէ, բարեկամ, դրուստ երեք մանէթ է, պատասխանեց Գուրգէնը:

— Երեք մանէթը մեծ փող է, որ էլի ուզում ես պակասեցնել, ասաց ընկերը:

— Սա մեծ փող է կարծում, աելացրեց Գուրգէնը: Ինքը արխէյին ման է գալիս, իսկ մեզ ով զիտէ էսօր է, թէ վաղը արխատանցլի ուտա (арестантская рота)<sup>1)</sup> կըքշեն:

— Գէ լաւ, ներողամտաբար ասաց շիլը, — երբոր էդպէս է՝ երկուս ու տաս շալ. հիմա ինչ կասէք:

— Չէ, ախպէր, ես խօսելու գլուխ չունիմ. յամառեց Գուրգէնը, ձեռքերը արխալուզի դրպանների մէջ դնելով, — ես խօսքիս տէրն եմ...

Այդ ընդմիջումն անկիւնի ետեւից դուրս եկաւ Աւետիքը և կանգ առաւ նրանց առաջ: Սակարկութիւնը ընդհատեց, շիլը հեռացաւ մտաւ դատաստանատուն, իսկ ընկերները սկսեցին բորձրաձայն խօսել ինչ որ քելէխի մասին:

Ի՞նչ մարդիկ էին դրանք: Մէկը վաղուց սնանկացած մանր վաճառական էր, իսկ միւսը կտաւի գործարանի նախկին բանուոր, որին, աչքերի թուլանալու պատճառով տրձակել էին: Երկուսն էլ աղքատութեան ու թշուառութեան տակ ճնշւած արտրածներ: Բայց սրանք միայնակ չէին, գասակից ընկերներ

<sup>1)</sup> Բանտարկեալների խմբի մէջ:

շատ ունէին և բոլորը պարապում էին միևնույն արհեստով: Նրանցից ամեն մէկը բազմանդամ ընտանիքի տէր էր: Զաւակ չունենալու կամ քիչ ունենալու արտօնութիւնը պատկանում է միմիայն հարուստներին: Այդ թշուառների արհեստը կենդ վկայ լինելն էր: Մարդկանց անգթութեան թէ բախտի հալածանքի շնորհիւ, չէին կարողացել այնպէս յարմարել կեանքի. հետ, որ արդար աշխատանքով իրանց օրական հացը հայթայթէին. և այդպէս, քաղցածութիւնը հարկադրել էր նրանց դիմելու անբարոյական միջոցի: Հետաքրքրականն այն էր, որ նրանցից ոչ մէկն իսկ վատ բան չէր համարում իր արածը: Նրանց խիղճը շատ մաքուր էր: Մի բան միայն գիշեր-ցերեկ հոգեմաշ էր անում նրանց — այդ բանտի և աքսորի երկիւղն էր: Նրանց պարագլուխը, գօզրա-Վաստն, այդ հարցի մասին ինքնուրոյն հայեացքներ և կարծիքներ ունէր: Նա իր բոլոր ընկերներին համոզել էր, որ իրանք կատարում են ամենամեծ գործ, սովամահ-լինելուց ազատելով անչափահասներին ու թողլէրին: «Իսկ ամենագէտ Աստուածը լաւ իմանում է, ասում էր նա, — որ մենք տէրտէրի ասածները չենք կրկնում ճշտութեամբ, ուրեմն մենք չենք երդւում»: Եւ իրաւ, քահանայի խօսքերը նրանք երբէք կանոնաւոր կերպով չէին կրկնում, իսկ ինչն ու աւետարանը համբուրելիս՝ մտքում ասում էին «Աստուած, դու իս ու լաւ իմացար»:

#### IV

Սաքուլը երբ տեսաւ, որ Աւետիքը գինետնից հեռացաւ՝ խսկոյն դուրս եկաւ և սկսեց զիտմամբ հանաքներ անել կոյր Գէորդի հետ. յետոյ, Պաճօյի գլխարկը գետնին դարկեց, բացազանջելով.

— Պահ, պահ, ինչ լաւ ձէն ունի:

Եւ թռչկոտելով՝ գնաց Միխակի մօտ ու անհոգութեամբ ասաց.

— Միխակ ջան, մի երեք մանէթ տուր:

Նա պատասխանի փոխանակ՝ երեսին նայեց ու ժպտաց:

— Թէ Աստուած սիրես, երեք մանէթ տուր, էս սահաթիս միտս եկաւ. տանը փող չեմ թողել, մէրս մեղք է:

— Ի՞նչ անեմ, Սաքուլ ջան. դախլի մէջ փող չըկայ:

— Կայ թէ չըկայ՝ ես բան չըզիտեմ. ասում եմ, երեք մանէթ տուր:

— Քու արև, սրա արև (ձեռքը դրեց իր այտին) չըկայ-  
որ լինի՝ կըտամ:

— Տ՞օ. ես քու մուրազին ինչ ասեմ, տուր, ասում եմ, հար-  
կաւոր է: Ուզում ես յետոյ կերթամ ֆարբիկա, կըբերեմ կըտամ քեզ:

Գործարանի դռնապանից սովորաբար բանւորները պարտք  
են վերցնում և տոկոս վճարում. իւրաքանչիւր մանէթին շա-  
բաթական տաս կոպէկ:

Միխակը երկար չամաւելուց յետոյ, վերջապէս հանեց մէկ  
մանէթանոց և կպցնելով Սաքուլի ճակատին՝ ասաց.

— Դէ, գնան, ջանդ դուրս գայ, քէֆ արա:

— Հերիք չէ. բողոքեց Սաքուլը, — ես քեզ ասում եմ երեք  
մանէթ, ոչ աւել՝ ոչ պակաս:

— Որ միջիցդ ճղես՝ չըկայ, դու մարդ ես թէ թուրք:

Սաքուլը շարունակ պարտ էր Միխակին: Ամբողջ վեց օր  
ուշում խմում էր այդտեղ, իսկ շաբաթ երեկոյեան, երբ գոր-  
ծարանից ստանում էր իր վարձը՝ ուղղակի գալիս էր ու վճա-  
րում. բայց և այնպէս, դարձեալ միշտ պարտ էր մնում: Երբ  
նա համոզուեց, որ Միխակը երեք մանէթ տալու միտք չունի,  
հանեց իր վերնազգեստը, փաթաթեց դնդակի ձևով, դրեց դրամ-  
արկղի վրայ և հանգիստ ձայնով արաստանեց.

— Տուր երկու մանէթ էլ:

Միխակը ցոյց տալով իր դէմքի վրայ սաստիկ գայլուցթ և  
ուղղելով խօսակցի հասցէին հայհոյանքներ ու լիշոցներ, շտա-  
պով հանեց դրամարկղից երկու մանէթ և ս և զարկելով երեսին՝  
աւելացրեց.

— Տար լաիէ, մունդուէդ բէդովլաթ:

Սաքուլը դուրս գալով դիմետնից՝ կանգ առաւ հրապարակի  
մէջ անդ, ուշադրութեամբ դիտեց բոլոր փողոցները և համարեա-  
վազտալով դիմեց Սոլալակի կողմ: Ճանապարհին նկատեց Ամա-  
թեանին թատրոնական աֆիշ կարգալիս և հարցրեց Աւետիքի-  
մասին:

Նա մատնացոյց անելով և մանրամասնօրէն բացատրելով,  
թէ որ կողմն է գնացել, աւելացրեց, որ ինքը «գեղատոմսի նման  
մի բան» է գրել ու տւել Աւետիքին: «Ինչատոմսի» իսկական  
բովանդակութիւնն այս էր. Салдацки базаръ спроситъ лечѣб-  
ница. <sup>1)</sup> Սաքուլը շարունակեց ճանապարհը միւսնոյն արագու-  
թեամբ և դատաստանատան մօտով անցնելիս՝ նշմարեց Աւետիքին:

— Իմ դարդն էլ բաւական է ինձ. բարկանալով ասում էր  
այդ միջոցին Գուրգէնը Աւետիքին. — Ինչ ես ուզում ինձանից,  
ինչ ես զահլա տանում...

— Մենք ոչինչ չըզիտենք, բարեկամ, մենք մարդու ենք  
սպասում. աւելացրեց ընկերը:

— Մարդու ենք սպասում. կրկնեց Գուրգէնը, — որի հետ միա-  
սին դնալու ենք Կուկիա քելէխի. մի չազ մեռել կայ. ասում  
են մի մի արասի պէտք է բաժանեն:

Ընկերները աշխատում էին հրապուրել Աւետիքին, որպէս  
զի մի կերպ հեռացնեն:

Սաքուլը լաւ ճանաչում էր նրանց. ուրեմն դժուար չէր  
հասկանալ Աւետիքի դիտաւորութիւնը: Առանց վայրկեան կոր-  
ցնելու, վաղեց բռնեց Աւետիքի ուսից և քաշելով տարաւ, հե-  
ռացրեց այդտեղից և սկսեց նախատել.

— Գու խօ չես դժւել — ասաց նա, — ինչեր ես անում, դու  
զիտեն Յինքիլին ինչ է...

— Ի՞նչ անեմ, Սաքուլ ջան, սրտիս որ դանակ խփես՝ մի  
կաթիլ արիւն չի դուրս գայ... Ում դիմեցի՝ բան դուրս չեկաւ.  
Իսկ երեխէս ձեռքիցս դնում է. . Մի կտոր հաց չըկայ տանը:

— Մի վախենալ, սա էս երեք մանէթը. ճարել եմ քեզ  
համար:

Աւետիքը ցնցեց, ձեռքիցը համարեա իլեց փողը և ա-  
մուր սեղմելով բռունցքի մէջ, մի քանի անկապ բառեր արտա-  
սանեց: Սաքուլը համոզում էր շտապել դէպի տուն, բայց երբ  
տեսաւ, որ տեղիցը չի շարժւում, սկսեց բոթելով առաջ մղել:

<sup>1)</sup> Զինւորների բազարում, հարցնել բուժարանը. գրած է շատ  
սխալներով:

Ղփոթութիւնը կատարեալ էր. կանգնած էր Աւետիքը անշարժ ու աշխատում էր խօսք զտնել շնորհակալութեան զգացմունքը արտայայտելու: Նրա վիշտը միանգամայն փարատել էր. կարծես զաւակը արդէն առողջացել էր:

— Գնա՛, շուտ արա, շարունակում էր բոթել խօսակիցը, — իսկ եթէ չես կարող, բեր փողը, ինքս կըտանեմ, կըտամ կնոջդ:

Աւետիքը կարծես այդ բանին էր սպասում. թողեց իր բարերարին և առանց խօսք ասելու՝ երեխայի նման վազ տուց:

Սաքուլը գոհ էր իր վարմունքից, բայց առանց չուխա մնալը անհանգստութիւն էր պատճառում նրան: Ամաչում էր ընկերներից, քաշում էր և՛ մօրից. ուրեմն գոնէ իրան մխիթարելու համար՝ պէտք է անել մի բան: Ի՞նչ պէտք է անէր: Իրան լայտնի էր միակ ելք. այն է իսկոյն գնալ ու «շուռ ու մուռ տալ նրա (Միխակի) հին ու նոր ննջեցեալներին»: Այս դիտաւորութիւնը հիմնաւոր կերպով իրագործելու համար՝ անխուսափելի էր դիմել սովորական միջոցի: Մտաւ առաջի պատահած դինետուն, խմեց իրար ետևից մի քանի բաժակ օղի, թողեց այնտեղ իր վերջի կոպէկները և անհաստատ քայլերն ուղղեց Միխակի կրպակի կողմը:

#### Կ

Աւետիքի բնակարանը գտնուում էր Քարափի-թաղի ամենախուլ ու կեղտոտ անկիւնում, պատերը ծուած մի հին տան գետնայատակում: Կամարաձև առաստաղը խիստ ցածր էր, սենեակը մութ ու խոնավ: Միակ ու փոքրիկ լուսամուտը ծածկւած էր թղթի կտորներով, ջարդած ապակիները պահպանելու համար: Տաս տարեկան հիւանդ Վանօն պառկած էր մաշած, բայց խնամքով լացած անկողնի մէջ: Անշարժ ձգւած էր նա մէջքի վրայ և կլոր աչքերը կիսով չափ ծածկել էր: Նինօն ու թամարը — նրա քոյրերը, նստել էին կողքին ծալապատիկ և աշխատում էին զարճացնել հիւանդին:

— Ես իսկի, իսկի, ոչ մի անգամ չեմ ջգրեցնի Վանօյին. ասում էր եօթ տարեկան թամարը, — թէկուզ նա ինձ ծեծէ, թէկուզ մաղերիցս քաշէ, իսկի չեմ ջգրեցնի:

— Իսկ ես, աւելացրեց ութ տարեկան Նինօն, — երբ ձայնեց տուն կերթամ ու ինձ տանձ կամ խնձոր կըտան՝ ես չեմ ուտի, մէկ անգամ էլ չեմ կծի, կըբերեմ Վանօյին կըտամ:

Նրանց մայրը, լացարար Կատօն գնացել էր դուրս, երեսխաներից ծածուկ լայու համար և թէպէտ աչքերը լաւ սրբեցնամաքեցրել էր՝ սակայն երբ ներս մտաւ, Նինօն զգաց բանի էութիւնը և շտապով դուրս վազեց, ասելով.

— Գնամ, տեսնեմ հայրիկս գալիս է, թէ չէ. բայց կեղծեց, թաղւեց անկիւնի մօտ դարսած հին տախաակների տակ, ի սրտէ լաց եղաւ, կշտացաւ ու լետոյ սկսեց մըմնջալ այն միակ աղօթքը որ սովորեցրել էր մայրը:

«Աննհօր և որդով եհոզով ետրով, ամին»: Եւ դա կրկնեց իրար ետևից այնքան անգամ, որ մատների վրայ համարելով՝ հասցրեց քսանի:

Այդ միջոցին հասաւ շնչասպառ եղած Արշակը, հացը դրեց հիւանդի կողքին և սկսեց պտտել ոտների ծայրերի վրայ, որով արտայայտում էր իր ուրախութիւնը: Ուրախացան և միաները, նոյն իսկ Վանօն թեթեւ կերպով ժպտաց. Նինօյի երջանկութեանը չափ չըկար: Նա անսաւ, որ Աստուած նրա աղօթքը լսել է, ուրեմն եղբօրն էլ շուտով կառողջացնի:

Մայրը հիւանդի վրայից այսօր հանել էր սպիտակեղէնը և լացել, որպէս զի առողջանալուն պէս մաքուր շորեր ունենար, բայց սրաի շատ հեռաւոր խորքում դգում էր, որ այդ պատրաստութիւն է «յամնայն դէպս»:

— Թամար, դու «անընհօր» ինչու մոռացար. խորամանկութեամբ հարցրեց Նինօն:

— Չեմ մոռացել. ուզում ես ասեմ:

— Ես էլ չեմ մոռացել. կրկնեց Արշակը և ձախ ձեռքը ձակատին դնելով՝ արաստանեց.

— «Անընհօ ետրով»...

Թամարը ծաղրեց, իսկ Նինօն օգտուելով հանգամանքից՝ առաջարկեց եղբօրը՝ կանոնաւոր կերպով սովորելու և այսպէս նորից քսան անգամ կրկնեց աղօթքը և միւսներին էլ կրկնել տուց:

— Ես «հայր մեր» էլ դիտեմ. լաւեց հիւանդի թոյլ ձայնը:

Անսպասելի էր այդ՝ ամենքի համար: Մեծ ուրախութիւն տիրեց տան մէջ. իսկ Նինօն աւելի ևս համոզւելով՝ որ Աստուածը նրանց աղօթքը լսում է, սաստիկ յուզւեց և նրա աչքերի մէջ փայլեցին արտասուքի կաթիլները:

Մանուկները իրար հետ խորհրդակցելուց յետոյ, հանդիսաւոր կերպով յայտնեցին նախ հիւանդին, յետոյ մօրը, որ իրանք սպիտակ հացից միանգամայն հրաժարւում էին:

—Յրանի՛ ես էլ հիւանդանամ. ասաց ամենափոքրիկը:

Վանօն արդէն մի տարուց ի վեր աշխատում էր ծխախոտի գործարանում և վերջին անգամ այնքան յառաջագիմել էր, որ շաբաթական փսուն կոպէկ էր բերում տուն: Այդչափ էր մայրն էր աշխատում և այդպէս մի կերպ ապրում էին: Հաց կինը շատ ընդունակ է ամենաչնչին միջոցներով անգամ ընտանիք կառավարելու: Երեխայի հիւանդանալու օրից՝ զրկւել էին ապրուստի միջոցներից և ստիպւել էին ունեցած տան իրերը ծախելու: Մեծ մկրատը վերջի մնացորդն էր:

Փոքրիկները նստել էին կապոյտ սիւռոցի շուրջը և իրանց բաժին հասած սև հացը մեծ ախորժակով ուտում էին: Բացառութիւն էին արել միայն Արշակի համար: Նա ստացել էր հացի երկու տեսակից էլ և ուտում էր այն ձևով՝ ինչպէս հաց ու պանիր:

Վերջապէս վրայ հասաւ յողնած Աւետիքն էլ և մի մեծ կապոց դրեց թախտի վրայ:

Անցել էր մի քանի օր: Նինօն վախեցած տուն վտոցեց ու յայտնեց մօրը, որ մի ինչ որ հարբած մարդ հարցնում է թէ թէ երեխան ինչպէս է: Լացարար Կատօն դուրս եկաւ և պատասխանեց.

—Աստուած կուգէ՛ քիչ լաւ է:

Հարցնողը Սաքուլն էր:

Գ. Բաշինջաղեան

## ԿԱԼԱՆԱԻՈՐԻ ՕՐԱԳՐԻՑ

1

### ԶԱՆԳԻ ԶԱՅՆ

Քանտրս խոնաւ, բանտրս մրուալ  
Սւ խնւլ, որպէս գերեզման.  
Ես չեմ տեսնում ո՛չ օրուայ փայլ,  
Ո՛չ կենդանի լըսում ձայն...

Միայն հեռւից Աստուծոյ տան  
Զանգն է անուշ ղօղանջում.  
Ա՛խ դու, սուրբ կոչ ազատութեան,  
Ինձ համար չե՛ս դու հընչում...

2

### ԱՐԵՒԻ ԶՈՂՔԸ

Քանտիս խորքը շողք է ընկել,  
Զողքիդ մեռնեմ, այ արև.  
Թո՛ղ ինձ գանէ շողքիդ զրկել,  
Մօարս պահեմ, ջան արև:

Բայց չե՛ս լսում դու ինձ, աւանդ,  
Ո՛չ չե՛ս նայում դու վերաս.  
Ա՛խ, շո՛ղ-արև, շողքի՛դ մատաղ,  
Եարաբ վաղն էլ դու կըզմաս...

## ՄԻՒԹԱՐԱՆՔ

**Ա**ցարանս նեղլիկ մի խուց,  
 խոնաւ, անօդ ու անլոյս.  
 Սպասում եմ էսօր-էրուց,  
 Բայց փրկուլթեան չըկայ լոյս...

Միայն բանտի «խելօք» ծառաս  
 վըկայ իմ լուռ տանջանքին,  
 Յոյս է տալիս. «Հոգ չէ, աղաս,  
 Կրտուրէք էս կեանքին»...

## ԵԱՐ ԵՄ ԿԵՆՉՈՒՄ...

**Ե**ւր եմ կանչում, ձէն չես տալիս,  
 Ախ, սիրական, դու ո՞ւր ես.  
 Էս սև օրիս, անճար հալիս,  
 Դար չես անում, դու ո՞ւր ես...

Սև սրբտիցըս արիւն կաթում,  
 Եարաք դու էլ տըխուր ես.  
 Մենակ մեռայ էս մութ բանտում.  
 Իմ լոյս-ճըրագ, դու ո՞ւր ես...

*Ալէքսանդր Ծատուրեան*

17—31 մարտ 1899.  
 Մոսկվա.



## ԸՆԳՆԱՏԻՈՂ ՀԵԿԵԿԱՆՔՆԵՐ

(Տպատրութիւններ)

## I



Ղնանային առաւօտ է. Փարիզի նոյեմբերեան առաւօտ, երբ արեգակը երբեմն ճիշտ ամարային քմահաճոյք է արտայայտում, մահամերձ բնութեան մէջ կենդանարար և հաճոյալից ջերմութիւն տարածելով:

Սենեակիս դիմացի պատուհանից կախ վանդակի մէջ փակած թռչնակը, որ մի քանի օրից ի վեր լուռ էր, սկսել է ծլվլալ և թռեւերին անել: Օդի մէջ տարածւած դիւրալի ջերմութիւնը նրան դարունն է լիշեցրել:

Խոնաւ, անձրեային օդերի պատճառաւ՝ օրերով սենեակում փակւած մնալով, այդ փոքրիկ դեղձանիկը, որ մարդու մի մատի չափ չըկայ, անսահման կենսունակութիւն է արտայայտում զգալով արեգակի ճառագայթների ջերմութիւնը և օդի մէջ տարածւած փափկութիւնը: Նա ցատկում է վանդակի մէջ, կոտցով և մազիլներով կախում է վանդակի երկաթեայ թելերից: Մի վայրկեան կանգնեց վանդակի ներսի երկարութեամբ ձգւած փայտի վրայ, կրկին թռեւերին արաւ և... երգեց:

Ահադին տան դաւթի վրայ բացւած բոլոր պատուհաններից անդրադառնում է այդ փոքրիկ թռչնակի դայլայլիկը, երբեմն սուր, անընդհատ ու սահուն, երբեմն ընդհատող, բեկբեկող ու կրքոտ, բայց միշտ դալարուն ու հրաբորբոք:

Ի՞նչ է երգում նա. — չըզիտեմ. չեմ հասկանում նրա լեզուն. բայց հասկանում եմ որ լալիս է, աղիողորմ լալիս է իր սրտի բոլոր զգացումներով: Ահա փոքրիկ փետուրները թափ տուաւ և ծկլթաց: Արդեօք կանչում է մէկին. — չըզիտեմ, բայց զգում եմ, որ լալիս է:

Ահա նետի սէս ցատկեց դէպի վանդակասրատը և գլուխն ամուր խփեց վանդակի երկաթէ թելերին ու յետ մղեց: Կրկին ցատկեց, կրկին յետ մղեց և կրկին կանգ առաւ բարակ փայտի վրայ ու երգում է...

Աշնանային երգ, գարնանային յոյսերով լի...

«Ահա մի քիչ ևս՝ կըջերմանայ — մյս էր ասում նա արդեօք — չեն լինի այլ ևս վանդակի թելերը և նա ճախրելով կըթռչէ օդի մէջ և կ'իջնէ դէպի պարտէզն ու այդին, ուր ծաղիկը կըշուէ նրա փետուրները»: Եւ նա կրկին անհանգիստ նայեց իր չորս կողմը, կրկին ցատկեց դէպ երկաթէ թելերը, զարնեց գլխով և կրկին յետ մղեց: Երդն ընդհատեց թռչակը:

Ծանր էր ինձ աւելի նայել բանտարկեալին: Վերագարձայ դէպ զրասեղանս, որպէս զի շարունակեմ սկսած գրեածքս: Սկսած: Ոչ, ես մոռացել եմ: Նա դեռ չէր սկսած: Այսինքն մի քանի անգամ էր սկսած: Կային վերնագրեր, բայց ջրնջւած էին: Գրած էր — «Որբեր» և ջնջւած. գրած էր — «Որբի յիշատակարանը» և ջնջւած. գրած էր — «Որբի երազը» և ջնջւած... Գրիչը կրկին վայր ընկաւ ձեռիցս: Կրկին եմ ասում, որովհետեւ այդ եօթերորդ անգամն էր, եօթն օր էր, որ ամեն անգամ այդպէս նստում էի գրասեղանիս կողքին, գրիչը վերցնում, մի վերնագիր գրում, ժամերով լռում և ապա ջնջում:

Լսողութեանս հասան թռչնակի կտուցի և մաղիւնների հարեւոյնները վանդակի երկաթէ թելերին: Նայեցի պատուհանով. թռչնակը կատաղի թռիչքներ էր գործում վանդակի մի ծայրից միւսը և կտուցով ու մաղիւններով ի գուր տքնում էր կտորել վանդակի թելերը: Նա այլ ևս չէ երգում, այլ մի տեսակ խուլ սուլոց է հանում:

Իրական տանջանքն ինքն էր իմ աչքի առաջ: Կաշկանդած թռչնակը ելք է փնառում և չըկայ...

— Ձեզ համար է, պարոն. յանկարծ լսեցի մի թաւուտ, հաստ ձայն և սարսուռով կարծեցի թէ ուրուական է, որ ինձ ուզում է հասկացնել թէ թռչնակն ինձ համար է տանջում, որպէս զի ես հասկանամ թէ կաշկանդած միտքը տանջում է, բայց դուրս չէ սլանում: Սակայն իմ երկիւղս անսեղի էր. դա մեր բարի, ծերունի դռնապանն էր, որ ինձ համար ներս էր բերել հետեւեալ բովանդակութեամբ փոքրիկ տոմսակը. «Մի քանի բոսթոնի ինձ մօտ անցիր, գործ ունիմ. քո Ս. Արգարեան»:

— Eureka! մի վայրկեան անցաւ մտքիցս. ահա թէ ո՞վ կազատէ իմ միտքս կաշկանդումից, ահա թէ ինձ ո՞վ հիւթ կըտայ, կ'ողևորէ. Արգարեանը, այդ կենսաթրթիռ տաղանդաւոր երիտասարդը, այդ բեղմնաւոր ուղեղը որ անդադար արտադրում է, ստեղծագործում է, առանց նիւթերի և վերնագրերի առաջ կանդ առնելու:

Գլխարկս հագայ և քայլերս ուղղեցի դէպ Լիւքսեմբուրգեան այգին:

## II

Վաղուց էր չէի անցել այդ այգով: Նա այժմ այլ ևս այն չէր, ինչպէս տեսել էի նրան գարնանը և ամառը: Սաղարթախիա, դալար հսկայական ծառերը, սրոնց թանձր, զմրուտի սէս կանաչ ու լայն տերեւների հետ շարունակ խաղում էր թեթեւ հողմը քաղցր սօսաւիւն առաջացնելով, — այլ ևս չըկային. այլ նրանց փոխարէն դալարից և տերեւներից զուրկ, կարծես սև սև, ահագին, չոր դերաններ էին կանդնած, առանձին առանձին, միմեանցից հեռու, մեռած, անշարժ: Արեգակը, որ առաջ իր բոլոր ոյժով դալիս ծանրանում էր միայն նրանց տերեւների վրայ, առանց նրանց սաորոտներին հասնել կարողանալու, այժմ իր ճառագայթները ազատ տարածում էր ամեն կողմ, աւելի անողոքաբար հրապարակ հանելով այդ ծառերի սևացած բները և իր ջերմութեամբ դուրս կորզելով նր-

րանց արմատներից նրանց սննդող խոնաուլթիւնը, որ թույլ գոլորշիի պէս թափառում էր դօսացած բների միջև: Հաղարերանգ, անուշաբույր ծաղիկները, որոնք գեղարեեսաական բազմաթիւ քմահաճոյ ձևերով զարդարում էին այդ ծառերի բների շրջապատները, այլ ևս չրկան: Նրանց սննդող սեւահողը մերկացած՝ սև շերտեր է կազմում միակ դալար մնացած արհեստականապէս ցանւած խոտի մէջ, որ միայն կանաչ գոյն ունի և ոչ հոտ և ոչ կեանք, ու լիշեցնում է հարուստ մեռելին հազցրած թաւշեայ զգեստը, որ սառած մարմինը չէ կարողանում ջերմացնել:

Մարմարիօնեայ ու մետաղեայ արձանները, որոնց գլուխ էին ալիանտրի տերեւները և ծառերի սաղարթները ու թագցնում իրենց սաւերի մէջ, այժմ մերկ մինչև պատւանդանը, երևում են այս և այն կողմ ծառերի սեւացած բների միջից իբրև ճերմակ ու սև ուրուականներ: Վայրկենական անփոփոխ արաայայաութեան այդ սառած պատկերները կարծէք ուղում են հաւաացնել, թէ մահն է միայն կեանքի վերջնական տէրը:

Ամենից հեռու, հեռու կանաչ գորգերից և պսպղուն ծաղիկներից, հեռու ծառերի անբուսերի զգւանքից, այգու ծայրում, Օբսերւատօրիան լերկ հրապարակի վրայ երևում է մետաղեայ հսկայական արձանը՝ Նէյ մարեշալի, որ իր հայրենիքում, Փրանսիայում, ժառանգել էր «քաջերից ամենաքաջը», — brave des braves մականունը. նա, որ Փրանսիական բանակների զուխն անցած հասնում էր մինչև Մոսկվայի պարիսպները և ապա իբրև դատապարտեալ իր հայրենիքից՝ հրացանի բռնում նոյն այն տեղը, ուր բարձրանում է այժմ նրա արձանը:

Եւ չես կարողանում հասկանալ, թէ երբ է արդեօք կատարել մարդկային արդարութիւնը. արդեօք այն վայրկենիներբ նա անարդ սիւնին դատապարտւած, գնդակի հարւածից հոգին էր փչում, թէ այն վայրկենիներբ «երախտապարտ հայրենիքը» նրան կանգնում էր այդ արձանը...

Բայց ահա ծառերի և ծաղկանց թաւուտի մէջ, դալարազարդ բլրակի վրայ մի այլ հերոս, մի այլ զինուոր, բայց զինուոր ոչ հրացանի և կրակի, այլ մտքի, զգացման և զրջի:

Ահա Լըքօնտ-Գրիլը, Փրանսիայի մեծ և սիրելի պօետը. նա, որ փորձել է թափանցել հրաշալեաց գաղտնիքների աշխարհը, գողանալ այդ գաղտնիքները և տալ մարդկանց. նրանց երջանկութեան համար. նա, որ այնքան լաւ է երգել յաւիտենական և համաշխարհային վիշտը: Նրա ուղեղն և սիրտը վաղուց փտել են հողի տակ, բայց նրա մարմարիօնեայ կիսարձանը Լիւքսեմբուրգի այգում բարձրանում է հրեշաականման մուսայի զլիսից աւելի վեր, աւելի բարձր և այդ մուսան վառվառն ժպիտով, բաց ստինքներով՝ գրկել է նրա սիրտը քնքշութեամբ և իր թւերը բացած՝ հովանի է անում պօետին, ինչպէս մայրը զաւակին կամ սիրատուսը կոյսը իր սիրեցեալին...

Արձանն այգտեղ է. իսկ ուր է այն հրաշալիքը, այն երջանկութիւնը, որ աշխարհ է բերել պօետը. ուր է նրա իղէան: Այդ իղէան նրա պէս արձանացած, քնած է թղթերի մէջ, ինչպէս Վիրգիլիոսինը, ինչպէս Հոմերինը. այդ իղէան կրմնայ թղթերի մէջ և երբէք չի մտնի տառապող մարդկութեան կեանքի մէջ, որովհետև homo homini lupus est.

Եւ ահա թագուհիների շարքը: Հասարակապետական Փրանսիան, որ անխնայ զլիատել է այդ թագուհիների կենդանի մարմինները, նրանց արձանները մի առանձին խնամքով և սիրով կանգնեցրել և պահպանում է իր թանգարաններում, հասարակական հրապարակներում և այգիներում: Ահա Մարի Անտուանէտ իր արքայական թագով: Անդրիազորձն րնտրել է սպանւած թագուհու կեանքից այն վայրկեանը, որի մէջ ամենից ազնիւ է կինը: Դա այն վայրկեանն է, երբ թագուհին մայր է նոյնպէս, ինչպէս ամեն մի կին և երբ նա պաշտպանում է իր զաւակին կատաղի ամբողի ձեռքից:

Լիւքսեմբուրգի այգում Փրանսիական հանձարը յաւերժացրել է այդ սրտաշարժ վայրկեանը՝ թագուհու արտասանած խօսքերով. «Եթէ չէք յարգում մի մահւան դատապարտւած թագուհու, զթացէք մի թշուառ մօր»...

Եւ ամեն օր Փրանսիացիին անցնում է այդ արձանի մօտով, յարգում է այդ մօրը, որ իր զաւակի կեանքն ազատում է ամբողի կատաղութիւնից:

Եւ ամեն օր Ֆրանսիացին այդ արձանի պատուանդանի մօտ նստած, առանց վրդովելու կարգում է օրւան լրագիրը, որ պատմում է թէ այս ինչ երկրում, այս ինչ քաղաքում, այս ինչ դիւղում հաղարաւոր մայրերի աչքերի առաջ՝ կոտորեցին նրանց զաւակներին և հաղարաւոր զաւակներին աչքի առաջ կոտորեցին նրանց հայրերին:

Քարերն իսկ աղաղակում են և մարդիկ լուռ են:

### III

Աշնանային ցուրտը հալածող ջերմ արևը մի քիչ շարժել է Փարիզի մրջնատուներ և Լիւքսեմբուրգի այգու լայն աւազանի չորս կողմը վխտում են ուրախ-զւարթ մանուկները: Նրբանք իրենց փոքրիկ նաւակները ձգում են ջրի վրայ, երկար եղեգնով ուղղութիւն տալիս նրանց և աւազանի շուրջ վազ-վրդելով հետևում նաւակների ընթացքին: Աւազանից մի քիչ հեռու, ծաղկանոցի կողքին շարած նստարանների և աթոռների վրայ նստոտած են նրանց մայրերը մի մի զիրք կամ լրագիր ձեռներին: Ահա և նրանց մէջ սղաղղեաց այրիները, որոնք ի նշան խորին վշտի, թաւշեայ և մեաաքսեայ սևեր են հագել:

Փոքրիկ, դարձացող, խաղացող, վազվող, ուրախ երեխաների թւում այդ այրիների «որբ» զաւակները ճանաչում են նրանով, որ իրենց թւերի վրայ սև, բարակ, քնքոյշ, մետաքսէ շղարշներ ունեն կապած: Միւս մանուկները նայում են այդ գեղեցիկ շղարշներին այնպէս, ինչպէս զիւղացին նայում է դիւանատան արտօնած զրազրի կուրծքից կախած շքանրշաններին: Որբեր. ոչ, զրանք միայն սղաղղներ են, իրենց որոշ ձևական նշանով. որբ չըկայ զրանց մէջ: Եւրոպացին որբ չունի:

Աւազանի չարս կողմն աղմուկը սկսում է աւելանալ: Դա հողքի սանդուղքներից արագ իջնող փոքրիկ դպրոցական սանիկների խումբն է, որ վաղում է գնդախաղի համար անդ բռնելու: Մօտ քառասուն ուրախ ու զւարթ երեխաներին հետևում է բեխերն ու մօրուքը թրաշած, միջահասակ աբբան, փոքրիկ, ոսկեղօծ աղօթագիրքը ձեռին:

Նորեկ սանիկները հագնւած են աղքատիկ. և հասարակ չօւխալի զգեստի վրայից կրում են կապույտ գոգնոցներ: Երևում է, որ ձրիալարժներ են և հոգևոր դպրոցի սաներ: Ամբողջ խումբը մի քանի ընդհանր բաժանեց երկու բանակների և ըսկուեց գնդախաղը: Աբբահայրը տեղաւորեց նոյն նստարանի վրայ, նախապէս բարևելով իմ կողքին նստած իր ծանօթ պառաւ Ֆրանսուզուն:

Քառասուն մանուկներից միայն մէկը չէր մասնակցում խաղին. առանձնացել էր և նստել մեր դիմացի նստարանի վրայ ու աչքերն անթարթ՝ գետնին յառել: Նա նիհար էր, դեղնած, տխուր և ամենևին չէր հետաքրքրւում չորս կողմը եււացող կեանքով:

— Աբբահայր, ձեր այդ սանիկը տկար է. հարցրեց կողքիս պառաւը քահանային, ցոյց տալով առանձնացած սանիկին:

Աբբահայրը նայեց լէպ սանիկի կողմը և զլուխը երերացնելով ասաց. — Ոչ, այդ երեխան միշտ այդպէս sournois (մթաղնած, մեկամաղձ, թաղնալի) է: Եւ ձայնն աւելի ցածացնելով աւելացրաւ. — Դա, որբ է. Ֆրանսիացի չէ...

Առանց նոր հարցումների սպասելու, Աբբահայրը Ֆրանսիացուն յատուկ լեզւանիութեամբ սկսեց պատմել պառաւին. — Այդ երեխան, տիկին, մեր դպրոցում նորեկ է. զրան բերաւ Փոքր-Ասիայից հայր Գոմինիկը կոտորածներից լետայ: Կարդացած կրկնիք անշուշա թէ ինչ ստրասպիելի կոտորածներ եղան այնտեղ: Երկիրը որբերով լցել է և շատ որբանոցներ կան բացւած: Այդ մէկին հայր Գոմինիկը հեար բերել է այստեղ, որովհետև ազգրի վրայ դաշոյնի վերք ունէր, պէտք էր բժշկել: Այժմ կատարելապէս բուժւած է, բայց միշտ այդպէս է ինչպէս տեսնում էք. առանձնացած, տխուր, անխօս, մարդկանցից խուսափում է... Կատարեալ որբ է. յայտնի չէ մինչև անգամ թէ որտեղացի է. զրան գտել են Սլերդ քաղաքից բաւական հեռու, վիրաւոր և ուշաթափ, զրեթէ մեռած: Այսքան դիտենք միայն որ հայ է, որովհետև հայերէնից իր գատ ոչ մի լեզու չըզիտէ... Ինչպէս երևում է, ծնողներին իր աչքի առաջն են սպանել, որովհետև այդ սոսկումը միշտ

գրան հետևում է և զիշերներն ազազակով քնած տեղից ցատկում է ու թաղնում առաջին պատահած իրի լետու: Օ՛, տիկին, ստակալի է այդ փոքրիկ մանկան տանջանքը. նկարագրել խոսի անհնարին է, սովորականից դուրս է...

Պառաւ Ֆրանսուէին անձայն և կամաց հեկեկում էր: Աբբահայրը բացաւ իր աղօթագիրը: Լիւքսէմբուրգի պալատի ճակատի ահագին ժամացոյցը երկար ղողանջիւնով զարկեց ժամը 11-ը: Նայեցի առանձնացած մանուկի վրայ. նա երեսը խաչակնքում էր. ինձ թուում էր թէ ամբողջ աշխարհը հեկեկում է. և դուրս գնացի այդուց զէպ Աբգարեանի տունը:

#### IV.

Աբգարեանն ապրում էր Լիւքսէմբուրգի այդուց հեռու Ասաս փողոցում, մեծ, սպիտակ, բարձր աների վեցերորդ յարկում, զաւթի վրայ: Նա չընայելով իր զրական և համախարանական յոգնեցուցիչ գրադմունքներին, ամեն օր մի քանի վայրկենով անցնում էր ինձ մօտ, որովհետև համախարանի ճանապարհը տանս մօտովն էր և մենք այնքան մտերիմ էինք, որ ամեն օր տեսնուելու պահանջ էինք զգում: Եօթն օր էր որ Աբգարեանը իմ կողմը չէր անցել և ես անհանգիստ էի: Աբգարեանի սենեակը ես չեմ նկարագրի մանրամասն. նա սովորական ուսանողական սենեակներից էր, այն փոքրիկ զանազանութեամբ որ բաւական մաքուր էր. սենեակում մի ահագին զրասեղան կար, ամբողջովին թաղած զրքերի, լրագիրների ու թղթերի մէջ: Մնկիւնի դարակների վրայ երևում էին քիմիական փորձերի մի քանի սրտակներ, բենզինի կանթեղ, ճակատը պատառւած մի գանդ: Այդ կահկարասիքը շատ յաճախ էին տեղափոխում մի անկիւնից միւսը, բայց միշտ կային:

Երբ ես հազիւ շնչելով հասայ վեցերորդ յարկին, բացի Աբգարեանի սենեակի դուռը և տեսայ տանտիրոջը, կարծեցի թէ նա խելագարւել է: Աբգարեանը սենեակի մէջ անդադար ման էր գալիս մի անկիւնից միւսը, մազերը զգգւած, անլւայ,

զիշերւան շապկի վրայից հին Ֆլանելը հագած և սենեակի կօշիկները առանց գուլպայի՝ ոտերին անցրած:

— Հը՛, վերջապէս եկա՛ր. որ մեռնենք էլ հօ հարցնող չի լինի: Ասաց նա մի տեսակ զրգուած տոնով և կրկին սկսեց չափչփել սենեակը:

— Ես էլ ամեն օր քեզ էի սպասում. մեռնելու ինչ կայ որ, հիւանդ հօ չե՛ս — ասացի ես — քանի օր է չես գալիս, դէ ես եկայ էլի: Իրաւ ինչ կայ, ինչո՞ւ չես երևում:

Աբգարեանը շարունակ լետ ու առաջ էր պտտում և չէր խօսում:

— Իրաւ, Աբգարեան, ինչ կայ. ես երբէք քեզ այդպէս չեմ տեսել: Բարկացրե՛լ են քեզ, ինչ է: Գուցէ բան ես զրում, զբաղւած ես...

— Գրում եմ, զրում եմ, այո՛, այո՛, հապա չեմ զրո՞ւմ. զրում եմ, զրում եմ, այ, տես, այ, հայեր...

Չւարած Աբգարեանի այլալուծից՝ նայեցի նրա ցոյց տւած զրասեղանի կողմը, ուր մի թերթ փոստի թուղթ էր ընկած և ճակատին զրած «Ընդհատուող հեկեկանքներ» և զրանից աւելի ոչինչ չըկար:

— Ոչինչ չեմ հասկանում, եղբայր — ասացի ես — ու ինչ արտասուալից վերնադիր է. — «Ընդհատուող հեկեկանքներ». զրել ե՛ս ու այսպէս թողել: Գիշտ չի պէս լետ ու առաջ ես զնում. մարդավարի էլ չես խօսում որ բան հասկանամ...

— Իզիօս եմ դարձել, հասկանո՞ւմ ես, իզիօս եմ դարձել. եօթն օր է, որ ուզում եմ զրել և միայն այդ վերնադիրն եմ զրել. այն էլ չըղիտեմ ինչու, իզիօս եմ... — գոռոզում էր Աբգարեանը:

— Իէ լաւ, լաւ, հանգստացիր. մի կարգին ասա, տեսնեմ բանն ինչումն է. ինչ ես զրում, ինչո՞ւ ես զրում: Գու էլ սր չըկարողանաս զրել, էլ ո՞վ պէտք է զրի:

— Ա՛, կարգա — ասաց Աբգարեանը, սեղանի արկղից մի ծրար հանելով և ձգելով իմ կողմը — առ ու կարգա, կարո՞ղ ես չըզրել:

Ես աշխատեցի չըշփոթւել և նամակը կարդացի իբրև նո-

բութիւն: Դա Մոսկւայի մի քանի երիտասարդներից էր. շատ քաղաքավար ոճով առաջարկում էին Արգարեանին մի որևէ գրեթէ ուղարկել իրենց հրատարակելիք ժողովածուի համար:

—Իէ, կարգա, լաւ կարգա—հողիս հանում էր Արգարեանը:

—Կարգացի, եղբայր, կարգացի, ինչ կայ որ, շատ սովորական բան է. ժողովածու են հրատարակում և դիմում են հայ գրողներին ու հրատարակիչներին. գրանցից մէկն էլ դու ես. ես էլ եմ քեզ ճանաչում, նրանք էլ, որ եթէ մէկը մի բան գրի մի տարում, դու կըրես մի ամսում: Աւրիշ ինչ կայ այստեղ, չեմ հասկանում:

—Չես հասկանում, չես հասկանում. բաս ես հասկանում եմ—ազգակեց Արգարեանն այնպէս, որ ես չըզիտէի ինչ անեմ:

—Առ, սառ, առ, ահա, այս էլ սառ. ասում էր նա և միմեանց ետևից իմ առաջ շարտում լրագիրները, ուր տպագրած էին նրա գրեթէ քերթերը: Ահա, գրել եմ, դիտես էլի, գրել եմ. բայց այժմ չեմ կարողանում, չեմ կարողանում. եօթն օր է. իդիտի պէս միայն մի վերնագիր եմ գրել:

—Իէ վերնագիրը փոխիր:

—Վերնագիրը փոխիր—կրկնեց նա ծագելով—Տ՛՛, վերնագիրը փոխելով ինչ կրկնի, քանի որ սա դուրս է գարձել և մէջը ոչինչ չըկայ—ազգակեց նա ճակատին խփելով—բանի որ նիւթ չըկայ, չըզիտեմ ինչ գրեմ: Այսինքն... նիւթ... նիւթ կայ, չէ կարելի... հ՞ը... չեմ կարողանում. այնպէս չէ...

Չափազանց եմ սիրում Արգարեանին. նա իմ ամենասիրելի ընկերս է. վիրաւորել չէի ցանկանում. շփոթւել էի և հազիւ էի դսպում ծիծաղս: Սակայն իմ ծիծաղս սովորականի պէս չազդեց Արգարեանի վրայ: Նա լսո՞ւմ էր, սաստիկ լողնած: Դազարեց շրջելուց, նստեց աթոռի վրայ և դուրսը կաթնեց ձախ ձեռքին:

Ես շփոթւել էի. նկատում էի Արգարեանի դէմքի վրայ ներքին տանջանքի արտայայտութիւններ և աշխատում էի մի հնար գտնել, հասկանալու թէ ինչու այդ սովորաբար ուրախ, զարթ, հումորով լի, կենսաթրթիւռ, միշտ ծիծաղով ու զու-

արճութեամբ աշխատող ընկերս այդպիսի մելամաղձութեան մէջ է: Վերջապէս փորձեցի կատակել:

—Չեմ հասկանում—ասացի—ինչ է պատահել քեզ. սիրահարւած ես, ինչ է:

—Ճշմարիտ. միթէ այդ տեսակ տպաւորութիւն եմ գործում. ասաց դառն ժպիտով Արգարեանը:

—Ճշմարիտ ասեմ քեզ—պատասխանեցի—ինձ այնպէս շփոթեցիր, որ ոչինչ չեմ հասկանում:

—Ապա չասացի—շարունակեց նա—եղբայր, միթէ չես կարողանում հասկանալ: Չեմ վիճում. գուցէ սիրահարւածն էլ ինձ պէս տանջում է; երբ կորցնում է որևէ միտք արտայայտելու ընդունակութիւնը: Բայց ահա, տեսնում ես էլի. եօթն օր է, եօթն օր, երկու բառ եմ գրել և այն էլ իբրև վերնագիր. և երբ նստում եմ գրելու, հեկեկանքներն ինձ խեղդում են...

Այժմ ես, արգարև, լսեցի Արգարեանի ձայնի մէջ ընդհատող հեկեկանքներ, որոնց նա լաղթում էր: Ազգում էի խօսել, բայց չըզիտէի ասելիքս. նա ինքը խօսեց.

—Չըզիտեմ, չըզիտեմ. ասում էր նա բեկբեկող ձայնով—կեանքիս մէջ ինձ այսպիսի բան չէ պատահել: Ոչ մի ժամանակ այնքան չէ թուլացել ձեռքս, որքան այժմ: Պատկերները չափազանց հսկայական են, չափազանց սոսկալի... Մտքեր կան իսկապէս, բայց նրանք, յանկարծ ամենքը միասին դալիս են թափում դլիս, ցանկանում են խեղդել և երբ ուզում եմ դոնէ մէկին ձեռք տալ, ամենքը միասին կորչում են, աներևութանում: Աչքիս առաջ կրկին մնում են «որբեր», «որբեր». ահա այդ բառը ցցել է ուղեղիս մէջ և շանթարգելի պէս հալածում է ամեն մի միտք, որ մօտենում է ինձ. որբեր, որբեր...

—Իէ հանիր դիտիցդ այդ բառերը և դէն ձգիր. ասացի ես, քեզ ո՞վ է ասում որ անսպասձառ որբերի մասին պիտի գրես...

—Հանիր, դէ, հանիր—ասաց Արգարեանը գրեթէ գոռալով—հանիր, ահա դուրս, հանիր դէն ձգիր: Սուտ ես ասում. ինքդ քեզ ցանկանում ես խարել: Հանիր, դէն ձգիր: Հապա ինչի վրայ գրել. ասա, նիւթ տուր, ասա, գրեմ...

—Մինչև այժմ ինչո՞ւ նիւթերի համար դժնէգու՞ւ չէիր ընկնում. միթէ նիւթեր չունիս:

—Ի՞նչպէս չէ. կուզես երևի, որ զրեմ *dépopulation*-ի մասին և բացատրեմ թէ ինչպէս պէտք է բազմացնել Փրանսիական ազգը որ չափազանց երջանկութիւնից պակասում է, կամ զրեմ մանուկների առողջապահութիւնը, կամ նրանց կրթութեան մասին...

—Ի՞նչ վատ կըլինի, ի՞նչ պակաս նիւթեր են:

—Տօ, բերանովդ որբեր ես ասում, «որբեր», այն էլ հայկական որբեր. այնտեսակ մի բան, որ պատմութեան մէջ չէ եղել...

—Լա՛ւ, բայց...

—Գիտես ինչ կընշանակէ «հայ որբեր» — ասաց նա վեր ցատկելով տեղից:— Գա մի առանձին տերմին է, որ գոյութիւն չունի ոչ մի ազգի համար: Ես դեռ չեմ լսել որ ասեն «անգլիացի որբեր, Փրանսիացի որբեր, յոյն որբեր»... Այդ խօսքերը գոյութիւն չունի աշխարհի գրականութեան մէջ. իսկ «հայ որբեր» խօսքերը ժամանակակից պատմութեան մէջ այնպիսի չատուկ նշանակութիւն են ստացել, ինչպէս օրինակ ասում ենք — «արեգակի ջերմութիւնը, ձիւնի սպիտակութիւնը»...

—Ի, լաւ, գրանից ի՞նչ դուրս եկաւ...

—Գրանից այն դուրս եկաւ — ասաց զրդուած Արդարեանը — որ երբ ես զրիչը վերցնում եմ զրելու, ահա իմ աչքի առաջ պատկերանում է մի սոսկալի անջրդի անապատ, ուր թափառում են այդ հարիւր հազարաւոր որբերը, որոնց համար հորիզօնի ոչ մի կողմից և ոչ մի օաղիսի, յոյսի նշույլ չըկայ: Արբեր, լաւ նայիր, սրոնք աշխարհի ոչ մի որբերի նման չեն, սրոնք ոչ միայն հայր և մայր չունին, այլ նոյն իսկ չըղիտեն թէ ունեցել են թէ ոչ. որոնք ոչինչ չունին սիրելու աշխարհի երեսին, որոնք մի թիզ հող չունեն, ուր հանդիստ ոտ դնեն մի վայրկեան, որոնց տաճ ամենայն մի պատառ հացը սակարկած է նրանց անսպայման այլասեւման հետ...

—Բայց...

—Սպասիր — աղաղակեց նա — ապա քօան, երեսուն, քա-

ուասուն տարի լետոյ երևակայիր այդ որբերի բանակը, երբ նրանք չափահաս են: Ո՞վ են նրանք: Չափահաս զգալով ինքզինքը, նա պիտի տեսնէ որ այդ հասակին է հասել շարունակ ի սէր Աստուծոյ, ողորմութեամբ, իբրև թշառ, իբրև որբ, յանուն ոչ մարդկութեան, այլ յանուն զանազան դաւանութեանց, զանազան շահերի, միշտ իբրև որբ՝ ուրիշի ձեռքին ապաւինելով... Երբ մտածում ես որ այդպիսի սերունդը պիտի անգոր լինի կենսական դժար մրցման ասպարիզում և թըշառ համարելուց պիտի դադարէ ու պիտի ատելի դառնայ և ատելի դառն հալածանքի ենթարկւի, երբ մտածում ես այդ բոլորը, ուղեղդ ուզում է պայթի...

—Ապա ասում ես նիւթ չըկա՞յ զրելու, ընդհատեցի ես:

—Նիւթ, դա՛ է նիւթ, ասաց ուժասպառ եղած Արդարեանը գրեթէ մարած ձայնով. — Լա՛ւ, դէ՛հ զրիւր, զրիւր ու արտայայտիր ինձ համար զգացմունքների այն նրբութիւնը, որ նշտարի պէս յօշոտում է այդ մանուկների սրտերը: Գէ զրիւր ու նկարագրիր ինձ, եթէ կարող ես, նրանց տեսած երազները, ամեն զիշերւան երազները, ուր ամեն օր, նրանց խաղաղ քնի ժամանակ, նրանց աչքերի առաջ թաւալում են արեան մէջ նրանց ծնողները: Ապա, զրիւր և նկարագրիր ինձ այդ վայրկեանները, երբ նա որբանոցում, զիշերւան խաղաղ ժամին, այդ սոսկալի երազի ժամին ճչում է ու ձեռքերը երկինք բարձրացնում գէպի հայրն ու մայրը և այդ վայրկեանին զարթնում զիշերահսկիչ Աբբայի կամ պատէրի ձայնից... Սոսկալի չէ՞ իրականութիւնը: Տանջանքներով լի երազն ատելի լաւ չէ՞ր: Նա զոնէ տեսնում էր հօրն ու մօրը. իսկ այժմ, այժմ, սրբ է, սրբ է, սրբ է, սրբ է, սրբ է, սրբ է...

Հեկեկանքներն ընդհատեցին Արդարեանի ձայնը և այդ նհարդային, այրող ու մաշող վշտով լի հեկեկանքների մէջ ես լսում էի հազարաւոր որբերի լացն ու շիւանը, որ հրդեհւած երկրից բարձրանում է գէպ երկինք...

Մխիթարելու ոյժ չըկար իմ մէջ, որովհետև արտասուքներն այրում էին աչքերս:

Երբ դուրս եկայ Արգարեանի տնից, փողոցում մեզմ, բարակ անձե էր տեղում. սակայն երկնքի մի մասն աւելի լուսաւոր էր և արեգակի ճառագայթները թեթև ամպերի միջոց կրկին ելք էին փնտռում: Լիւքսէմբուրգի սև բներով ծառերը աւելի տխրալի կերպարանք էին ստացել և ազատ թռչկատող ճնճողուկները կուչ էին եկել թփերի տակ: Չախ կողմը, մշուշի մէջ երևում էր արդարադատութեան և օրէնսդրութեան ահագին պալատը: Թող ամպերի միջից ճառագայթները ճանապարհ բացին և անձրևի կաթիլները ծիրանագոյն ներկելով լուսաւորեցին այդ մեծ, սևացած տան ճակատը, ուր կարգացի քանդակաւ մեծ մեծ տառերով. «Հաւասարութիւն, եղբայրութիւն, ազատութիւն»...

Սենեակիս պատուհանը դեռ բաց էր, դիմացի տան պատուհանից վանդակը դեռ կախաւ էր և թռչնակը մէջը քնած: Քայլերիս ձայնը զարթեցրեց թռչնակին. նա անմիջապէս այս ու այն կողմը նայեց, ցատկեց դէպի վանդակի մետաղեայ թելերը, գլխով դարնեց, կրկին յետ մղւեց, կրկին ցատկեց, կրկին յետ մղւեց, կանգ առաւ բարակ փայտի վրայ և սկսեց իր ընդհատող Հեկեկանքները.....

Ս. Հախումնան



ԻՆՉ ԵՐԳԵՄ...

Ի՜նչ երգեմ, երբ իմ երգը  
Յնդում է աննպատակ.  
Ջեղմունքն իմ գոռոզ սրտի՝  
Կաղմում լոկ մի պղպջակ:

Ի՜նչ երգեմ, երբ իմ խօսքը  
Դիպչում է լեռ-քարերին,  
Եւ մորմոք, իմ ախ ու վիշտ՝  
Անդգայ, բիրտ սրտերին...

Ի՜նչ երգեմ, երբ ամեն տեղ  
Տիրում է լիտութիւն,  
Եւ վայրի քրքիջներով՝  
Հեղնում քո երգ, քո աւիւն:

Ի՜նչ երգեմ, երբ աղէխարշ  
Հառաչով չեն վրդովում.  
Հարուստի, անսիրտ Հարստի  
Չոր դուժը չէ շարժում...

Ի՜նչ երգեմ, երբ սիրատենչ  
Պաղատանքն իմ Հէզ սրտին՝  
Փշրում է ու մնում  
Նազելու պաղ շրթունքին...

Սրինգ



# Բ Ե Կ Ո Ր Ն Ե Ր



## I

### Ո՞Ր Է ՀԱՅՐԻԿ

Անուան ստորոտում, հսկայ ժայռի տակ կուչ եկած գիւղը խաղաղելի, խոր քուն է մտել: Լուսինն սկսել է իր ամենօրեայ կայտառ խաղերը. մերթ ընկղմւում է արծաթանման քուլաների մէջ, մերթ՝ մէկ էլ տեսնես՝ կրկին հանում է զեղանի զէմքը և ուրախ ժպտում:

Լուռ է, լուռ. կարծես ամեն առարկայ, շնչաւոր, անշունչ՝ մեռել է, լռել: Միայն ամառայ անուշ զեփիւռն է, որ մեղմ սահում է լեռան լանջերով, իջնում ստորոտում բուսած ծառերի տերևների մէջ, կարկաչուն աւաի ափերի դալար խոտերի վրայ, շոյում է նրանց, առաջացնում մի մեղմ ոստափիւն և միախառնելով առւակի քաղցր խոխոջիւնի հետ, կազմում է բընութեան չքնաղ համերգը:

Բայց այդ ինչ մանկական խուլ հեկեկանք է, այդ ինչ խօսքեր են, որ լսելի են դառն, աղիոգորմ հեծկլտանքի մէջ...

— Ո՞ւր է հայրիկը...

Լուսինն էլի իր խաղն է խաղում. դարձեալ հանում է ամպի ետևից ժպտող երեսը:

Տեսնում ես այժմ ահա այն բազը, որի մօտովն անցնում է առուն. այնտեղ չես գտնիլ ոչ մի շինութիւն. անորոշ, տձև փլատակների կոյտեր են միայն:

Երկու կիսաքանդ պատերի միջի խարխուլ անկիւնում՝ փախաթի վրայ մարդիկ են նստած. մանուկը դրեք է դանդրահեր գլուխը մօր ծնկան վրայ, զուռնատ, դալկացած, խոր ընկած խոշոր աչերով զէմքը դարձրել դէպի սիրելի մայրը ու նայում,

նայում նրա թառամած, ծանր վշտերից, բիւր տանջանքներից ախուած զէմքին...

Ու յանկարծ գլուխը բարձրացնում է, նիհար ու բարակ ձեռքերին լինում, մի խոր, թափանցող հայեացք ձգելով մօր աչքերի մէջ՝ հարցնում լալաղին.

— Ո՞ւր է հայրիկը:

Մայրն ուժգին ցնցւում է, ողջ մարմնով դողում, զէմքն ալլալւում է, աչքերը կատաղի կրակ են ցայտում.

— Ո՞ւր է հայրիկը, — արտասանում է խիստ վրդովմունքից նւաղած ձայնով, — հայրիկը չըկայ. մեռած է, սպանւած. տաճիկն սպանեց. ինչու՞ չըղիտեմ. ոչ ոք չըղիտէ. ոչ մի մեղք չունէր թշւառականը. նա միայն հայ էր: Ո՞ւր է հայրիկը... այլ ևս չըկայ. բայց մենակ չըղնաց, շատ այլ հայրիկներ գընացին հետը...

Եւ այդ ասելով, նա կատաղաբար, որպէս մի զազան, որից խլում են նրա ձագուկը, մանկան սեղմում է դողացող կըրծքին ու խոր հառաչում:

Լուսինը թաղւում է սև ամպերի մէջ, տեսարանը ծածկւում թանձր մռայլով. և այդ մռայլի միջից լսւում է որբացած մանկան դառն հեծկլտանքը.

— Ո՞ւր է հայրիկը...

## II

### Կ Ա Ր Մ Ի Ր Զ Ա Տ Ի Կ

Պարնան ջերմագին արևն իջնում է, և ուրախացած, որ ձմրան լամառ մրցումից լետոյ լաղթելու փառքը ինքն է վատակնել, ժպտում է ուրախ, մանկական ժպիտով, փայլում-փայլում ու մի բաժին էլ ուրախութիւնից հանում է շրջակայ առարկաներին:

Ժպտում է, խնդում են ծիրանի հագած՝ հորիզօնին լինւած երկնքի մասը, ծերուկ լեռների զուռնատ-վարդագոյն գորշ գազաթները, հլիւթ ալից ծառերի բողբոջով պատած դալար ծայրերը, նաև սրճնագարդ փոքրիկ եկեղեցու ոսկեփայլ գմբէթը:

Մեծ ցնծութիւն է տիրում ամեն տեղ:

Մեծ ցնծութիւն է և եկեղեցու դաւթում խռնւած ժողովրդի մէջ. մուցած առօրեայ հոգսն ու վիշտը՝ այսօր ամենքն էլ ժպտուն դէմքերով, ուրախ սրտով՝ սպասում են Հանդիսաւոր աւետման ձայնին.

— Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Վաստակեալների և բռնաւորների մեծ խարեկամի յաղթանակի տօնն է այսօր:

Բայց ո՞վ են նրանք, որ մերկ ու բոբիկ, կանգնած պատի տակ, տաքացնում են դօս-մարմինները. մարդկանց նման չեն. զերեզմաններից Հանած դիակներ... Խնչու են եկել, ինչ ունենեն այստեղ. չէ՞ որ կարող են խանդարել այն մարդկանց ուրախ ժամերը:

— Քրիստոս յարեաւ ի մեռելոց.

Ամբոխը ցնցում է, տեղից շարժում և շտապ-շտապ դէպի եկեղեցու դարպասն է դիմում. տուն պիտի դառնայ, պիտի թաթախուի:

Յանկարծ... դիակների խումբը շարժում է, ծանր մօտենում գնացողներին.

— Քաղցած ենք!..

Խուլ հառաչում է արցունքից խեղդող ակամայ մուրացկան — թափառականը:

Մէկն է միայն լուռ. մի ծերունի է. չէ աղերսում, ոչինչ չէ խնդրում: Քաշած մի անկիւն, գլուխը խոնարհած, դէպի հեռուները, անցեալի քաղցը լիշողութիւններն է մտքով սլացել... և այդ անցեալից մի բեկոր՝ դեռ թարմ պատկերանում է նրա առջևը...

... Դիւղական փոքրիկ եկեղեցումը ժամը դուրս եկաւ. ժպտուն երեսով, բերկրալից դէմքով դիմում է ծերունին դէպի իրձիթը. ահա մտնում է, զլխարկը մօտակայ սիւնիցը կախում. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», աւետում է նա, բերած նշխարը տնեցոց բաժնում, ու ամենքն էլ շարում են թաթախման սեղանի շուրջը: Ամենքն էլ ուրախ են, ամենքն էլ խնդում. ո՞րքան երկաշ են այդ օրին սպասել. «Ջատիկ, թա-

թախում», ո՞րպիտի զգացմունք, ո՞րպիտի յոյսեր են ներշնչում դրանք խեղճ Հայի սրտին... Ծերունին առաւ դինով բաժակն ու սկսեց մաղթել... Ծիծաղ, ցնծութիւն դարձան լաց ու կոծ, սուղ-շիւան դարձաւ կարմիր Ջատիկը. գինու փոխարէն արիւն է հոսում, մարդիկ՝ մարդկանց մտով թաթախում:

— «Դրան մի սպանէք, այլ ինձ սպանէք». դառնում է ծերունին հրէշներից մէկին:

Բայց խէնջարն արդէն մխել է նրա անդրանիկ որդու մատաղ կուրծքը...

— «Ջատիկայ դառ չունիիր, ամօթ է, ծերուկ, այսպէս մեծ տօնին դառ չունենալը. այս էլ քեզ դառը, մորթած ու պատրաստ». և հրէշն արձակում է մի ահեղ քրքիշ...

... Սթափւեց. նայեց չորս կողմը. մութն եկել — կոխել էր: Ո՞րտեղ էր կանգնած և ինչու այսպէս մենակ, մեն-մենակ... Ու նրա կրծքից մի «վայ» դուրս թռաւ...


Եւ սիրուն եկեղեցու դաւիթն էր միայն, որ լսեց զժբախտ, որդեկորոյս հօր խուլ հառաչանքը, դառն կսկիծը...

Լ. Նազարեան



# ՀԻՆԳԵՐՈՐԳ ԳԻՆԱԳԻԺԸ

(Ազգագրական պատկեր)



Այսօր ոչ բայց մի օր կար՝ մեր 500 տնանոց զիւղում հինգ մարդ չէիր զըտնիլ խմիչք բերան առնող:

Աշխարհին յայտնի էր, որ աշտարակցոնց զլիսաւոր զիւղատնտեսութիւնը զինի-արաղ ծախելն էր. հաշւի տակ չըպիտի առնենք, ի հարկէ, ծառապտուղը, որ երկրորդական, երրորդական տեղն էր բռնում.

տան կառավարութիւն, տարեկան ապրուստ՝ բոլորը զինու-արաղի վրայ էր:

Իմ հայրենակիցներս բացի իրանց մեծամեծ այգիներից ըստացւած զինուց ու խաղողի կնձեռից քաշած կարասներով օղուց՝ իշի քարւաններով Պարսկաստանից Երևանայ հողը մտած չամչի բեռների երկու մասն էլ մեր զիւղն էին մտցնում և մի ամսից այն բոլորը օղի էին քաշում և տարածում Ալեքսանդրոպոլ, Ջալալօղլի և մինչև Թիֆլիս: Ուրիշ խօսքով ասած՝ Երևանի, Ղարսի, այսօրւան Գանձակի և Թիֆլիսի նահանգների մեծ բաժնի բոլոր զօրանոցների գործածելիք օղին ու զինին Աշտարակից էր գնում:

Ինչ գժւարութիւն կար. իրանք խելացի ու ճարպիկ ժողովուրդ էին, ձեռքներիցը զալիս էր, հիմիկւան պէս արցիզ չըկար, որ եղած շահը մինչև արմատը կարէր. երկիրն էլ էժանութիւն, լիութիւն, առատութիւն էր, քիչ օղտով էլ զոհ էին մնում:

Տարին տասներկու ամիս՝ մեր զիւղի տներից, զիւղամիջլի պարտէզներից և այգիներից ծուխն անպակաս էր լինում. որ կողմովն անց էիր կենում, օղու հոտ էր բուրում. խաշւած, նիւթը հանած չամիչը փողոցներումը սարի նման զիւղած էր, աոււից ջուր վերցրած ժամանակ՝ չէր կարող չըպատահել, որ կրժերի մէջ չամիչ չըլցւէր. մեր հաւերի ու ընտանի անասունների կերը առաւելապէս օղուց հանած չամիչ էր. ինչպէս էլ զիրացնում էր: Ուրեմն, եթէ ասեմ, որ զինին ու արաղն Աշտարակում ջրի պէս էին գործ դրւում, հաւատացէք: Բայց, խնդրեմ, այդպիսի հաստատուն հաւատ էլ ընծայէք զբոցիս սկզբումն ասածիս՝ թէ ողջ զիւղում հինգ մարդ չըկային խմիչք գործ ածող: Երդումով կարող եմ ասածներս հաստատել, որ մեր զիւղի մեծ ու փոքրից, էզ ու որձից ամենամեծագոյն մասը զինու համը Զատիկի ու Ջրօրհնէքի ճրագալուցի երեկոներն էին սուրբ հաղորդութեան շնորհիւ տեսնում, իսկ արաղի համը միայն հոտիցն էին զուշակում: Բայց և տոնպէս, ամեն մի աշտարակցու երեխայ իսկոյն քեզ կասէր, թէ այս զինին լաւ է, միւսը հասարակ է, այս արաղը թունդ է, միւսը թույլ է:

Խմիչքների այդ յատկութիւնը որոշելու համար՝ աշտարակցիք հիմիկւան պէս իրանց գործածական նոր բարբառով գրադուս կուլած սպիրտովեարին կարիք չունէին. բաւական էր միայն, որ աշտարակցին զինին քթին մօտեցնէր, իսկ օղին բոժակի մէջ ածէր ու բաժակը երկու ձեռքի ավերի մէջ սեղմած թափ տար, և ահա, նա քեզ հաստատապէս կըրոշէր, թէ այս զինին լաւ է, թէ վատ, այս փրփրակալած օղին թունդ է, միւսը թույլ: Հետեւաբար, իր ապրանքի զինը նա որոշակի նըշանակում էր և ըստ այնմ վաճառքի հանում:

Այսօր էլ աշտարակցին խմիչքի առւտուրը ձեռքից չի թողել, բայց ոչ առաջւան պէս. այժմ այդ առուտուրն ընդհանուրից անցել է մասնաւորներին: Այսօր աշտարակցին խելքի է եկել, նրա համար առաջին արդիւնահանութիւնը դարձել է երկրագործութիւնը. նախնեաց Աշտարակ զիւղին սեպհական ահագին տարածութեամբ անջրդի գեաինը, որ մի օր անասունները արօտատեղի էր և այլ ոչինչ, այսօր այն հողն աշտարակցոնց

կենսունակութեան անսպառելի աղբիւրն է. այսօր աշտարակ-  
ցին աջ ձեռքով դուրանի մաճն է բռնում, ձախով զինու-ա-  
բաղի բեռն է բարձում. իսկ սով չըզիտէ, որ աջը ձախից յա-  
ջողակ է:

Աշտարակցու նոր կենցաղը մենք հարեանցի վիշեցինք. մեր  
ասելիքը հին օրւան մասլահաթներն են: Մենք ասացինք, որ  
այնքան խմիչքի մէջ հինգ արբեցող չըկար Աշտարակ զիւղում.  
Իսկ հինգ թիւն ես առանց հաշի չեմ գործ գրել, որովհետև  
մանկուց չորս արբեցող մարդի անուն միայն զիտէի, ողջ զիւ-  
ղի մէջ՝ ամեն օր՝ աչքիս առաջին՝ այն չորս հոգին էին պատէ  
պատ կայելով քարշ գալիս, իսկ նրանք չորսն էլ վաղուց իրանց  
կեանք ու արևը մեզ են բաշխել, ուրեմն, թող տանք սև հո-  
ղի տակին հանգիստ պառկին:

Հինգերորդ զինեմալը (մեր լեզուով ասենք՝ զինազիփը) ժա-  
մանակին յայտնի վաճառական Աղամն էր, որ վերջն առաջ  
եկաւ և իր նախորդներին մոռացնել տւեց ու գլուխ անցկացաւ  
ներկայիս զինազիփների երկար շարքին:

Մեր զիւղումը վաճառական համարում է նա, ով իր սե-  
նեակներին մէկի փողոցի կողմի պատը ծակել է, վրան դուռ է  
կախել, մի քանի թօլի (կտոր) չիթ և ուրիշ հասարակ կտաւիք  
է գրել, զիւղում տնային գործածութեան պիտանի քիչ ու շատ  
աժանագին նպարեղէն է շարել և ինքը մէջտեղը կանգնած՝  
ապառիկ վճարքով առևտուր է անում. ուրիշ խօսքով ասենք՝  
մանրավաճառ է:

Ահա զիւղում գտնւած չորս հինգ խանութպաններից մէկն  
էլ վերևը վիշած Աղամն էր:

Ամենքիս յայտնի է, զիւղական այդ մանրավաճառները այն  
տղրուկներն են, որոնք զիրանում են իրանց համշիրակների նիւ-  
թական արիւնով, բայց մեր Աղամի համար նոյն մտքով կաս-  
կած տանելը մեր հոգու վրայ բեռներով մեղք բարձել է նշա-  
նակում:

Եթէ կար երիտասարդների մէջ մէկը, որ բոլոր աշտա-  
րակցոնց սիրած ու հաւանածն էր, դա Աղամն ինքն էր: Աղա-  
մը ոչ միայն խմիչք բերանը չէր առնում, որ ի հարկէ, իր ժա-

մանակին մեծ բան չէր, այլև նրա բերանից ընկեր հարեա-  
նի, իրաւորի ու օտարի, մեծի ու փոքրի, աղքատի ու հարս-  
տի դէմ մի թթու խօսք չէր դուրս եկած, աւելորդ շողակրա-  
տանքներ, գրելի և անգրելի հայհոյանքներ, որ տարաբախտա-  
բար յատկացրած է իմ սիրելի հայրենիքին՝ Աղամի բերնից  
լուած չըկար:

Այս մի բանն էլ ճշմարտութիւն է, որ «գալլի անունն է  
կոտրւած, աղէտներ կան, որոնք ոչխարը ողջ-ողջ են կուլ տա-  
լիս», զիւղեր ու քաղաքներ կան, որտեղ աշտարակցիք պիտի  
գնան հայհոյանքի աշակերտելու:

Այսպէս, թէ այնպէս, մեր հայհոյասէր զիւղացիների մէջ  
Աղամը մի նկատելի բացառութիւն էր:

Միակ խօսքը, որ սրտի վիրաւորւած ժամանակ գործ էր  
գնում Աղամը, այս էր. — Տունդ իւր ու բրինձ լցի:

Ահա այն խօսքերն, ընդհակառակն, որ ընդհանրապէս  
Աղամի լեզուի տակին էին պտոյտներ անում. — ջան, հաջան,  
ինչ ես հրամանք անում, ջանս ջանիդ մատնող ամբ և այլն  
և այլն:

Մի վատ պակասութիւն ունին առ հասարակ մանրավա-  
ճառները. իրանց փթած ապրանքը նրանք աշխատում են հա-  
զար սուտ ու մուտ երդումներով լաւի տեղ նաղղել, այն էլ՝  
կրկնակի ու եռակի գներով:

Գիտեմ՝ պիտի ասէք՝ այդ ցաւով այսօր մանրավաճառնե-  
րն էլ, խոշորավաճառներն էլ բոլորեքեան վարակւած են:

Համաձայն եմ, բայց Աղամն այդ բոլորի հակապակերն  
էր: Նա իր յաճախորդներին պարզապէս յայտնում էր ապրան-  
քի յատկութիւնը, իսկ զինը շատ չափաւոր էր նշանակում, ի  
հարկէ, նախապէս գնողից պայմանը հարցնելով: Եթէ վճարքը  
կանխիկ էր, օղուախ տոկոսը պակաս էր որոշում, եթէ ապա-  
ռիկ՝ աւելի:

Ապառիկ վճարքն էլ ուրիշների նման հում նիւթով, կամ  
տեղական բերքերով չէր լինելու, այլ զուտ դրամով:

— Մարդ ենք, ասում էր Աղամը, աչքածակ արարած ենք.  
վաղը, միւս օրը սատանէն սրտում կըբնակալի, կըգամ երկու

Աղամի պէս միայնակ առևտրականի և այգետիրոջ համար. այգումն՝ այգին էր խնամքով մշակուում, խանութում՝ առևտուրն էր յաջող ընթանում. ինչ կարծիք, ուրեմն, որ զիւղում գտրնւած բոլոր խանութներից Աղամի խանութի վարկը բարձր էր և եկամուտն աւելի: Աղամն ինքը, ինչպէս զիտենք, ճշմարտախօս էր, քաղցրաբարոյ էր, զէպի չքաւորները բարի և զիջանող էր և առ հասարակ մարդասէր, աղքատասէր, քահանայասէր, ժամասէր, աղօթասէր, ուսումնասէր և ընտանեւէր մարդ էր. իր պէս էլ նա կրթել էր իր օգնականին. իսկ այգքիչ պարծանքս չէր աշտարակեցիների համար:

Խօսքերս չափազանցութիւն չըհամարւելու առթիւ, մի ձանձրանաք, եթէ թւեմ Աղամի առօրեայ սովորութիւնների համառօտութիւնը:

Առաւօտը — լուսադէմին՝ երբ Աղամն երրորդի հետ (զանգահարութիւն) դարձնում էր, նրա առաջին գործն էր լինում հագնել, երեսն առւի ջրիցքումը լւանալ ու մտքումը զիտեցած աղօթքը մրմնջալով քայլերն ուղղել ժամ. տաւարին խնամելու նա կարիք չունէր. մի հորթը տակին կով էր պապում երեխէքանց կտուցը կաթնոտ անելու համար, այն էլ դեռ իր զարթնելուց առաջ՝ տակը մաքրած կերն առաջին էր. մի տեղ որ զգաստ ջահէլ լինի, տան զլուխն ընչու պիտի երկրորդական գործեր կատարի. տան մեծը ժամ կերթայ, տան պըստիկը տան կառավարութեանը կրնայի:

Եւ երբէք ժամից յետ չէր մնում Աղամը, ժամն օրհնելուց առաջ՝ եկեղեցումը ներկայ էր, ժամը դուրս գալուց յետոյ՝ մինչև «ողորմի Աստուածը» տուն չըբերէր, իրաւունք չըկար խանութի գուռ բաց անելու, թէկուզ յաճախորդներն իրար զլուխ պատուելիս լինէին: Իսկ առաջին գործը, որ պիտի սկսէին խանութում՝ այգ լինում էր նոյն օրւան աղքատներին բաժանելու սրոշեալ տուրքը:

Ամենաքիչը շաբաթական երեք ուտիս օր՝ Աղամի տանը տէրտէրը, երեցիոխն և զիւղական վարժապետը պիտի ճաշէին:

Ճաշել խօսքն եթէ բառացի նշանակութեամբ գործ զընենք, մէղանչած կըլինինք. եթէ, ինչպէս տուում է, ճաշըն-

դուենք կէս օր, ճաշել, ուրեմն, նշանակում է կէսօրւան կերակուր ուտելը: «Ճաշել» խօսքն այստեղ դուք պարզ ընդունեցէք ուտել, բայտ որում եթէ հնար լինէր, մեր երկրի վերաբերութեամբ՝ ես «ճաշել» բառի փոխարէն «առաւօտել» խօսքը բառարանի մէջ կըխցկէի: Քալով «նախաճաշիկ» նորաստեղծ կարկատած խօսքին, որ գործ է ածւում առաւօտները ճաշից առաջ ստամոքսին փոքր ինչ կեր տալու համար, այգ բառը միանգամայն անհամապատիւն է մեր երկրում ընդունւած սովորութեանը՝ մանաւանդ մեր պատմւածքի ժամանակաշրջանում:

Նախաճաշիկս ո՞րն է, փառաւորապէս ճաշ էր կերածներն, ինչ ճաշին էր վայել:

Քիւղացիք ուտում էին սովորաբար, շատ տեղ հիմա էլ ուտում են օրական հինգ անգամ, երկուսը փառաւորապէս տըռզելով, սկզբելով, երեքը թեթև կերպով: Կուշտ տըռզիլը լինում է առաւօտ և երեկոյ՝ ժամից յետոյ. այգ երկու որոշեալ ժամերին՝ ամեն մարդի տան, կարողութեան համեմատ՝ կաթսայ է կրակին դրւում, տաք կերակուր է պատրաստուում. միւս երեք միջանկեալ մասնաւոր ուտելու միջոցները մօտաւորապէս կարելի է ընդունել ցերեկւան տասն, տասներկու և չորս ժամերը, իսկ այգ բոլորն իրանց յատուկ կոչումներն են ունեցել ժողովրդի մէջ, և ցաւ է, որ կորցրել ենք մեր հայրենի սովորութիւններից ու խօսքերից շատերի հետ: Ես միայն յիշում եմ ազրաթ (հաւանական է ահուատ) բառը, բայց հաստատ չեմ չարող ասել, թէ ուտելու ո՞ր ժամանակամիջոցի համար է գործ ածւել:

Բ

Յիսնական թւականների արևելեան սլատերադմբ փողի անձրև գառաւ մեր աշխարհի՝ գլխաւորապէս Աշտարակի համար: Աշտարակցիք ոչ միայն իրանց այգիների բերքը, ոչ միայն իրանց քաշած օղիներն ու զինանիքը, այլ և ամբողջ Արարատեան դաշտի վրայ գտնւած այգիների խաղողի մղւածքը կրկնակի զին տալով՝ կրեցին պատերազմական դաշտը և հնգապատիկ ու տասնապատիկ զներ ստացան:

Փոխակցին ահուհետև աշտարակցի խմիչքածախ երիտա-  
 օտարդների կարկատած տրեխները վարսած փայլուն կօշիկների,  
 նրանց ոչխարենի բրդոտուած փափախները՝ ֆուրածկայի, նը-  
 րանց կապոյա կտաւի դօտիները՝ արծաթապատ քամարի, նրանց  
 Պարսկաստանից եկած էփանաղին խամ կտաւից կարւած ար-  
 խալուղները սև աթլասեայ ոսկեթել ժապաւէնով բոլորած ար-  
 խալուղների, նրանց կապոյտ դատաքի թւաւոր կապանները՝  
 ոսկեթելով բանւած չերքեզկանների:

Չատերի մէջ, մի դարմանաք, եթէ ասեմ, որ այդ յորձան-  
 քին ենթակեց նաև մեր Աղամը:

Եւ դրա պաաճաւը Աղամի կողակից Աննան էր, որ իր նա-  
 խամայր Եւային դալթակղեցնող ոստանի նման՝ մտաւ մարդի  
 կողքը ու սկսեց խախտացնել. ոչ զիշերն էր քուն տալիս պատ-  
 ւական երիտասարդին, ոչ ցերեկն էր հանդիստ տալիս, կերած  
 հացն էր հարամ անում, խմած ջուրն էր քթերիցը բերում:

Ի՞նչ կար, ի՞նչ պատահեց, ի՞նչ էր ուզում: Իրան Ան-  
 նային եթէ հարցնենք, շատ չնչին պատճառ: Ուզում էր, իբր  
 թէ, խմանալ թէ ընչի Մարկոս-Կիրակոսները, որ մինչև օրս  
 զինի-արաղ են ծախել, տարիներով առւտուրի գնացել, եկել  
 են, իրանց այդուց ստացւած զինին էլ նրանք են գնել, բայց  
 մինչև այս վերջին տարին երբէք այնպէս չեն դարդարել, հազ-  
 ւել, կապել. մինչև օրս իր մարդն է եղել զիւղի մաքուր հազն-  
 ւողներից մէկը, էն էլ պապենական սովորական հագուստը, բայց  
 հիմի «իւր գլխի տէրն» առաջւանն է մնացել, իսկ ուրիշները  
 ճրագի պէս պսպղում են, աղաներ են դառել զիւղումը ձգւած  
 մանգալիս: Մինչև օրս էդ արաղ ծախողներն իբանց մեծերի ու  
 զիւղի առաջաւորներին ներկայութեամբ չէին համարձակուած ձէն  
 հանել, կին տեսած ժամանակ ամօթուց երեսները շրջում անց  
 էին կենում, իսկ հիմա զիւղամիջի կանգնում են, հասարակա-  
 կան զործերի մէջ խառնուում են, մեծերին մարդատնդ չեն դը-  
 նում ու սրա-նրա հարս ու աղջիկների վրայ քիթ են բարձրա-  
 ցնում, ծաղրում:

— Հօ քեզ չեն նեղացոյել, թափահարւած դոյնը տեց Աղամը:

— Հողս իրանց գլխին, միամանցրեց Աննան, որ թագա-

ւորի պէս մարդիս տնեցու վրայ համարձակեն խէթ մտիկ տալ-  
 պիտի ասած, որ ուրիշների վրայ էլ սառն աչք չեն քցել,  
 բայց որ վաղուցւան տղէքը չեն:

— Տաւէլներ են, թող հազւին ու դարձանան, մեր ինչ  
 ցան է, մեր քսակին հօ չեն վնաս տալիս, ընչի ես դատարկ  
 բանի համար սիրտդ սղտորում, ընչիդ է պէտք:

— Չէնց էնպէս ուզում եմ խմանալ, ամեն անգամի կարծ  
 պատասխանում էր Աննան:

— Կին-արմատը շատ բանի ետևից ընկնող (հետաքրքիր)  
 չըսյիտի լինի, հողի ջան. եթէ սիրտդ ուզում է, որ ես էլ նը-  
 րանց պէս հազնւիմ, աչքիս վրայ, տղէքանցը փող կրտամ ինձ  
 համար մի ձեռք քո հաւանած շոր կրբերեն. գիտելով՝ որ կնոջ  
 մէջ ոչ թէ պարզ հետաքրքրութիւնը, այլ նախամայր Եւայի  
 ժառանգութիւն մնացած կանացի նախանձն է բորբոքել, վա-  
 ձեց Աննային իրտն բերանով խոստովանացնել:

Աղամը հասաւ իր նպատակին.

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, ճշաց ձեռքերը թափ տա-  
 լով Աննան, հասաւ դու աչքեր չունիս, քո մէջ թասիւր (ինք-  
 նասիրութիւն) չըկա՛յ, դու չես տեսնում, թէ քո երեկւայ դը-  
 ուանը քաշ եկողների, կտոր հացի կարօտների կնանիքն ինչ-  
 պէս են զարդարում: Անցկացած կիրակին Հացթուխենց Չու-  
 շանի հարս մկնաչք Մաթանը մի դումաշ (կերպասեայ) մին-  
 թանայ էր հազել ու Մողնի ուխտ եկել, որ շաֆաղը (փայլ)  
 մաիկ տուղի երեսին հուրհրատում էր. հոգս իր ֆսֆսան զըլ-  
 խին, հէնց խմանաս՝ զիւղիս առաջին մարդի կնիկը լինէր: Ես  
 էլ լիմարացայ, իսելքս կորցրի, մօտեցայ շնորհաւորեցի ու հար-  
 ցրի, թէ ո՞րտեղից է:

— Ո՞րտեղից պիտի լինի, աչքերը վրէս թառ տեց անա-  
 մօթը, ողջ կենայ գլխիս տէրը, հող է բռնում, ոսկի է դառ-  
 նում, ուրիշների մարդկանց պէս հօ ծունկը ծալած անշնորհ-  
 քութիւնով օրական մի քանի սև փողի յուսով չի նստում. շաք-  
 թի էս գլխին Գիւմրի է գնում, շաքթի էն գլխին՝ տղած ջի-  
 ընրով ոսկի է տուն բերում, ինքն էլ է հազնւում, իր ընտա-  
 նիքին էլ է խասերի մէջ կոլոլում:

—Յետոյ, բանի էութիւնը հասկացաւ ու մատը բերանն առաւ կծեց Աղամբ:

—Յետոյ մին բերանս եկաւ՝ ոտքիս մինն առաջ դնեմ, մինը յետ՝ ու ասեմ, թէ ինչ ես ուռչում ու փքում. քո մարդը մի ասարի առաջ մեր այդումը օրական մի սհարդուան (30 կոպէկ) խոշկամուզ (իր հացով) էնքան բահի աւեց, փոր արեց որ ճռները սև ջուր իջաւ. բայց ասացի՝ նալաթ (անէծք) գաջ չար սատանին, թող չար սահաթը խափանի: Ասեմք ինքն է չքտեսը, ուրախացել է մարդի բերած մի քանի շահով. ողջ զիւրը հօ զիտի, որ իրա մարդն ո՛վ է: Ինչ է՝ թէ մի քանի անգամ Գիւմրի է գնացել եկել, հաղարների ու անքուն ցեցելը տէր է դառել:

—Ընչի չէ, Աստուած իրան տան, սխալեց և հանգամանքը բացատրեց Աղամբ. էսօր էն ժամանակն է, որ ջուր արարը քարը ծակող թունգ սպիրթի գնով ծախում է, քացախից աւելի թթու գինին մէկին տասը գին է գնում. զօրքի մի ծէրը Գիւմրումն է, մինը Ղարսայ դռանը՝ ետեւից էլ խորքերիցը մըրջիւնի քարտնի պէս՝ գալիս են ու գալիս, զօրքի հողին գինի-արաղն է, պիտի խմեն, որ կատարները տաքանայ, աչքներն արիւնակալի և, Մաղանդարանի գոմշի պէս՝ պոզերը ցըցեն, թշնամու գէմ գնան. թշնամու փոր ու թափանը ցրիւ ասն: Գու գինի-արաղ ունիս, սար Գիւմրի ու տկերիդ քաշով ոսկի բարձիր ձիւղ, յետ արի: Գնացող եկողներից մինն էլ քո դոված Մաթանի մարդ Սիմոնն է. ես մեր գինանիքը բոլոր նըրան եմ ծախել, իրաւ է բէհ (առհաւատչեայ) չեմ առել, բայց հետը գինը կտրել, վերջացրել եմ. էս մի քանի օրս Գիւմրուց յետ կրգայ, կըչափի և կըտանի. և ի հարկէ, մէջը բաւական օգուտ կունենայ:

—Իսկ տեսած օգտովն էլ իր տնեցու համար նոր-նոր շորեր կըբերի, իրան գինի ծախողի վրայ մտքումը կըծիծաղի, ուրիշների մօտ էլ կըպարծենայ, թէ անշնորհք մարդի աչքերը հող ու մօխիւր փչեցի, նրա փողով իմ կնկանը խախում շինեցի, իսկ նրա կնիկը թող գոմշի պէս իր կաշումը կենայ:

—Սիրտդ մի պակասեցնիլ, հողի ջոն. յուսադրեց Աննա-

վին Աղամբ. օրն էդուց՝ կերթամ քաղաք, հաւանածդ շորացուն կառնեմ. ինչ ես նեղանում, իմ փողի բանալին դու ես, Աստու տաճից էնքան ունինք, որ մեր աչքը մեր դռանը կըլինի, մեր փորը կուշտ կըլինի, մեր ընկեր հարեանների կարգիցը դուրս չենք գալ. մի վախիլ, ինչ սիրտդ ցանկանում է՝ աւզիր, հօ զիտես, որ կեանքս քեզանից չեմ խնայիլ:

—Այուհեաւ ոչ քո փողերը կըպահեմ, ոչ քո Երեւանից առած շորերը թեւս կըքաշեմ. ձեռքը կտրականապէս օղումը թափ տեց Աննան և աւելացրեց. և ոչ իմ լեզուն քո առաջին կըբացւի, եթէ դու Հացթուխենց Սիմոնին մի կաթիլ խմիչք կըծախես: Եթէ կամենում ես, որ մեր մարդ ու կնկութեան մէջ սէր ու խաղաղութիւն մնայ, օրն էդուց՝ ձիւնք վարձիր, մեր այդու գինին բարձիր, տար Գիւմրի, քո ձեռքովդ ծախիր: Իմ կամքն է, որ դու խանութը թողնես Գէորդի յուսով ու ինքդ գինի-արաղ ծախող դառնաս:

Ձառ խնդրեց, շատ համոզեց Աղամբ կնոջը, որ Գիւմրու առևտուրից իրան ազատի, ասաց, որ ինքը մի անգամ խօսք է տւել Սիմոնին, հետը ձեռք է բռնել, ուրեմն և չի կարող ուխտադրուծ և պայմանազանց լինել, թէկուզ հաստատապէս համոզւած լինի, որ մէջը տասնապատիկ օգուտ կայ, որովհետև ներսից խղճմտանքը, արտաքուստ աշխարհն իրան կըգատապարտեն. չեղաւ. Աննան լսել անգամ չըկամեցաւ:

—Ձնտ լաւ, մեղքը քո վիզը. յոգուց քաշեց Աղամբ և ըսկսեց թւել հեաւանքից յառաջանալիք բարոյական վնասները, հասկացրեց, որ այժմ Գիւմրին առաջւանը չի, թէ վերանում են այնտեղից օր ըստ օրէ նախկին սովորութիւնները, տիրում է անբարոյականութիւնն ու շռայլութիւնը և թէ իրանց գիւղի երիտասարդներն էլ աչքների առաջի վատ օրինակը տեսնելով, իրանք էլ վարակւում են ու ինքն էլ կարող է նոյն պակասութիւններին ենթարկւել և գիւղում ձեռք բերած համարմունքը կորցնել, որովհետև ինքն ի ծնէ քաղցրութարոյ, խաթրաշահ (կտմակատար) բնաւորութեան տէր լինելով, չի կարող մերժել ընկերների խնդիրը, չի կարող դուրս գալ նրանց շըրջանից, կըսկսի փչանալ, ինչպէս բոլոր Ալէքսանդրոպօլ գնացող

եկող երիտասարդներն են չափը կորցնում: Իսկ այդ ժամանակը, աւելացրեց նա, ես ձեռներս լւանում եմ, եթէ դու երկու ձեռքով զլուխդ ձեծես և վայ տաս, որ ինձպէս ընկերից զրկել ես:

— Ոնց որ ոսկին կրակի մէջ չի էրել և փչառալ, իմ զըլխի տէրն էլ պատմածդ փորձանքներից ազատ դուրս կըգայ. լալով փաթաթեց Ազամի վիզը Աննան և համբոյրներ տալով մարդու աչք ու եւեսին, փափուկ թշէրը փոխադարձաբար մօտեցրեց նրա շրթունքին ու խնդրեց, աղաչեց, որ Ազամն իր ցանկութիւնը կատարի:

Էդպիսի թունդ խարոյիլի մէջ ամուր պողովատիկը կապարի նման կըհալէր, ջուր կըկտրէր, թող թէ մէջը մարդկային սիրտ ու արիւն ունեցող երիտասարդ Ազամը:

— Ազամ պապին զրախտից քցող Եւան ես, Աննա ջան, բացականչեց և աւելի պինդ սեղմեց Եւայի դասերն իր կրծքին:

Միւս առաւօտ՝ ոչ ոք էր ականջին չէր հաւատում, երբ լսում էր, թէ Ազամը վարձու ձիանք է պտուտում Հացթուխենց Սիմոնին ծախտձ իր զինին Ալէքսանդրապօլ տանելու համար, իսկ երրորդ օրը բոլորի բերանը բաց մնաց ու աչքերը մի թղաչափ յետ ձոթուեցին, երբ տեսան Մողնու թառ կոչւած սարալանջի վրայով տիկերը բեռնած բարձրանում էին 15-ի չափ ձիանք դէպի Ալէքսանդրապօլ, իսկ այդ կարաւանի քամակից ձին հեծած հետևում էր Ազամը:

## Գ

Աշտարակից Ալէքսանդրապօլ բեռնաւորը ճանապարհին մի կամ երկու գիշեր է անցկացնում: Ազամի թերթեւունքն այդ ամբողջ տարածութեան վրայ չի հանգստացնել. նրա ուշադրութիւնը ոչ հսկայական Արաղածը, ոչ Փամբակի լեռնաշղթան, ոչ Աբարանու լայնածաւալ դաշտն են գրաւել. նրա միտքը ոչ առաջին գնացող զինու բեռներն են իրանց քաշել և ոչ իր ասրանքից ստանալիք առատ վճարքի վրայ է կեդրոնացել: Ազամի խելապատակում միայն Հացթուխենց Սիմոնն էր ոտքով-զըլխով մեխի պէս ցցւել ու մնացել:

Ի՞նչ պատասխան պիտի տայ Սիմոնին. նրա աչքին ինչպէս պիտի երևայ, նրա առաջին ընչով պիտի արդարանայ. մարդը սպասում է մի քանի օրից իր առած զինիներից իրան մնալիք աւելորդ ոսկիներին ու, ահա այսօր պետք է հիասթափելի, երբ որ յուր քամուն տրւած տեսնի:

Այ քեզ ցածութիւն կեանքի մէջ մինչև օրս աղնիւ անուն վայելած Ազամի համար:

— Ըհը՛, լաւ միտքս ընկաւ՝ ձիու վրայ նստած տեղից ցտկեց ու քիչ էր մնում վայր ընկնէր Ազամը, երբ որ քաղաքը ոտք էին դնում. ողջ ճանապարհն ընչի էի մոլորւել, քունս ընչի էի կտրել, ինձ ընչի էի սպանում. նրա համար է ասած՝ հայի վերջին խելքն իմը լինի. բեռները ցած կըբերեմ ու ձեռաց կըվազեմ Սիմոնի մօտ, կասեմ Գիւմրին տեսնելու եմ եկել և իրան մէկ էլ նեղութիւն չըտալու համար նրա ապրանքը բարձել եմ, հետս բերել. թող ծախի, իմ փողերը տայ, մնացած օգուտը մօր կաթի պէս իրան հալալ:

Ազամը չըկարաց իր նոր զիւտովը մխիթարել. քաղաք ոտ կոխեց թէ չէ, իր չորս կողմը բռնեցին ու ամեն կողմից թւն ու փէշերքը քաշքշում են. կարծես հոտով էին իմացել Ալէքսանդրապօլի գինեվաճառները. իրար հակառակ այնպիսի զին են առաջարկում, որ Ազամը շարում է. կեանքի մէջ չըլսած արժէք:

Սկզբումը նա կարծեց, թէ եկողները դատարկաշրջիկ, վայրահաչ մարդիկ են, որոնք իր պէս մի անփորձ զիւղացու ծաղրատեղ են շինել, ուղեցաւ աղաւելի, կամեցաւ հաւատացնել նրանց, թէ բեռները իրանը չեն, ինքը միայն դատարկ ճանապարհորդ է, բայց գինեվաճառները լսել անգամ չըկտմեցան. ձիատէր վարձկանները միաբերան մատնացոյց էին արել իրան՝ ինչպէս ապրանքատէր:

— Հա՛, հա՛, սուտ չէք ասում, աղա եղբայրներ, զինին իմն է, բայց արդէն ծախւած վերջացրած, փողն էլ մսխւած է. զինիները Հացթուխենց Սիմոնինն է, որին պիտի տանեմ և յանձնեմ. պատասխանում էր Ազամն իրան ճանճրացնողներին:

— Սիմոնը հիմի քաղաքումս չէ, ասացին նրան ալէք-

սանդրապոլցիք. գնացել է Ղարսայ մօտը՝ դօրքի մէջ. մի քանի օր կուշանայ:

— Էդ գինիները նա ինձ է խոստացել, բեր մեր խանութումն իջեցրու, մինչև գալը. ինքդ էլ մեզ մօտ կաց ու պատիւ անս. թէ կուգես վարձկաններին հասնելու փողը կրվճարեմ, թող վերագառնան, առաջարկում է մինը:

— Սուտ է ասում, ինձ է խոստացել, ընդհատում է ընկերին երկրորդը. դու բեր մեզ մօտ իջեցրու, մինչև Սիմոնի վերագառնալը քեզ օրական մի մանէթ ընծայ կրտամ:

— Բերնին աշէ, խամ մարդ է գտել. լետ հրեց խօսողին երրորդը. Սիմոնի մուշտարին ես եմ, թէ դու, նա էդ գինիները ինձ ծախել, փողն էլ սաացել է. անձանօթ ախպարս թող մեզ մօտ իջեցնէ. ահա էս տառը մանէթանոցն իր ցան առնի. և մարդը թղթաղբամը բռնութեամբ ուզում էր ճխտել Աղամի բուռը:

— Փարայով կրվախացնես. ահա էս երկու հատ տասնոց մեր նոր ախպօրը ոտնամուտ կրտամ. դուք չըղիտէք, որ Սիմոնըն ինձ է խոստացել, պնդում էր մի երրորդը:

— Ի՛նձ է խոստացել... ինձ է խոստացել... ինձ է խոստացել... Կղմուկ են բարձրացրել տասնի չափ ակէքսանդրապոլցի գինեվաճառներ և միմեանց հակառակ Աղամի նւէրն աւելացնում են:

— Հեռացէք, քաշեցէք, այ մարդիկ. ճարահատեալ ձայն հանեց Աղամը, ես հանաք էի անում, գինանիքն իմն են ու չեմ ծախում. անաճակեր, դեռ համբերեցէք, տեղ հասցնեմ, միմին թաս համը տեսէք, կարելի է սոխաջուր է, կարելի է քացխած թթւած դուրս թափելու բան է:

— Պարզ ջուր էլ լինի Աշտարակից բերած՝ մեզ ընդունելի է. խօսքը մին արած պնդեցին գինեվաճառները. արի, եղբայր, սատանի դուխը տրօրի, էս փողոցի մէջ ապրանքդ ինչ գնով կամքդ կրաայ, մեզ ծախիր, փողդ նաղղ ստացիր. մենք քեզ հաւատում ենք, չափել չի հարկաւոր, թող ամեն մէկս մի բեռը տանենք, մեր գինեաանը դատարկենք:

Չիտթւել, մոլորւել էր Աղամը, զին չըղիտէր, որ զին ասէր.

գոնէ մի աշտարակցի գինեճախ պատահէր, որ նրանից հարցնէր օրւան գնահատութեան չափը:

Աղամի բախտից՝ մէկի փոխանակ երկու համագիւղացիք իրանց ապրանքը վաճառել, վերագառնում էին և Աղամի ուղած տեղեկութիւնը ճշտութեամբ տւին. յայանեցին նոյնպէս, թէ, արդարև, Հացթուխնց Սիմոնը Գիւմրում չէ և մի շաքաթի չափ կուշանայ Ղարսի մօտերքը:

Մտածեց, մտածեց Աղամն և զիւղացիների հեռանալուց չետոյ՝ սոսայ ակէքսանդրապոլցի գինեվաճառներին.

— Համաձայն եմ, ամենքիդ մի բեռը կըհասնի՝ աարէք, քայց մեր տղէքանց ասած գնովը ես չեմ կարող տայ, իմ միսս սըրսըրում է երբ...

— Գու միայն բեռների չափն ու զինու արժանաւորութիւնը մեզ անկեղծօրէն յայտնիր, դնի մատին՝ չափին մի մանէթ էլ աւելի առ:

— Գինիս շատ դիխաւորն է, չափն էլ հաւասարապէս բեռը մի կարաս է (ներկայիս 16 վեգրօ), քայց ես դնի մասին ուրիշ բան եմ ասում...

— Ահա, դարձեալ երկու մանէթ աւելի. ամեն կողմից փողերը մօտեցնում են գնողները:

— Ախար, հէրօրհնածներ, խօսքս լսեցէք, ասածս հասկացէք, ձեր տուած գինն ինձ համար...

— Հիրիք է, հերիք է, թէ կուգես սլօլիմպերիալով փողը ստացիր, ոսկու արժէքը էս լոպէիս եօթ մանէթ է, քայց քեզ վեց ու կիսով կըհաշուենք. ձէնկոխ արին ամեն կողմից գինեվաճառները և ոսկիքը բուռը լցրին ու առանց Աղամից իրատունք առնելու՝ վարձկանների ձիանց սանձերը բռնեցին և ցրուեցին ասելով.

— Մինչև վերագառնալդ դու մեր աղիդ հիւրն ես, շատ կընեղանանք, եթէ դու սուանց մեզ մի կտոր հաց բերանդ ես դրել:

— Ախար, եղբայրներ, դուք ինձ չըհասկացաք, սս հօ չեմ ասում, թէ զինը քիչ...

— Գնի մասին էլ ձայն մի հանիլ, լսել չենք ուզում, ար-

ւել, փողն էլ ստացել ես, ասա տարէք, խէր (օղուտ) տեսէք-  
ականջները փակեցին զիւմբեցիք:

— Էս մարդիկը խելքները հացի հետ են կերել. ուտերը վեր  
քաշելով հեռուից հետևում էր գնացողներին Աղամբ. չբռնողին,  
թէ ասեմ՝ ձեր տուած կէս գնովն էլ բաւական եմ, ծիրանի ջրի  
պէս՝ ոսկին ջերբերս լցրին. ինձ ի՛նչ, աչքը լոյս Հացթուխենց  
Սիմոնի, ինձ հասնելիքը կրվերցնեմ, մնացածն իրանն է. թէ  
խղճմտանքը չի տանջիլ, թող գնայ մարտի:

Գ

Գինեվաճառներն իրանց խօսքին հաստատա էին, Աղամբին  
իրար ձեռից խլում են, հրաւէրք հրաւէրքի վրայ են տալիս, խա-  
նութից խանութ են քարշ տալիս: Պատերազմի սկսելու օրից Աշ-  
տարակից էսպէս անարատ գինի Սլէքսանդրապօլ չէր մտել, բե-  
րածների կէսը ջուր էր լինում. այսօր ձեռքներն է ընկել մի ար-  
դար մարդ, որ իրանց խանութի կոտրուած անունը բարձրացրել է,  
գինւորական մեծամեծների առաջ իրանց երեսը պարզ էր արել.  
մարդիկը փող չեն խնայում, մէկին հինգ են աալիս և անխառն և  
անարատ խմիչք են սլահանջում: Գինեվաճառները շատ ուրախ  
կըլինէին յաճախորդներին դոհացնել, բայց սրտեղից, ինձ տուր՝ քեզ  
տամ. կար ու չէին աալիս. աշխարհքը փչացել է, զիւղացիք էլ  
սատանացել են, խարդախութիւնն իրանցից — քաղաքացի գինե-  
վաճառներից դաս են առել ու իրանց վրայ ծախում: Հիմի մի  
մաքուր մարդ է ընկել ձեռքները, հողիները չեն խնայում. «Ա-  
ղամ ախպարն» ամենքի սեղանի զլխին բազմացրած անուշա-  
հոտ ծաղկի փունջն է:

Բայց «Աղամ ախպարը» զարմանալի մարդ է եղած, գինի  
բոլորովին բերանը չի առնում, իսկ վնջ էն ուտելուն էլ, որ նա  
է ուտում. երբէք չի նմանում իր համշիրակ գինեծախներին,  
որոնք միշտ իր հետ անպակաս սեղանակից էին լինում. միշտ  
լուռ էր, միշտ տխուր էր, միշտ աչքը դուրսն էր:

Երևի սրտումը մի ցաւ ունէր, թէ չէ իր զիւղացիների  
ասութեամբ՝ Աղամը գինի գործ չէր ածում, բայց քաղցր և ու-  
րախ ընկերութիւններից փախչող չէր:

Լաւ էին նկատել սեղանակիցները, Աղամի սրտի ցաւը  
սաստկանում էր, նա միանգամայն դունատում, պատի ծեփ էր  
դառնում, երբ զիւղածով Հացթուխենց Սիմոնի անունը լիշում էր:  
Բայց Հացթուխենց Սիմոնն ուշանում էր, իսկ Աղամը նրան էր ըս-  
պասում. նա մտքումը դրել էր Սիմոնի գալուն պէս՝ ստացած ոսկի-  
ները նրա առաջին համարել, մէջ տեղից իրան հասնելիքը վեր-  
ցնել, մնացածը տէրը տալ:

Հեշտ է ասելը, բաց աչքով զրպանի փողն օտարին տալ,  
փող է, հողի հօ չէ. հողին քո ձեռին չէ, որ սնդուկի մէջ պինդ  
փակես ու բանալին ճոցդ դնես. հողին Ատածու տուած աւանդն  
է, մի օր էլ յեա կառնի, կրտանի, իսկ փողի իրաւունքը քո  
ձեռին է. բայց անտէրը հողուց, մարմնից, որդուց, ընտանուց  
քաղցր ու առաւել է. ձեռքդ է ընկել, մնց ձեռից հտնես: Այս  
երկու իրար հակառակ մտածմունքներն Աղամի հանդիստը խը-  
լել էին, զիշեր ու ցերեկ նրան մտատանջում էին, չըզիտէր՝  
ինչպէս անէր, որ «ոչ շամփուրն էրէր, ոչ խորովածը», թէ իր  
զրպանին չըվնասէր, թէ Սիմոնի սիրտը շահէր. մին վճռում էր՝  
փէշին թափ աալ, վերկենալ, գնալ իր գործին, մէկ էլ վախում էր.  
թէ վաղը միւս օրը Աշտարակի մէջ իր անունը կոտրուած կփի-  
բոնձի (փշրունք) պէս պատին կըղիպչի, փշուրփշուր կըլինի:

Այդ էր պատճառը, որ երկու շարաթ շարունակ վճռում  
էր միւս առաւօտը ճանապարհ ընկել և ոտը դարձեալ կախ էր  
թողում ու շարունակ գինեվաճառներից հիւրասիրում:

Եւ, ահա, հիւրասիրութեան սեղանի ծայրին իր կենաց բա-  
ժակի ժամանակ, նրան թուաց, թէ բոլոր բաժակների միջի հե-  
ղուկը թոյն դառաւ և իր կոկորդովը ներս ածւեց, երբ յան-  
կարծ դուռը բացւեց և սենեակի մէջ տեղը ցցւեց — իմացէք ո՛վ  
— Հացթուխենց Սիմոնը, և առանց բարև Ատածու բարևի՝ աչ-  
քերը աթեց Աղամի պիպիկների (բբերի) մէջ:

— Մ՛ օ՛ օ՛ օ՛... ամեն ճամպից սող առողջ... համեցէք...  
ձայն-ձայնի տւին ալէքսանդրոպօլցի երիտասարդները, իսկ ներ-  
կայ եղած աշտարակիցիք, որոնց յայտնի էր Աղամի սրարքը,  
իրար նայեցին ու երեսներին դառն ու արհամարական ժպիտ  
արտայայտեցին:

— Նստի, ջանձ, Սիմոն ախպար, ինչ աչքդ տնկեր՝ Ադամ ախպոր երեսը կ'աշես. քո զեղացին, քո հարեանդ է, չես ձանչեր, ինչ է, կարմնան որ զինի ծախող է դարձեր. մեր քաղաքն էսոր փողի ամբար է, ամենքը կրկրեն կրտանին, թող մի բուռն էլ սա քաշի, կրնախանձիս, կրվախիս, որ քեզ չի մնար:

— Լաւ, գլուխը թափահարեց Սիմոնը և յետ շրջեց. նա ուզեցաւ դուրս գնալ:

— Առաջ քեզի կրտստենձ, յետոյ ինձի. տեղիցը վեր թռաւ դռան առաջը կտրեց տան տէրը, եթէ դուն կուզես իմ հացը ոտնատակ տալ, իմ սեղանէ վրայ չընստել, իմ հացի ափը չըկտրել: Եւ նա պատենից դուրս քաշեց երկսայրի դաշոյնը:

— Դամէդ (դաշոյն) տեղը դիր, առաջ եկաւ մի աշտարակցի, երկու խօսք եմ ուզում ասել:

Լռութիւնը տիրեց:

Աշտարակցին մի առ մի պատմեց Ադամի խոստմնագանցութիւնը և աւելացրեց.

— Հիմի ես ձեր խղճմտանքին եմ թողնում էս էրկուսի դատաստանը:

Վճիռ կտրելու ժամանակ չեղաւ. Ադամը, որ մինչև այդ րոպէն արևի տակին սևացած, անշարժ արձան էր դարձել, շարժեց. նա ձեռքը ծոցը տարաւ, ոսկով լիքը քսակը հանեց ու անխօս սեղանի վրայ շարտեց:

— Ի՞նչ կուզես ասել, հարցրին սա ու նա:

Ադամը ձայն չըհանեց. նա ցուցամատը նախ քսակին և ապա, Սիմոնին մեկնեց: Հասկացեց. ուզում էր ասել, թէ Սիմոնի կամքն է՝ վերցնել քսակն իրան, կամ յետ տալ:

— Է՛, ըտէ տեսնք ջօմարդ տղամարդը. հիմի ամչեք, աշտարակցիք, զոչեցին այլէքսանդրապօլցիք. Ադամ ախպարը իր քսակի իրաւունքը Սիմոնին է տալիս. ինչքան կուղէ, թող վերցնի ու մեր քէֆը չըքանդէ. էնպէս չէ, Ադամ ախպար, հարց տուին նրան:

Ադամը դարձեալ չըխօսեց. նա միայն գլուխը դրականապէս շարժեց:

— Տիրոջը հալաւ. մեր Ադամը մինչև օրս մեր զիւղի ա-

մենից իստակ ու խօսքի տէր մարդն է եղել. ես չեմ քրքրում, թէ ընչի համար էս անդամ դրա խիարը ծուռը բուսաւ. դրա տղամարդութիւնից՝ իմ սիրտս նստեց. ես էլ նստում եմ ձեր սեղանի վրայ. ասաց Սիմոնն այս խօսքերն ու մօտեցաւ սեղանին:

Ընդհանուրի վճռով՝ Ադամն ու Սիմոնը զրկախառնեցին, իսկ իբրև տուգանք՝ առաջինին ստիպեցին կեանքի մէջ չարած բանն անել. չորս մեծ գաւաթ զինով լիքը ափսէի վրայ դրած՝ սեղանի կառավարիչը մօտեցրեց Ադամին և ստիպեց մինչև տակը քամել Սիմոնի կենացը: Երկար խնդիրքներից ու չեմ ուզումից յետոյ՝ Ադամը աչքերը հուպ աւեց, մի շնչի իրար ետևից փորն ածեց:

Առաջինն էր դժւար, Ադամի վզին դրին բոլորի կենաց բաժակները, որ ջրով էր խմել, նորից լիքը գաւաթով իրար ետևից դատարկել և վերադիրը՝ միւս օրն իր հաշուով պանդուկում այն բոլորին հիւրասիրել:

— Տասն էսքան մարդ էլ կանչեցէք. տեղիցը շուտ-շուտ վեր-վեր թռչելով՝ կրկնում էր և շաղփաղփում էր մեր քաղցրախօս Ադամը և փաթաթում սրա-նրա վզովը...

Ե

Երկու շաբաթ Ադամն Ալէքսանդրապօլից ջրի պէս գնում էր դէպի Աշտարակ և աւաղի պէս մնում: Գնալու վճիռը նա անում էր փոքր ինչ սթափւած րոպէին. հէնց էն է ուզում էր շտապել ձի վարձելու, մէկ էլ տուն էին լցում իր նոր բարեկամներն ու ամեն ինչ մոռացնում:

Այդ երկու շաբաթում Ադամի ընկեր աշաարակցիք երկու անգամ զիւղն էին վերադարձել և խմիչք էին ծախելու բերել:

Ալէքսանդրապօլի հրաւերքներն ու կոնձած խմիչքները աշտարակցի զինեծախների ոտքը չէին կապել. խմիչքը նրանց վրայ էլ էնքան չէր կարողանում աղղել. մարդս ամեն բանին վարժուում է և նրանք արդէն վարժել էին. քէֆի ժամանակ նրանք քէֆ էին քաշում, խմելուս խմում էին և չէին մերժում, բայց ոչ հարբում էին, ոչ գլուխները կորցնում. գնում էին

Ալէքսանդրապօլ, քէֆ անելով խմիչք ծախում, զալիս էին Աշտարակ քէֆ անելով խմիչք առնում:

Միայն թուլամորթ Ադամն էր, որ զեղիտութեան ցիւի մէջ շաղախեց ու էլ չըկարողացաւ ազատուիլ:

Երկու շաբաթից յետոյ Ադամի օղնախան Քէորզն եկաւ և իր տիրոջը Ալէքսանդրապօլի զինեմաճառները ձեռքից, համամարեա, բռնութեամբ խլեց ու տարաւ:

Ի պատիւ Ադամի նոր ծանօթների՝ պիտի ասենք, որ նրա քսակը շատ չըտուժեց: Ալէքսանդրապօլի զինեմաճառները հանում պահում էին Ադամի քսակը, երբ նա սեղան էր նստում, և իրան էին յանձնում, երբ միայն էր մնում. եթէ այդպէս չանէին՝ հատ փող չէր ունենալ զիւզը գնալու ժամանակ. բոլոր ունեցածը Ադամը բաժանած կըլինէր իր մշտական սեղանակից անփետուր աղաւնիկներին:

Տարաւ Քէորզն Ադամին Աշտարակ, բայց ինչ օգուտ. ոչ Աննայի զգւանքներն և արտատուքը, ոչ զիւզի առաջաւորների յորդորանքներն ու յանդիմանութիւնները ոչ ունեցան նեխած գիակին վերակենդանութիւն տալու: Ադամն իրան մատնել էր խմիչքի և շուպլութեան:

Բոլոր ժամանակը հարբած ընկած էր լինում:

Նրա ուշքը գլխին էր զալիս միայն այն ժամանակը, երբ Ալէքսանդրապօլից խմիչքավաճառները վերադառնում էին զիւզը և մի քանի օր իր հետ միասին անձնատուր էին լինում զեղիտութեան: Մնացած ժամանակ Ադամը դարձեալ հարբում էր:

Այդ օրանից է, ահա, որ Աշտարակը սարսափելով ընտելացաւ իր նախնական մաքուր կեանքի փչանալուն: Ալէքսանդրապօլից մեր զիւզը լցւած պեղին ոսկիքը ներս բերին իրանց հետ շուպլութեան, պատարկապորտութեան և զինեմութեան վարակիչ ժանտախտը:

Մեր տղայքն էլ չէին քաշուում ու ամաչում իրանց մեծերից. էն պատուական երիտասարդները, որոնց պակասութիւնը միայն պապերից ժառանգութիւն մնացած անմեղ կատակներն ու փոշետեսակ հայհոյաբանութիւններն էին, այն էլ ոչ թէ իրանցից մեծերի ներկայութեամբ, այլ իրանց երիտասարդական

շրջանում, ընկեր ընկերի հետ — այսօր նրանք հինը մոռացել էին և չըհասկացած լեզուով նոր-նոր հայհոյանքներ ու շուպլութիւններ փողոցներում շուպլել չէին քաշուում:

Յիսնական թւերի, կցեցէք զրա հետ և եօթանասնական թւերի արևելեան պատերազմները, մեր զիւզի և ամբողջ երկրի մաքրակենցաղութեան հիմքը խախտեց: Էլ չըկալ առաջւան մտերմութիւնը, մեծերի յարզանքը, ջահէլների զգւանքն ու սէրը. բոլորը, բոլորն Ալէքսանդրապօլից տուն մտած սակիներին դոհ գնացին:

Բայց, ախար, էն ոսկիներն էլ չըմնացին. հետզհետէ շուպլութիւնը բոլորը մի բովի մէջ հալեց և իր ծակ ու անյագ կողորդովը ներս ածեց. հաւասարապէս աղքատացան ու սնանկացան, տնտեսական ընդհանուր անկումը թագաւորեց ամեն անգ. պարտքը շատացաւ, մի երկու բախտի կուրութիւնից օգտուող տղուկների մանկթները ձագեր հանեցին, տոկոս տոկոսի վրայ բարդեց, ունեցած կարողութիւնները ձեռքներից գնաց և միայն անկարգ կեանքն ու արբեցութիւնը մնացին մէջտեղը աչքի ընկնող:

Այսօր իմ հայրենի զիւզումն էլ զինեմոյները մատնահաշիւ չեն տրուում. այսօր զինազիժ ու անխելք համարում է նա, ով որ խմիչքից փախչում է, և, եթէ խոստովանք կըպահէք, մեր զիւզի յարզուոր մայր ու քոյրերի մէջ էլ, ասում են, խրմիչք գործածել ամօթ չի համարում:

Անբախտը միայն մեր Ադամն եղաւ, որ չըկարողացաւ ժամանակին իրան պահել: Նա խմիչքից էնպէս տարւեց, որ Աշտարակի հանդուցեալ չորս զինազիժների թուում իբրև հինգերորդ աւելացաւ:

Իբրև յաւելւած ասենք, որ Աստուած խղճաց Ադամի դաւակներին. երկու տարի չանցած՝ հողէառ Գաբրիէլ քեռին նրա կատիկին չոքեց ու չըթողեց, որ նրա երեխէքանց հացը շուն ու զալի կերակուր լինի:

Քէորզը չուրացաւ իր բարերարի երախտիքը. աչքի լուսի պէս էր նայում Ադամի տուն ու տեղին, կալք ու կայանքին:

Ողջ գիւղն ուրախացաւ, երբ Ադամի մահւան տարեցքից մի շաբաթ յետոյ՝ մի համեստ հարսանիք տեսան:

Նորասպակները Գէորգն ու Աննան էին:

Քիչ կըսպառահի, որ մեր երիտասարդներն ամուսնանան իրանցից հասակաւոր ազգկանց հետ, ևս առաւել՝ ամուրի տըղայքն ալրի կանանց հետ. սոյդ քայլն անողները միշտ դատապարտուում են, բայց Գէորգին ամենքը ջաաագովեցին:

Պերմ Պոռնանց



# ԱՆՅԱԾ ԳՆԱՅԱԾ ՕՐԵՐԻՑ

(Գերմանական նայ ուսանողների կեանքից)

I

## ՆՈՐԸՆԾԱՅ-ՈՒՍԸՆՈՂ



Լթտունական թւականների սկզբներումն էր: Նախորդ տասնամեակում, Կովկասեան հայերի կրթական դեռաբողբոջ կեանքի հիանալի ողևորութեան շրջանում աշակերտած պատանիներն արդէն երիտասարդ էին դարձել. որևէ նիւթական միջոց ունեցողները բարձրագոյն կրթութեան էին դիմում: Փափագը մեծ էր, ձգտումը բուռն: Հայկական ուսումնարանների շրջանաւարաններից քչերին էր յաջողում արժանանալ պետական հաստատութեանց բարձրագոյն ուսմանը: Այնպէս որ արտասահմանեան համալսարաններին ու մասամբ էլ տղ մասնագիտական հաստատութեանցն էր մնում նրանց ծարաւն յաղեցնել: Նախկին տասնամեակում մի սերունդ աւարտել, արդէն վերագարձել էր, հիմա աննշան ընդմիջումից յետոյ հեռւեայն էր սկսում՝ համարեա միաժամանակ Գերմանիայի մի քանի քաղաքներում խմբակներով երևան դալով: Այս նորեկ ուսանողների նախապարաստութիւնը շատ տարբեր էր, շատ անհաւասար զիտական պաշտրով արտասահման էին եկել հայկական ու ռուսական միջնակարգ ուսումնարանների

շրջանաւարտներ, բարձր ու միջին դասարանների թերաւարտներ: Բայց ընդհանուր նպատակը՝ մի օր հայրենիքի քաղաքակրթութեան ծառայելու սիրելի դիտաւորութիւնը, նրանց միացրել էր, մի հողի, մի սիրտ դարձրել: Ի՞նչպիսի զուգուրանքով նրանք ատակցում, խօսում էին իրանց փայփայած նպատակին հասնելու միջոցների վրայ: Երանի էր նրանց: Ազգան յուսալի ու հմայիչ էր երևում:

Այդ ժամանակները Լայպցիգն էր համարում Կովկասեան հայ ուսանողների կենդրոնը: Նորեկները հարկադրւած էին դռնէ առաջին մի երկու կիսամեակը այտեղ ուսանիլ: Հրաչեան էլ իր ընկեր Ռսկանի հետ նոր էր եկել և այդ օրը համալսարան պիտի երթային ընդունելութեան (իմաստրիկուլացիայի) հանդիսին ներկայանալու: Երեկոյ էր: Համալսարանի խորհրդարանի ջահը վառել էին: Կանաչ երկար սեղանի շուրջը հետզհետէ կանգնած շարում էին նորեկ և այլ համալսարաններից փոխադրուող ուսանողները: Այտեղ էր, որ տեղի պիտի ունենար «գինւորագրութիւնը»․ մի նոր սերունդ Լայպցիգի համալսարանական համայնքին գինակից-անդամ պիտի ընդունուէր: Ժամը հասել էր: Միայն ուշացողներն էին որ հեւալով ներս էին շտապում: Նորեկներից մանաւանդ նորընծաներն անհամբերութեամբ սպասում էին ըէկտորին, սպասում էին այն ըզձալի վայրկենին, երբ իրանք էլ պիտի ձեռք տան համալսարանի պատկառելի ներկայացուցիչներին: Զշուկն աւելի ու աւելի բարձրանում էր. զալիս է, զալիս: Եւ ահա միջնադուռը բացում է ու ներս է մտնում մի դարթաղէմ ալեգարդ գիտնական: Լայնաթիկունք ծերունի էր նա, այս շրջանի համալսարանի նորընտիր տնօրէն Ռոբերշը, գլուխն արծաթափայլ ճոխ գանգուրներով, աչքերը կրկնակի ակնոցներով, որոնց աակից նա իր բերկրալից հայեացքն այս ու այն կողմն էր շրջում գիտութեան նորակոչ գինւորների վրայ թափանցիկ ակնարկ զցելու համար: Ուրախ էր պատկառելի ուսուցչապետը և շատ պատճառներ ունէր: Նա արդէն ութսուն ու հինգ զարուն էր տեսել, վաթսուն տարի դասախօսելով հազարաւոր երիտասարդների էր ողևորել, նրանց մարդկային էութեանը աստուածային ողի

ներշնչել և այսօր սիլ գիտէ քանիբոք անդամն էր, որ դարձեալ իրան էր վիճակել տնօրինութեան պատւաբեր պաշտօնը, նոր սերունդ ընդունելու փափաղելի գործը: Նա աստուածաբանական, մաթեմատիքական ու փիլիսոփայական դիտութիւնները մէջ գլուխ էր բարձրացրել և շատ վեր բարձրացել թէ իբրև ուսուցիչ և թէ իբրև հեղինակ: Եւ այսպէս խօսեց այսօր.

Ի՛մ պարոններ,

Այսօր ես մի անդամ էլ բախտ եմ ունենում ձեր բարի գալուստը ողջունելու, նորանոր յուսերով տոգորւած մի նոր սերունդի էլ առջև մեր սիրելի համալսարանի դուռը բանալու: Գուք որ կողմից ու որ երկրից էլ եկած լինէիք, հաւասարապէս սիրելի էք մե՛յ Ալմա Մատրին \*): Աստահ եմ, որ ձեզանից իւրաքանչիւրն իր կրօնքում ազնիւ ու եռանդուն սիրտ կրկնով պետք է ուսանի ու ապրի մեր համալսարանական հասարակութեան մէջ, մեր բալոյական ու գիտական իրէպնները պաշտելով: Ըրժանաւոր ուսանողը համալսարանի անունը բարձր կը պահի, որպէս զի չըզրկւի նրա պատւաւոր քաղաքացու կոչումից, նրա մէջ ծովացած գիտութեանց մասնակից լինելու անփոխարինելի իրաւունքից: Մեր գրօշակի խորհրդանիշն է իղէալը. ով կորով չունի նրա տակ կանգնելու, ուսանողական ու իրական կեանքում հաւատարիմ մնալու, լյս է չըմօտենայ նըրան: Ով անարժան է այս աստուածային հուրին, նրա սիրտը փոխանակ ջերմանալու՝ կայրւի, մոխիր կը դառնայ: Այդպիսին անմխտ թիթեռնիկի նման կրակի բոցից թւազուրկ՝ սողուն կը դառնայ մարդկային ազգի մէջ: Հեռու այդպիսիներն այս սուրբ տաճարի շէմքից, թող ազատ մնան հասարակութիւնները «բարձրագոյն» սողուններից, մատերիալի ստորաքարշ երկրպագուներից: Այժմ մօտեցէք սեղանիս և ինձ ձեռք տալով ուխտեցէք ձեր սրտում ընդմիշտ հաւատարիմ մնալ այս սուրբ երգմտնը:

Երբ պատկառելի ըէկտորը վերջացրեց իր ազգու կոչք, մի հմայիչ ժպիտ երևաց նրա խորշոմած երեսի վրայ, նրա աչքերը հրահրւեցին: Ծերունագարդ գիտնականը տեսնում էր այդ

\*) Յարգոյապատիւ մօրը՝ համալսարանին:

վայրկենին բոլոր ուսանողներին ելեկտրականացած, մի սիրտ, մի հոգի դառած՝ իր զիւթական խօսքի տպաւորութեան տակ: Որի մատրիկը \*) որ ձեռքն էր առնում ու անունը կարգում, այն ուսանողն էր մօտենում տնօրէնին, որ աջ ձեռքը մեկնում էր շնորհաւորելու, իսկ ձախով թերթն էր յանձնում:

Մեր Ոսկանը որ դեռ գերմաներէն չըզիտէր, այն հոգեդմալ խօսքերի իմաստն անհամբերութեամբ իր հայրենակցից հարցրեց, որ յափշտակած նայում էր այս տեսարանի շարունակութեանը: Հրաչեան սթափւեց և աւելի բանաստեղծելով՝ քան իսկութիւնը, թարգմանել կարողանալով մի կերպ իր ընկերի փափագը կառարեց: Քիչ չեաոյ կարգացեց մի երկար անուն: Հետաքրքիր ունկնդիրները տեսան թխորակ հրաչեալին, երկար մագերով, կրակոտ սև սև աչքերով, բայց չիմացան թէ նա ինչ ազգից է: Երբ հայ ուսանողը ձեռք տւեց յէկտորին, մի աննկարագրելի ցնցում զգաց իր մէջ: Ելեկտրական հոսանքը նրան էլ առաւ տարաւ, մի անմոռանալի հետք թողնելով նրասրտում, որ նախ բերկրանքի ու վերջն էլ տանջանքի դառնաղբիւր պիտի դառնար նրա համար: Մի քիչ էլ սպասեցին, վկայագրերի բաշխումը վերջացաւ և ծերունագարգ անօրէնը, Ալմա Մատէրի, այն գորովագութ ծնողի, մարմնացեալ ողին՝ գլուխ տւեց նորակոչներին և ուրախ սրտով հեռացաւ:

Ըզձալի իմմառիկուլացիան վերջացել էր. ուսանողները ուրախ դւարթ գուրս եկան ու խառնեցին գուրսն սպասող խմբի մէջ: Ուսանողական կեանքի շնորհաւոր, ասում էին հնէրը նորերին, բայց և իմացիր, որ այս օրւանից ճորտ ես և անպայման հնազանդութեան ենթակալ մեզ մեծերիս, երբ դարեջրի սեղանի շուրջն ենք նստած: Գերմանիայում որքան որ ծանր է աշակերտական կեանքը միջնակարգ ուսումնարաններում, նայնքան էլ ազատ է նա համալսարանում: Քէֆն ու խրախճանքն ուսանողական կեանքում մի ամբողջ օրէնսդրութիւն ունի, զարեջրային կարգ ու կանոններ՝ «Իրիկօմանգօ», որ աշակերտական կեանքում միայն դադտագողի է տեղ-տեղ

\*) Ընդունելութեան վկայագիրը:

գործադրում, երբ հնարաւորութիւն է լինում ուսանողների հետևողութեամբ քէֆեր սարքելու:

Արարատեան երկու աղւէսներն արդեօք ինչ էին մտածում: Հազիւ էին նրանք միմեանց շնորհաւորել, մին էլ տեսնես՝ մի ուժեղ թաթ բռնեց նրանց երկու թււր և խռպոտ ձայնով կոչեց. «Աեցցե՛ն Արարատեան նորընծայ սևտհեր աղւէսները»: Սիրելի Մար Չիմոնն էր նա, հայ ուսանողների «պապան»: — Հիմա օն անդր, — համայնեց նա, — դէպի «Հայաստանի անկիւնը». տղերքն սպասում են:

Երկու աղւէս ու մի Փուքսմայնօր \*) շտապում էին դէպի «Arche Noas» \*\*): Արաղւէս էր անւանւում այն գարեջրատունը, ուր գտնւում էր «Հայաստանի անկիւնը», հայ ուսանողական ընկերութեան ժողովարանը Քեօնիգսպլացի մօտերը: Այս բէստօրանի տէրը շատ անգամ էր փորձեր արել զանազան յայտարարութիւններով ու հնարներով յաճախորդներ գրաւելու, բայց խեղճին չէր յաջողւում ու չէր: Աերջապէս բանը մնացել էր գարեջրատանը մի արտաքոյ կարգի ինքնագիւտ կամ, ինչպէս ինքն էր ասում, «օրիդինէլ» անուն գտնելուն: Ու մի բախտաւոր օր մանկութիւնից ուսած ջրհեղեղի պատմութիւնը յանկարծ մեր հէռ-Մայերի միտքն ընկաւ: Հնարագէտը խորհուրդ հարցրեց տիկին Մայերից: — Գն, Մինա, Նոյեան տապան եմ գրել տալու մեր ցուցանակի վրայ, ինչ կասես:

— Փամո՞ղ, հիանալի է, սպապա, — հաւանութիւն տւեց նա իր ամուսնուն:

Ու մի գեղեցիկ օր, երբ ցուցանակի ներկը դեռ հազիւ էր չորացել, նրանց դռնովը մի քանի սևուկ ուսանողներ անցան և այդ խորհրդաւոր ցուցանակը տեսնելով խելագարների պէս ներս ընկան: Պարոն Մայերն այս ծարաւի թխորակներին անսնելով, տիկին Մայերի կողքին մեղմով բոթեց.

— Գն, Մինա, Մինա, ահա և քեզ առաջին ձկները: Ի՞նչ ասել կուզի, որ չափ չըկար նրանց ուրախութեանը, երբ տեղեկացան, որ այն խումբն իսկ և իսկ Նոյեան տապանի

\*) Աղւէսապետ:

\*\*) Նոյեան տապան:

նախնական սերունդից էր: Արդեօք ձկներին, թէ ձկնորսի ուրախութիւնն էր այդ վայրկենին աւելի մեծ. դժուար է ասել: Այդ ցնծալի օրը հայ ուսանողները շատ խմեցին թէ քիչ, այդ Աստուած դիտէ. միայն այսքան հաստատ է, որ Մար Զիմոնը, որ այդ կիսամեակին դեռ աղէտ էր, նորեկ էր, ծովային ծանր հիւանդութիւն սաացաւ. և երբ նա ոտքի ելնելով այս ու այն կողմն ընկնել սկսեց, Հմուտ նաւապետ Մայերը նրա թեւն ընկնելով դէպի մի նեղլիկ նրբանցք առաջնորդեց ու պատից կախուած մի կիսագնդաձև երկաթեայ անօթի մօտացրեց: Նաւապետը նրա վրայ խոշոր ու կարմիր առւերով արձանագրել էր տւել für Seekranken \*), որպէս զի անմիջապէս զլիսպտոյտ ունեցողներին աչքովն ընկնի: Ահա և փոթորկահարներին նաւամատոյցը, — ասաց բարի առաջնորդը, — մօտեցէք, իմ սիրելի պարսն, և փրկւած էք: Եւ ճիշտ վայրկենին էր որ նրանք կայարան հասան, ուր մեր յաղթանդամ Մարը ծովային հիւանդութիւնից, որ է նրա ստամոքսը չարչրկող դարեջրային չարածձի բացիլներից աղատելով՝ կր՛ին Հայաստանի անկիւնը վերադարձաւ: Միւսներն այդ ժամուն այնքան էին ողևորել, որ չէին նկատել մեր աղէտի բացակայութիւնը:

— Այդ սրտեղից, սրտեղից ես դու լոյս ընկնում, — վրայ տւին ընկերները, — այ դու խորամանկ աղէտ. էլի ինչ հոտ էիր առել, օրիորդ Զինայի հետ էիր սիլի-բիլի անում հա:

— Այո՛, շատ պատւական հոտ առայ: Չեղ էլ խորհուրդ կրապի ծովային հիւանդանոցն երթալ, որ խելքներդ զլուիներդ գայ:

Տղերքը այս նորահնար հիմնարկութիւնը տեսնելով՝ հիացմունքից գոչեցին. «Կեցցէ XIX դարի Նոյեան ապականը, որ մինչև անդամ բուժարան էլ ունի»:

Ահա այս «պատմական» դարեջրատունն էր, դէպի ուր հրպարտ հպարտ դիմում էին այս օրւայ աղէտները Մար Զիմոնի առաջնորդութեամբ, որ ով գիտէ ինչպիսի նախադիժ էր կողմում այս անփորձների զլիին խաղեր խաղալու: Նրանք ընդհանուր հիւրասենեակում հայրենակիցներին չըզանելով՝ դէպի

\*) Ծովային հիւանդութիւն ունեցողների համար:

«Անկիւնը» դիմեցին: Նրբանցքում մի փոքրիկ դուռ կար, որ Մար Զիմոնը բանալով նորընծաներին ներս հրաւիրեց: Մի նեղլիկ ու պարզ սենեակ էր այն, այնքան նեղ, որ սեղանի կողքովը դուրս դալու համար միւսները պէտք է տեղներից վեր ելնէին ու աթոռները առաջ հրէին: Բայց ինչո՞ւ այսքան փոքր էր «Հայաստանի անկիւնը»: Սկզբները տապանապետ պարոն Մայերը մի լայնարձակ սենեակ էր տւել հայ ուսանողներին կամ, ինչպէս ինքն էր ասում, Նոյեան ձկներին, բայց տեսնելով որ սրանք միայն առաջին օրը դերմանացի ուսանողների պէս կոնծաբանութիւն արին, զզջաց: Մի երկու շաբաթ յետոյ տիկին Մայերի, իր անգուգական Մինայի հետ խորհուրդ արաւ ու երկու ամուսինները վճռեցին մեծ սենեակի լուսաւորութեան և այլ ծախքերը սրատճառ բունելով՝ Նոյեան թոռներին նրանց դարեջրական կարողութեանը կամ ցէնզին համապատասխան «անկիւնը» փոխադրելու առաջարկն անել: Թէև մեր տղերքը մի քիչ վիրաւորեցին, (ախր չէ՞ որ պատուոյ խնդիր էր), բայց ինչ արած, հայրենի Նոյեան տապանից հեռանալն էլ աւելի ծանր էր:

Այսօր երբ մեր երեք ուսանողները ոտքները ներս դրին, բոլոր նստածները հարկադրեցին ոտքի կանգնել՝ նրանց վերի դուլեր տեղ տալու համար: Այս ընդունելութիւնը նորընծաների փառասիրութիւնը շատ շոյեց:

— Օ՛հ, բարով եկաք, այ հաղար բարի, դուք մեր զլիսի վրայ տեղ ունէք, — վրայ էին ապիս ամեն կողմից: Համեցէք, համեցէք, պատուելի աղէտներ: Այսպէս ամեն մէկը Նոյեան տապանի հաւատարիմ զաւակներից հրաւիրում էր նորեկներին: Ինչպիս երևում էր, հներն ի պատիւ նոր դինակիցների՝ կոնծաբանութիւնն աւելի թուեց էին սկսել: Աղէտապետ Մար Զիմոնը վերի դուլեր բազմեցրեց Հրաչեային ու Ռսկանին աջ ու ձախ կողմերն առնելով՝ առաջին օրը նրանց ուսմունքը հայրախնամ հոգածութեամբ աւանդելու գիտաւորութեամբ: Հա, չէ՞ որ մանկավարժ էր մեր «պապան», հասակաւոր վարժապետներից. իր աուն ու տեղը ծախած եկել էր կատարելագործւե-

լու: Երբ ամենը նստոտեցին, նորեկներն սկսեցին իրանց տպա-  
ւորութիւնները հաղորդել ընկերներին:

— Այսօր միտքս ընկաւ, — ասում էր հրաչեան — աշակեր-  
տական կեանքիս առաջին օրը, երբ մայրս ձեռքիցս բռնած  
ինձ մեր դրացի կուս-մարիկի մօտ էր տանում «տախտակ»  
կարգալն սկսել տալու: Ո՛րքան տարբերութիւն մարդուս կեան-  
քի զանազան աստիճաններում: Ի՛նչ էի մտածում ես ու զգում  
այն ժամուն, երբ նրա ձեռքն էի համբուրում և ինչ այսօր,  
երբ ձեռք էի տալիս ըէկտորին: Յայց զեռ որքան փոփոխու-  
թիւնների պէտք է ենթարկւի մեր կեանքը համալսարանում  
և ապա՝ իրականութեան մէջ: Մի ամփոփ կրկնութիւն մարդ-  
կային քաղաքակրթութեան ամբողջ պատմութեան:

— Կեցցէ՛ աղւէսը, — նկատեց Վարդապետեանը, — շատ լաւ  
է սկսում մարդն իր ընծայարբերութիւնը:

— Այդ մտապատկերների զուգորդութեան օրէնքովն է, —  
բացատրեց մանկավարժ-նախագահը:

— Աւելի ճիշտ է ասել, — դիտեց Վարդապետեանը, նման  
ու հակառակ մտապատկերների համադրութեան օրէնքով:

— Herein \*), աղւէս, կէս բաժակ, — հրամայեց բարկա-  
ցած Մար-Ղիմօնը: Գատողութիւն չըտալ, երբ առաջնէ բա-  
ժակներ ես տեսնում և հետո խօսողը ֆուքսմայնօրդ է: Գեռ  
նախագահութիւնս էլ մի կողմ թողնենք:

Ընդգիմախօսը սուս ու փուս բաժակը վերցրեց ու պատւիրած  
չափով խմեց, մինչդեռ հրաչեան սկսեց իր զարմանքն յայտնել:

— Մ'յո ինչ է, պարոններ, միթէ ամեն մարդ աղատ չէ  
իր կարծիքն յայտնել:

— Herein, նորակոչ աղւէս, ամբողջ բաժակ, — գոչեց աղ-  
ւէսապետի ահաւոր ձայնը:

Հրաչեան աջ ու ձախ նայեց և տեսնելով որ բոլորն այ-  
քով-յօնքով են անում, չընդգիմացաւ: Այս չափն էլ բաւա-  
կան էր նրան բաքոսեան աշխարհը մտցնելու համար:

— Գարեջուր, — գոչեց նա պարոն Մայրերին:

\*) Կոնծիր:

Տակառապետը ներս մտաւ ու ողւորւած նորեկին տեսնե-  
լով՝ ասեց.

— Ամեն ամեն ասեմ ձեզ, — իմ պարոններ, — այս աղւէսն  
է ու կայ, որ ձեր բոլորիդ մեղքերը պիտի քաւէ ու իմ տու-  
նը շինէ:

— Կեցցէ՛, բրաւօ, մեր պ. նաւապետը, — բղաւում էին ա-  
մեն կողմից, — զարեջուր, զաշեջուր, ծարաւ կոտորեցինք:

Պարոն Մայրը հինգ վեց բաժակ չխնայեցնելով կանթե-  
րից մի բռան մէջ առաւ և քրքչալով դուրս շտապեց ինքն  
իրան ասելով. «Այս Նոյեան սերունդը, ինչպէս երևում է,  
պարբերաբար է գժւում»: Միքօն կախցուկ հասկացրեց հրա-  
չեային, որ մինչև բաժակների սեղանի վրայ դրւելն աղւէս-  
ներն աղատ են ամեն բան ասելու աղւէսապետներին: Հրաչեան  
խսկոյն վերսկսեց վիճաբանութիւնը, հաղիւ էր խեղճը տաքա-  
ցել, մին էլ տեսնես եռանդալից տապանապետը փրփրալից  
բաժակները շարել սկսեց: Նախագահին էլ հէնց այդ էր պէտք:  
Նա ձեռքն իսկոյն բաժակի վրայ դրեց ու ասեց.

— Հէր՛, herein!

Հրաչեան «աղւէսային» համբերութեամբ դիմելով կոնծեց  
ու տեղը նստեց այս նոր դասն էլ առնելով:

— Պարոնայք, նիւթ (զարեջուր) պատշառացե՛ք, — հրա-  
մայեց նախագահը:

Լայպցիգի հայ ուսանողական կամ, ինչպէս կոչւում է հայ  
ձեմարանական ընկերութիւնը, գերմանական հողի վրայ կեանք  
առնելով սկզբներում միայն մասամբ ընդունել էր տեղական  
ուսանողական ընկերութիւնների կազմակերպութիւնը: Ժողովի  
դրահմունքների առաջին մասը դերմանականին պէս լուրջ էր՝  
դիտական, իսկ երկրորդը՝ զարեական: Այսօր պատահական  
նիստ լինելով տղերքն իրանց ոյժերը չափում էին կոնծարա-  
նութեան մէջ: Նրանք ղեկավարւում էին մի տակաւին ան-  
մշակ օրէնսդրութեամբ, որ կովկասեանի ու գերմանականի  
խառնուրդն էր ներկայացնում:

— Պարոնայք, — դիմեց նախագահը ժողովականներին, —  
այսօր երկու հայրենակից էլ մեզ աւելացան, երկու սիրտ էլ

նոյն զգացումներով տողորած, որ մեզ առաջնորդել են այս հեռաւոր երկիրը, զիտութիւնների նոր հայրենիքը: Այս նորեկներին առաջին անգամ տեսնելիս՝ մտքովս շարէ շար անցան մեր ազգային կեանքի պատմական զլխաւոր մոմենտները և երևակայութեանս ներկայացաւ անսահման ծովն իր յարափոփոխ երերուն տեսարաններով: Ահա նա հանգիստ է, հայելունման փայլում է և մի ժամ առաջ անցած մակոյկի հետքը մինչև անգամ պարզ երևում է ահադին տարածութեան վրայ: Անդորր շրջաններ ունեցել է նաև մեր պատմական կեանքը, բայց աւնդ, շատ կարճատև: Զատ վաղանցուկ են եղել այն շրջանները, երբ որևէ քաղաքակրթական շարժում երևան գալով առ ժամանակ միջոց էր տալիս խեղճ ժողովրդին վայելել նրա պատուհները, որին շատ շուտով կրկին պաշարում էր մորմոքանքը ի տես չարագուշակ նշանների, վերահաս վտանգների: Տարաբախտաբար շուտ շուտ վրայ են հասել փոթորիկները և այնպիսի ահաւոր ալեկոծումներով, որ քաղաքակրթական ուժերն հոսանքներն անգամ աննշան հետքեր են թողել այդ ժողովրդի իրական կեանքում: Գոլորշիացել, յօդս են ցնդել իր գէտները և ապա երկար ժամանակ հարկաւոր է եղել, մինչև որ այդ առ երևոյթս անհետացած տարրերը նորից կրխտանային, մայր երկրի վրայ կրթափուէին թարմ սնունդ մատակարելով: Այդ կենսաբեր կաթիլները անդ հասնելուց առաջ շատ անգամ էլ խառնում էին օտարոտի տարրերի հետ, որ նրա բաղադրութիւնը նորանոր փոփոխութիւնների էր ենթարկում: Քայց և այնպէս, ժողովրդի քաղաքակրթական ոյժը, նրա ոգին մնում էր՝ թէև երկարատև նիրհման մէջ՝ իբրև աներևոյթ էներգիա: Այդ ոյժն ես կրկամենայի նմանեցնել բիւրեղացման բնական ոյժին. ինչ պայմանների մէջ էլ որ լինէր բիւրեղը, նրա հիւլէները միշտ պահպանում են որոշ ձևով շարադասւելու ձգտումը: Այդ պրոցէսի ժամանակ այլ հանքեր միջամտելով խանգարում են միապաղաղ կազմակերպութիւնը, ձրգտելով իրանց համար տեղ բռնել այդ տարածութեան մէջ, մրցում, կռուում են և իւրաքանչիւրը կերպաւորում է իր բընատուր ոյժի ու համակարգութեան համապատասխան, շատե-

րը թէև թերի, բայց ընդհանրապէս այնքան պարզ, որ մասնագէտը միշտ հնարաւորութիւն է ունենում նրանց սխտէմը որոշելու:

— Եւ ահա ներկայումս նորից մեր կեանքի այն շրջաններից մէկը, երբ քաղաքակրթական տարրերը համախմբւելով, բիւրեղանալ են սկսում: Զգտենք հասնել անհատական ինքնուրոյնութեան, զիմենք ազատ ճանապարհով միւսնոյն նպատակներին, բայց չըմուսնանք որ, իւրաքանչիւրի կեանքն այն ժամանակ խորհուրդ կունենայ, երբ որոշ քաղաքակրթութեան բիւրեղացմանը ծառայէ. պարոններ, խմենք մեր նորեկ հայրենակիցների կենացը, ցանկանք որ նրանք անհատական կատարելութեան զիմելով չըմուսնան, անտես չառնեն ընդհանրականը:

Նրբ ընկերութիւնը խմեց երկու նոր ընկերների կենացը, Հրաչեան ոտքի ելաւ և այսպէս խօսեց.

— Սիրելի հայրենակիցներ, ձեր սիրալիր ընդունելութիւնից չափազանց զգացւած եմ: Երանի՛ թէ կարողանալի ես էլ արդարացնել հասարակութեան յոյսերը և հազար երանի, եթէ մեզ հնարաւոր լինէր մի աստիճան վեր բարձրացնել մեր հայրենիքի քնաթաթախ կեանքը, բարւոքել նրա ողորմուկ վիճակը: Ոհ, երբ մարդ եւրոպական կեանքն է տեսնում, երբ նա վայելում է գէթ առ ժամանակ նրա բարիքները, միայն այն ժամանակ մեզ պէսի առջև պատկերանում է խեղճ հայրենիքն իր բոլոր մուսլ գոյներով, ուր այնքան աննշմարելի են լուսոյ նշույլները: Քայց և այնպէս՝ մարդս մի թշուառ ժողովրդի զաւակ լինելով հանգերձ՝ խրախուսում է, որ մարդկութիւնը հնարաւորութիւն ունի, կարող է, եթէ պայմանները նպատաւոր են, կատարելագործւել, զիմել գէպի հասարակական ըղձալի կեանքի բարձրակէտը: Խմենք նրանց կենացը, որոնց դրօշակի վրայ սէր է զրւած և որոնք քաղաքակրթական ամեն մի յաղթանակ խոնարհեցնում են այս վեհագոյն զգացմունքի առջև:

Այդ երեկոյեան Նոյեան թոռներն արդեօք շատ խմեցին թէ քիչ, Աստուած գիտէ, մին էլ Նոյեան տապանի պա-

րոն նաւապետ Մայերը, եթէ նա հաշիւը դեռ պահել է: Բայց այսքանը հաստատ է, որ կէս դիշերը դեռ չանցած մեր թաւամաղ նորընծայ — աղէտներից մէկը, Հրաչեան, Տրր-դատ քաջի թեւն ընկած՝ գէպի վերոյիշեալ փրկարար կայարանն էր դիմում՝ աւելորդ բեռը թափելու համար: Ոսկանը չըկարողացաւ օգտել այս բարեգործական հիմնարկութիւնից, ուստի աղէտապետները որոշեցին այս օրուայ դասը բաւական համարելով նրանց տուն տանել: Հրաչեայի և Ոսկանի հետ երկ-երկու աղէտապետներ թեւանցուկ առած անցնում էին «Փոքր Պարիզի» (Լայպցիգի) փողոցներից, ուր մերթ ընդ մերթ լրսւում էր մեր կոնծարանների խուլ ձայները և անորոշ հառաչանքները: Այդ քաղաքի խիստ զիշերապահ ոստիկանները մօտենալով այս խմբակին և այդ ուսանողների օտար լեզուն լսելով ասում էին. «Միայն թէ հանգիստ, իմ պարօններ, միայն թէ հանգիստ»: Երբ Ոսկանի բնակարանը հասան, բոլորը գղրգոցով վեր բարձրացան: Քնած տանտիկինը վեր թռաւ, ալլալլեց մի վայրկեան և Ոսկանի հառաչանքները լսելով «աղէտի առաջին օրն է», ասեց իր քնաթաթախ դստերը և միւս կողքին դառաւ: Տղերքն իրանց ընկերի շորերը հանեցին, անկողին գրին, լամպան մարեցին և հէնց այն է որ պատրաստւում էին վայր իջնել, շրճիկ լսեց սենեակից: Արբած աղէտը մահճակալից վայր էր ընկել: Ընկերները ետ դարձան, նրան կրկին անկողին գրին, ծածկեցին ու դարձեալ դուրս եկան դռան մօտ սպասելու: Գործողութիւնը կրկնւեց: Նրանք տեսնելով որ ուրիշ հնար չըկայ, վերջին ու ամենաազու միջոցը գործ գրին: Աղէտի ոտները մահճակալին կապեցին, քաջ Տրրդատին էլ պահապան գրին ու հեռացան: Խեղճ աղէտը մի քանի յուսահատական ցնցումներ արաւ ու նրա խոնջացած մարմինը վերջապէս Բաքոսի իշխանութեան տակից դուրս գալով Մորֆէոսի զիրկն ընկաւ:

## Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Յ Ո Ւ Մ

Հրաչեան իւր դժբախտական քննութեան վերաբերեալ նիւթերը վերջին անգամ գրադարանում պրպրտել՝ իր բնակարանն էր տանում: Չմեռ էր: Չիւնապատ Ենան իր շրջակայ անտառապատ սարերով կարմրատակել էր վաղանցուկ արևի վերջին ճառագայթների տակ: Ոսկեզահիկ արևը մօր ծոցիկն էր գնում: Ծիտերից շատերը դեռ չէին վերադարձել բները: Նրանք շրջալսէն թափանցիկ երկնքի տակ, Ֆիւրստէնգրարի, միջնաքաղաքի շրջանաձև բուլւարի, ծառերի վրայ ուռած փքած քովէ քով թառոտել էին, որ չըմբոսեն: Նրանցից աւելի փորձառուները վզները ծռած՝ այս կամ այն աչքով մերթ ընդ մերթ երկնքին էին նայում, կարծես զուշակել ուզելով, թէ արդեօք երբ պետք է վերադառնայ ըզձալի դարունը իր անուշ ու տաքուկ օրերով, որ իրանք վերջ տան մեկամաղձիկ ճւլոցին ու վերսկսեն առաւօտեան ու երեկոյեան բերկրալի համերգները: Մթնշողը կոխում էր: Ուսանողներն ու օրիորդները չըմուշկները չխախտեցնելով շտապում էին գէպի Չալ գետը, որի սառած երեսի վրայ այս զիշեր «խտալական երեկոյթ» էր ստահելու էին զոյնզոյն լապտերների լոյսի տակ և երաժշտութեամբ:

Բայց Հրաչեային ինչ. նրա գլխի մէջ այս ժամին միայն շարադրութիւնն էր. նա երազանքի մէջ էր, անբջում էր: Ուստնողը մոռացել էր իր Մաթիլդային անգամ: Ուշք ու միտքը կենդրոնացրած՝ արագ քայլերով մտաւ տուն՝ խորասուզած իր մտքերի մէջ:

Ըզձալի շինւածքի համար հում նիւթերը պատրաստ էին արդէն: Այդ տարրերը, որ այնքան ժամանակ շփել էին ու տատանւել, հիմա ձգտում էին վերջապէս միանալ ու վերակենդանանալով լոյս տշխարհ դուրս գալ: Նրանց ինքնաբուրի հոսանքը քանի գնում՝ այնքան աւելի զգալի էր դառնում ուսանողին, որ այսօր ամբողջ օրը մի տեսակ խորհրդաւոր տրտ-

մտադրութեան մէջ էր: Տուն վերադառնալով՝ ձեռները զրպաններում գրած՝ ետ ու առաջ էր անում նեղլիկ սենեակում, մերթապ, մերթ աչն պատուհանի առջև մտադրազ կանգ առնելով: Մտորմունքը նրան առել էր. ակնապիշ նայում էր ու նայում նա միևնոյն կէտին ու ինքնիրան ասում. սկսել թէ ոչ: Սկսել, սկսել, փրփսում էին մի կողմից. սպասել, սպասել, խորհուրդ էր տալիս նրան ուսումնասիրութեան անյագ ծարաւը միւս կողմից: Երկտասարդի ներքին աշխարհը երկունքի մէջ էր: Գորովազութ ծնողի նման իր մտքի ու զգացմունքների առջիննկ պտուղը իր մէջ այնքան երկար ժամանակ էր կրել, որ զղում էր թէ արդէն ժամը հասել է: Բայց այդ էակն արդեօք այնչափ հասունացած է արդէն, որ կարողանայ լոյս աշխարհ գուրս դալ, կենսունակ լինել. պիտի արգարացնի նա իր գալուստը, տարակուսանքով ու սրտատրոփ մըտմտում էր Հրաչեան: Չըլինել թէ այդ երկը մի վաղահաս արտադրութիւն, մի վիժմունք գառնայ:

Այս մտաւանջութեան բուքէին մի անգամ էլ կանգ առաւ լուսամուտի մօտ և նրա աչքովն ընկան փողոց աւելոց երկու կարծիլիկ ծերունիները, որոնք գլուխները կախած, երերալով, իրանց բանին էին: Այս երկու անհատներին Հրաչեան շատ անգամ էր տեսել այդ տեղում ծառուղիների աւելորդ կանաչներն ու խոտերը քաղհանելիս ու փետտելիս. բայց այս ժամուն նրանք առանձնապէս զրաւեցին նրա ուշադրութիւնը: Գերունիներից մէկը կանգ առաւ մի ձեռքով ցախաւելին լինլով, միւսով լայնեզր դիւարիկը ճակատից վեր քշեց ու յօնքերը պատտելով զիմեց ընկերոջը.

— Ի՛նչ, Հայնցլ, չե՞ս լսում, շնասիրը \*) մի դէսը տուր է:

— Հա՛, ինչպէս չէ, դէ՛շ, էլի ծարաւեցիր:

— Չէ, ինչ ծարաւ, պատասխանեց Հանսը, — արիւնս սնունդում է, սառչում. հօ գիտես, ծերուկներս որ կոճում ենք, տաքանալու համար է:

— Լա՛ւ, թէ որ այդպէս է, դեռ սպասիր, իմ բաժինս ա-

\*) Օղի տեսակ:

առջ կոնծեմ. եթէ ոչ՝ ինձ հօ բան չես թողնիլ: Աչքածակն ես ո՛ր:

Այս ասելով վերջինս, կիսաշիշը ծոցի խորքերից գուրգուրանքով քաշաքաշ գուրս հանեց, աչքերը պղտացնելով այս ու այն կողմ գաղտագողի նայեց, երեսը պատին դարձրեց ու կուշտ կուշտ ծծել սկսեց: Խեղճ Հանսի թուքը վազում էր ի տես այդ հմայիչ երևոյթի. ձեռքները լուսահատութիւնից թուլացան, ցախաւելը վայր ձգեց ու կաղի կաղ լնլլընդալով վրայ հասաւ: Ընկերոջ ձեռքից շիշը խլելն ու մինչև տակը ծծելը մէկ եղաւ:

— Օխա՛շ, գուրացայ, — իր հրճանքն արտայայտեց Հանսը, միւս ձեռքը փոքին դնելով և ապա ինքնիրան շտապով փոզվեց, շիշը ծոցը խոթեց, որ անցորդներից տեսնող չըլինի: Այս անգամ էլ շիշը լցնել տալու հերթը իրանն էր: Ապա երկու հաւատարիմ ընկերները նոր ոյժ առած՝ դոհունակ սրտով իրանց գործը շարունակեցին:

— Տեսնում ես, ասում էր մի ներքին ձայն մեր տատամսոտ ուսանողին. տեսնում ես, թէ ինչպէս մարդկութեան այս ամենաթույլ տարրերի ոյժն էլ քաղաքակիրթ աշխարհում գորչի կորչում: Այս մարդիկը թէև կրիպի պէս են շարժւում, աւելի հանգստանում են՝ քան զործում և կարծես թէ ոչինչ բան առաջ չեն տանում, բայց և այնպէս հասարակութիւնը անյլ էլ չի արհամարհում: Պետութիւնը իր մեծ անիւր դարձանելու համար այսպիսի չնչին ոյժերից էլ է օգուտ քաղում: Մինչդեռ, եթէ այդպիսիները մտրացկանութեան զիմէին, ո՛րքան ծանր բեռ պիտի դառնային հասարակութեանը և ո՛րքան ծանր օրեր պիտի տեսնէին այդ խեղճուկները:

— Ո՛չ, ո՛չ, ես պէտք է զրիչ ձեռք առնեմ. խրախուսելով ասեց Հրաչեան համարեա լսելի ձայնով: Հեռու տարակուսանք, հեռու լուսահատութիւն: Ո՛չ մի բան բնութեան մէջ չի արհամարում, ո՛չ մի բան անհետեանք չի մնում:

Այս խօսքերի վրայ նրա միտքը դարձաւ դէպի նրան զբաղեցնող խնդրի բուն իմաստը՝ մի հին ազգի կեանքի յարատեւութեան խնդիրը: Ի՞նչպէս լուծես այս ծանրակշիւ խնդիրը,

մտածում էր նա, երբ շրջապատ ազդեցիկ տարրերը յարատև փոփոխութեան ենթակայ են և շնորհիւ ժամանակակից ու ապագայ հաղորդակցութեան աներևակայելի միջոցներին՝ մեծ ու աւելի լուսաւոր ազդերի կուլտուրական ազդեցութիւնը կարող է աներազդելի չափերի հասնել: «Քայց, ոչ յարեց նա, ամեն բան սահման ունի և փոքր ազդերն էլ, եթէ չեն ուղում կամաւ մեռնել, կարող պիտի լինեն ժառանգական ու նոյն իսկ ստացական քաղաքակրթիչ նորանոր ոյժերի շնորհիւ նորանոր միջոցներ հնարել իրանց զոյութիւնը պաշտպանելու համար»: Զգացմունքները կրկին գրոհ տուին. նրա կուրծքը դետի նման վարարեց, սիրտն այնպէս ուժգին բարախիլ սխեց, որ կարծես լսելի լինէր տրոփիւնը: Վճռական վայրկեանն էր: Փայփայլած սիրասուն իդէան լոյս աշխարհ էր դիմում: Երիասարդի ձեռքն անկարող եղաւ այլևս ընդդիմանալու. պէտք է գրիչ վեր առնէր՝ այդ տենդային դրութեանը վերջ տալու համար:

Առաջագրած աշխատասիրութեան ծրագիրն էլ արդէն պարատ էր: Զատ ճիգ էր թափել՝ նիւթերը կարգի բերելու՝ իր հիմնական իդէային ծառայեցնելու համար: Պատմական ու բնասպատմական նորագոյն հետազոտութեանց արդիւնքները՝ պատմական ժամանակակից տեսութիւնները՝ Պարւին—Հէքելեան թէօրիայի հիմնական գաղափարների հետ կշռատութեան մէջ էր գնում, էանդրափրային էր օգնութեան դիմում, գուրակշռում էր ժողովուրդների կեանքի կերպարանափոխող, առաջնորդող նման ու հակադիր ոյժերը՝ իր հիմնական իդէային ծառայեցնելու և եզրակացութիւններ հանելու համար: Երբ այդ աշխատութեանց ժամանակ նրա պառաւիկ տանտիկինը ներս գալով աեսնում էր իր սիրելի շտուղէնտի \*) առջև այնբազմաթիւ թերթիկները, ակնածութեամբ մատի ծայրերի վրայ էր փոխում իր առանց այն էլ դանդաղ ու երերուն քայլերը՝ յափշտակած Հրաչեային չքսթափեցնելու համար: Զատ անգամ էր պատահում, որ ուսանողը աչքերը սեւեռած, մաագիր, անթարթ նայում էր ու նայում և հարկադրում խեղճ պառաւիկին՝ ասածը նորից ու նորից կրկնելու: Միշտ միևնույն

\*) Աւսանող:

լուրջ, միշտ միևնույն հանդարտ տրամադրութեան մէջ էր նա: Միայն այն օրը, երբ մեր Հրաչեան վերջապէս բախտ ունեցաւ նազելի Մաթիլդայի հետ ծանօթանալու, նա տանտիկնոջ հետաքրքիր աչքերին բոլորովին կերպարանափոխւած երևաց: Ուսանողն այդ երեկոյ մի երգ մը մնջալով մտաւ սենեակ: Տիկին Սպիցը խրախուսեց և վառարանին նայելու պատրուակով՝ մրտաւ ներս, այդ իր կարծիքով, անհասկանալի մարդուց վերջապէս մի քիչ բան հասկանալու դիտաւորութեամբ:

—Քարի երեկոյ, պ. Ռափայէլեան,—ասաց նա,—շատ վաղուց է որ ես ժպիտ չէի տեսել ձեր երեսին. կարծես աշխարհի ցաւը ձեզ են տուել. բայց այսօր, ճէ, այսօր, ի հարկէ, այլ բան է. դուք զիտէք, թէ ես որչափ ուրախացայ:

—Իրաւունք ունիք, տիկին Սպից, այն վաղ էր, որ ժպիտն երեսիցս պակաս չէր, իսկ այժմ երբ ես տանն եմ լինում, ապագայի խոհերով դրադւած, այլ կերպ էլ չի լինիլ: Այնուամենայնիւ զարձութիւններից ես այնքան էլ փախչողը չեմ:

—Այո, այո, մանաւանդ վերջին շամանակներս: Ես հրրձւանքով պատմում եմ դրացիներին, որ մեր «շաուղէնտը» փոխել է, որ նա իր ընկերութեան մէջ այս ծննդեան երեկոյթին մինչև անգամ «ձեր պապիկի» դերն է կատարել: Չէ որ այն դիմակը, դուքսը նորերս ձեր մահճակալի վրայ թափած տեսայ:

—Ճիշտ է, տիկին Սպից,—յարեց Հրաչեան ժպտալով ու մեքենաբար բացեց ձեռքի դիրքը:

—Մէ, ուրեմն հեռանամ. դիտեց պառաւիկը—եթէ ոչ պ. Ռափայէլեանն ինձ շատախօս կըհամարի: Ասելն ու դուռը բանալն ու անհետանալը մէկ եղաւ:

Քայց այսօր մեր ուսանողը հեռաքննին տանտիկնոջն ուղակի տարօրինակ էր երևում: Մրդեօք հիւանդ է նա. մտածում էր գորովալից պառաւիկը. ինչո՞ւ է խեղճն այդպէս գոյն տալիս, գոյն առնում: Թերևս տխուր լուր է ստացել հայրենիքից: Չէ, չէ, լաւ է հեռանամ, գուցէ անտեղի հարցապընդումներով նրան տհաճութիւն պատճառեմ. վճռեց նա ու մի

վշտահար ակնարկ ձգելով իր սիրելու վրայ՝ սուս ու փուս դուրս ելաւ:

Հրաչեան արդէն զրել էր իր գրեթէ ճակատին՝ «Հայու թիւնը իբրև քաղաքակրթական կենսունակ տարր մարդկային ազգի մէջ» և երկու թերթ էլ լցրել էր: Նա հետզհետէ աւելի ու աւելի թափանցում էր թէմայի ճիւղաորութեանց խորքերի մէջ: Ուսանողին այնպէս էր թւում, թէ ինքը մի մութ անտառ է մտել, մերթ համարձակ, մերթ խարխափելով է քայլերը փոխում. բայց մտայնորդ գնում էր ու գնում՝ առանց յետ նայելու: Վախենում էր արդեօք յետ նայելու, իրան ներկայացած սիրելի պատկերը վերաստուգելու:

Բայց յանկարծ մտքերի թելն ընդհատուեց: Ֆիւրստէնգրաբով գոյգ գոյգ շարեւծ անցնում էր Բուրշընշաֆա Տևտոնիա ընկերութիւնը: Ուսանողները քայլերդով վերագառնում էին շրջակայ «գարեջրաղիւղերի» մէկից, Յիզընհայնից, ուր ժամերով կոնծելուց յետոյ՝ հիմա իրանց ժողովարանն էին վերագառնում՝ նոյն գործը շարունակելու համար: «Վայ այն ուսանողին, — երգում էին նրանք, որ չըզիտէ թէ ինչ է կեանքի նպատակը և այս բոլորն տանը խծկած, ուռած գլխով զիտութեանը ծառայութիւն մատուցանել է ուզում: Ու աստ՝

Տի-րա-տա չինտրա, տի-րա-տա չինտրա,

Տի-րա-տա չինտրա, տի-րա-տա չինտրա...

Անիմատ րեֆրէնն կրկնելով անցան հեռացան:

Այս անհոգ մարդկանց արագ քայլերը քանի գնաց նւագեց ու անլսելի դառաւ: Հրաչեան վերկացաւ և նրա աչքովն ընկան հանդիպակաց տան անկիւնում խփւած թիթեղի վրայի Stud. nihil խօսքերը: Նախկին ուսանողի անւան ու ազգանւան ասակ արձանագրւած այս բառերը փալիւլում էին լսատերի լոյսից: Ենայի շատ տների պատերի վրայ այսպէս լիշատակած էին Գէօթէի, Ջիլլէրի, Օկնի և ուրիշ հռչակաւոր անուններ, որոնք ցոյց էին տալիս, թէ այդ մարդիկը, իբրև ուսանող կամ ուսուցչապետ՝ շատ տարիներ առաջ բնակելիս են եղել այդ տներում: Բայց հանդիպակաց աախտակի արձանագրութիւնն այս բոլորն շատ զբաւեց հայ ուստնողի ուշադրու-

թիւնը: Ահա այս մարդու անունն էլ նրանով է յաւերժացել, մտածում էր Հրաչեան, որ քառասուն տարի շարունակ ուսանողութիւն է արել և ոչինչ է ուսել: Այս լիշատակարանի մէջ արդեօք՝ ինչ խորհուրդ կայ: Երանի՛ քեզ, որ համբերութիւն ես ունեցել համարեա կէս դար ուսանողական միամիտ կեանք վարելու, միայն իդէալների ջինջ աշխարհում դեղերելով, թիթեռնիկի պէս գիտութեան միայն անոյշ ծաղիկների հիւթերն համտես անելով՝ առանց իրական կեանք մտնելու տենչով տողորելու, առանց դործելու, մաքառելու անձկալի սպասման մէջ լինելու: Միթէ քոնը չէր խելքը. միթէ դուր չէ մեր սոսկական մաքառումը, այդ իդէալները իրագործելու գիտաւորութիւնը: Բայց ո՛չ. հեռու վարանում. եթէ ներկայումս մենք մեր նպատակներին չըհասնենք էլ կամ մասամբ հասնենք, միթէ ներկայ սերունդի ցանած սերմերը ապագայի համար էլ կորած պէտք է համարւին: Մեր կեանքը կարող է աւելի ալլասեռուել, անշարժութեան մոտնել, բայց կըմնայ զրականութիւնը, նրա ոյժերի ազնւագոյն պտուղը՝ նպաստաւոր ոլայմաններում, նորից բողբոջելու բնատուր ձգտումներով:

Ու Հրաչեան նորից զրիչ վեր առաւ: Ժամերն անցնում էին ժամերի ետեւից. եղաւ կէս գիշեր, բայց նա դեռ շարունակում էր ու շարունակում: Արդէն շատ ուշ էր: Խստաշունչ հողմը մոնչում էր դուրսը: Վառարանը վաղուց հանգել էր: Հրաչեայի դողը բռնեց, բայց նա կարծես ոչինչ չէր զգում. զեղուն մտքերի հոսանքը ուստնողին անընդհատ յառաջ էր մղում. նա և՛ դրում էր և՛ դողում: Վերջապէս երբ բոլորովին ուժասպառուեց, ելաւ ու սրթսրթալով մտաւ անկողին: Ուղեղի սաստիկ լարումից, մարմնի պաղելուց, Հրաչեային այդ գիշեր քունը երկար ժամանակ մօտ չ'եկաւ: Միայն լուսագէմին էր, որ նրա նւագած մարմինը մի քիչ հանգիստ առաւ:

Առաւօտեան սովորականից ուշ գլուխը բարձրացրեց և զգաց որ ծանրացել է, ցաւում է. բայց տեսնելով որ արդէն ուշ է, աշակերտական կեանքից մնացած բարակ վերարկուն հագնելով՝ շտապեց համարաբան: Դուրսը ոտից դուրս սարսուռ զգաց, բայց կարևորութիւն չտեսց: Դասախօսութեան հէնց

սկզբում ամբողջ մարմնով ցնցեց, ապա երբ ժամը լրացաւ, սաստիկ ուժասպառութիւն զգաց: Աթոտ ոտները կարծես այլ-ևս չէին ուզում հնազանդել: Առանձին ճիգ թափեց, մի կերպ տուն հասաւ ու անկողնի վրայ փուլեց: Աաշի ժամանակն անցնում էր, բայց նրա սենեակում խորին լուռութիւն էր տիրում: Այս ինչ է, մտահոգութեամբ հարցրեց ինքն իրան տանտիկինը. այսօր իմ Հրաչն երևի այնքան է խորասուզել, որ քաղցն էլ է մոռացել: Տիկին Օսկիցի համբերութիւնը վերջապէս հատաւ. նա դուռը կամացուկ բացեց ու ներս մտաւ: Եւ ինչ. իր սիրելին առանց հանելու պառկած վերմակի վրայ, իսկ երեսը մեռելային տփուռութիւն առած:

— Պարոն Ռափայէլեան, — ձայնեց նա յուշիկ, պարոն Ռափայէլեան:

— Մի քիչ տկար եմ, — սթափուեց հիւանդը և նազած ձայնով ասաց:

— Բայց դուք ինձ շատ անհանդիստ էք երևում, երթամ բժիշկ բերեմ:

— Ա՛չ, ո՛չ, շնորհակալ եմ, կանցնի:

Հոգածու տանտիկինը՝ տարակուսանքով դուրս ելաւ: Հրաչեան շատ զգացւեց: Առաջին անգամն էր որ երիտասարդական հասակում հիւանդացել էր: Մանկական հասակում սիրելի մայրիկն էր, որ տխուր դէմքով սնարին մօտեցաւ և իր թաթիկներն ափերի մէջ առնելով դուրգուրաց. հիմա օտար երկրում այս պառաւիկն էր, որ մօր դերն էր ստանձնել: Հազար ու մի ենթադրութիւններ, մի ին նախազգացումներ սլացան նրա ուժասպառ ուղեղի միջով: Նա ահ ու դողով մտածում էր, որ կարող էր մեռնել՝ առանց մի անգամ էլ սիրելի հայրենիքը, ծնողներին ու Մաթիլդային տեսնելու: Ա՛հ, միթէ այսպէս շուտ կարող է մարդ անհետանալ, իր բոլոր-բոլոր կապերը խզել աշխարհի հետ: Որքան որ անհասանելի էր երևում նրան այդ անէացման զաղափարը, նոյնքան էլ աւելի սարսափելի էր նա: Զառ չանցած՝ ահա նրա սենեակը մտան Սմբատեանն ու բուլղարացի Պետրովը՝ ճաշարանում բաւականին ըսպասելուց յետոյ: Հայ ընկերն ուրախ զւարթ գոչեց.

— Օ՛հ, տեսա՞ր դու, ահա թէ ինչ է նշանակում Քիլիստորութիւն, ահա թէ ինչ է զիշերը՝ ցերեկ շինելը: Ի՞նչ շահ: Զօրով ուզում ես իմաստութեան ծայրը հասնիլ, հա՛:

— Աեր կաց է, Հրաչ, ախր ինչ ժամանակ է քնելու, ընդմիջեց Պետրովը, — տղերքն սպասում են. չէ՞ որ Լիխտնհայն պիտի երթայինք զբօսնելու և մի քիչ էլ կոկորդներօ թրջելու:

— Տղերք, լաւ չեմ զգում ինձ. ասեց Հրաչեան կարմրաւրկած աչքերը բանալով:

Ընկերների տրամադրութիւնն իսկոյն փոխուեց: Բժիշկ Պետրովը հիւանդի զարկերակը անտղեց: Սմբատեանը ձեռքը նրա ձակատին դրեց. տեսան, որ շատ կասկածելի է հիւանդի դրութիւնը: Բայց որովհետև նա պառկած տեղը առանձին բան չէր զգում, ընկերների առաջարկութիւնն էլ բժիշկ բերելու մասին՝ մերժեց: Իսկ հետևեալ առաւօտ, երբ նա անկողնից ելնելով հայնել էր ուզում, յանկարծ աչքերը մթագնեցին ու հիւանդը թափով ընկաւ մահճակալի վրայ: Տանտիկինը մահճակալի շուրջը լսեց. լսելուն պէս նեշտ վազեց և երբ իր «շտուղէնտին» այդ դրութեան մէջ տեսաւ, մայրական քնքշանքով մօտեցաւ նրան, ծածկեց ու իսկոյն բժշկի վազեց: Համալսարանի բժշկանոցի ընթերականերից մէկը վրայ հասաւ, հիւանդին քննեց ու ապապրեց անմիջապէս հիւանդանոց փոխադրել: Հիւանդի աչքերը մի րոպէ բացեցին, նա իր հայրենակցի հասցէն զրեց ու նորից բարձի վրայ ընկաւ: Ընկերն այս բօթն առնելուն պէս դէպի մեծ հիւրանոցը վազեց, հանրակառքը (ուրիշ կառքեր չրկային Ենայում) լծել տւեց ու շտապով տեղ հասաւ: Քառորդ ժամ լետոյ Հրաչեան արդէն պառկած էր հիւանդանոցում: Ուսացչապետն իր ընթերակալ ուսանողների խմբակով երեկոյեան մտաւ նաև այս ննջարանը ու ատենելով որ վտանգաւոր ժանտատենդ (աիֆ) է սկսում, կարգադրեց անմիջապէս առանձնացնել:

Երեկոյեան մօտ էր: Մթնշաղը հետզհետէ կոխում էր. Հրաչեայի տոչորումը սասականում էր, նրա երևակայութիւնն արդէն վառւել էր, երբ ականջին հասաւ այդ օրը հիւանդանոցում վախճանաձի յուղար՝ լաւորութեան մահագոյժ զանգակի

սրտակոտոր հնչիւնները: Ահ, որքան ծանր էր լսել այդ հրնչիւնները: Յետոյ լսեց մի քաղցր մեղեդի, որ կարծես հրեշտակների դասը գեղգեղելիս լինէր: Քանի գնաց, տեսլի հեռացաւ այդ ձայնը, անլսելի եղաւ վերջապէս, բայց հիւանդին թւում էր թէ դեռ մօտ է, դեռ թրթռում է նա իր ականջների տակ: Այդ եղանակը երբէք այնքան տխուր, ծանր տրպաւորութիւն չէր գործել նրա վրայ, որքան այսօր, այս ժամիս ու այս վայրում, երբ նա իրան էլ տեսնում էր մահւանդոււրը դիմելիս: Սիրտը փղձկում էր. և նա խորունկ հառաչեց.

— Ահ, ինչու, ինչու էին երգում այստեղ, ինչու ամենօր լիշեցնում են մեզ այն անէութեան ճանապարհը, որի վրայ մենք մեզ կանգնած ենք զգում՝ անսահման մտտտանջութեան դատապարտւած: Միթէ լիրաւի կարծում են մարդիկ, որ այդ երաժշտութիւնը մեզ նախապատրաստել, հաշտեցնել կարող էր այն «հանդերձեալ կեանքի» հետ որ այսպէս սարսափ է ազդում իր անհասանելիութեամբ ու անսահմանութեամբ: Ուրեմն այս է եղել կեանք ասած բանը, այսպէս էր որ իմ կեանքն էլ սէտք է սկսէր ու անհետանար՝ նախ իբրև մի թեթև ժպիտ և ապա իբրև մի կաթիլ արտասուք տանջանքների անհուն, անձայրածիր ծովի մէջ: Եւ ահա այսպէս ուրեմն պիտի զոլորչիանայ, անհետք անցնի մի մարդ էակ իր բոլոր-բոլոր փայփայած յոյսերով: Ահ, որքան երջանիկ են յանկարծամահ եղողները, որոնց կեանքն այնպէս հանդում է, ինչպէս սկիզբ էր առել ծնողների կեանքի մի խորհրդաւոր վայրկենում: Ախ, թող տանջէիր, շրջեցաւ, տանջէիր, բայց դոնէ մի հետք թողած լինէիր:

Հիւանդը ցնցեց, հեծկտաց, կողկողազին արցունք թափեց: Նա լռիկ մնջիկ արտասուում էր իր փայփայած ապագան, իր խեղճ ծնողներին ու սրտի սիրած Մաթիլդային: Այդ շրջապատի ջղերը թուլացան, մի քիչ թեթևութիւն զգաց ու շտապով արտասուքը սրբեց, երբ նրբանցքում ոտնաձայն լսեց: Նախ սպասաւորն եկաւ, լապտերը վառեց, ապա զթութեանքօրը, որին հիւանդի հրատապ կերպարանքը մատնեց, որ նա մտատանջութեան ծանր ժամեր է անցկացրել: Նա կարդաց չը-

րաչեայի աչքերում յուսահատութիւնը և մեղմով կշտամբեց: Ի՞նչու այդպէս վհատիլ. ասում էր նա, քանի որ ուսուցչապետ մասնագէտների խնամքին էք յանձնւած:

Անցան օրերը, հիւանդութիւնը քանի գնաց ծանրացաւ, ջերմութիւնը վրայ դրեց և շրջեան սկսեց ժամերով զիտակցութիւնը կորցնել ու դառանցել:

— Մնացեալ բարեալ, սէր իմ, սէր, — աղեկտուր ձայնում էր... Տղերք յառաջ... այս կողմ... Այո, այո, բնութեան մէջ ոչինչ բան չի կորչում... ամեն բան փոփոխուում է... փոփոխութիւնն է միակ անփոփոխելին, բայց ապագան իրէպէսն է...

Գթութեան քրոջ հետ մահճակալի մօտ կանգնած էր լինում նաև մի ուժեղ սպասաւոր, որպէս զի այդ սարսափելի ցնցումների ժամանակ հիւանդին բռնէր ու արգելէր որ վայր չընկնի: շրջեցաւ զթութիւնը յուսահատական էր դառնում: Մօտենում էր ամենավտանգաւոր ճգնաժամը: Նա երևակայութեամբ տեղափոխել էր հայրենիք: Ճանապարհին զիշերը վրայ էր հասել և իր ընկերների հետ պառկած է խոտի դէզի վրայ: Աւազակներն երևում են, սկսում է հրացանաձգութիւնը և դէզը կրակ է առնում: Ինքն էլ ուզում է միւսների պէս վայր ցատկել, ազատել, բայց անի, նրա թև ու թիկունքն արդէն պինդ կապոտել են: Խեղճը հառաչում, օգնութիւն է հայցում, բայց իր ձայնը, կարծես հէնց հաղաղումն էլ խեղդում է:

— Բայց արձակեցէք, շուտ արէք, — աղաղակում էր նա ձայնի աննկարագրելի նլեէջներով, — անի, դէզը այլուում է... օ՛ֆ, բոցն ինձ հասաւ, արդէն լիզում է... այլուում եմ արդէն... խեղդում եմ...

Շրջեան զգում է, որ կենդանի-կենդանի խորովում է: Ապա լսում է հայ շինականների անհանդիստ ձայները, որոնք ահ ու դողը սրտներումը շտապում են բահ ու թիակով զերեկմանը ժամ առաջ փորել, որ իրան ամփոփեն, տնհետացնեն, անօրէններն իրանց՝ արտում հետքեր չըտեսնեն:

— Ախ, ի սէր Աստուծոյ, հայ մարդիկ, կենդանի-կենդանի հողին մի տաք իմ ջահել-ջիւան կեանքս, մի խաւարեցնէք

իմ արևս... ես շնչում եմ դեռ, մեղք եմ, ապրել եմ ուզում, ձեր ցաւերին դարման անել եմ ուզում:

Բայց չեն լսում ու չեն: Սարսափահար ղեղձուկներն էլ կորցրել են իրանց գլուխը: Ահա և չւանների սարսափելի, խր-  
շրտուքը... պատէ պատ գարնելով վայր են իջեցնում... Հո-  
ղին են տալիս... Հիւանդը լսում է արդէն, թէ ինչպէս հողը  
վայր է թափուում, թէ ինչպէս հողի խոշոր-խոշոր կոշկուռները  
ընկնում են իր երեսին, կրծքին, արիւնը ալ անում...

—Յ՛հ, գութ ունեցէք... — մի անգամ էլ ուժգնապէս զօջեց  
հիւանդը... ողի, ոյժ տուր ինձ, ձայնեց նա և մահճակալից  
վեր ցաակեց աչնպիսի սաստիկ ցնցումով, որ եթէ սպասաւորը  
հէնց նոյն վայրկենին նրան բռնած չըլինէր, վայր պիտի տա-  
պալէր:

—Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ինեզճ երիտասարդ, — հառաչեց զթուլթեան  
քոյրը և արտասաւալից աչքերը թաշկինակով ծածկեց: Նա ող-  
բում էր սիրելի յոյսերով տողորած ուսանողի կեանքը: Ուսուց-  
չապետը ներս մտաւ, գլուխը թափ տուեց ու կարգադրեց գովա-  
րար միջոցները սաստկացնել ու անընդհատ շարունակել:


Մի քանի օր լետոյ, երբ Հրաչեայի ընկերները մի անգամ  
էլ հիւանդանոց եկան հիւանդի վիճակի մասին տեղեկութիւն  
ստանալու, զթուլթեան քոյրը սանդուղքի վրայ նրանց գէմն  
եկնելով ուրախ-ուրախ հաղորդեց, որ վտանգն անցած կարելի  
է համարել: Բայց Հրաչեան տեսնելով որ իր ընկերներին ներս  
չեն թողնում, հասկացել էր որ իր հիւանդութիւնը վարակիչ,  
վտանգաւոր բան է: Նոյն երեկոյ հիւանդին դարձեալ պաշա-  
րեցին միջին զգացմունքները. տոչորանքն առաւ նրա հպարտ  
սիրտը: Հրաչեան չքնաղ զթուլթեան քրոջը յուշիկ ինդրեց  
մօտենալ իր սնարին և սրտակտուր ձայնով իր խոնտովանանքն  
այսպէս սկսեց.

—Ա՛խ, սիրելի քոյրիկ, ես մեռնելու եմ: Գուք որ այդ-  
քան գորովով խնամք էիք տանում թշուառիս կեանքի վերջին  
օրերում, պաղատում եմ կատարեցէք նաև իմ վերջին սիրելի

կողմը: Հայրենակիցներիս ասացէք, որ զիտեմ, նրանք միւս ըն-  
կերներէս հետ թող չեն տալ որ ինձ օտար երկրում անտէր,  
անտիրականի պէս թաղեն, բայց չըմուռնան բանալ յուշա-  
տետրս, հանել կապուտակ «Ինձ մի մուսանար» ծաղիկը և դը-  
նել սրտիս վրայ: Գերեզմանիս վրայ՝ մի սև խաչ՝ «Հայ ուսա-  
նող Հրաչեան» արձանագրութեամբ: Ահա և վերջացաւ իմ կը-  
տակը: Ա՛յ... բայց ո՛չ, ո՛չ. դեռ որքան բան կայ... յուշա-  
տետրս, գրած ըլիս ապագան, որի վրայ այնքան դուրգուրացել  
էմ... թող իմ հայրենակիցներն իմ պակասն էլ լցուցանեն, թող...

Հիւանդը ուժասպառուեց, նորից թմրութիւն եկաւ վրան,  
երազների մէջ տար ու բեր եղաւ: Բայց միւս առաւօտ նա ա-  
ւելի կազդուրած էր: Վտանգն անցաւ բոլորովին: Նրա գերեզ-  
մանը Գերմանիայում չէր որ պիտի փորւէր:

Յ. Տէր Միրաքեան



# Ա Ր Ի Ե Ս Տ Ի Է Ջ Ե Ր

ԼԻՈՆԱՐԴՕ ԴԱ ՎԻՆՉԻԻ „Ս. ՅՈՂԱՆՆԵՄԱՐ“ 1)



Եփ-սե խորքի մը մէջէն, գեղնորակ իրան մը զուրս կ'ելլէ, խաւարէն ծնող երեւոյթի մը պէս: Արդովիչ էակ մըն է, անորոշ սեռով, այն որձևէգի տարտամ գէմքերէն զոր Աինչիի մէջ կը գտնենք առաջին անգամ և որոնք մեր դարավերջին նոր-միտաիքական նկարիչներուն, Պրըն-Ղոնսին կամ Գիւս-

թաւ Մուռլին, գլխաւոր հրապուրը կազմեցին: Միտը, մզտացած ոսկեգօծումի անտալ խարտիշութեամբ մը, հին մեղրամոմի զոյն մըն է առած, մահւան զոյն մը գրեթէ՝ որուն տակ սակայն ներոյթ կենսականութեան մը ամուր լեցունութիւնը կըրգացուի: Դէմքը, զոր կըպաշարեն մինչև ուսերն ինկած մութ-շէկ մագեր, և որ պաշտելի հակումով մը գէպի աջ ուսը կըծուի, այն նրբանուրբ շնորհով ձևածիրն ունի, որ «Պուրմիթիֆներուն» մէջ արդէն կ'երևայ՝ մանկունակ ու գեռ միամիտ, և զոր Աինչի աստուածային կատարելութեան մը հասցուց: Վերէն եկած լոյս մը ճակատը կըճերմկցնէ, սուերի մէջ կըճգէ աչքերը, մեղմօրէն ուռած այտերուն վրայ քաղցր ցուք մը կը գնէ, քթին ձիգ ու բարակ զիծը կըշեշտէ, բերնին երկու անկիւնները փոսիկներ կըփորէ և, հետզհետէ նւաղկոտ, դունչիւ վրայ թեթև նշոյլ մը սահեցնելով կըմարի: Չախ ձեռքը որ կուրծքին վրայ վեր բրունէ կէս մէջքէն վար ինկած սուէ վե-

1) Փարիզ, Լուվրի Մուսէօնին մէջ:

րարկուն, խաչ մը կըկրէ որ մինչև գլխէն վեր կըբարձրանայ մութին մէջ. և աջ ձեռքը, վեհաշուք վերամբարձումով մը, գէպի երկինք կըցցուի, ցուցամատը՝ ուղղաձիգ՝ անտես բարձունք մը մատնանիշ ընելով:

Եւ ասիկա կենդանազիր մը չէ, հակառակ պատմական անունին որով հեղինակն այդ գէմքը նշանակեր է: Քացի սուէն ու խաչէն, ոչինչ՝ այս տարօրինակ նկարին մէջ՝ Աւետարանին ս. Յովհաննէսը կըլիշեցնէ:

—Ասի Էակն է որ ամեն բան խուզարկեր է, որ ամբողջ ցաւը և ամբողջ աղտն ալ տեսեր ու քններ է մեր կեանքին ու մեր հոգիին մէջ, և որ, գիտցողին մելամաղձիկ ժպիտովը, մատը գէպի վեր, գէպի Մութը, գէպի Անճանօթը կ'երկնցնէ, մինչդեռ իր միւս ձեռքը երկիւղածօրէն իր ուսն ի վեր կը բարձրացնէ խաչը, նւիրական նշանը միակ ճշմարիտ ու միակ ազնիւ բանին, Տառապանքին: Իր տչքերը, որոնց նալւածքը, երազուն շութեան մը մէջ պաղած, անհունի մէջ արտոյնած անբացատրելի տրտմութիւնով մը ծանրաբեռն կըթւի, զիրենք սքօղող սուերին մէջէն՝ խորհուրդներու սրբավայրի մը լուսամուտներն են կարծես՝ իրական կեանքին գուհիկ ինդճութեանը վրայ ահամայ, զգւանքով բացւած: Աւ շրթները, իրենց դեմարդկային անուշութեամբ կորացած աղեղին մէջ, այն մոգտկան ծալքն ունին զոր Աինչի իր հոգիէն ստեղծեց, և որ անսահման զթութեան մը ժպիտն է՝ թաղծաղին հեղնութիւնով մը սրւած:

Ասի նոյն ինքն մարդկային միտքն է, որ երկնավէժ հրեշտակի այս կրկնապէս ազնիւ գէմքն առած, համայնապարփակ աղջամուղջէն կ'անջատուի, և իր դարաւոր խուզարկութեանց ու խօկմանցը մէջ՝ իրերուն ունայնութիւնն հասկացած, ինք իր վրայ և ամեն բանի վրայ կարեկցող ու գառնացած համակերօրութեամբ մը՝ միամիտ ու ցաւազին ամբօխներուն ցոյց կուտայ իր մատովը անմատչելի կատարը ուրկից Երջանկութիւնը երբէք չիջաւ, բայց ուր Յոյսը միշտ պիտի պլպլայ:

Արշակ Չօպանեան

# Ե Ր Ա Ձ

(Եւէր • միտտ Շահաղիզի 35-ամեայ յոյելամնին)

Սարսափելի երազ տեսայ այս գիշեր...

Կ՛մն իմնուել



**Ե**ւ դու դեռ հաւատում ես, դեռ չես կտրել քո յոյսը: Քայց ինչ. դու միշտ պատկանել ես այն իդէալիստների շարքին, որոնց սակի, խաբուսիկ ցնորքներն ու երազները չեն կարողացել փշրել նոյն խի իրականութիւնը, մերկ, սոսկ իրականութիւնը... Չարմանում եմ. միթէ կեանքը քեզ քիչ ապացոյցներ, քիչ փաստեր երեւան հանեց. փաստեր, որոնք խօսում են ընդդէմ քո կարծիքների և համոզմունքների...

Այդպէս էր ասում իմ ամենամօտ ընկեր ու բարեկամ բրժիշկ Ասլանեանցը, որ յուզւած, կրքոտ ձայնով և վառելով ծրխաքարը, սկսել էր ծայրէ ի ծայր չափել սենեակս:

Երեկոյ էր. մութն արդէն սկսել էր քողաւորել սենեակիս հեռաւոր անկիւնները և պատուհանի մօտ տղօտ լոյսը դեռ շարունակում էր կուել խաւարի հետ:

Ընդհատւած խօսակցութիւնը կրկին շարունակեց:

— Ենթադրենք, Սրշակ, որ ես իդէալիստ եմ. դա դեռ մահացու մեղք չէ. ինչ արած. ամենքը խօ քեզ պէս յուետես լինելու չեն. ինչի կընմանէր մեր՝ առանց այն էլ անշուք կեանքը, եթէ մարդս չունենար ատուածային այն անդին պարզւել, որ կոչւում է յոյս. յոյսն է, որ սփոփում է մեր ցաւերը, տառապանքները. յոյսն է, որ կեանքի պատերազմում ճնշւած, անզօրացած մեր անդամներին տալիս է ոյժ, եռանդ. եռանդ ապրելու և կրկին ու կրկին տանելու կեանքի խաչը... Եւ դու

կամենում ես, որ ես այլ ևս չըլուսամ. բայց նա արմատացել է իմ մէջ. նա դարձել է համոզմունք...

— Համոզմունք. ծիծաղեց Ասլանեանցը, կանգ առնելով առաջ. համոզմունք. միթէ մարդկային համոզմունքները և կարծիքները դատապարտւած են յաւիտենական անշարժութեան: Միթէ դրանք անփոփոխ են. ինչ տարօրինակ բան կըլինէր, եթէ ես ու դու այժմ, քարոզէինք այն, ինչ որ քարոզում էինք 10—15 տարի սրանից առաջ, երբ դեռ ուսանող էինք և ապրում էինք. լիշում ես, մեր աննման Լուիզա Կարլովնայի փոքրիկ տնակում. չէ, Գրիգոր, կեանքը, այդ միշտ փոփոխող կեանքը փոխում է և մարդու հայեացակէտերը, և՛ կարծիքները և՛ համոզմունքները. ինչ որ 10 տարի առաջ սև էր մեզ համար և տարօրինակ, այժմ նա սպիտակ է և բնական. օրինակ քեզ նոյն խի մեր հողագնդի օրգանական կեանքը, որի կազմակերպութիւնը ըստէ առ ըստէ ենթարկում է պէս-պէս և անվերջ փոփոխութիւնների. հաւատան ինձ, ես չեմ սխալւում:

— Ընդհակառակը, չարաչար սխալւում ես. դու համոզմունքների ձևակերպութիւնը ընդունում ես իբրև օրգանական փոփոխութիւն. մի ինչ որ ճշմարտութիւն, ակսիօմա, կարծիք կամ համոզմունք, եթէ միայն աճում է և զարգանում կանոնաւորապէս, երբէք կարող չէ փոխել, ձևակերպել. սևը երբէք կարող չէ փոխել, ձևակերպել. սևը երբէք չէ դառնում սպիտակ. համոզմունքը, որ փորձերի, մի ահագին շարք փորձերի և դիտողութեան զուժարն է, ձուլելով կեանքի ամեն տեսակ փորձերում, շփւելով նրա հազար և մի հանդամանքների ու դիպածների հետ, դառնում է վերջ ի վերջոյ աւելի հասունացած, աւելի լիակատար և մօտ զուտ ճշմարտութեան. չետազայ համոզմունքը նոր երևոյթ չէ ինքն ըստ ինքեան, այլ միայն նախընթացի ձևափոխութիւնը: Հիմքը և բաղադրութիւնը մնում են առ միշտ միևնոյնը...

Սրշակը կանգնած էր առաջիս և լսում էր ինձ. միայն նրա սուր, միշտ շարժուն աչքերը հաղիւհաղ նկատելի կերպով ժպտում էին. լայն մտալի շրթունքների ծալքը այնպիսի արտայայտութիւն էր տալիս նրա ամբողջ երեսին, կարծես մի

ինչ որ ներողամիտ համբերութեամբ լսում լինէր ինձ, չըկամենալով կտրել խօսքս և գրանով վիշաւորել:

Այդ ժպիտը զայրացրեց ինձ. լուցի և սկսեցի գիտել պատից կախ արած նկարը, ուր ծովը շատ էր նմանում երկնակամարի, իսկ վերջինը իր ամպերով՝ ալեկոծւող ծովի:

— Լաւ... թող այդպէս լինի. ընդմիջեց լուսթիւնը Ասլանեանցը, — այնուամենայնիւ մենք հեռացանք մեր բուն խրնդրից... Մեր խօսքը մեր ազգի մասին էր. իմ կարծիքով նա վաղուց վերջացրել է իր դերը աշխարհիս երեսին. մի երկու, երեք դար՝ և նա պարտաւորւած կը հեռանայ աշխարհային բեմից... մտաբերում ես... feci, quod potui, facierunt meliora potentes... ահա և հայերի այժմեան նշանաբանը... խօս մեռան լոյները, հռովմէացիք, եղիպտացիք, մի շարք ազգութիւններ, որոնց քաղաքակրթութիւնը, կուլտուրան աւելի բարձր էր, քան մեր խղճուկ, երկար դարերի ընթացքում չարաչար տառապող հայերին...

Ասլանեանցը տխուր ժպտաց.

— Ուրեմն դու դատասպարտում ես հայերին մահւան:

— Այո:

Ոչինչ չըպատասխանեցի: Սենեակում տիրեց այն անախորժ, տխուր լուսթիւնը, որ միշտ ձանձրացնում, նեղացնում է խօսակիցներին:

Արշակը մօտեցաւ դրասեղանիս, վերցրեց այնտեղից հաղարանգամ արդէն անսած մի գիրք, մեքենայաբար թերթեց և նայելով պատի ժամացոյցին՝ ասաց.

— Իսկ ժամանակը ուշ է արդէն... ցտեսութիւն, Գրիգոր:

— Ռ՛ւր ես շտապում... մնա... խօսենք մի քիչ:

— Ի՛ գուր է. դա կըլինի բոլորովին անհետեանք. դու կը պնդես քոնը, ես — իմը. առաջի անգամը խօս չէ՞. իսկ ես այսօր մի քիչ վատ եմ զգում ինձ... զնամ հանգստանամ. բարի գիշեր, Գրիգոր:

— Բարի գիշեր, Արշակ:

Մնացի մենակ:

Ամեն ինչ լուռ էր շուրջս. միայն ժամացոյցի անվերջ և

միակերպ «թիք-թաքն» էր, որ խանդարում էր այդ ձանձրալի լուսթիւնը: Այդ «թիք-թաքն» ազդում էր ինձ վրայ, լարում էր ջղերս, արձձի ծանրութեամբ իջնում էր գլխիս, որոտում էր ականջներումս և արձագանք էր տալիս շուտ-շուտ բարախող սրտումս. այդ լուսթեան ներգործութեան տակ անգոր, լենեցի բազկաթուխս, կուացրի գլուխս կրծքիս և ընկայ մտածութիւնների մէջ: Խառն ու շփոթ մտքեր պաշարեցին ինձ, և սկսեցի երազել: Լապտերի աղօտ լոյսը մեծ շրջանակով ընկնում էր գրասեղանիս վրայ, երերուն ստեղծելով խաղում էր սպիտակին տուող առաստաղում և չըհասնելով սենեակիս հեռաւոր անկիւններին՝ թողնում էր այնտեղ ամեն ինչ կիսամութ խաւարում:

— Չէ... չէ... հազար անգամ չէ... Արշակը սխալում է, անցաւ ուղեգովս. մենք ունենք իրաւունք ապրելու... դեռ հայը չէ կատարել այն ամենը, ինչ որ սահմանւած է նրան կառարելու. մեր ճրագը դեռ չէ մարել և ես հաւատում եմ, որ մի օր նրա լոյսը կըլինի կըլաուի և կըլուսաւորէ մեզ... այն, ես հաւատում եմ, ես համոզւած եմ...

Բարձրացրի գլուխս, նայեցի շուրջս և կրկին այդ մաշող, տանջող լուսթիւնը պաշարեց ինձ իր պինդ ժանիքներով. ամբողջ կազմւածքիս մէջ զգացի թուլութիւն. ոչ ոյժ, ոչ եռանդ կար այդ բուպէին իմ մէջ. կարծես անձնատուր էի եղել անհուն ծովի հոսանքին և նրա ալիքները տանում էին, քշում էին ինձ հակառակ կամքիս՝ հեռու, հեռու: Գարձրի հայեացքս պատից կախ արած գորգին և անշարժ, ապուշի նման, նայում էի նրա գոյնզգոյն նկարներին. միտքս և ուղեղս դադարել էին գործելուց. դարձել էի անզգայ. ոչինչ չէր հետաքրքրում ինձ, ոչինչ չէր զմայլեցնում. հողիս թմրել և քնել էր: Այդ անշարժութիւնը, այդ անգործութիւնը սիրելի էր ինձ, վախենում էի փոխել գիրքս բազկաթուղում, վախենում էի շարժել և այդպիսով վերջ տալ dolce far niente-ին:

Աչքերիս կողերը սկսեցին ծանրանալ. կիսաքուն թմրութիւնը պաշարեց ինձ:

— Արշակը լուռտես է... անցաւ ուղեղիս հեռաւոր ան-

կիւնում. նա չունի իրէալներ, զազափարներ... ոչ... նա սը-  
խալում է... Եւ գլուխս աւելի ևս կռացաւ կրծքիս վրայ:

Հազիւ հազ նկատում էի իմ առաջ, սեղանի վրայ գար-  
սած առարկաները, լաստեղը, լուսանկարները, զրքերը, պա-  
տից կախ արած պատկերը — այդ ամենը պատած էր թանձր  
մշուշով: Թափեցի վերջին ճիգս, լայն բաց արի աչքերս, մեքե-  
նայարար նայեցի շուրջս և կրկին ընկալ կիսաքուն թմրու-  
թեան մէջ:

Սկսեցի մոռանալ ինձ...

Մեծ, լայն, անծայր, անվերջ անապատ:

Դեղնագոյն աւազը առատորէն փուել է անհուն տարա-  
ժուլթեան վրայ. դեղին է հողը, դեղին են մերկ ժայռերը, դե-  
ղին է ողորմելի արօտը, որ տեղ-տեղ երևում է աւազի միջից.  
դեղին է վերջապէս նոյն իսկ երկնակամարը, ուր լողում է ա-  
նապատի կիզիչ արևը. նրա ջերմ, այրող ճառագայթներից տա-  
քացած օդը անշարժ է. երբեմն միայն սկսում է խաղալ երե-  
րուն սաւերներով և կրկին ընկնում է անշարժութեան մէջ.  
Քամու թույլ, սնդոր ալիքը, որ ահա փչում է մի բույլ, կոր-  
չում է, անհետանում լայնատարած, մեռած անապատում. ոչ  
մի նշույլ կեանքի և շարժողութեան: Փոքրիկ, ալիքաւոր ըը-  
լրակներ, անհուն անապատ, աւազ, կրկին բլրակներ, կրկին  
աւազ և անվերջ, անծայր անապատ, չրկալ մի ձայն, չրկալ  
ճպտուն. ամեն ինչ քնել է խոր, յաւիտենական քնով աշխար-  
հիս այս մեծ, ահաւոր գերեզմանատան մէջ. և ես կամաց-կա-  
մաց առաջ եմ գնում այդ անապատով: Աւազի հատերը սպի-  
տակին են տալիս արևի ճառագայթների տակ, պսպրում են,  
փայլում են և ծախտում աչքերս. մեքենայարար փակում եմ  
նրան, ընթանում առաջ և կրկին բանում. իսկ առաջիս ըն-  
կած է նոյն անսպառ աւազի ալիքաւոր ծովը:

— Մըբ է դրա վերջը, անցնում է մտքովս. շնչառութիւ-  
նըս ծանրանում է. գլուխս սաստիկ սկսում է ցաւել. արիւնս  
խփում է երեսիս.

— Մի փոքր քամի, մի փոքր զով... շշնջում եմ ես չորա-  
ցած շրթունքներովս:

Եւ նայում եմ դեղնագոյն, կարծես խանձաւ երկնակա-  
մարին. արևը թեքել է արևմուտքին. նրա վերջին, հրաժա-  
րական ճառագայթները սկսել են ներկել անապատը և հորի-  
զօնը՝ կարմրագոյն երփներանգ գոյներով. կարմրում է աւազը,  
կարմրում են բլրակները, հեռում երևող ինչ որ անորոշ զը-  
ծագրութիւնները, և արիւնտ սաւանը կարծես սփռում է  
անապատի վրայ:

Օդը սկսում է քիչ զովանալ. կամաց-կամաց ցերեկայ լոյ-  
սը տեղի է տալիս զիշերայ խաւարին. երկինքը մթնում է,  
ապա ամեն ինչ անհետանում է թանձր մթութեան մէջ:

Անապատը կրկին լուռ է: Եւ շարունակում եմ ուղիս:

Ու յանկարծ, հեռւից ականջիս հասնում են խուլ, անորոշ  
ձայներ. դռքա աղաղակներ չեն, ոչ, այդ ձայներն աւելի նման  
են հառաչանքի, սրտատոչոր հեծկտանքի:

Չտապում եմ և մի քանի բույլից մօտենում եմ մի ժայ-  
ռի, որի զազաթին երևում են աւերակների խարխուլ, փշուր  
մնացորդներ. ժայռի ստորոտին խոնւել է մի ամբոխ: Աստուած  
իմ, ինչ ողորմելի ամբոխ է դա. համարեա կիսամերկ, հնամաշ  
ցնցոտիներ հաղներին, դժգոյն, դալկացած երեսներ... ընկած են  
գետնին և աղիողորմ հառաչում. շատերը շլթայած են և եր-  
կաթը մաշելով նրանց մարմինը, հասել է ոսկրներին. արիւ-  
նաթաթախ վերքերից հոսում է թարախը. դարևար վիշտը,  
հալածանքը, նեղութիւնն ու չարչարանքը քշել, տարել են  
նրանց երեսից ծիծաղը, ժպտը:

Նոյն իսկ դժոխքը կարող չէր լինել աւելի ահաւոր, ա-  
ւելի սարսափելի, քան այս խեղճ ամբոխը. թշուառների հա-  
ռաչանքները լցրել էին օդը. կաթնագոյն լուսնեակի լոյսը ա-  
ւելի ևս ալլանդակում էր այս ահուելի տեսարանը: Ճերունի,  
երեխայ, կին, երիտասարդ — այդ ամենը խոնւած էր բլրակի  
ստորոտին և կատաղութեամբ փորելով աւազոտ հողը, կպցնում  
էր իր ծարաւի չորացած շրթունքները խոնաւ գետնին: Սար-  
սափած կտնդ եմ ուռնում:

— Զ՛նւր... ջ՛նւր... մի կաթիլ ջ՛նւր... մեռնում ենք ծա-  
րաւից. լուում են աղիողորմ մրմունջներ...

— Զ՛նւր... ջ՛նւր...

Հեռուում, լուսնեակի պսպղուն ճառագայթների տակ ցո-  
լում է անապատի դարդ — օտղիւր. նրա մակերևոյթը անդրա-  
դարձնում է իր մէջ ասողալից մութ կապուտակ երկինքը, լուս-  
նեակը փայլում է շարժուղ, երեբուն հիւլէներով. ամբոխը կար-  
կառում է դէպի նա իր մերկ, թարախոտ ձեռքերը.

— Զ՛նւր... ջ՛նւր...

Սարսափիս կամաց-կամաց հետևում է կարեկցութիւն:

— Աստուած իմ, միթէ սրանք էլ ինձ նման մարդի՛լ են...  
ոչ... ոչ. կրկնում եմ ես ինքս ինձ և մօտենում անձանօթ  
թշուառներին: Նրանց աղերսալի հայեացքը ընկնում է վրաս և  
խորը թափանցում սիրտս:

— Զ՛նւր... ջ՛նւր... թոթովում է մի փոքրիկ, կիսամերկ  
երեխայ և իր նիհար, վատուժ ձեռքերով, փաթաթում է ճընկ-  
ներիս:

— Ո՞վ էք դուք... ինչու էք ընկել այս անապատը. հար-  
ցնում եմ իմ մօտ ընկած ծերունուն: Լսելով իմ ձայնը, վեր է  
կենում դետնից, լայն բաց է անում իր կարմրած, թարախոտ  
կոպերը, մոլորած աչքերով վախեցած, նայում է վերաս և կըր-  
կին թեքում է ալեղարդ զլուխը կրծքին:

Այգպէս նայել, ինչպէս նայեց ինձ ծերունին, զիտեն մի-  
այն սարուկները:

— Մի վախենաք... վատութիւն ձեզ չեմ ցանկանում.  
կ'օգնեմ ձեզ, ասացի ես:

— Օղնե՛լ մեզ... ոչ... ոչ... մոմուաց ծերունին և բար-  
ձրանալով դետնից՝ նստեց մի մեծ լերկ քարի վրայ: Լուսնեակն  
արդէն հեռացել էր հորիզոնից և լողում էր երկնակամարի պարզ,  
կապուտակ եթերքում:

— Ո՞վ էք դուք. կրկնեցի հարցս ես:

— Մե՛նք... մե՛նք... մեզ կանչում են «բայեա». տէ՛ր, մենք  
խեղճ ենք, թշուառ... Աստուած դարձրել է մեզնից իր երեսը...

— Ո՞ւր էք ապրում դուք:

— Ահա, այստեղ: Եւ նա իր ոսկրոտ ձեռով ցոյց տւեց  
աւերակների քարուքանդ փլատակները:

— Ի՞նչու էք թշուառ ապա. հարցրի ես:

— Ի՞նչու... Եւ ծերունին տխուր նայեց երեսիս ու ապա  
բարձրացնելով աչքերը դէպի երկինք՝ ասաց դողդոջուն, սրտա-  
ձմրիկ ձայնով.

— Աստուած բարկացել է մեզ վրայ. մեր տանջանքները  
սարսափելի են, տէ՛ր, մեր դժոխքը այստեղ է, այս անապա-  
տում... մենք մեռնում ենք քաղցից, ծարաւից. անապատում  
շատ քիչ ջուր կայ:

— Ի՞նչպէս... իսկ այնտեղ... և ես ցոյց տւի հեռւի դետը:

— Ոչ, տէ՛ր, դա ջուր չէ, դա անապատի խարուսիկ երի-  
ւոյթն է, որ աւելացնում է մեր տանջանքները... և ծանր սխ-  
բաշեց.

— Եւ վաղուց է, որ դուք այսպիսի դրութեան մէջ էք:

— Ամբողջ դարեր... Կար ժամանակ, երբ մենք էլ ապ-  
րում էինք աշխարհիս երեսին այնպէս, ինչպէս ապրում են ու-  
րիշները: Այդ ժամանակն անցաւ, դնաց. կորուսինք մենք մեր  
մայրենի հողը. եկաւ ուրիշը, տիրեց այդ հողին և մենք դար-  
ձանք նրա հպատակը. մենք հաւատարիմ էինք մեր նոր տի-  
րոջը, մենք խաղաղասէր էինք, մենք մխիթարում էինք նրա-  
նով, որ մեր տէրը թողնում է մեզ մեր հողերից մի մասը, մեր  
սուրբ եկեղեցին, մեր հաւատը: Անցան կրկին դարեր և ամեն  
ինչ փոխեցաւ. մեզ սկսեցին հալածել. մեզնից խլում էին մեր  
քրտնքով վաստակածը. մեզնից խլում էին մեր կանայքը, մեր  
որդիքը, մեր աղջիկները...

Ծերունին մի բոպէ լուեց. անցեալի լիշողութիւնները երե-  
ւի վրդովեցին նրա հողին. նա ծածկեց իր երեսը ձեռներով ու  
սկսեց լուռ լալ. նրա երկար սաւերը երերում էր աւաղի վրայ:

— Յետոյ, շարունակեց նա մի քանի բոպէից — մեր վիճակը  
դարձաւ աւելի ևս վատթար. սկսեցին քանդել, սրբապղծել մեր  
եկեղեցիները. արիւնը լայն հոսանքով հոսաց մեր երկրում և  
ոռողեց մեր մայրենի հողը. ոչ ոք չընկատեց մեր խեղճ վիճա-  
կը, ոչ ոք չ'օգնեց մեզ. ո՞ւմ ինչ փոյթ, որ աշխարհիս մի ան-

կիւնում, ուր բնութիւնը զբախտի է նմանում, ուր ամեն ինչ կարծես ստեղծւած է անդորր և բարեբախտ կեանք վարելու համար, մի ինչ որ ազգ տառապում է դարևոր լծի տակ, տընքում է, օրէց օր մաշում, հալում... Հրդեհեցին մեր զիւղերը, կողոպտեցին մեզ և վերջ ի վերջոյ սկսեցին մորթել. դարերով լուռ էինք մենք, դարերով մունջ էինք մենք. միայն աղօթքներն մէջ խնդրում էինք Աստուծոց փրկութիւն. իսկ մեր Աստուածը դարձրել էր իր երեսը մեզնից, թողել էր մեզ... Կրկնապատկեցին մեր չարչարանքները, տառապանքները և մեր դարևոր համբերութիւնը հատաւ. մենք ոյժի և բռնութեան զէմ բանեցրինք ոյժ և բռնութիւն. մեզ խռովարար անլանեցին, քշեցին հայրենի հողից և ուղարկեցին այս անապաարը. սա մեր գերեզմանն է. մեզ քշել են այստեղ մեռնելու և մենք մեռնում ենք քաղցից, ծարաւից... տէր, շատ քչերը մեզնից դեռ կենդանի են. կանցնեն աստեակ տարիներ և ոչ մի «բայեա» չէ մնալու աշխարհիս երեսին: Մեր ճրագը կըմարի առ միշտ...

Աւ լռեց: Լուռ էի և ես:

Լուսնեակը քողաւորեցաւ մուգ արձձային ամպերով և ամբողջ անապատը իր բլրակներով, աւազով, ժայռերով տառապող տմբոխով՝ կորաւ խաւարի մթութեան մէջ...

Աւ դարթնեցի: Սառը քրտինքը թրջել էր ճակատս, մարմինս. սարսափած նայեցի շուրջս. վախում էի կրկին տեսնել այդ ահռելի, անվերջ, անծայր անապատը, այդ թշուառներին, լսել նրանց սրտաճմլիկ մըմունջները:

Քայց ոչ, սենեակումս էի. ահա լաղաբերս, դրասեղանս, ահա ժամացույցը իր անվերջ թիք-թաքով, ահա թղթերս, դրքերս:

— Սարսափելի երագ, շշնջացի ես... Այդ ծերունին, նրա խօսքերը... Ինչպիսի աղիողորմ ձայնով նա արտասանեց իր վերջին խօսքերը:

— Մեր ճրագը կըմարի առ միշտ...

Եւ այդ իսկ ըստէին, չըզիտեմ ինչու, մտաբերեցի մեր խօսակցութիւնը Ասլանեանցի հետ, նրա ախուր մարդարէութիւնը: — Ցնորք է, երանգ, աշխատեցի ինքս ինձ հանգստացնել ու մարեցի լապտերս:

Ամբողջ զիշեր մնացի անքուն:

Ծերունու պատկերը չէր հեռանում ինձնից և ականջումս դեռ երկնր-երկնր հնչում էին նրա վերջին խօսքերը:

— Մեր ճրագը կըմարի առ միշտ...

Միայն լուսաբացին քնեցի՝ անհանգիստ, տենդային քնով...

Գ. Չուրար



# Փ Օ Ռ Ս Ո Ւ Խ Ի Ն Ա Ի Ա Գ Ը \*

Իրաւասու, հոգաբարձու, բամբասարանի անդամ եւ  
մանապարհորդ.

(Նոր-նախընկանի բարբառով)



Էտե՞, ասի Փօռսուի Աւագին, վերջը—վերջը  
արժանի էդանք իտա զակուանից ասած տեղերը  
տեսնելու—Հա՛. Հա՛ մարըտ լամ, Փօռսուի Աւագ,  
զակուանիցալ կընացիր—Հա՛.

—Հա-պա չի-կը-նա-ցի, կաշին ալ առի,  
ստաց Աւագը, պըզովի աչքերը ճըզմըզէլէն ու պըզովի Փասօնով  
խնդալէն, անպէս օր պերնէն շողինքները կաթեցան ու ճուռոտ  
ճպոտ աչքերը սխմըվեցան ու թամամ պատուած սամսալի  
լմանեցան:

—Հա՛ մարըդ լամ, Փօռսուիսով... էտե՞, իդա զակուանից  
ասածդ ինչ ֆող է. մէջի կեցող մարդիքը ինչ չէշիդ ին, մե-  
րոնց կըլմանին, չէ՛նէ ուրիշ մէկ սօյ պան ին... Հա՛, մոռացայ  
հարցնելու, քանի՞ ամիս կեցար հոն:

—Զակրանից կեցայ, ճանրս, ամենը-ամեն էրկու ամիս.  
մէկ ամիսը անցուցի Աէնա, մնացած մէկ ամիսն ալ քալեցի  
Փառիժ, Սթոազպուռք, Ուլում ու շաա ազպէս տեղեր: (Քիչ  
մը սուս կենալէն էտե.) Հա՛ճէ՛ ես ծեր խելքը ինչ ասիմ. դա-  
կուանից կասիք նը խո՞րդ մէկ թէօյֆէ պան կիտիք. իտա  
ալալը, ինչ որ տեսանը, պօհըմ քլենուս, մեր Ռասաօվին չա-  
ժէ: Ինա Սթոազպուռք կասիննը, կիտիք քի խո՞րդ մէկ չի-  
կանըվելիք քաղաք է. մեր մեծ Սալան տեսիլ իս—Ֆսեռավ-

\* Սոյն գրածքը մենք ստացել ենք պ. Եր. Զահաղիզից, որ իրա-  
ւունք է ստացել տպագրութեան լանձնելու՝ նորա սեպհականատէր Տէր-  
Մկրտիչ Գան ձապետեանից: Ժամ. խմբ.

նօ իտիպէս մէկ պան է, սօխախները նեղ, տուները սըխմը-  
ված, հայ-հայ մէկ մէկու վրայ կելլին, նեղվածք. մէջը էնկ  
վաժնը պանը նարա ուռնան է, նարա եալ ֆէնտը չի տեսած  
մնացինք. փռէտսթավլենիա է, ինչ հօրս ցաւն է, չորս սա-  
հաթին պիտ պաշլայէր, մենք ալ ժամանակ չունէինք կենա-  
լու, ամպէս ալ չիտեսած մնացինք: Ուռնա կասին նը մէքամ  
մեծկէկ սահաթ է. ասածներէն կայ-նը, մէջը չէշիտ-մէշիտ  
փռէտսթավլենիաներ կըլայ. ատէն-ատէն մեր սօխախները չին  
քալցնուլ ինա հայլիով առկանը, մէջը փատէ խըմածիկներ կը-  
լազան նը-իդա սօյ մէկ պան է շտէ. չըտեսածիս հէչալ փոշ-  
ման չիմ. փորս քշտացնելու խօմ չէր: Մէջի (կօյեա Սթոազ-  
պուռկի) մարդիքն ալ վատուժ, ճագած, փորերը քաղցած....  
փամիլըլ, կերածները ինչ է որ...

—Ի՞նչ է իտա ասածդ, Աֆանասիլ Իաքուլիչ, նէուժէլի  
բոլոր աշխարքի կոված զակուանիցը հէչ մէկ աղէկ պան չունի-  
չէ՛նէ տուն քալած ու տեսած չիս:

—Վո՞վ քեզի ասաց. ալալ տեղ քալեցի, ալալ պան տե-  
սայ, չի քալած տեղս, չիմացած պանս չի մնայ. ամմա ինչ  
ալ առնուս ալալը մեր տեղը կայ. հոն հէչ ամպէս պան չի  
կայ, որ ես՝ Նախընկան, ես՝ Ռասսուօվ չի լար: Զակուանից  
կայ—Ռասսուօվալ խօմ կայ ատ պանը, ասօր-վաղը Աս-  
տուժով Նախընկան ալ կըլայ. հոն պուլվաթ կայ,—մենք  
ալ ունինք խօմ, մէկ չիկտնըվելիք պան չէ. հոն կտղովըլ ֆէ-  
նէռներ կան,—Ռասսուօվ ալ կայ խօմ, հոն հալաւը ու հա-  
լաւցուն աժան է,—Ռասսուօվ ալ խօմ հազիր հալաւ կըծախին  
ու հէչ ալ զակուանիցէն թանկ չէ. Ռասսուօվին Նօվըլ-պազարը  
կընացիլ իս, ճուհատներուն մանտու-մանտու խանութները  
մտիլ իս. աղէկ պարին հոն ալ թանկ է, ամա հոն ալ աժան  
չէ: Ետե, ինչ մնաց զակրանից մէկ արմնալու պան... Զաթօ,  
հոսի էղածները հոն ցորեկը ֆէնէռով չիս կուտնուլ: Հոն վո՞վ  
քեզի կուտայ մեր եղոտ, թազէ, կաթի պէս մատղաշ օջիսարի  
միսը. վո՞վ կուտայ քեզի մեր պազարի փուխի պէս կակոդ, տաք,  
աժան հացը. վո՞ւտեխէն պիտի կուտնուս մեր ասէթուտն, որ  
խաշած, պուվերը էլլելէն, պալտպան պիլուտով կը պերին,

«Թօլին վրրան կը գնին, տուն ալ, հոս նայէ, կըկտուիս վրայ-  
էն մեծկէկ կուտոր, վրան աղէկ մը լիմոնը կըքամիս, չինիիտ  
քէնարը կառչից ու աղ կըտընիս, կառնուս պալապան տիլիմ  
հացը, մէկդի կը քաշվիս, կըպաշլայիս քեզի համար ուտելու.  
ասաց Փօռսուխին Աւազը, պերանէն ճուրերը վազելէն. փամի-  
լը՛, ինչ է քու ասածըդ. զակաանիցը շնա հեռու չէ Ռասսէ-  
լին էտեէն հասնելու: Հաշվէ երկու ամիս կեցայ զակաանիցա,  
ամա օր չէղաւ որ փորըս կուշտ հաց, եա միս, եա ատ սօյ մէկ  
պան տեսնէր:

— ԱՓանասիյ Եաքուլիչ, ասի, ասինք որ հացի ու միսի  
զիաց մեր տեղը զակաանիցէն աղէկ է. նէուժեղի իտա աշխար-  
քի կոված տեղը հէջ մէկ աղէկ պան չունի: Երոր աղպէս է-  
նը՝ հապա ինչո՞ւ Ռասէլէն մարդիք ամեն տարի հազարներով  
հոն կըվազին. հեպէտ մէկ պան կայ որ՝ ամենքը տեսնել կու-  
զին իտա զակաանիցա ասած տեղդ:

— Կայ, ինչու չէ՛, ալայ պանն ալ կայ. թէք որ ստակ  
այեամիշ մի անիլ. թեաթու ալ կայ, մասքէռատ ալ կայ, ես  
ինչ կիտնամ, պանք ալ կայ, պուլվաթ ալ կայ, պահչաներ  
ալ կայ, ալայ պանը կայ... Է էտեւ, հոս եա Ռասուով չի կանչ,  
ինչ. сдѣлай одолженіе:

— Հոնի թեաթուը կընացիր, տեսնը, ինչպէս է...

— Ես ատ սօյ պաներ շտա հաղ չիմ անիլ սմա՛ մէկը-էր-  
կու կընացի. կընացածիս ալ պատճառը քեզի ասիմ: Արխա-  
տաշս մէկ օր կասէքի ինծի՝ «Հածէ Աւազ, կասէ, կուզիս  
ասօր թեաթիլը էրթանք, կասէ, նայինք, կասէ, հոսի թիա-  
թիլը ինչ սօյ պան է, կասէ:— Չէ՛, չուզիմ, կասիմ, ես քիչմը  
կըկենամ, անկէ եաքը քուն կըլամ, կասիմ. գէրէ յորձուկը  
կուշտ առլէքին կերել էի (եաքը ես քեզի տեղով կըպատմիմ՝  
ինչ սօյ պան է ատ առլէքի ասած կերակուրը) քունս ալ պէ-  
թէր կըտանէր: Արխատաշս էլլաւ ու «պօշ պան է քուն յայը,  
ասաց, հանդէ էրթանք թեաթիլը, անկից ալ կասթիննիցա կեր-  
թանք, աղէկ ուժին կուտեցնում քեզի», ասաց: Ուժինի անուն  
որ լսեցի, համան քունս փախաւ աչքէս: Կընացինք: Ինչ մեղ-  
քըս պայիմ, թիաթիլը որ մտանք ու տեղերս նըստանք-նը՝ ես

խաղացողներուն վրան ալ չի նայեցայ, սէյր անողներուն վրան  
ալ. իմ խելքս միտքս արխատաշիս խոստացած ուժինին հետն  
էր. սուս նստիլ իմ ու ինքս ինծի միտք կանիմ՝ աճափ ինչ  
պիտի ուտինք, աճափ միսեղէնը պօլ կլայ, փորերս կըքշտաց-  
նէ՛, չէ՛նէ, ափեի-ցփեի, ճիլի-միլի պանիլ պիտի պերին տի-  
մացներս տնին: Ասված հաւատա՛ սուտ չէ ասածս, մեր տեղի  
խա խատար պըզդի տղան (վուճը կետինէն կէս կազ վեր կը  
մօտեցունէ) նացա պալապան մարդոցմէն շատ կուտէ: Փամի-  
լը՛ պուաթից թըլի մօյ, նոցա կերածին խատար մեր տեղի քա-  
նառէլիքան որ ուտէ, ախաչը, էրկու օր չի քշլլ, կիչնի կը-  
սատկի: Տիմացս էրիմարդ կինիմարդ (խօսքս խաղացողներուն  
վրան է) իրենց մէջ կալածի կանին, կըկանչվորին, տաղեր  
կասին, կըխաղան, մէկալ սէմթէն սէյր անողները չտփ կը-  
զարնին նացայ— իմ ումուսուիս ալ չէ՛, վրաները նայել պիլէ  
չուզիմ. ես միտքովս մեր տեղի կերակուրներուն հետն իմ: Մէ-  
մը միտքս կուզայ պալապան սուփնիքով խտըլի-պէրէքը, որ  
տաք-տաք նես կըպերին՝ վրայէն սօխաածին ու ցեթուինին  
հոտերը զայէն. խօճատէնէկ կուլուս խորունկ չինիիտ մէջը ու  
կըպաշլայիս չի ծամած լօք-լօք կուլ տալու. մէկ չինին խալ-  
սեցարնը, համան շերեփով էրկուսուժը կուլուս, կըքաշիս արջւզ:  
Ետքէն միտքս կուզայ մեր հէրիսան— վրան սօխաածը ու մաւ-  
տուած շաքարը պօլ, տնկից ալ էրկու տապուա՝ օպալամա կը-  
տնիս չինիիտ մէջը, կուտիս ու չիս քշտանալ: Հնապ մեր չըռ-  
չըռ սաճսան, հնապ պօլ եղով պուլղուր փիլաֆը. հնապ ծու-  
կով թելըաց կուպաթին. հնապ խաշած կուէլը կառչիցով—  
ան ինչ կասիս— ան. ատ կերակուրները չէքի զակաանիցի  
մարդը, նարա թաղաւորը պիլէ տեսած չէ: Ետե՞. ատ քաղ-  
ցածները մերինին հետը կուի պիտի պանան. վնչ նացա կուլ-  
խուն. մերը նացա հում-հում կուտէ, Աս-վա-ծու-կա կուտէ:

Աս որ ասաց միտքս պան ինկաւ: «Հն, ասի, սոս, փա-  
ժայրսայ, տեսնը զակաանիցի վօյքան, ինչպէս ին»:

— Հապա չի տեսնայ, ալայն ալ տեսայ, ասաց Աւազը. աֆս-  
թուիացին— ան պօշ, ալայը՝ քաղցած, փօրերը նես պաթած,  
վատուժ-մատուժ պաներ ին, թամամ չորցած չէլէկ-ծուկ,

Փրանցուղինը, մըց էհ. ան ալ մէկ շիքեար պան չէ. փռու-  
սինը, խորդ է, անկիցներէն մէտօմը ֆօլմով է ամա՛ մերը, տուն  
լինչ կասիս, թամամ առիօլ է նացա տիմացը: Մերը արիշ-հաց  
կուտէ, մերը քաշա կուտէ, վրայէն ալ քուվաս կըխմէ. տուն  
արիշ-հացին հետ շախա մի անիլ. ան արիշ-հացը ու քաշան  
մարդուս ասլանի ուժ կուտան: Զակուանիցի սալտաթին կերա-  
ծը ինչ է որ—թուխտի պէս պարակ մէկ ղիլիմ հաց, մէկ  
ավուճ մալ մաղտանոս—էղաւ կընաց. աղէն աղէն ալ ուռէլի  
քալպաս կուտան. էտե՞, ատով մարդու փո՞ր կըքուշտանայ:  
Մարդս, Ասվաճ կըսիրիս-նը, պօլ չուտէ, վրայէն ալ աղէկ չի  
խմէ, ուժը ուտելէն թօղայ վրան: Ես քեզի կասիմ ու, իտա  
զակուանիցի մարդիքը, մեղքիդ տէրը ըլամ որ, մէկ օր մեզի  
պէս կուշտ-փոր կերած ըլան: Նոցա ուժը վո՞վ տուվիլ է. մեր  
մէկատիկ սալտաթը նացա տոտնին տիմաց է:

—Իսա ինչ է ասածներըտ, ասի, մարդ կը խեցնուս ինչ  
կանիս. հնապա արարած-աշխարք զակուանիցը կըկովէ, հէմ նա-  
ցա մարդոցը ուսումը, հէմ նացա աղէկ-աղէկ տեղերը, հէմ  
նացա զէնկինութիւնը, ամա՛ քու ասածներուտ նայիսնը՝ ալայ  
զակուանիցի մարդիքը մեր պօսըլ քամանտի պէս մարդիք ին...

—Հապա ինչ ին, որ պօսըլ քամանտ չին-նը. Ասվաճըտ  
կըսիրիս մէկ մարդ, որ փիթուն օրը քաղցած լանը տուն ատ  
մարդումէն ինչ կըպահտնճիս: Հնա, սուտ չէ, խորդ է, նացա  
Փապուիքները, նացա մաշինները կոված ին, նացա հնճարած  
մօտը ամենք ալ կուսղունին. ամա ատ Փապուիքները, ատ մա-  
շինները, ատ մօտնի հալաւները կուտվին—ինչ. նաքա մար-  
դուս փո՞րը կըքշտացնուն—ինչ: Ա՞նվ նացա տուվիլ է մեր Աս-  
ճու օրթնած տաք-տաք եղոտ մատաղի միսը, ատոր համը նա-  
քա կիտին: Նաքա էրեսը տեսիլ ին հիչ մեր թագէ ասէթ-  
ուային, իլլայի որ վրան աղէկ սօյէն լիմոնը քտմած, հետն ալ  
կառչից ըլայ: Ա՞նվ նոցա տուվիլ է մեր ծմերուկը, որ տանա-  
կին ծարը կպաւ-իսէ՛ թանու կանէ, ինքը իրեն փաթլամիշ  
կըլայ: Նաքա իրենց կեանքին մէջ տեսիլ ին մեր չորս մա-  
տիս հաստութիւնը խայմախը..... Թուքնում նացա մաշիննե-  
րուն վրան, երբոր սաղ օր փորս քաղցած պիտի մնայ-նը: Զէ,

ես ինչ ասիլ իմ-նը՝ կէնէ ան կասիմ—Ռասսէլին պէս Փող հէ-  
մէկ աշխարքի մէջ չի կայ. մեր թագաւորն ալ զակուանիցի  
թագաւորներէն զօրպա է, մեր վօյսքան ալ նացա վօյսքայէն  
ուժով է, մեր Փողն ալ նացա Փողէն ռաժայնը է: Փուսվիլիւն,  
կօյեա հացին, միսին, ծուկին համար ասիս-նը մեր Ռասսէլը  
զակուանիցէն վէր է ու վէր է: Փամիլըլ, մեր մուժիքը թէք պա-  
նել ուղենայ՝ Փողը նարա տիմացը վվօլիու է—վարէ, ցանէ,  
ինչխատար որ ուժըտ կը հասնէ: Զակուանիցին Փողը ինչ հօրս-  
ցաւն է. նացա մուժիքը տասը-տասվերկու կաղ կետին ունի—  
ատ է-շտէ նարա ցորեն ցանելու եալ, քաւթօֆիլ ցանելու եալ,  
խոտ զարնելու եալ, իրեն կենալու եալ, թուվար արձեցնելու  
եալ տեղը, ատկէ աւելի հէչ ուրիշ պան չունի: Ասն, փաժա-  
լըստա, մարդը ինչպէս պիտի կընայ ատով հէմ ինքը կուշտ-  
ըլլալու, հէմ սէմէյսթվան քաւմիթ անելու, հէմ ալ թագա-  
ւորին փատուշնին տալու. էղաւ որ տարին-տասվերկու ամիս-  
օդորմելին քաղցած փորով պիտի մնայ տա: Զէ, տուն ինչ  
կասիս. զակուանիցին շատ հեռու չէ մեր Ռասսէլին հետ կուժ  
պանալը. քաղցած կըսատկեցնունք. նացա դէմ վօյսքայով էր-  
թալ պէտք է որ. ինա հաց չի տուին-իսէ՛ ալայն ալ մէմէկ-  
մէմէկ կըսատկին: Տուն Ռասսէլին հիտ շախա մի անիլ:

—Աւագ-ա, ես տէյէմիշ կանիմ օր ինչ պանի վրայ եալ  
չի հարցունիմ, տուն սալթը խօսքը կերակուրի կըտառցնուս,  
սանքի փիթուն զակուանիցը ուտելու պան չունի ու ինքը  
միտքը մենակ կերակուրի վրայ չէ: Զակուանիցի մարդը, քու  
ասելուդ պէս, փիթուն օրը քաղցած կանցունէ-նը՝ ինչպէս հա-  
պա կըցիլ ին նաքա ասխատար ղիտութիւն, մաշիններ, Փապ-  
ուիքաներ, ես ինչ կիտնամ, ասխատար վաղուշնըլ շաւէր,  
էլէքթուիչէսքիլ ասֆէշչենիա հնճարելու. հէչ քաղցած մարդը,  
Ասվաճը կըսիրիս, ասխատար իմաստութիւնի տախատիթը կըլայ:

—Անվ ծեղի ասիլ է զակուանիցի մարդոց ատխաթէր կի-  
տուն-իմաստուն էղածը. ես փիթուն Եվուօփան քալեցի, հէչ  
մէկ ատպէս արմնալու մարդու ռաստ չէկայ, տլայը փուսթոյ  
մարդիք էին: Մեր տեղն ալ խօմ ատէն-ատէն, տեսած չիս  
հիչ, կուղան նաքա,—ինա մուկի խափխտններ ու էրկաթէ



Այուտէ, վրայէն ալ քուլաս կէխմէ. տուն արիշ հացին ու քաշային ուժը կիտին. մարդու թամամ ասլան կանէ:

— Աս, փաժայրստա, ասի, տուն շինտի Ռատուօլին արուօփնըյ բեատը կուկցիր. իզի պէս զաւէտէնրա չըկան:— Ինչ զակուանիցա:

— Կայ, ինչու չէ. ամա մեղք որ ատ պանը ես շատ ուշ իմացայ Փարիժ էղած իքէնս. ամա հոնի ասլօուսին մերինին ֆասսոնով չէ, ուրուշ չէշիտ է. մեր տեղինը ինչ ալ լանը փուօթիլ է, փուավիղիան ալ աժաննոց է— միա է, կապուստայ է, չուքունաուր է, սոխ է, քաւթօֆիլ է. ամա հոնինը ուրիշ թիւրիլ է, համն ալ աւելի տէլիքաթնի է: Ես քեզ պատմիմ ինչպէս հաթօլիթ կանին հոնի կերակուրը, որ նացա լուզուլով աուլէքին կասլի: Աուլէքին ասածդ ասպէս կըլայ. զէնկին տուներու ու թանկնոց կասթիննիցաներու փուլուսները միասֆիրներուն չինիներէն ինչխատար չիկերած պան կըմնայ, ալայը մէքամ պալապան ֆիչիի միջ կուլուն ու կըպալին իրենց միշտէրիններուն համար. որը կուղայ խոզերուն համար կառնէ, որը իրեն կուլին համար, որը շունի համար. պաղարի թաւկովքաներն ալ ասլօուսի թաւքթիւին համար, չէլէքով— չէլէքով կը կընին ու պալապան քարէ ամաններով իրենց միշտէրիններուն արիմացը կըտնին: Աուլէքինը հէմ զիղալով պիտի ուտիս, հէմ չաթալով, հէմ ալ մատերովդ: Մէմը կըբողիս չաթալը պէնիբի կտոր կէլէ, մէկ ալ կը խողիս, տիչի օսկօս կէլէ, զահա կըխողիս չաթալը ծուկի կօլօս ես ոլօջ կէլէ, ուրիշ տասլուա եալ ցիկաուի կոճակ կէլէ: Գիղալով կերած ատէնըտ մէմը պերանիտ կառչիցի համ կառնէ, մէկալում տասլուան մաուօփնի, զահա կըխողիս զիղալը ամանին մէջը ու կ'տանիս պերանըդ՝ քացախի ու փուավանսքի եղի համ կառնուս: Մարդուս հօշին կուղայ. հէմ կուտիս, հէմ ալ կըխնդաս: Աուլէքին զաքուսքա արած իքէնս փութիքալի ու լիմօնի կճէպ կերածս շատ: Նագեր ծախելու ու ցէռէմօնիներ անելու խատիր չիս, զէրէ աուվածտ ինչ է որ— ճէմը մէկ սու, որ մեր հինութվա ստըկով հինկ քապիկ ասինացի է: Հէմ աժան, հէմ կուշտ, հէմ ալ չէշիտով:

— Հնպա առխատաշներդ կասին քի հէմ իրենց, հէմ ալ քեզի համար մարդայ տայմա Ծ-ական ֆուանք կուտան էղիլ է կերակուրի համար. հինկ ֆուանքը մեր ստըկով հայ-հայ երեք մանէթներ կանէ ու, էաւ ատ քիչ սասակ է— ինչ:

— Սուտ չէ, խորդ է, ամեն օր հինքական ֆուանք կուտայինք ամեն մէկ ապէտին համար, ամմա տասնական ալ մարդայ տըվածներս կայ. ամա ինչ ֆայտա. զակուանիցին կերակուրները ամպէս փուսթոյ պանին, որ ինչ որ նաքա ապէա կասին-նը՝ մեր տեղի մարդը կըկրնայ մէկ պուտղուց պուռնութիի պէս քիթին ծակը խողելու, զակուանիցին կերակուրին մէջը ուտելու պան կան որ: Մէկ չինի ասուր կըպերին կըտընին առջևը (ճիրի-միրի պան) «աս քօնսօմէ է», կասին, հետն ալ պիլիկ մատիս ծարին խատար ոամոս, «աս ալ կաղօէ» կասին: Ետքէն կըպերին — ճանս, էրկուատ պըղտիլիկ ծուկ՝ ասեղի պարակութինով— «աս թաղէ տապկած սառաինքա է», կասին: Ետքը կըպերին թուղայի խատար տապկած չէլի խուշ— ատ ալ «պէքասըն է» կասին: Ետքէն կըպերին մէկ զիղալ շաքարոտ խլինք, աս ալ «ժուլէյ է» կասին. էնկ վերջը կըպերին ինա պապաքում-մամաքում ստած արօտը, աս ալ «սալաթա է» կասին: Ատ էղաւ հորձուկուղ հացը, որին համար կըկոխին կառնուն հինկ ես տոտը ֆուանքըտ: Հա մուացայ ասելու, հացէն ետքնայ, կըպերին ճանս, օյմախի մեծութիւն կաւաթով, առանց կաթի խաֆէ: Ե՛տեւ, ռասսէլսքի մարդը ինչպէս սլիտ կընայ քշտտնալու ատ քանառէլքայի եմօվ: Լայլած կերթալի աղլի աուլէքին ծախած թաւքթիւր, որ հէջօլմասա փորիս ճուճուն ռահտթցունում:

Հա, սուտ չէ, խորդ է, սթօլին վրան տիմացըտ կըտնին մէմէկ փիթիլքա կինի, ամա փիթիլքան մեր տեղինին խաղէրը չի կիտնաս. ինա վօխմանովի քափիլին շիշան չի կան, թանմամ ինոր մեծութիւնով մէքամ փիթիլքա կուտան քեզի, մէջի էղածը ակուաներդ ցայելու չօղտիլ, չէքի խմելու. ամա իլվանը մեծ է «կինիով ապէտ է» — իմիշ: Անիսէ, անոր անղը մեծկէկ փարչով փուսթոյ քուլաս տանը՝ աւելի բավական պիտի մնամ կիտիս. հէջօլմասա հէմ մարդուս ծառաւը կըկտուէ, հէմ ալ

փորը կիլիքցունէ: Չէ, տուն ինչ կասիս. կնն, արարած աշխարք քայէ, մեր Ռասսէին պէս տէրութիւն կտնելու չիս. մարդուս էնկ պէտքական սլանը հէմ պօլ է, հէմ աժան: Իտա դակուանիցին քաղցածնէրը վայնա պիտի պտնան մեր ուուսին հետը. վայ նոցա կուլխուն, մէկ շաբաթ չի քշել, ալայը ծմեռալ ճանճերում պէսնակ կըսատկին, եօխ կըլան: Մեր սալտաթը, հոս նայէ, աղլի արիշ հացը քուշտ կուտէ, վրայէն ալ քաշան, անոր վրայէն ալ աղէկ մը կըխմէ թութու քուվասը, ուռն կանչելէն վրաները կըթափին, մինութ-սահաթ-վայ մէջ ալային թուրի կառնուն: Տու Ռասսէին հետ շախա մի անիլ...

—Ան չէ ամա, ասի, ինչպէս էղաւ որ տուն զակուանիցա զնացիր. կիտիսքի տուն հոն դործ չունէիր-ու. պարի տարիր, չէնէ պարի պերիր, չէնէ քամիս ունէիր:

—Պարի ալ չառի, պարի ալ չի պերի, քամիս ալ չունէի: Իմ զակուանից երթալս հէքիաթի պէս մէկ պան էր. հայա՛ բարեկամիս մէկը մէքամ ավըրված սահաթ ունէր, ու չունքի մեր սէմթերը նարա փաչինքա անող վարպետը չէր կտնըվէրնը՝ բարեկամիս խելքը փչից զակուանից տանիլ: Սահաթին ինա կոթը չիկայ, — իտա պանը — շտէ, դայ էղիլ էր. մեր տեղի սահաթճիները վիրտ վրան խալայլամիշ արիլ ին՝ ամպէս որ կոթը հաստըցիլ էր ու նեսի չառխերուն նեղութիւն կուտար. սահաթը զակուանից տարինքնը՝ հոն մէքամ աղէկ վարպետ կըտանք, որ եօռլիսով ստհաթին աղլի հաստըցած կոթը պարակցնելու, ֆասօնի պերելու:

—Պանտ-դործտ թողուցած ինչու էլլար կընացիր. տուն հոս տօլժնըսթ ունէիր-ու:

—Չակուանից կնացիրնը՝ տօլժնուսթս արդըլի վերջացած էր. ամիսը հարուր մանէթ հախ ունէի, տօլժնուսթս ալ խիստ թեթեւ պան էր. առմտն ինճի հրաման արիլ էր մեր ծովին քենարը կայնելու ու ճուրին մէջէն անցած ծուկերը համպրելու. ոահաթ գէնեաթ: Սմմա տուշմաններս մէյտան էլլան ու հալխին հաւատացուցին քի ատկէ քաղաքը հէջ մէկ քապլիկի ֆայտա չունի. ինչ պէտք է պօշ տեղը ստակ վօթելը:

—Ծովին ծուկը համպրելէն առաջ ինչ տօլժնըսթ եա զէնիաթ ունէիր, հարցուցի նարա:

—Անկէ առաջ, ճանս, ինա իրատներու ուկօլը չի կայ, պամպասարանէն քիչ մը վեր. շտէ հոն սապահթփնէ ինչի իրիկվան չանկերը, կըկայնէի ու անցնող տաուցողներուն վրան խուտուղան շունի պէս կըհաջէի:

—Ա՛տ ինչ խուճուռ գէնիաթ է... ամօթ չէ՞ օրինաւոր մարդուն շունի պարտաւորութիւն վրան առնելը. ասի զարմացած ու սիրտըս էլած:

—Չէ, ճանս, ատպէս մի դատիլ: Ինչպէս կերուտ, տուն մեր քաղաքը հէջ չիս ճանչնալ-էղիլ է: Նեուժելի իսա տարիքըս էկած, տահա չիտիս, որ մեր տեղը հաջելը ֆայտասըղ ու վար գէնիաթ չէ: Հաջելով չէ՞ որ ասխատար մարդիք սըր քըլասնըլ էղտն, որը չէն, որը հողաբարձու, որը իրէցփոխան, որը պատիւի հասաւ, որը նօմայ ստրկի տէր եղաւ, որն ալ տախօտնըլ տօլժնուսթ ծեռք ցըլից. ալայը հաջելէն էր: Ամմա հաջելուն մէջն ալ մարիֆէթ կայ: Հաջելէն չէ՞ որ մեր պէրպէր Օվանէսը հէմ իրեն մէջքը տաքցուց, հէմ ալ իրեն ֆայտալը բարեկամներուն. տուն կիտիսքի իրեն գէնիաթին մարիֆէթութիւնէն է — շատ եանլըշ իս: Մի հաջիլ, տունըս փակված նիստ. ատկէ ինչ կըգոյանտ: Անէ որ կորտար-տա: Լսիլիս, մէկ խօսք կայ քի «իրեն տեղը ծանտու կեցած քարին տակէն ճուր չի վաղիլ». ամպէս ալ մեր պտնն է՝ չի հաջիս նը՝ քեղի մէկն ալ մարդու սըրա չէ տնիլ: Տուն ինչ կասիս — հաջելուն մէջ շատ պան կըտեղաւորվի: Մէմը չորս քովրտ նայէ. իսա մեր խոշոր-խոշոր աղաները ալայն ալ իրենց փառքին ու պատիւին հասիլ ին եա հաջելէն, եա իրենց մօտիկի մարդոցը հաջեցնելէն: Ասօր-վաղը, կիտիս խօմ, քաղաքիս մէջը քլասնիներ, չէններ, կալավա ու սէքլէթար պիտի ընառվին. տուն մէմը նայէ ինչխատար հաջան շուներ հաւըլ-հաւըլ մէյտան պիտի էլլին: Տուն եօռլիսով հաջելը շախա պան կիտիս:

—Աղէկ, խալիլ իմ, որ հալխը հաջելէն, ետ հաջել տալէն, չէշիտ-չէշիտ ֆայտաներ կըլինտուէ ու կըկտնէ. տուն ինչ ֆայտա ունիս ասկէ:

— Ե՞ս, ասաց քիթին տակէն խնտալէն ու աչքերը ճրգմելէն Փռսուխին Աւարը:

— Հա՛, տուն, ասի:

— Ե՛ս ի՛նչ Փայտա ունիմ, ասաց նա նորէն. իմ Փայտաս ալ Հալխինէն պակաս չէ, աւելի չիլայ-նը: Ախր ու տուն մէմը աղէկ միտք արա քի, ես ի՛նչ ամպէս մէկ չիտնըվելիք մարդ իմ որ, ո՞ր աղային օրդին իմ, վո՞ր նէվէռսէթին մէջը քուռսը քանչաթ արած իմ. ծոցս մի իլինք է ստրկով, չէ՛նէ տեսքը ու կէնճութինը էրեսէս կրկաթին... Ամմա, աս օրվայ օրըս, Հոս նայէ, մեր պամպասարանին էնկ-վէռվը չէ՛նն իմ, տու-մային մէջը քլասնը իմ ու վարժատունին մէջն ալ Հողաբար-ճու իմ: Տա՛հա ինչ կուղէիր: Աս ալայը, կիտիս ինչու ծեռքս ինկաւ. անոր Համար, որ սասալահթ վանէն մինչի իրիկուն, աղ-լի ուկօլը կայնած, չորս քովս մէկալայմը շաշխըններ թօփ արած, սաղիս ու սօլիս կըհաջիմ: Հա-պա՛, սրս-լաս, Հապա տուն ինչ կիտէիր: Եօռլիսով հաջելուն մէջ շատ պան կրտեղաւորվի: Տուն կէնէ ասա՛ քի հաջիլը դէշ պան է, հաջելը մեղք ու ամօթ է, հաջիլը շուներուն կըվայլի, չիտիմ-ինչ, չիտիս-ինչ: Չէ, ճանս, չիս հաջիլ՝ չիս ուտիլ: Ինճի պէս պալապան փորով ու կալի իշթահով մարդուն կըլա՛յ քաղցած օրեր անցունելը:

— Ասինք որ հաջելէն կլասնի ու չէն էղար. էտե ինչ շահ ունիս ատկէ. եա ուրիշը քեզիմէն ի՛նչ շահ պիտի ունենայ:

— Քլասնի լալըս, չիտիմ, ուրիշներու համար Փայտա ունի չէնէ չէ, ամա ինճի համար մեծ Փայտա է:

— Ասա՛ նայինք, ի՛նչ Փայտա ունիս:

— Օ՛, Փայտաս շատ մեծ է: Իսա մեր տուճային մէջը ամպէս չէ՛ որ ինճիմէն պաշխա տահա եթմիշ մէկ քլասնի կան. իղտ ամեն մէկը անուն ունի չէնէ չէ. իտա անուն ու-նեցողը տօն ալ ունի, չէնէ չէ. տօն ունեցող տարվան մէջը հէչ-օլմասա մէմը սթօլ կըտնէ, չէնէ չէ. ես ալ ինչպէս տուճայի քլասնի, իրաւունք ունիմ իմ արխատաշիս էրթալ ու տօնը շունորհաւորելու, չէնէ չէ: Եղաւ որ տարեստուտը եթմիշ մէկ Հորճուկու հացս ապեսիէչէնի է, ու տունս խարջելու ստակը ճէպս կմնայ: Ո՛վ մարդ, ի՛նչ է քու ասածտ. Ասած մեր սուրբ

Հայրապետներուն Հողիները առքավութին տանէ, որ նաքա աս-պէս խօլօք զավետնի մուտցուցիլ ին մեր մէջը: Իրիվանէ մէ-մը օրացուցը կպանամ, կնայիմ վաղը տօն կա՛, չէնէ չիկայ. ալ ինա մեր հալխին անուններուն տօները էղան իսէ՛ մէջերէն իրեքը-չորսը կընտուիմ—ամա ամպէսներուն, որոնք ատէթ ու-նին քիչ մը տառաթլը սթօլ պանու, ու մէկալում օրը սահա-թը տասնըմէկին-տասվերկուսին նշան տրած աղաներուն (ար-դըիս Ակոր մի կըլայ, Մարկոս մի կըլայ, Կարապետ մի կըլայ) տունը, նես մտած-չի մտած, սլովէն աչքէ կանցնում սթօլին վրայի զակուսկաները. ալ ինա սթօլին օրթան տեսայ աղլի սլալապան քէսէք խաշած ասէթուան ու քիչ մալ հեռու չէ-շիտ-չէշիտ կինիներով փիթիլքաներուն պաթառէլը, ան է որ անանդ միտքս կանիմ թէմէլ ձղելու: Չուղենալէն կըմօտկընամ թանկնոց քօնեաքին, մէմը-էրկու կըղարնիմ տօնաւորին կենս-ցը, ետքէն կառնում մէքամ չինի, տանակ, չաթալ, չինիին մէջ սիֆատ կուլում լիմոն ճուր, քիչմալ կառչից ու աղ կըտ-նիմ, կըմօտկնամ աղլի ասէթուային, ասնակով չորս մատիս հաստութիւնը կըկտուիմ վրայէն, կըքաշվիմ մէկ թէհնա փէն-ճէրէլի առջև, մէջքս դէպի միսաֆիրները արած՝ կըպաշլայիմ իմ պանրս: Առած կուտորս ֆունթ ու կէս-էրկու ֆունթ էղաւ նը, ան է որ ան օրվայ հացիս ստակը ճէպս մնաց: Ատ որ լը-մնցուցի, կէրթամ կըմօտկընամ փիթիլքաներուն, դէրէ ծուկին վրայէն աղէկ կինին կըպաթի. նորէն կըմօտկընամ տօնաւորին, ինչ-սաիս օւթնէնք կասիմ, որ էկած տարի եալ Ասված սաղ սէլամէթ աս օրին հասցունէ էրկուսիս ու կըխմիմ կինին: Ատ-կէ ետքը ատէն-ատէն կըմօտկընամ, մանտո գաքուսքաներուն, Հոս պէնիլի պղտիկ կուտոր կըտընիմ պէրանս, Հոն դիղային ծարովը մէտօմը կառնում մալասօլնի խայվարէն, դահա անդին պօխքը կըթաթիլիմ աղին մէջը ու պերանս կըտնիմ—սանքի սղտի-մղտի բան ուտողս իմ տէլին, որ մարդիք թահմին չա-նին քի՛ տօնշունաւորի անունով փար-քալցնող իմ: Աս օրը կերակուրին Հողը Հողացի, պաղարին ստակը ճէպս մնաց: Եբոր ասպէսով տարվան մէջ հէչօլմասա հարիւր տեղ մուանում-էլ-լիմ նը, շտէ քեզի քլասնի ըլլալուս Փայտան. տահա ի՛նչ կու-

դիս: Տարեպուտուտը հարիւր թանկնոց ու քուշտ դաքուսքա իրեն քօնեաքով կինխովը ատ ֆայտասը՞դ պան է—ինչ: Աս մէկ: Չինտի տուն ինձի ասս. տարին 2—3 ժում թաղաւորական տօն, աչքիւուս, փսակ չիլալ. էյ-շտէ, մալէպինէն ետքը քըլասնիի անունով կէրթաս խօճատէնէկ, կալավային տունը (հէպէթ, նաեալ, հոս նայէ, թաղաւորին պատիւին համար դաքուսքայի սթօլ պացած կըլայ) հոնէն ալ պարապ փորով ետ չիս տառնալ խօմ: Աս ալ քեզի էրկու: Տարին 3—4 ժում տուսէն մէկ նաչալնիք ետ մէկ մեծաւոր չի դալ քաղաքս. մեր դէնկին աղաներէն մէկը-մէկը նարան հաց չի տալ. տուն ալ-շտէ, հոս նայէ, քլասնիի անունով կըպատահիս ատ թանկանոց հացին: Աս ալ քեզի իրեք: Տունայլ՝ ժողոտանքի ատէն աղաները կըպաշլային մէկ փուսթօյ փուկտմլ.թի վրայ սփօռ անելու, կուտան կառնուն ու վերջը-վերջը քըլստուլին. տուն մէջերը կըմուտնուս, աղէկ մարդս կըլաս, կըպարշցունուս. արալըխտա էրկու թիաց ալ մախառիչ մէլտան կէլլէ. կեր, խում, մուզիք, աուն ալ մէջերն իս քլասնիի անունով,—փամիլըյ, քէֆ է ու, մեռնիլ պէտք է որ: Չինտիս հասկըցմը ինչու ետ չախալ չախալ կուգամ, որ քլասնըյ ընտուովիմ—տէլին: Տուն—իմիշ՝ ինչու ուկօլը կայնած, կըհաջիմ: Հտձէ, շաշխըն, չի հաջէինը, վո՞վ ինձի քլասնըյ պիտի ընտուէր: Հապա ան մոռցմը, որ պամպաստարանին չէն ըլլալէս ալ էփպէի փորիս շահեր կայ. որ տարին մէմը տլայ ժողովուրդով սատին մէջը քէֆ կանինք ատ հէչ. տուն ատ ասա, իտա մեր 5—6 հարիւր չէններէն տարին 3-ը - 4-ը չի իչնիլ, չին մեռնիլ: Ալ ինա մեռելին չանկը կըլսիմ իսէ՛ մէկ քանի մարդ կլօխս թօի կանիմ, շիտակ կերթամ մեռելին տունը, շտէ սըղաւորներուն խրատ աուվողս կըլամ, շտէ հանգուցեալին պատիւ տուվողս կըլամ, կըտակը կարգացօղս կըլամ. էյ շտէ պան չունիս, պամպասարանին կսղմանէ սուտ-խորդ պանի մէջ կըլամ: Տունեցիք կըտեսնին որ տուն շատ-ապրիս էրդին պէթէր սըտակից բարեկամ իմ-նը՝ հոգու-հացի, այդողքի, քառասունքի, տաղիի հացերուն ծան կուտան ինձի: Ատ ալայը հէմ պատիւ է, հէմ ալ թանկնոց փոր քուշտացնելու սլուչիներ է: Չինտիս հասկացմը հա-

ջելու զօրութիւնը: Ամմա հաջիլ կայ, հաջիլ ալ կայ: Մէկ քանիսը ամպէս կըհաջին, որ փիթուն քաղաքը իրենց տուշման կըտառցնուն. ատ սօյ հաջիլը ֆայդալը չէ: Հաջիլն ալ իրեն ֆէնտերը ունի: Հաջելու իրէնա խալրէթ պիտի անիս, որ կոլեա հալխին ֆայտային համար կըհաջիս: Աս մէկ: Մէկ ալ ամպէս պիտի հաջիս, որ ինչ դէնկիններուն սիրտը ցաւցունուս, ինչ ալ պօշ ճէպերով մարդու սէմթը անցած ըլաս...

Սիրելի նախջուվանցի, նկուժելի տահա տուն հասկըցած չիս, որ ինչ պանի ալ ճեռք դարնիս՝ ալայը փէռաա ու եօռիս-սըղ կէլլէ: Ինչո՞ւ կարմնաս, որ քու քաղաքտ տարվէ-տարի առաջ էրթալու տեղ տէպի ետ կըգարնէ: Տուն ինչու կարմնաս, որ հերան՝ կէղէն պէթէր Ռաստօլը ասօրվայ-օրս Նախջուվանէն տասը տապուա մեծ է ու նարա մէջը կեցողները նաջուվանցիներէս հարուր տապուա աւելի դէնկին ին: Տուն ինչու կարմնաս, որ Նախջուվանը աճելու, չիչէկլէմիշ ըլլալու, փրփրալու տեղ՝ քանի կերթայ կըպորպըսնի, կըխանկրու ու եօխ կըլայ քու ճեռքտ: Աս մէմը նայիմ, տարին-տասվերկու ամիս աուն վորին խելքով կըքալիս—Փօռսուխ Աւաղներուն. վո՞վ է քու քաղաքդ կառավարողները—Փօռսուխ Աւաղները. վո՞վեր ին պանքտ ման պերողները,—Փօռսուխ Աւաղներ. վո՞վեր ին տումայիտ կլասնիները,—Փօռսուխ Աւաղներ. վո՞վեր ին քու վարժատուններուն հոգաբարցունները — Փօռսուխ Աւաղներ:

Իտե՞, ինչ արմնալու պան կայ, որ սաղ քաղաքս տառցիլ է 5—6 հաղար Փօռսուխ Աւաղներով լցած մէքամ չօփլուք:

Ռ. Պատկանեան



# Փ Օ Ռ Ս Ո Ւ Խ Ի Ն Ա Ի Ա Գ Ը

(Գրական լեզուով թարգմանութիւն)



ետոյ, ասացի Փօռսուխ <sup>1)</sup> Աւաղին. վերջը-վերջը արժանի եղմոր այդ դաղըանից (արտասահման) ասած տեղերը տեսնելու— Հա՛, Հայ մայրդ լամ, Փօռսուխ Աւաղ, արտասահման էլ գնացիր, Հա՛:

—Հա-պա չը-գը-նա-ցի, կաշին էլ քերթեցի. ասաց Աւաղը հորթային աչքերը թարթելով և հորթի պէս խնդալով, այնպէս որ բերնից լորձունք թափուեց և ճպրոտ աչքերը սեղմուցին ու ճիշտ պատուած սամսայի <sup>2)</sup> նմանեցին:

—Հայ մայրդ լամ, Փօռսուխով. յետոյ, այդ արտասահման ասածդ ինչ հոգ է. մէջը ապրող մարդիկ ինչ տեսակ են, մերոնց նմանում են, թէ՛ ուրիշ տեսակ բան են... Հա՛, մոռացայ հարցնելու. քանի ամիս մնացիր այնտեղ:

—Արտասահման մնացի, ջանս <sup>3)</sup>, ընդամենը երկու ամիս. մէկը ամիսը Վէննա անցկացրի, միւս մէկ ամիսն էլ շրջեցի Պարիզ, Ստրասբուրգ, Ուլմ և շատ այդպէս տեղեր: (Փոքր ինչ

<sup>1)</sup> Փոռսուխ՝ նշանակում է մեծ փոր ունեցող.  
<sup>2)</sup> Մի տեսակ կարկանդակ է:  
<sup>3)</sup> Հոգին:

լուելուց յետոյ): Հա՛՛՛, ես ձեր խելքին ինչ ասեմ, արտասահման որ ասում էք՝ միթէ կարծում էք մի տարօրինակ բան է. այն բոլորը, ինչ որ տեսայ, Աստուած է վկայ, մեր Ռոստովին չարժէ: Այդ որ Ստրասբուրգ են ասում, կարծում էք միթէ որ չըգտնելիք քաղաք է: Մեր Մեծ-Սալան <sup>2)</sup> տեսել ես, համարեա այդպէս մի բան է. փողոցները նեղ, տները սեղմանձ, քիչ է մնում միմեանց վրայ ելնեն, նեղանձք: Քաղաքի միջի ամենազլխաւոր բանը նրա ուռնան է, նրա էլ հընարքը չըտեսած մնացինք. ներկայացում է—ինչ հօրս ցաւն է, ժամը չորսին պիտի սկսէր, մենք էլ ժամանակ չունէինք մնալու. և այդպէս էլ չըտեսած մնացինք: Ուռնա որ ասում են, մի մեծ ժամացոյց է. ասելուն նայելով՝ մէջը տեսակ-տեսակ ներկայացումներ է լինում: Երբեմն մեր փողոցներով չեն ման ածում այն հայելիով արգանը, մէջը փայտէ տիկնիկներ են խաղացնում. ահա այդ տեսակ բան է. չըտեսնելուս համար էլ չըզջտցի. փորս խօ չէր կշտացնելու: Մէջի (այսինքն Ստրասբուրգի) մարդիկն էլ վատուժ, ճռգած, փորերը քաղցած... Ի հարկէ. կերածները ինչ է որ...

—Այդ ինչ է ասածդ, Աֆանասիյ Եակովլիչ, միթէ ամբողջ աշխարհի գոված Եւրոպան ո՛չ մի լաւ բան չունի, զուցէ դ՞ու չես տեսել:

—Ո՞վ քեզ ասաց. ամեն տեղ շրջեցի, ամեն բան տեսայ. չըշրջած տեղ, չիմացած բանս չըմնաց. բայց, ինչ որ ասես՝ ամենը մեր տեղում կտայ. այնտեղ սկի այնպէս բան չըկայ, որ կամ Նախիջևան կամ Ռոստով չիլինի: Եւրոպայում ձիաքարշ կայ—Ռոստով էլ խօ կայ այդ բանը, այսօր-վաղը Աստուծով Նախիջևան էլ կըլինի: Այնտեղ բուլւար կայ—մենք էլ ունենք խօ, չըգտնելու բան չէ որ... Այնտեղ դազի լապտերներ կան—Ռոստով էլ խօ կայ. այնտեղ հազուստը և կտորները կժան է—Ռոստով էլ խօ պատրաստ հազուստ ծախում են և սկի էլ Եւրոպայից թանգ չէ. Ռոստովի Նովրյ-բաղտը գնացել ես. հը-

<sup>1)</sup> Մի բացազանչութիւն է՝ համապատասխան «ծօ, տօ»-ի:  
<sup>2)</sup> Նոր-Նախիջևանի մօտ հայկական մի մեծ դիւղ:

բւաների փոքրիկ խանութները մտնլ ես. լաւ ապրանքը աչնտեղ էլ թանկ է, բայց Եւրոպա էլ էժան չէ: Յետոյ, էլ ինչ մնաց Եւրոպայում՝ զարմանալու բան... Սակայն այստեղի եղածները աչնտեղ ցերեկը լապտերով չես գտնիլ: Աչնտեղ ո՞վ կրտայ քեզ մեր եզոտ, թաժա, կաթի պէս մատղաշ ոչխարի միտը. ո՞վ կրտայ քեզ մեր բազարի կալուղ, տաք, էժան հացը. ո՞րտեղից պիտի գտնես մեր ասէտրան <sup>1)</sup>, որ խաշած շողարձակ, մեծ ափսէով բերում են, սեղանի վրայ դնում. դու էլ, այստեղ նայիր, կրտում ես վրայից մի մեծ կտոր, վրան մի լաւ լիմոն քամում, ափսէիդ կողքին մանանեխ ու աղ դնում, առնում ես մեծ կրտոր հացը, մէկդի քաշում և սկսում քեզ համար ուտել. ասաց Փոռսուխին Աւազը՝ բերնից ջրեր վաղեցնելով—փամլիլը <sup>2)</sup>, ինչ է քո ասածդ, Եւրոպան շատ հեռու է Ռուսիային հասնելու: Հաշւիր որ երկու ամիս մնացի Եւրոպա, բայց չեղաւ որ մի օր փորս կուշա հաց, կամ միս, կամ այդ տեսակ բան տեսնէր:

—ԱՖանասիյ Եակուլիչ, ասացի. — ասե՛նք որ հացի և մսի կողմից մեր տեղը Եւրոպայից լաւ է. բայց միթէ այդ՝ աշխարհի գոված տեղը ոչ մի լաւ բան չունի: Երբ որ այդպէս է, ապա ինչու Ռուսաստանից մարդիկ ամեն տարի հազարներով են վաղում աչնտեղ. ի հարկէ մի բան կայ, որ ամենքը տեսնել են ուզում այդ Եւրոպա կուչող տեղում:

—Կայ, ինչու չէ, ամեն բանն էլ կայ, միայն թէ փող չըխնայես. թատրոն էլ կայ, մասկարադ էլ կայ, ես ինչ զիտեմ — բանկ էլ կայ, բուլւար էլ կայ, պարտիզներ էլ կան, ամեն բան կայ... Ի՛, յետոյ, այստեղ կամ Ռոստով չըկա՞յ, ինչ է... Համեցէք, որքան կուղես...

— Աչնտեղի թատրոնը գնացիր, տեսար, ինչպէս է...

— Ես այդ տեսակ բաներ շատ չեմ սիրում, բայց մի երկու — անգամ գնացի. գնալուս պատճառն էլ քեզ ասեմ: Ըն-

<sup>1)</sup> Ձկան մի տեսակը — թառափ.  
<sup>2)</sup> Ռուսական ПОМІЛІУЙ՝ ոճն է, որ հաչերէն կարելի է արտացոսել յի սէր Ասածոյ՝ ոճով միայն:

կերս մի օր ինձ ասաց թէ՛ «Հաճէ, Աւազ, ասում է. կուղես այսօր թատրոն գնանք, ասում է, նայենք, ասում է, այստեղի թատրոնը ինչ տեսակ բան է, ասում է»:

— Զէ, չեմ ուզում, ասացի, ես քեզ կրուպսեմ, յետոյ կըքնեմ—ասացի, որովհետև ցորեկը կուշտ առլէքին էի կերել (յետոյ ես քեզ մանրամասն կըպատմեմ թէ ինչ տեսակ բան է այդ առլէքին կուչող կերակուրը). քունս էլ շատ տանում էր: Ընկերս պնդեց ու «դատարկ բտն է քնելը, ասացի, հայդէ, գնանք թատրոն, աչնտեղից էլ հիւրանոց կերթանք, մի լաւ ընթրիք կուտեցնեմ քեզ», ասաց: Ընթրիքի անունը որ լսեցի, խեղճն քունս փախաւ աչքիցս: Գնացինք: Ի՛նչ մեղքս պահեմ, թատրոն որ մտանք և տեղերս նստեցինք թէ չէ՛ ես խաղացողների վրայ էլ չընայեցի, հանդիսականների վրայ էլ, իմ խելքն ու միտքը ընկերոջս խոստացած ընթրիքի հետն էր. լուռ նստել եմ և ինքն իրենս միտք եմ անում, թէ արդեօք ինչ պիտի ուտենք, արդեօք մսեղէնը շատ կըլինի, փորերս պիտի կշտացնէ, թէ՛ ափեղ-ցփեղ, ջրոտ, անհամ բաներ պիտի բերեն դիմացներս գնեն: Աստուած վիայ, սուտ չէ ասածս, մեր տեղի այսքան փոքր տղան (ձեռքը դետնից կէս արշին վեր է ցոյց տալիս) նրանց մեծ մարդուց շատ է ուտում: «ПОМІЛІУЙ, ԳРАТЕЦЬ ТЫ МОЙ» (ի սէր Աստծոյ, եղբայր), նրանց կերածի չափ որ մեր տեղի դեղձանիկն ուտէ, խաչը վիայ, երկու օր չի քաշիլ, կընկնի կըստակի: — Գիմացս էրիկմարդ, կինմարդ (խօսքը գերասանների վրայ է) իրանց մէջ խօսակցում են, կանչ-վառում, երգեր ասում, խաղում. միւս կողմից էլ նայողները ծափ են խփում—սկի իմ փոյթս չէ, վրանները նայել անգամ չիմ ուզում, ես մտքովս մեր տեղի կերակուրների հետ եմ: Մէկ միտքս է գալիս մեծ սուպնիկով (ապուրի աման) դաշը/ս-ըժօ-րէկը <sup>1)</sup>, որ տաք-աաք ներս են բերում՝ վրայից էլ ծոթրինի հոտի է գալիս. մեծ քանակութեամբ լեցնում ես խորունկ ափսէիդ մէջ և սկսում չըծամած՝ լօփ-լօփ կուլ տալ, մէկ ափսէն

<sup>1)</sup> Մսային փոքրիկ կարկանդակով մի տեսակ սուպ է, յատուկ Նախիջևանին. վրան ծոթրին և մէջը մածուն խառնած:

վերջացրիր՝ իսկոյն շերեփով երկրորդն ես լեցնում, քաշում ես առաջդ: Յետոյ միտքս է դալիս մեր հարիսան—վրան սոխա-  
 աածը և մանրած շաքարը շատ... Նրանից էլ երկու անգամ  
 ահագին կոչտով դնում ես ափսէիդ մէջ, ուտում ես և չես  
 կշտանում: Ապա մեր թարմ *սամ'սամ'ն* (կարկանդակ), ապա  
 շատ իւղով ձաւարէ փլմւր, ապա ձկնով կուպաթիւն (կար-  
 կանդակ), ապա խաշած հնդկահամը մանանեխով՝ դրմն ինչ  
 կասես, դրմն... այդ կերակուրները ոչ միայն Եւրոպայի մար-  
 դը, այլ և նրա թագաւորը չէ տեսել: Յետոյ, այդ քաղցած-  
 ները մերինի հետ կուիւ պիտի բաց անեն. վայ նրանց զլիւին,  
 մերը նրանց հում-հում կուտէ, Աստուած վկայ՝ կուտէ:

Այդ որ ասաց, միտքս բան ընկաւ.

— Հա՛, ասացի, խնդրեմ ասա, տեսա՞ր եւրոպական զին-  
 ւորները, ինչպէս են:

— Ապա չըտեսա՞յ, ամեն բան տեսայ. ասաց Աւագը— աւս-  
 տրիացին՝ այն ոչինչ, բոլորը քաղցած, փորերը ներս քաշած,  
 վատուժ-նիհար բաներ են, ճիշտ սուղակ ձկան նման. Ֆրան-  
 սիացուներ, էհ, մի շատ էլ գովելու բան չէ. գերմանացուներ,  
 ճիշտ է, նրանցից քիչ լաւ է, բայց մերը, դու ինչ ես ասում,  
 ճիշտ արծիւ է մերը նրանց դիմաց: Մերը հաճարի-հաց է ու-  
 տում, մեր կաշա <sup>1)</sup> է ուտում, վրայից էլ կվաւ <sup>2)</sup> խմում.  
 դու հաճար-հացի հետ կատակ մի անիլ. հաճարի հացն ու կա-  
 շան մարդուս առիւծի ոյժ է տալիս: Եւրոպայի զինւորի կերա-  
 ծը ինչ է որ— թղթի պէս բարակ մի կտոր հաց, մէկ բուռ  
 էլ մաղդանոս <sup>3)</sup>— եղաւ զնաց. երբեմն էլ սիսեռի կալբաս <sup>4)</sup>  
 են տալիս. յետոյ, դրանով մարդու փոքր կըկշտանայ: Աստուածդ  
 սիրես, եթէ մարդ շատ չուտէ, վրայից էլ լաւ չըխմէ, ոյժը  
 հրտեղից կըզայ:

Ես քեզ ասում եմ, այդ Եւրոպայի մարդիկ մի օր մեզ պէս

1) Ուտելիք:

2) Խմելիք հացից կամ պտղից պատրաստած:

3) Բանջարեղէն:

4) Երշիկ:

կուշտ փորով հաց չեն ուտում: Նրանց ո՞վ է տել ոյժը, մեր  
 մէկ հատ զինւորը նրանց տասնի դէմ կըզնի:

— Այդ ինչ է ասածներդ, ասացի. մարդ ես լիմարացնում.  
 ինչ ես ասում, ապա ամբողջ աշխարհը Եւրոպային գովում է.  
 Թէ՛ նրանց մարդկանց ուսումը, Թէ՛ նրանց լաւ-լաւ տեղերը,  
 Թէ՛ նրանց հարստութիւնը. իսկ քո ասածներին եթէ նայես՝  
 ամբողջ Եւրոպայի մարդիկ մեր մուրացկանների պէս են:

— Ապա ինչ են, որ մուրացկան չեն. Աստուածդ սիրես, մի  
 մարդ, որ ամբողջ օրը քաղցած լինի՝ դու այդ մարդուց ինչ  
 կըպահանջես: Հա՛, սուտ չէ, ճիշտ է, նրանց գործարանները,  
 նրանց մեքենաները գոված են, նրանց հնարած մօզան ամեն-  
 քըն էլ ընդունում են, բայց այդ գործարանները, այդ մեքե-  
 նաները, այդ մօզնի հագուստները կուտւին, ինչ է, նրանք  
 մարդուս փորը կըկշտացնեն: Ո՞վ է նրանց աւել մեր Աստուծոյ  
 օրհնած տաք-տաք՝ իւղոտ մատաղի միսը. դրա համը նրանք  
 դիտեն: Նրանք մեր թարմ *ասէտրայի* երեսը տեսել են, մա-  
 նաւանդ եթէ վրան լաւ տեսակի լիմոնը քամած, հետն էլ մա-  
 նանեխ լինի: Ո՞վ է նրանց տել մեր ձմերուկը, որին եթէ դա-  
 նակի ծայրը կպցնես՝ ինքն իրան կըձաթի: Նրանք իրանց  
 կեանքի մէջ տեսել են մեր՝ չորս մատիս հաստութեամբ սերը...  
 Թքեմ ես նրանց մեքենաների վրայ, երբ ողջ օրը փորս պիտի  
 քաղցած մնայ: Զէ՛, ես ինչ ասել եմ, նորից կասեմ— Ռուսիայի  
 պէս հող ոչ մի աշխարհի մէջ չըկայ. մեր թագաւորն էլ Եւրո-  
 պայի թագաւորներից ուժեղ է, մեր դօրքն էլ նրանց դօրքից  
 ուժով, մեր հողն էլ նրանց հողից պտղաբեր է: Պաշարի— այ-  
 սինքն հողի, մսի, ձկան համար եթէ ասես՝ մեր Ռուսիան Եւ-  
 րոպայից վեր է ու վեր: Աստուածդ սիրես, մեր զիւղացին եթէ  
 գործել կամենայ— հողը նրա տուաջ շնա— վարիլը, ցանիլը որ-  
 քան ոյժդ ներէ: Եւրոպայի հողը ինչ հօրս ցաւն է. նրանց  
 զիւղացին 10—12 արշին հող ունի— այդ է ահա նրա ցորեն  
 ցանելու էլ, գեանախնձոր ցանելու էլ, խոտ քաղելու էլ, իրան  
 ապրելու էլ, աւաւր արածացնելու էլ՝ տեղը. բացի դրանից՝  
 ուրիշ ոչինչ չունի: Ասա՛ խնդրեմ, մարդ ինչպէս պիտի կարո-  
 դանայ դրանով թէ՛ ինքը կուշա լինել, թէ՛ ընտանիքը կերա-

կրել, թէ թագաւորի տուրքը տալ. ուրեմն տարին 12 ամիս՝ ողորմելին քաղցած փորով պիտի մնայ էլի: 2է, դո՛ւ ինչ ես ասում, Եւրոպան շատ հեռու է մեր Ռուսիայի հետ կաւելուց. քաղցած կըստակեցնենք. նրանց դէմ հարկաւոր է զօրքով զընայ. հաց չըտւին՝ բոլորն էլ մէկ-մէկ կըստակին: Գու Ռուսիայի հետ կատակ մի՛ անիլ:

— Ա՛ Սւազ աղա, ես նկատում եմ որ ինչ բանի վրայ էլ հարցնում եմ, դու միայն խօսքը կերակուրի վրայ ես դարձնում. իբր թէ Եւրոպան ուտելու բան չունի և խելքը-միաքը՝ կերակուրի վրայ է: Եւրոպացին, քո ասելուն նայած, ամբողջ օրը եթէ քաղցած է անցկացնում, ապա ինչպէս կարողացել են նրանք այսքան զիտուլիւն, մեքենաներ, գործարաններ, ես ինչ զիտեմ—այսքան օդապարիկներ, ելէկտրական լուսաւորութիւն՝ հնարել. Աստուածդ սիրես, քաղցած մարդը կարող է այդքան իմաստութեան մէջ մտնել:

— Ո՞վ է ձեզ ասել եւրոպացու այդքան զիտուն-իմաստուն եղածը. ես ամբողջ Եւրոպան շրջեցի, երբէք մէկ այնպէս դարմանալու մարդի չըպատահեցի. բոլորը հասարակ մարդիկ էին: Մեր տեղն էլ դալիս են նրանցից. չե՞ս ասել սկի, որ դալիս են և ծախում մեզ մկան թակարդներ և երկաթէ թելերով շինած ամանները—ճիշտ դրանց էլ, իրանց տեղում, Եւրոպայում տեսայ:

- Ուրիշ լաւ մարդիկ, լաւ բաներ չըտեսար:
- Կար որ տեսնէի...
- Ապա ինչու վնացող-տեսնողներն այնքան զովում են:
- Ո՞վ է այդ գովողը, ասա տեսնեմ անունները:
- Ես ինչ զիտեմ. գնացող-տեսնողներ շատ. ո՞ր մէկը ասեմ. ահա Ղազարոսը, ահա Մինասը, ահա Գէորգ աղան...

— Թքել եմ ես նրանց վրայ. նրանք իրանց կեանքում շնորհքով բան տեսել են որ. չըտեսը ճիշտ այդպէս կըլինի. ինչ նոր բան տեսնէ՞ իսկոյն կըզարմանայ: Մեր Նախիջևանը, մեր Ռոստովը, մեր Օդեսսան տեսնողը Եւրոպայում զարմանալու բան կըտեսնէ որ... Ասա խնդրեմ, ինչ զարմանալու բան են գտել Եւրոպայում—նրանց քաղցած ժողովուրդը, նրանց

նեղ փողոցները. նրանց թանգ-կրակ հանցը, միսը, հնդկահամը:

Այլ ևս չըկարողացայ համբերել, քլիչ մնաց արաքէի:

— Հա՛ձէ, Աւազ, ասացի, ես քեզ մի բան ասեմ. դու այդ Եւրոպա դնալու փոխարէն եթէ Ռոստովի *արժօրնիյ ընաղը*<sup>1)</sup> մտնէիր, աւելի շատ կըտեսնէիր և բաւական կըլինէիր: Քե՞զ էր մնացել Եւրոպայի պէս լուսաւորեալ աշխարհը իր քաղաքավարի ժողովրդովը տեսնելու. դու նրանից բան կըհասկանաս որ...

— Է՛, մէկ էլ ասա տեսնեմ. ասաց բարկացած Փոռուխովը—քեզ ո՞վ ասաց որ Եւրոպայի ժողովուրդը քաղաքավարի է իբր թէ. նրանից էլ անամօթ, նրանից էլ երեսը պատռած, նրանից էլ լիբը, մարդու պատիւ չիմացող ժողովուրդ կա՞յ որ. մեր հասարակ զիւղացին նրանց համեմատութեամբ-ազնւական է... Աստուածդ սիրես՝ լսիր. մէկ օր, ինձ համար ելել զնում եմ: Այս բանը Պարիզի մէջ եղաւ: Չորս կողմս երեխաներ հաւաքեցին, այնքան երեխայ, որ, եթէ սուտ չասեմ, հարիւր լիսուն հողի կըլինէին. երեխաներն էլ խոշոր չըզիտեսաս. մանրը (ձեռքը գեանին մօտեցրեց) այսքան փոքրիկներ, ետեւիցս վազում են, փեշերիցս քաշկուտում ու «էլէֆան» կանչում: «էլէֆանը» նրանց լեզուով «փիղ» ասել է: Իբր թէ, հասկացնել են ուղում, որ ես փիղ եմ: Յետո՞յ, դու ու քո հողին, ես ինչո՞վս եմ փղի նմանում. մէկ լաւ նայիր աչքերիս—փղի աչքերի նման են, վղիս նայիր—փղի վղի է. կունակիս նայիր—փղի կունակ է. քալածքիս նայիր—փղի քալածք է: Յետո՞յ, այդ է դրանց կըթուլիւնը, լուսաւորութիւնը, մարդավարութիւնը: Մեր ամենից յետին կառապանի տղան այդպէս չի վարւել օրինաւոր-պատուաւոր հարդու հետ: Գու չըմոռանաս, որ այդ բանը զլիսիս բերին Պարիզի մէջ աեղը, Բուլւար-Իապլիէն ասած փողոցում: Հ՞ը, ինչպէս ես, քաղաքավարի մարդիկ են քո գոված եւրոպացի ժողովուրդը... (Քիչ լուելուց յետոյ): Քիչ առաջ դու ծաղրելով Ռոստովի *արժօրնիյ ընաղի* անունը տւիր. դու եղել ես այնտեղ, այնտեղի կերակուրների համը տեսել ես... Ի՞նչ անենք որ անունը վատ է. դու մէկ

1) Որկրամուկների շուկան:

Նրա կերակուրների համը նայիր և յետոյ վրան խնդան: Տաշտի չափ մեծ պնակով մեծ քանակութեամբ առաջդ են դնում ըորշ-շը <sup>1)</sup>, մէջը զլիսիս մեծութիւնով եղատ միս, հետն էլ չորս ֆունտի չափ հաճարի հաց. լաւ բորշջի թթու հոտը ու տաք շողին քթիդ որ կպչում են—մարդուս ախորժակը կատաղած շան պէս փրփրում է: Առնում են հաճարի հացը, բրդում են պնակի մէջ, մի լաւ խառնում և քեղ համար ուտում: Թէ փորդ է լցում, թէ երեսդ քրտինք բռնում և թէ փորիդ կուշտութիւնից ամբողջ օրը զկուտում ես: Գինն էլ ի՛նչ է որ — որեւիցէ 5—10 կոպէկ: Գոնէ կըզիտնաս որ փորիդ մէջը կերակուր կայ և ոչ թէ Եւրոպայի տեսակ մաղդանոսներ, սալաթի տերեւներ և թաղանթի հաստութեամբ հաց ու միս: (Գիչ լուելուց յետոյ): Գու ի՛նչ ես ասում, մեր Ռուսիայի ուժին ո՛յժ կըհասնի: Անդ-լիացին չէ, հետն էլ զերմանացին թող դայ, աւստրիացին էլ, վէնդէրն էլ թող դայ, տաճիկն էլ թող դայ — ամենքին կտոր-կտոր կանէ և մի կողմը կընետէ, որովհետեւ ուս զինուորը հաճարի հաց ու կաշա է ուտում, վրան էլ կվաս խմում. դու հաճարի հաց ու կաշայի ո՛յժը զիտես, մարդուս իսկական առիւծ է դարձնում:

—Ասա խնդրեմ. ասացի. դու այժմ Ռոստովի արժօրնիյ ընտղը գովեցիր. դրս պէս տեղ չըկան ինչ է՝ Եւրոպայում:  
 —Կայ, ի՛նչու չէ. բայց ախոս որ ես այդ շատ ուշ իմացայ, Պարիզից մեկնելուս ժամանակ: Բայց այնտեղի արժօրնին մերինի տեսակը չէ, ուրիշ տեսակ է: Մեր տեղինը ինչ որ էլ լինի՝ պարզ է, կերակուրն էլ էժան-միս է, կաղամբ է, ճտկընդեղ է, սոխ է, զետնախնձոր է. բայց այնտեղինը ուրիշ տեսակ է, համն էլ աւելի նուրբ: Ես քեղ պատմեմ թէ ինչպէս են պատրաստում այնտեղի կերակուրը, որ նրանց լեղով առ-լէքին է կոչում: Առլէքին ասածդ այսպէս է լինում: Հարուստ տների և թանգնոց հիւրանոցների խոհարարները հիւրերի ամանից ինչ որ աւելանայ, բոլոր լեցնում են մի մեծ տակառի մէջ և պահում են իրանց յաճախորդների համար. որը գալիս՝

<sup>1)</sup> Ռուսական կերակուր ճակընդեղով:

խոզերի համար է առնում, որը՝ իր կովի, որը իր շան համար. բաղարի կերակուր ծախողներն էլ՝ իրանց արժօրնիյ կերակրատան համար—դոյլերով առնում են և մեծ ամաններով իրանց յաճախորդների զիմացը դնում: Առլէքինը թէ՛ զգալով պիտի ուտես, թէ՛ պատառաքաղով և թէ՛ մատներովդ: Մէկ կոխում ես պատառաքաղդ՝ պանիրի կտոր է ելնում, մէկ էլ կոխում ես՝ թռչունի ոսկոռ է ելնում. էլի կոխում ես պատառաքաղդ՝ ճրկան գլուխ կամ պոչ է ելնում, երբեմն էլ սիգարի կտոր է դուրս գալիս: Գղալով կերածդ ժամանակ երբեմն բերանդ մանանխի համ է առնում, երբեմն պաղպաղակի. էլի զգալդ կոխում ես ամանի մէջ, տանում բերանդ՝ քացախի և պասուց իւղի համ առնում: Մարդուս քէֆն է դալիս. թէ՛ սւտում ես և թէ՛ ծիծաղում: Առլէքին ուտելու ժամանակ այնքան լիմոնի և փորթուղալի կճէպ եմ կերել որ... Նաղեր ծախելու և զզւելու իրաւունք չունիս, որովհետեւ տւածդ ինչ է որ — ամբողջը մէկ սու, որ մեր փողով 5 կոպէկ է: Համ աժան, համ կուշտ, համ էլ տեսակ-տեսակ:

—Իսկ ընկերներդ ասում են թէ քեղ և թէ իրենց մասին, որ ամեն անգամ 5 ֆրանկ էիք տալիս կերակուրի համար. հինգ ֆրանկը մեր փողով մօտ 3 ըուբլի է անում. յետոյ, այդ քիչ փող է:

—Սուտ չէ—ճիշտ է. ամեն օր 5-ական ֆրանկ էին տալիս ամեն ճաշի համար, բայց աստնական էլ տւածներս կայ. բայց ի՛նչ օգուտ: Եւրոպական կերակուրները այնպէս դատարկ բաներ են, որ ինչ նրանք ճաշ են ասում—մեր տեղի մարդը մի պտղուց քթախոտի պէս կարող է քթի ծակը կոխել: Եւրոպայի կերակուրի մէջը ուտելու բան կան որ: Մի ախտ պալուր են բերում առաջը (ճիւրի-միրի բան) «այս կոնսոմէ է», ասում են. հետն էլ ճկոլթիս ծալրի չափ կարկանդակ՝ «այս էլ դաթօ է», ասում են: Յետոյ՝ բերում են երկու հատ փոքրիկ ձուկ՝ ստեղի բարակութեամբ—«այս էլ նոր տապակած սարդին է», ասում են: Յետոյ բերում են ճնճղուկի չափ դաշտային թրուչուն տապակած—«այս էլ բէքասն է», ասում են: Յետոյ բերում են մի զգալ շաքարոտ խլինք—«այս էլ ժիլէյ է», ասում

են: Ամենից վերջը բերում են այդ «պապաքում—մամաքում» ասուած խոտը, «այս էլ սալաթ է», ասում են: Այդ եղաւ ցերեկադ ճաշը, որի համար առնում են 5—10 Ֆրանկը: Հնամուտացայ ասելու, հացից յետոյ էլ բերում են մատնոցի մեծութեամբ դաւաթով, տուանց կաթի սուրճ: Յետոյ, ռուսիացի մարդը ինչպէս կարող է կշտանալ այդ գեղձանիկային ճաշով: Կամայ-ակամայ՝ գնում էլ առլէքին ծախած ճաշարանը, որ գոնէ փորիս ճիճուն հանդստացնեմ: Հն, սուտ չէ, ճիշտ է, սեղանի վրան—գիմացդ դնում են մէկ-մէկ շիշ զինի, բաց շիշը մեր շիշերի չափ չըզիտենաս—այն Հոֆմանովի կաթիլների շիշը չըկան, ճիշտ նրա մեծութիւնով մի շիշ են տալիս քեզ. մէջի եղածը ատամներդ թրջելու բաւական չէ, ինչ մրնաց խմելու. բաց, անունը մեծ է. «զինիով ճաշ է», ասում են եղել: Գու մի ասիլ, որ եթէ նրա փոխարէն մի մեծ ամանով հասարակ կվաս որ տան՝ աւելի բաւական պիտի լինէի: Գոնէ մարդու թէ ծարաւը կըկտրի, թէ փորը կըլեցնի: Չէ, դու ինչ ես ասում. գնա, ամբողջ աշխարհը քայլիր, մեր Ռուսիայի պէս տէրութիւն դտնել չես կարող. մարդուս ամենից պէտքական բանը թէ առատ է և թէ էժան: Այդ Եւրոպայի քաղցածները կուլ պիտի մղեն մեր ռուսի հետը. վն նրանց զըլխին. մէկ շաբաթ չի անցնիլ, ամենքը ձմեռուայ ճանճերի պէս կըստակեն, կ'ոչնչանան: Մեր զինուորը, ինձ նայիր, լաւ հաճարի հացը կուշտ կուտի, վրայից էլ կաշան, նրա վրայից էլ լաւ կըխմէ թթու կվասը, հուռն կանչելով վրայ կըտայ—մի բոպէի, մի ժամուայ մէջ բոլորին թրի կառնէ: Գու Ռուսիայի հետ կատակ մի անիլ...

— Այն չէ՛ բաց, ասացի. ինչպէս եղաւ որ դու Եւրոպա գնացիր. կարծեմ դու այնտեղ գործ չունէիր չէ. ապրանք տարար, թէ՛ ապրանք բերիր. թէ՛ ուէ յանձնարարութիւն ունէիր:

— Ապրանք էլ չըտարայ, ապրանք էլ չըբերի, յանձնարարութիւն էլ չունէի: Իմ Եւրոպա երթալս հեքիաթի պէս մի բան էր. բարեկամիս մէկը մի աւրած ժամացոյց ունէր և որովհետեւ մեր կողմերը նրան նորոգող վարպետ չէր գտնուում, բարեկամիս խելքին փչեց տանել Եւրոպա: Ժամացոյցի կոթը

չըկան — այդ բանը ըշտէ փչացել էր. մեր տեղի ժամագործները շատ վրան կտորներ դրին. այնպէս որ, կոթը հաստացել էր ու ներսի անիւներին նեղութիւն էր տալիս. ժամացոյցը Եւրոպա տարինք, այնտեղ մի լաւ վարպետ գտանք, որ զուշութեամբ ժամացոյցի հաստատած կոթը բարակցրեց, ձևի բերեց:

— Բանդ-գործդ թողած՝ ինչու ելար գնացիր. դու այստեղ ծառայութիւն ունէիր, չէ՛:

— Եւրոպա որ գնացի, ծառայութիւնս արդէն վերջացած էր. ամիսը 100 բուրլի ռուսիկ ունէի, գործս էլ շատ թեթեւ բան էր. քաղաքային վարչութիւնը ինձ հրաման էր արել ծովի եզերքը կանդներու և ջրի միջով անցնող ձկները համրելու. Հէշտ արհեստ: Բաց, թշնամիներս հրապարակ ելան և ժողովրդին հաւատացրին որ զրանից քաղաքը մի կոպէկի օգուտ չունի. ինչ պէտք է խզոտ տեղ գրամ վատնելը:

— Ծովի ձուկը համրելուց առաջ ինչ ծառայութիւն կամ արհեստ ունէիր. հարցրի նրան:

— Նրտնից առաջ, հոգիս, այդ անկիւնը չըկան — բամբասարանից քիչ վեր. ըշտէ, այնտեղ առաւօտեանից մինչև երեկոյեան զանգերը՝ կանգնում էի և անցող-վարձողների վրայ կատաղած շան պէս հաջում:

— Այդ ինչ տարօրինակ արհեստ է... ամօթ չէ՞ օրինաւոր մարդուն՝ շան պարտաւորութիւն վրան առնելը. ասացի դարմացած և նեղացած:

— Չէ, հոգիս, այդպէս մի գատիլ: Ինչպէս երևում է, դու կարծես մեր քաղաքը երբէք չես ճանաչում: Այդքան հասակ առած՝ դեռ չըզիտես որ մեր տեղում հաջելը անօգուտ և ստոր արհեստ չէ: Հաջելով չէ՞ որ այսքան մարդիկ՝ որը ճայնաւոր եղաւ, որը անդամ, որը հոգաբարձու, որը երեսփոխան, որը պատի հասաւ, որը շատ ստակի տէր եղաւ, որն էլ արդիւնաւոր պաշտօն ձեռք բերեց. բոլորը հաջելուց էր: Բաց հաջելու մէջ էլ շնորհք կայ: Հաջելուց չէ՞ որ մեր Ֆերբեր Օվանէսը թէ՛ իրեն մէջքը տաքացրեց, թէ՛ իրեն օգտակար բարեկամներինը. կարծում ես թէ իր արհեստի շնորհքն է— շատ

ես սխալու՞մ: Մի հաջիլ, տանդ փակւած նստիր և տես դրանից ինչ կրգոյանայ: Կրկորչես բոլորովին: Լսել ես, մի առած կայ որ ասում է. «իրեն տեղ ծանր կեցած քարին տակէն ջուր չի վազիլ»<sup>1)</sup>. այդպէս էլ մեր բանն է. եթէ չըհաջես, քեզ ոչ ոք մարդու կարգը չի դնիլ: Գու ինչ ես ասում, հաջելու մէջ շատ բան կայ: Մէկ չորս քովդ նայիր. այս մեր խոշոր-խոշոր աղաները բոլորն էլ իրենց փառքին և սլատուն հասել են կամ շնորհիւ հաջելուն և կամ իրենց մօտիկ մարդոցը հաջեցնելուց: Այսօր-վաղը, զիտես արդէն, քաղաքիս մէջ ձայնաւորներ, անդամներ, քաղաքադուխ և քարտուղար պիտի ընտրուին. դու մէկ նայիր թէ որքան հաջող շներ հառըլ-հառըլ հրատարակ պիտի ելնեն: Գու լաւ հաջելը կատանկ ես համարում:

— Լաւ, համաձայն եմ, որ մարդիկ հաջելով կամ հաջել տալով՝ տեսակ-տեսակ օգուտներ են փնտուում և դտնում. դո՞ւ ինչ օգուտ ունիս դրանից:

— Ե՞ս. ասաց քեթի տակից խնդալով և աչքերը փոքրացնելով՝ Փոռսուխին Աւազը:

— Հա՛, դո՞ւ. ասի.

— Ես ինչ օգուտ ունիմ. ասաց նա նորէն. — Իմ օգուտն էլ եթէ աւել չէ ուրիշներից, պակաս էլ չէ: Ախր դու մի լաւ միտք արա. ես ինչ չըգտնելիք մարդ եմ, ո՞ր աղաչի որդին եմ, ո՞ր համալսարանն եմ աւարտել, ծոցս միթէ լիքն է փողով, թէ՛ դեղեցկութիւնն ու երիտասարդութիւնը երեսիցս կաթում են... Բայց այսօրայ օրս, ինձ նայիր, մեր բամբասարանի <sup>1)</sup> ամենաառաջին անդամն եմ, քաղաքային վարչութեան մէջ՝ ձայնաւոր և զպրոցի մէջ՝ հոգաբարձու: Իլ ինչ կուզէիր: Այս բոլորը զիտես ինչու ձեռքս ընկաւ. նրա համար, որ առաւօտեանից մինչև երեկոյ, անկիւնը կանգնած, չորս քովս էլ մի կարգ տխմարներ ժողոված, աջ ու ահեակ հաջում եմ: Հա-պա՛, որդիս, դու ինչ զիտես: Վարպետութեամբ հաջելու մէջ շատ բան կայ: Գու նորից կրկնիր թէ հաջելը գէշ բան է, հաջելը մեղք է և ամօթ, հաջելը շներին կրվա-

<sup>1)</sup> Բամբասարան՝ ակնարկում է Բարեգ. Ընկերութեան խորհրդարանը:

չելի, չըգիտեմ ինչ՝ չըգիտես ինչ: Չէ, հոգիս, չես հաջիլ՝ չես ուտիլ: Ինձ նման մեծ փորով և զայլի ախորժակով մարդուն կարելի է քաղցած օրեր անցկացնել:

— Ասենք որ հաջելուց ձայնաւոր և անդամ եղար. չետոյ, ինչ շահ դրանից. կամ թէ ուրիշը քեզնից ինչ շահ պիտի ունենայ:

— Ձայնաւոր լինելս չըգիտեմ ուրիշներին օգուտ ո՞ւնի թէ ոչ, բայց ինձ մեծ օգուտ է:

— Ասա տեսնենք. ինչ օգուտ ունիս:

— Օ՛, օգուտը շատ մեծ է: Այս մեր վարչութեան մէջ այնպէս չէ որ ինձնից բացի եօթանասուն մէկ ձայնաւոր կայ. այդ ձայնաւորներից իւրաքանչիւրը անուն ո՞ւնի, թէ ոչ. անուն ունեցողը ասն էլ ունի, թէ ոչ. տօն ունեցողը տարւայ մէջ գօնէ մի անդամ ճաշ կրտայ, թէ ոչ: Եղաւ որ այդպէս, տալին եօթանասուն մէկ ցերեկւայ ճաշս ապահովւած է և տանս մէջ ծախսելու փողը զրպանումս կըմնայ: Ո՞վ մարդ, ինչ է քո ասածդ. Ասաւա՞ծ մեր սուրբ հայրապետների հոգիները արքայութիւն տանէ, որ նրանք այդպէս խելօք օրէնք են մրացրել մեր մէջ: Ամեն երեկոյ օրացոյցը բաց կանեմ, կընայեմ թէ վաղը տօն կա՞յ, թէ ոչ: Եթէ մեր ծանօթների անունների տօները եղան, մէջերիցը երեք-չորսը ընտրում եմ. բայց այնպիսիները, որոնք սովորութիւն ունին լաւ սեղան սարքելու և միւս օրը, ժամը 11-ին — 12-ին նշանակած աղաների (օրինակ Ակոբ, Մարկոս, Կարապետ) տունն եմ դնում. ներս մտած — չըմտած, գաղտագողի աչքի կանցնեմ սեղանի վրայի եղածները. եթէ սեղանի մէջ տեղը անսայ մեծ ամսնով խաշած ասէտրան (ձուկ) և քիչ էլ հեռու անսակ-անսակ զինիներով շիշերը, այն է որ այնտեղ կըմտադրեմ հաստատելու. իբր թէ չուզենալով՝ կըմօտենամ թանգանոց կոնեակին, մէկ-երկու կըխմեմ տօնաւորի կենացը, չետոյ կառնեմ մի ափսէ, պատառաքաղ, դանակ. ափսէի մէջ լաւաջ կըքամեմ լիմոնի ջուր, քիչ էլ մանանխ ու աղ կըղնեմ, կըմօտենամ ասէտրային, դանակով չորս մաախս հաստութեամբ կրկտրեմ վրայից, կըքաշեմ մի առանձին լուսամուտի առջև՝ մէջքս դէպի հիւրերը արած՝

կրսկսեմ իմ բանը: Եթէ առածս կտորը 1 1/2 կամ 2 ֆունտ եղաւ  
 այն է որ այն օրւայ հացիս գրամը գրպանուծս մնայ: Այդ որ  
 վերջացրի, կերթամ կրմօտենամ շիշերին, որովհետեւ ձկան վը-  
 րայ լաւ գինին յարմարում է. նորից կրմօտենամ տօնաւո-  
 րին, ինչ որ ասես՝ օրհնութիւն կանեմ, որ եկող տարի էլ Աստ-  
 ուած ողջ-առողջ այդ օրին հասցնէ երկուսիս էլ և կըխմեմ  
 դինին: Գրանից յետոյ՝ երբեմն կրմօտենամ մանր խորտիկնե-  
 րին. այտեղ պանիրի փոքրիկ կտոր կըղնեմ բերանս, այնտեղ  
 գդալի ծայրովը մի քիչ կառնեմ խաւեարից (սկիւրիթ), էլի  
 այն կողմը՝ բողկը կըթաթախեմ աղի մէջ և բերանս կըղնեմ  
 -- իբր թէ մանր բաներ ուտող եմ. որ մաշկիկ չընկատեն թէ  
 տօն շնորհաւորութեան անունով՝ փօրս լեցնող եմ: Այդ օրը  
 կերակուրի հողը հոգացի, գրամը մնայ գրպանս: Երբ որ այդ-  
 պէս, տարւայ մէջ զոնէ հարիւր տեղ մտնեմ-կլնեմ, անա քեզ  
 ձայնաւոր լինելու օգուտը. էլ ինչ ես ուղում: Տարւայ մէջ  
 հարիւր թանգանոց և կուշտ կերակուր իր կոնեակով և դի-  
 նիով--դա անօղնուտ բան է: Այս մէկ: Այժմ դու ինձ ասա.  
 տարին 2--3 անգամ թագաւորական տօն, աչքաւոյս, սրակ  
 չի լինիլ: Ի՞նչ ըստէ, աղօթքից յետոյ ձայնաւորի անունով դե-  
 դեցիկ կերպով կերթաս քաղաքագլխի տունը (ի հարկէ, նա էլ  
 թագաւորի պատուի համար սեղան սարքած կըլինի), այնտեղից  
 էլ խօ ետ չես դառնալ տուն դատարի փորով: Այս էլ քեզ  
 երկու: Տարին 3--4 անգամ գրսից մի իշխանաւոր կամ մեծա-  
 ւոր չի դալ քաղաքս. մեր հարուստ աղաներից մէկն ու մէկը  
 նրան հաց չի աալ. դու էլ, ինձ լսիր, ձայնաւոր անունով կը  
 պատահես այդ թանգանոց ճաշին: Այս էլ քեզ երեք: Վարչու-  
 թեան ժողովի ժամանակ, աղաները կրսկսեն մի հասարակ բա-  
 նի վրայ վիճել, կըտան-կառնեն և վերջ ու վերջ՝ կըխառովեն.  
 դու մէջերը կըմտնես, լաւ մարդ կըլինես, կըհաշտեցնես. մէջ  
 տեղը երկու կողմից էլ մ'ախառնիչ <sup>1)</sup> լինում է--կեր, խում,  
 երաժշտութիւն. դու էլ մէջերն ես՝ ձայնաւոր անունով. Աստ-  
 ուածդ սիրես, քէֆ է ու... մեռնել պէտք է որ: Այժմ հաս-

1) Չնորհաւորութեան ճաշ կամ ընծայ:

Պացանք, թէ ինչու ես ամեն ջանք գործ եմ դնում որ ձայնաւոր  
 բնորեմ: Գու ասում ես թէ ինչու անկիւնը կանգնած՝ հա-  
 ջում եմ: Հաձէ, տխմար, եթէ չըհաջէի՝ ով ինձ ձայնաւոր  
 պիտի ընտրէր: Հապա այն մոռացար, որ բամբասարանի անգամ  
 լինելուցս էլ բաւական շահ կայ փորիս. որ տարին մի ան-  
 գամ ժողովրդով՝ պարտիզի մէջը քէֆ ենք անում՝ այդ ոչինչ.  
 դու այդ ասա, որ մեր 5--6 հարիւր անգամներից տարին 3-ը  
 4-ը չեն մեռնիլ: Մեռելի դանդը լսում եմ թէ չէ՝ մի քանի  
 մարդ ժողովում եմ գլխիս, շիտակ գնում մեռելի տունը, սը-  
 դաւորներին խրատ տուող եմ լինում, ըստէ հանդուցեալին  
 պատիւ տուող եմ լինում, կտակը կարգացողս լինում, էլ ըշ-  
 տէ, բան չունես, բամբասարանի կողմից սուտ-գորդ բանի  
 մէջ լինում: Տնեցիք տեսնում են որ հանդուցեալի շատ սրտա-  
 կից բարեկամն եմ եղել, և հողու-հացի, այդի, քառասունքի,  
 տարեղլխի հացերին կանչում են ինձ: Այդ էլ թէ պատիւ է և  
 թէ փոր կշտացնելու թանգանոց դէպք: Այժմ հասկացար հա-  
 ջելու գորութիւնը: Բայց հաջել կայ, հաջել էլ կայ: Մի քա-  
 նիսը այնպէս են հաջում, որ ամբողջ քաղաքը իրենց թշնա-  
 մի դարձնեն. այդ անսակ հաջելը օգտակար չէ: Հաջին էլ իր  
 տեղը, հնարքներն ունի: Հաջելու ժամանակ պիտի ջանաս ցոյց  
 տալու, որ իբր թէ ժողովրդեան օգալի համար ես հաջում:  
 Այս մէկ: Մէկ էլ այնպէս պիտի հաջես, որ ոչ հարուստների  
 սիրտը ցաւացնես, ոչ էլ դատարի գրպանով մարդկանց կողմը  
 անցած լինիս...

Սիրելի նախիջևտնցի, միթէ դու դեռ չես հասկացել, որ  
 ինչ բանի ձեռնարկես՝ բոլորը թերաւ և անշնորհք է լինում:  
 Ի՞նչու ես զարմանում, որ քո քաղաքը տարէց ասրի առաջ  
 դնալու փոխարէն՝ դէպի ետ է զարնում: Գու ինչու ես զար-  
 մանում, որ անցեալ տարւայ, դիւղից վաա Ռոստովը այսօրւան  
 օրս Նախիջևանից տասն անգամ մեծ է և նրա մէջը ապրող-  
 ները նախիջևանցիներիցս հարիւր անգամ աւելի հարուստ  
 են: Գու ինչո՞ւ ես զարմանում, որ Նախիջևանը աճելու, ծաղ-  
 կելու փոխարէն՝ քանի գնում է՝ բորբոսնում է, թռուռում է  
 և փչանում քո ձեռքի մէջ: Ասա մէկ տեսնեմ, տարին-տասն-

երկու ամիս դու որի խելքով ես կառավարում— Փռսուխ Աւագ-  
ների: Ո՞վքեր են քո քաղաքի կառավարողները — Փռսուխ Աւագ-  
ները. ովքեր են բանկի շահագործողները— Փռսուխ Աւագներ.  
Ո՞վքեր են քաղաքային վարչութեան ձայնաւորները— Փռսուխ  
Աւագներ. ովքեր են քո դպրոցներից հոգաբարձուները— Փռ-  
սուխ Աւագներ:

Յետո՛յ, ի՞նչ դարմանալու բան կայ, որ ամբողջ քաղաքս  
դարձել է մի 5—6 հազար Փռսուխ Աւագներով լցւած աղ-  
բանոց...



ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՄԻ ՆԱՄԱԿԸ <sup>1)</sup>

27 հոկտեմ. 1859 Մոսկվա.

Սիրական եղբայր,

Գրիգոր Կարապետեան.

Գիտեմ բարկացած ես իմ այսքան անկամ լռութեանս  
պատճառով, բայց պիտի ներողամիտ լինես, եթէ իմանաս իմ  
ողորմելի վիճակը և դրութիւնը, որի մէջ գտնեցայ մինչև  
այս րոպէս:

Սիրոս շատ կոտորած է, և ոչինչ բան աչքիս չէ երևում,  
վերջին յուսահատութեան մէջ: Այս բոլորի զօրութիւնը Բօսիա  
դաս կ'իմանաս, թէ և չեմ կարծում, որ բոլորովին անգէտ լի-  
նիս իմ հանդամանքներին, ըստ որում դեռ անցեալ տարի բա-  
ցել էի քեզ իմ սիրտը: Չկամիմ երկար գրել. որովհետև սիրոս  
լցվում է արիւնով և կեանքս մաշվում է:

Այժմ այսքան ասեմ, որ գնում եմ Պետերբուրգ, կանդի-  
դատի քննութիւն տալու, որպէս զի մի արժանաւոր տեղ ծա-  
ռայութիւն գտանելով, կարողանամ օրական ապրուստ ձարել և  
բժշկութիւնը շարունակել: Պէտք է որ ես ինքս գտանեմ իմ  
ճարը, ըստ որում ոչ մի կոպէկ ոտանալու յոյս չունեմ ոչ մի  
կողմից: Հիւսիսափայլից ձեռք վեր առի, ըստ որում մի ժան-  
դոտ կոպէկ չեմ ստանում. ի՞նչ հարկաւորութիւն ունիմ էջի  
նահատակ լինելու: Այդ ի՞նչ խելագարութիւն է, որ ես ուրիշից  
պարտք առնեմ ապրեմ, Հիւսիսափայլի վերայ տիւ և գիշեր  
աշխատեմ, բայց Հիւսիսափայլից մի կոպէկ չստանամ. այդ ո՞ր  
զրքի մէջ գրած է: Եւ ո՞ր մարդը, որ չունէր բնականութիւն,

<sup>1)</sup> Այս նամակը, որի բնագիրը մեզ մօտ է, չանձնել է մեզ պ.  
Գրիգոր Սալթիկեան, Նալբանդեանցի մտերիմ բարեկամը: Պահում ենք  
Նալբանդեանցի—իրան ուղղագրութիւնն անփոփոխ:  
Ժան. Դամբ.

կերակուր և զգեստ, կարող է գործ կատարել և այն ճրի: Մինչև այժմ ես զոհ եղայ: Թող Աստուած ընդունէ այդ զոհը, բայց տեսնում եմ, որ այսուհետև անկարելի է: Քեզ քաջ յայտնի է որ ես բարոյապէս թուլացած չեմ, կարող եմ շատ աշխատել, բայց աշխատելու համար հարկաւոր են պայմանք, որ ես չունեմ և որը մասին չկամիմ ոչ ոքի բերան բանալ և բան խնդրել:

Այս պատճառով ոչինչ մասնակցութիւն չունեմ այսուհետև Հիւսիսափայլի հետ. ինչ որ օտար աշխարհից բերած տուել էի Հիւսիսափայլին, պիտի տպվի հոկտեմբերի տետրակի մէջ և այսուհետև բարեաւ մնայ Հայոց ազգը: Գրիչս պիտի կոտրեմ և ձգեմ. միւս անգամ Հայոց ազգի անուն տուած ժամանակները ևս պիտի սիրտս խառնվի և փսխելիքս գայ. տհա եղբայր, այժմ իմ գրութիւնը և յուսահատութեան չափը:

Ափսոս ինձ, որ ես երևեցայ Հայերի մէջ. մի այլ ազգի մէջ երբէք այս վիճակում դտանվելու չէի ես, անտէր և անօրնական, միմիայն յուսալով Նախախնամութեան վերայ, որ կերակրում է և ճնճողակները:

Սիրտս արիւնի ծով է. բայց այնքան հոգու գորութիւն ունիմ, որ ոչ ոք չէ կարող իմ գրութիւնը կարգալ երեսիս վերայ: Ուրախ եմ միայն, որ առողջ եմ և տկարութիւնս իսպառ փորատեցաւ:


Որպէս ապրուստի ճանապարհ ես պիտոյ է լինելի կտնդիւղատ և դնում եմ Պետերբուրգ մնալ մի քանի ամիս ու քրննութիւն տալ. իմ ամէն բանը այսպէս պատերազմով պիտի լինի. բայց երևակայիր քեզ, եթէ այս վիճակում, Պետերբուրգ դնալու այնտեղ համալսարանի 50 մանէթը տալու ևս արծաթ չլինի, թողում այնտեղ բնակութիւն և ապրուստի հոգսը, ինչպէս կըլինի մարդու սիրտը և վիճակը: Ինչպէս կըլինի եթէ երթամ Նազարեանցին 200 մանէթ ինդրեմ այստեղ 100 մանէթը մանր պարտքեր տալու և 100 մանէթը ճանապարհի ու համալսարանի փողը տալու համար և նա ինձ ասէ թէ ոչ մի կոպէկ օդուտ չկայ, 340 ստորագրութեան փող է ստացել և 600 մանէթ պարգև. տպագրութեան ծախքը հասնում է մինչև 1500 մանէթ. ինչպէս է այս, լաւ է, սիրտ կըմնայ,

չես յուսահատվելու: Ահա, եղբայր իմ, հանգամանքները, թողում եմ սաւայի 250 մանէթ պարտքը, որի մասին յայտնած եմ երբեմն և ամեն օր մաշում է հոգիս:

Իմանալով այս բոլոր բաները աչքի տակ առնելով, թէ այս վիճակում եղած մարդու սիրտը և հոգին ինչպէս կըլինէր, մի մեղադրիր ինձ իմ լուրթեան համար, այլ ներիր և ցաւակից եղիր որպէս բարեկամ. ասացի՝ սիրտս արիւնի ծով է...

Քո անխարդախ բարեկամ, անմխիթար՝

Մ. Նալբանդեանց



# Ը Մ Բ Ո Ս Տ Ե Ր Փ Ե Ր



Պ՛վ է այնտեղ—այդ գորեղ ողին, որ մերկ ու միայնակ, մրրկում է լեռների գաղաթների վրայ: Գլխովը մշուշն է հալածում, քրքր-քիջովը բուերի ձայներ խլացնում և բարձրաբերձ՝ ճակճոտ անտառների գիջութեան մէջ կառուցած արևստականութեան դէմ՝ ջրեր է յարուցանում:

Ո՞վ է այնտեղ—այդ նոր հսկան, որ մերկ է անամութութեան չափ և անդիմակ՝ ցինիկի յանդգնութեամբ:

Որ անկաշկանդ՝ անտառի շարժումը պրկող բաղեղներից՝ ո՛չ մի գարշապարի առաջ չէ խոնարհեցնում իր թռիչքն ու իմաստութիւնը:

Միայնակ ու մերկ է նա, որպէս աղաա իմաստութիւնն իր խոհերով: Հանգչում է բարձրութիւնների մէջ և քրքջում ճակճիների խորքում սնանուղ կանաչ աղտոտութիւնների վրայ:

Նրա զբօսանքն է—ծաղր կարկտել փշերի դլխին, հեղ-

նութիւն տեղալ վալելչութեան աստծոյ վրայ և իմաստութեան խանդովը մերկացնել ամեն հաղնւածի:

Նրա խօսքերը լծակի պէս դարձնում են դարևոր ժայռեր և տակի խոնաւ գիջութիւնը արևին պարզում: Նրա իմաստութիւնը անգութ է և խիստ, որպէս անխնայ աւերիչ դարևոր հնութիւնների:

Նւիրականութեան հոտը նրան չէ բորբոսեցնում. աւանդականութեան օձը նրա ոտների տակն է և հնամեայ բարոյական վիշապը սողունի պէս գայարում է նրա առաջ:

Սաւառնում է նա տիեզերքի տարածութեան մէջ անսահման առաջ. նրա շրթունքներից հոսող ջերմութիւնը հալեցնում է անշարժ ժայռեր:

Փոքր է նա, որպէս հեռւից երևցող աստղ. կիզիչ է՝ որպէս ելեքտրական հոսանք: Նրա խոհերը շանթի նման իջնում են գաշտերի վրայ, մոխիր դարձնում ճակճներ, ընթացք տալիս ծովերի:

Ոլորապտոյտ մրրկի պէս շարժում է նա անապատի աւազը. նոր բլուրներ ու բարձրութիւններ կազմում, նոր հասկացողութիւններով ջարդում է հսերի դլուխը և նոր կշիռներ դնում հրապարակների վրայ:

Լեռների անօսր բարձունքների, երկնքին ձգտող ըմբոստողու երգերը լսեցէք...

...Երբ թափառում էի անտառի մէջ և ոտներս ճակճների տիղմից ծանրացել էին ու հողիս գարշ օդից բթացել— ըմբոստ ողին, միայնութեանս ու դառնութիւնների խոհերից ծնած, թափանցեց սրտիս մէջ, խլեց ուղեղս պրկող պաատտակները և ես զնացի նրա ետևից:

Եւ մարդիկ ասացին. « —խենթացաւ... »!

Խելօք էի ես ճակճի մէջ, երբ նախիրային և քառակուսի էր սւղեղս և աիղմով կաղապարած: Խելօք էի ոչխարի պէս, հնազանդ՝ որպէս կով և համեստ՝ որպէս զբաստ:

Բեռնաբարձ սալ էին դարձրել ուղեղս և ծանրացրել պարաաւորութիւնների ժանգոտ շղթաներով:

Ըմբոստ ողին, բարձրութիւնների մերկ հսկան՝ խլեց ինձ  
և «խենթացրեց» խոհերս:

Եւ ես աշակերտ եղայ ըմբոստ ողուն:

Խօսիր վարպետ: Ծարաւի եմ վճիտ և բնական ջրերի, որ  
դեռ ո՛չ մի աւազանի մէջ չէ սեղմած ու սղոտորած և խողո-  
վակներում չէ կաղապարած:

Խօսիր, ըմբոստ ողի:

Ու ողին տարաւ ինձ բարձր՝ ամեն ճակիճից, ամեն ան-  
տառից և երբ տարտղնած նախիրն էի դիտում, նստեցուց մի  
բարձր կատարի վրայ և խօսեց այսպէս:

Ե՛ս եմ ձեզ հետ խօսողը — լեռների վրայ սաւառնող, ամ-  
պերի բարձրութեանը և զիաակցութեան կրակը զողնալու ճրգ-  
տող՝ ըմբոստ ողին:

Եւ ձեզ հետ եմ խօսում, գծում որսորդներ, որ վար իջե-  
ցրիք ժայռի կատարի վրայ ելած արձւին իր ձագերով և նրան-  
ցից խրտուխակներ շինեցիք ձեր ազտոտ պալատների դարդա-  
բանքի համար:

Ձեզ հետ եմ խօսում, փոքրագոյն մասի վրայ ցեխ շրպը-  
տող որսորդներ, որ արձւային խոհերը գողնալով՝ ձեր խոհա-  
նոցը իջեցրիք և նրանով միայն ձեր ստամոքսը պարարող կը-  
բակն էք արծարծում:

Ձեզ հետ եմ խօսում, զոյների սիրահարներ, որ ժողո-  
վրդեան մեծ ձգտումները ներկի փոխեցիք և շարած ձեր ազ-  
տոտ գէմքերը, իջեցրիք ձգտումների նժարն ու հաստատեցիք  
ձեր կազմած ճակիճների տիղմի մէջ:

Գուք կարողացաք, այո՛, արձւին վար տանել, նաև իր  
ձագերին. բայց այստեղ — բարձրում, ըմբոստ ողին թողցրել  
է մի ձագն ևս, որ մեծացած՝ փորէ պիտի ձեր ուղեղը, կրճի,  
ձեր աչքերը և խարանէ ձեր գէմքը:

Գուք կարողացաք, այո՛, ժողովրդեան խոհերի նժարը  
գծում դարձնելով՝ տիղմի մէջ հաստաանել, իրեն — ժողովրդին  
նախիրի փոխել. բայց ըմբոստ ողին պահել է նրա խոհերից  
կռած երկփանին, որ շիկացնելով՝ մղէ պիտի ձեր բորբոս-

նած սիրտը և ձեր շահամոլ ձեռքերը դամէ ձեր խարեբայ  
լեղւին:

Գուք կարողացաք, այո՛, վսեմ թռիչքները խարէութեամբ  
ձեր խոհանոցը իջեցնել և ցայտած կայծերովը ձեր կերակուրը  
միայն պատրաստել. բայց ըմբոստ ողին խնամել է այդ կայ-  
ծերից մէկը, որ բոցավառած, մրկէ պիտի ձեր բոլոր խոհա-  
նոցները և շների կերակուր դարձնէ ձեր ճարպացած ստամոքսը:

Բերում եմ ահա արձւի ձագը, որ մեծացել է արդէն՝ տա-  
ռապողների արցունքն ուտելով:

Բերում եմ վսեմ խոհերից կռած երկփանին, որ շիկացել  
է արդէն նահատակների տանջանքներով:

Բերում եմ նաև ազատ մնացող այն կայծը, որ բոցա-  
վառել է արդէն՝ ձեր խարէութեան ու գծումութեան պատ-  
ճառած վշտերով:

Գալիս է նա — արձւի ձագը, շիկացած երկփանին, ազատ  
մնացող կայծը՝ մղած ըմբոստ ողուց:

Ճանապարհ նրան: Անցնելու է նա ձեզ վրայ կոխելով,  
ձեր խոհանոցները փլեցնելով, ձեր կաղապարած բարոյականու-  
թիւնը ոտնակոխ անելով և ձեզ անխնայ ոչնչացնելով:

Իսկ այժմ, ուզում եմ և քեզ ապտակել, արածո՞ղ նա-  
խիր: Մի հսկայ, կրակ հանող ապտակով ուզում եմ խարան  
զնել քո գետնին քուող գէմքի վրայ:

Ուզում եմ որ այդ ապտակը ջարդի կամ փոխի քս ստո-  
րաքարը գէմքը, որ այլ ևս կարմրել չըզլտէ, արածո՞ղ նախիր!

Ուզում եմ շանթ լինել և քո սիրտը բովել. այդ ցեխի  
կոչտ դարձրած սիրտը, որ միայն աղտոտութիւն է մղում գէ-  
պի քո երակները, արածո՞ղ նախիր!

Եւ այդ բոլորը անելուց յետոյ, ուզում եմ լալ և արտաս-  
ւել քո անկման վրայ, արածո՞ղ նախիր!

Աւերակ ես եղել, ճակիճ ես դարձել: Աւերակից և գար-  
շիկ մէջ լողում ես սողունի նման և հանդիստ գոլում քեզ:

Իմ ապտակը թող կարմրեցնի քեզ, դանձր մթնոլորտով սնան-

ւող նախիր: Իմ ապտակը թող կարմրեցնի քեզ, անամօթութեան սուլոր գունատ զեղնութիւն!

Որպէս զի արօտ ունենաս՝ ստրկութեան մէջ հանգչում ես, որպէս փափուկ անկողնի վրայ, արածող նախիր: Քո խոհերը նոյնքան դարշելի են, որպէս ոտներիդ կայան՝ հողը: Չգտումներդ նոյնքան բարձր են, որքան ջրի տակ իջնող աղտոտ տիղմը:

Եւ դու գոհ ես, արածող նախիր: Գոհ՝ քո մղումներով, գոհ՝ քո երկար աղիքով և գոհ՝ քո չորս ոտներով:

Գու գլուխդ երբէք չես բարձրացնում: Ու, ինչ որ բարձրում, գլխիդ վրայ ոլիտի որոնել, ցած ես բերում ու ցեխոտ սմբակներիդ յարմարեցնում: Ճահճիդ մէջ ես տեսնում աստղերը, տիղմիդ մէջ՝ քո տարածութիւնը:

Պարտականութիւններ ես սահմանել քեզ՝ շրջապատող եղէգների ձայներից, եղջիւրների միմեանց դէմ ես դարձրել, միմեանցով արնոտել:

Ուզում եմ քեզ ապտակել, արածող նախիր. խարան դնել քո ստորաքարը դէմքի վրայ:

Ահա իմ շանթերը. թող խրե՛ն նոքա սրտիդ մէջ և թող բմբոստ ողին շարժէ քո ճահիճը, խանձէ քո արօտը և ոչինչ չըթողնէ քեզ՝ քո անցեալ սնունդից:

Բարձրացրու դէմքդ, արածող նախիր, և երբէք ինքդ քեզ մի ասիլ. — «Ես սլարտաւոր եմ», այլ միմիայն — «Ես ուզում եմ»:

Պարտականութիւնը մի ախոռ է, ուր էշեր են կապում կամ արածող և մորթելու սահմանած նախիր կուտակում: Ո՛չ առիւծը կարող է ապրել այդ ախոռում և ո՛չ արծիւրը:

Յանկացիր անապատ, բայց երբէք այդ ախոռը:

Պարտականութիւնը այն գերեզմանն է, ուր հօտում է աղատութիւն, սէր և այլ բարձր յատկութիւններ... Ըմբռնում ես դու, արածող նախիր, թէ՛ դուցէ ճակճային հասկացողութեամբ պիտի մեկնես իմ ապտակը:

Պարտականութիւնը մի ջրաղաց է, խոնարհած գլուխ, ուր

փոշի են դառնում ձեռներէցութեան և անկախութեան ողին... Ըմբռնում ես դու, տափակած ուղեղ!

Պարտականութիւնը այն ստորացուցիչ նշաւակի թեւն է, որ առաքինութիւն է կոչել և որին զամում ու նշաւակում են ինչ որ մեծ է, ինչ որ վսեմ է:

Իմ ապտակը աքցան թող լինի և կորդի քեզ նշաւակութեան անիւի վրայից: Իմ ապտակը թող մերկացնի այն խեղկատակ դիմակը, որով քո հովիւները ծածկել են Մեղուգայի զղւելի գլուխը:

Ահա իմ ապտակը!

Ահա իմ հսկայ ապտակը, իմ աքցանը, իմ ջնջոցը...

Ի՞նչն է որ կոչել է առաքինութիւն:

— «Եղիւր խոնարհ, համեստ, բարի, համբերող: Եղիւր սիրալիր, երկայնամիտ՝ և դու առաքինի ես»: — Այդպէս են խրատում քեզ. և ո՛չ ոք չէ եղել, որ ապտակելով քեզ՝ այդ բառերի բուն գործադրութիւնը պարզէ քո առաջ:

Իսկ ես ասում եմ: — «Կտրեցէք այ՛ր առաքինութեան հըրէշաւոր գլուխը, շնա հաստացել է նա. կտրեցէք ոտները — շատ երկարացել է ու ճումուել... Կտրեցէք անխնայ:

Եղէք հպարտ, յանդուզն, եղէք նոյն իսկ չտր, բարկացող, խիստ և կուարար...

Ըմբռնում ես դու, արածող նախիր. թէ՛ ճակճային հասկացողութեամբ պիտի մեկնես ապտակս:

— «Եղիւր համեստ» — ասում են քեզ: Եւ համեստութիւնը խոնարհութիւնն էս հասկացել ու ստրուկ դարձել: Քեզ ոչինչ վստահել չէ կարելի, ստրուկ-խոնարհ: Եւ դու գլուխդ քարը, արածում ես միայն և աստղերդ ճահիճի մէջ երազում:

— «Եղիւր խոնարհ» — ասում են քեզ: Եւ խոնարհութիւնը անճարակութիւնն էս հասկացել. և եղել ես անշնորհ, անճարակ և ապուշ: Քեզ խղճացել են միայն, թշառական անմիտ: Եւ դու գլուխդ քարը, կրել ես ամեն նախատինք, ամեն իշուրեռ և իւրաքանչիւր քայլով վարտնել ես դնելու:

— «Նղիւր բարի» — ասում են քեզ: Եւ մէջքիդ բարձել են ամեն ազտտութիւն, սրտիդ դրոշմել ամեն դժուծութիւն: Տւել ես ամեն ունեցածդ և ինքդ մնացել ձեռնունայն. այժմ մուրում ես:

— «Նղիւր համբերող» — ասում են քեզ: Եւ համբերատարութիւնը հասցրել ես համակերպութեան: Բարձել են սրտիդ, ուղեղիդ վրայ ճղմող, փոշիացնող առաքինութիւններ: Եղել ես արիւնոտ մտրակ քո իսկ մէջքի վրայ. մտրակում ես թմրեցնելու չափ՝ քո իսկ մկանունքը, փոխում քեզ տձև ցեխի և ամեն անցորդ իր սմբակներով ոտնակոխ է անում քեզ:

— «Նղիւր երկայնամիտ» — ասում են քեզ: Եւ քո միտքը այնքան երկարացրել ես, որ թույլ սողունի նման՝ հողի և փոշու մէջ է ծածկւում. երկար մտքովդ կաշկանդել ես սիրտդ և գոհ ես անշարժութիւնովդ:

Եկել եմ ահա: Արակովս պիտի մրկեմ—կարճացնեմ երկայնամտութիւնդ, խոհերովս տրորեմ խոնարհած ճակատդ, թքեմ պիտի կորացած սրտիդ վրայ, ըմբոստ ողովս դարբնեմ—ուղղեմ համբերատար ու ծուած ողնաոխւնդ, արածոց նախիր!

Եթէ ընդունակ չես ազատել քեզ ճղմող առաքինութիւններից, եթէ չես կարող կտրել ականջներդ, փորել արտասուքի աղբիւրներդ—ոչնչացիր իմ կրակով և մոխիրիդ միջից կըծնի այն նոր սերունդը, որ կարող պիտի լինի ծաղրել ամեն կաղապարային առաքինութիւն:

Սիրում եմ ես կռիւր: Սիրում եմ կուարարին, սիրում երկար և ամուր եղջիւրները զէմ տւող խոյին, ճւատող, պատառոտող յովազին, նոյն իսկ ճանկաւող, ճչացող կապիկին, բայց երբէք լուռ ու մունջ արածող ոչխարին:

Սիրում եմ նրան, ով անգոհ է, անվարեցող, ով ըմբոստ է և յիտրդ, ով խայթող է և բռունցքն երկաթի:

Սիրում եմ ես նրան՝ ով հոսանքի զէմ է լողում. հոսանքըն ի վեր գնում՝ ջարդւելով այլեքների զէմ:

Եւ այդ պատճառով՝ սիրում եմ կնճռոտ զէմքեր, սիրում խայթիչ լեզուն, սիրում ճիրաններ և լարած նետեր:

Եւ այդ պատճառով՝ թքում եմ ես ձեր երանաւէտ զէմքին, ձեր խաղաղ բարքի, հեղ բնաւորութեան և համակերպող բարութեան վրայ:

Եւ այդ պատճառով՝ դարշում եմ երբ լալիս ես՝ փոխանակ կատաղելու, կծկւում ես՝ փոխանակ լարելու, ծալում ես՝ փոխանակ ծալելու, և միշտ, զգացնելու չափ միշտ հառաչում՝ փոխանակ փրփրալու...

Յոյց եմ տալիս քեզ ահա այդ գետակը, որ փորում է ամեն բան՝ և ճանապարհ կորզում, որ փրփուրներով մաշում է կոշտ ժայլեր, ուտում է նրանց կուրծքը, պայթում նրանց գլխի վրայ, ոտնատակ տալիս մացառ ու քար և չէ կամենում լրճանալ-հոսել, իջնել-արտասել:

Յոյց եմ տալիս նոյնպէս ահա այն քծնող շանը, որ անօթի չըմնալու համար՝ շարժում է պոչը, տիրոջ նշանի վրայ՝ ազատ ընկերին խածնում, կաղկանձում է ամեն կիցի տակ, մէջքի վրայ պառկած՝ զողում է ամեն սպառնալիքի առաջ և զնում սատակելու ամենից մոռացած՝ որջի մութ անկիւնում:

Նետ, արածոց նախիր. արտասուքդ թոյն շինիր, սիրտդ նետ և սլացիր ամեն ուղղութեամբ:

Եղիւր խոյ, արածոց նախիր. եղջիւրների սրիւր ոտներովդ, կնճռիր զէմքդ. կնճռիր, բայց մի՛ չուսահատուիր:

Այդպէս միայն կարող ես խցել արտասուքիդ աղբիւրը, բռունցք շինել մուրացող ձեռքդ, սրել տափակ ատամներդ:

Այդպէս միայն կարող ես ճակիճճ լեռ դարձնել, աստղերդ իր տեղը հանել և չորս ոտքդ՝ երկուսի փոխել:

Այդպէս միայն կարող ես կարճացնել ականջներդ, կտրել առաքինութեան հաստացած դուրիւր և փակել սլարտակաւութեան ախոռի դուռը...

Երգեց ըմբոստ ողին իր այդ երգերը, դարձաւ ապա զէպի ինձ և ասաց այսպէս.

Այս երգերը չեն ճակճալին հասկացողութիւնների կամ

Ժողովրդեան ձգտումների նժարն իջեցնող՝ դժուճ որսորդների համար:

Եթէ վնաս հնչեցին նրանք քո ականջին—վնար իջիր ուրեմն դարձեալ գէպի արօտը.—ահա նախիրը և ահա որսորդների աղտոտ խոհանոցները: Իջիր, մտիր ուրեմն այդ փոքրագոյն մասի վրայ ցեխ շարտող որսորդների շարքը:

Ըմբոստ ոգին կանգ չէ առնում և ոչ էլ կրլուի. նա երբէք չէ կասում: Վաղ թէ ուշ՝ այդ բոլորին նա կամուրջ կրգարձնէ իր խոհերի համար և նրա վրայից ձեռք կրտայ անջն փոքրագոյն մասին, որ յառաջընթացն է լինելու բարձունքների և մաքուր օդի ձգտող սերնդեան:

Եթէ խորթ հնչեցին երգերը քո ականջին, խլացիր ուրեմն կաղապարային առաքինութիւնների փքուն աղաղակներով, մտիր պարտականութիւնների ախոռը և համբուրիք մըտրակի կոթը:

Ըմբոստ ոգին կանգ չէ առնում և ոչ էլ լռում. նա երբէք չէ վարանում: Վաղ թէ ուշ՝ կրլայնացնի նա բոլոր նեղ դռները և նրա միջով կանցկացնի իր պատրաստ սերնդեան հսկայ որդիները...

Վ. Փափագեան



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ

# ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄԸ

ՆԻ

ՆԱԲԱԳԱՏՄԱԳԱՆ ԶԲԱՆԵՔ



Կարուն կիսէն այս կողմ հնութեան վերաբերեալ գիտութիւններ, ինչպէս հնախօսութիւն, բնեւագիտութիւն (ասորեստանեան, հին պարսկական բնեւագիրներու գիտութիւն), խալդիաբանութիւն, հիթիթաբանութիւն, ընդհանուր և հայկական լեզաբանութիւն՝ նորանոր յայտնութիւններ ըրին, շատ անձանօթ բաներ պարզեցին մեր ծաղման և մեր պատմութեան ամենահին շրջանին նկատմամբ: Այս կարգի աշխատութեանց ամենամեծ մասը, մասնաւորապէս եւրոպական լեզուներով եղածները, զբաւած են մասնադէտներու համար և մատչելի չեն ոչմասնադէտներուն և ընթերցող հասարակութեան: Այս վերջիններուս փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու համար, կարելի եղածին չափ ժողովրդական ոճով՝ պատրաստուած է ներկայ յօդուածը՝ որուն մէջ ամփոփուած են վերոյիշեալ գիտութեանց վերջին (թէև ոչ բոլորն ալ վերջնական) եղրակացութիւնները

մեր ազգին ծագման և նախապատմական շրջանի մասին համառօտիւ:

Քրիստոսէ քանի-քանի հազար տարիներ առաջ, չըկային երկրի այժմեան քաղաքական բաժանումները. գոյութիւն չունէր դեռ այն մեծ թէ փոքր ազգերէն և ոչ մէկը, որ մենք այժմ կրտսնենք կամ ընդհանուր պատմութեան մէջ ուսած ենք: Կային սակայն այս ազգերէն և իրարմէ տարբեր մէկ քանի ցեղ: Այս ցեղերուն մէջ մասնաւորապէս կար սպիտակ գոյնով, զրեթէ մեր տիպերէն շատ չքտարբերող, խելացի, շատ ընդունակ և յառաջագիմատէր ազգ մը: Այս ազգը կրխօսէր մէկ լեզու մը, որ շատ հարուստ, շատ ճոխ լեզու մըն էր և իր քերականական կազմութեամբ ու բառերով շատ նման էր հին յունարէնին, հին հնդկերէնին, ինչպէս և հին հայերէնին: Կրգաւանէր միակ կրօնք մը, որ հեթանոսական կրօնքին նախկին ձևն է: Ունէր նաև իրեն համար քաղաքակրթութիւն մը:

Յայտնի չէ թէ այդ ազգը ուր կրբնակէր: Քիտենք միայն որ այս ցեղին հայրենիքը կրգտնէր Եւրոպայի կամ Առաջակողմեան Ասիոյ մէջ (մինչև Հնդկաստան) տեղ մը: Այս ազգի անունն ալ անծանօթ է մեզի, որովհետև իրենց ձեռքէն մընացած և ոչ մէկ յիշատակարան ունինք: Սակայն ընդհանուր լեզաբանութիւնը անոր անունը զրաւ Հնդ-Եւրոպացի, այնպատճառաւ, որ անոր նախնական հայրենիքը, ինչպէս յիշեցինք, կրգտնէր Եւրոպայի և Հնդկաստանի մէջ տեղ գտնւած տեղ մը:

Այս ազգը ժամանակ մը իր մէջ իր կեանքով ապրելէ ետքը, հետզհետէ շատնալով սկսաւ մեծամեծ խմբերով այս ու այն կողմ ցրելի, ուրիշ խօսքով՝ զաղթականութիւններ հաստատել: Ասոնցմէ մեծ խումբ մը զաղթեց և լեցուց այն ընդարձակ տարածութիւնը, որ կրկազմէ այժմ Պարսկաստան, Հնդկաստան, Աֆղանիստան և Պելուճիստան կոչւած երկիրները: Երկրորդ խումբ մը տարածեցաւ Փոքր-Ասիոյ հարաւային և հարաւարեւմտեան մասերը: Երրորդ մեծ խումբ մը գնաց բունելու այժմեան Յունաստանը, Կրէտէն, Թեսաղիան և այլն: Չորրորդ խումբ մը հաստատեցաւ Ալպանիոյ, Թրակիոյ, Եպիրոսի և Լիւ-

րիկիոյ կողմերը: Հինգերորդ խումբ մը գնաց նստաւ արդի Իտալիան և ասոր շրջակայ գաւառները: Վեցերորդ խումբ մը բընակեցաւ Աւստրիոյ մնացեալ մասերը, Սերբիա, Չեխիգորիա, Լեհաստան և այլն: Եօթերորդ խումբ մը նստաւ Լիթուանիոյ մէջ: Ութերորդ խումբ մը տարածեցաւ Դերմանիոյ, Աւստրիոյ մէկ մասին, Զուէրի, Նորվեգիոյ, Գանիմարքայի, Անգլիոյ և այլն հողերուն վրայ: Իսկ իններորդ խումբ մը լեցուց Գաղղիան, Ռելգիան, Սկոտիան և այլն:

Ընդհանուր լեզաբանութեան մէջ այս խումբերը առանձին-առանձին անուններով կրչիշեն:

Այսպէս՝ առաջին խումբը կրկոչւի Արիական խումբ. երկրորդ խումբին վրայ յետոյ կրխօսինք. երրորդ խումբը կրկոչւի Յունական, չորրորդը՝ Լիւրիկեան, հինգերորդը՝ Իտալա-Յունական, չորրորդը՝ Սլաւական, եօթներորդը՝ Լիթուանական, ութերորդը՝ Գերմանական, և իններորդը՝ Կելտական խումբ:

Այս խումբերը իրենց բունած երկիրներուն մէջ հաստաւելէ ետքն ալ ի հարկէ կըշարունակէին այն կեանքը՝ որ կրվարէին իրենց զաղթականութիւնէն առաջ, իրենց հին հայրենիքին մէջ. կրխօսէին այն լեզուն, որ ունէին արդէն. կրգաւանէին այն կրօնը՝ զոր կրգաւանէին արդէն:

Քայց որովհետև իւրաքանչիւրը կապէր իրարմէ տարբեր կլիմաներու տակ և աարբեր երկիրներու մէջ, որոնք տարբեր անձնայատկութիւններ ունէր, ուստի և սկսաւ նախնական բեր անձնայատկութիւններ ունէր, ուստի և սկսաւ նախնական հայրենիքի կեանքը հետզհետէ փոխիլ. իւրաքանչիւրին մէջ առանձին իշխանութիւն և սեպհական հասարակական կեանք մը յառաջ եկաւ. խօսւած նախնական լեզուն իւրաքանչիւր խումբի մէջ ալ սկսաւ տարբեր-տարբեր ալլալութիւններ կրիլ. նմանապէս կրօնքը ալ և ալ ձևեր ստացաւ. այնպէս որ այս տարբերութիւնները հետզհետէ աճելով, նախնական եղբայրներու նմանութիւնը շատ հեռացաւ, որով ձևացան զանազան

ազգեր և լեզուներ այսպէս. Յունաստանի մէջ յոյն ազգը և յոյն լեզուն իր բարբառներով և այլն:

Քանի մը Հագար տարի անցնելէ ետք երբ այս խումբերէն իւրաքանչիւրին վրայ նայէր, դարմանալի և անհաւատալի պիտի գտնուէր թէ այս ազգերը բոլորն ալ միեւնոյն երկրի ճնուկն են և միեւնոյն ազգի բեկորներն են:

Մասնաւորապէս կը հետաքրքրէ մեզի երկրորդ խումբը, որուն վրայ կուգենք խօսիլ այժմ:

Երկրորդ խումբը ելնելով իր նախնական Հայրենիքէն, եկաւ բռնեց Փոքր-Ասիոյ Հարաւային և Հարաւ-արևմտեան կողմերը, այսինքն ամբողջ Կիլիկիան, Կիլիկիոյ արևմտեան և Հիւսիս-արևմտեան կողմի զաւառները, մինչև Մանիսս և Արշիպեղագոսի եզերքները:

Այս ընդարձակ տարածութեան մէջ հաասուելով երկրորդ խումբը կազմեց առանձին երկիր և առանձին ազգութիւն՝ որ ունէր սեպհական լեզու մը, առանձին կառավարութիւն և առանձին քաղաքակրթութիւն: Այս ազգը թէ՛ զինքը և թէ՛ իր բնակած երկիրը կոչեց Հատի (Hati), որմէ իր լեզուն ալ պիտի կոչենք հատերէն:

Հատի ազգը առաջին անգամ պատմութեան մէջ երևան կուգայ Քրիստոսէ 1500 տարի առաջ. սկսեալ այս թւականէն, մէկ կողմէն Եգիպտացիք և միւս կողմէն Ասորեստանցիք այլ և այլ լարաբերութիւններ ունենալով Հատիներուն հետ, դանոնք կը յիշատակին իրենց թողած յիշատակարաններուն՝ այսպէս Եգիպտական մեհենագրոշմ և Ասորեստանեան բեեռագիր արձանագրութեանց մէջ խատէ կամ խատի անուանով:

Ն. Ք. 1500 թւականին արդէն զիտենք որ Հատի երկիրը թագաւորներ ունէր, սակայն ոչ թէ միահեծան իշխանութիւն մը կը կազմէր նո, այլ կը բաղկանար բազմաթիւ փոքրիկ-փոքրիկ թագաւորութիւններէ. այսպէս՝ կային Համալի թագաւորութիւնը, Կարկեմիշի թագաւորութիւնը, Մարաշի, Մալաթիայի, Տարսոսի, Իդգինի (այժմ Ալբիտան՝ Զէլթունի մօտ) և այլն թագաւորութիւնները:

Հատի երկիրը նաճելու համար շատ աշխատած են Աս-

րեստանցիք: Ասորեստանեան բեեռագրութեանց մէջ յիշատակուած են այն պատերազմները, որ Ասորեստանի թագաւորները մղեցին Հատիներուն դէմ և որոնցմով կամաց-կամաց Հատեան թագաւորութիւններին տիրելով՝ առաջ քալեցին դէպի արևմուտք:

Ն. Ք. 730 թւականէն ետք Ասորեստանցիք տիրեցին Մալաթիա քաղաքին և ջնջեցին Մալաթիոյ թագաւորութիւնը: 717-ին նաճեցին Մարաշի թագաւորութիւնը, որ թերևս Հատեան թագաւորութեան մէջ ամենէն մեծն էր:

Ասորեստանեան պետութեան կործանումէն ետք Հատեան իշխանութիւնը սկսաւ զօրանալ և տարածուիլ. այս ժամանակ տիրած են նաև Ասորիքին և անոր Հիւսիսային կողմերուն — Հայկալ, Աղէքսանդրիա և այլն: Բայց այս իշխանութիւնն ալ երկար չըտևեց, որովհետև շուտով ստիպւեցաւ ճանջնալ պարսկական զերիշխանութիւնը: Այս իշխանութիւնը վերջ տուաւ Հատեան երկրին և ազգին:

Հատեան ազգը Հնդեւրոպացի ազգերուն մէջ առաջինն է որ պատմութեան մէջ անցած է. բոլոր Հնդեւրոպացի ազգերուն մէջ ասոնք եզան որ առաջին անգամ գրութեան դասագիրք ունեցան և իրենց համար տառեր հնարելով՝ իրենց պատմական գէպքերը հատերէն լեզուով արձանագրեցին քարերու և ժայռերու վրայ, և մեզի յիշատակ թողուցին:

Այն ժամանակ երբ Հատեան ազգը Հատի երկրին մէջ իր ինքնուրոյն կեանքը կապրէր, դէպի Արևելք Կովկասեան լեռներէն մինչև Միջագետք ուրիշ ազգ մը կը բնակէր, Հատեան ազգէն աւելի աշխարհակալ և աւելի մեծազոր: Այս ազգը կը կոչուէր Խալդի և երկիր Խալդիա կամ Խալդիստան. Խալդի ազգը կը պատկանէր Հնդեւրոպացի ցեղէն շատ տարբեր ուրիշ ցեղի մը, որուն ճիւղերն են նոյնպէս Քաղդէացիք, Կովկասեան այլ և այլ ազգերը, մասնաւորապէս մեզի ծանօթ Արշացիները, Ասորեստանցիները, Ասորիները, Փիւնիկեցիք, Հրէաները, Արաբները, Եգիպտացիք, Հաբէշները և այլն: Մարդկային այս ցեղը դեռ զիտուութեան կողմէ անուն մը ստացած չէ, որովհետև զիտուները շատ զբաղած չեն ասոնցմով. սա-

կայն յարմար կըլլար կոչել զանոնք Աովկաս-Եղիպտական ճիւղ <sup>1)</sup>։

Խալդի ազգն ալ ուրեմն անյիշատակ ժամանակներու մէջ Հաստատուած էր Խալդիաստանի մէջ և դրացի զտնելով Ասորեստանեան ահեղ պետութեան, ստիպուած էր իր զոյութիւնը պահպանելու համար՝ անդադար պատերազմներ մղել ասոնց դէմ։ Խալդիան թագաւորները թողած են մեզի խալդերէն բազմաթիւ բեւեռագիր արձանագրութիւններ Ասորեստանցոց տառերով, որոնց մէջ պատմած են իրենց պատերազմական քաջագործութիւնները, ինչպէս և աշխարհաշէն մեծագործութիւնները։ Խալդիները նոյնպէս շարունակ յիշուած են Ասորեստանեան բեւեռագիր արձանագրութեանց մէջ, այնպէս որ Խալդիան ազգին պատմութիւնը գրեթէ կանոնաւոր և բաւական անընդհատ կերպով կրնայ հետեւիլ։

Ասորեստանեան ակումբեան պէս հզօր տէրութեան մը զիմադրելը ինքնին արդէն կընշանակէր մեծ ոյժ մը ունենալ։ Խալդիներու այս ոյժը սակայն հետզհետէ թուլանալ սկսած էր անդադար մղուած պատերազմներուն մէջ. այնպէս որ Ն. Ք. թւականներուն արդէն տկար վիճակի մը մէջ էին։

Ճիշտ այս շրջանին էր որ Հատեան զօրաւոր հոսանք մը Հատեան երկրէն ելնել ստիպելով՝ շարժեցան դէպի Արևելք՝ Խալդեան ազգին վրայ. մեծ էր այս նոր ասպատակներու ոյժը. այնպէս որ արդէն տկարացած Խալդիան չըկրցաւ ասոնց զիմադրել։ Հատիները տիրեցին ամբողջ Խալդիոյ, սահրկացուցին ամբողջ ժողովուրդը և իսպառ ջախջախեցին Խալդիական իշ-

<sup>1)</sup> Եյս վարպետութեան գտիչն է պ. Ն. Մառ., որ թէև հրատարակած չէ դեռ զայն, բայց բարեհաճած է նոյնը մեզի մանրամասն յայտնելու և ծանօթացնելու։ Վարդապետութիւնս լեզւաբանական տեսակէտով այնքան ապահով, այնքան ուղիղ և այնքան զեղեցիկ է, որ տարակոյս չըկայ ամենևին թէ հրատարակելուն պէս կատարեալ համաձայնութեամբ պիտի ընդունւի գիտնականներու կողմէն։ Մենք կըկարծենք թէ լեզւաբանական այս խմբին յարմարագոյն անունը պիտի ըլլար Աովկաս-Եղիպտական, զոր և կառաջարկենք։ Աովկաս Եղիպտական նոր լեզւախոսմբը կըբաղկանայ ուրեմն երեք ճիւղերէ. 1) Աովկասեան ճիւղ, 2) Սեմալեան ճիւղ, 3) Քամեան ճիւղ։

խանական ցեղերը։ Խալդիներէն մաս մը որ կրցաւ ճողոպրիլ Հատիներուն ձեռքէն, փախաւ ասպատանիլ Խալդիոյ Հիւսիսային և Հիւսիս-արևմտեան կողմերը, Տրապիզոնի շրջակայքը, Սև ծովի եզերքները։ Հատերը Խալդիոյ մէջ շուտով բնաջինջ ըրին խալդիական ազգը, կոտորելով կամ իրենց մէջ ձուլելով զանոնք. երկրին անունն ալ փոխելով՝ դրին Հատի, իրենց նախկին Հայրենիքին անունովը։ Իսկ գաղթական խալդիները իրենց Հայրենիքին վերստին տիրապետելու ամեն յոյս կորսնցնելով, բոլորովին Հաստատեցան իրենց նոր գաղթավայրին մէջ և Հատերու օրինակին համեմատ կոչեցին զայն Խալդի կամ Խաղդիք։

Անցան ժամանակները, ազգային այս մեծ շարժումները և Հայրենիքներու այս փոփոխութիւնները բոլորովին անյիշատակ կորսեցան և մոռցեցան. իւրաքանչիւրը Համարեց ինքզինքը բնիկ տեղացի։ Խալդեաները օրէ օր ընկան, այնպէս որ անոնցմէ ցիզանի նման ժողովուրդ մը միայն մնացած է այժմ Տրապիզոնի մօտերը։

Իսկ Հատերը նոր Հատիոյ մէջ օրէ օր առաջ գնացին և մեծնալ սկսան։ Օտարները զիրենք Արմէն կոչեցին և երկիրը՝ Արմենիա։ Հատի բառն ալ հետզհետէ սղելով, դարձաւ Հայ, որմէ Հայք ու Հայաստան։

Ահա մենք ենք այս Հատերը և հին Խալդիան է մեր Հայաստանը։

Հրաչեայ Աճառեան





ըւորութիւն ունեցաւ, չընայելով որ այդ ժամանակը նրա ամենաթույլ զարգացման տարիներն էին:

Տեսնենք այժմ թէ ինչ էր ներկայացնում հէնց այդ շքրջանի գեղարւեստը:

Քրիստոնէութիւնը սկսում էր իր յաղթանակը: Քայց նրան հետեւողները գեռ անխնայ հալածուում էին: Նրանք իրաւունք չունէին բացարձակ դաւանել իրանց նոր կրօնը և ազատորէն կատարել նոր ծէսերը: Հետեւաբար, ստիպւած էին դիմել դանազան զազտնի միջոցների: Հէնց այդ նպատակի համար էր, որ քաղաքից դուրս, սկսեցին գետնափոր անցքեր, նեղ մուտքեր շինել՝ որպէս զի հեթանոսների աչքերից հեռու կարողանան կատարել իրանց ժողովներն ու աղօթքները:

Գետնափորները միասին առած՝ մի անվերջ լաբիրինթ էր կազմում—մութ, անթիւ անցքերով ու խորշերով. այնտեղ էին ոչ միայն աղօթատեղիները, այլ և ժողովատեղիներն և նոյն իսկ գերեզմանները <sup>1)</sup>: Արտարապետական ձևերի մասին հարց չէր կարող լինել. գեղարւեստի միւս ճիւղերը—նկարչութիւնն ու քանդակագործութիւնը այդ մութ ու նեղ անցքերում միմիայն խորհրդանշաններ էին և ոչ թէ նկարներ. նրանք յաճախ չէին նշանակում այն, ինչ որ ձևացնում էին. ընդունւած էր՝ որոշ պատկերով՝ մի որոշ միտք հասկանալ: Օրինակ՝ գառը, որի արիւնը թափւում էր բաժակի մէջ—Քրիստոս էր հասկացւում. ձուկը՝ Քրիստոսի մկրտութիւնը և քրիստոնէութեան նշան էր, սրովհետև յունարէն ձուկ ichthys բառի տառերը՝ սկզբնատառերն էին հետեւեալ բառերի Iesoys Christos Theoy yios Soter: Զուշան ծաղիկի պատկերը՝ Աստուածածինն էր ներկայացնում և այլն: Այդ խորհրդանշանական նկարագրութիւնները կապ չունէին իսկական քրիստոնէական գեղարւեստի հետ: Եկեղեցական ճարտարապետութիւնն աւելի ուշ է սկսւում:

Հին հեթանոսական Հռոմում կային ընդարձակ սիւնա-

<sup>1)</sup> Գետնափորների երկարութիւնը, իրար գումարած՝ ստացւում է 150 մղոն տարածութիւն. Bucher. Kunstgesch. 2 aufl. Leipzig. 1884.

ղարդ սրահներ, որոնք ծառայում էին զանազան նպատակների: Գրանք կոչւում էին *բասիլիկէ*: Առաջին բասիլիկէն շինւել է 179 թւին Քրիստոսից առաջ և հինգ դար շարունակ շինւել են նորերը կամ նորոգւել ու ընդարձակւել հները: Գրանք, ինչպէս ասացինք, ծառայում էին զանազան նպատակների: Նախ՝ շուկայի *բասիլիկէներ* (Basilica forensis) մի տեսակ ժողովատեղիներ էին վաճառականների համար, ինչպէս այժմեան բիրթաները: Այնտեղ կատարւում էին նաև դատաստանական վճիռներ, ընդունւում էին օտար պետութեանց դեսնական վճիռներ, ընդունւում էին օտար պետութեանց պահանջներ և այլն: Այդ ընդարձակ սրահները լինում էին երբեմն անձաձիկ, բայց աւելի յաճախ՝ ծածկւած, համարեա քառակուսի յատակադճով: Չէնքի մուտքից սկսած մինչև հանդէպի պատը՝ գնում էին աջ ու ձախ՝ մի-մի շարք սիւններ, որոնք շէնտը բաժանում էին երեք մասի, կազմելով երեք սիւնուղի (նըրբաբնոց): միջինը վերջանում էր մի գոգաւոր խորշով, որ կոչւում էր *կոնչ* (concha) և որի մէջ, մի բարձրութեան վրայ, կանգնեցրած էր լինում դատաւորի աթոռը: Հարուստ տանտէրերից շատերը սովորութիւն ունէին իրանց տան սրահներեց մէկին այդ ձևը տալու և նոյնպէս, կոչւում էին բասիլիկէ (Basilica domestica):

Երբ քրիստոնէութիւնը Հռոմում սկսեց զօրանալ, հարուստները, ընդունելով նոր կրօնը, զիջանում էին իրանց ընտանեկան բասիլիկէները եկեղեցական ծիսակատարութեան համար, մինչև որ 367 թւին, Գրայիանոս կայսրը հրամայեց բանալ քրիստոնէաների առաջ՝ նաև պետական բասիլիկէները: Վերջապէս հասաւ և այն ժամանակը, երբ քրիստոնէաները Հռոմում իրանց կրօնը ազատ դաւանալու իրաւունքն ունեցան, ուստի և կարող էին առանց արգելքի շինել ժողովատեղիներ: Եւ ահա առաջ եկան բասիլիկէների նոր տիպեր—տիպերից բասիլիկէներ (basilica ecclesiae, basilica dominica): Երբ այդպիսով որոշեցաւ քրիստոնէական բասիլիկէների տիպը, նրանք սկսեցին շինւել աւելի երկարաձև, քան էին հեթանոսականները. այնպէս որ, սրահի երկարութիւնը լայնութիւնից գրեթէ երկու անգամ աւելի էր լինում:

մէջ տեղից անցնող սիւների կարգը բաժանում էր սրահը՝ երեք նեղ ու երկար բաժինների, որոնցից մէջ տեղինն աւելի բարձր էր քան երկու կողքերինը. դէպի աջ ու դէպի ձախ կորուսիւն ունեցող առաստաղը և նրան համապատասխանող գառիվայր տանիքի կազմութիւնը նմանում էր շուռ տւած նաւի յատակի և այդ նմանութիւնն էր պատճառը, որ սիւնակարգերի միջին տարածութիւնը կոչւեց *միջին-նաւ* (naos) և կողքինները՝ *կողմնակի նաւեր*:

Թէպէտ և քրիստոնէական բասիլիկէն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հեթանոսական բասիլիկէի պատկերը, բայց նոր կրօնը իր դրոշմը դրեց նրա վրայ և շուտով իւրացրեց ձևը: Կողմնակի նաւերից մէկի մէջ կանգնում էին կանայք, իսկ միւսի մէջ տղամարդիկ. միջին նաւի դրեթէ կէսը, գոգաւոր կոնքից սկսած՝ փակած էր ճաղերով և մի տեսակ դաս էր կազմում, ուր կանգնում էր երգեցիկ խումբը: Ճաղերին, աջ ու ձախ կողմից կպած էին մի-մի ամբիօններ (ambo), որոնցից մէկի վրայից կարգում էին Աւետարանը, իսկ միւսից Թղթերը: Երբեմն ամբիօնը մի հատ էր լինում և այն ժամանակ նրա վրայից կարգում էին Աւետարանը, իսկ Թղթերը նրա սանդուղքի աստիճաններից:

Գլխացի գոգաւոր կոնքը, ուր, հեթանոսական ժամանակ դատաւորն էր բազմում, այժմ նշանակւած էր քահանաների և եպիսկոպոսի համար և կոչւում էր դաս քահանայից (presbyterium): Քահանաների և երդիչների դասերի սահմանի վրայ բարձրանում էր սեղանը՝ չորս սիւների վրայ հանդիպող ամպհովանու տակ:

Ահա այդպիսով ստացւեցաւ մի նոր տեսակի շէնք, որը, չբնայելով իր ամենամեծ պարզութեան, բաւականութիւն էր տալիս նոր կրօնի բոլոր արարողութիւններին: Ներս մտնողը իսկոյն, աւես իրան ուղեկցող զուգընթաց սիւների շարքով՝ դրնում էր շէնքի կենդրոնը: Գոգաւոր կոնքի կամարը և պատերը զարդարւած էին լինում կրօնական պատկերներով — Քրիստոսի և նրա առաքեալների և այլ սրբերի կեանքից:

Միջին նաւի սիւների վերևի տարածութիւնը ընդհատ-

ւում էր մի շարք պատուհաններով, որանք ամբողջ շէնքը լուսաւորում էին մի խորհրդաւոր, վերից ընկնող լոյսով: Գոները շինւում էին սեղանի հանդիպակաց պատի վրայ և այնպէս, որ ամեն մի նաւ ունենում էր իր յատուկ մուտքը: Միջին նաւը ունենում էր երեք դուռ: Այդ դուրերը հանում էին դէպի մի նախագաւիթ, որ կոչւում էր atrium և քառակուսի ընդարձակ բազ էր սիւնազարդ, մէջտեղումն էլ աւազան (catharus): Այդ բազը մեծ գեղեցկութիւն էր տալիս ընդհանուր շէնքին և նրա ճարտարապետական կազմութիւնն երևան հանում:

Ինչ վերաբերում է բասիլիկէների արտաքին տեսքին, նա մնաց անպաճոճ և առանց ճարտարապետական զարդարանքների. դա աւելորդ էր համարւում. բաւականանում էին միայն աւագ ճակատը զարդարել նկարներով:

Ինչպէս տեսնում ենք, բասիլիկէների ձևն ուրեմն, առնւած է ոչ թէ հին մեհեաններից, այլ վաճառականական ժողովարաններից: Եւ չիրաւի, յունական ու հռոմէական մեհեանները ոչ մի յարմարութիւն չէին ներկայացնում ժողովատեղի լինելու. նրանք շինած էին միայն քրմերի համար, իսկ ժողովուրդը կանգնում էր դուրսը և շատ անգամ չէր էլ տեսնում թէ ինչ էր կատարւում ներսում. մինչ քրիստոնէական վարդապետութիւնը պահանջում էր մի այնպիսի ծիսակատարութիւն, որին ժողովուրդն էլ կարող լինէր մասնակից լինել: Այդ նպատակին համապատասխան շէնքերը ուրեմն միայն հին ժողովարաններն էին, որոնցում կարող էր պարունակել հարիւրաւոր բազմութիւն:

Այդ շէնքերից բոլորովին անկախ կերպով, վեցերորդ դարի սուաջին կէսին (527—542), Յուստինեանոսի կայսերութեան ժամանակ, արևելեան Հռոմէական պետութեան մէջ զարգացաւ մի այլ ոճ — այն է Բիւզանդականը:

## II

Ճարտարապետական ոչ մի ոճի անւան մասին այնքան վիճարանութիւն տեղի չէ ունեցել զիտական աշխարհում — որքան Բիւզանդականինը: Չատերը փորձել են հերքել նրա ոչ միայն ինքնուրոյնութիւնը, այլ նոյն իսկ գոյութիւնը: Չաս-

Հնաբաններ նրան կոչել են *իոխանցական ոճ* (Uebergangsstyl, style de transition), որովհետև նրա ծաղկելու ժամանակամիջոցը ընկնում է հռոմեական և գոթական վճռողական ոճերի միջև: Բացի դրանից, վիճաբանութեան զլխաւոր առիթը եղել է հետեւեալը:—Ամեն մի ոճ՝ ունեցել է իր նախատիպը և չետոյ, որ աւուր անկախ գարգանալով՝ դարձել է ինքնուրոյն, ինչպէս եղել է հին քրիստոնէական եկեղեցական ոճը Իտալիայում, որոնց իբր նախատիպ ծառայել են վերջին կայսերութեան հոյակապ շէնքերը: Բիւզանդիոնը հին Յունաստանի գաղթավայրերից մէկն էր Բուֆորի վրայ և Կոստանդին կայսեր ժամանակ դարձաւ Սրբեկեան Հռոմ՝ Կ. Պոլիս անունով: Երբ ճարտարապետները եկան այդ քաղաքը, նրանք ոչինչ չբնակեցին իբր նախատիպ՝ ունէ ճարտարապետական հոյակապ շէնքի: Գեղարւեստը այդ ժամանակ դեռ գարգացած չէր այդ կողմերում և ինչպիսիք մնում էր լուծելու քրիստոնեաներին: Սակայն, անտարակոյս է և այն, որ դիտաւորութիւն կար ոչ մի դէպքում չբնակեցել հին հռոմեական մեհեաններին և ընդհանրապէս, որչափ կարելի էր, հեռու մնալ հռոմեական ձևերից:

Այստեղ, ասիական երկիրների հարևանութիւնը՝ ամեն բանից առաջ գործեց իր ազդեցութիւնը:

Հին Հռոմում, ինչպէս յայտնի է, շատ անգամ կայսրրւներին պաշտօն և մինչև իսկ աստուածացնում էին: Այդ պաշտամունքը միայն արտաքին ձևականութեան կերպարանք ունէր առանց ունէ խոր իմաստի: Բիւզանդիոնում սակայն այդ պաշտամունքը ստացաւ բոլորովին արեւելեան բնաւորութիւն: Կայսրները սկսեցին շրջապատել իրանց միանգամայն պարսկական շուքով ու փառահեղութեամբ: Այդպիսով հետզհետէ ըզզեցաներն էլ արեւելեանի սկսեցին նմանիլ: Երկու կայսերութեանց բաժանելու ժամանակ, Բիւզանդիոնում՝ Հռոմեական տոգա կոչուող սպիտակ պարզ վերարկուն օրինակ, գործածուածութիւնը ընկաւ և նրա տեղը բռնեց փարթամ տարազը: Աքեթութիւնը հասաւ մինչև շրջուցից պերճութեան. գարգարում էին նրանք ոսկեթել բանաւճ. քներով, որոնց մէջ հիւսում էին գոյնգոյն ծաղիկներ, անասունների և մինչև իսկ մարդկանց

պատկերներ: Արեւմտեան Հռոմի անկումից չետոյ սէրը դէպի շքեղութիւնը աւելի աճեց Բիւզանդիոնում. Կ. Պոլիսը դարձաւ շտեմարան ամենաթանկազին և պերճ արտադրութեանց, իսկ Յուստինեանոսի ժամանակ հիմնեցան նոյն իսկ մետաքսեղէնի գործարաններ 1): Այդպիսով մարդիկ սկսեցին սովորել ծանր, հարուստ, շքեղ արդուզարդի և կահաւորութեան:

Արեւմն, ամենեւին գարմանալի չէ, որ ճարտարապետութիւնն ևս իր կարգին սկսեց կրել իր վրայ արեւելեան տիպը 2): Յուստինեանոսը իրան շրջապատող շքեղութեանը համապատասխան սկսեց դարձնել նաև իր շինած շէնքերը: Այդ գործունեալ կայսրը բոլոր հպատակ գաւառների մասին հստատար հսգեքաշեց: Նրան ժամանակակից մի մատենագիր, Պրոկոպիոս, ամբողջ հատոր գիրք է գրել (De edificiis), որ լցած է կայսեր կառուցած շքեղ շէնքերի անուններով: Բաց, բոլոր այդ շէնքերը մոռացեցան, երբ շինեց Կ. Պոլսում ս. Սօֆիայի մեծ տաճարը (այժմ Այա-Սօֆիա):

Այա-Սօֆիայի առաջին շինողը եղել է Կոստանդին կայսրը, բայց մի ապստամբութեան ժամանակ ՅՅՁ թիւին, եկեղեցին մինչև հիմքը քանդակեցաւ և հրդեհի գոհ զնաց: Յուստինեանոս կայսրը իսկոյն սկսեց վերաշինութիւնը, որ յանձնեց երկու ճարտարապետների—Իսիդոր Միլլեթցուն և Անթէմիոս Տրալլէսացուն: Հրդեհից հաղիւ քառասուն օր անցած, զրեցաւ վերաշինութեան հիմնաքարը: Տասնեակ հազարաւոր որմնագիրներ անընդհատ ստանալով առատ վարձատրութիւն, ձեռնար-

1) H. Weiss. Kostumkunde. Mittheilungen. Stuttgart. 1864. Racinet «Le costume historique». Paris. 1888. IV v.

2) Ինչպէս մի ժամանակ պարսկական պալատը, նոյնպէս չետոյ, նոր կազմող արաբական պետութիւնը օրինակ էր ծառայում Բիւզանդիոնին: Արաբական խալիֆաների պալատների շքեղութիւնը և քաղաքական հիմնարկութիւններից շատերը օրինակ էին դառնում Բիւզանդիոնին: Այդ դեռ բոլորը չէ: Մահմեդական ոգին խոր արմատներ էր ձգում նոյն իսկ քրիստոնէական համոզմունքների մէջ և ամբողջ դարեր աշխարհը վրդովեցնող պատկերամարտութիւնը ծագում էր Դուրանի՝ պատկերների հակառակ լինելուց: C. Schnaase. Gesch. d. bild. Künste.

կեցին գործին. կայսրն ինքը ամեն օր նրանց մէջ էր՝ սպիտակ հասարակ կտակէ համեստ վերարկու հագած և քաջալերում էր աշխատաւորներին: ԾՅԴ թւին հոյակապ տաճարը պատրաստ՝ օձ-ւեցաւ: Մի քանի տարի լետոյ, տաճարի մի կարևոր մասը թէև քանդուեցաւ երկրաշարժից; բայց կայսրը չբնակեցաւ և աւելի մեծ եռանդով, շինեց աւելի ճոխ կերպով՝ քանդուած մասը: Այդ նոր շքեղ կաթողիկէն դարձաւ իր ժամանակայ հրաշալիքներից մէկը: Հոյակապ շէնքի համբար տարածւեց բոլոր քրիստոնեայ աշխարհում և ամեն տեղ սկսեցին եկեղեցիները նրան նմանեցնել:

Ս. Սօփիայի հիմնական ձևերը հետևեալներն են: Երևակայեցէք մի քառակուսի շէնք, որի միջին մասը ծածկուած է մեծ և լայն տարածուած տափակ գմբէթով (106) ոտ. տրամագիծ): Գմբէթը հանդուս է չորս հաստ սիւների վրայ, որոնք մոյթ են կոչուած՝ իրանց քառակուսի և ոչ-գլանաձև լինելուն համար: Քառակուսի շէնքը արևելեան և արևմտեան կողմերից, այսինքն մուտքի և սեղանի պատերը՝ զողաւոր լինելով՝ կոնք են կազմում, իսկ հիւսիսային և հարաւային տարածութիւնը—զրսի պատից սկսած մինչև մոյթերը՝ աջ ու ձախ կազմում են նրա հարաւային և հիւսիսային նաւերը (nef): Աերջիններս գմբէթի տակ գտնուող տարածութիւնից բաժանուած են մի-մի շարք սիւներով: Չէնքի բարձրութիւնն այնքան է, որ այդ սիւներից վերև գտնուող տարածութեան վրայ շինուած են պատշգամներ, որոնք ճաղերով պատած՝ կանանց բաժինն են կազմում:

Ճարտարապետական բոլոր անդամները (գլխաւոր մասերը) շինած են ամենաթանկագին, ընտիր, գոյնզգոյն մարմարիօնից. բոլոր կամարները ծեփուած են շքեղ, ոսկեզօծ պատկերներով, որոնք ոչ թէ նկարուած են, այլ մանր-գոյնզգոյն յաղճապակուց կողմած (մօզայիք):

Ժամանակակից շէնքերն ու եկեղեցիները մանաւանդ, ըսկսեցին սաստիկ նման շինել Կ. Պոլսի նոր ձևի տաճարին: Ս. Սօփիան դարձաւ օրինակ զաւառական բոլոր քրիստոնեայ եկեղեցիների համար:

Հայաստանը ստիպւոյն, հնումն, թէ քաղաքականապէս և թէ կրօնապէս՝ հեռու էր պահում իրան այդ երկու մեծ պետութիւններից էլ. ոչ հռոմէական և ոչ էլ բիւզանդական աւանդութիւնները մուտք էին զտնում այդ երկրում: Միայն քրիստոնէութիւնն էր, որ երկար դարերից լետոյ միացրեց մեր երկրում երկու ոճերի—հռոմէական և բիւզանդական—հիմունքը՝ տեղական տարրերի հետ և դրանից ահա ծնաւ այն վերին աստիճանի հետաքրքիր ճարտարապետական ոճը, որ անւանուած է *հայկական* և որ վերջերում ամբողջապէս մուտք գործեց Արաստան էլ <sup>1)</sup>: Հայկական ոճը աւելի է յիշեցնում բիւզանդականը քան մի այլ ոճ: Հայոց եկեղեցիները շինուած են սովորաբար տեղական քարերից և ոչ թէ աղիւսից, ինչպէս բիւզանդականն էր. հայոց եկեղեցու ծածկը ներսից ներկայացնում է մէջտեղում գմբէթ, որի շուրջի կամարները հանդուս են մոյթերի վրայ:

Ստիպւոյն, հայկական եկեղեցու ամենակարևոր և աչքի զարնող մասը—նրա գմբէթը, միանգամայն ինքնուրոյն ոճ է և ամենեւին նման չէ բիւզանդականին՝ մանաւանդ դրսից: Բիւզանդական գմբէթը լինում է բոլորաձև, տափակ և համարեա առանց թմբուկի (գլանի), մինչ հայկականը բարձր թմբուկով և սրածայր, ճաղարաձև գմբէթով, որ ոչ թէ կլոր է կտմ գլանաձև, այլ միշտ բազմանկիւն, քիչ գէպքում ութանկիւն, այլ աւելի յաճախ՝ տասներկու և մինչև իսկ տասնութեց անկիւնանի:

Հայկական եկեղեցու յատկազօծի ձևը երբէք չէ լինում քառակուսի, այլ նեղ և երկար. արևելքից արևմուտք երկարութիւնն է կազմում, հիւսիսից-հարաւ՝ լայնութիւնը: Երկարութիւնը լայնութիւնից  $\frac{1}{3}$  և երբեմն աւելի տարբերութիւն ունի:

Այդ երկար քառանկիւնի շէնքի մէջտեղում գտնուում է

<sup>1)</sup> C. Schnaase. Gesch. der b. K.

գմբէթի տակի տարածութիւնը, որից դէպի աջ և ձախ (հիւսիս և հարաւ) յաւելածներ են գնում. վերջիններս յատակագծին տալիս են հայկական խաչի ձև: Այդ խաչը պիտի զանազանել լատինական խաչից. վերջինիս երեք վերի թւերը աւելի փոքր են քան ներքեւինը. պիտի զանազանել նաև բիւզանդականից, որովհետև վերջինիս չորս թւերն էլ հաւասար են իրար: Հայկական խաչը ունի իր միանգամայն ինքնուրոյն ձևը: Նրա երկու թւերը՝ վերեւինը և ներքեւինը երկար են, իսկ կողքերի թւերը՝ կարճ:

Հայկական եկեղեցու կենդրոնական տարածութիւնը, որտեղ գմբէթն է գտնուում, շատ աւելի բարձր է, քան շուրջի կամարները: Եթէ տաճարը փոքր է լինում գլխաւոր, ներսը մոյթեր չեն դրուում և նրանց փոխարէն դրսից նեղ և երկար սուր անկիւններով դէպի ներս զողացած խորշեր են շինուում մի-մի գոյգ պատից. այդ խորշերի դուրս ընկած մասերը՝ շէնքի ներսի կողմից՝ փոխարինում են մոյթերին: Այդ եղանակով դրանց դուրս ընկած անկիւնների միջին տարածութիւնը ներսից ձևացնում է նոր խորշեր, որոնք կոնքեր են կազմում: Այդ խորշերը շինուում են ոչ միայն բուն ճարտարապետական նպատակով, այլ որովհետև նրանք մեծ ոյժ են տալիս շէնքին՝ գմբէթը կրելու, նաև գեղեցկացնում են շէնքի արտաքին տեսքը, նրա պատերի լեռկութիւնը ծածկելով:

Բազրատունեաց օրով, երբ ճարտարապետութիւնը ըստ երևույթին սկսեց զարգանալ, բայց իսկապէս կորցրեց իր ներքին բովանդակութիւնը, այդ խորշերը իրանց գործնական նշանակութիւնը կորցրին և միմիայն գեղեցկութեան էին ծառայում և այդպէս դէպքում նրանք զարգարում էին երկու եզերքներէից, զուգընթաց, բարակ, կոկ սիւներով, որոնք վերևում միանում էին իրար՝ քնքոյշ կիսակամար կազմելով:

Գուները շինուում էին ցած, ինչպէս ամբողջ արևելքում. մերթ քառակուսի և մերթ կամարաձև գլխով: Լուսամուտներ թւով լինում էին քիչ. նրանց ձևը նեղ ու երկար էր, երբեմն շատ գեղեցիկ շրջանակով: Չէնքի քարերի չափը երբէք իրար հաւասար չեն լինում և այդ է պատճառը որ մեր բոլոր եկե-

ղեցիները մեծ ձեղքեր ու ահաղին ծակեր են ստացել ժամանակի ընթացքում, և եթէ նրանք պահպանել են մինչև այսօր, դրա պատճառը միայն այն է, որ մեր եկեղեցիները շինութեան մէջ ոչ փայտ և ոչ էլ դերան էին գործածուում:

Հայկական հին եկեղեցիների մէջ, որպէս տիպար հայկական ճարտարապետութեան, ներկայանում է Ս. Հռիփսիմէի վանքը (Էջմիածնի մօտ) Վաղարշապատում: Նրա խաչաձև յատակագիծը ձևացնում է իսկական հայկական խաչ— իր արեւելեան և արևմտեան թւերի երկարութեամբ և հիւսիս ու հարաւի թւերի կարճութեամբ: Բոլոր չորս թւերը վերջանում են կոնքերով: Իւրաքանչիւր պատի դրսի կողմում գտնուող մի գոյգ նեղ ու երկար խորշերը՝ դէպի ներս ձևացնում են ութ գորեղ նեցուկներ, որոնց վրայ դրած է, համարեա ամբողջ տանիքը բռնող հայկական գմբէթը: Չէնքի ընդհանուր տպաւորութիւնը վերին աստիճանի պարզ է և կանոնաւոր: Արևմտեան ճակատը մէջտեղում աւելի բարձր է և աջ ու ձախ կռացած կրտուրի ձևովը, բութ անկիւն կազմելով, իջնում է ցած՝ մինչև հիւսիսային և հարաւային պատերը: Ամբողջ շէնքը կանգնած է երեք աստիճան ունեցող պատանդանի վրայ, որ տաճարին տալիս է մի կոթողի բնաւորութիւն: Այդ պատանդանը հայկական ճարտարապետութեան *անհրաժեշտ պայմաններից* մէկն է <sup>1)</sup> և շատ է յիշեցնում հին յունաց կրէպիդոմայ կամ ստէրէօթատ կոչւած բարձրութիւնը, որոնց վրայ կանգնեցնում էին տաճարները:

Ս. Հռիփսիմէի տաճարի ձևով ուրիշ եկեղեցիներ չըկան

<sup>1)</sup> Եւ սակայն մի ոմն անմիտ ճարտարապետ յանդգնեց Ս. Էջմիածնի պատկառելի տաճարի այդ շքեղ պատանդանները փշրել ու լիովին վերցնել և տաճարը դրկել իր վսեմ ձևից՝ Մակար կաթուղիկոսի օրով: Որքան յիշում ենք, քանդակած կամ անհետացրած է նոյնպէս Ս. Հռիփսիմէի պատանդանները: Այս վանդալականութիւնները ապացուցանում են որ մեր ս. հայրերը ոչ միայն գաղափար չունին հայկական ճարտարապետութեան մասին, այլ և քանդել շատ են սիրում:

Հայաստանում, եթէ չըհաշուենք Ս. Գալինէի, Յովհաննա-  
վանքի, Գանձասարի եկեղեցիները, որոնք դարձեալ տարբերու-  
մ են Ս. Հովհաննիսի իրանց աւելի փոքր տեղ բռնող գմբէթնե-  
րով: Ս. Հովհաննիսի տաճարի ձևի չըկրկնելը՝ կարելի է մեկնել  
նրանով, որ այդպիսի համեմատաբար փոքր շէնք հաստատուն  
շինելու համար, չափազանց շատ նիւթ է պահանջում, ուստի  
և գործնական չէ:

Սիւներ հայկական շէնքերի մէջ գրեթէ չեն պատահում  
այն նշանակութեամբ, ինչ որ նրանք պիտի ունենան. այնպէս որ,  
սիւները այտեղ ճարտարապետական անհրաժեշտութիւնից չեն  
առաջ եկել, այլ ուղղակի անկախ կերպով են գործածուում — աւելի  
լքր դարդ՝ քան նեցուկ: Նրանք լինում են կամ շատ բարակ և  
երկար, կամ չափազանց հաստ ու կարճ և համարեա աննպա-  
տակ:

Չէնքերի ընդհանուր տպաւորութիւնը ազդու չէ. զօրեղ  
անդամների—լուսաւորելու և սոււեր ձգելու ընդունակ մասերի  
պակասութիւնը չափազանց զգալի է, և, չընայելով հայկական  
եկեղեցու ձևերի քնքուշութեանը և ներդաշնակ համաչափու-  
թեանը, չընայելով նրա հիմնական օրէնքների զարմանալի  
խտութեանը, չընայելով նրա քանդակների վերջնական նըր-  
բութեանը — իր ամբողջ կազմուածքի մէջ նա կրում է մի ինչ  
որ անհամարձակութիւն, այսպէս ասած՝ ամօթ խաճութիւն,  
մտավախութիւն:

Հայկական շէնքերի մէջ նշանաւոր տեղ են բռնում ար-  
տաքին քանդակները: Նրանք միշտ մտացածին են, բնութեան  
հետ համարեա ոչինչ կապ չունեն. շատ քիչ դէպքում ծագիկ-  
ներ, կամ տերեւներ են պատահում և երբէք անասունների, կամ  
մարդկանց պատկերներ: Հայկական եկեղեցական քանդակի զր-  
խաւոր հիմքը ժաղաւէնն է. նրանով կապում են սիւները իրար,  
նրան տանում — բերում են կամարների, դռների և պատուհան-  
ների վրայով. նրանից հիւսում, բանում են խաչեր, գործում  
են կլոր ձև ունեցող զարդեր, որոնք գաթա են անւանւում  
և թերևս նշխարքի նշանակութիւն ունեն:

Այժմ փորձենք հալ — քրիստոնէական ճարտարապետու —

թեան զարգացմանը հետեւել — զիտելու համար պատմաբանօրէն:  
302 թւին Ս. Գրիգոր Լուսաւորիչը շինեց Ս. Էջմիածնի տա-  
ճարը այն տեղում, ուր Անահիտի ասճարն էր կանդնած, Տըր-  
դատի պալատի մօտ: Անշուշտ դժւար է հաւատալ — և կարծեմ  
ոչ ոք չէ պնդում — որ Ս. Էջմիածնի այժմեան տաճարը չորրորդ  
դարու շէնք լինի, մանաւանդ զիտենալով պատմութիւնից, որ  
նրա գմբէթը, թերևս նաև տանիքը՝ փայտից էին և որ այդ  
տաճարը բազմիցս վերաշինել է և վերանորոգել: Սակայն այս  
պիտի մի ներկական շէնքի հիմքին և յատկազօծին անշուշտ չեն  
յիպել հաւականականօրէն, այլ միմիայն պատերին և գմբէթին:  
Յիրաւի, մեզ թւում է, որ նրա յատկազօծի այժմեան ձևն իսկ  
տպացուցանում է մեր ասածը: Մեր եկեղեցիների յատկազօծը,  
ինչպէս տեսանք վերևում, նեղ ու երկար խաչ է ձևացնում  
հայկական ձևով և բիւզանդականին ամենւին նման չէ. մինչ-  
դեռ, Ս. Էջմիածնի տաճարն իր ամբողջութեամբ, ներկայաց-  
նում է բիւզանդական խաչի ձև — չորս թւերն էլ գրեթէ հաւա-  
սար միմեանց: Ասել է թէ, նրա յատկազօծի ձևը պատկա-  
նում է այն ժամանակներին, երբ հայկական ինքնուրոյն եկե-  
ղեցու օրինակը դեռ չէր մշակւած և անկախ ազգային ոճը չէր  
կազմուած: Գմբէթը կանդնած է չորս զօրեղ մոթերի վրայ.  
եկեղեցու ներք յոջ մի ճարտարապետական զարդ չունի — ոչ  
բարակ կիսասիւններ և ոչ էլ քանդակներ: Ս. Էջմիածնի այժմ-  
եան շէնքը կարծուում է ոչ աւելի հին քան 618 թիւը, որ,  
նրա թէ ամբողջ կազմութեանը և թէ ամեն զարդից զուրկ  
լինելուն նայելով, շատ էլ անկարելի չի թւում: Այնուհետև  
համարեա ամբողջ հազարամեակ, էլ չունենք նրա մասին տեղե-  
կութիւն: 1618 թւին իբր թէ Չահ — Աբբաս Ա. — ը նրան քան-  
դել է և քարերը տարել Սպահան (նոր — Ջուղա), որպէս զի  
այնտեղ, նրանցից նոր Էջմիածին շինելով՝ հայերին զրաւէ <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Նոր-Ջուղայի առաջնորդարանի մուտքի աջ ու ձախ պատի  
փոզմից դուրս են գալիս երկու հսկայական որձաքարեր, որոնք իբր  
թէ Էջմիածնից Չահ-Աբբասն է բերել: Բաց դա միանգամայն առաս-  
պել է թւում, որովհետև այդ քարերը ամբողջապէս տարբերուում են  
Պջմիածնի շէնքի քարերից և ընդհանրապէս ոչ մի հայկական շէնք

1627-ին Մուսէս վարդապետ—յետոյ կաթողիկոս՝ վերաշինեց տաճարը. նրա յաջորդ Փիլիպպոս կաթողիկոսը շարունակեց սկսած գործը և 1654 թւին աւելացրեց դանդակատան աշտարակը. և վերջսպէս, Եղիազար կաթողիկոսը 1682-ին վերջացրեց նրան: Ս. Էջմիածնի առաջին վերաշինութիւնից յետոյ, հաւանական է որ վերաշինեցան շրջապատող երեք վանքերը—Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէ և Յովհաննայ վանքերը:

Տասներորդ դարում արդէն մեծ յառաջդիմութիւն է ներշնչում հայաստանում: 991 թւին վերջացել է Հախպատի Ա. Խաչ վանքը. նրա դմբէթը կանգնած է չորս հաստ, բնաց զեղեցիկ մոյթերի վրայ, որոնցից իւրաքանչիւրը ամեն կողմից զարդարւած է կիսասիւներով: Նոյն ժամանակաւն է սլափանում նաև Գառնոյ փոքրիկ, կոկիլիկ եկեղեցին, որի չորս արտաքին պատերը զարդարւած են նեղ ու երկար խորշերով և որոնցից ամեն մէկը վերևում վերջանում է խեցաձև կիսակամարով և եղբքներին էլ նեղ ու երկար սիւներ են շարած՝ վերևից յօնաձև միացած: Նմանապէս շինեցաւ Տաթևի զեղեցիկ և զարդարուն վանքը: Գրանք այնպիսի յառաջադիմութիւններ են, որոնց ամենակատարեսոյ զարգացումը Անիի Մայր—եկեղեցումը կրտսնենք:

961 թւին Բագրատունիք իրանց սիրած Անի քաղաքը զարճրին մայրաքաղաք և զարդարեցին հոյակապ, փարթամ շէնքերով: Այդ քաղաքի կարճատև գոյութեան ընթացքում, այնտեղ շինուել են անթիւ նշանաւոր այնպիսի շէնքեր, որոնց մնացորդները մինչև այժմ զարմացնում են օտարազգի ճանապարհորդներին: Չէնքերի մէջ ամենահինը՝ Մայր—եկեղեցին է, որը, վրայի արձանագրութեանը նայելով, 1010 թւին է վերջացել: Նա զարմանալի լաւ պահպանուել է. միայն գմբէթը համարեա բոլորովին քանդուած է: Յատակաղիծը շատ նման է Ս. Հռիփսիմէի վանքին, միայն շատ աւելի մեծ է և հետևա-

այդ մոխրագոյն կարճր քարից չէ շինած մեր հայրենիքում: Կարծեմ այդ քարը հայաստանում հազուադիւտ էլ պիտի լինի, մինչդեռ բուն պարսկական մզկիթներում և քարանսարաններում յաճախ պատահում է այդ քարը շէնքերի մէջ գործածած, մանաւանդ Սպահանում:

բարձր մոյթերով: Առատօրէն զարդարւած է քանդակներով. իւրաքանչիւր դռան կողերը, իրաքանչիւր լուսամուտների եզրերը պատած են հիւսւած քանդակներով: Ներսի մոյթերը բազկացած են անթիւ բարակ սիւներից, նման բարակ գերանների խորճի, որոնք վերևի կողմից ծուռւմ են և կամար կազմելով՝ միանում հանդէպ գտնուող սիւնախմբին: Ներսի ընդհանուր տարաօրութիւնը լիշեցնում է Եւրոպական շէնքերը, մանաւանդ որ նրա քարերի գոյնգոյն լինելը նմանեցնում է Իտալիայի 13-րդ դարու շէնքերին: Եւ այդ է սլափաճաւը, որ 1էյարդը, երբ 1845-ին ճանապարհորդեց Արևելք, հայաստանում տեսնելով այդպիսի շէնքեր, մեր ճարտարապետութիւնը համարում է փոխանցումն զէպի գօթական ոճը (Layard. Ninive and Babylon. 1853): Այդ նմանողութիւնը գիտական աշխարհին բաւական զբաղեցրել է մի ժամանակ, որովհետև Փրանսիացի յայտնի ճանապարհորդ Տեսսիէն մի շատ թեթև և շտապ եզրակացութիւն անելով եղածից՝ յանկարծ յայտնում է այն թէօրիան, թէ գօթական այդ նախատիպը հայերն են տարել Իտալիա, Անիի աւերումից յետոյ զաղթելով: Նրան լսելով, նոյնը կրկնեցին նաև Փրանսիական այլ հնագէտներ, մինչդեռ գերմանացի աւելի խոր մտածող և աւելի լուրջ հետազոտող գիտնականները, մանաւանդ Չնագէտ միանգամայն զարմանում էին և կասկած չայտնում այդ բանի վերայ: Տեսսիէի պէս մտածելով էր, որ 1892-ին գնացել Անի և այնտեղ խնդիրը պարզեց: Հայկական շէնքերը, ինչպէս ասել ենք, շինուում էին տեղական քարերով, որոնց գոյնը անորոշ բաց վարդագոյն է, կամ երբեմն մանիշակագոյն: Քանի քարը չոր է՝ այդպէս է. իսկ երբ խոնաւութիւն ծծեց, գոյնը մթնում է և դառնում դորշ գեղնագոյն կամ բոլորովին սև: Այդ կերպ, առանց գոյների խտութեան շինուել է Անիի Մայր—եկեղեցին: Քարերը ժամանակի ընթացքում խոնաւութիւն են քաշել և գոյնները յայտնուել են կամ փոփոխուել...

Տասնևմէկերորդ դարում հայկական ճարտարապետութիւնը հասնելով մի տարօրինակ փարթամութեան, սկսեց, դժբախտաբար կորցնել իր ներքին բովանդակութիւնը: Տասներկուերորդ դարում արդէն մահմեդական շէնքեր են սկսում շինուել

և զանգակատան ու զմբէթների հետ ի միասին սկսում են քարձրանալ մինարէներ: 1215 թւին շինած Ս. Գրիգորի եկեղեցին, որ այժմ հախշու եկեղեցի է կոչուում և յայտնի է իբր յունաց եկեղեցի, էլ ոչ մի յառաջդիմութեան պատկեր չէ ներկայացնում. նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ Անիի Մայր-Եկեղեցու փոքրագիր կրկնողութիւնը:

Այսպէս է կատարել հայկական ճարտարապետութեան զարգացման ընթացքը. իսկ քանդակագործութիւնը, չքնայելով իր նուրբ և ճարտար արտաքին ձևին, մնաց ստոր ատիճանի վրայ: Ո՛չ մի քանդակ չէ պատահում անասուն կամ մարդ ներկայացնող. իսկ արձանների մասին և ոչ իսկ խօսք կարող է լինել:

Հայկական գեղարւեստի այս ճիւղերը, ինչպէս տեսանք փաստերով, ներկայացնում է մի ճնշւած, անկատար պատկեր: Անշուշտ ազգը ունէր մեծ ընդունակութիւններ և զեղեցկադիտութեան զաղափարից էլ զուրկ չէր. զգայուն էր դէպի համաչափութիւնն ու նրբութիւնը, բաւականաչափ հնարադէտ էր նոր ձևեր ստեղծելու — բայց այդ բոլորը թող և երկչոտ են եղել: Պատմական — քաղաքական հտնդամանքները աշուշտ շատ են իւանգարել գեղարւեստի զարգացմանը: Բայց հայկական գեղարւեստի այդ ճիւղերի հիմնական սկզբունքները եղել են կրօնական-քրիստոնէական և պարզ, հասկանալի, լուրջ և կարելի է ասել, որ բիւզանդականից պակաս արեւելեան: Զողշողուն, հարուստ կերտւածները հայ գեղարւեստի համար օտար են եղել. հայկական շէնքերը ուղիղ զծերից, սրածայր անկիւններից չեն կարողացել դուրս գալ և այդ է սլաւոնացի, որ նրանք չիշեցնում են արեւմտեան — միջնադարեան շէնքերը, որոնց ձևերը հային յայտնի անգամ չեն եղած, ուստի և այդ նմանողութիւնն էլ ամբողջովին պատահական է:

Քանդակները հայկական շէնքերի մէջ ճարտարապետութեան հետ ոչ մի բնական կապ չունին. նրանք ցնորքի պէս աննպատակ թափառում են ճարտարապետական մասերի վրայով ճիշտ այնպէս, ինչպէս արաբացոց մօտ ենք տեսնում: Ընդհանրապէս այդ ազգի և մեր ճարտարապետութեան ձևերի

մէջ կայ որոշ ազգակցութիւն, միայն նրանցը գորեղ և առնացի է. իսկ մերը թող և կանացի: Զատ զեղարւեստի քննիչներ մեր քանդակագործութիւնը արաբականի նախատիպը և դատարարին են համարում:

Հայկական գեղարւեստի պատմութիւնը, գեղարւեստի ընդհանուր պատմութեան մէջ բռնում է բաւական պատուաւոր տեղ: Զրկալ մի ձեռնարկ, նոյն իսկ շատ համառօտ, որի մէջ նրան մի քանի էջ նւիրւած չըլինի: Ամենից շատ հայկական գեղարւեստի մնացորդներով հետաքրքրել են անգլիացի և ֆրանսիացի ճանապարհորդ — հնագէտները, որոնց նկարագրութիւններից և զձագրած պատկերներից պատմաբանները արել են իրանց եզրակացութիւնը: Այդ հնագէտների մէջ ամենանշանաւորն է Լայարդը (Layard), որ 1845-ին անգլիական տիրութեան լանձնարութեամբ արել է շատ պեղումներ Արևելքում. յետոյ՝ Կէր-Պորտերը (Ker-Porter), որը զլիստորապէս Պարսկաստանն էր հետադատում: Յետոյ՝ Տեսիէն (Texier), որը զբերախտաբար շատ վերլիվերոյ է վերաբերում իր ուսումնասիրելիք առականին, ինչպէս արդէն վերևում օրինակը բերինք: Բայց ամենից շատ և արդիւնաւար կերպով զբաղւեց Աէննայի երիտասարդ պրոֆէսոր Զիգովսկին, որը 1888—90 թւերին ճանապարհորդել է Հայաստան և հայկական գեղարւեստի մնացորդները ուսումնասիրել: 1891-ին հրատարակեց նա իր շատ գեղեցիկ հետադատութիւնը հայկական ճարտարապետութեան և նկարչութեան մասին «Das Etschmiadzin — Evangeliar» վերնագրով: Յիշենք նաև պատմադէտ — հնագէտներից Զնաազէի (Schnaaze) պատկառելի անունը, որից այս կամ այն չափով օգտւել են զրեթէ բոլոր միւս հնախօսները: Իր ութ հատորեան աշխատասիրութեան 3-րդ հատորի համարեա քառորդը նա նւիրել է հայ գեղարւեստի պատմութեանը և մեծ համակրանքով է վերաբերում: Իր գատողութիւններն օրինակ, վերջացնում է նա այսպիսի խօսքերով.

... «Հայոց ազգի բնաւորութեան մէջ կայ այն ազատ ողին, որը նպաստաւոր է այնքան՝ գեղարւեստի համար: Քրիստոնէ-

ութիւնը Հայաստանում ընդունեցաւ յօժարակամ, ազատ կերպով. նա տարածեց ո՛չ իշխանների կամ միապետների հրամանով: Նոր վարդապետութիւնը ոգևորել էր ժողովրդին և նա իր նոր հաւատքը ինքը ձեռք բերեց պատերազմական աւարի պէս՝ յաղթանակով: Քրիստոնէական վարդապետութեան մէջ ևս հայերը միանգամայն ինքնուրոյն են և դորեզ. նրանք քննադատում են, շնորհում կամ մերժում նոր վարդապետութեան դանդաղ յօդածները. նրանք բիւզանդական ժողովների հեղինակութիւնը չեն էլ ճանաչում: Ընդհանրապէս հայերը շատ ընդունակ են ոգևորելու. նրանց՝ արաբների և թաթարների անհամեմատ աւելի մեծ ուժերին զիմադրելը՝ յարգանքի է արժանի: Յայց ափսո՛ս, որ այդ քաջութիւնը և ազգային հպարտութիւնը և ինքնաճանաչութեան զգացմունքները ունէին իրանց սահմանները: Հայերի խղճալի վախճանը ունի անուկ կրեկցութիւնը չէ շարժել — բայց նրանք բոլորովին անմեղ տեղը չեն կրել իրանց պատիժը: Ե՛մ է նրանք այնպէս ոգևորելին, ինչպէս հելլենացիք պարսից գէմ էին ոգևորում, այն ժամանակ անշուշտ նրանք էլ այդ վերջինների պէս՝ կը պահպանէին»...

Այս փոքրիկ փորձը անելով, ես ամեն բանից առաջ ցանկացել եմ ցոյց տալ, թէ մեր զեղարեւտը ինչ տեղ է բռնում ընդհանուր զեղարեւտի պատմութեան մէջ, թէ նա ինչ նշանակութիւն ունի մեզ համար և թէ ինչու մենք այժմ՝ քան երբէք, պարտական ենք նրան պահպանել անաղարտ և յարգել:

Մեր ճարտարապետութեան թույլ և դորեզ կողմերը երբ իրար համեմատում ենք, գալիս ենք այն եզրակացութեան, որ նա բոլոր պատմական շրջանների ինիքները կրել է իր վրայ. հայկական ոգու ամենանուրբ լարերը եղել են նրա ծնողը և դաստիարակողը. նա ազգի յաղթող հանդիսացած դարերում հազել է իր ամենաշքեղ զգեստները և ժողովրդեան սրտերի հետ ցնծացել, իսկ յուսահատութեան տարիներում գէն է ձգել վրայի զարդերը և սգի զգեստ հագել: Անողորք ճակատագրի բոլոր հարւածները նրա խրոխտ ճակատի վրայ ակօսներ են փորել...

Վարդգէս Սուրէնեանց

# ՀԱՅՈՅ ՎԱՆՔԵՐԸ

ԵՒ

ՆՐԱՆՅ ԴԵՐԸ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔՈՒՄ

(Նւէր Սմբատ Ծանազեզի 35-ամեայ յոբելանին)



Ա

անական կեանքի սկզբնաւորութիւնը շատ հին է. նորա սկիզբը պէտք է որոնել քրիստոնէութեան հէնց առաջին ժամանակներում: Յայտնի է, թէ երբ և ինչպիսի պայմաններում ու հանգամանքներում քարոզեց Քրիստոսի Ս. Աւետարանը. հեթանոսական կրօնքի քայքայելու և դորանից առաջացած հին մարդկութեան կեանքի ծալրացեալ աջականութեան ժամանակն էր այդ: Զարմանալի ոգևորութիւններ շնչող, քաջալիրութիւն տուող ազգեցութիւն ունեցան քրիստոնէութեան առաջին պարագլուխների՝ առաքեալների և նոցա յաջորդող եպիսկոպոսների ու եկեղեցական հայրերի քարոզչութիւնները նոցա վերայ, որոնք շտապեցին ընդունել Քրիստոսի «քաղցր լուծը և փոքրօղի բեռը», որովհետեւ նոքա այդ քա-

բողութիւնները հիմքը կազմող գլխաւոր սկզբունքները մէջ գրտան ան, ինչ որ երկար ժամանակ որոնել, բայց չէին գտնուել հին կրօնքի մէջ: Նախկին յուսահատութիւնը տեղի տւեց ապագայում վերանորոգելու, վերակենդանանալու, փրկելու ընդհանուր յայտն, առաջ եկաւ մի նպատակ, որի համար արժէք ապրել, մաքառել, աշխատել. բարոյականութեան վերին աստիճանի անկումը փոխանակեց վարքի-բարքի խիստ մաքրութեան: Բոլորեքեան տւյցեցին սիրոյ, հեղութեան, խոնարհութեան, ողորմածութեան, բարեգործութեան բարձր սկզբունքներով, որ նոցանից պատրաստեց մի-մի հերոս, պատրաստ մեռնելու մէկ անգամ ընդ միշտ ընդգրկած, սեփականացրած և պաշտած կրօնական համոզմունքի և գաղափարների համար: Հեթանոսութիւնը թէև քայքայել, թէև կորցրել էր իր ներքին բարոյական ոյժն ու նշանակութիւնը, բայց տակաւին շատ հզօր էր իւր արտաքին, այսպէս ասած, պաշտօնական գորութեամբ, որովհետև Հռովէական կայսերութիւնը, որ ամփոփում էր իր մէջ այն ժամանակաւ համարեան բոլոր յայտնի աշխարհները, կարծելով, որ իւր լայնատարած իշխանութիւնը բռնում ու պահպանում է միայն հեթանոսական կրօնքով, իւր բոլոր գորութեամբ պաշտպան էր հանդիսանում, թև ու թիկունք էր լինում նորան և սարսափելի հալածանքներ էր հանում «նոր աստուածներ» քարոզողների դէմ: Միայն առաջին քրիստոնեաների ոգևորած հերոսութիւնն էր, որ կարողացաւ դէմ դնել այնքան արգելքներին, նեղութիւններին, անջանքներին. միայն նոցա քարոզութիւնների սուրբ ճշմարտութիւնն էր, որ վերջ ի վերջոյ յաղթութեան գրօշակը բարձրացրեց ուժերի այդ անհաւասար պատերազմում: Սակայն մարդկութիւնը չէ սիրում երկար ժամանակ սառած, կանգնած մնալ միևնոյն զարգացման աստիճանի վերայ. նորա բնաւորութեան և հողուն յատուկ է անդադար յառաջադիմելու, անդադար կատարելագործելու ձգտումը: Ահա այս պատճառով և քրիստոնեաները չբռնականացան իւրեանց տարած յաղթութեամբ: Նոր կրօնքի ջատագովները՝ առաջնորդները, սկսան քարոզել, որ, բացի ընդհանուր կատարելութիւնից, որին հասել են քրիստոնեաները Աւե-

տարանի սկզբունքները ընդունելով, կալ մի աւելի ևս բարձր կատարելութիւն, որին հասնելու համար հարկաւոր է իսպառ սրբել, մաքրել թէ ներքին և թէ արտաքին կողմից, բարձրանալ ամբօխից և երկրի վերայ ապրելով, աւելի երկնալիններին նմանել, քան երկրալիններին:

Սակայն այդպիսի բարձր կատարելութեան բոլորեքեան չէին կարող հասնել, այլ միայն ընտրեալները, որովհետև այդ դէպքում պատերազմը հեթանոսների դէմ չէր, այլ իւր անձի, մարմնի դէմ, ոչի համար աւելի մեծ հերոսութիւն պէտք էր, քան թէ այն, որ նոքա գործ էին դնում հեթանոսների դէմ մաքառելու ժամանակ: Ինքը Քրիստոսը մինչև անգամ կամենալով անցկացնել իւրեանից մարդկութեան համար խաչելու ու չարչարելու բաժակի դառնութիւնը, կրկնում էր, թէ «հողիս յօժար է, իսկ մարմինս տկար»: Այդ քարոզութիւնների ազդեցութեան ներքոյ, կամաց-կամաց արածուցեց և արմատ բռնեց այն կաշծիքը, թէ պէտք է հեռանալ աշխարհից, որովհետև նա իւր կենդանի, աղմկալից կեանքով, իւր աշխարհալին զարծութիւններով ու վայելքներով՝ կարող է մարդու մեղքի մէջ ձգել. պէտք է կուտութիւն պահպանել, որովհետև, միայն այդպիսով կարելի է սուրբ մնալ և նմանել անարատ և անապական Աուսին, Յովհաննէս-Մկրտչին, Պօղոս, Յովհաննէս և Յակովբ առաքեալներին, որոնք իւրեանց ամբողջ կեանքում կոյս մնացին. պէտք է տանջել, չարչարել և զանազան նեղութիւնների ենթարկելով մարմինը, մեռցնել նորան, որովհետև նա է հոգու գալթակցութեան մերձաւոր պատճառը. պէտք է սանձել ցանկութիւնները, ներքին զգացմունքները, պէտք է ճրնշել կրքերը, որովհետև նոքա են բոլոր մեղքերի աղբիւրը, նոքա են արգելք լինում կատարելութեան հասնելու: Ահա այս կարծիքների ընդհանրանալու և ընտրեալների՝ նոցա իւրեանց կեանքի մէջ գործ դնելու, իրականացնելու ձգտման մէջ պէտք է որոնել ճգնաւորական կեանքի սաղմը, ուրեմն և վանական կեանքի սկզբնաւորութիւնը. որովհետև վանականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն ճգնաւորական կեանքի շարունակութիւնը, զարգացումը:

Ճգնաւորութիւնը սակայն, մէկ անգամից չըհասաւ այն  
 դրութեան, որի մէջ մենք սովոր ենք տեսնել նորան. նա աս-  
 տիճանաբար անցաւ մի քանի շրջաններից, մինչև որ ստացաւ  
 իւր վերջնական կազմակերպութիւնը: Քարձր կատարելութեան  
 հասնելու ցանկութիւն ունեցող ընտրեալները կուսութիւն ուխ-  
 տելով, սկսան իւրեանց բնակած տեղերում՝ քաղաքներում, զիւ-  
 դերում և աւաններում առանձնական կեանք վարել, անձնա-  
 տուր լինելով միանգամայն կրօնական կեանքի, միանգամայն  
 ինքեանք իւրեանց մէջ կենդրոնանալով: Գոքա ճգնաւորական  
 կեանքի առաջին ներկայացուցիչներն էին: Գոքա թէև դեռ  
 կեանքի մէջ էին ապրում, բայց ուղղակի չէին մասնակցում  
 իւրեանց չորս կողմն եռ եկող կեանքի երևոյթներին, այլ ա-  
 ռանձնացած, մի կողմ քաշուած կեանք էին վարում և իւրեանց  
 միխթարութիւնը որոնում էին միայն հոգևոր վայելքների և  
 զւարճութիւնների մէջ. դոքա դեռ իսպառ կտրուած չէին աշ-  
 խարհից, որովհետև նոքա, որքան էլ քաշուած ապրէին, որ-  
 քան էլ ուղղակի կեանքին չըմասնակցէին, այնուամենայնիւ  
 կեանքի մէջ ապրելով, շրջապատուած բարեկամներով, ծանօթ-  
 ներով և ազգականներով, հարկաւ բոլորովին անմասն չէին  
 կեանքից. կեանքը դոնէ կողմնակի կերպով շօշափում էր նո-  
 ցա և չէր թողնում իսպառ հեռանալու աշխարհից: Մար-  
 դուս՝ կաարելապէս իւր մէջ ամփոփելու, կենդրոնանալու  
 համար, պէտք էր այնպիսի կեանք վարել, որ ոչ մի բան չը-  
 դրաւէր նորա ուշադրութիւնը, չըյափշտակէր նորա միտքը, որ  
 կեանքը, աշխարհը կողմնակի կերպով չազդէին նոցա վերալ-  
 որովհետև կարելի է ոչ մէկ բանի չըմասնակցել, բայց և այն-  
 պէս տեսնելով ու լսելով ևս դալթակղել: Միակ ճանապարհն  
 այդպիսի կեանք ստեղծելու համար, թողնելով աշխարհից հե-  
 ռանալն էր, միայնութեան և առանձնութեան մէջ ապրելը:  
 Ընտրեալներն այդպէս էլ արին. նոքա թողին, հեռացան բազ-  
 մամբոխ անգերից, իւրեանց բնակութիւնը հաստատեցին քա-  
 ղաքների ու զիւղերի անմարդաբնակ շրջակայքում, սկսան ապ-  
 րել այրերի մէջ, խրճիթներում, հիւղերում, խղեցին իւրեանց  
 ջարաբերութիւնը մարդկային հասարակութիւնից, մինչև ան-

դամ ծածկեցին իւրեանց բնակութեան տեղերն ամենամօտ հա-  
 րազատներից և աշխատեցին մեռնել կեանքի համար: Գոքա  
 ճգնաւորական կեանքի երկրորդ շրջանի ներկայացուցիչներն  
 էին: Այդպիսիների աշխարհից բոլորովին կտրելուն, իսպառ  
 հեռանալուն, բայց վերոյիշեալ պատճառներից, ոչ սակաւ նը-  
 պաստեցին առաջին ժամանակները նաև հեթանոսների հալա-  
 ծանքը, երբ դեռ քրիստոնէութիւնը հաստատ արմատ չէր բըռ-  
 նել. իսկ լետազալ ժամանակները քրիստոնէական կեանքի մա-  
 քուր վարք ու բարքի փոխելը, երբ հեթանոսները խմբովին  
 նոր կրօնքն ընդունելով, իւրեանց հեթանոսական սովորութիւն-  
 ները և կեանքի տարազը մտցրին քրիստոնէաների կեանքի  
 մէջ: Սակայն աշխարհն այդտեղ, այդ անմարդաբնակ տեղերում  
 էլ հանգիստ չէր թողնում նոցա: Քաղաքային բազմաբնակ  
 կեանքի ազմուկը հասնում էր շրջակայքը և խանդարում էր  
 միայնակեացների հոգու անդորրութիւնը: Պէտք էր հեռու, հե-  
 ոու փախչել դէպի անապատները, որտեղ, բայց բնութեան ըն-  
 դարձակութիւնից, վայրի կենդանիներից և երկնային թռչուն-  
 ներից, մի ուրիշ կենդանի էակ չըկար, որ արգելք լինէր կա-  
 տարելութեան հասնելու համար՝ ճգնելու: Եւ ճգնաւորները դի-  
 մեցին անապատները. այդտեղ կուսական բնութեան ծոցում,  
 որտեղ մարդը երևում է իւր բոլոր ոչնչութեամբ, իսկ Ստեղծո-  
 ղի փառքը իւր բոլոր վսեմութեամբ, նոքա անձնատուր եղան  
 ճգնութեան և իստակեցութեան: Գոքա ճգնաւորական կեանքի  
 երրորդ շրջանի ներկայացուցիչներն էին:

Առհասարակ բոլոր ճգնաւորները միևնոյն տեսակ կեանք  
 էին վարում. աղօթք, պահք, ծոմապահութիւն, հոգևոր մը-  
 տածողութիւն, վերին աստիճանի չափաւոր սնունդ և աշխա-  
 տանք ու ճիգն մեռցնելու մարմինը — ահա նոցա կեանքի ընդ-  
 հանուր բնաւորութիւնը, յատկանիշը: Բայց կային և այնպիսի-  
 ները, որ աւելի խստակեաց էին, աւելի էին տանջում, չար-  
 չարում իւրեանց անձը. դոքա խստակեաց ասկետներն էին,  
 որոնք իւրեանց անձն ենթարկում էին քաղցի, ծարաւի, տըք-  
 նութեան, յոգնածութեան, ցրտի, խորշակի և մինչև անգամ  
 ծեծի, հտրուածների և լլկանքի: Վային այնպիսիներն էլ, որ

իւրեանց դատապարտում էին կամաւոր լուծեան, Համբու-  
թեան, կամ սիւների վերայ երկար ժամանակ կանգնելու տան-  
ջանքին: Ազնաւորութիւնը քրիստոնէութեան առաջին երկու  
դարում միայն մի բացառիկ երևոյթ էր<sup>1)</sup>, այդ ժամանակները  
ճգնաւորների թիւը դեռ շատ սակաւ էր, որովհետեւ միայն  
ամենաընտանաւորներն էին, որ դիմում էին ճգնութեան. նոքա  
այդ ժամանակները դեռ ապրում էին միմեանցից առանձնա-  
ցած և չէին կազմում մի առանձին կրօնական և հոգևոր դա-  
տակարդ: Ազնաւորութիւնը մի ընդհանուր սովորութիւն դար-  
ձաւ և Հաստատութիւն ստացաւ միայն երրորդ դարի վերջերում:

## Բ

Ազնաւորական կեանքի զլիսաւոր հիմնադիր համարում է  
Անտօնիոս Մեծը: Նա հարուստ և աղանաւոր ծնողների որ-  
դի էր. սնւել ու մեծացել էր բարեպաշտութեան և կրօ-  
նական ջերմեռանդութեան հոգւով: Գեռ շատ երիտասարդ հա-  
տակում զրկւելով ծնողներից, նա չըզբաւեց աշխարհիս վա-  
յելքներով, այլ իւր բոլոր մտածմունքը, հակումը դարձրեց դէ-  
պի կրօնական կեանքը: Սակայն նա իւր այդ հակումը չէր կա-  
րող իրադրծել, որովհետեւ նորա խնամատարութեան տակ մը-  
նացել էր նորա միակ փոքրիկ քոյրը: Հեռանալ աշխարհից,  
անձնատուր լինել կրօնաւորութեան, — այդ կրնշանակէր բոլոր-  
վին անխնամ ու որբ թողնել խեղճ երեխային: Մի անակն-  
կալ դէպք սակայն, շուտով հանում է նորան իւր այդ անելա-  
նելի գրութիւնից: Իւր ներքին հակումների մասին խոկալով,  
նա մէկ անգամ մտնում է եկեղեցի և լսում է բեմից Աւետա-  
րանի հետևեալ խօսքերը, որ կարծես, նորան էին ուղղւած.

<sup>1)</sup> Ազնաւորութիւնը և անապատական կեանքը քրիստոնէու-  
թեան առաջին դարերի բացառիկ երևոյթը չէր, այլ սովորական էր  
հազարաւոր տարիներ Քրիստոսից առաջ հին Հնդկաստանում. (տես  
Mahabharata վիպասանութիւնը Հնդկաց):

«Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա, ծախիր ինչ որ  
ունիս, տուր աղքատներին և եկ իմ լետևից»: Ջարմանալի  
տղաւորութիւն են անում նորա վերայ այդ խօսքերը. դոքա  
որոշում ու լուծում են նորա մտածմունքն ու խոկումն իւր հա-  
րստութեան մասին: Հէնց այդտեղ նա վճռում է հեռւել Աւե-  
տարանի խօսքերին և իւր ունեցած-չունեցածը բաժանելով  
աղքատներին, ասպարէզ տալ իր սրտի հակումներին. բայց  
այդ ժամանակ նորա առաջ կանգնում է իւր բոլոր դժւարու-  
թեամբ միւս արգելքը — ո՛ւմ թողնել քոյրը: Սակայն այդ ար-  
գելքն էլ շուտով վերանում է վերոյիշեալի նման մի դէպքով:  
Միւս անգամ նա եկեղեցի մտնելիս լսում է Աւետարանի հե-  
տևեալ խօսքերը. «Չըմտածէք վաղւայ մասին, վաղւայ՝ որն ին-  
քը կըհոգայ իր մասին. ամեն օրւայ համար բաւական է իւր  
հոգսը»: Անտօնիոս այդ խօսքերի ազդեցութեան ներքոյ լանձ-  
նում է իւր քոյրը ազգականներին և ինքը իրեն տալիս է  
ճգնութեան: Առաջ նա բնակութիւն է հաստատում իւր բընա-  
կած քաղաքի շրջակայքում ճգնող մի ծերունու մօտ, և այն  
աստիճանի ջերմեռանդ, մաքուր և խոտակրօն կեանք է ըս-  
կում վարել, որ բոլորից արժանանում է կոչւել «Աստուծոյ  
մարդ»: Սակայն սրբի եռանդն այնքան անչափ է լինում, նո-  
րա ճգնողական կեանք վարելու ցանկութիւնն այնքան մեծ,  
որ այդ նորան չէ բաւականացնում: Նա կամենում է անապատ  
հեռանալ և անապատական խոտակեցութեան մէջ փորձել իւր  
անձը, մաքառել իւր ախտերի դէմ և կրօնական մտածողու-  
թեան մէջ իսպառ հրաժարելով աշխարհից, մոռանալ կեան-  
քը: Նա սկսում է համոզել ծերուկին միասին անապատ գնալ,  
բայց մերժումն է ստանում: Այն ժամանակ նա մտածում է մե-  
նակ գնալ, և ընտրում է Եգիպտոսի Թեբայի կոչւած երկրի  
անապատն իբրև մի այնպիսի հեռաւոր անկիւն, որտեղ չը-  
կարողանար հասնել ոչ մի աշխարհային ազմուկ, որտեղ ոչ մի  
րան չըսէտք է արգելք լինէր նորա կատարելութեան մասին  
մտածելու և խոկալու ձգտման: Այստեղ նա բնակութիւն հաս-  
տատելով մի այրի մէջ, սկսում է կատարել իւր ճգնաւորական  
ախրազորութիւնները: Նա իւր հետ հաց է տարած լինում

միայն վեց ամսուայ համար, իսկ այնուհետև հացը ստանում է իւր բարեկամներից միայն աարին երկու անգամ. այն էլ, երբ այդ բարեկամները հաց են բերում, նա նոցա չէ երկուում. նոքա սախլած են լինում ձգել նորան հացն այլի տանիքի ծակից: Քսան աարի շարունակ նա մնում է այդ այլի մէջ, առանց մարդու երես տեսնելու, և համբերութեամբ ու մեծ առկուտութեամբ կատարելով իւր ճգնութեան հանդէսը, վերջ ի վերջոյ կարողանում է հասնել իւր նպատակին՝ յաղթել մարմնին, ցանկութիւններին, կրքերին: Նա այդ երկար ժամանակամիջոցում ի հարկէ շատ նեղութիւն է քաշում, շատ առաւապանք է տեսնում. տանջում է սովից, ծարաւից, նեղուում ցրտից ու տաքից. նորան անհանգիստ են անում միայնութիւնը, աշխարհի անձուկն ու կարօտը, նա մանուսանդ աշխարհային մասածողութիւնները: Չատ անգամ չըկարողանալով դիմանալ այդքան արգելքներին, նա վհատում է, թուլանում է, բայց այդպիսի ծանր ընկերներում միշտ հասնում է Աստուծոյ օգնութիւնը և խրատուելով, սիրա և տալիս և արիացնում է նորան: Նախախնամութիւնը ինքն է ղեկավարում նորան այդ հողւոր հանդիսում, ինքն է ճանապարհ ցոյց տալիս նորան, յաճախակի երևելով և աշխատանքի օրինակ ցոյց տալով նորան: Երբէք նա պարապ չէ նստում, որովհետև նա նրկատում է, որ այդպիսի ընկերներում նա աւելի է անջուրում ու չարչարում: Երբ նա աղօթք չէ անում, միշտ մի բանով սարապում է, միշտ դբադում ու աշխատում է: Մեծ ճգնաւորի բարի համբաւը շուտով տարածում է ամեն տեղ և շարժում է բոլորի զարմանքը. շատերը ցանկանում են նորան տեսնել, նորա աղօթքին արժանանալ, նորա խորհուրդները լսել. շուտերի բարի նախանձն է շարժում հեռեւելու նորա օրինակին: Եւ ամեն կողմից խմբում են նորա մօտ աշակերտներ, զայլ: Են և հիւանդներ ու ցաւազարներ՝ նորա սուրբ աղօթքով բրժղւելու: Առաջին անգամ նա չէ ուզում ոչ ոքի երես տեսնել և ամուր փակում է իւր այլի դուռը, բայց անսնելով, որ եկողները պատրաստ են դուռը կոտրել և այդպէս ներս թափանցել, նա բաց է անում, ընդունում բոլորին: Այցելուները մեծ

փոփոխութիւն չեն տեսնում նորա մէջ: Նորա երեսին փայլում էր նորա սրախ խաղաղութիւնը, նորա հոգու անդորրութիւնը. այդ նշան էր, որ նա արդէն կատարել է իւր ճգնութեան զըլխաւոր հանդէսը, յաղթել է իւր կրքերին. այդ նշան էր, որ նա արդէն մեռել է աշխարհի և կեանքի համար: Կարճ միջոցում սրբի բնակարանի չորս կողմը զանաւած այրերը լցում են նոր ճգնաւորներով, որոնք բոլորեքեսն ևս իւրեանց՝ Անսօնիօսի աշակերտն են համարում, նորա խրատներով, նորա ցուցմունքներով են առաջնորդում: Ս. Անտօնիոսը յաճախակի այցելում է իւր աշակերտներին և իւր կենդանի օրինակով ուսուցանում է նոցա ճգնութեան հանդէսը: Նա այդպիսով կազմում է մի մեծ միաբանութիւն, որ աղօթում, երգում, աշխատում է միօրինակ, ղեկավարում է միւսնոյն սկզբունքներով: Քա, յայտնի բան է, ղեռ մի կանոնաւոր միաբանութիւն չէ, ղեռ շատ հեռու է վանական միաբանութիւն լինելուց, որովհետև ճգնաւորների այրերը շատ հեռու են միմեանցից և նոցանից իւրաքանչիւրը ճգնում է իւր համար. բայց այն, որ նոքա առաջնորդում են մի սկզբունքով, մի վերակացուի կամ ուսուցչի են հնազանդում, արդէն վանական միաբանութեան սկիզբն է. դա մի տեսակ ճգնողական վանականութիւն է, որ կազմում է ճգնաւորութեան և վանականութեան մէջ եղով՝ անցողական աստիճանը: Սակայն ս. Անտօնիոսը սովոր լինելով միայնակեցութեան, երկար չէ կարողանում իւր աշակերտների հետ կենալ: Նա հեռանում է իւր բնակութիւնից երեք օրուայ ճանապարհի հեռաւորութեան վերայ գտնւած մի տեղ և հաստատում է մի նոր այլի մէջ սարի վերայ: Եւ որպէս զի ոչ ոք չը չը իւր մօտ, աշխատում է իւր կեանքն այնպէս յարմարեցնել, որ ոչ մի բանի կարօտութիւն չունենայ, մինչև անգամ հացի, որ, ասացինք, տարին երկու անգամ նա ստանում էր իւր բարեկամներից: Նա ցանում ու մշակում է մի արտ, որ բաւական է լինում նորա հացի չափաւոր կարիքը լցուցանելու: Բայց և այնպէս նա իւր աշակերտներին իսպառ չէ թողնում. նա երբեմն-երբեմն դուրս է գալիս իւր բնակարանից և այցելում է իւր հիմնած միաբանութիւնը, մի այլից դէպի

միւսը շրջելով: Ս. Անտօնիոսը զրաւոր ուսմունք չունէր. նո-  
րա Հիմնած միաբանութեան կարգը շատ պարզ և զիւրըմբռ-  
նելի էր: Նա աշխատում էր սովորեցնել ազօթել, հեղ ու խո-  
նարհ լինել, բարեպաշտական և ջերմեռանդութեան զգացմունք  
ունենալ: Ամբողջ եօթանասուն տարի ս. Անտօնիոսը մնաց Թե-  
բալիզում և այդ բոլոր ժամանակամիջոցում նա դուրս չեկաւ  
անապատից: Մի անգամ միայն, երբ Արիտականները սաստիկ  
վրդովում էին քրիստոնէական աշխարհը, նա գնաց Ալէքսան-  
դրիա մաքառելու նոցա դէմ, բայց քարոզութիւնները վերջա-  
ցնելուց լետոյ, նա դարձեալ վերադարձաւ անապատ: Այսքան  
երկար ժամանակ անապատում ապրելուց լետոյ, արդէն իւր  
կեանքի վերջերում նորան սկսում է տանջել մի միտք. նորան  
պաշարում է մի տեսակ հպարտութիւն, թէ ինքն առաջինն  
է, որ այդքան երկար ժամանակ անապատումն է անցկացրել  
իւր կեանքը, և նորից փորձութեան մէջ է ընկնում: Սակայն  
Նախախնամութիւնն այդ դէպքում ևս օգնութեան է հասնում  
և փրկում նորան փորձանքից: Նորան յարմարում է, թէ այդ  
հպարտութեան զգացմունքն ի դուր է աւելցնում նորան, որով-  
հետև նա առաջինը չէ, կալ այլ ևս մի ուրիշ ճգնաւոր էլ,  
որ նորանից առաջ է բնակութիւն հաստատել անապատում և  
նորանից երկար է ծառայել Աստուծոյ: Այն ժամանակ նա կա-  
մենում է անպատճառ տեսնել այդ երանելի մարդուն և նորա  
տեսակցութեամբ մխիթարել, խոնարհել և հնազանդել նորան:  
Երկար ճանապարհ է գնում նա, մինչև որ, վերջապէս, տես-  
նում է մի էգ գալլ, որ գնում էր ջուր խմելու: Նա հետևում  
է գազանին և մի առևակի մօտ, որտեղից գալլը յազեցնում էր  
իւր ծարաւը, նա նկատում է իւր ցանկալի ճգնաւորի խրճիթը,  
որի դուռը իսկոյն փակւում է նորա առաջ: Երկար ժամանակ  
դուռը բաղխելուց և աղաղակելուց լետոյ, վերջապէս դուռը  
բացում է և ս. Անտօնիոսին երևում է մի դառամեալ պատ-  
կառելի ծերունի, որի անունն էր Պաւղոս Թեբալցի: Նա ար-  
գէն 90 ասրի էր, որ անապատումն էր: Եղբայրական համ-  
բուրից և ողջունից լետոյ, ծերունին նորան հարցնում է՝ «Ինչ  
գրութեան մէջ է աշխարհը»: Նա շատ մխիթարում է, երբ

իմանում է քրիստոնէութեան յաղթանակ տանելը, բայց միև-  
նոյն ժամանակ շատ էլ տխրում է, երբ լսում է եկեղեցու՝  
Արիտականների յարուցած խռովութիւնների պատճառով պա-  
ռակտելու մասին: Երբ որ սուրբն այդ տեսակցութիւնից լե-  
տոյ, վերադառնում է իւր անապատը և աշակերտները հար-  
ցնում են նորան ճգնաւորի մասին, նա պատասխանում է. «Ես  
տեսալ Եղիալին, Յովհաննէսին և Պօղոսին դրախտում. իսկ ես  
մեղաւորս դեռ ինձ ճգնաւոր էի համարում»: Անտօնիոսը մեռ-  
նում է խորին ծերութեան մէջ 106 տարեկան հասակում 336  
թւականին:

Ք

Ս. Անտօնիոսի Հիմնած ճգնաւորական միաբանութիւնից  
փոքր առ փոքր, դեռ նորա կենդանութեան ժամանակ, կազմա-  
կերպւում է վանական միաբանութիւնը: Մի քանի ճգնաւոր  
դուրս գալով իւրեանց առանձնացած այրերից, խմբւում են  
միասին, կազմում են մի միաբանութիւն և սկսում են միասին  
ազօթել, միասին աշխատել ընդհանուր օգտի համար, կառա-  
վարւում են մի առաջնորդի կամ արբալի ձեռքով և ենթարկ-  
ւում են մի տեսակ կարգ ու կանոնի: Այդ արեղայական կամ  
վանական միաբանութեան Հիմնադիրը համարւում է Ս. Պա-  
քոմիոսը:

Պաքոմիոսը մի հեթանոս հարուստ գերդաստանի զաւակ  
էր և լաւ կրթութիւն էր ստացել: 112 թւականին նա մտաւ  
գինւորական ծառայութիւն այն գօրքի մէջ, որ գտնւում էր  
Մաքսիմիանոս կայսեր առաջնորդութեան տակ, որ ապստամբել  
և պատերազմ էր յարուցել Աստանդիանոսի դէմ: Պատերազմի  
ժամանակ յաճախակի ականատես լինելով գօրքում գտնւած  
քրիստոնէաների՝ բոլորի վերայ մինչև անգամ և թշնամիների  
վերայ ցոյց տւած հոգացողութեանը, հակում է նոցա կողմը,  
պատերազմից լետոյ մկրտւում է և առանձնանալով, սկսում է  
ճգնել՝ փրկելու յոսով: Հնգետասանամեայ խիստ ճգնութիւնից  
լետոյ, նա միտք է լղանում ցրւած ճգնաւորներից մի ընդհա-  
նուր միաբանութիւն կազմելու: Այդ նպատակով նա Նեղոսի

կղզիներից մէկի՝ Տավեննայի վերայ շինուժ է առաջին վանքը, որ այնպէս լցուժ է ճգնաւորներով, որ հարկաւոր է լինուժ շուտով և մի քանի ուրիշ վանքեր շինելու: Այդ առաջին վանքերում նա հաստատուժ է խիստ կարգ ու կանոն որոշ կանոնադրութեամբ, որով և հիմք է դրուժ առաջին վանական գրաւոր կանոնադրութեան:

Միաբանները ապրում էին վանքի խցերում՝ երեք հոգի միասին: Նոքա միասին ձեռագործութեամբ էին պարապում, միասին էլ ուտում էին: Օրուայ մէջ մի քանի անգամ արեղաները ժողովում էին աղօթքի, իսկ միաբանական ժամասացութիւնը կամ աստուածապաշտութիւնը կատարում էր երկու անգամ՝ գիշերը և ցերեկը: Նշանատու փողը հնչեցնելուժ պէս, խցերից լուռ ու մունջ դուրս էին դալիս արեղաները և մըտնում եկեղեցի, որտեղ աղօթում, երգում, սաղմոսում, սուրբ դիրքն էին կարդում և լսում ձերուժ խրատները— քարոզը:

Միաբանները բոլորը միատեսակ էին հագնուժ. նոցա վերնազգեստը կազմում էր վշեայ անթև խիտոնը, նոքա գլխներին դնում էին վեղար, ոտքերին հագնում էին մուժակներ: Միաբանութեան մէջ խիստ կարգապահութիւն էր տիրում. պահանջում էր, որ ամենեքեան անպայման հնազանդութիւն ցոյց տան արբային, միասին աշխատեն և որ այդ աշխատանքի արդիւնքը իրենցը չըլինի, այլ հասարակաց օգտին ծառայի: Առանց վանահօր թույլատուութեան ոչ ոք չէր կարող վանքից դուրս գալ, մի տեղից միւս տեղն երթալ, առանց նորա օրհնութիւնն առնելու ոչ ոք իրաւունք չունէր դործ սկսել: Օրուայ մէջ նոքա միայն մի անգամ էին հաց ուտում: Նոցա կերակուրն էր՝ հաց, բանջարեղէն և պտուղներ. կիւրակի օրերը թույլ էր տրուժ նոցա ընթրիք անել: Ս. Պաքոմիոսի ուխտի կամ միաբանութեան գլխաւոր հիմքը կազմում էին ողջախօհութիւնը, հեղութիւնը, խոնարհութիւնը, աշխարհից հրաժարելը և անպայման հնազանդութիւն վանահօրը: Այն կանոնադրութիւնը խստիւ և ճշտապահութեամբ պահպանելու համար ս. Պաքոմիոսը կարգադրել էր, որ միաբանները ընդունելին վանական ուխտի մէջ միամեայ փորձութիւնից յե-

տոյ: Միաբաններից ոչ ոք քահանայութեան աստիժան չունէր, այնպէս որ կիւրակի և շաբաթ օրերը դրացի զիւղերից էին ստիպուժ լինում քահանայ հրաւիրել պատարագելու և միաբաններին հաղորդելու համար: Ս. Պաքոմիոսը խուսափում էր այդ աստիժանն ինքը ընդունել և իւր միաբաններին տալու, որովհետև վախենում էր, որ չըլինի թէ դորա հետ միասին վանքի մէջ մուտ գործի իշխանասիրութիւնը: Իւր—Պաքոմիոսի կենդանութեան ժամանակ, նորա հաստատուժ վանքերի միաբանների թիւը շատ բազմացաւ. նոցա թիւն այդ ժամանակ հասնում էր 7000-ի, իսկ նորա մահից յետոյ հասաւ 50,000-ի: Նա հիմնեց և մի վանք կանանց համար և առաջին անգամ մայրապետ կարգեց նորա վերայ իւր քրոջը:

Ս. Անտոնիոսի հիմնած ճգնաւորութիւնն Եգիպտոսից կամաց-կամաց սկսաւ տարածել բոլոր քրիստոնեայ աշխարհներում՝ դէպի արևելք և արևմուտք: Ճգնաւորութեան հետ միասին այդ աշխարհները մտան և ճգնաւորական միաբանութեան կարգ ու կանոնները, իսկ դորա հետ միասին և ս. Պաքոմիոսի վանական միաբանութիւնն իւր վանական-արեղայական կարգ ու կանոններով: Ս. Անտոնիոսի Իլարիոն աշակերտը վանականութիւնը մտցրեց Պաղեստին, որ նորա հալլենիքն էր, և Գաղէ քաղաքի մօտ առաջին վանքը հիմնեց, որտեղից և վանականութիւնը տարածեց Ասորիք: Բարսեղ կեսարացին այցելելով Եգիպտոսը և Ասորիքը, այդ երկրներից վանակութիւնը տեղափոխեց Կապադովկիոյ Կեսարիա քաղաքը, որտեղից և նա տարածեց հետզհետէ Փոքր-Ասիա, Հայաստան և բոլոր արևելեան երկրները:

Ճգնաւորութիւնը Հայաստանում շատ կանուխ է իւր ըսկիղբն առել. նա այնտեղ սկսել է համարեան նոյն իսկ քրիստոնէութեան քարոզութեան առաջին օրերից ս. Թադէոս առաքեալի ժամանակ: Ոսկեանք ճգնաւորների առաջին նշանաւոր խումբն են եղել, որ ճգնել են Հայոց լեռներում, Սուքիասեանքերկրորդը. դոցա անկասկած հետևել են և ուրիշները, որոնց անունները թէև մեզ չեն հասել, բայց և այնպէս Հայաստանում քրիստոնէութեան քարոզելու բոլոր հանգամանքները

յոյց են տալիս, որ պէտք է շատ եղած լինին: Ազնաւորական կեանքի զարգանալուն Հայաստանում նպաստել են, բացի ընդհանուր պատճառներից, քրիստոնէութեան մեր աշխարհում քարոզելու և առանձին պայմանները: Յայտնի է, որ քրիստոնէութիւնը Հայաստանում քարոզել է երկիրը կառավարող իշխանութեան յօժար կամքով, ցանկութեամբ և մինչև անգամ օչնութեամբ: Բնական է, որ ս. առաքելայնների քարոզութիւններն այդպիսի յաջող հանգամանքներում մեծ ծաւալ ստանային, տարածւէին երկրի բոլոր մասերը և մտնէին ժողովրդի բոլոր խաւարի մէջ: Բայց դժբախտաբար այդ յաջող հանգամանքներն երկար չեն շարունակւել. քրիստոնէութեան բարեհաճ և ցանկացող իշխանութեան՝ Հայոց զահի վերայ յաջորդել և նորան հակառակ և ատող կառավարութիւնը, որ ամբողջ երեք դար հալածանք է յարուցել նոր կրօնքի դէմ և իւր կամքի և ոյժի բոլոր զօրութեամբ պաշտպան է հանդիսացել խախտւած հեթանոսութեան. նոյն իսկ ս. Թադէոս և ս. Բարթոլիմէոս առաքելայնները և նոցա ձեռնադրած աշակերտները նահատակւել են նոցանից և քրիստոնէութիւնը զաղտնի և հալածական կրօնք է դարձել: Այսպիսի հանգամանքներում շատ հասկանալի է, որ հալածւած քրիստոնեաներից շատերը պէտք է աշխատէին ծածկւել, հեռանալ կենդրոններից և երկրի իսկ անկիւններում իւրեանց համար ապաստարան որոնել, ճրգնաւորական կեանք վարել, մանաւանդ որ երկրի աշխարհագրական դիրքն և մակերևոյթի կազմութիւնն էլ իւր դժւարամտայց լեռներով, իւր խոր ձորերով և անտառապատ բլուրներով ու այլերով ըստ ամենայնի նպաստում էին նոցա:

Այդ ճգնաւորները մեծ օգուտ են տւել մեր երկրին, անխախտ պահելով քրիստոնէութեան ս. կրօնքը և չըթողնելով, որ երկարատև և զարհուրելի հալածանքների դարերում իսպառ հանգչի այն ճրագը, որ վառել էին ս. Թադէոսն ու Բարթոլիմէոսը, իսպառ չորանան այն սերմերը, որ ցանել էին նոցա աշակերտները. նոքա իւրեանց կեանքը դահելով, ժամանակ առ ժամանակ իջել են իւրեանց լեռներից և քարոզել են ժողովրդին, որով ոչ միայն իւրեանց, այլ և բոլոր հայ աշխարհի

ժրկութեան պատճառն են եղել: Հէնց այդ տեսակ քարոզութիւնների պատճառով է եղել, որ Արտաւազդ նահատակել է Ասիկանց և Սուքիասեանց, որոնք նրա օրով թողնելով իւրեանց ճգնարանները, մտել էին ժողովրդի մէջ և առաքելի պաշտօն էին կատարում. Սուքիասեանք մինչև անգամ այնքան համարձակութիւն էին ստացել, որ վստահանալով իւրեանց՝ թաղուհու հետ ունեցած ազգակցութեան վերայ, մուտք էին դործել նոյն իսկ Արտաշէսի պալատը և քարոզել Սաթենիկին և պալատականներին:

Քրիստոնէութեան յաղթանակը Հայաստանում աւելի ևս մեծ զարկ է տալիս ճգնաւորութեան կեանքի զարգացման, նամանաւանդ որ ինքը ս. Գրիգորը ևս շատ էր սիրում ճգնաւորութիւնը և ամեն տեսակ նպաստում էր նորա զարգացման. նորա Փոքր-Ասիայից և Ասորիքից հրաւիրած կրօնաւորները մէջ կային և ճգնաւորներ, որոնք իւրեանց այդ նոր հայրենիքում ևս շարունակում են իւրեանց ճգնութեան դործը, իւրեանց համար բնակութեան տեղ բնորելով Տարօնի անտառապատ լեռները: Գոքա իւրեանց հայրենիքից բերում են Հայաստան ս. Անտօնի ճգնաւորութեան կարգը և Հաստատում են Հայերի մէջ առաջին ճգնաւորական միաբանութիւնը, որ կառավարում է այդ կարգով <sup>1)</sup>: Ս. Անտօնիսի աշակերտներն են լինում Անտօնը և Արօնիդէսը և այն 40 խարաղնազգեստ ճրգնաւորները, որոնք բնակութիւն են հաստատում «Իննակեան» տեղի մօտ և որոնց վերայ ս. Գրիգորը վերակացու է նշանակում ս. Անտօն Մեծի աշակերտ Եպիփանին: Մենք աստցինք, որ ս. Գրիգոր Լուսաւորիչը շատ էր նպաստում ճգնաւորութեան զարգացման Հայաստանում: Գորա պատճառը այն էր, որ ինքը Լուսաւորիչն էլ մի ճգնաւոր էր: Նա եթէ արձակ լինէր, եթէ կապւած չըլինէր հովապետի մեծ պաշտօնով, վաղուց արդէն հեռացած կըլինէր աշխարհից և խստակեաց ճրգնութեան տւած կըլինէր իւր անձը: Մինչև անգամ այդ զըրութեան մէջ էլ նա ժամանակ էր գտնում յաճախակի առանձ-

<sup>1)</sup> Զենոբ Կլակ. «Պատմութիւն Տարօնոյ» պատճէն երկրորդ, Պատասխանի զրոց սրբոյն Գրիգորի. էջ. 10:

նանալու և միայն հարկաւոր դէպքերում էր երևում իւր աթոռում և ժողովրդի մէջ, իսկ իւր կեանքի վերջերում, ինչպէս յայտնի է, նա բոլորովին առանձնացաւ Գարանադեացի դաւասի Սեպուհ սարի Մանեայ այրը, որտեղ և կնքեց իւր մահկանացուն: Սրբի որդին՝ Արիստակէսը, որ նորա տեղապահը և յաջորդը եղաւ, նոյնպէս անմասն չէր ճգնութեան սխրագործութիւններէց. նա, ինչպէս յայտնի է, իւր մանկութիւնը անց էր կացրել Նիկոմաքոս ճգնաւորի մօտ և ըստ ամենայնի ուսել էր նորանից ճգնութեան կարգն ու հանդէսը: Ճգնաւորութիւնը այսպիսի յաջող հանգամանքներում այնպէս զարգանում, այնպիսի մեծ ծաւալ է ստանում Հայաստանում, որ մինչև անգամ ազգում է նոյն իսկ Տրդատ թագաւորի վերայ. նա էլ Հետեւելով ս. Լուսաւորչի օրինակին, թողնում է արքայական գահը և իւր կեանքը վերջացնում է միայնակեցութեան մէջ նոյն Մանեայ այրում:

Ս. Գրիգորի օրով մուտք է գործում Հայաստան և վանականութիւնը, սկիզբն է առնում վանքերի հասաստութիւնը: Իննակեան ս. Կարապետը, Առաքելոց վանքը և ս. Էջմիածինը լինում են Հայոց առաջին վանքերը, որ հիմնւում են նոյն իսկ Լուսաւորչի ձեռքով: Այդ վանքերի մէջ եղած կարգու կանոնը, միաբանութեան կազմակերպութիւնը, կանոնադրութիւնը—բոլորը, բոլորը Լուսաւորչի փոխ է առնում Վեսարիայից, որ իբրև նորա դաստիարակութեան, կրթութեան ձեռնադրութեան տեղ և իբրև ս. Թադէոսի աթոռատեղի՝ յարգելի էին թէ նորան և թէ բոլոր Հայերի աչքերին: Առաջին միաբանները այդ վանքերում լինում են օտարազգի՝ Վեսարիայից, Սեբաստիայից և Ատորիքից եկած կրօնաւորներ, իսկ վանահայր՝ Ատորի երկու եղբայր Ջենոբ Գլակ և Եղիազար, որոնցից առաջինի անունով ս. Կարապետ վանքը սկսում է կոչւել Գլակայ, իսկ Առաքելոցը—Եղիազարու կամ Ղազարու վանք: Սակայն ս. Գրիգորը ընդունելով վանական կեանքի բոլոր կարգու կանոնները Վեսարիայից, ինչպէս երևում է, իւր մասնաւոր փոփոխութիւններն է մտցնում նոցա մէջ, յարմարեցնելով նոցա թէ ժողովրդի և թէ երկրի գրութեան: Այդ փոփոխութիւն-

ներին համեմատ Բարսեղ Վեսարացու վանական զրաւոր կանոնագրութիւնն էլ փոփոխութեան է ենթարկւում և այդպէս բարեփոխւած կամ լաւ է ասել Հայացած ձևով է ընդունւում Հայոց վանքերում: Հայ ժողովրդի կարիքներին յարմարեցրած այդ կանոնագրութիւնը, որ մենք յարմար ենք համարում կոչել «Լուսաւորչական», ամբողջովին զետեղւած է ս. Գրիգորի «Յաճախատում» գրքի 23 ճառի մէջ: Հայոց և Վեսարիոյ վանքերում ընդունւած կանոնագրութիւնների զանազանութիւնը կամ տարբերութիւնը իսկոյն աչքի կ'ընկնի, եթէ մենք ուշադրութիւն դարձնենք նոցա մի էական կէտի վերայ: Վեսարիոյ Միարոպոլիտ Ղևոնդիոսը զանազան խորհուրդներ տալով ս. Գրիգորին ս. Կարապետ վանքի միաբանութեան կազմակերպութեան մասին, շեշտում է այն հանգամանքի վերայ, որ նա աշխատի հաստատ եկամուտներով ապահովել վանքը՝ որպէս զի միաբանները ազատ կարողանան դբադել միայն ճրգնութեամբ և աղօթքով, այն ինչ մենք զիտենք, որ ս. Գրիգորի կանոնագրութեամբ միաբանները ինքեանք պէտք է աշխատէին իւրեանց թէ աւուր պարէնը և թէ առհասարակ նիւթականը հայթայթել <sup>2)</sup>: Լուսաւորչի կանոնագրութեամբ իւրաքանչիւր վանքի միաբանութիւն կազմում է մի եղբայրութիւն, որ անպայման հնազանդում է վերակացւին կամ վանահօրը: Միաբանները ապրում են «գարափոս խցերի», «նեղ խուղերի» ձեւերով մէջ. նոքա վարում են «քարանձաւամուտ», միայնակեաց կեանք, հաղնում են խարազն և կերակրւում են զըլխաւորապէս բանջարեղէնով—«խոտաբուտ» են: Միաբանների կեանքը պէտք է անցնի աղօթքի, պահքի, ծոմապահութեան և աշխատանքի մէջ: Նոցա աշխատանքի պտուղներից պէտք է օգտուեն ոչ թէ միայն ինքեանք միաբանները, այլ և ճանապարհորդները, մշակները: Վանքի մէջ որոշւած են հեռեեայ պաշտօնեաները՝ վերակացու, տնտես, շաբաթաւոր, տեսուչ հիւրոց կամ հիւրընկալ և անասունների վերակացուներ կամ «տեսուչք»: Վերակացուն կամ վանահայրը պէտք է հեռատեսութեամբ և խորազնութեամբ խրատէ եղբայրներին, որպէս զի

<sup>2)</sup> Պատմութիւն Տարօնոյ, էջ. 11.

նոքա հնազանդութիւնից երբէք դուրս չըզան, առանց նորա հրամանին ոչ մի դործ չըբռնեն, ոչ մի տեղ չերթան և եղբայրութիւնից դուրս չըզան. նա պէտք է լուր խնամքին յանձնուած միաբանութեան մէջ այնպիսի հոգի մտցնէ, որ նոքա ինքեանք միմեանց յորդորեն բարի գործելու, որ նոցա բարի նախանձը շարժելի հաւատարմութեամբ ամեն մի դործ առաջ տանելու. նա պէտք է ամեն բան այնպէս կարգադրի, որ հասարակաց պաշտօնը ոչ մի սխառտում չըխափանուի, բացի այն դէպքերից, երբ նոքա վերակացուի հրամանով դբադուած կըլինին եկեղեցուն վերաբերեալ գործերով, բայց և այդ ժամանակ նոքա անդադար աղօթք պէտք է կարդան: Մի խօսքով վերակացուն այնպէս պէտք է վարել միաբաններին հետ, որ նոքա և՛ սիրեն և՛ վախենան նորանից և ընկած տեղը համարձակապէս կարողանան ասել՝ «Յորմէ հետէ ընծայեցաք Աստուծոյ, զամենայն կամս մարմնոց և զմտաց խափանեցաք և տըւաք զանձինս, նախ, ի ծառայութիւն Տեառն և, ապա, առաջնորդաց ի հնազանդութիւն, ըստ պատուիրանին Աստուծոյ»: Տեսեսր զգուշութեամբ պէտք է հոգ տանի վանքի բոլոր անօթեղէնի վերայ. նա պէտք է ամեն բան հաւասար կերպով բաժանէ միաբաններին և խտրութիւն չըպէտք է անի ոչ ծերերի, ոչ հիւանդների, ոչ փոքրների և ոչ մեծերի մէջ. նա պէտք է բաժին հանի և վանքում եղած ճանապարհորդներին ու վանքում աշխատող վաստակաւորներին կամ մշակների համար: Չբաթաւորը պէտք է հոգայ վանքի կահ-կարասիքի և բոլոր իրեղէնների վերայ: Հիւրոց տեսուչները կամ հիւրընկալները պէտք է սիրով ընդունեն հիւրերին և մատակարարեն նոցա ինչ որ հարկաւոր է սիրով և քաղցրութեամբ, բայց պէտք է զգուշանան հիւրերի պատճառով պահքը լուծել և աղօթքը թողնել: Անասունների տեսուչները կամ վերակացուները հաւատարմութեամբ պէտք է խնամք տանեն իրանց յանձնած արջառի վերայ, պէտք է հոգան կովերի հօտերի, արօտական լաշինքի, բեռնակիր դրաստների և հողագործ եղների վերայ<sup>3)</sup>:

<sup>3)</sup> „Յաճախասպատում“ ճառ 23 „խրատք՝ ճգնաւորաց և ցոյցք հանդիսից որ չառաքինութիւն յորդորեն“:

Հայոց վանքերը իւրեանց բռնած գիրքով, ուղղութեամբ և ժողովրդի մէջ խաղաղած դերով կարելի է երեք ժամանակաշրջանի բաժանել՝ Առաւելի, Մեծն Ներսիսի և թարգմանչաց:

Առաւելի շրջանում վանքերը աւելի մասնաւոր հաստատութիւններ էին, քան թէ հասարակաց. նոցա մէջ ապրող միաբանները առանձնացած, աշխարհից կարուած կեանք էին վարում: Նոքա չէին խառնուում ոչ հասարակաց գործերին և ոչ ժողովրդի կեանքից անդեկութիւն ունէին. նոքա նոյն առաջուայ ճգնաւորներն էին միայն, աւելի կազմակերպուած, աւելի կանոնաւորուած: Արշտ է, նոքա ընդունում էին հիւրերին, կերակրում էին ճանապարհորդներին, խնամում էին վանքում պատահած տնանկներին ու հիւանդներին, բայց նոցա ժողովրդի հետ շփուելը դորանից հետո չէր գնում: Գրիգոր Առաւելի շրջանում վանքերը հիմնելով, ուրիշ նպատակ չէր ունեցել, բացի նորանից, որ նա, նախ, օրինակ էր առել ուրիշ քրիստոնեայ երկրներից, երկրորդ, կամեցել էր զբանով նորադարձ ժողովրդին քրիստոնէական կեանքի մի կաաարեալ տիպար ցոյց տալ, կամեցել էր կատարելութեան հասնելու հեշտ ճանապարհը սովորեցնել ընտրեալներին: Այն մարդիկը, որոնք ամեն տեսակ նեղութիւնների ենթարկելով իւրեանց մարմինը, աշխատում էին կեանքի համար նորան մի անպէտք բան դարձնել, որոնք աշխատում էին միտնդամայն մեռնել աշխարհիս համար, որոնք յաճախակի խորշում էին մինչև անգամ մարդու երես տեսնել, անկասկած չէին կարող ժողովրդի կարիքներից ցաւերի վրայ մտածել. նոցա բոլոր ջանքը հէնց այն էր, որ ինքեանք փրկէին, ինքեանք կատարելութեան հասնէին:

Ներսէս Մեծի շրջանում, նախ, վանքերի թիւը խիստ բազմանում է, որովհետև մեծ հայրապետը նկատելով, որ վանքերի սակասութեան պատճառով կրօնաւորներից շատերն ապրում են քաղաքներում, գիւղերում ու տեղից տեղ են թափառում, ձեռնարկում է բազմաթիւ վանքերի, միայն-

նանոցները և եղբայրանոցները շինութեան անապատ տեղերում և նոցա մէջ է հաւաքում աստանդական կեանք վարող կրօնաւորներին, և, երկրորդ, նոքա փոխում են իւրեանց ուղղութիւնը: Այդ ժամանակներից սկսած խստակեաց ճշնաւորութեան վանականութիւնը մնում է սեպհականութիւն միայն մի քանի «անապատ» վանքերի՝ Թանահատից, Խոտակերից, Մաքենացուց և այլն, իսկ մեծամասնութիւնն ընդհանուրում պահելով նախկին վանքերի ճշնաւորութեան ոգին, մասնաւոր հաստատութիւններից դառնում են հասարակաց: Մեծ հովուապետի գործունէութեան ներքոյ առաջ է դալիս այն դադախարը, որ ամենամեծ ճղնութիւնը հէնց յօգուտ մերձաւորների գործելն է, նոցա ցաւերով ցաւելը, նոցա ուրախութեամբ ուրախանալն է: Վանքերը ժողովրդի նւէրներով ապահոված հաստատութիւններ էին. պէտք էր, ուրեմն, ժողովրդից ստացածն օգտաւէտ կերպով շահեցրած վերադարձնել ժողովրդին. դորանով նոքա և իւրեանց զերը կատարած կրիւնէին և մեծ օգուտ բերած ժողովրդի ցաւերին, պահանջներին, կարիքներին: Իսկ ազգի կարիքն այդ ժամանակները շատ մեծ էր. նա տկարներ ունէր, որոնք չէին բժշկուում, այրիներ, որբեր ունէր, որոնք չէին խմամում, աղքատներ, տնանկներ ու անկեալներ ունէր, որոնք տեղ չունէին իւրեանց գլուխը դնելու, նա բորոտներ, ուրուկներ և ուրիշ վարակիչ հիւանդներ ունէր, որոնք ոչ մի ապաստանարան չունէին: Ազգի այդ կարիքների անդարման մնալը հեթանոսական կրօնքի հետեանքն էր, հեթանոսական կրօնքի, որին ծանօթ չէր մարդասիրութեան, ողորմածութեան զգացմունքը: Քաւական չէ, որ ազգի խեղճ անդամներն ամենեւին չէին խնամուում, այլև նոցանից շատերը, ինչպէս բորոտները և ուրուկները, որոնց հիւանդութիւնը վարակիչ բնաւորութիւն ունէր, հալածուում էին բնակութեան տեղերից և անարգում անատունների պէս: Քրիստոնէութիւնը պէտք է օգնութեան հասնէր և իւր ողորմածութեան ձեռքը կարկաւէր նոցա, սիւսիսով նոցա ցաւերը: Արդ, ո՞վ կարող էր աւելի լաւ ծառայել այդ նպատակին, եթէ ոչ հայոց միայնակեացները, որոնք ուխ-

տել էին ծառայել Աստծուն— ոչ ապաքէն դորանով նոքա կատարած կրիւնէին իւրեանց արած ուխտի ամենաէական և կարևոր կէտերից մէկը, որովհետև Աստուած պահանջում է օգնել մերձաւորին, նորա վիշաք թեթեւացնել, նորա ցաւը մեղմացնել, ասելով. «Յկայք առ իս ամենայն վաստակեալք և ծանրաբեռնեալք և ես հանդուցից զձեզ»: Մեծ հայրապետը ՅՅԾ թիւին Աշտիշատի ժողովով <sup>4)</sup> հրաւէր է կարգում ազգին հոգ տանել

<sup>4)</sup> Աշտիշատի ժողովում կանոնադրւած վեց յօդուածից չորսը՝ երրորդը, չորրորդը, հինգերորդը և վեցերորդը ուղղակի վերաբերում են մեզ հետաքրքրող առարկային: Երրորդ յօդուածի մէջ ասւած է՝ «Յաղագս ուրկաց և բորոտից հրամայեաց շինել բնակութիւն ըստ իւրաքանչիւր գաւառաց ի բարեխառն վայրի, որոց ախտիցն փոխադրական գոլով, հալածէին ի քաղաքաց և գիւղից, և բնակելով չանմարդաբնակ տեղիս, սովամահ կորնչէին, նոյնպէս և վասն հիւանդաց հիւանդանոցս և վասն կաղաց և կուրաց՝ անկեղանոցս և դայսս աչսպիսիս, և չաղագս ամենեցուն սոցա կարգեաց հասս և տուրս ի գիւղից և ի քաղաքս կարգելով ի վերայ նոցա խնամատարս և սպասաւորս, չանձնելով գամենեցուն զհոգան ի սարկաւազ իւր ի Խաղ»:

Չորրորդի մէջ՝— «Յաղագս որբ և այրի աղքատաց հրամայեաց շինել որբանոցս և այրանոցս, և կարգեաց նոցա առանձին հասս, զի անխնամ մնալով նոցին՝ ոմանք ի գողութիւն, այք չայլ և այլ անկարգութիւնս մտաբերէին»:

Հինգերորդի մէջ՝— «Յաղագս հիւրոց և օտարաց հրամայեաց շինել հիւրանոցս չիւրաքանչիւր քաղաքի և ի գիւղ. և կարգեաց ուճիկս ի գիւղից և ի քաղաքաց. զի ոչ գտանելով նոցին հիւրոցն և օտարաց ասպնջականութիւն չուճեքէ, մնացին բացօթեայք և գործէին չարիս»:

Վեցերորդի մէջ՝— «Հրամայեաց շինել գերիս դասս բնակութեան չաղագս կրօնաւորաց, որք ի նմին ժամանակի առ սրբովն Ներսիսիւ դատարկաշրջիկ լինէին, և ոմանք նստէին ի տունս աշխարհականաց ի քաղաքի, և այք բաղումք հանապաղ բնակէին ի գիւղս իբրև ի վանս. որոց աղագաւ կառուց եղբայրանոցս չանապատ տեղիս. իսկ վասն առանձին ճգնողաց՝ միայնանոցս, և առանձնակեցեաց՝ խրճիթս բազումս, կարգեալ չամենեսին ի սոսա կանոնս»:

Աբէլ արքեպիսկոպոս Մխիթարեանցն աչսպէս ներկայացնելով մեզ հետաքրքրող յօդուածների բովանդակութիւնը, վերջում աւելացնում է՝ «Ջաչս ամենայն կանոնադրեալ սրբոյն Ներսիսի ժողովով և

իւր խեղճ անդամներն վերայ և ձեռնարկում է վանքերի հո-  
 վանաւորութեան ներքոյ աղքատանոցներ, որբանոցներ, ուրկա-  
 նոցներ, անկեղանոցներ և հիւրանոցներ շինելու և արքունի-  
 հրովարտակ ձեռք բերելով, քաղաքներից և գիւղերից առան-  
 ձին հաս ու տուրք է նշանակում նոցա օգտին, որով նա մի-  
 կողմից հաստատ եկամուտներով ապահովեցնում է այդ աստ-  
 ուածահաճոյ հիմնարկութիւնները, միւս կողմից ամուր կապե-  
 րով կապում է նոցա վանքերի և վանականների հետ: Հայրա-  
 պետի այդպիսի դործունէութեան և կարգադրութեան հիման  
 վերայ հայոց վանքերից որը դառնում է հիւանդանոց, որն  
 աղքատանոց, որն անկեղանոց, որն որբանոց, որն ուրկանոց և  
 բորտանոց, որն էլ հիւրանոց կամ օտարանոց: Այն կարծիքը,  
 որ Ներսէս Մեծի հիմնած բարեգործական հաստատութիւննե-  
 րից շատերը շինուած են կամ ուղղակի վանքերում և կամ նո-  
 ցա հովանաւորութեան ներքոյ և նոցա հոգատարութիւնը  
 յանձնուած է կրօնաւորներին, թէև մեր եկեղեցական պատմու-  
 թեան մէջ որոշակի կերպով չէ երևում, բայց ճշմարտութեան  
 չափ հաւանականութիւն է գտնում, եթէ մենք ի նկատի առ-  
 նենք, նախ, այն հանդամանքը, որ այդ հիմնարկութիւնները  
 վրայ ընդհանուր վերատեսուչ նշանակուած է կաթողիկոսի նշա-  
 նաւոր խաղ ստրկաւագը, որ կառավարում է նոցա վանական-  
 ների՝ Չաշիտայի, Եփրեմի, Եպիփանի, Գինդ Սղկունու և միւս-  
 ների ձեռքով, երկրորդ, որ յետագայ ժամանակներում մեր  
 վանքերից մի քանիսը սկսում են կոչւել «Ուրկանոց», <sup>5)</sup> ինչ-

հրովարտակաւ արքային կարգեաց ի վերայ կրօնաստանաց տեսուչ և  
 հայր զՉաղիտա աշակերտ սրբոյն Դանիէլի ձերոյն և զՍփրեմ և զԵ-  
 պիփան և զԳինդ Սղկունի. և ըստ նոցին ընտրութեանց եդ առաջ-  
 նորդ յամենայն վանօրայս»: (Տես «Պատմութիւն Ժողովոյ Հայաստա-  
 նեաց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառան-  
 գաւորաց»):

<sup>5)</sup> «Ուրկանոց» կոչուած էր Սիւնեաց Գիւտաց վանքը, որ շին-  
 ւած է Երասխի վրայ և ունէր մեծ հարստութիւն: (Տես «Պատմու-  
 թիւն Սիւնեաց» Ստ. Օրբէլեանի, էջ 128):

պէս Զ դարի Սիւնեաց վանքերից մէկը, «Գոթատուն», <sup>6)</sup>  
 ինչպէս Ժ դարի նոյն Սիւնեաց վանքերից մէկը, «Ասպնջա-  
 կանոց», ինչպէս Ժ դարի Հռոմոսի վանքը <sup>7)</sup>, «Օտարանոց»,  
 ինչպէս Անուոյ ս. Փրկիչը, «Հիւրանոց», ինչպէս նշանաւոր  
 Սանահնի վանքը, «Աղքատանոց—Հիւրանոց», ինչպէս Անաս-  
 տաս կաթողիկոսի շինած Ակուու վանքը և այլն <sup>8)</sup>, և, եր-  
 րորդ, եթէ մենք ի նկատի առնենք Ներսէս Մեծի շինուած  
 վանքերի թւի բազմութիւնը, Ներսիսի կենսագիր Մեսրոպ  
 երէցի, տասերորդ դարի Հեղինակի ասելով, Մեծ հայրապետի  
 հիմնած վանքերի թիւը հասնում էր երկու հազարի, որ դրժ-  
 ւար է երևակայել, որովհետև անկարելի բան է, որ Լուսա-  
 ւորչի ժամանակներից մինչև Ս. Ներսէսը, որ ընդամենը մի  
 80 տարւայ ժամանակամեջոց է, հայոց կրօնաւորների թիւն  
 այնքան բազմացած լինէր, որ այդքան մեծ թւով վանքեր կա-  
 ռուցանելու հարկաւորութիւն զգացէր. անկասկած դոցա մէջ  
 պէտք է հաշւել և այն բոլոր վանքերը, որոնք ծառայում էին  
 վերոյիշեալ նպատակին: Հասարակաց բարեգործական աստուա-  
 ծահաճոյ հաստատութիւնների յատկութիւնը, որ հայոց վան-  
 քերը ստացան Մեծն Ներսիսի ժամանակներից, այնպէս ամուր  
 տրմատ բունեց նոցա մէջ, որ այնուհետև նոքա այլևս չբա-  
 ժանւեցին նորանից: Մինչև անգամ Պապ թաղաւորի այն բռ-  
 նութիւնն ևս, որ նա, Ներսիսի մահից յետոյ, գործ դրեց նոցա  
 վերայ, հրամայելով քանդել այնքան մեծ աշխատանքով շինուած  
 բարեգործական հաստատութիւնները և պատսպարուածներին  
 նոցա միջից դուրս քշել. չբկարողացաւ իսպառ վերջացնել, ար-

<sup>6)</sup> «Գոթատուն» նշանակում է «Ուրկանոց»: Դա, Ստ. Օրբէլեա-  
 նի ասելով, շինուած է եղել Սիւնեաց աշխարհում: (Տես «Պատմու-  
 թիւն Սիւնեաց» էջ 291):

<sup>7)</sup> «Հռոմոսի» այդ վանքը կոչուած է նորա համար, որ նա հիմ-  
 նարկւել է Ժ դարում Ռոմանոս կայսեր հալածանքներից Բիւզանդիո-  
 նից փախած հայ կրօնաւորների ձեռքով: «Տես «Պատմութիւն Ստե-  
 փանոսի Տարօնեցւոյ». էջ 173—174):

<sup>8)</sup> Մի մի Ուրկանոցի, Հիւրանոցի, անկեղանոցի, աղքատանոցի,  
 օտարանոցի և ասպնջականոցի բնաւորութիւն են կրել և Ռշտունեաց  
 Նարեկաց, Դերջանի, Խլածորի և Անձևացեաց հոգեաց վանքերը:

մատախիլ անել վանքերի մէջ խոր արմատ բռնած այդ դեղե-  
ցիկ սովորութիւնն ու յատկութիւնը: Նոքա միշտ շարունակե-  
ցին, իւրեանց նիւթական կարողութեան և ժամանակի ու մեր  
երկրի քաղաքական հանգամանքների համեմատ, շատ թէ  
քիչ ծառայել այդի այդ կարիքներին: Ապացոյց դորան՝ վերո-  
լիշեալ վանքերը և զլխաւորապէս Անույ ս. Փրկիչ վանքի  
օտարանոցը և Սանահնի հիւրանոցը, որոնց մասին յատկապէս  
լիշատակութիւն է լինում մեր պատմութեան մէջ. ապացոյց  
դորան և մեր այժմեայ վանքերը, որոնք իբրև արժանաւոր ժա-  
ռանդ հին վանքերի, մինչև վերջին ժամանակները ևս ծա-  
ռայում էին իբրև օտարանոց ու հիւրանոց ճանապարհորդնե-  
րի համար և իբրև ապաստանարան խեղճերի ու չքաւորների  
համար. ապացոյց դորան, վերջապէս, և Սեանի, Լիւմ ու Կր-  
տուց անապատների, ս. Կարապետի, Տաթևի, Երուսաղէմի ս.  
Յակոբի և ս. Իջմիածնի վանքերը, որոնց խցերում ու հիւրա-  
տներում մինչև ցայսօր ևս ապաստանարան են դտնում ու ի-  
տաւորները, ճանապարհորդները, օտարները, որոնց սեղանից  
կերակրում են կարօտեալները, չքաւորները, տնանկները և  
անկեալները:

Ս. Թարգմանչաց շրջանում վանքերի այդ երկու նշանա-  
ւոր յատկութեան՝ ճգնաւորութեան և բարեգործութեան վերայ  
աւելանում է և մի երրորդ ոչ պակաս կարևոր յատկութիւն՝  
դպրոցականութիւն և ուսումնականութիւն: Թէև մեր գրակա-  
նութեան պատմութեան մէջ տեղ-տեղ լիշատակում են դա-  
նաղան դպրոցների անուններ, որոնք հիմնւած են եղել քա-  
ղաքներում և կրել են քաղաքների, գաւառների և կամ նա-  
հանգների անուններ, ինչպէս, օրինակի համար, Աաղաբշա-  
պատի, Փայտակարանի, Գողթանի, Սիւնեաց, Ղաղաղոմքի և  
այլն դպրոցները, բայց դոցա գոյութիւնը մասնաւոր երևոյթ  
կարելի է համարել: Առ հասարակ թարգմանչաց դարում, որ  
համարում է հայոց դպրոցների ամենաճաղկած ժամանակը, և  
նամանաւանդ այդ դարի վերջից հայոց դպրոցները՝ կամաց-  
կամաց քաղաքներից տեղափոխւում են վանքերը և դորա հետ  
միասին բոլոր հայ ուսումնականութիւնն էլ կենդրոնանում է

նոցա մէջ: Գորան նպաստում է նամանաւանդ Հայաստանի  
այդ ժամանակների դժբաղդ քաղաքական դրութիւնը, որ շատ  
գժւար և, կարելի է ասել, անհնարին դարձնելով քաղաքնե-  
րում դպրոցների գոյութիւնը և ուսումնական պարապմունքը,  
որոնք իւրեանց յառաջագիմութեան ու զարգացման համար  
պահանջում են ներքին և արտաքին խաղաղութիւն, ստի-  
պում է հայոց մտաւոր զարգացման դեկալարներին փախչել և  
դպրոցների հետ միասին կենդրոնանալ վանքերում իբրև ամե-  
նապահով տեղերում. նամանաւանդ որ մեր հին դպրոցներն  
էլ դուտ կրօնական ուղղութիւն ունէին, կառավարւում էին  
կրօնաւորների ձեռքով և բոլոր հայ ուսումնականութիւնն էլ  
հոգեւորականների սեպհականութիւնն էր: Մեր բազմաթիւ վան-  
քերից, որոնք իւրեանց դպրոցներով մեծ դեր են խաղացել հա-  
յոց մտաւոր զարգացման և յառաջխաղացութեան գործում,  
նամանաւանդ լիշում են՝ ս. Իջմիածինը, Գլակայ վանքը,  
Արաղածոտնի ս. Աստուածածինը, Ղիրակայ դպրեվանքը, Ար-  
շարունեաց Աարդիկ-Հայրը, Տաթևի վարդապետարանը, Ռշտու-  
նեաց Նարեկայ վանքը, Արշարունեաց Կարջաձորը, Ղիրակայ  
Հռոմոսի վանքը, Գուգարաց Սանահինը և Հաղբատը, Սեա-  
նայ վանքը, Թեղենեաց և Հաւուց Թառայ վանքերը, և Սաղ-  
մոսավանքը և միւսները <sup>9)</sup>:

Հայոց վանքերն աստիճանաբար սեպհականացնելով իւ-  
րեանց այդ երեք յատկութիւնը, հետզհետէ գրաւում են ժո-

<sup>9)</sup> Ս. Իջմիածինն իբրև ուսումնականութեան և կրթական կենդ-  
րոն՝ յայտնի է եղել նամանաւանդ հինգերորդ դարի վերջին քառոր-  
դում, երբ Վահան Մամիկոնեանի հրամանով վերատեսուչ կամ վա-  
նահայր է նշանակւել «Կաթողիկէին» նշանաւոր Ղազար Փարպե-  
ցին: Գլակայ կամ ս. Կարապետի կամ Իննակեան վանքը ծաղկել է  
վեցերորդ դարում: Այդ տեղի միաբաններից էին տօմարազէտ Աթա-  
նասը և պատմագիր Յովհաննէս Մամիկոնեանը:

Արաղածոտնի ս. Աստուածածինը յայտնի էր նշանաւոր Թէոդո-  
րոս Քաթենաւորի վանահայրութեան ժամանակ: Քաթենաւորի աշա-  
կերտներից էին անձնանէր Սահակ Չորափորեցին և իմաստասէր Յով-  
հան Օձնեցին:

Ղիրակայ Դպրեվանքը ծաղկած է եղել ուսումնականութեամբ

դովորել համակրութիւնն ու սէրը և դառնում են հայ կեանքի անհրաժեշտ պահանջներին ու պիտոյքներին մէկը: Ան ուրիշ պէս էլ լինել չէր կարող: Նոքա բաւականութիւն էին տալիս ժողովրդի բոլոր զլխատր կարիքներին. նոքա ապաստանա- յան էին աշխարհից հեռացողների, կատարելութեան հասնելու ցանկութիւն ունեցողների համար. նոցա միաբաններն աղօ- թող էին ժողովրդի հոգու փրկութեան և հայրենիքի աղա- եօթներորդ դարում, մեր շարականները ընտրող նշանաւոր Բարսեղ Խօնի վանահայրութեան օրով:

Արշարունեաց Վարդիկ-Նայրը յայտնի է եղել եօթներորդ դա- րում, երբ հիմնել է նորան և սկսել է խնամք տանել նորա վերայ նշանաւոր Մաթուսաղա եպիսկոպոսը, որ Սիւնեաց «Քերթող» և «Թարգմանիչ» կոչւած Պետրոս եպիսկոպոսի աշակերտն էր:

Տաթևում ուսումը սկսել է ծաղկել այն օրին, երբ նորա մէջ հինգերորդ դարում Սիւնեաց Անանիա եպիսկոպոսն առաջին անգամ գպրոց է հաստատել և ս. Թարգմանիչների աշակերտներից Բենեա- մին անունով մէկին ուսուցիչ է կարգել: Սիւնեաց վարդապետարանը, ինչպէս չետազայ ժամանակներում սկսել է կոչւել այդ գպրոցը և գորա հետ միասին և վանքը, հետզհետեւ այնքան զարգացել է, որ հայաստանի ուսումնականութեան գլխաւոր կենդրոններից մէկն է դարձել: Այդ վանքից էր վերոյիշեալ Պետրոս Քերթող եպիսկոպոսը, այգտեղից էր մեր եկեղեցական երաժշտութեան ձայներն որոշող նշանաւոր եպիսկոպոսը Ստեփաննոս եպիսկոպոսը, որ մեծացրեց վանքը և գրատան հիմքը գրեց, այգտեղից էր, վերջապէս, և պատմադիր Ստ. Օրբէլեանը, և այլն և այլն:

Նարեկաց վանքը ծաղկել է Ժ դարում: Այգտեղից էին Անանիա Նարեկացին, Գրիգոր Նարեկացին և Ուխտանէս եպիսկոպոսը:

Արշարունեաց Կամրջաձորից էին Ժ դարի երաժիշտ և զիտնա- կան տօմարագէտ Սամուէլ Կամրջաձորեցին և ԺԱ դարի ատենախօս ծերունի Գէորգ Ուռնեցին:

Յոռոմոսը, Սանահինը, Հաղբատը, Սևանը և Սաղմոսավանքը նշանաւոր են եղել իւրեանց գրատներով: Սանահինց էր զիտնական Անանիա Սանահնեցին, Սևանից էր Մաշտոց եպիսկոպոսը, որ Յով- հաննէս պատմաբան կաթողիկոսի ուսուցիչն էր և, վերջապէս, հաղ- բատից էին յայտնի Գրիգոր Տուտէորդին և Յովհաննէս «Սարկաւագ» կոչւած վարդապետը, որ թէև այդ վանքի միաբաններից չէր, բայց երկար ժամանակ բնակւել էր այգտեղ և օգտուել գորա հարուստ մա- տենադարանից:

տութեան համար: Հասակաւորները նոցա մէջ գտնում էին հո- գեկան մխիթարութիւն, մանուկ սերունդը դաստիարակում էր նոցա մէջ, ուսումնականները նոցա մէջ և՛ մատենադարան և՛ խաղաղ անկիւն էին գտնում իւրեանց զիտական սլարապմունքի համար, աղբի խեղճ անդամները բնակարան, կերակուր ու հո- դատարութիւն էին գտնում նոցա մէջ: Ժողովուրդն իւր դէպի վանքերն ունեցած սէրն ու համակրութիւնը ցոյց է տալիս, անդադար հոգսով նոցա վերայ, զարբրի ընթացքում շարու- նակ հին վանքերը վերանորոգում են, նորերը հիմնարկում: Հարուստը նւիրում է նոցա օգտին իւր արծաթը, իշխանն ու թագաւորն իւր կալւածքը, ուսումնականը, զիտնականը իւր մտքի հանձարը, աղքատն իւր ձեռքի աշխատանքը, մի խօս- քով, կարելի է ասել, որ մեր նախնեաց բոլոր բարեգործու- թիւնը կենդրոնանում է վանքերի վերայ: Արջեցէք Հայաստա- նի որ նահանջը, որ գաւառը կամենաք, մտէք անդնդախոր ձորերը, բարձրացէք դժուարակոխ լեռները, այցելէք լեռնաշղթաների կամ լեռնադօտիների լանջերը, պտտեցէք զեղեցկանիստ հովիտները, փրփրաղէզ դետերի, լճերի, ծովակների ափերը, մտէք առա- սլարները, կուտական անտառները, ծովակների մէջ գտըն- ւած կղզեակները, ամեն տեղ, ձեր աչքը կը հանդիպի սրա- որը կլսաշէն, որն էլ աւերւած ու քանդւած: Մտնեցէք, քըն- նեցէք նոցա որմերը, զերբուկները և դուք կը տեսնէք նոցա վերայ բազմաթիւ արձանադրութիւններ, որոնք բոլորն ևս վկայում են ժողովրդի առատաձեռնութեան մասին: Ահա այս ինչ թագաւորը, որ նւիրում է իւր կամ իւր ծնողների կառու- ցած վանքին զիւղեր, աւաններ. ահա այս ինչ բարեպաշտ տի- կիւնը, որ նւիրում է իւր այգին, ջրաղացը. ահա այս ինչ իշ- ւածքները և այլն և այլն: Գոքա բոլորը ժողովրդի դէպի այդ օշտաւէտ հաստատութիւններն ունեցած երախտագիտութեան արդիւնքն են, որոնցից մինչև ցայսօր դեռ օգտուում են, թէև ոչ այն քանակութեամբ, մեր շէն վանքերը, որոնց եկա- մուտներով պահւում են մեր այժմուայ զպրոցներից շատերը:

Վանքերի շինութեան գործում Ներսէս Մեծից յատուցելու  
 խաւոր տեղն են բռնում Բաղրատունի, Արծրունի և Սիւնեաց  
 թագաւորները, որոնց մրցողութիւնը թէև քաղաքական տե-  
 սակէտից մեծ վնաս է բերում ընդհանուր հայրենիքի շահե-  
 րին, բայց ներքին մտաւոր զարգացման վերաբերմամբ շատ  
 նպաստաւոր է լինում, որովհետև նոցանից իւրաքանչիւրը  
 մրցողութեան բարի նախանձով լցւած, աշխատում է իւր երկ-  
 րի հնացած վանքերը վերանորոգել, բազմաթիւ նոր վանքեր  
 հիմնարկել և առատ նւէրներով պայծառացնել նոցա: Բաղրա-  
 տունիների թէ նիւթական և թէ բարոյական հովանաւորու-  
 թիւնը վայելում են Հաղբատի, Սանահնի, Հուռոմոսի, Բաղա-  
 րանի, Տիկորի, Մրէնի և Երազաւորսի վանքերը: Բաղրա-  
 տունիներին նոցա այդ աստուածահաճոյ գործունէութեան մէջ  
 օգնում են Վահրամ Պահլաւունի, Գրիգոր Մաղիստրոս, Սմբատ  
 Մաղիստրոս և Վեստ-Սարգիս իշխանները, որոնցից առաջինը  
 շինում է Մարմաշինու վանքը, երկրորդը — Հաւուց-Թառայ,  
 Կեջառիսի, Բջնոյ վանքերը, երրորդը — Բագնայրի վանքը և  
 չորրորդը — Խճկոնից վանքերը: Բաղրատունիներին այդ գոր-  
 ծում օգնում են ժ գարում և Ռոմանոս կայսեր կրօնական հա-  
 լածանքներից Հայաստան փախած հայ կրօնաւորները, որոնք  
 հիմնարկում են Հուռոմոսի վանքը, Երշարունեաց Կամրջաձորի  
 վանքը, և ս. Գրիգորը Նխուրեանի ամում:

Արծրունեաց թագաւորների նիւթական և բարոյական  
 խնամքը վայելում են՝ Ախթամարը, Նարեկայ ս. ուխտը և առ-  
 հասարակ բոլոր Վասպուրականի վանքերը և, վերջապէս, Սիւ-  
 նեաց թագաւորները հովանաւորում են Մաքենեաց ս. Լուսա-  
 ւորչին, Թանահատի, Խոտակերից, Կոթայ, Սևանայ և առ-  
 հասարակ Գեղարքունեաց, Վալոց-ձորի և Երնջակայ վանքե-  
 րին: Վանքերի շինութեան գործում Բաղրատունեաց, Արծրու-  
 նեաց և Սիւնեաց թագաւորներից ու իշխաններից ոչ պակաս  
 ջանք և աշխատանք են ցոյց տալիս և Ռուբինեանց իշխան-  
 ներն ու թագաւորները. նոքա շինում են Կատտաղօնը, <sup>1)</sup>

<sup>1)</sup> Կատտաղօնի վանքը գտնւում էր Վահկաչ-բերդի մօտ: Սյս  
 վանքում են թաղւել Ռուբինեանց առաջին իշխան Ռուբէնը և նո-

Դրագարկը, <sup>11)</sup> Արքակաղինը, <sup>12)</sup> Ակները, <sup>13)</sup> հովանաւորում  
 են Սեաւ լեռան վանքերին՝ <sup>14)</sup> Արեղի, Բարսեղեանց, Յեսուանց  
 անապատներին և միւսներին, որոնք կործանեցին 1114 թւի  
 երկրաշարժից: Ռուբինեանց այդ ասպարիզում օգնում էին Լամբ-  
 րօնի իշխանները, որոնք շինեցին նշանաւոր Սկիւռայ վան-  
 քը <sup>15)</sup>, Պահլաւունի՝ Գող Վասիլը, որ շինեց Քեսուեի կարմիր  
 վանքը <sup>16)</sup> և միւսները, որոնք ամբողջ Կիլիկիան, Սեաւ-լեռ-

րա որդին Կոստանդինը. այս վանքումն է կատարել իւր երկարամեայ  
 ճգնութեան հանդէսը Մարկոս ճգնաւորը, որ Մատթէոս Ուռհաչեցու  
 ասելով, մարգարէական շնորհք ունէր: (Տես «Պատմութիւն Ուռհա-  
 չեցուց» էջ 373—374.)

<sup>11)</sup> Դրագարկը գտնւում էր Անարգաբաշի մօտ և համարում էր  
 Ռուբինեանց հարստութեան գերեզմանոցը: Դա սկսաւ ծաղկել ԺՎ  
 դարում, երբ Վասպուրականից եկաւ ու վանահայրութեան պաշտօնով  
 հաստատեց այդտեղ Գէորգ «Մեգրիկ» կոչւած վարդապետը, որին  
 յաջորդեց նորա ընկեր նշանաւոր Կուրոսը:

<sup>12)</sup> Արքակաղինը շինւած էր Սսի մօտ. նա սկսաւ ծաղկել ԺԳ  
 դարում: Այդտեղ նստաւ Յովհաննէս Զ «Մեծաբարոյ» կոչւած կա-  
 թողիկոսի հակաթոռ Դաւիթը, որ Լեոն Բ-ի բարեկամն էր:

<sup>13)</sup> Ակները հիմնարկել էր Լեոն Բ.-ը Սսի մօտ, Երբ 1219 թւին  
 մեռաւ Լեոնը, նորա մարմինը թաղեցին Սսում, իսկ սիրտն Ակներ  
 վանքում:

<sup>14)</sup> «Սեաւ լեռան» կամ «Սեաւ լեռան վանքեր» կոչւում էին մի  
 խումբ վանքեր, որոնք գտնւում էին Ամանոս կամ Սեաւ լեռան լեռ-  
 նաշղթայի դէպի Մարաշ քաղաքը տարածւող ճիւղերի ստորոտնե-  
 րում: Այդ վանքերից նշանաւոր էին՝ Արեղի, Բարսեղեանց և Յեսու-  
 անց անապատները: Արեղի անապատում մի ժամանակ բնակութիւն  
 հաստատեց Գրիգոր Բ. «Վկաչասէր» կոչւած կաթողիկոսը: Յեսուանց  
 անապատից էր Գրիգոր Մաշկեօրը, որ գոհ գնաց 1114 թւի երկրա-  
 շարժին:

<sup>15)</sup> Կարմիր վանքը հռոմկալայից յետոյ Կիլիկիոյ վանքերից ամե-  
 նանշանաւորն էր. նա գտնւում էր Մարաշից ոչ հեռու շինւած Քե-  
 սուէն բերդի մօտ, որ յայտնի Գող Վասիլ իշխանի ուստանն էր: Այդ  
 վանքից էր «Տիրացու» կամ «Մանուկ» կոչւած վարդապետը, որի  
 աշակերտներն էին Գրիգոր Գ. Պահլաւունին, Ներսէս Զնորհալիւ,  
 Սարգիս Զնորհալիւ և Իգնատիոսը:

<sup>16)</sup> Սկիւռայ վանքը շինւած էր Լամբրօնի մօտ: Այդտեղից էր  
 Ներսէս Լամբրօնացին, որ յետոյ նշանակեց Տարսուսի առաջնորդ:

ները և Միլրատացուց դաշտավայրը լցրին վանքերով, որոնք մեր եկեղեցական պատմութեան մէջ յայտնի են մէկ անունով՝ «Արևմտեան վանքեր», հակառակ Մեծ-Հայոց վանքերին, որ կոչուում են «Արևելեան վանքեր»: Վերջինը հայ իշխաններից որ վանքեր է շինում, նորոգում ու հովանաւորում է նոցա, լինում է Օրբէլեան նշանաւոր Զաքարէ սպասալարը<sup>17)</sup>, որ իւր եղբայր Իւանէ Աթաբէկի հետ միասին շատ հոգրացել և մեծ իշխանութեան էին հասել վրացոց թաղաւորութեան մէջ: Թամար թագուհին իւր նախորդների՝ Գաւիթ ու Գեորգի թագաւորների պատերազմները շարունակելով Սելջուկեան Մէլիք-Ղահի հաստատած պետութեան հետ, խլել էր նորանից ամբողջ հիւսիս-արևելեան Հայաստանը և յանձնել էր նորան կառավարելու իւր սիրելի Զաքարէ և Իվանէ իշխաններին, որոնց ձեռքով էր իսկապէս կատարել թագուհին իւր այդ մեծ յաղթութիւնը: Զաքարէի շինած վանքերից նշանաւոր է Հառիճը. նորա հովանաւորութիւնը վայելում էին Հաղարծինը, Հաղպատը, Սանահինը և նամանաւանդ Գետկայ կամ Գօշ Մխիթարի վանքը, որ շինել էր նրա բարեկամ երևելի Մխիթար Գօշը:

## Ե

Վերոյիշեալ երեք գլխաւոր յատկութիւնների հետ միասին Հայոց վանքերն ունենում են և մի ուրիշ չորրորդ յատկութիւն, որ նոքա իւրեանց հիմնարկութեան օրից սկսած անադարտ կերպով պահում են մինչև վերջը: Նոքա միշտ լինում են Հայաստանեայց սուրբ եկեղեցու դաւանութեան մաքրութեան պաշտպան և Հայկական կրօնական ծէսերի և քրիստոնէական աւանդութիւնների գլխաւոր պահապան: Հայաստանի խառնակ քաղաքական հանդամանքների ժամանակ, երբ ամեն ինչ տակն ու վերայ է լինում և քար քարի վերայ չէ մնում, երբ օտարակրօն ազգերի արշաւանքներից Հայոց կրօնը հալածական է դառնում, վանքերի մէջ է ապաստան դառնում քա-

<sup>17)</sup> Զաքարէ սպասալարի դաստիարակն ու ուսուցիչն էր Աեչառիս վանքի առաջնորդ Գրիգոր «Մոնոնիկ» կոչւած վարդապետը:

ղաքներից և մեծ կենդրոններից հալածւած Հոյեւորականութիւնը, նոցա մէջ է ամբարւում հայ մտքի արդիւնաբերութեան դարաւոր գանձը՝ հազազիւտ թանկագին մազաղաթնիւրը և ձեռագիր մատեանները, հայկական-քրիստոնէական նւիրական սրբութիւնները՝ սրբերի մատուցները, հնագոյն պատկերները, թանկագին եկեղեցական սպասները, զոհաստների և միւս եկեղեցական հնութիւնները: Եւ այդ նորա համար, որ նոքա մեծաւ մասամբ քաղաքներից հեռու տեղերում՝ անապատներում, ձորերում, անտառներում և դժւարակիտ լեռների վերայ կառուցւած լինելով, առ հասարակ խուսափում են թշնամիների աչքերից և աւելի սակաւ են ենթարկւում թշնամիների աւերմունքին և կողոպտումներին, քան թէ եկեղեցիները, որ ընչաքաղց բարբարոսների աւերածութեան և կողոպտման սուաջին դոհն են լինում: Բնական է, որ այդպիսի ձախող և դժւար հանդամանքներում հայ ժողովուրդը չըպէտք է կարողանար ազատ կերպով կատարել և իւր աստուածապաշտութիւնը հրապարակում և աչքի ընկող տեղերում — քաղաքների և գիւղերի եկեղեցիներում, չըպէտք է կարողանար հանդիսաւոր թափօրներ կազմել, դանդակ զարկել, քշոց հնչեցնել, գետերում ջուր օրհնել, հանդիսաւոր կերպով կնունք տուն բերել, մեռեալ յուղարկաւորել և այլն և այլն: Գորա հետեւանքն էլ ի հարկէ պէտք է լինէր այն, որ կամաց-կամաց հայ եկեղեցու ծէսերից շատերը զեղծւէին, շատերը կրճատ կատարէին, շատերն էլ իսպառ մոռացութեան մատնէին: Այն ինչ վանքերն օղտւելով իւրեանց մենացած դրութիւնից, հեռու թշնամիների աչքից և ամեն տեսակ չար պատահարներից, արձակ-համարձակ շարունակում են կատարել իւրեանց պարտականութիւնը, անադարտ կերպով ժամասացութիւն անելով, բոլոր ճիսակատարութիւնները ճշտիւ, անխափան և անխախտ կերպով կատարելով և չըթողնելով, որ հայ եկեղեցու հնաւանդ նւիրական սովորութիւնները կորչեն կամ եղծւեն: Հայ կրօնական երաժշտութիւնը, որ աշխարհական երաժշտութեան նման վերոյիշեալ ձախող հանդամանքներից շուտով կորցնում է իւր մաքրութիւնը և հայկական բնաւորութիւնը, ենթարկւում է օտարների

ազգեցութեան և հայ քաղցրաձայն մեղեդիներն ու հոգեգմայլ շարականները, տաղերը, զանձերը դառնում են տաճկական «մուղամներ» և պարսկական «շիքեսատաներ», համեմատաբար աւելի մաքուր և անաղարտ պահում են խուլ տեղերի վանքերում մինչև վերջին ժամանակները, այնպէս որ հնարաւոր է լինում նոցա միջոցով վերականգնել մեր եղանակների անցած-գնացածից շատ բան:

Հայոց վանքերը պաշտպանել են հայ եկեղեցին և նորա դաւանութեան մաքրութիւնն ոչ միայն ալլակրօններից՝ հեթանոսներից, մահմեդականների բռնութիւններից, այլ նոյն իսկ քրիստոնէական եկեղեցու խորդ որդիներից՝ դանաղան հերձաճողներից և ազանդաւորներից: Արշտ է, Հայաստանը, բացի թոնդրակեցուց յայտնի ազանդից, ինքնուրոյն ազանդներ չէ ստեղծել, բայց անմասն չէ եղել, դերձ չէ մնացել օտար երկրներում սկիզբն առած բազմաթիւ հերետիկոսութիւններից: Հայաստան մասը են և՛ Սրիտականները և՛ Նեստորականները և՛ Պոզիկեանները և՛ Այօզինարեանները և՛ Եւնոմեանները և՛ Եւտիքեանները և՛ Վրիտիտիեան հերետիկոսները և Յուլիանոս Արիկաւնացու հետեւորդները, բայց դոցանից ոչ մէկն էլ չէ կարողացել խոր արմատ բռնել, տեւողութիւն ունենալ: Հայոց եկեղեցու հայրերը կատարի կուր են մղել նոցա դէմ, իսկ Հայոց վանքերը իւրեանց զիտնական միաբաններով թե ու թիկունք են եղել, եռանգուն աջակցութիւն են ցոյց տւել նոցա՝ այդ ասպարիզում: Վանքերի անշուք խցերում են խմբազրւել այն բազմաթիւ ներբողները, դրւաւները հայ եկեղեցու դաւանութեան, որոնցով լի են մեր բազմահատոր եկեղեցական մատեանները, նոցա հովանաւորութեան ներքոյ են շարադրւել այն բազմաթիւ ճառերն «ընդդէմ երևութականաց», «ընդդէմ Պաւլիկեանց», «ընդդէմ Քաղկեդոնականաց», որոնցով ղեղուն ու թաթախուն են մեր հաստափոր Առաքնաւորները, Վարդան-գրքերը: Բայց ոչ մի դէպքում Հայոց վանքերի՝ հայ դաւանութեան ու նորա ծէսերի պաշտպան լինելն այնպէս բնորոշ կերպով յայտնի չէ եղել, ինչպէս հայ եկեղեցու օտար եկեղեցիների ձգտումների դէմ մաքառելու ժամանակները: Ով չէ լիշում հայ վանքերի այն բազմաթիւ վանականներին, որոնք Քաղկեդոնականների դէմ զրաժ իւրեանց իմաստուն և ողւորւած ճառերով ջրեցին գոռոզ Յոյների Հայոց եկեղեցու վերայ արած զրպարտութիւնները և կարկեցին նոցա բերանը, ով չէ լիշում և Հայոց վարդապետների ղեկավարութեամբ դումարւած Հայոց ազգային ժողովների այն բազմաթիւ շարքը, որոնք արձակահամարձակ հերքեցին իշխող Բիւզանդիոնի անարդար պահանջը և պահպանեցին հայ եկեղեցու անկախութիւնը նորա ոտնձգութիւններից: Հայոց վանքերը զինւել ու յաջողութեամբ մաքառել են և Հռովմէական եկեղեցու դէմ, Հռովմէական եկեղեցու, որ հետեւելով Բիւզանդիոնի օրինակին, կամեցել է իւր պապականութիւնը մացնել Հայոց մէջ: Ահա Եսայի Նզեցին, որ իւր երեքհարիւրի չափ աշակերտներով ապաստանած Բարձր-Հայքի Գերջան դաւառի խաճոր վանքում, թէ խօսքով և թէ զրջով կատարի կուր է մղում «Ունիթոսները» դէմ. ահա Յովհան Որոտնեցին, որ իւր աշակերտներով հաստատուելով Սիւնեաց նահանգի Երնջակ դաւառի Այրաիւնեաց վանքում, ուսումնասիրում է «միաբանատէրների» յարուցած վիճելի խնդիրները և նոցա դէնքով նոցա յաղթահարում է. ահա և նշանաւոր Գրիգոր Տաթևացին, որ իւր համար լենման կէտ առնելով Սիւնեաց հռչակաւոր Տաթևը, կատարեալ պատիժ ու պատուհաս է դառնում «աղթարմաների» զլխին. ահա, վերջապէս, և այդ վարդապետների բազմաթիւ աշակերտները, որոնք հետեւելով իւրեանց ուսուցիչների օրինակին և խրատին, շարունակում են նոցա սկսած գործը, կասեցնում են Բարթոլոմէոս Բոնոնիացու և նորա աշակերտների համարձակ քայլերը և ազատում են հայ եկեղեցին, այդ դառնազղեստ գայլերի ձիրաններից:

Հայոց վանքերը իւրեանց այս չորս զլխաւոր յատկութիւնով մերթ պակաս, մերթ աւել ծաղկելով՝ յարատւում են ժ.Պ. դարի վերջերը և ժ.Ն. դարի սկզբները, երբ նոքա Մամեիկեանների և Ղանկթամուրի արշաւանքներից, Ալ-Կոյնլու և Կարա-Կոյնլու թուրքմէն և քուրդ ցեղերի անբաժութիւններից, Օսմանցուց և Պարսից պատերազմների սրածութիւններից սկսում են իսպառ աւերւել ու քանդւել, կորցնելով իւրեանց նախկին

Քերի այն բազմաթիւ վանականներին, որոնք Քաղկեդոնականների դէմ զրաժ իւրեանց իմաստուն և ողւորւած ճառերով ջրեցին գոռոզ Յոյների Հայոց եկեղեցու վերայ արած զրպարտութիւնները և կարկեցին նոցա բերանը, ով չէ լիշում և Հայոց վարդապետների ղեկավարութեամբ դումարւած Հայոց ազգային ժողովների այն բազմաթիւ շարքը, որոնք արձակահամարձակ հերքեցին իշխող Բիւզանդիոնի անարդար պահանջը և պահպանեցին հայ եկեղեցու անկախութիւնը նորա ոտնձգութիւններից: Հայոց վանքերը զինւել ու յաջողութեամբ մաքառել են և Հռովմէական եկեղեցու դէմ, Հռովմէական եկեղեցու, որ հետեւելով Բիւզանդիոնի օրինակին, կամեցել է իւր պապականութիւնը մացնել Հայոց մէջ: Ահա Եսայի Նզեցին, որ իւր երեքհարիւրի չափ աշակերտներով ապաստանած Բարձր-Հայքի Գերջան դաւառի խաճոր վանքում, թէ խօսքով և թէ զրջով կատարի կուր է մղում «Ունիթոսները» դէմ. ահա Յովհան Որոտնեցին, որ իւր աշակերտներով հաստատուելով Սիւնեաց նահանգի Երնջակ դաւառի Այրաիւնեաց վանքում, ուսումնասիրում է «միաբանատէրների» յարուցած վիճելի խնդիրները և նոցա դէնքով նոցա յաղթահարում է. ահա և նշանաւոր Գրիգոր Տաթևացին, որ իւր համար լենման կէտ առնելով Սիւնեաց հռչակաւոր Տաթևը, կատարեալ պատիժ ու պատուհաս է դառնում «աղթարմաների» զլխին. ահա, վերջապէս, և այդ վարդապետների բազմաթիւ աշակերտները, որոնք հետեւելով իւրեանց ուսուցիչների օրինակին և խրատին, շարունակում են նոցա սկսած գործը, կասեցնում են Բարթոլոմէոս Բոնոնիացու և նորա աշակերտների համարձակ քայլերը և ազատում են հայ եկեղեցին, այդ դառնազղեստ գայլերի ձիրաններից:

կազմակերպութիւնը և վանական կարգ ու կանոնը: Այլ այնուհետև նոքա չեն կարողանում կատարել իւրեանց գլխաւոր պարտականութիւնները՝ դիտութիւն և լոյս տարածելու ժողովրդի մէջ, ճգնութեան և կրօնական մաքուր կեանքի օրինակ լինելու և խնամելու ազգի խեղճ անդամներին, որովհետև նոքա կորցրած լինելով իւրեանց թէ բարոյական և թէ նիւթական հարստութիւնը, հետզհետէ սկսում են կազմալուծւել: Ի՞նչու՞ պէտք է նոքա լոյս տարածելին ժողովրդի մէջ, քանի որ նոցա մէջ հաստատւած դպրոցները քանդել ու աշակերտները ցրել էին. ի՞նչու՞ պէտք է նոքա դիտութեան կենդրոն լինելին, քանի որ նոցա բազմաթիւ միաբանները ցրել և մատենադարաններից շատերը կողոպտուել, այրել ոչնչացել էին: Ի՞նչու՞ նոքա պէտք է խնամելին ազգի խեղճ անդամներին, քանի որ նոքա զրկւած լինելով իւրեանց կալւածներից ու ժողովրդի առատ նւէրներից, ինքեանք ևս աւուր պարէնի կարօտ էին մնացել: Հայաստանի այդ ժամանակաւ քաղաքական դժւար հանգամանքները նամանաւանդ ծանր ազդեցութիւն են ունենում «Անապատ» կոչւած վանքերի վերայ. նոքա միանգամայն կազմալուծւում են և անապատական—ճգնաւորական կեանքը համարեա՞ թէ վերանում է Հայաստանից: Հայ անապատականների մնացած սակաւաթիւ անդամները ևս այնքան խեղճացած ու ջլատւած են լինում, որ այլ ևս չեն կարողանում կենդրոնանալ մի որևիցէ վանքում, այլ թողնում, հեռանում են երկրի խուլ անկիւնները և այդտեղ անշուք այրերում միայն ապաստան է գտնում աշխարհիս բռնութեան երեսից հալածւած և փախած հայ ճգնաւորական կեանքի այդ վերջին մնացորդը: Վանքերի ընկնելու և վանական կեանքի եղծւելու գործը այսպէս շարունակւում է մինչև ՓՁ դարի վերջերը, երբ նոքա նորից սկսում են վերակենդանանալ իւրեանց կիսակործան և աւերակ դրութիւնից, երբ վանական կեանքը նորից սկսում է վերանորոգւել և երբ հայ անապատականութիւնը վերստին կեանք ու կենդանութիւն է սկսում ստանալ: Այդ յեղափոխութիւնը կատարւում է երկու կրօնաւորների՝ Սարգիս «Պարոնտէր» կոչւած եպիսկոպոսի և Կիրակոս վարդապետի ձեռքով:

որոնք միմեանցից շատ հեռու ապրելով, թէև մինչև այդ ժամանակ ամենևին ծանօթ չեն լինում միմեանց, բայց միաժամանակ յղանում են վանական կեանքի վերանորոգութեան գործի միտքը:

Սարգիս եպիսկոպոսը Ալարատեան նահանգի Արագածոտն գաւառի Յարենի զիւղիցն էր. նա մանկութիւնից սիրելով կրօնաւորական կեանքը, չափահաս լինելուն պէս, իրան նւիրում է հողւոր կոչման, միաբան է դառնում Սաղմոսավանքի<sup>18)</sup> ուխտին և հետզհետէ առաջ գնալով, ընդունում է վարդապետական և եպիսկոպոսական աստիճանները և կարգւում է նոյն վանքի առաջնորդ կամ վանահայր: Ահա հէնց այդ ժամանակները մի օր վանք է գալիս մի զիւղացի և պատմում է միաբաններին, թէ ինքը որսի զնացած լինելով Արագած սարը, պատահել է մի ճգնաւորի, որ նստած է եղել քարերի մէջ, զլիսին վեղար և վերան փիլոն ձգած. նա մօտեցել է, որ տեսնէ, թէ նա ո՞վ է կամ ի՞նչ է և տեսել է, որ դա իրաւի մի ճգնաւոր վարդապետ է և մեռած է, բայց մարմինը միանգամայն անապական է: Սարգիս եպիսկոպոսը լսելով այդ պատմութիւնը, շատ հետաքրքրւում է և կամենում է ինքն էլ տեսնել անապատական մեռածին և հաւաստիանալ զիւղացու պատմածի ճշմարտութեան: Նա զիւղացուց հարց ու փորձ անելով, իմանում է հանդուցեալի տեղը և գնալու ճանապարհը, բարձրանում է սարը և երեք օր այստեղ-այնտեղ շրջելուց և որոնելուց յետոյ, վերջապէս, գտնում է նորան: Նա իւր աչքով տեսնելով այդ հրաշքը, սկսում է արտասուելով համբուրել ճգնաւորի ձեռքերն ու ոտքերը և նոյն իսկ զգետնելով, նոյն իսկ տեղում քարերի<sup>19)</sup> մէջ ամփոփելով նորան, վերադառնում է վանք: Հէնց այդ օրից Սարգիս եպիսկոպոսը բոլորովին փոխւում է. նա տեսնում է աշխարհիս վայելչութեան ոչնչութիւնը, սկսում է զղջալ և որոշում է իրեն նւիրել խրս-

18) Սաղմոսավանքը և դորա մօտ գտնւած Յովհաննու վանքը կամ Սիւղի վանքը Արագածոտն գաւառումն են: Դոքա ներկայումս վերանորոգւում են իւրեանց աւերակներից:

տակեաց անապատական կեանքի և ճգնաւորութեան: Սակայն դժւար է լինում բարեպաշտ եպիսկոպոսին կատարել իւր ցանկութիւնը, որովհետեւ այդ ժամանակները Հայաստանում չէր գտնուում մի անապատ, որտեղ կարողանար նա կատարել իւր ճգնութեան հանդէսը, չէր գտնուում մէկը, որ ուսուցանէր նոյն անապատական կեանքի կարգ ու կանոնը: Երկար ժամանակ խորհելով, թէ ինչպէս իրազործի իւր դիտաւորութիւնը, նա ոչ մի ելք չէ գտնում: Վերջապէս նա որոշում է թողնել վանքը և երթալ Երուսաղէմ ուխտ տնօրինական տեղերին, մտածելով, որ գուցէ կարողանայ գտնել այնտեղ իւր ցանկացածը:

Դոյն իսկ ժամանակներում Տրապիզոն քաղաքում կենում էր մի Վիրակոս անունով բարեպաշտ մարդ, որ ամուսնացած էր և բախտաւոր ու բարեկեցիկ կեանք էր վարում: Սակայն բախտը երկար չէ ժպտում Վիրակոսին. նա շուտով կորցնում է իւր կնոջը և այնպէս զգուժ է աշխարհից, որ վճռում է լիւր բոլոր ունեցած-չունեցածը վաճառել և կրօնաւոր դառնալ: Լքած լինելով Սարգիս եպիսկոպոսի մտօնին, նա նախ և առաջ գնում է Սաղմոսավանք նորա հետ տեսնելու ու խորհրդակցելու, բայց նորան այնտեղ չըզանելով և իմանալով, որ նա Երուսաղէմ է գնացել, ինքն էլ մտածում է հետեւել նորա օրինակին, կեանքի սխրագործութիւնները տնօրինական տեղերին այցելութիւն անելուց սկսել: Հէնց այս պատճառով էլ նա վերստին վերադառնում է Տրապիզոն, վաճառում է իւր շարժական կալքը և փողը բաժանում է աղքատներին, անշարժ կալաւածները՝ աղարակները և անդաստանները ընծայում է քաղաքի եկեղեցուն և ինքը միայն ճանապարհաճախս վեր առնելով, ճանապարհ է ընկնում դէպի ս. քաղաքը: Ահա այստեղ Երուսաղէմում Սարգիս եպիսկոպոսը և Վիրակոսը պատահում են միմեանց, ծանօթանում են և յայտնում են միմեանց իւրեանց արտի խորհուրդները: Իւրեանց մտքի ու խորհրդների միատեսակութեամբ, իւրեանց ներքին աշխարհի նմանութեամբ և ձգտումների ու ցանկութիւնների նոյնութեամբ միմեանց նմանելով, նոքա շուտով մօտենում են միմեանց, կապում են եղբայրական սիրով և սկսում են միասին մտածել, միասին իւր-

մանց դիտաւորութիւնն իրազործելու միջոցներ որոնել: Նոքա առաջին նւազ որոշում են հաստատել Պաղեստինում, բայց լետոյ լսելով նշանաւոր Մովսէս Սիւնեցու խորհուրդներին, որ այդ ժամանակներն այդտեղ է լինում <sup>19)</sup>, նոքա կանգ են առնում Հայաստանի Սիւնեաց աշխարհի վերայ, որ իբրև թշնամիների աչքից հեռու մի անտառապատ և լեռնոտ երկիր՝ նոյս ձեռնարկած գործի համար բոլոր յարմարութիւններն ունէր, մանաւանդ որ առաջ ևս այդտեղ եղել էր անապատ, բայց լետոյ աւերել, քանդել ու ոչնչացել էր: Նոքա իսկոյն ճանապարհ են ընկնում դէպի Սիւնիք և գալիս հասնում են Տաթևի հռչակաւոր վանքը, այդ տեղից էլ այցելում են Չորոյ վանքը, լետոյ Թանահատի վանքը, բայց դոցանից և ոչ մէկը յարմար համարելով իւրեանց բնակութեան ու նպատակի համար, նոքա որոնում ու գտնում են մի սուելի անվտանգ և ասպակով տեղ, շինում են եկեղեցի և անապատական մութ, փոքրագոյն խցեր և բնակում են այնտեղ, իւրեանց կեանքն ըստ ամենայնի յարմարեցնելով նախկին ճգնաւորների կենցաղավարութեան, որ նոքա ուսել էին «Վարք Հարանց» գրքից: Երկու անապատականների սրբութեան և խստակրօն ճգնութեան համբաւը շուտով տարածւում է Հայաստանի զանազան կողմերը և զրաւում է դէտի անապատը բաղմաթիւ աշակերտներ: Սարգիսն ու Վիրակոսը ամենայն սիրով ընդունում են եկողներին, սովորեցնում են նոցա ճգնութեան կարգը և անապատի կանոնները: Վարճ միջոցին եկեղեցին մեծանում է, խցերի թիւը կրկնապատկւում ու եռապատկւում և կամաց-կամաց վերակենդանանում է նախկին հայկական վանական-ճգնաւորական կեանքը իւր զղեստի ձևով, կեանքի տարազով, պաշտօնի և ժամասացութեան կարգերով և հետզհետէ կազմակերպւում է այն «Սիւնեաց մեծ անապատը», որ այնուհետև երկար ժամանակ ծա-

19) Մովսէս Սիւնեցին ուխտի գնաց լինելով Երուսաղէմ, երկար մնաց այնտեղ, լուսարարութեան պաշտօն կատարելով ս. Յարութեան տաճարում, շրջագայելով Ասորիքի և Եգիպտոսի վանքերը և աշխատելով ժամակարգութեան հմտանալ և վանական կարգ ու կանոնին ծանօթանալ:

ուայում է ինչպէս մի փարոս, որից լսւս է ստանում Հայոց հոգեւոր կեանքը, ինչպէս մի կենդրոն, որտեղից հոգի ու կեանք է ստանում հայկական կրօնաւորութիւնը և վանականութիւնը: «Մեծ անապատի» միաբաններից է լինում Ներսէս Մոկացին, որ շինում է Լմայ անապատը, էջմիածնեցի Կարապետ եպիսկոպոսը, որ վերանորոգում է Սևանայ անապատը, Արիստակէս վարդապետը, որ շինում է Տանձափարախի անապատը, Գաւթեպետը, որ շինում է Չամբորի Չարեքաղետի անապատը <sup>20)</sup>, վերոյիշեալ Մովսէս Սիւնեցին, որ նորոգում է Երևանի Անանիա առաքելի անապատը, Պօղոս վարդապետը, որ լինում է նշանաւոր քարոզիչ, ուսուցիչ և բազմաթիւ եկեղեցիների ու վանքերի շինող ու վերանորոգիչ և միւսները, որոնք դուրս գալով «Մեծ-անապատից», ցրւում են Հայաստանի դանազան կողմերը, վերանորոգում են քանդուած վանքերը և վերահաստատում խանգարուած վանական-անապատական կարգ ու կանոնները: Վանքերի վերանորոգութեան գործը շարունակւում է և Փէ դարում հռչակաւոր Մովսէս Սիւնեցի կաթողիկոսի (1629—1633 թ.) և նորա աշակերտ ու անմիջական յաջորդ Փիլիպպոս Հաղբակեցու (1633—1655 թ.) ժամանակները: Այդ երկու կաթողիկոսների անմիջական հսկողութեամբ վերանորոգւում են ս. Էջմիածինը, ս. Հռիփսիմէի և Գայիանէի վանքերը և Օշականի ս. Մեսրոպայ եկեղեցին. Ջուղայեցի Յակովբ վարդապետը վերանորոգում է Գարաշամբի ս. Ստեփաննոս Կախավիպի վանքը, Մեղրեցի Եսայի վարդապետը վերստին շինում է Երնջակայ ս. Կարապետը, Էջմիածնեցի Զաքարիա վարդապետը հիմնովին նորոգում է Յովհաննավանքը, Մակեցի Մկրտիչ եպիսկոպոսը վերանորոգում է Երտաղի ս. Թադէի վանքը, ս. Սանդիտի վկայարանը և «Կահատակ» կոչուած եկեղեցին, Մողնեցի Մարտիրոս եպիսկոպոսը նորոգում է Մողնու ս. Գէորդը, Փիլիպպոսի աշակերտ յայտնի Ռսկան վարդապետ Երև-

<sup>20)</sup> Չարեքաղետի անապատը եթէ ներկայումս գոյութիւն ունեցող Չարեքավանքն է, գտնւում է ոչ թէ Ուտեաց նահանգի Գարդման գաւառի այժմ աւերակ Չամբոր քաղաքի մօտ, այլ նոյն նահանգի Չակաշէն գաւառում; Գանձակ քաղաքի մօտ:

ւանցին շինում է Ուշի գիւղի ս. Սարգիսը <sup>21)</sup>, Ջուղայեցի Խոջայ Պետրոսը—Բջնու Ս. Աստուածածինը և այլն:

Անապատների ու վանքերի վերաշինութեան ու վանական կարգ ու կանոնի վերանորոգման հետ միասին հետզհետէ նուցա մէջ վերակենդանանում է և նախկին ուսումնականութեան, գիտնականութեան և դպրոցականութեան հոգին: Սակայն այդ գործը այնքան էլ հեշտ չէ լինում, որքան վանքերի վերանորոգումը և վանական կեանքի վերահաստատութիւնը: Աիշա է, գեւ Սարգիս պարոն տէրը և Կիրակոսը հիմնարկելով Սիւնեաց մեծ անապատը, մտածել էին և ուսման գործի մասին և կարգաւորել էին, որ Անապատում Հաստատուի և՛ ուսումնարան. ճիշտ է, Մովսէս Սիւնեցին այդ ուսումնարանի օրինակով մի դպրոց էր Հաստատել Յովհաննավանքում, իսկ Փիլիպպոս կաթողիկոսը հիմնարկել էր ս. Էջմիածնի «Ժառանգաւորաց դպրոցը», բայց դժբա նախկին դպրոցների տեղը չէին կարող բռնել, դժբա ս. Գրքի պատմութիւնը և ամենակարևոր կրօնական գիտելիքները միաբաններին սովորեցնելու համար էին միայն: Գեւ շատ ժամանակ և երկար ու ծանր աշխատանք պէտք էր դործ գնել, որ նոր վանականները կարողանային, գոնէ, մասամբ հասնել նախկին վանականների դարդացման աստիճանին և վանքերի ուսումնականութեան գործը հարկաւոր բարձրութեան աստիճանի վերայ կանգնէր, որովհետև առաջւայ գիտնական վարդապետները չբկային և ուսումնականութիւնը միանգամայն վերացած էր Հայաստանից: Այդ դէպքում մեծ գործ է տեսնում Բագէշի Ամրդօլու ս. Կէորդայ վանքը, որի մէջ մասամբ պահպանել էր հին ուսումնականութեան հոգին, որի միաբանները կարծես, մի հրաշքով ժառանգել էին իւրեանց նախորդների գիտնական ուղղութիւնը: Ամրդօլայ վանքից էր Բարսեղ Դաւառացին, որ առաջին անգամ մտցրեց և՛ արտաքին գիտութեան դասատուութիւնը վան-

<sup>21)</sup> Ուշի կամ Յուշի գիւղը ներկայումս թրքաբնակ է, մեր տրւարանական և տարագրական գործում այնքան չայտնի Երևանցի Ռսկան վարդապետի ս. Սարգիս վանքն էլ աւերակ:

քի դպրոցի մէջ, ուսուցանելով «Սահմանաց զիրքը և «Պոր-  
 փիւրը», «Սեռը, Տեսակը, Տարբերութիւնը, Յատուկը, Պատա-  
 Հումն, Ստորաութիւնը և Բացասութիւնը», որոնց աշակերտները  
 չաճախակի պատահում էին նախնի վարդապետների գրեթէ  
 մէջ, ինչպէս, օրինակի համար, «Պարագմանց և Գանձուց» զրքե-  
 րում, բայց չէին հասկանում: Ամրօլայ վանքից և Բարսեղի աշա-  
 կերտներից է լինում և «Բեղլու» կոչւած Ներսէս վարդապետը,  
 որ գալով Սիւնեաց անապատը, մտցնում է այդտեղի դպրոցի  
 մէջ ևս նույն արտաքին գիտութեան դասաւուութիւնը: Նոյն  
 ինքն Ներսիսի և նորա աշակերտ Վժանցի Մեկքիսէթի ձեռ-  
 քով արտաքին գիտութեան դասաւանդութիւնը մտնում է Լիմ  
 և Կոտուց անապատների ուսումնարանները և այնտեղից էլ—ս.  
 Էջմիածին, որտեղ դասատու է կարգւում Մովսէս կաթողիկո-  
 սի հրամանով Մեկքիսէթը: Այդտեղ Մայր աթոռում արտաքին  
 գիտութեան դասաւանդութեան ծրագիրն աւելի ընդարձակւում  
 է և Մեկքիսէթը սկսում է դասախօսել, բացի իւր վարժապետ-  
 ների՝ Բարսեղի ու Ներսիսի դասախօսածից, Գաւրիթ Անյաղթի  
 և միւս թարգմանութիւնները՝ «Ստորոգութիւնը», «Պերիար-  
 մենիասը», «Աշխարհը» և միւսները և ընդհանուր տօմարա-  
 գիտութիւն ու քերականութիւն: Թէ որքան սահմանափակ է  
 լինում այդ ժամանակները Հայոց վանքերում և Հայաստանում  
 ընդհանրապէս արտաքին գիտութիւնների և մասնաւորապէս  
 քերականութեան գիտութիւնը, — ցոյց է տալիս հետևեալ շատ  
 բնորոշ դէպքը: Մովսէս կաթողիկոսը նւիրակութեան պաշտօ-  
 նով ուղարկում է Լեհաստան Խաչատուր վարդապետին մի քա-  
 նի ուրիշ գիտնական համարւած վարդապետների հետ:  
 Իրով քաղաքում նոքա վիճաբանութեան են բռնւում լատին հո-  
 գևորականների հետ և խայտառակւում են, որովհետև չեն կա-  
 բողանում մինչև անգամ պատասխան տալ այն աղայական  
 հարցմունքին, որ անում են նոցա լատինացիք՝ — թէ «վարեմ»  
 բառը բնի է, թէ անուն: Բարսեղի, Ներսիսի և Մեկքիսէթի  
 սկսածն ընդարձակում են նոցա աշակերտները, նամանաւանդ  
 Զուգայեցի Սիմէօն արեղան և Ստեփաննոս Իլովացին, որոնցից  
 առաջինը, բացի ուսուցչութիւնից, կազմեց դպրոցների համար

Բերականութեան և Տրամաբանութեան ձեռնարկներ, ուղղեց  
 Պրովիդ իմաստասիրի հայկական թարգմանութիւնը, իսկ երկ-  
 լորդն աւարտելով իր ուսման ընթացքը ս. Էջմիածնի ժա-  
 ուանդաւորաց դպրոցում, իրեն նւիրեց գրական վաստակների:  
 Նա օգտուելով իւր լատին լեզուի գիտութիւնից, որ ձեռք էր  
 բերել Լեհաստանում, թարգմանեց լատիներէնից Յովսէփոս  
 պատմագրի Հրէից պատերազմների պատմութիւնը, Գիօնէսիոս  
 Արիսպագացու զիրքը, որի առաջին, Ստեփաննոս Սիւնեցու  
 ձեռքով եղած թարգմանութիւնը, բաւարար չէր, «Գիրք պատ-  
 ճառաց» կամ Ատուածաբանութիւն, «Հայելի վարուց» և այ-  
 լքն և այլն<sup>22)</sup>:

Զ

Թէև մենք վերն ասացինք, թէ Ամրօլայ ս. Գէորգայ  
 վանքը սրահած լինելով նախկին վանքերի դպրոցականութեան  
 և գիտնականութեան հողին, սուանդեց նոյնը նոր վերաշինւած  
 վանքերին ու անապատներին, բայց դորանով չբացատրէ հաս-  
 կանալ այն դպրոցականութիւնը և գիտնականութիւնը և այն  
 ուղղութեամբ, որ իշխում էր Հայոց վանքերում թարգմանչաց  
 դարից սկսած մինչև արաբական արշաւանքը և Արաբական տիրա-  
 պետութիւնից մինչև Բաղրատունեաց թագաւորութեան վերջա-  
 նալը, այլ այն, որ նախ ժՆ դարի վերջերում և ժԲ դարի սկզբներում  
 մտաւ Կիլիկիա խաչակիր արշաւանքների ժամանակ Ռուբինեան  
 իշխանների և թագաւորների Եւրոպայի հետ սկսած յարաբերու-  
 թեան և զանազան կրօնական կարգերի Կիլիկիա մուտ գործե-  
 լու և հաստատուելու միջոցով, և լետոյ ժԳ դարի սկզբներում  
 մուտ գործեց և մեծ Հայաստան Ռենիթորների միջոցով: Այդ  
 միջնագարեան Եւրոպայի դպրոցների գիտնականութիւնը, դասա-  
 ւանդութեան ուղղութիւնը և մանկավարժական եղանակն էր, որ  
 Հայոց վարդապետները փոխ էին առել Բարթողիմէոս Բոնոնա-  
 ցուց և նորա աշակերտներից և յարմարեցրել էին իւրեանց պա-  
 հանջներին, կամենալով նոցա զէնքով կուսել նոցա հետ: Վե-  
 րջիչեալ Հայոց վանական դպրոցների աւարկանների տեսակնե-

22) Տես «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցուց».  
 էջ 266 — 272, 300 — 319:

րից և նոցա գասաւանդութեան ճրագրից հեշտութեամբ կարելի է եզրակացնել, որ այստեղ ևս աւանդում էին այն «Septem artis liberales» կամ եօթ ազատ արւեստները, որ միջնագարեան կաթողիկ աշխարհի զիտնականութեան և հոգևորականութեան կրթութեան զլիաւոր հիմունք էին կազմում: Հայ կրօնաւորներն էլ, ինչպէս երևում է, նախապէս սովորում էին trivium-ը, որ կազմում էր եօթ ազատ արւեստների առաջին մասը, այսինքն Քերականութիւնը, Ճարտասանութիւնը և Տրամաբանութիւնը, և յետոյ արդէն անցնում էին quadri- vium-ին, որ կազմում էր արւեստների երկրորդ մասը և բաղկացած էր հետևեալ զիտութիւններից՝ Թաբանութիւնից, Աստղաբաշխութիւնից, Երաժշտութիւնից և Երկրաչափութիւնից: Քերականութիւն ասելով, միջին դարերում հասկանում էին լատին լեզուի ամենաբարձր դասընթացը: Ինչպէս Եւրոպայում սովորում էին լատին լեզուն իբրև ս. Քրքի ու ժամասացութեան լեզու, այնպէս էլ Հայաստանում սովորում էին միայն զրաբառ լեզուն: Հայ վանականներն էլ ուսանում էին վարժկարդալ զրաբառ զրքեշը՝ ս. Քրքը, Նարեկը, Յայմատուրքը, Վարք Հարանցը, Գանձուց և Պարապմանց զրքերը, Խորենացին և Դաւիթ Անյաղթը և վարժուում էին գրել մեծածափնային լանգաւոր դանձեր ու տաղեր, ինչպէս լատինացիք կարդում էին իւրեանց հեղինակներին և գրում էին անվերջ «dictamen metricum»-ը: Այդտեղ իսկապէս կարդալու նիւթը այնքան նշանակութիւն չունէր, որքան արտաքին ձևը, կարդալու գործողութեան վարժութիւնը, խրթին ոճաբանութեան ընտելանալը և բառերի մեծ պաշար ժողովելը: Լատինացիք մինչև անգամ մի կողմ թողած ս. Քրքը, կարդում էին հեթանոս հեղինակների գրւածները: Հայ եկեղեցու սրահանջն էր, որ հոգևորականութիւնը զրաբառ շարագրել ու կարդալ իմանալ և ոչ ոքի փոյթը չէր, որ այն ժամանակաւ զրաբառադէտ Համարածներն իսկապէս աւարտել ու աւարտում էին իւրեանց սաման ընթացքն առանց լաւ ծանօթ լինելու զրաբառ լեզուի հոգու, ներքին բովանդակութեան ու ոճի կանոնաւորութեան ու պարզութեան:

Ճարտասանութիւն ուսանելու բուն նպատակն, ի հարկէ, էր հոգևորականացուներին կրօնական-հոետորական արւեստին վարժեցնելը, որ նոքա կարողանային ս. Քրքը մեկնել ունկնդիրներին քաղցրախօս և ճոռոմարան լեզուով, քարոզ խօսելին ճարտասանական ձևերով՝ նմանութիւններով, փոխաբերութիւններով, ալլաբանութիւններով և դիմաւորութիւններով: Բայց միջնագարեան Եւրոպան այս զիտութեան վերաբերութեամբ էլ այնպէս էր վարւում, ինչպէս լեզուի վերաբերութեամբ: Մուանալով ճարտասանութեան բուն նպատակը, կաթողիկ գալրոցներն ուսուցանում էին իւրեանց սաներին նամակներ յօրինելու ձևը, զանազան բովանդակութեամբ թղթեր կազմելու, շարագրելու եղանակը, մի խօսքով այն գործնական զիտութիւնը, որ կոչւում է «dictamen prosaicum»<sup>23)</sup>:

Հետևելով մեր միջնագարեան գալրոցների գասաւանդութեան եղանակին, կարելի է զալ այն եզրակացութեան, որ մեր մէջ էլ ճարտասանութեան գասաւանդութիւնը զուրկ չէ եղել այդ գործնական ուղղութիւնից: Մեր վանական գալրոցներում էլ ճարտասանութիւն ասելով, իսկապէս հասկացել են խրատներ, ձառեր և հոգևոր բովանդակութեամբ զանազան թղթեր ու նամակներ յօրինելու արւեստն ու զիտութիւնը: Այդ պէպքում լաւ առաջնորդ և ղեկավար նոցա համար եղել է Խորենացու Պիտոյից զիւրքը, որ, ինչպէս լատինի է, ամբողջովին կազմւած է ճարտասանական ֆիլոսոփաներից ու օրինակներից: Տրամաբանութիւնը, որ Եւրոպացիք մտցրել էին իւրեանց գալրոցական ճրագրի մէջ աշակերտների մտածողական ընդունակութիւնները զարդացնելու համար, գասատրւում էր գործնական եղանակով — դիսպուտներով: Աշակերտներին տրւում էր մի որևէ հոգևոր բովանդակութեամբ նիւթ և առաջարկւում էր pro և contra, թեր ու դէմ ապացոյցներ, արդումենտներ բերել իւրեանց գրութիւնը հաստատելու կամ հերքելու: Աշխատանք էր լինում այնպիսի ուղղութիւն տալու այդ առարկայի գասա-

23) Տես 1897 թ-ի «Міръ Божій» ամսագրի յունիսի համարում տպագրւած «ШКОЛЫ И ШКОЛЬНИКИ ВЪ СРЕДНІЕ ВѢКА» հետաքրքրական չօղւածը:

տուութեան, որ աշակերտները պատրաստ լինէին հիշտութեամբ ջրելու աղանդաւորների, հերձաւածողների և հերետիկոսների սուտ վարդապետութիւնները: Թէ ինչպէս էր դասատուում տրամաբանութիւնը Հայոց դպրոցներում և ձգտում էր արդեօք նոյն նպատակներին հասնել, ինչպէս և միջնադարեան Եւրոպայի կաթոլիկ դպրոցներում,—մենք չըզիտենք, բայց որ այդ դիտութիւնը դասաւանդում էր Հայոց դպրոցներում,—այդ մասին կասկած լինել չէ կարող, որովհետեւ Առաքել պատմադիրը ուղղակի ասում է, որ Ջուղայեցի Սիմէօն արեղան դասաւանդում էր տրամաբանութիւնը Ջուղայի վանական դպրոցում և մինչև անգամ տրամաբանութեան մի ձեռնարկ էլ էր կազմել:

Quadrivium-ի առաջին երկու առարկաների՝ թւաբանութեան և աստղաբաշխութեան անունները մենք չենք գտնում մեր դպրոցներում դասաւանդուած առարկաների շարքում, բայց կալ ասմարադիտութիւն, որ միւսնոյնն է, որովհետեւ Եւրոպայում ևս թւաբանութիւնը ււանդում էին աստղաբաշխութեան հետ միասին, իսկ աստղաբաշխութիւն ասելով, հասկանում էին մեր ասմարադիտութիւնը: Միջնադարեան դպրոցներում ևս, ինչպէս մեր դպրոցներում հոգացողութիւն էր լինում ուսուցանելու գատկական տօնը գտնելու եղանակը, Օրացոյց և Տօնացոյց կազմելու ձևը, որի համար, ի հարկէ, հարկաւոր էր թւաբանական նախնական դործողութիւնների և բազմապատկութեան աղիւսակի իմանալը և աստղաբաշխական մի քանի տարրական զիտելիք՝ ժամանակի բաժանումը, արեղակնային և լուսնի ամսի տարբերութիւնը, զիշերահաւասարները, մոլորակների շարժումը, կենդանակերպները և այլն և այլն: Մեր դպրոցների առարկաների շարքում չեն լիշում և quadrivium-ի երկու վերջին առարկաները՝ Երկրաչափութիւն և Երաժշտութիւն: Բայց Երկրաչափութիւնը և Երաժշտութիւնը այն մտքով, որ մենք ենք հասկանում, չէին դասատուում և Եւրոպայի դպրոցներում: Եւրոպացիք Երկրաչափութիւն ասելով, այդ ժամանակները հասկանում էին զանազան աշխարհագրական տարրական զիտելիքներ, որ շատ հաւանական է, որ դասաւանդում էին և Հայոց դպրոցներում

Խորենացուն կամ Ջիրակացուն վերադրած աշխարհագրութեան ձեռնարկով, իսկ Երաժշտութիւն ասելով, հասկանում էին եկեղեցական երգեցողութիւնը, որ շատ ընդարձակ ծաւալով դասատուում էր նաև Հայոց դպրոցներում: Հայոց եկեղեցին պահանջում էր ժամակարգութեան պայծառութեան համար լաւ երգեցողութիւն, ուստի և մեր վանական դպրոցներում առանձին խնամքով ու սիրով ուսումնասիրում էին Հայոց խաղերը և ութձայնները, հոգևորականներ էլ ընտրում էին տիրապէս լաւ ձայն ունեցողները: Հայոց վանքերից մի քանիսը դեռ շատ հին ժամանակներից յայտնի էին իւրեանց լաւ երգեցողութեամբ և ծառայում էին իբրև երաժշտանոցներ, որտեղ պատրաստում էին Հայոց երգիչները: Յայտնի են նամանաւանդ Սիւնեաց վարդապետարանը, որտեղից էր մեր եկեղեցական ձայները որոշող Ստեփաննոս եպիսկոպոսը, Արշարունեաց Կամրջաձորի վանքը, որտեղից էր երաժիշտ և տօմարագէտ Սամուէլ Կամրջաձորեցին, և Հաւուց Թառալ, Թեղենեաց և Նարեկայ վանքերը, որ մի-մի երաժշտութեան կենդրոններ էին: Հաւուց Թառալ վանքի Եղիա երաժիշտը, օրինակի համար, կարգադրել էր, որ միարանները ժամասացութեան ժամանակ միմեանց չըխանդարեն, այլ միասին և ներդաշնակ հնչեն երգերը: Համարեմ նոյն պահանջն երաժշտութեան նկատմամբ ունէր և Հռովմէական եկեղեցին: Եւրոպայում էլ ուսանում էին հին խաղերը և նոցա իմանալը պարտականացուցիչ էր աշակերտների համար. նոքա էլ պահանջում էին, որ մանուկները դեռ մատաղ հասակից վարժեն եկեղեցական երգեցողութեան և մասնակցեն ժամասացութեան՝ եկեղեցու պայծառութեան և շքեղութեան համար: Եւ այդ պահանջը հին խաղերն ուսումնասիրելու վերաբերութեամբ այնքան խիստ ու յամառ էր, որ չըվերջացաւ մինչև անգամ և այն ժամանակ, երբ ՓԱ դարի սկզբներում յայտնի Արեցցօացի Գիւլին հնարեց արդի եւրոպական երաժշտութեան խաղերը, որոնք շատ հեշտացրին եկեղեցական երգեցողութեան ուստնելու դործը:

Ինչպէս եօթ ազատ արեւտների տեսակները և նոցա ուսանելու եղանակն Եւրոպայում և Հայաստանում միատեսակ են

եղել, նույնպէս համարենք թէ միատեսակ է եղել և նոցա ուսում-  
նասիրելու համար ունենալիք նախապատրաստութիւնը: Հայաս-  
տանում ևս, ինչպէս և Եւրոպայում, սովորութիւն է եղել սկսել  
ուսուցանել երեխաներին շատ մանուկ հասակից, որովհետեւ այն  
ժամանակուայ դպրոցական բոլոր ընթացքը հաստատուած լինելով  
շատ բան բերան անելու և լիշողութեան մէջ պահելու գործողու-  
թեան վերայ, հարկաւոր է եղել և այդ նպատակին հասնելու  
համար օգուել երեխաների մանուկ հասակի թարմ լիշողու-  
թեան ընդունակութիւնից. հայ դպրոցներում ևս տիրել է մար-  
մնական պատժի և բռնի կերպով ուսուցանելու մանկավարժա-  
կան եղանակը, ինչպէս Եւրոպայի դպրոցներում: Հայոց ուսու-  
ցիչներն էլ ստիպուած են եղել անցնել իւրեանց սաների հետ  
նոյն նախապատրաստական առարկաները նոյն ընթացքով և  
նոյն ծաւալով: Աշակերտները նախապէս վանկերով կարգալ սով-  
լելուց յետոյ, բերան էին անում գրաբառ ամենակարեւոր ա-  
ղօթքները՝ Տէրունական աղօթքը, Անկանիմքը, Հաւատոյ Հան-  
գանակը և մի կանոն սաղմոսը: Յետոյ նոքա սովորում էին  
բարձր ձայնով և գեղեցիկ առողանութեամբ փոխասացութիւն  
անել և սկսում էին մասնակցել ժամասացութեան և եկեղեցա-  
կան ամենօրեայ երգերը սովորել: Գրել նոքա սովորում էին  
կարգալ սովորելուց յետոյ. նոքա սաղի գրչով դանազան վար-  
ժութիւններ էին անում և աշխատում էին իւրեանց ձեռքը  
նմանեցնել լաւ ձեռագիր օրինակներին և այդպիսով երբ նոցա  
ձեռքն ու գրիչը լաւ հաստատուում էր, նոքա անցնում էին  
բուն գեղադրութեան արւեստին և սկսում էին վարժել մաղա-  
դաթի վերայ գրելու դանազան գրչագրութեան ձևերը՝ Երկա-  
թագիրը, Բոլորաղիւրը, Նօտրը, Չեղաղիւրը և այլն: Առհասա-  
րակ թէ ընթերցանութեան վարժութեան և թէ գեղեցիկ գը-  
րելու վերայ մեծ ուշադրութիւն էին դարձնում, որովհետեւ այդ  
երկուսն ևս այն ժամանակուայ կեանքում մեծ դեր էին խա-  
զում: Վարժ կարգալ իմանալը հարկաւոր էր եկեղեցական ըն-  
թերցմունքը անսայթաք վերձանելու համար, գեղադրութիւնը  
— հաջադիւտ մաղադաթեայ ձեռագրերն արտագրելու համար:  
Գեղադրութեան արւեստի հետ միասին հայ հոգևորականացու-

ներն ուսանում էին և փակագրերը, զլխագրերը և փառագրե-  
րը, ծաղկելու, դունելու, ներկելու և ոսկելու եղանակը և առ-  
հասարակ սովորում էին եկեղեցական նկարչութեան արւեստը,  
որ հայերը ժառանգել ու պահպանել էին շատ հին ժամանակ-  
նակներից և դարգացրել էին նամանաւանդ Ալիլիկեան շըը-  
ջանում:

Ամենաբարձր ընթացքը թէ հայոց և թէ Եւրոպայի դըպ-  
րոցներում միջին դարերում կազմում էր Արիստոտէլի փիլիսո-  
փայութեան ուսումնասիրութիւնը: Ի հարկէ այդ ընթացքը  
ուսանելու արժանանում էին ամենաընդունակ աշակերտները  
միայն, որովհետեւ այն ժամանակները այդ գործը անասելի  
դժւարութիւններ էր ներկայացնում: Բաւական է ասել, որ  
հայերը Արիստոտէլին ուսումնասիրում էին Գաւիթ Անյաղթի  
թարգմանութիւնների վերայ. թարգմանութիւնների, որ մենք  
մինչև ցայսօր ևս դժւարանում ենք հասկանալ, այնքան նո-  
քա խրթին և դժւար հասկանալի լեզուով, ոճաբանութեամբ  
ու դարձւածներով են թարգմանուած: Առաքել Գալիլիօսին  
հայոց վարդապետների Գաւիթ Անյաղթի թարգմանութիւննե-  
րի ուսումնասիրութեան և հասկանալու յաջողութիւնը վերա-  
դրում է նախախնամութեան կամքին և դանազան հրաշքներ  
է պատմում վերոլիշեալ Բարսեղ, Ներսէս, Մելիքսէթ և Սի-  
մէօն վարդապետների արտաքին զիտութեան ընդհանրապէս  
և Արիստոտէլիսի վարդապետութեան վերահասու լինելու մա-  
սին մասնաւորապէս:

Հայերի մի մասը պատմական դժբախտ հանգամանքներից  
ստիպուած լինելով թողնել իւր սիրելի հայրենիքը և զաղթել  
օտար երկրներ, տանում են իւրեանց հետ ամեն բան, որ  
կարելի էր, որ նւիրական էր նորա համար՝ եկեղեցիների  
սպասները, թանկագին ձեռագիր մատեանները, մինչև ան-  
գամ մեծամեծ խաչքարերը, եկեղեցու դռները և ուրիշ նւիրա-  
կան լիշատակարաններ և, որ զլխաւորն է, եկեղեցի ու վանք  
շինելու սովորութիւնը, եկեղեցի և վանք, որոնք, իբրև ժո-  
ղովրդի ամենանւիրական հաստատութիւններ, անբաժան էին

նորանից: Ուր որ զնացել է հայր, նորա առաջին զործն է եղել օտարներէց անխառն բնակութիւն հաստատել, հիմնել իւր հայրենիքում ունեցած եկեղեցիներն ու վանքերի անու- նով եկեղեցիներ ու վանքեր և նոցա մէջ ղետեղել հայրենիքից բերած խաչքարերը, ձեռագրերը, սպասներն ու զգեստները և աշխատել ամենայն անասկ օտար երկրի մէջ, զոնէ, փոքրիկ տարածութեան տեղի վրայ, փոքրիկ հայրենիք ստեղծել, որով և նոքա բաւականութիւն էին տալիս պանդխտութեան ցա-ւով մորմուքած իւրեանց սրտերին, մխիթարում էին օտարու- թեան մէջ: Հայ զաղթական ժողովրդի այդ նւիրական մեծ զգացմունքի լիշատակարաններն են այն բազմաթիւ եկեղեցի- ներն ու վանքերը, որոնք մինչև ցայսօր զեռ հպարտութեամբ բարձրացնում են իւրեանց սրածայր կաթուղիկները զաղթա- կանութեան տեղերում, թէև զժբախտաբար արդէն շատերի հայ ժողովուրդը պակասած, շատերինը հոգեվարք դրութեան մէջ, շատերինն էլ իսպառ ոչնչացած. զաղթական ժողովրդի այդ նւիրական զգացմունքի լիշատակարաններն են՝ Նոր-Ջու- ղայի Ամենափրկիչ վանքը, Կիպրոսի ս. Մակարը, Փոքր-Ասիոյ Արմաշու Չարխափանը, Տրապիզոնի ս. Աստուածածինը, և միւս- ները, Լեհացոց Հաճկատար ս. Աստուածածինը, Ջանովայի ս. Բարթուղիմէոսը, Ղրիմի ս. Փրկիչն ու ս. Խաչը, Ղզլարի ս. Գէորգը և Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը, որ բովան- դակ Ռուսաստանի միակ հայկական մենաստանն է:

Ն. Շահազիզ



ՋՈՐՄԱՐԲՆՈՅ ԵՒԵՂԵՅԻՆ

և

ԽԱՉԻԿ Ծ. Վ. ԳԼԳԵԼՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մազարշապաախարեւելեան կողմը, 4 վերստ հեռաւորու- թեամբ, Երևանի ճանապարհին վրայ գրեթէ, կրտսնւի աւե- րակներու կոյտ մը, ուր երբեմն կըբարձրանար, «Յանուն երկ- նաւոր Զուարթնոցն» նւիրւած փառաւոր եկեղեցի մը, որ կը կոչւէր նաև «Առապարի ս. Գրիգոր»:

Եկեղեցին շինել տւողն եղած է Ներսէս Գ. կաթուղիկոսն, որ «Չինող» մականունով ծանօթ է մեր եկեղեցական պատ- մութեան մէջ: Այս Ներսէս կաթուղիկոսական աթոռը բազմած է 141-ից մինչև 661 թիւը:

Եկեղեցւոյ դիրքն եղած է բոլորակ և սիւնազարդ: Սիւնե- րէ չորսը «Հաստահեղոյց» և հիմնական են, որոնց վրայ հաս- տատւած էին անշուշտ կամարները, իսկ իւրաքանչիւր հիմ- նական սետն առջև մէկ-մէկ ուրիշ սիւններ ալ կը գտնւին, որոնց խոյակները կըկրէին բարձրաքանդակ, հսկայական, դունաւոր և թեւատարած արձիւներ, ինչպէս որ կրտսնենք այսօր: Ասոնցմէ զատ տասնութ օժանդակ սիւններու խարխի- ներ և խոյակներ ալ կըգտնւին: Խոյակները զարդարւած են հիւսկէն քանդակներով, խաչերով և յունական մենազրու- թիւններով: Այս վերջինները խաչաձև շարւած են և կրկար- դացւին ΝΑΡՏՈՅ (Ներսիսի) և ΚΑΘΟΛΙΚΟՅ (կաթողիկոսի):

Այս է միայն գտնւած իբրև օտարալեզու արձանագրու- թիւն: Իսկ հայերէն արձանագրութիւնն, ինչ որ կրսպաս-ւէր, զժբախտաբար չէ գտնւած գրեթէ. «գրեթէ» կրսեմ, վասն- զի արձանագրութեանց երկու բեկորներ միայն գտնւած են,

որոնց միոյն վրայ նշմարելի կը լինի «Յ» տառը միայն և միւսին վրայ «ՈՍ...» տառերն: Ասոնցմէ դուրս ոչինչ գտնուած է թէև, բայց կը լուսացուի եթէ ոչ ամբողջական արձանագրութիւն մը, գէթ գտնուած բեկորներուն լրացուցիչ մասերը գտնել, շնորհիւ ապագայ պեղումներու:

Պեղումներու գործն ստանձնած է Խաչիկ Ծ. վ. Գաղեան, մասնաւոր թուղթագրութեամբ Պետերբուրգի Կայս. Հնախ. Ընկերութեան և Վեհ. Հայրապետի:

Խաչիկ վարդապետ շատ գործունեայ և ճարպիկ միաբան մըն է. պեղումները կրկատարէ իր անձնական ծախքով և առանց վհատելու: Զարմանալի է տեսնել այս դարաբազցի վարդապետը, որ գործաւորներու հետ միոցած իբրև մշակ կաշխատի իր սիրական Զուարթնոց եկեղեցւոյ պեղումներն լառաջ տանելու համար:

Մինչև հիմա գտնուած են երեք սենեակներ, խոշոր սըրբատաշ քարերով կառուցուած, երեք գետնաթաղ կարասներ, դռնաւոր մ'ոզայիքով խաչքար մը, լուսական — թերևս գիցաբանական — արձանաքանդակ պատկերի մը ստորին մասը, դարձեալ լուսական երկու գլուխներ, լախճապակեայ անօթներու և սկաւառակներու բեկորներ, կաւէ կանթեղներ և ջահեր. սակայն գիտութեան համար ամէնէն հետաքրքիրն է միապագայ կարծր քարէ պատրաստուած ահագին կոթող մը, որուն վրայ 47 տող բեւեռած արձանագրութիւն կայ:

Ասոր հնութիւնը կը հասնի մինչև Տ-րդ դարը Քրիստոսից առաջ և կը պատկանի Արդեշթիշի որդի Ռուսաշի: Արձանագրութիւնը կը սէ Ռուսաշ նւաճած է Կուտարլինի երկիրը և այնտեղ կանգնած է այս լիշատակարանը. շինութիւն մը կառուցած է հոն փայտեայ դռներով և Իլդարունիանի գետէն ջուր բերած է մասնաւոր ջրանցքով: Այս ամէնուն համար Խաչիկ (= Լուսին ?), Արտինի (= Արեղակ) և Տէլշպա (= Օդ) աստուածոց գառնուկ և ոչխար դոհած է:

Արձանագրութիւնը կը վերջանայ ասորեստանեան և վանեան արձանագրութեանց սովորական անէծքով, այսինքն՝

«Ով որ այս լուշարձանը տեղէն վերցունէ, ով որ իմ

անունս ջնջէ, ով որ արձանագրութիւնն իրեն սեպհականէ, ով որ ջրի մէջ ձգէ, ով որ ուրիշ մէկին խաբէ թէ ինքն է կանգնած, ով որ ջնջելու գործին օգնութեան բերւի... Խաչիկ, Արդինի և Տէլշպա աստուածներն անոր ամբողջ ընտանիքը և ազգականները փշացնեն»:

Արձանագրութեանս մէջ Ռուսաշ հետեւեալ մակդիրներն ունի. «Արքայ հօր, արքայ մեծ, արքայ աշխարհի, արքայ Վանայ երկրին, արքայ արքայից և Տրապ քաղաքին»:

Ինչպէս ըսի վերև, շատ լուսալի է որ ապագայ պեղումները նորանոր նիւթեր մատակարարեն թէ մեր եկեղեցական պատմութեան և թէ, թերևս, նախահայոց պատմութեան, որ այնքան սուերամած ու թանձր քօղով ծածկուած է մեզմէ և միայն նոր զիւարթու լոյսովն է որ պիտի սփարլի: Ո՞ր զիտէ, թերևս Զուարթնոց եկեղեցւոյ հարաւային մասը — որ կաթողիկոսարանին տեղն է հաւանականաբար — երբ պեղի, կարելի է ընծայէ մեզ հետաքննական նիւթեր: Ուրեմն կը սպասենք որ Խաչիկ վարդապետ շարունակէ իր ստանձնած աշխատութիւնը և ձեռքէն էկած ծառայութիւնը մատուցանէ գիտութեան:

Կ. Յ. Բաւմաշեան



# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԵՒ ԻՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ



I

Ովորաբար Հայոց լեզու ասելով՝ հասկանում են այն զրական լեզուն, որ ստեղծել է XIX-րդ դարի կենսակրթական (կուլտուրական) շարժումը: Այդ տեսակ զրական լեզվի հիմքը միշտ կազմում է որևէ բարբառ, որ այս կամ այն պատճառով առանձին տեղ է զբաղեցնում միևնույն շարքում: Քաղաքակիրթ շարժումը նրան

կեանքի է կոչում, որ գալ ժողովրդի կեանքում միարարի դեր խաղալու. մշակելով ու հարստացնելով բարբառի տառ հում նիւթը, հնար է տալիս այդ բարբառին՝ առաջադրած գաղափարին ծառայելու և տալով նոր լեզվին յայտնի ձև, ընդունակ է դարձնում բարոյական խնդիրներ արտայայտելու և գործնական պահանջները դոհացնելու: Մի ցեղի լեզուն դառնում է ողջ ժողովրդի կենսակրթութեան միակ լեզուն:

Իսպառ աւելի հեշտ կըլինի, եթէ լեզու ասելով հասկանանք այն բոլոր նիւթը, որ մտքի փոխանակութեան միջոց է մի ազգի համար — այն է բոլոր բարբառներն ու ենթաբարբառները միասին առած: Այս կերպ՝ լեզուն վերացական գաղափար է. իրապէս սակայն միայն բարբառներ զոյութիւն ունին: Կենսական լեզուներն անընդհատ ձիւղաւորում են: Լեզուն մտքի փոխանակութեան զործի է (Ֆունկցիոն) և լիովին արտայայտում է ժողովրդի նիստ ու կացը. ժողովրդի բերանում սա մի

ձիւղն նիւթ է և նրա խօսելը, մտածելն ու կենցաղը իր դրոշմն է դնում այդ նիւթի վրայ: Եւ որքան մի ազգի կեանքում պատմական ու աշխարհագրական պայմանները շատ տարբերութիւններ են մտցնում, այնքան աւելի լեզուն խիստ է բարբառների բաժանում: Գծարանց լեռները, ծովերը, տարբեր ժողովրդի հարեանութիւնը, կենսակրթական ու քաղաքական պայմանների տարբերութիւնը այդ ձիւղաւորման զլխաւոր գործօններն են: Եւ երբ միևնոյն լեզվի ձիւղերն այնքան են իրարից տարբերում, որ դժուարանում է բերանացի աւրնչութիւնը — այն ժամանակ այդ ձիւղերին ասում են բարբառներ: Հայի կեանքում այդ կարգի բոլոր գործօններն եղել են ու կան, ուստի և Հայ լեզուն հնուց արդէն շատ բարբառների է բաժանուում: II կամ III դարում այդ բարբառներից մէկը և մասնաւորապէս այն բարբառը, որ տիրում էր Մամիկոնեանների կալաածն ու հին Հայաստանի ամենայայանի քաղաքական կենդրոններից մէկը կազմող Տարօնում (հիմա Մուշ) ազգեցիկ Մամիկոնեանների գաւառաններում ու վարչութեան մէջ գործածուող պաշտօնական լեզուն էր և վերջն էլ դարձաւ Աւետարանի լեզուն, ինչպէս ենթադրում են այժմ (Գ. Հախվերդեանց, Լ. Մսերեանց): Այսպէս ծնունդ առաւ զբարբառը, կենսակրթական-կրօնական շարժումը առաւ Տարօնի բարբառը, զրական մշակման ենթարկեց, ու դարձրեց հանրահայկական, «ոսկեգարի» զրական լեզու: Իսկ բարբառները շարունակում էին դարգանալ և սպրել: Մեր միջնադարեան բարբառների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս որ այն ժամանակ էլ նրանք նոյն զարաւոյութիւններն ունէին զբարբառի համեմատութեամբ, ինչ որ այսօր: Ազրակացութիւն. 1) բարբառների բաժանելը հին է և 2) ձևերի փոփոխման ընթացքը դանդաղ: Եւ իսկապէս այդ ընթացքն այնքան դանդաղ է եղել, որ մի քանի բարբառներում այսօր զբարբառից աւելի հին ձևեր ենք տեսնում: Արտաքին ազգեցութիւններն աւելի արագ փոխեցին լեզուն. վերին աստիճանի խորթ տարրեր մէջ մտան՝ պարսկական, արաբական, թաթարական, չունական և այլն: Մասնաւորապէս իրանական ու սեմիտական տարրերը, որ լիովին մերել

են լեզւի հետ և բառերն, օրինակ, չեն տարբերում զուտ հայերէն բառերից. միայն լեզւագիտական ուսումնասիրութիւնը զիտէ նրանց խորթ լինելը: Մի շարք բառեր, որ դատաստանական, վարչական ու ռազմական կազմին վերաբերող գաղափարներ են արտայայտում, փոխ են առած Իրանցիներից այդ կազմի հետ: Թուրք-թաթարական բառերը սակայն մինչև այսօր էլ խորթ են և պիտի նրանց տեղ մայրենի լեզւի բառերը դնել. այդ բառերը բարբառների մէջ 3000-ից աւել են: Քայքայ աւելի կարևորն այն է, որ հայ լեզւին խորթ դարձածներ են ստեղծել. յայտնի է որ սրանք աւելի խոր ու ամուր են մշտնում լեզւի մէջ, քան բառերն ու բառազննական ձևերը: Ամեն ազգի լեզու, որ ապրում է տարբեր լեզուի խօսող ժողովրդի հետ, միշտ միտում ունի նրա կազմին ու դարձածքներին ենթարկւելու. այս հանգամանքը խիստ խանգարում է լեզւի ամբողջութեանը. մինչդեռ Թիֆլիզցիները վրաց լեզւի տարբերն ունի իր լեզւի մէջ, դարաբաղցին իր խօսքը համեմու է թաթարական բառ ու արտայայտութիւնով. իսկ ռուս կենսակրթութեան սանն արդէն, ռուսերէն մտածում ու թարգմանում է հայերէն: Այդպիսով խանգարում է լեզւական կազմի միօրինակութիւնը:

Գրաբառը այլևս հասկանալի չէր—խանգարել էր ժողովրդի, նրա կենսակրթական կեանքի միութիւնը: Աարգապետի խուցի մէջ տպրում էր մի լեզու, որ մնացել էր անշարժ. նա կորցրել էր իր երբեմնի փայլն ու ուժը, որ արդէն տնայէտք էր դառել: Հայ նահապետական երկրագործը իր մտապատկերների ազքատ խմբի համար ունէր պարզ ու հասարակ լեզու: Քաղաքներում հայերը շփում ունէին օտարների հետ. արագ իւրացնում էին նրանց լեզուն ու նոր սովորած լեզւի տարբերը ձուլում մայրենի լեզւի հետ: Այդ լեզուն էլ չէր կարող դարգանալու յոյս ունենալ. ճիշտ է, քաղաքայինը աւելի դարգացած է, կենդանի ու յառաջագէժ, բայց նրա լեզուն միայն առևտրական տանն ու հաշիւներին էր պէտք զալիս և ոչ մի դեր չուէր վարչական ու կենսակրթական կեանքում: Քայքայ և այնպէս նա կենդանի, խօսակցութեան լեզու էր, չընս-

չած որ խճողւած էր օտար ձևերով: Եւ հէնց այդ լեզուն էր, որ դարուս սկզբին կուլի դուրս եկաւ փառաւոր անցեալ ունեցող գրաբառի դէմ, երբ հայ ժողովրդի կենսակրթական արթնացումը անհրաժեշտ դատեց մի նոր, ընդհանուր, ամենքին հասկանալի լեզու ունենալը. այդ նոյն լեզուն պիտի ճամբայ բանար հայ ժողովուրդի համար դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը:

Այս գաղափարին էր ծառայում Ստ. Նաղարեանի գործունէութիւնը. նա առաջարկում էր հաշտարիտանի բարբառը վերնասած նպատակի համար, բայց շուտով գերակշռութիւն տւեց Երևանի բարբառին (Паткановъ, О диалектахъ): Այդ բարբառն առաջ քաշեց մանաւանդ Խ. Աբովեանը. Ղաղարեան ճեմարանը նոր գրական լեզւի տարածման կենդրոնը դարձաւ. աշակերտները սփռում էին այդ լեզուն ամեն տեղ. դպրոցը, մամուլն ու գրականութիւնը հաստատում նրա իշխանութիւնը:

Արևմուտքում նոյն գաղափարը քարոզում էր Հ. Արսէն Այտրեան՝ Ալիէնայի Մխիթարեաններից: «Թող, ասում է նա, լեզւաբանութիւնը ողբայ այդ հզոր ու փառաւոր լեզւի կործանումը (այսինքն՝ գրաբառի), չէ որ միւս կողմից մենք պիտի մտածենք ժողովրդի կեանքի ժամանակակից պիտուքներին նոր լեզուն ծառայեցնելու մասին» (Քննական քերականութիւն): Արևմտեան գրական լեզւի հիմքը Կ. Պոլսի բարբառը կազմեց: Քայքայ թէ այդ և թէ Երևանի բարբառը պիտի արմատապէս վերամշակւէին. պիտի դուրս մղէր ինչ խորթ ու եկամուտ բան կար, պիտի հարստացէր լեզուն՝ եւրոպական կենսակրթութիւնը փոխ առնելու հետ միաժամանակ: Այդ բանը սակայն ցանկալի չափով չեղաւ. պատճառն, անկասկած, խնդրի զրգարութիւնն էր: Եւ իսկապէս, իրական կեանքն ազքատ է, խեղճ և ստեղծել է իր նման բառերով ու դարձածներով ազքատ բարբառների բաժանւած լեզու, իսկ հին փառաւոր լեզուն անկենդան է, մանրւած, անհասկանալի: Անվիճելի խընդիր է դառնում այդ դէպքում եւրոպական կենսակրթութեան չարմարացրած կենդանի լեզու ստեղծելը, քանի որ նիւթը սակաւ է: Լեզուն ստեղծողը ժողովուրդն է, որ մտածում ու խօ-

սում է այդ լեզուով. իսկ ժողովրդի միջից այն մարդիկը, որոնք ընդունել էին աւելի բարձր կենսակրթութիւն, սկսեցին իրանց ստացածը պատուատել հայրենի բունին, փոխ առնելով աւելի քաղաքակիրթ հարւեաններէր. ուստի հայր վերցնում էր ուս կենսակրթութիւնը, տաճկահայր ֆրանսիականը, որով սնել էր. և ահա դրանք են, որ կենսակրթական շարժում են առաջ բերում, մասնակցելով լեզուի ստեղծելուն: Եւ մինչդեռ ժողովրդի լեզու մնում են ասիական ծագում ունեցող օտարաբանութիւններ (բարբարիզմ), գրական լեզուն մուտք են գործում ինտելիգենցիայի շնորհիւ եւրոպական օտարաբանութիւններ: Այս երևոյթը որ աւելի ուստի հայերի մէջ է նկատուում, շատերը վերադրում են այն հանգամանքին, որ Կովկասի հայերն աւելի մօտ են կենսակրթութեան, քան թուրքահայերը: Աւելի շուտ այդ երևոյթն արդիւնքն է այն ճանապարհների տարբերութեան, որով ընթացել են Պոլսի և Կովկասի գրականութիւնը: Կովկասում հայ կենսակրթական շարժման գործիչները ստեղծելով նոր լեզուն՝ ղլխաւորապէս ջանք էին թափում, որ նա սարգ ու հասկանալի դառնայ: Բայց հարստացնելով ու գտելով բազմաբար, նրանք շատ նոր մուծումներ ու փոխառումներ մտցրին լեզուի մէջ, որ յաճախ անհասկանալի էին մնում ժողովրդին. սովոր օտար լեզուով մտածելուն՝ նրանք մտնում էին խորթ կազմութիւն ունեցող դարձածներ: Լեզուն կորցրեց իր բնութիւնը, ազգային երանգը, զրկեց ուժից, գեղեցկութիւնից. այլևս ճկուն չէր և արտայայտիչ: Նախատեսանելով այդ, սուրբեցիք աշխատեցին լեզուն դարբառ ձևերով զարդարել, բայց այդ, ինչ խօսք որ՝ նրանց շատ թանգ նրստեց. լեզուն աւելի ևս ժողովրդից հեռացաւ և սկսեց միայն ընտրեալներին հասկանալի լինել <sup>1)</sup>:

Իսկ Թիֆլիսում, Կովկասի հայերի կենսակրթական կենդանորում աւելի դերադատ համարեցին ժողովրդի լեզուն մօտ լինելը, միշտ խէթ աչքով նայելով դարբառին: Եւ հիմնադուրկ

<sup>1)</sup> Պէտք է ասենք, որ այս կշտամբանքը բոլոր Պոլսեցի գրողներին չի վերաբերում. շատերը, մանաւանդ վերջերս, աշխատում են ժողովրդի խօսքին մօտ, հասկանալի լեզուով գրելու:

չէր նրանց հայեացքը բարբառների վրայ, որ նրանց աչքում անսպառ նիւթ էր, որից կարելի էր մեծ քանակութեամբ բառ ու դարձած վերցնել, առանց վտանգելու լեզուի մաքրութիւնն ու սարգութիւնը: Եւ իսկապէս, որքան մեծ չափով ու շատ բարբառներից օգտուեց, այնքան աւելի մօտ կրլինենք հանրահայկական լեզուի գաղափարն իրականացնելուն: Վերջերս ուսումնարանների տարածած հոսանքի շնորհիւ ժողովրդի լեզուի ձևերը զնայով պիտի հարստանան: Այն կենդանորում, որ աւելի դարգացած են և ուր դեր են խաղում մամուլն ու ուսումնարանը, ժողովրդի լեզուն նկատելի կերպով փոխուում է գրական լեզուի ազդեցութեան ասի: Այդ լեզուից բան փոխ առնելիս հայ գրողը միշտ կարող է ապահով լինել, որ եթէ ոչ բառերը, դոնէ դարձածքները անպայման մաքուր են և հարազատ. ժողովրդի ստեղծած արտայայտութիւնները բնութիւն են և ոչ թէ օտար լեզուից թարգմանած: Բայց կրկնում ենք, այդ խնդիրն իրականացնելը անհամար դժուարութիւնների է դէմ առնում: Ներկայ սպայմաններում ոչ միայն դժուար է կենդանի կապ հաստատել գրական լեզուի և բարբառների միջև, այլ և նոյն իսկ բարբառների ուսումնասիրութիւնն է դժուարացած: Բարբառների տւած նիւթի կէսը դեռ երկար ժամանակ մեզ համար սնյալտ կըմնայ: Մենք ոչ միայն այդ նիւթը չենք կարող գրական նպատակների համար շահագործել, այլ և համարեա բան չըզիտենք նրա մասին: Հետագոտոյները կարող են մեզ ծանօթացնել օրինակ որ և է Բէյլանի բարբառի հնչարանական ու ձևաբանական առանձնայատկութիւնների հետ, բայց նրա ոգու և զգմի մասին այսքանը կիմանանք, թէ մեր Կովկասի լեզուից շատ է տարբերում: Իսկ ուստի լեզուն առնելով իր մէջ թուրքահայերին անձանօթ դարձածներ, հակումներ է ցոյց տալիս նրանց լեզուի աւելի ևս հարստանալու:

## II

Աշխատենք հայ լեզուի ստիկները տալ իր բարբառական ճիւղաւորումներով; որ յետոյ աւելի սարգ երևայ, թէ ինչ տե-

տակ աշխատանք պիտի կատարել, որ այդ բարբառները կարելի չայն չափ միանան մի ընդհանուր գրական լեզվի մէջ:

Հայ բարբառներ հետազոտողներին կարելի է երկու խմբի բաժանել ի նկատի առնելով այն խնդիրները, որոնց վճռելովն ին զբաղած նրանք: Մի կողմից մասնագիտութեամբ լեզուագէտ զիտնակաւնները, ինչպէս օր. Ք. Պատկանեան և եւրոպական գիտութեան ներկայացուցիչները. սրանք Հայ լեզուն թանգ են զնահատում գիտութեան նպատակների համար: Ժամանակակից հնդեւրոպական լեզուագիտութեան հիմնական խրնդիրը հնդեւրոպական նախալեզուն համադրական ճանապարհով վերակազմելն է: Հաւաքելով ու մշակելով բոլոր եղած նիւթերը, լեզուագէտները փորձում են կազմել այն լեզուն, որ լուծման դարաւոր պրոցէսով առաջ է բերել բոլոր ժամանակակից հնդեւրոպական լեզուները, սրանց հաշուում նաև հայերէնը, որ հընդեւրոպական լեզւընտանիքի ինքնուրույն ճիւղերից մէկն է: Գիտնականը հաւաքում է ամբողջ բարբառական նիւթը ու նրա և գրաբառի ձևերն իրար դէմ բերելով՝ փորձում է Հայ նախալեզվի ձևերը որոտալու: Այդ վերակազմութիւնն առատ նիւթ կրտայ պատմա-բանասիրական ուսումնասիրութիւնների համար:

Հայ վերածնւած կենսակրթութեան գործիչները, որ միւս խումբն են կազմում, բարբառական նիւթը շատ թանկ են գնահատում Հայ գրական լեզուն հարստացնելու և զարգացնելու համար: Սրանց մէջ առաջին տեղը Վիէննայի Միլիթարեան միաբանութեան անդամ Հ. Արսէն Այտրեանն է բռնում 60-ական թւերին զբաղ իր գասական երկով «Քննական քերականութիւն արդի հայոց լեզվի»: Նա մշակել է այն հարցը, թէ ինչ դեր են խաղացել Հայ լեզվի պատմութեան մէջ ժողովրդական լեզվի ճիւղերը և առաջարկում է Հայ ոճաբաններին լեզուն մաքրելու և բառեր փոխ առնելու համար դիմել գրաբառին, իսկ լեզվի կազմի և ոգու խնդրում հետևել ժողովրդականին: Նա փորձեց Հայ բարբառների դասակարգութիւնը տալու, որ սակայն այնքան էլ յաջող չէ. նա լիշում է Պոլիս-Անատոլեան, Վան-Միջերկրային կամ դուտ հայկական, Հաշտարխան-Պարսկական և Ահալական բարբառները:

Գասակարգութեան մի փորձ արել է և XIV դարի մատենագիր ու քերական Յովհաննէս Երզնկացին, որ լիշում է եօթ բարբառ և ութերորդ ու գլխաւորը՝ Արարատեանը: Պէտք է ասենք, որ մինչև այսօր էլ հաստատուն դասակարգութիւն չըկայ, որովհետև շատ բարբառներ դեռ չեն ուսումնասիրւած:

Բարբառները սովորաբար երկու մեծ խմբի են բաժանուում՝ Արևելեան և Արևմտեան: Առաջին խումբը տարածում է Ռուսաստանում ու Պարսկաստանում, երկրորդը — Տաճկաստանում: Արևելեան խմբից են՝ Հաշտարխանի, Թիֆլիսի, Երևանի, Ղարաբաղի և Աղուլիսի բարբառները. նաև Մշինը, Վանինը, Խոյինը, Ջուղա-Հնդկականը և Կովկասի գրական լեզուն: Արևմտեան խմբից են՝ նախ արևմտեան գրական լեզուն և ապա՝ Պոլսի, Ասլանբէկի, Եւդոկիոյ, Էրզրումի, Երզնկայի, Մոկսի, Խարբերդի, Տիզբանակերտի, Ալաշկերտի, Բէլլանի, Ախալցխայի, Նոր-Նախիջևանի, Ղրիմի, Ահաստանի և այլ բարբառները: Ազգի այդ տեսակ սաստիկ տրոհւելուն, ինչպէս ասինք, օգնեցին երկրի կենսակրթական ու քաղաքական պայմանները, այն տարբեր ժողովուրդների հետ միատեղ վարած կեանքը, որի տնտեսական ու կենսակրթական կողմերը նոյն այդ ժողովուրդների ազդեցութեան տակ էին: Եւ իսկուպէս. մենք տեսնում ենք, որ Մ. Խորենացու անւանած «գինու և երգի» աշխարհում իշխող Աղուլիսի բարբառը բազմազան է, կենդանի ու բաւական հարուստ, իսկ Քրդստանի լեռնցի հայի խօսքը ընդհատ ու աղքատ: Հիւսիսային բարբառներում նկատուում է ուսու լեզվի ազդեցութիւնը, իսկ Թիֆլիսի բարբառում նաև վրացերէնինը:

Արևմտեան բարբառներում նկատուում է Տաճկական լեզվի ազդեցութիւնը, իսկ աւելի կիրթ շրջաններում նաև ֆրանսերէնինը: Անդլիացի Riggs-ը այդ բարբառներում մօտ 600 բառ գտաւ, որ գրաբառում չըկան: Կովկասի բարբառներում թաթարական լեզվի ազդեցութիւնն է նկատուում, որ տաճկականի արածից քիչ է տարբերուում: Արաց լեզուն ազդել է Թիֆլիսի բարբառի վրայ, իսկ գրական ոճի մէջ նկատուում է ուսու լեզվի ուժեղ ազդեցութիւնը:

Քերականական կազմի կողմից արևմտեան և արևելեան բարբառների մէջ տարբեր են ներդրական հոլովի կազմելը, իսկ բայերի մէջ՝ ներկան ու անցեալը կազմելը: Հնչական կողմից արևմտեան խումբն արևելեանից զանազանում է նրանով, որ արևելեան խմբի *սլ, տ, կ* տառերը արտասանում են աւելի հազազային և *ծ ու ժ* հնչիւնները միանգամայն չըկան: Ընդհանրապէս այս բաժանումը չի կարելի պահպանել խոտիւ, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ բարբառների սահմանների ու տարբերիչ գծերի վերացական որոշումները իրականութեան համապատասխան չեն լինում սովորաբար:

## III

Այժմ աշխատենք առանձին բարբառների մասին խօսել, սկսելով արևելեան բարբառներից.

I Հաշտարխանի բարբառ — որով խօսում են Հիւսիսային-Արևելայում և մասամբ Մոսկուայում. սկզբում Հազարեան ճեմարանում մշակում էին այդ բարբառը: Բառական մօտ է զբրբառին ու օտարաբանութիւններով ազաւազւած: Հազարեան ճեմարանում Ստ. Նաղարեանն ու նրան հետևողներն ընդունեցին որպէս զբառական լեզուի հիմք, սակայն շուտով նրա տեղը բռնեց՝

II Երեւանեան-Աշտարակի կամ Արարատեան բարբառը, որ նման է վերը լիշածին ու տարածւած է Երևանում ու իր շրջակայքում՝ Աշտարակ, Վաղարշապատ, Քանաքեռ նաև Փամբակի գաւառում: Նա հաստատուն տեղ բռնեց թէ՛ որովհետև աւելի մաքուր էր և ունէր ուրիշ այլ արժանիքներ և թէ՛ այդ բարբառով էր զբառ այնպիսի խոշոր երկ, որպիսին Արովեանի «Վէրք Հոյաստանին» ու նման երկերն: Աչքի ընկնող հրնչնաբանական առանձնատկութիւնը *ոյ* և *իւ* հնչիւնների *ի* դառնալն է:

Երևանի բարբառն Արովիսի ու Ղարաբաղի բարբառի հետ միասին մի խումբ են կազմում, ուր բառերի շեշտը շարժուն է:

III Ղարաբաղի բարբառը, որ ուսումնասիրել է Աճառեանը, կոշտաւուն է. այս բարբառում կան շատ բառեր, որ ոչ գրաբառում կան, ոչ միւս բարբառներում: Չատ բառեր նա լիովին է. Հնչնաբանական առանձնատկութիւններից աչքի է ընկնում այն, որ շատ ձայնաւորներ այստեղ *ը*-ով են փոխարինւում. երևում են *օ՛* և *ա՛* հնչիւնները, որ միւս բարբառներում էլ կան, և արդիւնք են թիւրք-թաթարական ազդեցութեան, և մի դժուար արտաբանելի հնչիւն *ըէ* (վրէր = որ): Բաղաձայներն այդ բարբառը մերում է, մեղմում, ձայնաւորով սկսող բառերի սկիզբը դարձնում է հազազային: Ղարաբաղի բարբառն իր ենթաբարբառներով, որոնցից նշանաւոր են Գանձակինն ու Զանգեզուրինը, բառական ընդարձակ տեղ է բռնում:

IV Ղարաբաղի բարբառին մօտ է և *Խոյի* բարբառը <sup>1)</sup>:

V Ազուլիսի կամ Զոկերի բարբառը, որով 10 հազարի չափ մարդ է խօսում Երևանի նահանգի Նախիջևանի գաւառում և որն ամենից շատ է ուսումնասիրած (Ք. Պատկանեան, Ս. Սարգսեան): Այս բարբառն այնքան շատ է տարբերում միւսներից, որ համարում էին արհեստապէս կազմած մի ժառգոն՝ անհասկանալի մնալու համար: Բայց զիտական հետազոտութիւնը ցոյց տաւ, որ այդ ենթադրութիւնն անհիմն է: Բնորոշ յատկութիւնն այն է, որ յայտնի հնչիւնների տեղ երևում են ուրիշ հնչիւններ. *ի*-ի տեղ *ց*, *ա*-ի տեղ *օ*, *ա*—*ե*, *ի*—*ե*, *օ*—*ու*, *իւ*—*ի*, *ը*—*իւ* և այլն: Արտաբերման մէջ նրկատուում են որոշման չենթարկող շեղումներ և տարահնչման երևույթներ (Hautverschiedung = nepeճօճի). այսինքն միւսնոյն տասը բառն արտասանելիս տարբեր հնչիւն ունի: Այս երևույթըն աւել կամ պակաս չափով յատուկ է բոլոր բարբառներին, բացի Թիֆլիսինը, որ հաստատուն արտաբերութիւն ունի: Ազուլիսի բարբառը շատ բառ ունի, որ միայն այնտեղ կալ-

<sup>1)</sup> Այս կարծիքի դէմ, որ Պատկանեանից ենք առել, մեզ առարկեցին թէ Խոյի բարբառն իսկապէս նման է Զանգեզուրի ենթաբարբառին, իսկ ընդհանրապէս աւելի մօտ է Վանի բարբառին:

նկատելի է և յոգնակի թւի թաթարական կազմութիւնը ա՞ր և նա՞ր-ով և նոյն թաթարականի հոլովական վերջաւորութիւններով, բայց փոքր ինչ շեղումով, որ Ղարաբաղի և Երևանի բարբառների ազդեցութեան արդիւնք է:

Սարգսեանը ցոյց է տալիս նման դժեր այս ու Թիֆլիսի և Ջէյթունի բարբառների միջև. հաւանօրէն զրանք անփոփոխ ձևեր են, մնացած դեռ այն ժամանակից, երբ հայ լեզուն բարբառների չէր բաժանւած. ձևեր, որ պահպանւել են, որովհետև հայ լեզուի ներքին փոփոխութիւնները զարերի ընթացքում բաւական դանդաղ են կատարւել: Բնորոշ է եկեղեցու արած ազդեցութիւնը, որ միւս բարբառներում էլ է նրկատում. նոյն բառերը առօրեայ մտքով գործ ածւելիս փոփոխութեան են ենթարկւել, իսկ եկեղեցական նշանակութեամբ՝ պահպանւել են զրաբառ ձևը:

Ազուլիսի բարբառն ընդհանրապէս բաւական կենդանի է և բնուրոյն. հին ժամանակ նրա բռնած տեղը Գողթն էր կոչւում և յայտնի էր իր «երգ ու գինով». այնտեղ դեռ երկար ժամանակ հնչում էին հայ հեթանոս կենսակրթութեան երգիչաշուղները երգերը, որոնց սրբեց տարաւ քրիստոնէութեան ու սլարսկա-թաթարական ազդեցութեան ալիքը: Զոկերն, այդ զաւառի բնակիչները, վաղուց ձեռնարկող ունևոր էին, աչքի էին ընկնում միշտ իրանց ճկուն բնաւորութեամբ և ունակ էին դէպի քաղաքակրթութիւնը: Հեաաքրքրական է այն, որ զով կանայք շատ աւելի նախնական ու մաքուր լեզուով են խօսում, քան տղամարդիկ — նշան, թէ հայուհին որքան քիչ շփում ունի արտաքին աշխարհի հետ <sup>1)</sup>:

VI *Ջուղայի* բարբառը, որով խօսում են Նոր-Ջուղայում (Պարսկաստանում), Սպահանում և Հնդկաստանում. սա էլ հակումն ունի հնչիւնները փոփոխելու, պահպանել է շատ զրաբառ ձևեր և երբեմն էլ ձևեր, որ հնութեան կողմից աւելի հին են որքան զրաբառը:

<sup>1)</sup> Ընդհանրապէս կանայք աւելի են պահպանում լեզուն. շատ տեղեր, ուր տղամարդիկ օտար լեզուով են խօսում, կանայք շարունակում են հայերէն խօսելը:

VII *Թիֆլիսի* բարբառը, որ ուսումնասիրել է բժ. Գ. Հախվերդեանը և հաւաքել է Սայաթ-Նովալի Թիֆլիսի բարբառով երգերը, նաև շատ ուրիշ երգեր, որ դեռ չեն հրատարակւած: Բացի այդ, Թիֆլիսի բարբառով են նաև Սունդուկեանցի կատակերկերը: Թիֆլիսեցիք եկւորներ են. նրանց առաջին դաղթն եղել է VI-դ., երկրորդը XII-դ., հաւանօրէն Անիից: Նրանք չեն պահպանել իրանց նախկին լեզուի ձևերը: Երրորդանգամ դաղթողներն եղել են Երևանի շրջանից ու եկել են XVIII-րդ դարում. սրանք համարեա չեն ձուլւել առաջինների հետ, հաստատւած են քաղաքի հաւաքար թաղում և աւելի կամ պակաս պահպանել են իրանց բարբառը (Տոմսոն): Թիֆլիսի բարբառը քիչ է փոխւել. զրաբառի համեմատութեամբ նա քիչ զարտուղութիւններ ունի և համեմատաբար անարատ է մընացել՝ միւս բարբառների հետ քիչ շփում ունենալու շնորհիւ: Արաց լեզուն ազդել է թէ համաձայնութեան և թէ հնչնաբանութեան վրայ, մտցրել է ջ ձայնը (որ հանդիպում է վրաց ծայցո = գորա բառում): Միւս փոփոխութիւններից՝ օ-ի տեղ երևում է ու, է-ի տեղ ի և այլն: Բացի վրացական ասորը, այս բարբառի բառգիրքը հարուստ է թուրքական, սլարսկական և ռուս բառերով: Ներկայումս այս բարբառը նկատելի կերպով մեռնում է. ինչպէս առաջ նրան զուրս էր մղում վրացերէնը, այժմ մի կողմից նրա տեղը բռնում է հայ զրական լեզուն, միւս կողմից ռուսերէնը:

VIII *Տաճկահայաստանում* արևելեան խմբին է պատկանում *Վանի* բարբառն ու նրան մերձակայ՝

IX *Մշինը*. սա բռնում է Մշի գաշտը — հին Տարօնը: Ինչպէս առաջ ցոյց էր տալիս Գ. Հախվերդեանցը և այժմ հաստատում է Լ. Մսերեանց հիմնւելով լեզուագիտական և պատմական փաստերի վրայ, Մշի բարբառն եղել է զրաբառի հիմքը: Այդ բարբառն այժմ կորցրել է իր երբեմնի նշանակութիւնը և հարստութիւնը: Մշի գաշտի պատմութիւնը ժամանակակից հայ նահատակագրութեան ամենատխուր էջերից մէկըն է: Անվերջ հալածանքի ու թշւառութեան ենթակայ, մըշեցին անկարող էր ստեղծելու որևէ կենսակրթութիւն կամ

Հանրասիրութիւն: Նա իր բառգիրքը հարստացրեց այն տեսակ բառերով միայն, որ նրա անել վիճակն են պատմում, նրան իր սիրուն հայրենիքից քշող վիճակը: Ժողովրդական բանահիւսութեան նմուշներից այդ բարբառով յայտնի է Գաւիթ Սասունցու մասին եղած զրոյցը, որ հրատարակել է Սրուանձտեանց Գարեգին հայիսկոպոսը: Այդ բարբառը սիրում է բաղաձայների խմբերը մերել, պարզացնել. օտար լեզուներից մտել են արար և պարսիկ բառեր օսմանացած ձևով (Մսերեանց):

Սրանք են հայ արևելեան բարբառախմբի զլիաւոր ճիւղերը:

Հարևանցի լիշենք արևմտեան խմբի բարբառները: Նրանց բռնած տեղը շատ դար է արդէն ինչ պոկւել է արևելեան Հայաստանից: զարմանալի չէ, որ արևմտեան խումբը արևելեանից ասորեր շատ զճեր է ձեռք բերել: Մի քանի բարբառներ այնքան են տարբերում, որ կովկասցուն լիովին անհասկանալի են:

Արևմտեան բարբառներից լիշենք այնքան զիւրալուր Պուլսի բարբառը, որ արևմտեան գրական լեզուն է, սկզբում ազգւած տաճկական լեզուից, սպա՛ եւրոպական քաղաքակրթութեան հետ շփուելուց լետոյ՛ Քրանսիական լեզուից: Նրան մօտ է *Նւդուկիոյ* բարբառը, որ լիքն է կերպաւոր ձևերով ու արտալայտութիւններով: *Կիլիկիայի* և վէս գէլթունցոց *Մարաշի* բարբառը, *Սեբաստիայի*, *Խարբերդի*, և *Քրդստանի* լեռնցի հայերի բարբառը—կարճ ու սեղմ, որ հակիրճ լինելու համար շատ ձայնաւորներ է բաց թողնում: *Նրզնիայի*, *Էրզնուրուի* և նրա ոտ ու նրանից շատ չըհեռացած *Ախալցխայի* աններդաշնակ բարբառը կոկորդալին յաւելումներով. *Ալաշկերտի* և *Ասլանբէզի* բարբառը, որ միտումներ ունի գրական լեզւին մօտենալու, մի բան, որ արդիւնք է Ասլանբէզի լայն կենսական շփումների: Յիշենք նաև Անտիոքի մօտ եղած և միւս հայերին անհասկանալի *Բէյլանի* բարբառը:

Եւրոպայում հայ բարբառներ կան Հունգարիայում, Լեհաստանում և Բուկովինայում (Սուշաւայի բարբառը). նաև Ղրիմիին և Նոր-Նախ ջլեանիներ: Բոլորն էլ համարեա գաղթել

են Ղիրակից և բաւական լաւ պահպանել են իրանց լեզւի ձեւերը: Այս էլ կալ, որ բացի նախջլեանցիներն ու բուկովինցիները, մնացածները մոռանում են իրանց լեզուն և միայն վերջին տարիների զէպքերը նրանց մէջ ցանկութիւն դրին նորից մօտենալ հայրենիքին ու սովորել նրա լեզուն: Նոր-Նախջլեանցոց լեզուն չընայած որ լիքն է ամեն տեսակ օտարաբանութիւններով, բաւականին կենսունակ է: Ունեւոր նախջլեանցին ուրախ ու ընկերական մարդ է. նա իր լեզւին տւել է աշխույժ, խօսելուն անպատմելի կատակող շեշա, ստեղծել է անթարգմանելի բառերի մի բառազիրք, որով թիֆլիսցուն է լիշեցնում: Այդ բարբառով են դրած Ռ. Պատկանեանի պատմածքները: Ղրիմցոց լեզուն նման է սրանց լեզւին. հետաքրքրական առանձնայատկութիւնը ը տառը ժ-ի կամ շ-ի նման արասանելն է:

#### IV

Այսպէս բաժան-բաժան էր հայ լեզուն, երբ XIX-դ. զարթնեց ազգային զիտակցութիւնը: Պարզ է, որ երբ բարբառներն այդքան շատ էին ու երկիրն էլ քաղաքականապէս բաժանւած—ամենքին դոհ անելը շատ դժւար էր: Աերջնականապէս վճռւած էր, որ զբարբառն անպէտք է գրական նպատակներին: Նոր լեզւի հիմքը կազմեց ժողովրդի լեզուն. բարբառներից մէկը նոր գրական լեզւի խմորը դարձաւ: Այդ տեսակէ զէպքում ընտրութիւնը ոչ միայն մարդու ազատ խելքի կտրածին է նայում, այլ մանաւանդ հպատակում է իրականութեան պայմաններին: Այն լեզուն միայն կարող է տարածւել, որ համապատասխան ներքին արժանիքներ ունի և ժողովրդի կեանքի շրջանառութեան մէջ ազդու կերպով մասնակցում է:

Խոշոր գեր ունի և տաղանդը. իր տարածւած երկերով նա առաջ է քաշում այս կամ այն բարբառը: Տոսկանայի բարբառը, որով Պետրարկան իր սոնէտներն էր գրում, իտալական գրական լեզուն դարձաւ: Երբեմն լեզւի վիճակը որևէ պատմական զէպք է վճռում. այսպէս օրինակ՝ գերմանական վերափոխութիւնը առաջ քաշեց Սաքսոնիայի դիւանական լեզուն. այդ լեզուով թարգմանեց Աւետարանը:

Հայերն այդ տեսակի գէտք ու հանձար չեն ունեցել. կարելի է այդ մտքով շատ բարի բան ցանկանալ. բայց քանի որ ցանկացածի կատարելը հարցական է, պէտք է դառնալ իրականութեան: Մենք հանդիպում ենք տխուր երևույթների. քաղաքական բաժան զրութեան շնորհիւ մեր կեանքի ընթացքը մի տեսակի չէ, այլ մի քանի տեսակի. կեանքի մէջ իսկ հանդիպում ենք հանգամանքների, որ կովկասում ու Պոլսում նոյն լեզուն հաստատելն անկարելի են դարձնում: Գժար է երևակայել, որ մեր՝ կովկասի գրական լեզուն, որի յաջողութիւնը մեր կողմերում այնքան օրգանական է, կարողանար տարածելու քէ ստանալ նաև մեր սահմաններից դուրս: Չունենք նաև մի ակադեմիա, որ կարողանար փոխադարձ զիջումներ հնարել ու իրականացնել, եթէ միայն այդ կարելի բան է, և Հայերի օրէցօր աճող «արևելեան» ու «արևմտեան» դառնալու առաջն առնէր: Այդ մտքով մի իրադործելի ցանկութիւն կարելի է արտայայտել. կարելոյն չափ բազմաթիւ ընթերցողների հասկանալի լինելու համար հարկ չըկայ այս կամ այն բարբառին խիստ մօտիկ լեզու դործ ածելու. պէտք է ձեռք քաշել դաւառական հայրենասիրութիւնից. այդ բանը ջլատում է լեզուն: Օրինակ՝ Պարոնեանը հէնց նրա համար մեծ ժողովրդականութիւն ստացաւ, որ նրա լեզուն ամենքին հասկանանալի էր: Եւ ընդհակառակն, Պուօշեանցին Պոլսում շատ քիչ են ձանաչում: Իսկ թէ այդ տեսակի փոխադարձ ծանօթութիւնը որքան օգտակար է լեզուի միացման համար, ցոյց է տալիս այն առատ փոխառութիւնը, որ կովկասցի գրողներն անում են Պոլսի հարուստ բառագրքից:

Յետոյ, բարբառն ընտրած է. գրականօրէն մշակւած. ներկայումս տասնեակ հազարներով հայեր կան, որ խօսում են դաւառաբարբառով և գրական լեզուն չեն հասկանում. բանն այստեղ շատ աւելի դժուար է: Այդ բարբառների հետ ծանօթանալն իսկ դժուար է, ուր մնաց որ յարմարցնես քո լեզւին: Այստեղ ահա հասկանալի է դառնում Պոլսի գրողների գրաբառին մօտենալու ունեցած միտումը—այդ հին լեզուն գոնէ ընդհանուր է թէ այստեղ և թէ այնտեղ: Ինչ խօսք որ փոխառում-

ները պիտի չափաւոր լինեն, թէ չէ մարդ կարող է միայն Միլիթարեաններին հասկանալի դառնալու փտանդին ենթարկել: Յետոյ, զրարաւի լուրջ ուսումնասիրութիւնը կազատի մեր ոճը օտար լեզուի ձևով իրաբարեւոյ: Պտարներից առանձնանալն, ինչ խօսք որ անմիտ բան է, թէև մեր լեզուի կազմը հէնց դրա համար էլ դառնում է ֆրանսիական, թաթարական կամ ռուսական: Այդ չարիքից խուսափելու համար, ինչպէս ենթադրում է Հ. Այտրնեանը, պիտի չէզոքացնել այդ ազդեցութիւնը գասական գրաբառն ուսումնասիրելով. գրանից լեզուն կըստանայ ոյժ ու հարստութիւն, կըդառնայ ճիւղն ու ինքնորոյն:

Աւելի քիչ իրադործելի է երևում Հ. Այտրնեանի միւս խորհուրդը, եղած հայ լեզուից լեքը բռնելով կազմ և բառ փոխառնել: Արտահետե միայն այն լեզուն կարող է արտայայտել ազգային միութեան գաղափարը ժողովրդի բարոյական և նիւթական կեանքի մէջ, որն առնում ձուլում է ժողովրդի լեզուի բոլոր տարրերը: Քանի այդ տարրերը չեն միացած՝ մեր գործը ոչ թէ ազգերի, այլ ցեղերի հետ է: Մենք արդէն ցոյց տւինք թէ, դժբախտաբար, որքան քիչ չափով կարող ենք մենք այդ բանը գլուխ բերել:

Աերջացնում ենք մեր յօդւածն այն յոյսով, որ լաւագոյն ապագան հնար կըտայ հայ բաժան իմբերին աւելի մօտենալ մէկ-մէկու, աւելի լաւ ծանօթանալ ժողովրդի լեզւին ու միացնելու այդ լեզուն մի ընդհանուր կենսակրթութեամբ: Այն ժամանակի գուցէ երևալ Պուշկինի նման մի ոճաբան—տաղանդ, որ հայերին տայ մի երկ գրւած այնպիսի լեզուով, որ դուր են այժմ սրանում:


Իսկ ժամանակիս գրական լեզուն, պիտի խոստովանենք, յարմարցրած է կենսակրթութիւնը իւրացնելուն, հասկանալի է և բաւերով հարուստ, բայց ոյժի ու ինքնուրոյնութեան կողմից դեռ շատ բան է պակաս: Նաև դժուար է առայժմ բոլոր հայերի համար ընդհանուր լեզու ստեղծելու մասին մտածելը:

Այդ ապագայի դործ է:

Գ. Խատիսեան

### ՀԱՅՈՅ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ

#### ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԵԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵԹՕՒԸ



I

Կերջին ժամանակները Հնադիտութիւնն ու ազգագրութիւնը մեծ նշանակութիւն են ստացել, որպէս զըլխաւոր միջոցներ ժողովրդի կենցաղը, հասարակական կեանքը, հոգեկան կազմը, մի խօսքով՝ նրա կենսակրթութիւնն (culture) ու կենսորնդունակութիւնը որոշելու:

Այն առաջադիմութիւնը, որ արել է Եւրոպայում փշեայ դիտութիւնների ուսումնասիրութիւնը, ապացոյց է դրան: Մենք էլ ունինք այժմ բաւականաչափ մասնագէտներ, մեծ քանակութեամբ ազգադրական և Հնադիտական նիւթ, մի քանի նոյն իսկ մասնագիտական պարբերական հրատարակութիւններ: Սակայն մի բան մենք միանգամայն անտես ենք արել. անհնարին է ուսումնասիրել ժողովրդի կենցաղի մի որևէ կողմը՝ անսխալ միևս կողմերից, որովհետև նրանք սերա կապ ունեն միմեանց հետ և ազդում են միմեանց վրայ փոխադարձարտը: Հետևապէս, չի կարելի միայն Հնադիտութեամբ ու ազգագրութեամբ սահմանափակել. ու-

սումնասիրութեան առարկայ դարձնելու է մեր ժողովրդի կենսագրութեան բոլոր տարրերը, նրանց փոխադարձ ազդեցութիւնը մեր նախնի հասարակական միութիւնների աճման ու զարգացման վրայ, դրա պատճառները, ընթացքն ու հետևանքները: Եւ այս տեսակէտից առանձին ուշադրութեան է արժանի իրաւունքը և մասնաւորապէս – սովորութեան իրաւունքը:

Ի՞նչ դեր է ունեցել իրաւունքը ժողովրդի կենսակրթութեան պատմութեան մէջ:

Այն ժամանակից, երբ մարդիկ ոտք են դրել հասարակական կեանքի շրջանը, երբ կազմել է մարդկային առաջին միութիւնը, գոյութիւն ունի և իրաւունքը, որպէս հետևանք միևնոյն հասարակութեանը պատկանող անդամների փոխադարձ յարաբերութիւնների և, միևնոյն ժամանակ, որպէս ղեկավարող այդ յարաբերութիւնների: Այդպիսով՝ իրաւունքը քաղաքակրթութեան ամենաստորին աստիճաններից՝ սերտ կապւած է կեանքի և նրա արտադրութիւնների հետ:

Սկզբում իրաւունքը չէր զանազանում բարոյականութիւնից և վերջինի նման կրում էր կրօնական դրոշմ: Պատճառը սլարդ է. իրաւունքը երևացել է այն ժամանակ, երբ կազմել է մարդկային առաջին միութիւնը, որի նպատակն է եղել ընդհանուր ոյժերով վարել գոյութեան կռիւը. այդպիսով՝ սկզնական միութիւնները ներքուստ ներկայացնում էին խաղաղ շրջաններ, որոնց անդամները, անտարակոյս, պիտի զգային ինչպէս միմեանցից կախում ունենայր, այնպէս և իրանց նպատակների նոյնանման լինելը: Եւ ահա իրաւունքը, որ որոշում է նրանց կախումը մի աւելի բարձր ոյժից, քան անձնական կամքը, մի ոյժից, որը նպատակին հասնելուն է նպաստում, բնականապէս պիտի ունենար միտովք բնաւորութիւն: Նախնի մարդու վերաբերմունքը դէպի իրաւունքը պիտի նմանէր նրա վերաբերմունքին դէպի կրօնը: Ո՞րքան ճիշտ է այդ:

Աներկբայելի է, որ կրօնի նշանակութիւնը նախնի մարդու կեանքում շատ մեծ է եղել. այն ժամանակաւ մարդու բոլոր զազալարները, բոլոր ձգտումներն ու հասկացողութիւնները, մի խօսքով՝ նրա ամբողջ աշխարհայեցողութիւնը ար-

տայայտել է կրօնով: Ամեն մի երևույթ, որի ճնշումը զգացել է իր վրայ նախնի մարդը, դարձել է նրա կրօնի տարրերից մեկը. այդ տարրերի թւին է պատկանում և իրաւունքը, որի ուժը մարդը զգացել է հասարակական կեանքը կազմելու առաջին օրերից. հետևապէս՝ իրաւունքի նշանակութիւնը նախնի հասարակական կեանքում եղել է շատ բարձր:

Զարգանալով մարդը հետզհետէ թօթալիել է կրօնական կապանքները, որոնցով կաշկանդուած էր նրա ամբողջ էութիւնը. սոսկ կրօնական տարրերը թուլանալով տեղ են տւել աւելի կենտական զործօնների. իրաւունքն էլ, որպէս այս վերջինների թւին պատկանող, նոր ուժ է ստացել. զարգանալով հասարակական կեանքի ընդհանուր զարգացման հետ, նա աճել է ներքուստ՝ ազդի իրաւաբանական յարաբերութիւնները զարգանալու համեմատ, արտաքուստ՝ դրացի ազդերի սովորութիւնների ազդեցութեան տակ:

Ուրեմն, մի որևէ ազդի նախնի հասարակական կեանքը, նրա աստիճանաբար զարգանալը, անհատական առանձնատեսակութիւնները, մի խօսքով՝ *դէմքը որոշելու գլխաւոր միջոցների շարքում՝ դասելու է ևս այդ ազդի իրաւունքը:*

Ինչպէս տեսանք, իրաւունքի գանազան ձևերը գոյանում են կեանքի այս կամ այն պահանջների համեմատ. նրանց գոյացման ու փոփոխման վրայ է ապէս ազդում է կեանքի ամբողջ կազմը: Այս ինչ կերպ է արտայայտուած իրաւունքը իրական կեանքում: Իրաւունքի նախնական ազդերը կոչում է *սովորութեան իրաւունք*: Երկար ժամանակ մարդիկ իրանց փոխադարձ յարաբերութիւններում առաջնորդուած էին մի շարք սովորութիւններով, որ մշակւել ու հաստատուել էին միևնույն իրաւաբանական զործողութիւնների շարունակ կրկնելով: Այդ սովորութիւններն են, որ չետոյ կազմում են սովորութեան իրաւունքի կանոնները, և որ սկզբում բերանացի էին անցնում մէկ սերնդից միւսը, իսկ չետոյ սկսեցին ամփոփւել ժողովածուների մէջ: Այդպիսի իրաւաբանական սովորութիւնների ժողովածուներ են հին ժամանակաւ բոլոր դատաստանադրքերը, հռոմէական «XII տախտակները», ղերմանական «Leges bar-

barorum», մեր «Մխիթար Գօշի դատաստանադրքը», ռուսաց «Русская правда»-ն և այլն: Բայց այդ ժողովածուները լիովին չէին ամփոփում բոլոր սովորութիւնները. շատ սովորութիւններ չէին մտնում ժողովածուի մէջ, պահպանելով սակայն իրանց նշանակութիւնն ու զործողութիւնը: Այդ *գրի չանցրած սովորութեան իրաւունքն է*: Քաղաքացիական կեանքը զարգանալու համեմատ, երբ զօրանում է և պետական իշխանութիւնը, սովորութեան իրաւունքի առաջնական նշանակութիւնը ընկնում է, և նա տեղ է տալիս իրաւունքի մի այլ ազդերի — *օրէնքին*: Գրերի այս փոփոխման պատճառն այն է, որ օրէնքը իրաւունքի արտայայտման աւելի կատարեալ ձևն է. նա արտայայտուած է ճիշտ և որոշակի կերպով, մինչգեւ սովորութիւնները, ապրելով ժողովրդի համոզմունքի մէջ, ներկայացնում են մութ և անորոշ կանոններ, այն էլ բարոյական ու կրօնական կանոնների հետ խառը: Այդպիսի կանոնները ժամանակի ընթացքում, ի հարկէ, չեն կարող բաւարարութիւն տալ շարունակ բարդող հասարակական կեանքին և այդ պատճառով նրանք ղիջանում են իրանց տեղը օրէնքին:

Սակայն ինչով բացատրել սովորութեան իրաւունքի և օրէնքի միատեղ գոյութիւն ունենալը: Որքան էլ կատարեալ լինի օրէնքը, որքան էլ հեռատես լինի օրէնսդիրը, դարձեալ չի կարող ի նկատի առնել քաղաքացիական բոլոր յարաբերութիւնները: Յետոյ սովորութեան իրաւունքը ուղղակի բղխած լինելով կեանքից, աւելի ճկուն, աւելի ընդունակ ու յարմար է զործողելու ամեն մի առանձին դէպքի համար, քան օրէնքը. սովորութեան իրաւունքը կարող է միշտ, պէտք եղած ժամանակ, նոյն իսկ փոփոխութեան ենթարկւել: Աերջապէս՝ յայտնի է, որ օրէնքը պիտի այնպէս կազմուած լինի, որ համապատասխանի այս կամ այն ժողովրդի ազգայնական ու կենսակրթական առանձնատեսակութիւններին: Սակայն ինչպէս յարմարեցնել մի բնդհանուր օրէնք մի այնպիսի տէրութեան ազգաբնակչութեան, որ բաղկացած է հազար ու մի տեսակ խառնիճազանձ ազգութիւններից, որոնցից ամեն մէկը ունի իր առանձին դէմքը:

Այդ դէպքում օղնութեան է հասնում սովորութեան իրաւունքը: Գրանով պիտի բացատրել և մեր՝ հայերիս մէջ սովորութեան իրաւունքի պահպանելը, որ թէև հետզհետէ դուրս է վանում օրէնքի ընդհանրանալովը, սակայն դեռ կան այնպիսի շրջաններ, որոնցում նրա ներգործութիւնը կատարեալ է:

Կրկնենք համառօտապէս գլխաւոր եզրակացութիւնները. ամեն մի ազգի կեանքի ընտանեկան, քաղաքական և այլ կողմերը աջողութեամբ կարելի է պարզել այդ ազգի իրաւունքը ուսումնասիրելով: Արովհետև իրաւունքի արտայայտման գլխաւոր ձևը—օրէնքը աւելի հեռու է կեանքից, քան սովորութեան իրաւունքը և բացի այդ՝ տիրապետող ազգի օրէնքները ընդհանուր են և միևս հպատակ ազգութիւնների համար, այդ պատճառով մի որևէ առանձին ազգի դէմքը որոշելու համար հարկաւոր է ուսումնասիրել նրա սովորութեան իրաւունքը:

Այն կարևոր նշանակութիւնը, որ ունի սովորութեան իրաւունքը, որպէս իրաւունքի գլխաւոր աղբիւրներից մէկը եւ որպէս մի ազգի անցեալը, նրա քննարկութիւնը պարզելու միջոց, ստիպում է մեզ լիջել այստեղ գիտնականների հայեացքները այդ հարցի վերաբերմամբ: Սկսած այն ժամանակից, երբ եւրոպացի գիտնականները իրաւաբանական գիտութիւնները գրին ուսումնասիրութեան պատշաճաւոր հողի վրայ, սովորութեան իրաւունքը արգարացի կերպով բռնել է մի պատկառելի տեղ: Սկսած այդ ժամանակներից սովորութեան իրաւունքը բացատրելու որոշել է հազար ու մի տեսակ: Հին վարդապետութիւնը համարում էր ամբողջ իրաւունքը պետութեան օրէնսդրական գործունէութեան հետևանք, իսկ սովորութեան իրաւունքը հետևանք գոյութիւն ունեցող սովորութիւնների, որոնց սրբագործումը կախած էր նոյնպէս օրէնսդրի կամքից: Սակայն Սալինյի և Պուխտա գիտնականներից յետոյ լիշեալ հայեացքը միանգամայն փոխւեց և տեղի տւեց այդ երկու գիտնականների բացատրութեանը, որ մինչև վերջին ժամանակները տիրապետող էր համարում: Սովորութեան իրաւունքը՝ նոր վարդապետութեան ասելով՝ ժողովրդի իրաւական համոզմունքների արտայայտութիւնն է. նա ծառայում է որպէս սկզբնա-

կան աղբիւր իրաւունքի. նրանից են գոյանում և իրաւունքի բոլոր լետադայ ձևերը: Այս վարդապետութեան առաւելութիւնը ակնհայտ է. չիրաւի, հինը՝ ասելով, թէ սովորութեան իրաւունքը յաջորդում է օրէնսդրի կամքից առաջացած իրաւունքին, առաջինին մի տեսակ արեւստական ծագում էր վերագրում, իսկ նորը՝ ընդունելով, որ սովորութեան իրաւունքի ծագումն ու վարդապետը օրգանական է, համարում է այդ իրաւունքը ընդհանուր իրաւունքի ինքնուրոյն և օրէնքից ոչ պակաս կարևոր աղբիւր: Խոստովանելով նոր վարդապետութեան առաւելութիւնը, չի կարելի միևնոյն ժամանակ մատնացոյց չանել նրա թերութիւնները: Սալինյի, Պուխտա և նրբանց հետևողները, համարելով սովորութեան իրաւունքը անմիջական արտայայտութիւն ժողովրդի համոզմունքի, միանգամայն անտես են առնում իրական սովորութիւնը, այն գործադրութիւնը, որ նա ունի կեանքում և այն նշանակութիւնը, որ երևում է իրաւունքի գոյացման խնդրում: Գուրս է գալիս, որ սովորութեան իրաւունքը, որպէս համոզմունք, կարող է գոյութիւն ունենալ անկախ իրական սովորութիւնից: Յիշեալ վարդապետութեան թերութիւնները միայն վերջին ժամանակները լրացրին գերմանացի գիտնականները (Իհերինգ և ուրիշները). սովորութեան իրաւունքը, սրանց ասելով ժողովրդի իրաւական համոզմունքների այնպիսի մի գումար է, որ գոյանում ու արտայայտում է միևնոյն իրաւաբանական գործողութիւնների շարունակ զարգացմամբ եւ գործադրութեամբ իրական կեանքում: Այստեղ էլ մի բան ի նրկատի չի առնւած, մոռացութեան են տրւած իրաւաբանական գաշնադրերը և գատատանական վճիռները, որ սովորութեան իրաւունքից պակաս հին չեն. պտտմութեան հետագնին ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ շատ հին ժամանակներում ինչպէս հաստատաբանակ, այնպէս և թափառական ազգերի մէջ հասարակական ժողովները մեծ նշանակութիւն ունէին մի կողմից—իբրև գլխաւոր օրգան գատատանի և կառավարութեան և միևս կողմից—սովորութեան իրաւունքը մշակելու: Այդպիսով, սովորութեան իրաւունքը կազմում ու հե-

տղհետէ մշակուած է հասարակական ժողովներում, որոնց հեղինակաւոր անդամները՝ քուրմերը, զօրապետները, ծերերը կայացնում են ամեն մի գէպքի համար առանձին որոշում, և այդ որոշումը դառնում է տիպար լիտագայ նոյնանման որոշումներ: Ուրեմն սովորութիւնը մի ընդհանուր, առաջուց հատուածաձ պարտաւորիչ օրէնք չէ, ինչպիսին է իրաւաբանական կանոնը, այլ միայն առանձին գէպքերի վերաբերմամբ կայացրած որոշում, որ թէև շարունակ կրկնելուց ընդհանրանում է, սակայն պէտք եղած ժամանակ ենթակալ է և փոփոխութիւններ:

## II

Գառնալով հայոց սովորութեան իրաւունքը ուսումնասիրելու հարցին, անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել ընդհանրապէս հայոց իրաւունքի վերաբերմամբ:

Հայ ազգը իր աշխարհագրական դիրքի շնորհիւ, գրկած է եղել յարատև ինքնուրոյն քաղաքական զարգացումից: Լինելով դուռը Արևելքի և Արևմուտքի մէջ, նա պիտի իր բոլոր ընդունակութիւնները դարձնէր զրոյից ներս: Խուժող անկոչ հիւրերի առաջն առնելու վրայ, այնպէս որ ներքին զարգացման մասին մտածելու հնարաւորութիւն անգամ չունէր: Ազատւելով մէկի ձեռքից, Հայաստանը հազիւ թէ կարողացել է ազատ շունչ քաշել, և ահա դալիս է մի ուրիշը և աւերում, ջնջում է այն, ինչ առաջինը ողջ էր թողել. այդպիսով, Հայաստանում հետզհետէ իշխել են պարսիկները, հռոմայեցիք, բիւզանդացիք, նորից պարսիկները, լիտոյ արաբները, մի որոշ ժամանակ Քաղաքատունիք, սակայն դարձեալ սելջուկներն ու մօնղոլները, և վերջապէս երկիրը բաժանել է պարսիկների և տաճիկների մէջ:

Քաղաքական այսպիսի անմիտիթար դրութիւնը չէր կարող, ի հարկէ, ազդեցութիւն չունենալ ժողովրդի կենսակրթութեան վրայ: Հայաստանի քաղաքական անաջողութիւնը սերտ կապ ունի կենսակրթութեան բոլոր արտայայտութիւնների հետ՝ զբաղանքների, զեղարևոտի իրաւունքի: Մեզ այ-

ժրմ հետաքրքրում է միայն վերջինը. տեսնենք, ինչ պայմաններում է գտնուել հայոց իրաւունքը: Հէնց սկզբից աչքի է ընկնում մի հանգամանք. հայոց իրաւունքը չի ունեցել ինքնուրոյն, բնական զարգացում: Ամեն մի նոր տիրապետութեան ժամանակ նա պիտի թողնէր իր բնական աճումը և ենթարկւէր իշխողի ազդեցութեանը. հետևապէս հայոց իրաւունքի էւօլյուցիայի մասին խօսք անգամ չի կարող լինել: Քացի արտաքին աննպաստ պայմաններից, պիտի ի նկատի առնել Հայաստանի և ներքին քաղաքական կազմը: Հայոց իրաւունքի վրայ մեծ ազդեցութիւն է ունեցել նախարարութիւնը. ա) նախարարների կախումը կենդրոնական իշխանութիւնից շատ թույլ էր, համարեա միայն անւանական, այնպէս որ նախարարներից ամեն մէկը կառավարում էր իր երկիրը տեղական օրէնքներով. այդպիսով, Հայաստանում չէր կարող գոյութիւն ունենալ մի որոշ, ընդհանուր, բոլորի համար պարտաւորիչ օրէնսդրութիւն. բ) նախարարութիւնը կրում էր իր մէջ աւատական բողոքներ, այնպէս որ խաչակրաց սրշաւանքների ժամանակ հայերը, շիւեղով Արևմուտքի հետ, հեշտութեամբ իւրացրին Ֆրանկների աւատային կանոնադրութիւնները, որոնք կենսական հողի վրայ հիմնւած չլինելով, թէև երկարատև գործածութիւն չունեցան, սակայն մի որոշ ժամանակով արդելեցին հայոց իրաւունքի զարգացումը: Այսպէս ուրեմն հայոց ինքնուրոյն իրաւունքից - մինչև XII-րդ դարը - մեզ բան չի հասել, եթէ չըհաշուենք Յովհաննէս թագաւորի (երևի Յովհաննէս - Սմբատ Քաղաքատունի, 1020 - 1040 թ.) օրէնքը կիրակին սուրբ պահելու մասին: XII դարի վերջում Ներսէս Լամբրոնացին Արիկիայում կազմեց օրէնքների մի ժողովածու, որը լոկ քաղաք լինելով Ֆիւզանդական իրաւունքից, չէր կարող բաւարարութիւն տալ հայերի կենսական պահանջներին: Քայց ահա 1184 թիւն երևան է գալիս Մխիթար Գօշի Գատատանապիրքը: Ինչպէս արգարացի կերպով նկատում է Մ. Աովալուսիլի, Հռոմ-Ֆիւզանդական իրաւունքի ծաղկումը (Յուստինիանոսի ժամանակ) առանց ազդեցութեան չի մնում հայերի վրայ. այդ ժամանակից սկսում է ձգտում գէպի լիշեալ

իրաւունքը: Փորձ է անուժ միացնել այդ իրաւունքը Հնուխտեայ և տիեզերական ժողովների կանոնների և ժողովրդի սովորութեան Հետ. այդ փորձի Հետեւանքն է Մխիթար Գօշի Գատաստանագիրքը: Յիրաւի, այդ Գատաստանագրքում մենք գտնում ենք և եկեղեցական օրէնք, և աշխարհական, և մովսիսական, և Հռոմ-Բիւզանդական: Գօշի ժողովածուն, շնորհիւ իր ներքին յատկութիւնների, որոնց մասին չետոյ կրխօսենք, մեծ յաջողութիւն ունեցաւ. 1265 թւին Արիկիայում Հեթում թագաւորի որդի Սմբատը թարգմանեց լիշեալ Գատաստանագիրքը Արիկիայոց բարբառով, և այդ ձևով նա ընդունեց Արիկիայում. թաթար խաները թաթարերէն թարգմանել տրւին. 1676 թւին վրաց Ախթանդ թագաւորը, վրացերէնի թարգմանելով, կցեց իր օրէնագրքին, Եկատերինա Բ ուստայ կայսրուհին ուստերէնի թարգմանել տեց Խրիմի Հայերի Համար: 1280 թւին Գալիցիայի Լեմբերգ քաղաքի Հիմնադիր Լեոն Գանիլովիչի հրաւերքով այնտեղ գաղթեցին մի քանի Հաղար Հայեր, տանելով իրանց Հետ և մի օրէնքների ժողովածու, որ կազմած էր Գօշի Գատաստանագրքի ազդեցութեան տակ: Կաղիմիր Ք լեհացոց թագաւորը, Լեմբերգի Հայերին զանազան արտօնութիւններ տալով (1367 թ.), թող տեց նրանց կառավարել սեպհական օրէնքներով. 1519 թւին Միգիլմուսդ Ա. թագաւորը վերջնականապէս վաւերացրեց Լեմբերգի Հայոց Գատաստանագիրքը:

Այս Համառօտ պատմական ակնարկից Հայոց զրաւոր իրաւունքի վրայ սրբոց երևում է, որ մեր սովորութեան իրաւունքը ուսումնասիրելու հարցում նշանակութիւն ունի միայն Գօշի գատաստանագիրքը: Յիրաւի, ինչպէս տեսանք, մինչև այդ գատաստանագրքի երևան գալը մենք չենք ունեցել ոչ մի ինքնուրոյն օրէնագիրք, իսկ նրանից չետոյ կազմածները եղել են նրա ազդեցութեան տակ: Հետեւապէս, Գօշի գատաստանագրքին նախորդող օրէնագրքերում չենք կարող փնտռել ազգային իրաւաբանական սովորութիւններ, ոչ էլ այդ օրէնագրքի Հետքերը կարող ենք գտնել իրական կեանքում, որովհետև նրանք, արևեստական կերպով տեղափոխւած լինելով Հայ-

կական Հողի վրայ, յարատև դորձածութիւն չեն ունեցել: Ուրեմն Հայոց սովորութեան իրաւունքը ուսումնասիրելու հարցում միակ ուշադրութիւնը դարձնելու է Մխիթար Գօշի գատաստանագրքի վրայ: Սակայն ինչ կերպ կարելի է օգտել այդ գատաստանագրքից, քանի որ նա կազմւած է ոչ զուտ Հայոց իրաւունքի Հիման վրայ. նրա մեծ մասը կազմւած է օտար իրաւունքների ազդեցութեան տակ, շատ տեղեր նոյնիսկ փոխ են առնւած: Ուշադրութեամբ զննելով մեր գատաստանագիրքը, մասնագէտը անտարակոյս կը գտնի նրանում և Հռոմէական, և բիւզանդական, և մովսիսական օրէնքների ազդեցութիւն. ուրեմն ուսումնասիրութեան գործը ուղիղ վարելու համար անհրաժեշտ է առաջնորդել Համեմատական ոճով, այսինքն ինքնուրոյնութեան տեսակէտից կասկածելի տեղերը բաղդատել օտար Համանման օրէնքների Հետ: Այդպիսով զուած կըլինի այն, ինչ որ խկապէս ինքնուրոյն է կամ ժողովրդի սովորութիւններից առնւած: Այդ բանը ստուգելու մի այլ միջոցն էլ սովորութեան իրաւունքը ուսումնասիրելն է. լիրաւի, Գօշի գատաստանագիրքը թէև դրւած է XII դարում, սակայն մինչև վերջին ժամանակները նրա ազդեցութիւնը, ինչպէս տեսանք, շատ մեծ էր զանազան տեղերում ցրւած Հայերի վրայ. Հետեւապէս ժողովրդի մէջ անկասկած մնացել են նրա Հետքերը: Միւս կողմից, Գօշի գատաստանագիրքը մեծ ժողովրդականութիւն գտաւ ժամանակակից Հայերի մէջ, մինչդեռ այլ ժողովածուների գոյութիւնը շատ կարճ միջոց էր տևում. դատճառը այն էր, որ Գօշի գատաստանագիրքը կենսունակ էր, նրա օրէնքները Համապատասխանում էին այն ժամանակւայ պահանջներին, նրա կանոնները կամ ուղղակի վերցրւած էին ժողովրդից, կամ նրա ոգուն, բնաւորութեանը յարմարեցրւած: Ուրեմն, ինչպէս Գօշի գատաստանագիրքը մեկնելու համար պիտանի է Հայոց սովորութեան իրաւունքը, այնպէս և վերջինը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է Գօշի գատաստանագիրքը:

Գալով Հայոց սովորութեան իրաւունքին, պիտի նկատենք, որ նրա վիճակը զրաւոր իրաւունքի վիճակից բախտաւոր չէ:

Եթէ Հայոց գրաւոր իրաւունքի մասին մեր տեղեկութիւնները նւազ են, պատճառն այն է, որ գրաւոր իրաւունքը Հէնց ինքն է շատ աղքատ նիւթ տալիս. բայց ինչո՞վ բացատրել, որ մեր տեղեկութիւնները Հայոց սովորութեան իրաւունքի մասին նոյնչափ նւազ են: Պատճառը պարզ է. մեր սովորութեան իրաւունքը վաղուց է հրաւիրում իր լի, թաթագուն շտեմարանը հետաքննին խուզարկուն, սակայն մինչև այժմ համարեա ոչ-ոք չի օգտուել այդ սիրալիր հրաւերքից: Հայոց սովորութեան իրաւունքը մինչև այժմ էլ ներկայացնում է մի անձեռնամուխ շրջան, չընայած որ նրա հարևան շրջանները (ազգազրութիւնը, հնադիտութիւնը) վաղուց են արդէն արժանացել ուսումնասիրութեան: Բայց չէ՞ որ սովորութեան իրաւունքը իր նշանակութեամբ լիշեալ դիտութիւններից ցած չէ. այդ մենք տեսանք, սակայն ինչպէս վարել ուսումնասիրութեան գործը:


Մեր սովորութեան իրաւունքը լուրջ ուսումնասիրելու մասին դեռ խօսք չի կարող լինել, որովհետև ուսումնասիրելու համար մենք պատրաստի նիւթ իսկ չունենք. այդ պատճառով միակ ուշադրութիւնը պիտի դարձնել նիւթ ժողովելու վրայ, իսկ ուսումնասիրողի կորովամտութիւնը պիտի կայանայ միայն համապատասխան նիւթ ընտրելում: Մեզ հարկաւոր է առայժմ նիւթերի արխիւը, առանց որի ուսումնասիրութեան գործը համարեա անհնարին է դառնում:

Պատրաստ նիւթերը ուսումնասիրելիս նախ և առաջ հարկաւոր է որոշել հետազօտութեան մեթօղը. գրանով թէ՛ գործը կըհեշտանայ, թէ՛ նիւթերը կարգով դատարարած լինելով՝ աւելի դիւրմըռնելի կըգառնան: Սովորութեան իրաւունքը հետազօտելու ամենայարմար մեթօղը պատմական-համեմատականն է. լիբաւի, եթէ սովորութեան իրաւունքի ծագումը փանենք մինչև ամենահին ժամանակները, եթէ ընդունենք, որ նասկզբում չի եղել ներկայ դրութեան մէջ, այլ հետզհետէ դարգացել է ազգի ընդհանուր զարգացման հետ և դրացի ազգերի սովորութիւնների ազդեցութեան տակ, կըտեսնենք, որ այդ պարագայի վրայ պատմական մի հայեացք ձգելը և մի ազգի

սովորութիւնները հարևան ազգերի սովորութիւնների հետ բաղտատելը անհրաժեշտ է. այդպիսով մենք կունենանք պատմական-համեմատական մեթօղով արած մի ուսումնասիրութիւն:

Քաղաքական աննպատտ պայմանների շնորհիւ հայերը միշտ եղել են դանազան ազգերի տիրապետութեան ներքոյ, և ամեն մի տիրապետող ազգ իր դրոշմն է դրել հայի յատկութիւնների վրայ. բացի այդ, ամեն մի առանձին տէրութեան մէջ էլ հայերն ապրում են ցրած, այնպէս որ նրանց վրայ ազդում է ինչպէս տեղաբնակութիւնը, այնպէս և հարևան ցեղերը: Ջարմանալի չէ ուրեմն, որ պատմական և աշխարհագրական պայմանները ստեղծել են հայերից առանձնացած խրմբեր, որոնցից ամեն մէկը ժամանակի ընթացքում ազգազրական տեսակէտից էլ մի առանձին՝ միւսներից տարբեր տեղ է բռնել: Հետևապէս Հայոց սովորութեան իրաւունքին վերաբերող նիւթերի հետազօտութեան հարցում ամենայարմար մեթօղը պիտի համարել պատմական-համեմատականը:

1. Մագարեան



# ՄՄԻԱՏ ՇԱՀ-ԱԶԻԶ


(Է Խ Է - Դ)

(Նւէր պ. Սմբատ Շահ-Ազիզի 35-ամեայ յոբելուսին)

«Անգաւաճան ջերմ սիրով  
«Ես սիրել եմ իմ հայրենիք»...

«Երբ է ես... հայրենիք»:

Ա



այրրնը 1807 թւականին հրատարակեց իր մանր բանաստեղծութիւնների հատորիկը «Ազատութեան ժամեր» («Hours of idleness») անունով:

Կէս դար անցած՝ նոյն «Ազատութեան ժամեր» խորագրով հայերէն բանաստեղծութիւնների մի զրքոյկ լոյս տեսաւ Մոսկվայում, — բանաստեղծութիւնները, որոնք անկասկած ներշնչւած էին Բայրընեան պօէզիայով: Այդ զրքոյկը, ինչպէս և Բայրընինը, լի է քնքշախօս մեղեգիներով, սիրային զեղումներով և ազատակենցաղ երգերով: Բրանդէսի յայտնած կարծիքը Hours of idleness-ի բանաստեղծութիւնների մասին, — թէ նրանցից ոչ մէկը մի առանձին նշանաւոր բան չէ, և թէ նրանք էլ, որոնց մէջ զգացմունքները ուժգին եռանդով են արտայայտուած, անհե-

տանում են աշակերտական փորձերի երկայն շարքերում, — փորձերի, որոնք մասամբ՝ զպրոցում կարգացած կլասիքական բանաստեղծներից թարգմանութիւններ ու նմանողութիւններ են, մասամբ էլ՝ սանտիմէնտալ և ոճի կողմից թույլ զրւած քարեկամական և սիրային երգեր, — նոյն կարծիքը, ասում եմ ես, կարելի է յայտնել և հայերէն բանաստեղծութիւնների (հատորիկի) մասին:

Այդ հատորիկով թէպէտ նշանաւոր կերպով չըհարստացաւ հայ զրականութեան զանձարանը, սակայն նա հաճելի եղաւ ընթերցող հասարակութեան ճաշակին, իսկ նրա մէջ զետեղւած «րոմանսներից» և ոտանաւորներից մի քանիսը, ինչպէս «Վարդան Մամիկոնեան», «Ինչ սիրուն ես...» և այլն — մինչև այժմ էլ ընդարձակ ժողովրդականութիւն են վայելում: Սակայն «Ազատութեան ժամերը» <sup>1)</sup> հետաքրքրական են զլիաւորապէս հայ զրականութեան պատմագրի համար, իբր առաջին փորձ պատանի բանաստեղծի, որ յետոյ ցոյց տուց մի ճշմարիտ աազանդ և դարձաւ հայ ազգի սիրելի բանաստեղծներից մէկը: Բացի դրանից այդ առաջին փորձում արդէն երեւան են զայլիս այն բոլոր ազգեցութիւնները, որ յետագայում շնչալէս պարզ արտայայտեցան «Ղևոնի վիշտը» պօէմայի մէջ: Մեր խօսքը Նազարեանցի և Նալբանդեանցի ազգային լուսաստաւորութեանը նւիրւած գործունէութեան և Բայրընեան վիշտ ու հիասթափում պարունակող պօէզիայի ազգեցութեան մասին է:

Այս անդրանիկ փորձը, որ պարունակում էր իր մէջ՝ նախերգանք, մի պատանեկան դիմում դէպի ընթերցողները, որի մէջ փառաբանում է նոր աշխարհիկ լեզուն և սանտիմէնտալ ոգով զրւած մի քանի բանաստեղծութիւններ և պատմուածքներ, պատկանում էր Նազարեան ճեմարանի վեցերորդ դասարանի աշակերտ Սմբատ Զահ-Ազիզին:

<sup>1)</sup> Այս զրքոյկի ճակատին զրւած է «երկրորդ հատոր» սակայն մին է առաջինը, մեզ չաչտին չէ. այդ պատճառով էլ 1860 թ. հրատարակւած «Ազատութեան ժամերը» ես անւանում եմ «անդրանիկ փորձ»:

Սմբատ Չահ-Ազիզը ծնեց Երևան նահանգի Աշտարակ գիւղում <sup>1)</sup>: Նրա հայրը, Տէր Սիմէօն քահանան, մեռաւ 1847 թւի խօլերային համաճարակի ժամանակ, երբ Սմբատը դեռ լսու վեց տարեկան մանուկ էր, ուստի և առանձին ազդեցութիւն չունեցաւ մանուկի վրայ: Գրա փոխարէն խելացի և համեստ մօր, Խոսրովիդուխտ երիցակնոջ ազդեցութիւնը, որ Աշտարակում յայտնի էր իբր առաջին գեղեցիուհի, շատ մեծ եղաւ: «Այսօրուայ պէս լիշում եմ և դորովայիբ աչքերը, և մայրական զգականքը, և ժպիտը, և այն անվերջ խանդաղատական համբոյրները, որ յատուկ են միմիայն ասիական կանանց, կարծես այժմ էլ զգում եմ ես այդ բոլորը: Մինչև այժմ էլ երբ ես ճնշւում եմ կենսական հոգսերի տակ, երբ իմ աչքումս պայծառ օրը իսաւարի է փոխւում, միմիայն մօրս կախարդական պատկերն է, որ կարողանում է հաշտեցնել ինձ մարդկանց հետ»: Բանաստեղծը կարօտով է լիշում այն օրը, երբ նա Չ) տարի բացակայ լինելով մօրից՝ եկել էր նրան տեսութեան. «զոքա երջանիկ, անմոռանալի բոպէներ էին», ասում է նա <sup>2)</sup>: Մայրը զարգացրեց նրա մէջ զգացմունքի քնքշութիւն և այն խորին անկեղծութիւնը, որ մենք տեսնում ենք նրա քնարերգական բանաստեղծութիւնների մէջ: Անշատաձ մօրից՝ նա յաճախ լիշում էր նրան, և այդ լիշողութիւնն էր, որ ներշնչեց նրան զողտրիկ և շնորհալի «Երագ» ստանաւորը: «Աերջին հրաժեշտ» ստանաւորն էլ նոյնպէս նւիրւած է մօրը:

Տասներկու տարեկան Չահ-Ազիզը ստիպւեց հրաժեշտ տալ զեղանկար Աշտարակին, որը նա քանի-քանի անգամ երգել է իր բանաստեղծութիւններում, թողնել ընկեր-բարեկամներին,

<sup>1)</sup> Հիմք կայ կարծելու, որ Չահ-Ազիզները հին հայկական «կանսարական» կոչւած նախարարական տոհմից են:

<sup>2)</sup> Մենք այդ մէջ ենք բերում բանաստեղծի ձեռագիր ինքնակենսագրութիւնից, որ նա մի անգամ սիրալիր յանձնեց մեր տրամագրութեանը: Այդտեղ համառօտ նկարագրւած են նրա մանկական տարիները, մինչև մուտքը Լազարեան ձեմարան: Յաւում եմ, սակայն, որ այս բոպէիս ձեռագիրը մօտս չէ և ես ստիպւած եմ Ս. Չահազիզի խօսքերի միայն բովանդակութիւնը տալ և ոչ բնագիրը:

որոնց հետ կաշտառ մանուկը արշաւանքներ էր կատարել գէպի Աշտարակի այգիները, կղբայրներին և ջերմային սիրած մօրը: Չատ տարիներ անցած՝ նա լիշում է իր հայրենիքը Բողորոցի ամսրանոցում և նւիրում է նրան ջերմ տողեր «Աշտարակ» ստանաւորի մէջ: Հօր մահից լետոյ ամբողջ ընտանիքը մեծ որդու՝ Յովակիմի հոգատարութեան ներքոյ էր գտնւում, որ ծառայում էր Վազարշապատի հոգեօր կոնսիստորում: Սմբատ Չահ-Ազիզը շաբաթներով հիւր էր գնում եղբօր մօտ, ուր ժողովւում էին, իրան բանաստեղծի ասածով, «այնտեղի ամբողջ ազնւականութիւնը», այսինքն սինօղի և կոնսիստորի ատրիճանաւորները: Չնորհիւ այն հանգամանքի, որ մանուկը միջոց ունեցաւ փոքր ի շատե կրթւած հասարակութեան մէջ պտտելու, նա իր եղբայրներից շատ աւելի զարգացաւ: Մշտապէս տեսնելով իր շուրջը զբաղեալ, երբեմն էլ կրթւած մարդիկ, ինքն էլ բնականաբար ցանկացաւ ժամանակին նոյնպէս կրթւած մարդ գառնալ: Հանգամանքները զրան արգելք չեղան: 1851 թւին Յովակիմը խնդիր ուղարկեց Լազարեան ձեմարան, որպէս զի նրա երեք եղբայրները ընդունեն որդեգիրների կարգը: Մի տարուց լետոյ պատասխան ստացւեց, որով, սակայն, յայտարարւում էր թէ նրանցից միայն մէկը կարող է ընդունւել: «Մէկը մեզանից՝ Սահակը, ասում է Չ. Ա.— տկարութեան պատճառով չէր կարող գնալ, իսկ Սարիբէզը բնաւ սէր չունէր ուսանելու»: Իսկ ինքը այդ ժամանակ արգէն գլտէր կարգալզրել, որ սովորել էր Տէր Սարգիս քահանայի մօտ: Նա ուշիմ և կաշտառ մանուկ էր, ու իր կտրուկ նկատողութիւններով և սրախօսութիւններով յաճախ հիացնում էր շրջապատողներին: Գուցէ այդ պատճառով էլ նա աւելի սիրւած և երես տրւած էր, քան միւս եղբայրները: Բացի զրանից, նրա տարիքն էլ աւելի համապատասխանում էր դպրոցական հասակին, — նա ամենափոքրն էր ընտանիքի մէջ: Աերջայէս վճռեցին նրան ուղարկել Լազարեան ձեմարան ուսանելու, և ճանապարհ գրին Յովակիմ եղբօր հետ:

«Ես ձի նստայ: Գէպի Մոսկուա Ուղղեցի իմ ճանապարհ»...

ասում է նա իր «Աերջին հրաժեշտ»-ում: Թիֆլիս գնալիս մտան Էջմիածին, Ներսէս կաթողիկոսի օրհնութիւնն առնելու: Սմբատի ազգականները յայտով էին, որ կաթողիկոսը իրան սան կընդունի, բայց վեհափառը չարաւ այդ: Զահ-Աղիդները կաթողիկոսին հեռու ազգական էին գալիս, և նա չէր ուզում որ ժողովուրդը ասէ, թէ կաթողիկոսը հովանաւորում է իր ազգականներին: Զահ-Աղիդը մինչև այժմ էլ լիշում է, թէ ինչպէս կաթողիկոսը ուրախ սրտով ընդունեց նրանց, օրհնեց ապաքալ բանաստեղծին և իբրև ճանապարհի սրաշար՝ տրեւեց նրան մի քիչ ուտելիք: Ընծայի աննշան քանակութիւնը հաճելի չեղաւ մանուկին, և նա նոյն իսկ կաթողիկոսարանի շէմքում թափեց բոլորը, նկատելով թէ աւելին էր սպասում այդ ծերունուց: Գալով Մոսկւա 1852 թւականին, նա մնաց այնտեղ մինչև ինսուունական թւականի վերջերը զրեթէ առանց բացակայելու՝ սկզբից իբրև Ղաղարեան ճեմարանի ղիմնադիւան գասարանների աշակերտ, և ապա՝ իբրև նոյն ճեմարանի լիկէոնի ուսանող: Ղիկէոնը աւարտելուց լետու, նա ստացաւ վերակացուի և պատրաստական գասարանի հայոց լեզու ուսուցչի պաշտօններ, իսկ Մոսկւայի մագիստրոսի մահից լետու ստացաւ Հարոց լեզու ուսուցչի պաշտօնը բարձր դասարաններում, որի մէջ մնաց նա մինչև 1897 թւականը: Միայն 1873 թւին նա փոքրիկ ճանապարհորդութիւն արաւ դէպի հայրենիք:

Բ

Արդէն աշակերտական նստարանի վրայ նա սկսել էր ոտանաւորներ զրել, իսկ ուսուցչի օտարազգի բանաստեղծների ընթերցանութիւնը յայտնի դոյն տւեց նրա ոտանաւորներին: Այդ իսկ ոտանաւորները, գրեած 1857—59 թ., նա լոյս ընծայեց առանձին զրքովով, որ կրում է «Ազատութեան ժամեր» խորագիրը: Մի քանի տարի անցած, 1865 թւին, Զահ-Աղիդը լոյս ընծայեց իր երկերի մի այլ հատորը, որ մի անգամ ընդմիջտ գրաւեց հասարակութեան ուշադրութիւնը և համակրանքը, իսկ հեղինակին մեր նորածին գրականութեան նշանաւոր

անձանց շարքը դասեց: Գրեթէ երեսուն տարի անցնելուց լետու՝ նա հրատարակեց վերին աստիճանի շքեղ տպւած մի գիրք «Յորեկանի տարեգարձ» անունով, որի մէջ դետեղւած մի քանի ոտանաւորները, ոչինչ չաւելացնելով նրա ժողովրդականութեան վրայ, միևնոյն ժամանակը աւելի ևս հաստատեցին նրա փառքը, իբրև հոգեբուղի քնարերգակի և տաղանդաւոր դեղարեւոտագէտի:

1865 թւին հրատարակւած հատորը բաղկացած է նախ՝ «Աւոնի վիշտը» մեծ սօսմայից և ապա զանազան բանաստեղծութիւններից թւով մինչև 60: Բայց այդ բանաստեղծութիւնները այլևս աշակերտական խճբճանքներ չեն և ոչ էլ ժամանակ անցկացնելու համար են գրեած. նրանք անկեղծ և խորին զգացմունքի ծնունդ են, — զգացմունքի, որով յափշտակւած է եղել հեղինակը. նրանք բանաստեղծի հոգու խորքից բղխած խոհեր և մտքեր են: Եւ չընայելով երկու հրատարակութիւնների մէջ եղած կարճատև միջոցին, Զահ-Աղիդը այստեղ արդէն երևան է գալիս բանաստեղծական հաստատուն տաղանդով և որոշ աշխարհայեացքով:

Այդ բանաստեղծութիւնների մէջ նախ և առաջ աչքի է ընկնում հեղինակի ճոխ և զոգտրիկ սճը, որ միևնոյն ժամանակ թեթև է և ճկուն: Հիւսիսափայլի, այսինքն Նազարեանցի և Նայբանդեանցի լեզուի մէջ կրթւելով՝ նա շուտով գերազանցեց նրանց, և մինչև այժմս էլ ոճի կողմից նշանաւոր արեւստագէտ է մնում հայկական գրականութեան մէջ: Սակայն նրա ոտանաւորների մէջ էլ երևում են ձևի և տաղաչափութեան նոյն պակասութիւնները, որ յատուկ են գրեթէ բոլոր ուսաւայ բանաստեղծներին. գրանք են՝ չափի միակերպութիւն, անկանոն լանդաւորութիւն, վանկերի անհամապատասխան դասաւորութիւն և այլն: Օրինակ՝ բանաստեղծը տեղի ու անտեղի դորձածում է իր սիրած տասնավանկեան տողերը (ամբողջ «Աւոնի վիշտը», «Ճշմարիտ կրօն», «Ազգային վիճակ» և այլն), Ս. Զահ-Աղիդի ամենալաւ ոտանաւորների մէջ անդամ դտնում ենք չափի և լանդի պակասութիւններ. «Երգ մեռանող հայրենասիրի» ոտանաւորի մէջ՝ տուն կայ որ չորս տողն էլ լան-

զերով են, տուն կալ որ երկու լանգալին տողեր կան, այն էր աղքատ լանգերով. «Նրաղի» մէջ բացի աղքատ լանգերից զբառնում ենք և սխալ ցեղութեան: Քաւականանում եմ այս օրինակներով: Այդ անհոգ վերաբերմունքը դէպի տաղաչափութիւնը անկասկած առաջ է զալիս նրանից, որ դեռ հաստատ հասկացողութիւն չէ կազմել հայկական տաղաչափութեան մասին, որն անշուշտ վանկական է, բոտորում բոլոր հայկական բառերը, սակաւ բացառութեամբ, վերջին վանկումն են շեշտում <sup>1)</sup>:

Չահ-Աղիզը բացառապէս քնարերգակ-բանաստեղծ է: Հոստորութիւնը նրա faculté maitresse-ն է: Եթէ մենք թողնենք նրա մանր բանաստեղծութիւնները և վերցնենք պօէման, «Հրապարակախօս ձայն» քննադատական գրածքը, «Ամառնային նամանակները», յօդածները, ճառերը, — այդ բոլորի մէջ նա մեզ երևում է իբր հոստոր, քնարերգական հակումով: Եւ եթէ նա չունենար այն ճոխ և գողտրիկ ոճը, այն ժամանակ նրա «Յառաջ հայութիւն», «Հովիտ արտմութեան» և այլ ոտանաւորով զբաւած ազգասիրական «Ճառերը» միակերպ և տաղտկալի կըլինէին մեզ համար. բայց այս պայմաններումն էլ ատենախօսական ձևը մի քիչ կաշկանդում է նրանց ուժը և այն տալուորութիւնը չէ ստացում նրանցից, ինչ որ ստացւում է օրին. Պատկանեանի կարծ և կրակոտ հայրենասիրական բանաստեղծութիւններից: Ընդհակառակն այն բանաստեղծութիւնները, որոնց մէջ բացակայ է այդ հոստորական ձևը, կամ երևում է փոքր չափով, ներկայանում են մեզ իբր մի-մի զարդ հայկական քնարերգութեան: Այսպէս է օրին. նրա դմալեցուցիչ—զեղեցիկ և շատ ժողովրդականացած «Նրաղ» բանաստեղծութիւնը: Մեզնից ով չըգիտէ այդ հիանալի քերթւածը՝

Ես լսեցի մի անուշ ձայն, —  
Իմ ձերտցած մօր մօտ էր —  
Փայլեց նշույլ ուրախութեան,  
Բայց ափսոս, որ երազ էր:

<sup>1)</sup> Այս հարցի մասին պատրաստած յօդւածս շուտով լոյս է տեսնելու:

Կարկաչահոս աղբիւր այնտեղ  
Թաւալում էր մարգարիտ, —  
Նա լստակ էր որպէս բիւրեղ,  
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեցին տխուր, մայրենի  
Յիշեց մանկութեան օրեր.  
Մօրըս համբոյրն ես զգացի,  
Ա՛խ, ափսոս, որ երազ էր:

Կուրծ քին սեղմած կարօտաղին,  
Աչքերս սրբեց — շատ թաց էր, —  
Բայց արտասուքս դնում էին...  
Ա՛խ, այդ ինչու երազ էր:

1864 թւի ժողովածուի բանաստեղծութիւններից մէկում («Կեցցէ սուրբ զօրծը») հեղինակը կարծես հրաժարւում է իր «Ազատութեան ժամերից» և հեղնաբար է վերաբերւում իր նախկին «անուշ հնչիւններին» և աղօթքներին: Ահա այդ ոտանաւորը՝

Եւ ես երբեմն երգում էի  
Անհոգ քնարիս լարերով  
Գեղեցկութիւն միայն սէրի,  
Վառւած նորա լուզմունքով:

Եւ իմ մուգաս ինքնահաւան  
Կամէր այդպէս ինձ պահել,  
Եւ միշտ երազ, ցնորք քաղցրութեան  
Հողուս առջև ժողովել:

Ես գօրացայ... խորտակեցի  
Այդ մուգալի բռնութիւն,  
Եւ սերտ սիրով ողջունեցի  
Քրտնաջան աշխատութիւն:

Ես լսեցի խոր հառաչանք,  
 Եւ վիշտ հոգու, և զանդատ՝  
 Եւ լաց, և սուգ, և աղաչանք,  
 Ենն էր անգ իմ հարազատ:

Ես ուխտեցի լինել մշակ  
 Հասարակաց պիտուքի՝  
 Երգել ուսուց զործ և վաստակ,  
 Արդար հացը այս կեանքի:

Նա բանաստեղծի կոչումը այն բանի մէջ է տեսնում, որ իր քնարը զործ դնէ հասարակութեանը ծառայելու համար: «Նախ և առաջ քաղաքացի և ապա բանաստեղծ», – ասում է նա <sup>1)</sup>: Սակայն Հեղինակն ինքը մանր բանաստեղծութիւնների մէջ լիովին հաւատարիմ չէ մնում իր նշանաբանին, որն անշուշտ փոխ է առել իրան ժամանակակից ուսուցողներից: Իրաւ է, իր պօէմայում նա քաղաքացի—բանաստեղծ է, կամ ինչպէս անւանեց նրան երիտասարդ քննադատ Եղիշէ Մաղաթեանը, բանաստեղծ-հրապարակախօս, բայց մանր բանաստեղծութիւններում նա միշտ քնարերգակ-բանաստեղծ է եղել սաստիկ-սուբյեկտիվ բնաւորութիւնով: Նրա քնարը ի հարկէ բաւական զգայուն է իր շուրջը կատարող ժամանակակից անցքերի վերաբերմամբ, և նրա ժողովածուի մէջ քիչ չեն այնպիսի բանաստեղծութիւններ, որոնց առիթ են տուել շատ թէ քիչ աչքի ընկնող ժամանակակից անցքեր՝ այսպիսիներն են օրին. «Բռնաւոր սուլթան», «Եղուխտներ և Ձէյթուն»,

<sup>1)</sup> «Բռնաւոր Սուլթան» բանաստեղծութեան մէջ: Բացի այս երկու բանաստեղծութիւններից՝ Հեղինակը մի այլ բանաստեղծութեան մէջ՝ «Պօէտ, նիւթապաշտ և քաղաքացի» իրանց կոչման անարժան է համարում այն բանաստեղծներին, որոնք լոկ գեղարւեստին են ծառայում, սակայն ինքն էլ տալիս է Ֆէտ ուսուցողական բանաստեղծին յատուկ պօէզիայի կոչումներ («Հոփու», «Անտառի մէջ», «Մալխ»):

«Զոհեր» և ուրիշներ: Արեւմտեան Եւրոպայում կատարած անցքերը, անցեալի լիշողութիւնները և օրուայ չարիքը միշտ ստիպում են նրան խոր մտածել իր թանկագին հայրենիքի վիճակի մասին, և իբր արձագանք բանաստեղծի այդ խոհերի և երազների՝ երևան են եկել զուտ քաղաքացիական մտաւիւններով բանաստեղծութիւններ՝ «Իտալուհիք և իտալացիք», «Միջին Տիգրան», «Երգ մեռանող հայրենասիրի», «Ազգային վիճակ» և այլն: Բաց և այնպէս, անձնական զգացումների վերլուծումը, իր վիճակի մասին խորհրդածութիւնները, անձնական բերկրանքներն ու հիասթափումները զլիաւոր տեղն են բռնում նրա քնարերգութեան և մինչև անգամ նրա ամենաօբյեկտիվ (ինչպէս ասում է Հեղինակը) երկասիրութեան՝ «Լեւոնի վիշտը» պօէմայի մէջ: Հարկ է նկատել որ զրանք Ս. Չաչ-Աղիլի լաւագոյն բանաստեղծութիւններն են:

Իսկ ինչ զգացումներ և խոհեր են արդեօք ամենից աւելի զբաղեցնում Հեղինակին, նրա սեպհական եսի ո՞ր կողմն է արդեօք ամենամեծ տեղը բռնում նրա բանաստեղծութիւններում: Այդ շարժառիթները բաղմազան չեն, բայց շատ ինքնատիպ են. զրանց մէջ առաջնակարգ դեր է խաղում սէրը, անպա փիլիսոփայական, յաճախ կրօնական բնաւորութիւն ունեցող խորհրդածութիւնները: Երևում է որ Հեղինակին միշտ հետաքրքրել են՝ «Ինքնագոյութեան», «Աստուածութեան», կրօնի զգացմունքի, բնութեան և կամ այլ վերացական գաղափարների վերաբերեալ հարցեր: Ինքն իր մէջ չըզտնելով այդ անլուծանելի հարցերի պատասխանները, նա զբեքի մէջ է որոնել նրանց, կարգացել է Բօկլի, Սպինոզայի, Չիչերմախէրի զրեւծքները և նրանց օգնութեամբ աշխատել է լուծել իր վերայ ծանրացող խնդիրները: Զուրկ լինելով փիլիսոփայական կրթութիւնից, սիստեմատիքաբար պատրաստ չըլինելով այդ հարցերով, նա ազահաբար յաիշտակել է ամեն քիչ թէ շատ պարզ արտայայտած գաղափար: Այս իսկ պատճառով, նրա այդպիսի փիլիսոփայական խնդիրներ լուծելուն մէջ շատ թերութիւններ կան. մերթ նա սպիրիտուալիստ է, մերթ մտտերիալիստ, մերթ վրդովում է Աստուածութեան միստիքական

մեկնութեամբ, մերթ ներկայանում է մեզ իբրև ինքնատիպ միտիկ 1):

Նրա բանաստեղծութիւնների մէջ շատ մեծ տեղ է բռնում սէրը: Սէրը երգում է իր բոլոր ձևակերպութիւններով՝ առաջին սէրը, առաջին համբույրների քաղցրութիւնը, հանդիպումները, տարածայնութիւնները, անջատումը, հիասթափութիւնը՝ այդ բոլորին նա արձագանք է տալիս իր զգայուն քրնարով: Եթէ չըկայ սէր, բանաստեղծը պատրաստ է կեանքի բոլոր անախորժ պատահարները տանելու, նա նոյն իսկ անտարբեր է դէպի մահը: Նա սիրում է, սիրոյ մէջ է գտնում վերին երջանկութիւնը և մինչև անգամ մարդուս կոչումը: Ուրիշներին էլ նա խորհուրդ է տալիս սիրել: «Առ իմ ընկերը», «Սիրավէպ», «Խորհրդաւոր դիշեր», «Սիրոյ կեանքը», «Առաջին տեսութիւն» և մի քանի այլ բանաստեղծութիւններ կարծես սիրոյ օրհներգներ լինեն. երևում է որ բանաստեղծը ապրում, շնչում է այդ զգացումով, լիովին անձնատուր է նրան: Միևնոյն ժամանակ նա գիտէ վսեմացնել այդ զգացումը, մինչև որբութիւն հասցնել, ողիացնել նրան և նրանով լցնել իր ամբողջ էութիւնը:

✓ «Սէրն է աղբիւր քաղցրութեան,  
Սիրոյ սրտի արշալոյս»,

ասում է բանաստեղծը «Սիրավէպի» մէջ և շարունակում՝

✓ «Սիրէր, որքան կարող ես,  
«Որքան փաղում է արև»...

Հրճանքով վերաբերելով սիրոյ զգացմունքին, նա սրահաս հրճանքով չէ վերաբերում և սիրոյ առարկային: Գեղեցկութեան և նրա կախարդանքների նկարագրին քիչ չեն

1) Զարմանալին այստեղ աչն է, որ նոյն այդ ժամանակ թի, Ռուսիայում և թէ ամբողջ Եւրոպայում սկսել էր ծաղիկ նոր դրական (պօզիտիվ) փիլիսոփայութիւնը:

նախաձ շնորհալի հատածներ: Սակայն որքան էլ բուռն լինի սէրը, որքան էլ յուզած եռայ կիրքը — արտաքին հանդրատութիւնը անբաժան է հեղինակից: Այդ պատճառով զգացումների վառ և բորբոք զեղումներ դուք գրեթէ չէք գտնիլ նրանում: Ընդհանուր հանդիստ ֆօնի վրայ աչքի է դարկում մէկը նրա լաւագոյն բանաստեղծութիւններից՝ «Ընդին զոհար», որը՝ իր պայծառ գոյներով և բոցավառ զգացմունքներով չունի իրան հաւասարը նրա բանաստեղծութիւնների մէջ: Մանաւանդ հիանալի է այդ բանաստեղծութեան երկրորդ մասը, որի միակ թոյլ կողմը տաղանջափութիւնն է.

Անարատ որպէս չըհրնձած ցորեն,  
Սեզսապարտ երկրի մաքուր քաւարան,  
Ա՛խ թէ մեղքերը քեզ չըպաշարեն,  
Եւ դու մնաս իմ միակ զոհարան:  
Թեթև փչելով մաքրափայլ օդի,  
Քո անուշաբոյր շունչն եմ ես զգում,  
Եւ խոխոջածայն խաղում առւակի  
Քո մեղմ, սիրալիր զրոյցն եմ լսում.  
Ծառի տերևներ, հեղիկ շարժելով,  
Նագուկ ոտերիդ վիշում են շարժւած.  
Եւ ծաղիկները, քեզ բարևելով,  
Ուզում են ասել, որ դու ես Աստուած:  
Գու համեստ աստղիկ, ամաչկոտ լուսին,  
Գու իմ խնդութիւն և վիշտ իմ խորին,  
Գու իմ պայծառ օր և տխուր դիշեր,  
Իմ միակ կեանքում դնւ միակ ընկեր:

Անշուշտ բանաստեղծի մի տեսակ լրջութիւնը և անվրդուութիւնը առաջ է եկել այն տրամադրութիւնից, որ առհասարակ ձահ-Ազիզի բնաւորութեան լատիանիշն է կազմում՝ այն է մելամաղձոտութիւնից: Յետագայում, «Ղևոնի վիշտը» պօէման քննադատելիս, մենք միջոց կունենանք աւելի մանրամասնօրէն խօսել բանաստեղծի այս մելամաղձային զծի մասին,

խակ այժմ կասկեք միայն, թէ մելամաղձոտութիւնը բուն է գրել նրանում մեծ մասամբ սիրոյ մէջ անյաջողութիւններ կը լրելուց: Նրա իւրաքանչիւր բանաստեղծութիւնը ունի իր բէալական հիմքը և ի նկատի ունի բանաստեղծի կեանքից մի իրական դէպք: Մենք տեսնում ենք որ բանաստեղծը ոչ միայն սիրոյ գմայլանքներն է, տեսել. այլ և նրա դառնութիւնները: Ամեն անգամ նրա սիրոյ հետ կապակից են՝ կամ սիրելի էակի կորուստը, կամ տարաձայնութիւն, կամ հիասթափում: Այդ սիրային ձախորդութիւնները աւելի ևս ոյժ են տւել բանաստեղծի մուսլ տրամադրութեանը և նրա՝ բանաստեղծութիւնների վրայ այնպիսի մի կնիք են դրել, որ մելամաղձութիւնը այդ բանաստեղծութիւնների գլխաւոր լատկանիշներից մէկն է դառել: Այդ տխրերգական տրամադրութիւնը երբեմն մինչ այն ատիճան ընդգրկում է բանաստեղծին, որ նա մեզ ներկայանում է իբր ամենամուսլ հոգու տէր մի յուստես:

Իր վիճակին և գծբախտ հայրենիքի ճակատագրին վերաբերեալ խորհրդածութիւնները, ջերմ սիրով սիրած մօր մասին լիշողութիւնները՝ ոչ մի մխիթարութիւն չեն կարողանում տալ նրան, և եթէ նրա մուսլ տրամադրութիւնը չեն հասցնում յուսահատութեան, չեն էլ կարող փարատել նրա վիշտն ու տխրութիւնը: Այս կերպով յոյս են տեսել մերթ խաղաղ-տրխրերգական բանաստեղծութիւններ, մերթ այնպիսիներ, որոնք թափանցած են յուսահատ յուստեսութեամբ՝ «Սիրոյ կորուստը», «Ես այն օրից», «Այն երազ էր», «Ես տխուր եմ»... «Երազ», «Եւ նա մեռաւ», «Սրտի կսկիծ», «Վերջին հրաժեշտ» և ուրիշ շատեր: Այստնդ բանաստեղծի քնարը լիշեցնում է մեզ Ախպարղիի, Վերմոնտովի և այլ հիասթափուած բանաստեղծների քնարը: Կոյն զգացմունքով ներշնչւած «Բանաստեղծի խորհրդածութիւնները» ոտանաւորը արժանի է առանձին ուշադրութեան: Զգացմունքների խորին քնարականութիւնը, նազելի և բուռն սէրը, բնութեան հրաշալիքներից առաջացած ջերմ զգացմունքը անրտայայտուած են այստեղ հարուստ ոճով և հնչուն տողերով: Նշանաւոր է այս ոտանաւորը և նրանով, որ Ս. Զահ-Աղիզը նկարելով զրա մէջ սիրած օրիոր-

դի պատկերը, համեմատում է նրան լէյլի Եանթալի հետ, որին Բայրընը նւիրեց իր «Չայդ-Հարօլդը»: Եւ զրանից լետոյ նա ինքը նւիրում է Բայրընին հրճւանքով լի դուած հետուեալ տողերը՝

Համաշխարհական պոլէտ պանծալի,  
Գու քեզ կանգնեցիր երկնահաս արձան.  
Ի՛նչպէս մոռանանք, փնռքդ Անդլիալի,  
Որ բարձրագոյն է քան սարերն Ալպեան:  
Փնռք—որ ծնել է քո անգին քնար,  
Որ աւերակներ երգեց յոյների,  
Ո՛րպէս Հելլադա է հրաշափաւ:  
Ո՛վ Բայրօն, սաս, ո՛վ քո մէջ գրեց  
Այն վետ թախիժն յուսահատութեան,  
Ի՞նչպէս քո հոգին իւր մէջ ամփոփեց  
Այն խաւար գժոխք ամենակործան:

*Handwritten signature or note in the right margin.*

Բայրընով զրաւած ուս և օտարագլի բանաստեղծների նման՝ Զահ-Աղիզն էլ այս բանաստեղծութեան մէջ երկրպագութեան հարկն է վճարում նշա ամենակարող Հանճարին: Մեր յօդւածի սկզբում ակնարկութիւն կար Բայրընի պատանեկան բանաստեղծութիւնների Զահ-Աղիզի վրայ ունեցած ազդեցութեան մասին: Ժամանակի ընթացքում Զահ-Աղիզը, ինչպէս երևում է, չէր դադարում Բայրընի և նրա համանման բանաստեղծների՝ ինչպէս Հէյնէի, Վերմոնտովի, Պուշկինի և ուրիշների զրւածքները կարդալուց: Բայրընի պօէզիան հետզհետէ աւելի և աւելի էր զրաւում մեր հեղինակին, բարեյաջող հոգ գտնելով մուսլոտ և զիւրադրղիու հայ բանաստեղծի հոգու մէջ: Կեղծ հայրենասիրութիւնը, նրան շրջապատող հայկական կեանքի խաւարը և տղիտութիւնը, անձնական ձախորդութիւնները, ընտանեկան օջախի կարօտը, թանկագին մօր մասին փշոզութիւնները, վերջապէս սիրոյ մէջ անընդհատ անյաջողութիւն կրելը — անշուշտ ընդունակ էին միայն տխուր տրամադրութիւն ծնեցնել Զահ-Աղիզի մէջ: Իսկ բնածին գիւրազրղուութիւնը, անթեքուն բնաւորութիւնը մտքին այդ վշտի մէջ այն մաղձն

ու գայրոյթը, որ լիառատ թափւեցան «Լեւոնի վիշտը» պօէմայի մէջ:

Գ.

«Լեւոնի վիշտը» իր ժամանակի առաջին և մինչև այժմ միակ հայկական պօէման է՝ այդ բառի եւրոպական իմաստով<sup>1)</sup>: Ալիշանի, Պատկանեանի և ուրիշների պօէմաները իսկապէս պօէմաներ չեն, այլ տխուր հայրենասիրական երգեր, ուր հայրենիքի փառաւոր անցեալի յիշողութիւնները ընդգրկւած են ներկայի տխուր պատկերների հետ: Ընդհակառակը Սմբատ Զահ-Աղիզը իր երկի մէջ հետևում է ուսու և եւրոպական ամենայայտնի պօէմաներին: «Դօն-Փուան», «Չայդ-Հարօլդ», «Եւգենիյ Օնեգին» — ահա այն պօէմաները, որոնք իբրև նմուշ են ծառայել հայ բանաստեղծին:

Ս. Զահ-Աղիզի «Լեւոնի վիշտը — ժամանակակից վէպը»-ը չորս երգի է բաժանած, երգերը — տների. կայ և լառաջարան. «երգերի» սկզբի և վերջի տների մէջ հեղինակը յայտնում է իր սեպհական զգացմունքներն ու խորհրդածութիւնները, հէնց այնպէս, ինչպէս որ Բայրընի կամ Պուշկինի մօտ: Հետաքրքրական են ի միջի այլոց էպիլոգրաֆները, որոնք քիչ չեն բնորոշում պօէմայի բովանդակութիւնը և ողին, հեղինակի մտադրութիւնը և տրամադրութիւնը: Օրինակ՝ հեղինակը հետևեալ քաղածքն է գնում Լերմոնտովից իր լառաջարանի ճակատին՝ «Բաւական է որքան քաղցրեղէններով կերակրեցինք մարդկանց, գրանցից նրանց ստամոքսը խանդարեց, պէտք է տալ գառը գեղեր, կծու ճշմարտութիւններ», — և իր խոստմանը յետագայում լիովին հաւատարիմ է մնում նա: Սմբողջ լառաջարանը գրւած է աշխարհաբառ լեզուի յետամնաց հակառակորդների դէմ և ի պաշտպանութիւն այդ նոր զրաբառի:

Պէտք է այտեղ նկատել, որ վաթսնական թւականների սկիզբը այն ժամանակն էր, երբ բունաստեղծի ասելով, հայ-

1) Միայն վերջին ժամանակա լոյս տեսան մի քանի ուշադրութեան արժանի պօէմաներ երիտասարդ բանաստեղծների գրչի տակից:

կական նոր լեզուի ճիւղը նոր էր կանաչել: Հայ գրական նոր լեզուի առաջին ախոյեան Խաչատուր Աբովեանը շատ քիչ ապրեց և գրեց. նրա քարոզները մեծ մասամբ անցան իբր ձայն բարբառոյ լանսպատի, նա նոր գործի, նոր լեզուն քարոզելու համար իրան անմիջական յաջորդներ չունեցաւ: Բայց այդ ժամանակից սերմն արդէն ձգւած էր և անհատական փորձեր կատարուած էին անընդհատ, թէպէտ ոչ միշտ յաջող: Այդ անյաջողութիւնների պատճառ պիտի համարել ոչ միայն հողի անպատրաստութիւնը, այլև նոյն իսկ անձերին, որոնք ուժից վեր գործի էին ձեռք գարկում: Հարցը ամբողջ հասարակութեան հողեկան վերանորոգութեան մասին էր. նոր լեզուն-նոր զաղափարներ պիտի մտցնէր, և այսպիսով եւրոպական լուսաւորութեան հիմքերի վրայ մի նոր կեանք պիտի ստեղծէր հայերի համար դարուս կէտին: Այդ ինչորի լուծումը իրանց վրայ առին Ստեփանոս Նազարեանց և Միքայէլ Նալբանդեանց, որոնք հիմնադիր հանդիսացան մեր ժամանակակից ուսուհայ ժողովրդի լուսաւորութեան գործին: Մեր լօգւածի նպատակը և չափը չէ ներում մեզ երկար կանգ առնել այս նշանաւոր անձանց և նրանց գործունէութեան վրայ, բայց լաւ հասկանալու համար թէ Զահ-Աղիզի և թէ նրա պօէմայի նշանակութիւնը, աւելորդ չենք համարում գէթ հարևանցի ակնարկ ձգել այդ նշանաւոր ամօյների վրայ:

Ի դար չեն ասում՝ «les extrêmes se touchent». Նազարեանց և Նալբանդեանց թէ իրանց դաստիարակութիւնով, թէ զգարացումով, թէ տէմպերամէնտով, թէ բնաւորութեամբ ծայրայեղ հակադրութիւն էին ներկայացնում իրար նկատմամբ: Նազարեանցը ծնել է 1812 թւին: Յիսնական թւականների վերջերում՝ երբ նա պատահեց Նալբանդեանցին և երբ սկսեց նրանց գուզընթաց կարճատև գործունէութիւնը, Նազարեանցը<sup>1)</sup>, արդէն արևելեան լեզուների պրօֆէսոր, տարիքն սուած և

1) Ս. Նազարեանցը սկզբնական կրթութիւնը ստացել է իր քահանայ հօր մօտ, ապա Խաչատուր Աբովեանի հետ միասին ուսել է մի մասնաւոր դպրոցում, 1823 թ. մտել է Ներսիսեան դպրոց. Աւարտելով ուսման ընթացքը՝ մտել է Գորպատի համալսարանի լեզւալիտական

ղրտական մարդ էր, բնաւորութեամբ ֆիլէզոմատիկ, վերին աստիճանի բարի և գիւրահաւատ: Մինչդեռ Նալբանդեանցը<sup>1)</sup> այդ ժամանակ երեսուն տարեկան էլ չբար: Վաւուրուն և եռանդոտ Մ. Նալբանդեանցը, շնորհիւ հայաձանքների, որոնց շատ վաղ ենթարկւեց, դարձաւ մտղձոտ և զիւլազրոյիւ: Նա շատ արագ զարգացաւ և վաղ սկսաւ հասկանալ իր ազգի վիճակը: Կանխահաս ձախորդութիւնները՝ ազգի ասպագայի մասին խորհրդածութիւնների հետ միասին առաջացրին նրա հոգումէջ մշտական թախիժ և հրատափում, որոնք բնորոշում են նրա բոլոր երկերը, ինչպէս «Յիշատակարանը», բանաստեղծութիւնները և այլն: Սիստեմատիքական ուսում նա չըստացաւ, այլ իր բոլոր գիտութիւնը ձեռք բերեց իր աշխատասիրութեան և արտաքույ կարգի ընդունակութեան շնորհիւ: Ստոր լինելով Նաղարեանցի լեզարանական գիտութիւնների մէջ, նա դերագանցում էր նրան իր ընդունակութիւններով, բազմակողմանի տաղանդով, կեանքի ուղիղ հասկացողութեամբ և, որ նշանաւորն է, ժողովրդական (աշխարհիկ) լեզուի գիտութեամբ: Այս բոլոր հոնորաստները ոչ միայն արդիւք չեղան երկու ազնիւ գործիչների մտերմանալուն, այլ և մեծամեծ օգուաներ առաջացրին: Ազգային լուսաւորութեան սուրբ գործին ծառայելու մեծ գաղափարով միացած՝ Նաղարեանց և Նալբանդեանց 1858-ին սկսեցին Մոսկւայում Հիւսիսափայլի հրատարակութիւնը: Սա առաջին հայ ամսագիրն էր, որ թէ ձեւով, թէ բովանդակութեամբ եւրոպական բնաւորութիւն էր կրում. նա շարունակեց մինչև 1864 թ.: Խմբագիր-հրատարակիչը Նաղարեանցն էր, իսկ գլխաւոր աշխատակիցը — Նալբանդեանցը որին սակայն քիչ չէր պատահում միայնակ, իր ուսերի վրայ,

բաժինը (1832-ին), Քառասնական թւականներին պրոֆէսոր է եղել Ղազանի համալսարանում, ապա Մոսկւա՝ Լազարեան ճեմարանի լիկէոնում: Մեռել է 1873 թւին:

<sup>1)</sup> Ծն. 1830 թ. Նոր-Նախիջևանում, մեռաւ Կամիշինում 1866 թ.: Մ. Նալբանդեանցի կենսագրութիւնը գրել է Երևանդ Չահաղիզը: Այդ կենսագրութիւնը հրատարակւած է առանձին զրքով 1897 թ. Մոսկւայում:

էրել ամբողջ խմբագրութեան ծանրութիւնը: Թէ Նաղարեանցը և թէ Նալբանդեանցը մասնակցում էին ամսագրի բոլոր բաժիններում: Սակայն՝ մինչդեռ Նաղարեանցի յօլւածները աւելի յուրջ և զիտական բնաւորութիւն էին կրում, Նալբանդեանցի յօլւածները միշտ աւելի հետաքրքրական էին, իսկ նրա չարուցած հարցերը աւելի հրատապ և կենսալիր: Նաղարեանցը թէ խօսում էր, թէ զրում համոզեցուցիչ սձով և պրոֆէսորական հեղինակութեամբ, իսկ Նալբանդեանցը՝ գրաւիչ և սրտանց: Ղերջինիս լեզուն էլ աւելի կտրուկ և կենդանի էր քան թէ առաջինինը: Ասում են թէ Հիւսիսափայլի այն ամսատետրը, որի մէջ ուէ յօլւածով մասնակցած չէր լինում Նալբանդեանցը, կորցնում էր իր հետաքրքրութեան մեծագոյն մասը: Քայց միւս կողմից հաստատապէս կարելի է ասել, որ առանց Նաղարեանցի՝ Նալբանդեանցը միայնակ երբէք չէր կարող բարձրացնել այդ ամսագրի նշանակութիւնը այն աստիճան, որ նա հեղինակաւոր ձայն ունենար բոլոր ազգային — հասարակական հարցերում: Քացի գրանից ամեն բանով հրապուրող և յաճախ տպաւորութեան տակ գործող, անփոյթ և ուսանողական կեանք վարող Մ. Նալբանդեանցը երբէք չէր կարող Ս. Նաղարեանցի նման օրինակելի խմբագիր լինել, որ ամեն բանի մէջ դերմանացու նման սիստեմասէր և ճշտասլահ էր:

Նորածին ամսագրի նպատակը պարզ արտայայտեց 1857 թւի յայտարարութեան մէջ: Նաղարեանցը ցանկանում է հիմնել հայ մամուլի մի օրդան. այդ օրդանը բազմակողմանի գաստիարակութիւն պիտի տայ հայերին. դա մի կամուրջ պիտի լինի ասիացի հայերի և եւրոպական ազգերի միջև, հողւոր հաղորդութեան մի միջոց հայերի և արեւմտեան լուսաւորութեան մէջ: Ուստի նա իր մէջ պիտի պարունակէ ամեն տեսակ հասարակական հարցերի վերաբերւած յօլւածներ թէ ինտէլիգէնաների համար դրւած և թէ վաճառականների, հողւորականութեան, արհեստաւորները և միւս գասակարգերի: Եւ որովհետև նա ժողովրդի համար է հրատարակւում և պէտք է ի նկատի ունենայ նրա կարիքները, ուրեմն նա պիտի հրատարակէ այդ ժողովրդին և կամ նրա մեծամասնութեանը հասկանալի լեզուով:

«Արեմն մեր տպելի օրագիրը յանձնառու լինելով ծառայել ժողովրդի օգտին նորա ժամանակի համեմատ, սպարտական է խօսել ազգի բազմութեան հետ, ինչպէս սա կարող էր հասկանալ, այսինքն այնպիսի ոճով, որ առաւել մօտ է հայոց կենդանի, ընկերական բարբառին, առանց լինելու խաժամուժ ամբոխի գռեհկարանութիւն... Պատրաստել մի այնպիսի լեզու, որ իւր նախնական հիմն ու արմատը հաստատ պահելով՝ դորձակատար լինէր նոր ժամանակի կենդանի հայախօսութեան ձևերով ու ոճերովը... Մեր դիտողութիւնը շինութիւն է, բայց ոչ երբէք կործանութիւն և աւերանք, որոնցից հետի պահէ մեզ Աստուած և բոլոր երկնային գորութիւնը: Այս հիմքերի վրայ, որպէս մի անխախտելի ամուր ասպառափի վրայ ոտք հաստատելով մենք և մեր օրագիրը, երկու տեսակ պաշտօն կայ մեզ կատարելու միանգամայն, այսինքն օգտակար տեղեկութիւնք տարածել ազգի մէջ և մշակագործել հայկական կենդանի լեզուն»: Եւ Նազարեանցի օրգանը լիովին կատարեց իր ծրագիրը, ի հարկէ այն չափով, որ չափով որ հնարաւոր էր այն ժամանակին և այն պայմաններում, որոնց մէջ նա լոյս աշխարհ գուրս եկաւ<sup>1)</sup>:

Հիւսիսափայլում լոյս տեսած բազմութիւ յօդածները «նոր կեանքի համար նոր լեզուի» անհլաժեշտութեան մասին, դրականութեան բոլոր բաժիններին վերաբերեալ ինքնուրոյն և թարգմանական գրածքները, աշխարհաբառ լեզուով լոյս տեսած ամեն մի նոր, մինչև իսկ թերի, հրատարակութեան խրախուսանքը, վերջապէս Հիւսիսափայլի շնորհիւ նորարոյս աշխարհիկ լեզուի յաջորդաբար ձօխանալը և դարգանալը — այն հետևանքն ունեցան, որ այնուհետև դրաբառ գրելը դարձաւ ակնյայտնի անախրօնիզմ, և ապացոյց էր գրողի յետամնաց և յետադէմ հակումներ ունենալուն: Նազարեանցի և Նալբանդեանցի, քաղաքական ակնարկներով խառը, հրապարակախօ-

<sup>1)</sup> Դեռ ևս Հիւսիսափայլի հրատարակելուց առաջ՝ Նազարեանցը մի քանի անգամ ասպարէզ ելաւ նոր լեզուի պաշտպանութեան համար՝ լոյս ընծայելով «Յոգեղէն կերակուր հայ երեխաների համար», երկհատոր «Հանդէս նոր հայախօսութեանը» և այլ աշխատութիւններ:

սակաւն յօդածները շատ լաւ համապատասխանում էին իրանց նշանակութեանը. նրանք իսկապէս արթնացնում էին թմրած հայրենակիցներին, գործունէութեան էին հրաւիրում նրանց, եռանդ էին զարթեցնում. նրանց մէջ և հայկական կեանքի նոր զարագլուխ էին աւետում: Այս ամսագրի մէջ առաջին անգամ որոշակի հնչեց հաստատ համոզած ձայնը խաւարի և ամեն տեսակ նախապաշարմունքների դէմ. այստեղից առաջին անգամ լսեցին հայերը եւրոպական դպրոցների, թատրոնի, ընկերութիւնների և այլ այդպիսի կուլտուրական հիմնարկութիւնների անհրաժեշտութեան մասին, այստեղ առաջին անգամ խօսեց ազգային և կրօնական համբերողութեան մասին. հոգևորականութեան կոչման, արևմտեան լուսաւորութեան նշանակութեան մասին և այլն և այլն: Համարձակ կարելի է ասել, որ Հիւսիսափայլի համարները այն ժամանակաւ հայի համար իր տեսակում մի մի յայտնութիւններ էին. դրանք այն ժամանակ միակ գրքերն էին որոնց միջից հայը կարող էր քաղել նոր, լուսաւոր գաղափարներ, ողջամիտ հայեացքներ և ժամանակակից կեանքի նկատմամբ ազնիւ քննադատութիւն:

Ահա այս սկզբունքներով դասախարակեց նոր մանուկ սերունդը, որը լետագայում ոչ պակաս եռանդով սկսեց աւարածել իր ուսուցիչներին գաղափարները, ժողովրդականացնել նրանց, գործադրել կեանքի մէջ և լրացնել բաց մնացած տեղերը:

Այդ մանուկ սերնդի ներկայացուցիչը և Հիւսիսափայլի ջերմ երկրպագուներից մէկը եղաւ և Ս. Զահ-Աղիզը: Աշխատակցելով ամսագրին՝ նա միջոց ունեցաւ մօտից ծանօթանալու վաթսնական թւականների գործիչների շրջանի հետ, որի հոգին էր Ս. Նազարեանցը: Ժամանակի ընթացքում ծերունի և երիտասարդ դրականները այնքան մօտեցել և մտերմացել էին, որ Ս. Նազարեանցը մահւան անկողնում դառնում է գէպի իր երիտասարդ ընկերը ասելով՝ «Այն, ինձ մնում է մեռանել: Կարծում ես դու՝ որ ես մահից երկիւղ ունիմ, ո՛չ, իմ ազնիւ ընկեր, դա մի բնական հարկաւորութիւն է: Բայց այն սիրելութեան կապերը, որ կատարում էին միմեանց հետ երկու սիրող սրտեր, այն քնքուշ յարակցութիւնները, որ կային երկու անձ-

նանէր բարեկամների մէջ, եթէ խմանալիր օրքան դառնութիւն եմ գում, երբ մտածում եմ որ այդ կապերը, այդ յարակցութիւնները պիտի քայքայէին»: Միւս կողմից Ս. Զահ-Աղիզը իր սիրելի հոգևոր ուսուցչի-և մտերիմ ընկերոջ, «օրհնեալ հայի լիշատակին» ներում է հորացիտի ոճով գրած հետեւեալ ազգու ոտանաւորը՝

Անձեռագործ դու մահարձան քեզ կանգնեցիր,  
Ո՛չ հոգանիւթ, որպէս երկաթ կամ որձաքար.  
Հրդօր գրչով, սուրբ վաստակով ու անձանձիր,  
Զունչ կենդանի և յետ մահւան հանդիսացար:  
Ահա Նոր Ազգ և Նոր Լեզուդ իւր ձիթենին,  
Քո ջրով բուսած, քեզ է բերում, ո՛վ Ստեփանոս,  
Խաղաղ մնան, մի վրդովւելիր, քոնն է գափնին,  
Խաւարի մէջ լոյս մեզ ծագող Պառմէթևոս:  
Աշխարհ ծնար և աշխարհիս դարձար մշակ,  
Բայց չտեսար այս աշխարհից անդորրութիւն,  
Աշխատաւոր մարդկան բաժին է փշեայ պսակ,—  
Ա՛հ, քրտնաջան ոսկրներինդ խաղաղութիւն:

Հիւսիսափայլի խափանելուց յետոյ՝ Զահ-Աղիզը ներկայացաւ իբրև մէկը այդ լուսաւոր ուղղութեան եռանդուն շարունակողներից և պաշտպաններից, իր բանաստեղծութիւնների և մանաւանդ «Լեոնի վիշտը» պօէմայի մէջ նա կարծես ի մի է ամփոփում Նազարեանցի ամսագրի բոլոր էական մտքերը: «Հրապարակախօս ձայն» կէս քննադատական—կէս ընդդիմախօսական գրած քում<sup>1)</sup> նա ժամանակադրական կարգով մանրամասն քննութեան ենթարկեց Նազարեանցի դործունէութիւնը, իրան յատուկ բանաստեղծական վրձինով նկարագրեց Ս. Նազարեանցի վեհ անձնաւորութիւնը և միանգամ ընդմիջտ ցոյց տւեց, թէ

<sup>1)</sup> Այս աշխատութիւնը լոյս տեսաւ 1881 թ. իբրև պատասխան Օրիցեանի յօդածներին, որոնց մէջ վերջինս Նազարեանցի գործունէութիւնը և նրա օրգանը ենթարկել էր խիստ և տեղ տեղ անարդար քննադատութեան:

ինչ ահագին դործ է կատարել Հիւսիսափայլը: Աերջապէս մի քանի տասնեակ տարիներ Լազարեան ձեմարանում հայոց լեզուի և դրականութեան դասատու լինելով՝ Ս. Զահ-Աղիզը անխոնջ ընթացել է իր ուսուցիչների հարթած շաւղով և մինչև այժմս էլ ցանում է նա հայրենեաց և լուսաւորութեան սիրոյ սերմեր՝

«Փնօք և երանի  
Քեզ, քան սերմնացան,  
Որ դաշտն հայրենի  
Չես թողնում խոպան,  
Որ ջերմ յոյսերով  
Գու նորա գրկում  
Եպրում ես սիրով,  
Եւ սիրով տանջում<sup>2)</sup>»:

Գ

Այժմ դառնանք «Լեոնի վիշտը» պօէմային: Պօէմայի հերոս Լեոնը ոչ որև է անձնաւորութեան կենդանաղիւր է, ոչ էլ իրան հեղինակի պատկերը: Սա մի հաւաքական տիպ է: Իրաւ է, Լեոնը մասամբ վիշեցնում է Նալբանդեանցին, մասամբ և Նազարեանցին և մանաւանդ իրան հեղինակին, բայց միայն իր բնաւորութեան, վարմունքների, ճառախօսութիւնների յայտնի կողմերով. իսկ լիովին նա այդ երեքից ոչ մէկին նման չէ, և այդ պատճառով է որ հերոսը հեղինակի զրջի տակից դուրս է եկել ոչ թէ պարզ, կենդանի, այլ որպէս թէ մշուշով պատած, անորոշ ուրուական: Բայց երևում է, որ հեղինակը իրան նպատակ էլ չէ գրել ներկայացնել մեզ մի յայտնի ընտանեկան պատկեր, այլպէս նա մեզ կը ծանօթացնէր Լեոնի՝ թէ ճաշակի, թէ հակումների, և թէ նրա մասնաւոր կեանքի, դուցէ և նրա արտաքին ախպարի և շարժողութեան ձևերի հետ, որը սակայն մենք չենք դտնում պօէմայի մէջ: Եւ սա հասկսնալի

<sup>2)</sup> Մէջ բերած տողերս վերցրել եմ Ա. Ծատուրեանի «Սերմացան» սիրուն ոտանաւորից:

է: Հեղինակի նպատակն է եղել՝ տղիտուժեան խաւարի մէջ խարխափող ժամանակակից հայ հասարակութեան այլանդակ պատկերը ներկայացնել և այդ դրութիւնից ելնելու ճանապարհացոյց տալ: Ուրիշ խօսքերով ասած՝ հեղինակը իրան հրապարակախօսական և դատարարակցական նպատակ է դնում: Եւ ահա թէ ինչու հեղինակը մերթ հռետոր-հրապարակախօս է հանդիսանում, մերթ նկարիչ-բանաստեղծ, մերթ կրկին պերճախօս մարգարէ:

Պօէմայի հէնց առաջին տողից հեղինակը ծանօթացնում է մեզ իր հերոսի-Ղևոնի հետ: Ապրում է վերջինս Մոսկւայում, ծագում է հին հայկական աղնուական տոհմից, նա թողել է հայրենիքում պառաւ մօրը, որի կարօտն է քաշում միշտ: Այդ կողմից Ղևոնը իրան—բանաստեղծի հետ երկուորեակներ են: Բայց նմանութիւնը դրանով չի վերջանում. նա հեղինակի նման բարձր կրթութիւն ստացած երիտասարդ է, նրա նման մի ժամանակ սիրելիս է եղել և այժմ հիասթափման դառնութիւնն է ճաշակում: Սակայն բանաստեղծը աւելացնում է՝

«Թէև Ղևոնը սիրեց անյաջող,  
Բայց այս դիպւածից չկարծես, ընթերցող,  
Որ Ղևոն և ես—նոյն ենք, մի արիւն»:

Նալբանդեանցի պէս Ղևոնն էլ զգայուն է, նեարդային և մտախոհ: Իր կեանքի հէնց առաջին քայլերից նա զգաց հայ ազգի տղիտուժեան և բարոյական թմրութեան վնասակար հետեւանքները: Նա տեսնում էր թէ ինչպէս վերածնութեան ոգին նոր կեանք ու եռանդ ներշնչեց Խալաթի ազգին.

«Նա տեսնում էր և իտալական  
Չաղկապեալ սիրոյ միութեամբ կնքած  
Յաջողակ դործը, և գարիբալդեան  
Զէնքի յաղթութիւն, այնքան հռչակւած»:

Նա այդ բոլորը օտարների մէջ էր տեսնում, իսկ իր ազգի մէջ մօտիկ ապագայում վերածնելու մի նշան անգամ չէր նշմարում: Եւ վճատման ու հիասթափման տրամադրւած Ղև-

ոնի հոգին ևս առաւել մռայլում է: Հեղինակը յաճախ լիշատակում է նրա վշտի, նրա հիասթափման մասին, որով առաջին երգը լիովին համապատասխանում է իր էպիգրամին, որ առնւած է Բայրընի «Չայդ-Հարօլլից»՝

«Ты хочешь знать давно—о чемъ моя печаль,  
Которой никогда я не могу забыть!  
Не спрашивай о томъ; тоску мою  
Кто можетъ излечить?»

Ղևոնի օրերը, ասում է հեղինակը, տխուր և միակերպ էին անցնում, ոչ մի ուրախութիւն նրանում ծիծաղ չէր յարուցանում. մի անվերջ կսկիծ լափում էր նրան,— ինչպէս կարող էր նա ուրախանալ: Նա առանձնանում էր—և ժպիտը անհետանում էր նրա շրթունքներից՝

...«Ղևոն յուսահատելով  
Թափում է սրտի կսկիծ ու վիշտեր»:

Ղևոնը Ղերմոնտովի նման «տխուր նայում է ներկայի վրայ»: Ղևոնի յօրինած երգի<sup>1)</sup> մէջ նրա տրամադրութեան այս մռայլը աւելի է թանձրանում՝

«Իմ կեանքը ինձ բեռը դարձաւ,  
Վերահասաւ սև գիշեր:  
Անոյշ ժպիտը հոգուս փախաւ,—  
Ասառած օրհնէ քո օրեր:

Բայց հայրենիքի տնհուն սէրը, նրան օգնելու բուռն յանկուժիւնը թոյլ չեն տալիս Ղևոնին միանգամայն յուսահատել, այլ ընդհակառակն ստիպում են նրան խորասուզել

<sup>1)</sup> Բայրընից սկսած բոլոր՝ դարուս սկզբին երևացող՝ պօէմաներում գետեղւած են լինում «երգեր», որոնք անմիջական կապ չունին բովանդակութեան հետ: Այդպիսի «երգեր» մենք գտնում ենք Բայրընի, Միջկեւիի, Պուշկինի, Ղերմոնտովի և այլոց մօտ. նոյնը տեսնում ենք և այստեղ:

իր մէջ, քննողաբար վերաբերել շրջապատողներին և միջոցներ որոնել իր վշտի պատճառը հեռացնելու: Իր ազգի ճնշւած, ողորմելի դրութիւնն էր գլխաւորապէս, որ նրան վիշտ էր պատճառում, — վիշտ, որ սաստկացել էր սիրոյ մէջ կրած ճախորդութիւններից և մարդկանցից յուսախար լինելուց: Ի դուր չէ ասում նա՝ «Անգին հայրենիք, ցաւերիս պատճառ»:

Լեոնը հայրենասէր է, բայց ոչ սանախմէնտալ, աննպատակ հայրենասէր՝

«Քեզ, անգ, սիրում եմ, բայց ոչ այն սիրով,  
Արով սիրել են քեզ մինչև այսօր»:

Նա գլուխ չէ խոնարհում այն ամենի առաջ, ինչ որ ազգային է. ընդհակառակն նա շատ կրիտիքաբար է վերաբերում նրան: Այ թէ շողոքորդել, այլ օգնել է հարկաւոր, և ազգին օգտակար լինելու միջոցներ է որոնում նա: Առաջին միջոցը, որ նա մի քանի անգամ որոշ յայտնում է, — լուսաւորութեան տարածումն է: Հայերի ժամանակակից ողորմելի դրութիւնը առաջանում է անշուշտ տղիտութեան այն անթափանցելի խաւարից, որ տարածւած է նրանց վրայ: Արեմն պէտք է փարատել այդ խաւարը, լուսաւորել ազգը, և այն ժամանակ նա ինքն արդէն կըհասկանայ և կըվճռէ թէ ինչ պէտք է անել: «Իսկ թէ հորիզոն բացւի կըթութեան, — ասում է Լեոնը իր մենախօսութեան մէջ — կըբացւի և քեզ դուռը փրկութեան...»: Լեոնը վճռում է «նոր սկզբունք» աւետել հային, ի նկատի ունենալով անշուշտ Հիւսիսափայլի այն փսեմ գաղափարները, որով ազգը հրաւիրւում էր դէպի կեանք, զործ և լուսաւորութիւն: Եւ ահա Լեոնը գնում է քարոզելու իր ազգին այս նոր սկզբունքը: «Վշտի դէր» հոգու մէջ, անձնէր զործունէութեան ծարաւով, նա թողնում է Մոսկւան և քայլերը ուղղում դէպի Հայաստան: Այդ ժամանակաւ Լեոնի արամազրութիւնը հեղինակը բնորոշում է հետևեալ կարծ, բայց իմաստալից նախադասութիւնով՝

«Եւ թէ կատարւած էր իւր նպատակ —  
Իննայելու չէր կեանքի զոյութիւն»:

Հետաքրքրական է մի մանրամասնութիւն: Ս. Ղահ-Ազիզի Լեոնը, Քայրընի և Պուշկինի հերոսների նման վճռում է ճանապարհորդել և նոյն այդ հերոսների նման իր հետ վերցնում է «սիրած զրքերը»՝

«Սիրած զրքերից մեծ պաշար առած. —  
Տխուր մեղեղիք Հէյնէ պոյէտի,  
Գէօտէ'ի Փառստ, այս անմահ քերթւած,  
Թափառաշրջիկ արկածքն Հարօղի:

Երգիծանիչ գործը Յոբենալի,  
Եւ Ֆեռանթէ'ի ողբից երգեր:  
Եւ պատմութիւնը լրջամիտ Քեօքլի,  
Եւ Ղաքսպիլի ողբերգութիւններ:

Մի քանի համար Մեղուից Պոլիսի,  
Մի քանի երգեր մեզ ծանօթ Կոմսի, —

Այսպիսով մենք տեսնում ենք, թէ Լեոնը ինչ ողով և սկզբութեամբ է ստացել իր կըթութիւնը. մի կողմից նա ուսումնասիրում է ամենախորիմաստ երկեր, միւս կողմից գրաւում է վիշտ ու տրտմութիւն երգող բանաստեղծներով: Կրքերի այդ ընտրութեան մէջ նոյնպէս շատ պարզ նշմարում է գրական թէ Նազարեանցի, թէ Նալբանդեանցի ազգեցութիւնը: Յայտնի է, որ Մ. Նալբանդեանցը շատ էր ողևորում Քերանթէի ժողովրդական երգերով և Հէյնէի մեղեղիներով:

Հեղինակը միտնգամից ձեռնամուխ չի լինում նկարագրելու Լեոնի ճանապարհորդութիւնը: Երկրորդ երգի սկզբում Լեոնի յուետես խորհրդածութիւնների իրաւացիութիւնը ապացուցանելու և նրա անհուն վշտի բուն աղբիւրը ցոյց տալու պատրուակով՝ հեղինակը սկսում է ամենամաւալ զոյներով նկարագրել ժամանակակից հայերի մտաւոր խաւարը և անշարժութիւնը: Այստեղ բանաստեղծը կորցնում է իր հաւասարակշռութիւնը. փոխանակ վշտահար քնտրեբրակ և հոգեբան լինելու, նա դառնում է հրապարակախօս և հռետոր, թէպէտ երբեմն շատ պերճախօս: Նա գանդատում է որ զպրօցները

աակաւ են, որ նրանք նահապետական դրութեան մէջ են գտնուում, որ ուսուցիչները կոպիտ են և տղէտ, կրօնուսուցիչները քեամնաց և կեղծ ազգասէրներ են, իսկ ճշմարիտ հայրենասէրներ չըկան, և այլն և այլն անվերջ գանգատներ: Չինութիւնը հնացել է, հարկաւոր է նորոգել—ահա դրանց ուղիւմէն: Բայց Ղևոնի պէս մարդու համար միթէ դժուար էր ձեռնամուխ լինել այդ նորոգութեանը, մանաւանդ «որ վառ է Ղևոն, որպէս մի հնոց» և որ նա ունի «սիրտ, որ պատրաստ է իտպառ պատուել և հիւանդ եղբօր փրկութիւն գնել»: Ընթերցող սպասում է, որ Ղևոնը աճապարելով հայրենիք՝ իսկույն գործի ձեռք կըզարկէ: Ի՞նչ գործի—սա այլ հարց է: Տեղը, հանգամանքները, Ղևոնի հակումները իրանք ցոյց կըտային՝ ինչ գործունէութիւն ընտրել. այդ գործունէութիւնը կարող էր լինել մանկավարժական, դրական (Ղևոնը բանաստեղծ է), հրապարակախօսական, հոգևոր, իսկ յայտնի պայմաններում՝ և քաղաքական: Ի դուր չէ որ դարիբալդեան սրերի շառաչիւնը նրան հանդիստ չէ տայիս...

W

Սակայն մեր ակնկալութիւնները չեն իրականանում: Գեռևս գործի, սիրազորութեան ժամանակը չէ հասել. ճառասուտութեան, քարոզի շրջան էր դա: Ղևոններին վիճակած էր միայն վէրքերը բաց անել, ցաւերի տեսակները որոշել, և ոչ թէ բժշկել: Անշուշտ կաշող էին բացառութիւններ լինել. այսպէս յայտնուում էին մարդիկ, որ ուղղակի գործին էին գիմում: Եւ Ղևոնը, իբրև լիսնական և վաթսնական թլակահանների շրջանի լաւագոյն մարդկանց ներկայացուցիչ, անշուշտ կարող էր հետևել դրանց օրինակին: Բայց Ղևոնը հաւաքական տիպ է, ուստի նրանում այն գծերը սիտի գերակշռէին, որոնք աւելի բնորոշ էին նրա ապրած միջավայրին և ժամանակին: Ղևոնը չի գործում, այլ խօսում է, քարոզում, յանդիմանում, շանթեր արձակում. նա ինքը գրաւում է իր ճառասուտութիւնով, որը լիովին անկեղծ է: Նա մտադիր էլ չէ հրաժարելու խօսքերը գործով ապացուցանելուց, բայց գանգազում է. Ղևոնը, չընայելով իր եւրոպական կրթութեանը, հաւատարիմ է մնում իր մէջ գերակշռող բնագծին—աւելի խօսել

քան գործել: Ահա նա ճանապարհին մտնում է մի հայաբնակ քաղաք: Հոգևոր հովիւի անվայել կեանքը,—հովիւի, որ ամբողջ հասարակութիւնը իր դէմ է յարուցել, առիթ է ապիս Ղևոնին շատ ու շատ դառն ճշմարտութիւններ ասել հոգևորականների ստոր կրթութեան, նրանց անպարտաճանաչութեան, նրանց եղբիտական հակումների, նրանց լիտամնացութեան վերաբերմամբ: Ղևոնը Կովկասումն է, մի մեծ բազմացեղ ազգաբնակիցի հետով քաղաքում: Այստեղ նա յաճախ է հանդիպում և շփուում հասարակութեան հետ, ուստի աւելի շատ է արտասանում որոտալից ճառեր, սպառնալիքներ, սուր կշամբանքներ: Թէև տրտմութիւնը և մեկամաղձոտութիւնը մի ըսպէ անգամ չեն հեռանում Ղևոնից, որի մասին յաճախ լիշաաակում է հեղինակը, սակայն նա հետզհետէ կորցնում է իր բնաւորութեան հանդարտութիւնն ու մեղմութիւնը և Չացկու նրման մոտանալով քաղաքավարական կանոնները՝ մինչև իսկ կոպտաբար վիրաւորում է ուրիշին: Ազնիւ յուզմունքից զրզրուած՝ Ղևոնը, սկսում է ամեն մի աննշան առիթից բռնկւել և յարձակւել, անշուշտ չընկատելով, թէ դա այնքան էլ վայելուչ բան չէ մի մարդու համար, որ ամբողջ գլխով բարձր է կանգնած հասարակութիւնից:

Ահա և պարսաւանքը, ուղղած հայ օրիորդների դաստիարակութեան դէմ: Պօէմայի բոլոր դիպաքտիկական տեղեղերից սա ամենալաւն է՝ թէ իր հնչուն տաղաչափութիւնով, թէ ուժեղ արտայայտութիւնով, թէ ներքին, բանաստեղծական զեղեցկութիւնով: Մեր խօսքը «Քաղցրաձայն բամբիւն» բառերով սկսող տների մասին է, որ ինքն ըստ ինքեան մի զեղեցիկ բայլադա է ներկայացնում: Այն հակադրութիւնը, որ նկատուում է ժամանակակից հայուհիների և նրանց, հինգերորդ դարում, գործող, նախորդուհիների միջև, այստեղ դուրս է բերւած պատկերօրէն, ուղիւէֆ, առանց բռնանալու պատմութեան կամ իրականութեան վրայ: Պատմաբան-զեղարեստագէտ Եղիշէի զբոյժ անմահացած հայուհիները յանձին՝ Ս. Չահ-Ազիզի գտնում են մի նոր ողևորւած ջստագով. բայց մի ըսպէ մտաւորապէս փոխադրելով դէպի հինգերորդ դարի հայ

կանայքը, դէպի այն ժամանակուայ բնական, բայց Հայրենասիրական կրթութիւնը, Լեօնը դարձեալ նորից անձնատուր է լինում իր մօայլ մտածմունքներին: Փամանակակից Հայուհիները չունին ոչ գարգացում, ոչ դաստիարակութիւն: Հայրենիքի վիճակը լուր դատարկ բառեր են նրանց Համար, ամեն ինչ մայրենի՝ օտար է նրանց:

«Աղջիկը չունի դաստիարակութիւն,  
Ո՛չ ազգի Հոգով և ո՛չ օտարի.  
Սրտաքին պչրանք և փայլողութիւն,  
Ա՛յս է Հոգևոր կերակուր կեանքի»:

Քայց կնոջ գրութիւնն ընդհանրապէս ծանր է. նա ոչ միայն Հայերի մէջ, այլև ամեն տեղ ոտրուկ է: «Գու միշտ երեխայ,—վճռեց օրէնքը, և միշտ Հոգաբարձութեան անձնատուր»: Այստեղ Լեօնի բերանով Զահ-Աղիզը, առաջիններից մէկը Հայերի մէջ,—իսկ Հայկական սօփիայի մէջ ուղղակի առաջինը—ձայն բարձրացրեց կանանց Հաւտար իրաւունքի, նրանց ազատութեան Համար: Աղջկանցից դառնալով մայրերին, Լեօնը պատուիրում է կրթութիւն տալ աղջկերանց. դրանից է կախած Հայրենիքի ասպարան, դրանից է կախած և իրենց վիճակը: Պօէմայի Հետևեալ տներում Լեօնը բաւական խիստ կերպով յարձակում է Հարուստ Հայերի, ոսկէ Հորթի երկրպագուների դէմ: Չընայելով Լեօնի իրաւացի յարձակումներին, այդ տեղը նախընթաց տների ազգու տպաւորութիւնը չի գործում:

Եթէ Զահ-Աղիզի մի քանի բանաստեղծութիւնների մէջ երևում է երգիծաբանական ջիգ, ապա այդ լիովին արտայայտւած է պօէմայի մէջ: Իբրև մէկը կծու երգիծական տեղերից մատնացուց անենք երրորդ երգի վերջը, ուր նա յարձակում է ոտանաւոր թխողների վրայ և չարաչար ծագրում է իրեն ժամանակակից քանքարադուրկ բանաստեղծներին: Ինչպէս երևում է, ոտանաւորչիները մեր նորագոյն գրականութեան Հէնց առաջին օրից՝ ոտք են կոխել նւիրական ասպարէզի վրայ և

իրանց արտագրութիւնների քանակութիւնով նոր ջրհեղեղ են առաջացրել: Գեղարեստական ճաշակով օժտւած մեր Հեղինակին նրանք այնպէս են գայրացնում, որ նա խօսք չի գրտնում նրանց ոտանաւորները բնորոշելու Համար՝

«Թէ՛ տղևորէր ինձ նորա մուգան  
Որպէ՛ս այլ Հայոց տողաչափներին,—  
Ո՛հ, այն ժամանակ ո՛րքան գանազան  
Ա՛ղբ կըճախէի օրագրներին»:

Հայկից սկսած երկար ու բարակ  
Ես կըճառէի, տմարդի, անտաշ  
Բիթմ թխելով, և նոյնչափ արագ,  
Որպէս փուռնըջին իւր տախակ լաւաշ:

Տաղեր, առակներ և խենդուխելառ  
Ողբ, կական, երգեր կրկնցէի,  
Եւ այնքան անմիտ, և այնքան դժւար,  
Որ ինքքս անգամ չըՀասկանայի»:

Սակայն Հայ բանաստեղծների մէջ կայ մէկը, որին նա յարգում է և սիրում. դա անմոռանալի Նալբանդեանցն է, որին նւիրում է Զագ-Աղիզը հետևեալ տողերը՝

«Քայց քեզ Հանում եմ այս տխուր դասից,  
Ո՛վ նոր Հայախօս և ազնիւ մշակ.  
Քեզ կարող էի անմահ փուշերից  
Քաջ մարտիրոսի բոլորել պսակ»:

Քնարիդ լարերն ազատ շարժում են,  
Երբ ազատ քո կամք, ազատ քո Հոգին. —  
Այդպէս ստիակներ ներդաշնակում են  
Հ՛ուռ վանդակից թփերի միջին»:

Սրտիդ կսկիծը - կսկիծ է ազգի,  
Եւ ո՛չ մի դիմակ կեղծաւորութեան:  
Գրչիդ վաստակը — մեծութիւն Հայի,—  
Թէ՛ և Հայասէրք են քո դաւաճան»:

Ո՛վ ազգի անդամ, լաւէրժ յարգելի,  
Թո՛ղ մխիթարէ կուրծքիս հառաչանք  
Պայծառ ճակատորդ Հայրենասիրի,  
Որի վարձն եղաւ ապերախտ զրկանք:

Ինչպէս երևում է մէջ բերած տողերից, Նալբանդեանցը սիրելի է մեր հեղինակին ոչ իբրև գեղարւեստագէտ-բանաստեղծ, այլ իբրև ազատասէր-հրապարակախօս: Եւ ճիշտ որ Մ. Նալբանդեանցին դժւար է բանաստեղծ անւանել, թէպէտ և նա ունի մի քանի գեղեցիկ ոտանաւորներ և թարգմանութիւններ:

Չորրորդ երգի սկզբում, ի միջի այլոց, գրւած է 1859 թւի «Современникъ» ռուս ամսագրից անձմ մի էպիգրաֆ՝

Италія! Италія! о ты,  
Кому судьба наследіемъ несчастнымъ  
Даръ роковой вручила красоты!  
О лучшебъ ты была не такъ прекрасна,  
За то сильна!...

Էպիգրաֆը շատ յաջող է ընտրւած և լիովին բնորոշում է երգի բովանդակութիւնը: Հայաստանի թէ վիճակը և թէ բնութիւնը շատ կողմից նման են Իտալիայի վիճակին և բրնութեանը, այնպէս որ այդ տողերը համարձակ կարող են վերաբերւել և Հայաստանին: Ս. Չահ-Աղիլը հրաշալի գոյներով է նկարում Հայաստանի բնութեան պատկերները: Այդ բնութեան գրկում մարդս անշուշտ աւելի երջանիկ և ազատ պիտի զգայ իրեն՝ այնպէս չքնաղ, այնպէս հրաշալի են այդտեղ և անտառների թարմ օդը, և ծաղիկների անուշահոտութիւնը, սրպիսի բնութեան առատ պարգևներ, սրպիսի գարուն... Սակայն բանաստեղծը չի կարողանում չըբացագանչել<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Նոյն այս կոնտրաստը ողևորել է և չարգելի բանաստեղծ Գ. Բարխուդարեանին. տես նրա «Ճաճկահայաստան և Հայք» ոտանաւորը:

Բայց ինչո՞ւ, Անհաս, Գու ինայել ես  
Պարգևել սոցա և ազատութիւն:  
Ինչո՞ւ ամէն թուփ, թէև խիստ դալար,  
Գողում է, կարծես, ոտիս ձեռից.  
Խեղճիկ, ծածկւել է նորա ոսկէ դար,  
Խեղճիկ, դողում է նա արտասուքից:

Տաճկահայերը կրկնակի ճնշւած և դժբախտ են. մի կողմից նրանք հեծում են տաճկական լծի տակ, միւս կողմից՝ մեզ նման անշարժ են մնացած տղիտութեան խաւարի մէջ: Ինչպէս այս դէպքում, նոյնպէս և Ռազմավիրական ճանապարհին — երբ Ղևոնի առաջ յանկարծ սաւառնում է ազատասէր «արծիւ մենաւոր» — նրան մի բոպէ տիրում է պատերազմասէր զգացմունք: Սակայն այդ տրամադրութիւնն երկար չի տևում. նա կրկին բարձրացնում է իր նախկին դրօշակը և բաղադանչում՝ «Լուսաւորութիւն, լուսաւորութիւն է մեզ պէտք. թո՛ղ նա լինի մեր իշխանը, թո՛ղ նա պատրաստէ մեզ գեղեցիկ ապագայ և փառաւոր կեանք»:

## Ե

Այստեղ հեղինակը կանգ է առնում. Ղևոնը հասնում է իր ճանապարհորդութեան նպատակին, իսկ պօէման — իր վախճանին: Սա Ղևոնի կեանքի վերջը չէ. նա միայն իր «արկածքին վերջ դրեց», տեսնելով որ «չկարաց թաւալել Չարին»: Ուրեմն Ղևոնի կեանքի այն մասը, որ նկարագրեց հեղինակը, պատերազմ էր չարի դէմ: Առաջին նւազ այնպէս է երևում, կարծես հեղինակն այստեղ ինքն իրեն հակասում է, որովհետև Ղևոնի կատարածը դեռ կռիւ չէր: Գուրբ է. իսկ, ինչպէս տեսաւ ընթերցողը և ինչպէս խոստովանում է ինքը հերոսը, Ղևոնը դեռ ձեռնամուխ չի եղել գործի: Գործն ապագայումն է. գործի ծրագիրն և ուրուաղիծն է միայն տալիս մեզ հերոսը: Նա բժշկի նման որոշեց հիւանդութեան տեսակը

և ցոյց տւեց բժշկելու միջոցը: Աէ՛ս դառնութեամբ, կէս տարակուսանքով Ղևոնը նկատում է՝

«Ես շատ խօսեցի, բայց քիչ գործեցի,  
Գուցէ խօսքերըս ունայն գնացին»:

Բայց ո՛չ: Ղևոնի խօսքերը նոյն սերմերն էին, որ ինքը հեղինակը տասնեակ տարիների ընթացքում սերմանում է հայրենի գետնի վրայ: Միթէ այդ բոլոր սերմերն էլ քարքարոտ և անպէտք հողի վրայ ընկան և միայն վայրի՞ արօտ բուսցրին: Անշուշտ նրանք ընկած են և այնպիսի սրտեղի և ուղեղների մէջ, որոնք մէկին տասը և աւելի կրտան: Ես հաւատում եմ, որ աշխարհիս երեսին աղնիւ քարոզը, ճշմարիտ վարդապետութիւնն ապարդիւն, անհետւանք չի անցնում — չի գնում: Ուստի այդ կողմից քարոզն էլ, խօսքն էլ, եթէ իսկական գործ չէ, յամենայն դէպս գործի սկիզբն է:

Քննադատներից սմանք մեղադրում են Ս. Զահ-Աղիզին, որ նրա հերոսը գործելու, կամ աւելի լաւ ասած, գործ առաջացնելու ընդունակութիւն չունի. որ Ղևոնը միայն խօսում է, վիճում է, քննադատում է, բայց նրա ձեռքից բան չի դուրս գալիս: Թէ նա ոչ ուսումնարան է հիմնել, ոչ մամուլ է ըստեղծել, ոչ ընկերութիւն է հաստատել — ոչ մի բան չի արել, այլ միայն գեղեցիկ բառերով տաք տաք խօսել է: Այգպիսի մի մարդը, առում են նրանք, արժանի չէ հեղինակի ընտրելին լինելու, որովհետև նրա օրինակն ընթերցողների մէջ կարող է պռուտախօսներ ծնեցնել:

Ես համաձայն չեմ այդ քննադատների հետ. նախ որովհետև կարծում եմ, որ միակ խօսքն էլ, եթէ մինչև իսկ նրան չըհհեաւէ գործը, էլի օգտակար է՝ նայելով թէ ինչ խօսք է դա: Ղևոնը խօսքով սթափեցնում էր իր հայրենակիցներին քնից — նրա խօսքը, ուրեմն, լաւ խօսք էր և որ զլիսաւորն է հարկաւոր խօսք: Քա ինքն ըստ ինքեան գործի յառաջաբանն է: Երկրորդ՝ մենք իրաւունք չունենք մեղադրելու հեղինակին, որ նա Ղևոնի նման խօսող մարդուն հերոս է շինել, ինչպէս

իրաւունք չունենք մեղադրելու Մօլիէրին, թէ ինչն է նա Ալցիստինէ հերոս շինել, և ոչ ուրիշին. կամ Բայրընին — Չայլ դ Հարօլի համար, Իրիբոյեզովին — Չացիու համար և կամ Տուրգենեւին — Ռուզինի համար, թէ ինչ է — այդ բոլոր հերոսներն էլ աւելի խօսող են, քան գործող: Ընդհակառակն այն հանգամանքից, որ Ս. Զահ-Աղիզը մեզ տւել է Ղևոնին, ես եզրակացնում եմ, որ նա շատ բէալական և անկեղծ դրող է: Իրականութեանը հաւատարիմ մնալ ցանկացող հեղինակը պարտական էր վերցնել հէնց այնպիսի մի անձնաւորութիւն, որ Ղևոնի նման ցաւում է ազգային ցաւերով, տեսնում է նրա թշաւաութիւնը, քաջութիւն ունի բաց ճակատով խաւարի բարեկամների դէմ դուրս գալ, լուսաւորութեան կարեւորութիւնը քարոզել և գործունէութեան լայն ճրագիրներ կազմել, բայց ինքը - չի գործում: Կան շրջաններ, երբ գործը կարծես ամփոփւում է խօսքի մէջ. Ղևոնն այդ շրջանի մարդն էր: Ես ցաւում եմ միայն, որ հեղինակն իր խոստումը չըկատարեց և չըտւեց մեզ Ղևոնի կեանքի շարունակութիւնը: Ընթերցողը չըմոռացաւ Ղևոնի խօսքերը՝

«Աստուած տալ, որ սիրտս նոր յուսով լցւի.  
Այդ օրից կեանքըս կը տամ ես գործի».

և սպասում էր, որ կըհասնի այդ օրը և Ս. Զահ-Աղիզը կըլինի «Ղևոնի գործը» երգիչը: Բայց իզուր:

Ս. Զահ-Աղիզը դրանից լետոյ բաւականի բան գրեց, բայց պօէմայի սպասւած շարունակութիւնը լոյս չըտեսաւ: Երևան եկան նոր վիպասաններ՝ Բաֆֆի, Մուրացան, Ղիրվանդադէ և այլք, որոնք Սարհատների, Գուգուկեանների, Գարեգինների ու Գիմաքսեանների մէջ բաժանեցին այն մեծ գործը, որի աւետողն եղած էր Ղևոն:

Ի վերջոյ չեմ կարող չըխոստովանել, որ ես անձամբ սիրում եմ Ղևոնին, և նրա վիշաք կարգալիս ես չիշում եմ խաչատուր Աբովեանին, Նազարեանցին, Նալբանդեանցին և ռուսահայ միւս պիօներներին: Ղևոնն այն հազաւալիտ անձ-

նաւորութիւններին է, որոնց այնքան բարձր է դատում Փ. Գիզդրինկան իր Սոցիոլոգիայի մէջ: «Սակաւ առ ոսկաւ—ասում է նա,— դարից—դար, հասարակութիւնը, որ մարդ է ստեղծում, ինքն էլ վերանորոգում է մարդու ձեռքով: Մանաւանդ նշանաւոր է այս գործում այն փոքրաթիւ անհատների ազդեցութիւնը, որոնց հանճարը թափանցում է անյայտի մէջ. մտքի և գործի այն պիօներների, որոնք յանդգնում են մենմենակ ընթանալ դեռ ևս չըհարթուած ճանապարհով. այն անձնուրաց և մարդասէր մարդկանց, որոնք—շատ անգամ չընայած գրկանքների, վիրաւորանքների և վշտերի—համոզում են մեզ, որ կեանքի գալուստն երազ չէ: Գլխաւորապէս այդ անհատների շնորհիւն է, որ մարդկութիւնը կարողացել է գոնէ փոքր չափով բարձրանալ ֆիզիքական կեանքից՝ դէպի աւելի լայն, ազատ և լուսաւոր ասպարէզ»: Այսպիսի մի անձնաւորութիւն է ներկայացնում մեզ—մեր, հայերիս կեանքի մէջ—**Ղևոնը**:

Հեղինակին անշուշտ դժւար էր բաժանել այդպիսի մի հերոսից և մենք հաւատում ենք, որ նա լիովին անկեղծ ասում է իր վերջաբանի մէջ՝

«Երբէք չըզգացի այնքան տրտմութիւն,  
Երբ Ղևոնի հետ ես բաժանեցայ.—  
Մէ, մի կապարեայ ճնշող ծանրութիւն  
Եկաւ և նստեց իմ կուրծքի վերայ»:

Ծանր էր հեղինակին անջատել Ղևոնից՝ և ոչ միայն այն պատճառաւ, որ Ղևոնն ազնիւ գործիչ էր և լաւ մարդ, այլ և այն պատճառով որ Ղևոնը հեղինակի կտորն էր, հոգու հատորը: Ս. Զահ-Աղիլի և՛ մանկավարժական, և՛ բանաստեղծական, և՛ հրապարակախօսական գործունէութեանց սաղմը գտնուում է Ղևոնի և նրա շրջանի մէջ: Ս. Զահ-Աղիլը իրաւունք ունի հնադարեան փիլիսոփայի խօսքերով ասել՝ «Իմ էութեան ոչ մեծագոյն, բայց լաւագոյն մասը «Ղևոնի վշտի մէջն է»:

*Մինաս Բերբերեան*

ԱՐԵՒՄՏԵԸՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ <sup>1)</sup>



այերինն նոյնպէս, անշուշտ պիտի դասել այն ազգերի շարքը, որոնց քաղաքակրթութեան պատմութեան մէջ XIX դարը կարևոր դեր խաղաց: Յիրաւի, այդ իսկ դարումն էր որ ծնաւ ու որոշ գարգացման հասաւ հայկական նոր զրականութիւնը, արձազանք տաւ իրան ծնող ազգի պահանջներին ու հարցերին և միևնոյն ժամանակ ներշնչեց ընդհանրապէս, եւրոպական քաղաքակրթութեան ոգուց: Ի հարկէ, այդ զրականութեան բոլոր ձիւղերը դեռ չեն կարող մինչև այժմ իսկ պարծենալ առանձին հարստութեամբ. իսկ նրան համեմատելու՝ արևմտա-եւրոպական գլխաւոր ազգերի զրականութեան հետ՝ խօսք անգամ չէ կարող լինել: Սակայն, չըպէտք է մոռանալ, որ մի քանի տասնեակ տարիներ առաջ հայ գեղարեստական նոր զրականութիւնը դեռ ևս գոյութիւն իսկ

<sup>1)</sup> Գրեւծ է յատկապէս «Պտակ» ժողովածուի համար. բնագիրը խմբագրութեան սեպհականութիւնն է: Թարգմանել է ռուսերէն բնագրից:

չունէր. չըկար մինչև իսկ այժմեան գրական լեզուն. ստիպւած էին զրաբառ գրել, զրաբառ, որ չէր հաշտուում նոր հասկացողութիւնների հետ: Եթէ այս ի նկատի առնենք, այն ժամանակ հայ գրականութեան տղաքան կարճ ժամանակաւ ընթացքում ձեռք բերած արդիւնքը կարելի է անւանել բաւական յաջող...

Նորագոյն հայկական գրականութեան ծնունդն ու աստիճանաբար զարգացումը տեղի ունեցաւ արևմտեան-Եւրոպայի քաղաքակրթութեան գորեզ ազդեցութեան տակ, որին, Ռուսիայի սահմաններում, միացաւ նաև ռուս գրականութեան ազդեցութիւնը: Սկզբում ի հարկէ, օտար օրինակների հետևելը շատ անելի շեշտուած էր, որովհետև պէտք եղաւ գրեթէ ոչնչից՝ ստեղծել հայ վիպասանութիւնը, թատերգութիւնը, քնարերգակ բանաստեղծութիւնը և այլն. և, բնականաբար, ըստիպւած էին օտար ցուցմունքների, օտար օրինակների հետեւել: Երբեմն նոյն իսկ, չընայելով որ տեղական ազգային տարբեր կային, որոնցից կարելի էր գոյացնել մի ինքնատիպ բան — թողած այդ, զարձեալ օտար օրինակների էին դիմում և ղեկավարում նրանցով:

Տողերիս գրողը մի ուրիշ առիթով պատեհութիւն է ունեցել ցոյց տալու, որ, օրինակ, հայ թատերգութիւնը, թէև իր ազգի մէջ ունէր սկզբնական տարերք — ժողովրդական խաղեր ու ծէսեր և հայ եկեղեցւոյ ճիսակատարութեան ողբերգականութիւնը — այնուամենայնիւ, երբ XIX դարում հիմք դրւեցաւ հայկական թատրոնի, նրա կազմակերպողները, չօղտելով վերոյիշեալ տեղական տարերքից, ամբողջապէս ղեկավարւեցին եւրոպական ազգերի օրինակով...

Ինչ էլ որ լինէր, արևմտեան-Եւրոպայի գրականութիւնն ու քաղաքակրթութիւնը, ընդհանրապէս, շատ բարեյաջող ազդեցութիւն ունեցան հայ ղեղարեւստական գրականութեան վերայ: Այս ազդեցութիւնը, ի հարկէ, ունեցաւ զանազան բնատրութիւն՝ նայելով թէ ուր էին ապրում և գործում հայ գրողները — Ռուսիայում, Թիւրքիայում կամ եւրոպական քաղաքակրթութեան կենդրոններում, օրինակ Պարիզ, Վէննա, Վե-

նետիկ և այլն: Երբեմն ղերմանական ազդեցութիւնն էր գերակշռում, ուրիշ դէպքերում, իբր օրինակ ծառայում էին Ֆրանսիական գրողների արտադրութիւնները:

Մի ընդհանուր ակնարկ արևմտեան ազդեցութեան վրայ հայկական նոր գրականութեան վերաբերութեամբ — կտրող է գնահատելի հիմք լինել մի շարք հետազոտութեան՝ գրականութիւնների փոխադարձ ազդեցութեան ինքրի համար, որ հետզհետէ մեծանում է նոր աշխատութիւններով: «Notre rôle politique n'était pas grand, mais nous avons participé à tout» («Մեր քաղաքական դերը մեծ չէ եղել, բայց մենք մասնակցել ենք ամեն բանին»), ասել է իր ժամանակին հայ գիտնական և բանաստեղծ՝ Հ. Ղ. Ալիշանը: Այս խօսքերը, որոշ չափով կարելի է վերագրել, մասնաւորապէս, հայկական գրականութեան խաղացած դերին:

Այն տեսակ-տեսակ հոսանքը, որոնք յայտնւեցան արևմտեան-Եւրոպայի գրականութեան մէջ, սկսած կեղծ-կլասիքականութիւնից (պսէղո-կլասիցիզմ), զգայնական (սանտիմէնտալ) ուղղութիւնից կամ բոմանտիզմից մինչև նատուրալիստիքական շիտան կամ սիմուլիզմը — բոլորը, միշտ որոշ արձագանք գտան նաև հայ գրողների արտադրութիւնների մէջ: Նպատակ չունենալով նշանակել այն բոլոր փաստերը, որոնք բնորոշում են հայերի կենսակրթական յարաբերութիւնը ուրիշ ազգերի հետ, տողերիս գրողը կամենում է միայն մեծ դժերով դժել այն բոլորը, որոնցով, *ռուսահայ* գրողները պարտական են եղել արևմտեան-Եւրոպայի քաղաքակրթութեանը: Մինչև իսկ այդպիսի սահմանափակ շրջանում քիչ չըկան հետաքրքիր և բնորոշ այնպիսի դժեր — որոնք դուցէ դեռ անելի մանրամասն հետազոտութիւնների են կարօտ...

Ռուսահայ գրականութեան առաջին կարապետը՝ «Վէրք Հայաստանի» հեղինակ Խ. Աբովեանը արևմուտքի համոզւած և ջերմ կուսակից էր: Արթուրեան ձգտումը շատ վաղ երեւաց նրա մէջ. նա ցանկանում էր կամ Վենետիկ զնալ Միսիթարեանների գիտնական մենաստանը և կամ ընկնել Մոսկուայի Լազարեան ճեմարանը: Այդ մտադրութիւններից ոչ մէկը

չ'իրականացաւ, բայց նրա երազները բազմակողմանի կրթութեան ու զարգացման մասին՝ այնուամենայնիւ կատարեցին՝ թէև բոլորովին անսպասելի ձևով: 1830 թ. մենք նրան տեսնում ենք Գորպատի (այժմ Ռուսի) համալսարանում ուսանող նախապէս ջանասիրութեամբ գերմաներէնը սովորելիս, ապա՝ իրան գիտական զբաղմունքների տւած: Պրոֆեսոր Պարրոտի պատահաբար Անդրկովկաս գալը, ուրտեղ նա ուշադրութիւն դարձրեց հետաքրքրուող ու ինտելիգենտ պատանու վրայ և զընահատեց նրա ձգտումը դէպի լոյսը— հնարաւոր դարձրեց երկտասարգ Արովեանի ճամբորդութիւնը դէպի հեռաւոր հիւսիս— հակառակ նրա ժամանակիցներից մի քանիսի գայրոյթին ու սարսափին, որ այդ քայլի մէջ տեսնում էր համարեա դաւաճանութիւն իր ազգի և եկեղեցու դէմ: Գորպատում անցկացրած վեց տարին ահազին օգուտ տւին Արովեանին: Լսելով Բիւմբերդի, Գրիգի, Փրիզլենտերի և ուրիշների դասախօսութիւնները, օգտւելով Պարրոտի խորհուրդներով ու ցուցմունքներով, որ նրան հարապատ հօր պէս էր նայում և աջակցում ուր և ինչով կարող է,— նա հիմնաւորապէս ծանօթացաւ ի միջի այլոց, գերմանացոց բանաստեղծութեան և նրանց պատմաբանների ու լեզուագէտների գործերի հետ: Այդ կախւած էր ի հարկէ այն հանգամանքից, որ այն ժամանակ համալսարանը զուտ գերմանական բնասրութիւն ունէր և սերտ հազորակցութեան մէջ էր գերմանական մտաւոր կեանքի հետ: Լաւ ուսումնասիրած լեզուն, բոլորովին բնտելացած Էմբախի ափերին, սիրով հիւրընկալւած շատ պրոֆեսորների բնտանիքներում, Արովեանը, չընայած այդ ամենին՝ ոչ միայն չըկորցրեց հետաքրքրութիւնը դէպի իր ժողովրդի շահերը, այլև բնդհակառակն, այն գիտութիւնը, որ նա ստացաւ Գորպատում, աւելի ևս վառեցին նրա ցանկութիւնը իր ժողովրդի կենսակրթական վերաճնութեան օգտին ծառայելու:

1836 թ. Արովեանը հայրենիք դարձաւ— և այդ օրերից սկսում է նրա յամառ և անդադրում գործունէութիւնը, նըշանաւոր չափով ազդւած համալսարանում ստացած կրթութիւնից: Չընայած, որ շատ բան նրան չըլաջողեց անել, չընայած

որ շատ լուսաւորիչ ձեռնարկութիւններ անլաջող դուրս եկան, որովհետև շրջապատող հասարակութիւնը գեւ չէր հասունանացել, չընայած այդ ամենին, մինչև իր մահը նա մնաց կենսակրթութեան ու լուսաւորութեան կողմնակից: Որպէս մանկավարժ, նա ձգտում էր իր աշակերտներին որքան կարող էր, շատ օգտակար տեղեկութիւններ տալ. ասում ու կրկնում էր, ոչ նրանք օտար լեզուներ սովորեն. (նա ինքը վեց լեզու գիտէր) բացատրում էր նրանց ձիւլերի և Գէօթէի երկերը: Փորձով իմանալով թէ ինչ օգուտ են տալիս կանոնաւոր, սիստեմով պարապմունքները, նա սնդում էր, որ անհրաժեշտ է մի քանի երկտասարգ արտասահմանի համալսարաններն ուղարկելը: Ստար զբաղանութիւններին և առանձին լեզուների աստիճանական զարգացման պատմութեանը ծանօթ լինելը նրան զրգեցին մտածելու, որ անհրաժեշտ է նոր զբաղան լեզու մը շակել, առանց որի, ինչպէս նա ինքն էլ շատ լաւ հասկանում էր, անհնարին էր նոր զբաղանութիւն ստեղծել: Արովեանի վէպի յառաջաբանը պարզ ցոյց է տալիս, որ նոր լեզու մշակելու զազախարը ծնունդ առաւ նրա մէջ, ուրիշ ժողովուրդների և հայերի գրութիւնը համեմատելու ազդեցութեան տակ: Թէև Արովեանի փորձը կատարեալ յաջողութիւն չունեցաւ էլ, բայց և այնպէս, նա ցոյց տւեց այն ուղին, որով պիտի զընային նրան յաջորդող զրոյններն ու գիտնականները: Իր վէպի մէջ, մասամբ նաև մի քանի ուրիշ զբաղաններում, Արովեանը ցոյց է տալիս, որ դրաււած էր բոմանտիզմով, մասամբ նոյն լակ— զգայնական գպրոցով: Նա երբէք չըկտրեց իր կապը գերմանացի գիտնականների և զրոյնների հետ, սրտանց ուրախանում էր երբ նրանցից որևէ մէկը զայլիս էր Կովկաս: Արիխի, Վազնիի, Ռոդէնշտէզի— սրանցից ամեն մէկի համար էլ նա հետաքրքրական, բազմակողմանի զրոյցընկեր էր: Արովեանը նրանց կարծիքով միակ եւրոպացին էր, կորած տգիտութեան ու անշարժութեան ծովի մէջ: 1888 թ. իր «Յիշողութիւններ իմ կեանքի մասին» երկում Ռոդէնշտէզը նկատելի համակրանքով է խօսում այն նշանաւոր հայի մասին, որին մի քանի տոտնեակ տարի զբանից առաջ բախտը հանդիպեցրել էր իրան:

«Մինչև մահը», ասում է նա, «Աբովեանը զարմանալի եռանդով աշխատում էր իր ազգայինների զարգացման ու լուսաւորութեան օգտին»: Նման համակրանքով էր վերաբերում Աբովեանին Քարոն Հակոտհաուզէնը, որին հայ գրողն ընծայեց իր հետաքրքրական «Յիշողութիւնները», որ զրել էր Գորպատում գերմաներէն լեզուով:

Երեսնական թւականների սկզբին նոյն Կովկասից Գորպատ եկաւ մի ուրիշ երիտասարդ, որին վիճակած էր ժամանակով կարևոր դեր կատարելու հայ գրականութեան ու կենսակրթութեան պատմութեան մէջ: Սն Ստեփանոս Նազարեանցըն էր, քահանայի որդի, Ներսիսեան հոգևոր դպրոցի սան, ապագայ հրապարակախօս, «Հիւսիսափայլի» խմբագիր, Ղազանի համալսարանի պրօֆեսոր, և նոր լեզւի ամենաեռանդուն և համոզած պաշտպաններից մէկը, որ յազթանակել տւեց նոր լեզւին՝ շարունակելով Աբովեանի սկսած գործը: Նազարեանցը Գորպատ հասաւ 1832 թ. ու մնաց մինչև 1840 թ.— համալսարանում դասախօսութիւններ լսելուց դատ, նա ջանասիրութեամբ պարապում էր գերմանական գրականութեամբ և զիտութիւնով. կամաց-կամաց աւելի ևս մօտենալով տեղական ինտելիգենտ շրջաններին, ուր նա շուտով տանումարդ դարձաւ: Աբովեանի նման, նրան էլ դիպաւ բոմանտիզմի ազդեթիւնը, որի վերջին անդրաձայնումները դեռ երևում էին երիտասարդութեան մի մասի աշխարհայեացքի և ձգտումների մէջ. իսկ միւս կողմից նրա հետաքրքրութիւնը շարժեցին գրականութեան, ժողովրդական բանահիւսութեան և լեզւագիտութեան մասին եղած հետազոտութիւնները, որոնց մասին նա առաջին անգամ լսեց համալսարանի շէնքի մէջ: Հէնց այստեղ, Գորպատում, — գերմանական կենսակրթութեան, լեզւի գիտութեան շրջանում եղած հին ու նոր ուղղութեան կուրի և ինտելիգենտ դասակարգի ձգտելիք հարցերի մասին եղած խօսք և վէճի ազդեցութեան տակ, Նազարեանցի հոգում որոշ կերպով երևաց հայրենի գրականութեան, նոր լեզւին և իր ազդի կենսակրթական զարգացմանը ծառայելու ցանկութիւնը:

Նա իր ամբողջ կեանքում մնաց գերմանական զիտութեան

և գրականութեան երկրպագու և անդադար աշխատում էր պատւաստել իր ազգին այդ երկու բարիքը լիովին, երբեմն նոյն իսկ ծայրայեղութեան մէջ ընկնելով, բաւականաչափ հաշի չառնելով առանձին տեղական պայմաններն ու երկու ժողովրդի մէջ եղած տարբերութիւնը. դրանով նա առիթ տուաւ մեղադրանքների, առանց այն էլ դէպի նրա ամբողջ գործունէութիւնը ոչ բարեացակամ աչքով նայող անձանց կողմից, որոնք ձգտումն էին արգելք դնել նրա սկսած գործերին և մեղադրում էին նրան նոյն իսկ իր եկեղեցուն դաւաճանելու և դադանի բողոքական դառնալու մէջ... Բայց այս, մի քիչ միակողմանի հակման հետ դէպի ամեն բան՝ ինչ գերմանական է, որ իր կնիքը դրել է Նազարեանցի համարեա բոլոր երկերի վրայ — մենք կարող ենք ցոյց տալ նրանում և ընդհանուր համակրանք դէպի երոպական քաղաքակրթութիւնը, առանց ազդերի խտրութեան, որի իւրացնելը նա համարում էր հայերի համար անպայման անհրաժեշտ — ճշմարիտ երոպացու լուսաւոր ձգտումներ ու լայն հայեացքներ: Միւս կողմից նա չէր խորթանում և ռուս կենսակրթութիւնից շատ անգամ լիշում ու քաղում էր ռուս հեղինակների գրածներից իր յօդւածներում և նամակներում, շատ բան էր փոխառնում նրանցից և աշխատում էր յարմարցնել հայ ընթերցող հասարակութեան կարիքներին ու հասկացողութեան:

Նազարեանցի ամբողջ գործունէութիւնը՝ որպէս հրապարակախօսի, որոշ երոպական գոյն է կրում: Նրա 1858 թ. Մոսկուայում հիմնած «Հիւսիսափայլ» ամսագիրը այն ժամանակաւ հայ հասարակութեան ամենից աւելի զարգացած ու առաջաւոր մասի մտքերի և ձգտումների արտայայտողն էր: Մ. Նալբանդեանցի աջակցութեան շնորհիւ Նազարեանցին յաջողեց ամսագիրը ոչ միայն հայ, այլ և մասամբ արևմտեան-Եւրոպայի կեանքի արտայայտութիւնը դարձնել: «Հիւսիսափայլի» բաժանորդագրական յայտարարութեան մէջ (1857 թ.) արգէն արտայայտում էր դիտաւորութիւն՝ ստեղծելու կարծես մի կամուրջ հայերի և երոպացի ժողովուրդների մէջ. հայերի, որ դեռ չէին հրաժարել լետամնաց ասիականութեան ազդեցու-

թիւններէն, կողիացումից և տղիտուութիւնից. Նազարեանցը ճշգ-  
 նում էր օժանդակել իր ութերի չափով նրանց կենսակրթական  
 Հաղորդակցութեան: «Մեր նպատակն է Հնի վերանորոգութիւ-  
 նը, որքան այդ կարելի, յարմար և անհրաժեշտ է ներկայ  
 վայրկենիս համար. մեր նպատակը շինելն է և ոչ քանդելն  
 ու ոչնչացնելը», գրում էր Նազարեանցը կարծես գուշակելով  
 առաջուց՝ խաւարապաշտների և շովինիստների յարձակումները,  
 որոնք պատրաստ էին մեղադրել նրան, որ դաւաճանում է ա-  
 մեն հայրնի բան և ստրկաբար հպաատակում օտարի օրինակ-  
 ների: Միջոցների չըլինելը, բաժանորդների չնչին թիւը, եղած  
 դրական ութերի սակաւութիւնը — արդելք չեղան անդադրում  
 գործչին, ամսագրի դուռութեան կարճ կեանքում, որոշապէս  
 յայտնել իր հայեացքներն այդ հարցի մասին և յայտնի ազդե-  
 ցութիւն անել հայ հասարակութեան վրայ: Նազարեանցը շատ  
 անգամ էր ապացուցում իր ընթերցողներին, որ նրանց միակ  
 չիրկութիւնը եւրոպական կուլտուրան իւրացնելու մէջն է, որ  
 ուրիշ ճանապարհ չըկայ և չէ կարող լինել:

Այդ միտքն օրինակ արտացոլում է Զիլլերի «Մեռնական  
 Հարսի» թարգմանութեան յառաջաբանի մէջ, որ գրել է Նա-  
 զարեանցը:

Եթէ բանաձևելու լինենք Նազարեանցի թէ իր ամսա-  
 գրում և թէ առանձին լոյս տեսած երկերում յայտնած հայ-  
 եացքներն ու ցանկութիւնները — ինչպէս այդ արել է նրա  
 աշակերտն ու հետևողը՝ Զահ-Աղիլը, կերևայ ուր նրանք ամ-  
 բողջովին թափանցած են կենսակիրթ, եւրոպական ոգով:

Եւ իսկապէս հայ հրապարակախօսը կողմնակից է նոր գը-  
 րական լեզու մշակման, զրախանութիւնը կեանքին մօտեցնե-  
 լուն, դպրոց, լրագիր, գրական և դիտական ընկերութիւններ  
 հիմնելուն, գրալաճառանոցներ, հոգեւորականութեան կրթական  
 մակերևութը բարձրացնելուն, նախապաշարումների և յետամնաց  
 հայեացքների դէմ կռւելուն, հոգեբանութիւն ու բնական գի-  
 ւտութիւններ ուսումնասիրելուն:

Անկախ գրանից, Նազարեանցը մտածում էր իր ժողովրդին  
 օգուտ տալ թարգմանելով արևմտեան-Եւրոպայի գրողների ա-

ռանձին գործերը: Չափազանց հետաքրքրական և ուսանելի  
 են Նազարեանցի եւրոպականութիւնը պարզելու համար՝ նրա  
 նամակները ծանօթ-բարեկամներին, որոնց մէջ նա յաճախ  
 շատ խիստ կարծիք է յայտնում իր ցեղակիցների — «մեր եղբայր  
 ասիացիների» մասին, որոնց սակայն նա նւիրեց իր ամբողջ  
 կեանքը, ցաւելով, որ նրանցից շատերը դեռ էլի չեն հասկա-  
 նում Արևմտեան քաղաքակրթութեան իմաստը, մամուլի և  
 զրականութեան նշանակութիւնը...

Եթէ աչքի առաջ ունենանք այս բոլոր իրողութիւնները,  
 պէտք է համաձայնենք այն ժամանակ, որ Նազարեանցը յայտ-  
 նի չափով արդարացրեց կոմս Աւվարովի նախադուշակութիւնը,  
 որ Գորպատ գալով Հէնց այն ժամանակ, երբ այնտեղ ուսա-  
 նում էր երիտասարդ հայը, համալսարանն այցելելիս՝ անսպա-  
 սելի կերպով դարձաւ նրան այս խօսքերով «Բարեկամս, դու  
 պիտի լինես Արևելքի լուսաւորիչը»:

Միքայէլ Նալբանդեանցը, «Հիւսիսսիայի» գլխաւոր աշ-  
 խատակիցը, անփոփոխ օգնում և կարծես լրացնում էր Նա-  
 զարեանցին, քանի որ նա ունէր աւելի շատ կրակ, աշխոյժ  
 ու բանակուական աւիւն, որ պակասում էր ամսագրի գլխաւոր  
 խմբագրին:

Նախկին ունկնդիր Մուկայի և Պետերբուրգի համալսա-  
 րանի, նոյնպէս տիպական արևմտական էր Նալբանդեանցը և չէր  
 ծածկում իր գրաւած լինելը՝ եւրոպական կենսակրթութեամբ:

Այդ յափշտակութիւնը արտայայտեց ի հարկէ ոչ միայն  
 այն բանում, որ նա թարգմանեց «Փափառական Յրէան»,  
 «Կոմսուհի դը Շէրիսօզ» և նման երկեր, բայց շատ աւելի  
 նրա հրապարակախօսական լօղաճների ընդհանուր բնաւորու-  
 թեան մէջ:

Նազարեանցի նման նա կողմնակից էր հայ մամուլի,  
 թատրոնի և ուսումնարանի ստեղծելուն եւրոպական հիմքե-  
 լով: Յաճախ խաւարապաշտների մեղադրանքներին ենթարկե-  
 լով, նա ապացուցում էր արևմտեան կենսակրթութեան մօտե-  
 նալու անհրաժեշտութիւնը, պահպանելով սակայն ժողովրդի  
 ազգային ու պատմական առանձնայատկութիւնները:

50-ական թւերի վերջերին և 60-ականների սկզբներին նալբանդեանցին վիճակեց երկու անգամ արտասահմանում լինել — և այդ ճամբորդութիւնները անկորուստ հետք թողին նրա հոգու վրայ... Նա այցելեց Բերլինը, Համբուրգը, Վիէննան, Լոնդոն, Վինդոօրը, Պարիզը, Վերսալը, Իտալական քաղաքները և ամբողջովին յաիշտակել ու գրաւել էր եւրոպական աղմկալի, բազմազան կեանքով: Նա այցելում էր մուզէյները, ցուցասրահներ, թատրոններ, գրադարաններ, ծանօթանում էր տեղական գործիչների հետ, ուսումնասիրում էր կուսակցութիւնների կուլւր, առանձին ցեղերի փոխադարձ յարաբերութիւնները: Իտալիայում նա մեծ հետաքրքրութեամբ էր հետևում ազգային միացման աստիճանական յաջողութիւններին, համակրելով Գարիբալդուն և նրա գործունէութեանը:

Սյն գաղափարներն և քաղաքական ուսմունքները, որ այն ժամանակ յուզում էին Իտալական Հասարակութիւնը, նոյնպէս հետաքրքրեցին ուսումնատենչ Նալբանդեանցին, որին շատ օգնեց դեռ Ռուսաստանում, թարգմանութիւնների վրայ յոյս չըզրած՝ Փրանսերէն լեզուն:

Մինչև իր չափազանց կարճ կեանքի վերջը նա մնաց տիպական արևմտապաշտ: Իր ոտանաւոր փորձերում, որ աւելի ցած են քան նրա հրապարակախօսութիւնը, նա ցոյց է տալիս յաճախ Բէրանտէի ազդեցութեան տակ լինելը, որի երգերը նա թարգմանում ու վերաշինում էր:

Նա բանաստեղծութիւններ էր գրում «Փ. Փ. Ռուսօի», «Հենրի Թոմաս Բոկլի» լիշատակին, իսկ ամենահանրացած նրա երգը, «Մեր հայրենիքը», զբաժ է Իտալուհու բերանից, որ սիրում է ջերմագին իր գծբախտ հայրենիքը, որ կաւում է Աւստրիայի հետ իր անկախութեան համար:

Նագարեանցի ու Նալբանդեանցի մտակիցը և յայտնի չափով նրանց գործի շարունակող՝ բանաստեղծ ու հրապարակախօս Սմբատ Զահ-Ազիզը, չափազանց իւրօրինակ տեղ է գրաւում եւրոպական դրականութեան՝ հայկականի վրայ արած ազդեցութեան պատմութեան մէջ: Նրա գրական գործունէութեան հէնց սկզբից արդէն երևում է այն յաիշտակութիւնը

բայրոնիզմով, որ նորա ստեղծագործութեան որոշիչ գծերից մէկն է: Բայրոնի «Ազատութեան ժամերից» 50 տարի յետոյ, ջահել բանաստեղծն իր «Ազատութեան ժամերն» է լոյս բնծալում, և արդէն մի քանի բանաստեղծութիւնների մէջ, այդ ժողովածուն մտած, արտացոլում է Բայրոնի ազդեցութիւնը: Որքան Զահ-Ազիզի շնորհքը զնալով աւելի հասուն ու բազմակողմանի էր դառնում, այնքան աւելի Բայրոնի ազդեցութիւնը ստանում էր խորն ու արդասաւոր բնութ: Զահ-Ազիզի քերթւածքը՝ «Լեւոնի վիշտը», սերտ կապած հայ կեանքի հետ, լի է գանդատներով շրջապատող Հասարակութեան լեւտամնացութեան, տղիտութեան, շովինիզմի դէմ և նիւթապաշտ ճաշակներով, միաժամանակ բայրոնիզմի վերջին արտադրութիւններից մէկն է: Քերթւածքի հերոսը անդուհ, թախծալից երազող Լեւոնը, «Համաշխարհային վշտից» զարկւած մարդկանց դասին է պատկանում, որոնց չի հասկանում Հասարակութիւնը և որոնք ինքնամիտի են գառնում, ընդունակ են մէկ նախելուց խիստ, խոշոր, չարացած երևալու, բայց էապէս լցւած են սիրով դէպի մարդկութիւնը, իդէալիզմով ու համակրանքով: Անկախ այդ բանից, արդէն իսկ քերթւածքի արտաքին ձևը, երգերի բաժանումը, քնարերգական զարտուղութիւնները, հեղինակի յաճախակի միջամտութիւնը, միջանկեալ, դիպւածական հատւածները — այս բոլորը ցոյց են տալիս Բայրոնի ազդեցութիւնը միացած Պուշկինի և Լերմոնտովի ազդեցութեան հետ (առանձնապէս «Եւզինեյ Օնէզին»):

Բայրոնի բոլոր երկերից ամենից շատ ազդել է Զահ-Ազիզի վրայ «Չայդ-Հայրուրը», որից հայ բանաստեղծը ուղղակի շատ անգամ պոկ զալ չէր կարողանում...

Բայրոնի ստեղծագործութիւնը իր կնիքը դրաւ նաև Զահ-Ազիզի շատ մանր երկերի վրայ, որոնք կրում են տխուր, զուտ անձնական բնաւորութիւն: Չէ կարելի այստեղ չըլիշել նաև նրա յայտնի «Բանաստեղծի մտածմունքը» երկի մասին (1864), ուր մենք գտնում ենք ողևորւած դիմումն անդլիացի նշանաւոր բանաստեղծին և նրա գործունէութեան փառաբանումն, մինչև Լոբո միւս կողմից սիրած աղջկան հեղինակը համեմատում

Է այստեղ Եանտայի հետ, որին նւիրած է և «Չայդ-  
Հայրուղը»:

Յափշտակած Բայրոնից, Չահ-Աղիզը միաժամանակ յայտ-  
նի չափով աղղւած էր և Հէյնէից: Նա կարգացել է և եւրո-  
պական մտածողների և պատմաբանների գրւածները—ինչպէս  
Սպինոզա, Բոկլ, Չլեյերմախեր, Ջոն Սոււարտ Միլլ, և այլն:  
Այդ հետաքրքրութիւնը դէպի եւրոպացի գանազան գոյնի հե-  
ղինականների ստեղծագործութիւնը՝ յաճախ երևում է Չահ-Աղիզի  
վերջին, արդէն արձակ գրւածներում, ինչպէս «Հրապարա-  
կախօս ծայն», «Ամառային նամակներ» և այլն: Հետաքր-  
քրական է որ իր սիրած հերոս Լեոնին, որ մի մեծ չափով  
երևում է որպէս հեղինակի երկուրեակը, Չահ-Աղիզը ստիպում  
է իր հետ վերցնել, հեռու ճամբորդութեան զնալիս, մի շարք  
գրքեր, որոնց մէջ և «Տխուր մեղեդիները Հէյնէի, Գէօթէի  
անմահ ստեղծագործութիւնը—Փառստ, Թափառական Չայդ-  
Հայրուղին, Իւրենալի երգիծանքները, Բերանժէի սրտաբուխ  
երգերը, Բոկլի պատմութիւնն ու Չէքսպիրի ողբերգները»: Չահ-  
Աղիզն ընդհանրապէս համոզւած արևմտապաշտ է, ամուր հա-  
ւատացող, Լեոնի հետ, այն բանին, որ «ուսում և ուսում մեզ  
հարկաւոր է... ուսումը թող պատրաստէ հայերին մի բարի  
վիճակ և կեանք փառաւոր»:

Մեկախ այս կամ այն գրողի որոշ ազդեցութիւնից, նրա  
ստեղծագործութեան ոգին ընդհանուր առմամբ կենսակիրթ,  
եւրոպական գրոշմ ունի: Նազարեանցի հայեացքների համոզ-  
ւած կուսակիցը հանդիսանալով, նրա նման դատախետում է  
խաւարապաշտներին ու տգէտներին, կողմնակից է նոր մանկա-  
վարժութեան, զարգացած քահանաներ պատրաստելուն, կա-  
նանց կրթութեան: «Ես քեզ սիրում եմ, ո՞վ իմ ժողովուրդ,  
բայց ոչ այն սիրով, որով մինչև այսօր քեզ սիրել են». կարող  
էր բացազանջել նա իր հեշտի հետ: Մենք տեսնում ենք, որ  
նա քննադատաբար է վերաբերում դէպի իր շուրջն եղած  
ամեն բան, հարազատ կեանքը եւրոպական, կենսակիրթ չա-  
փին մօտեցնելով:

Սմբատ Չահ-Աղիզից անցնենք այժմ միւս հայ առաջնա-

կարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանին: Նա, Գորպատ եկաւ  
Աբովեանից ու Նազարեանցից շատ լետու և այստեղ էլ անց-  
կացրեց իր ուսանողութեան տարիներից մի քանիսը (լետույ,  
ինչպէս յայտնի է, նա անցաւ Պետերբուրգի համալսարանը):  
Երբ Պատկանեանը 1852 թ. Գորպատ եկաւ, այնտեղ արդէն  
հայ ուսանող երիտասարդութեան մի զաղութ կար: Մենք դի-  
տենք, որ Հէնց այստեղ նա գրեց այն ուսանողական երգերը,  
որ հայ ուսանողների համար նոյն նշանակութիւնն ունեցան,  
ինչ որ գերմանական երգերը իրանց ընկեր գերմանացի ուսա-  
նողների միութիւնների համար:

Գոթբախտաբար մանրամասն տեղեկութիւններ չըկան Պատ-  
կանեանի Գորպատում ունեցած դիտական զբաղմունքների մա-  
սին, բայց անկասկած է, որ գերմանական գրականութիւնը  
նրա վրայ էլ բաւական ուժեղ ազդեցութիւն է արել: Այս բա-  
նաստեղծը, որ ժամանակի ընթացքում միտումաւոր (տենդեն-  
ցիաւոր) ստեղծագործութեան ամենավառ ներկայացուցիչը պի-  
տի դառնար, իր առաջին բանաստեղծութիւնների մէջ ու-  
մանտիկ ազդեցութեան տակ է: Մնապատելի կերպով այդ ազ-  
դեցութիւնը երևում է նոյն իսկ աւելի ուշ, 70-ական թւե-  
րին, Պատկանեանի «Ես նշանած էի» վիպակում, ուր հերո-  
սի և հերոսուհու անսպասելի հանդիպումը, մարգարէական,  
կէս ֆանտաստիք երազը, որ հերոսի առաջ յայտնում է նրա  
սիրածի վիճակը և շատ ուրիշ բան՝ ուղղակի աղղւած են ու-  
մանտիկից: Միւս կողմից Նազարեանցի լուսաւորիչ գործու-  
նէութիւնը, որ այն ժամանակ շատ երիտասարդ գրողների էր  
ողևորում, հարկազրեց Պատկանեանին, որ լուրջ հետաքրքրել  
Սրբմուտքի կենսակրթութիւնով: Երբ դադարեց «Հիւսիսա-  
փայլը», Ռ. Պատկանեանը, որի հայրը նոյնպէս ինչպէս յայտ-  
նի է, փորձել էր իր ուժերը գրական ասպարիզում—Պետեր-  
բուրգի մէջ հիմնեց «Հիւսիս» թերթը, որ մի տեսակ շարու-  
նակութիւն պիտի լինէր Նազարեանցի հրատարակութեան և  
ընդհանուր առմամբ նոյն գաղափարները պիտի քարոզէր: Հայ  
գրականութեան գործիչների աւագ սերունդի նման, սա էլ  
հետաքրքրում էր գերմանական գրականութիւնով, բայց անու-

շաղկիւր չէր թողնում նաև միւս ազգերի զրականութիւնը: Նա ոչ միայն երբեմն թարգմանում էր Բերանժէից ու նմանում էր Ղամարտինին (ինչպէս «Քահանան»), այլ և կարելի է պընդել որոշ չափով, թէ Բերանժէի ամենից շատ աչքի ընկնող երգերը, նրանց բոցոտ ներշնչանքով, կենդանի, պատկերաւոր լեզուով, և ամեն տան վերջն եղած կրկնութիւններով, ինչպէս նաև Հիւզօի մի քանի կտորները, գրած օրւայ գէպքերի աւիթով — ազգեցին հայ բանաստեղծի զայրոյթով ու տխրութեամբ լի միտումաւոր բանաստեղծութեան վրայ: Չընայած դրան, Պատկանեանը աչքը չէր փակում այն հրէշաւոր երևոյթների առաջ, որ ստեղծում է մակերևոյթական եւրոպականութիւնը և երկու սրամիտ բանաստեղծութեան մէջ ծաղրի մատնեց մայրաքաղաքում կրթւած հայ տղային ու աղջկան, որոնք դանում են իրանց լեզւից ու ժողովրդից, որոնք լիովին անտեղի գործ են անում Ֆրանսերէն ու ռսերէն խօսքերի փշրանքներ, ու հաւատացած են թէ իւրացրել են կրթութեան ու եւրոպական լուսաւորութեան ուղն ու ծուծը... Այսպէս XVIII դարի ռուս գրողները հանդիսանալով կողմնակից կենսակրթութեան ու բանական փոխառութեան՝ աւելի լուսաւոր հարեաններից, միևնոյն ժամանակ ծաղրում էին «պտիմետրներին», մողասէր կանանց ու թեթև, սահմանափակ տղամարդկանց, որ առանց օգուտ ստանալով՝ ճանբորդում են արտասահմանում...

Բաֆֆու վրայ էլ Եւրոպայի կենսակրթութիւնը որոշ չափով ազդեցութիւն է արել: Նրա կենսագրութիւնից մենք իմանում ենք, որ 16 — 17 տարեկան հասակում արդէն կարգացել էր դասական հեղինակների՝ Հոմերոսի, Վիրգիլիոսի, Միլտոնի, Փենելոնի երկերը, որ թարգմանել էին զրաբառ ու հրատարակել Վենետիկում՝ Միխիթարեան հայրերը:

Յետոյ նա ծանօթացաւ ամեն գոյնի ուրիշ շատ օտար գրողների հետ, ինչպէս Վալտեր-Սկոտտը, Վիկտոր Հիւզօն, Իօթէն Սիւ, Զախէր Մազոխը և այլն: Չատ կտրելի է, որ Հիւզօի երկերն են մասամբ ազդել Բաֆֆու վրայ և նրա հոգում գէպի կեանքի խորթ որդիքը, գէպի խեղճ ու թշուառները համակրանք զարթեցրել: Միւս կողմից Վալտեր-Սկոտտի ազ-

դեցութիւնը կարելի է տեսնել մասամբ Բաֆֆու պատմական վէպերում, ինչպէս «Սամուէլն» ու «Դաւիթ Բէկը»: Յայտնի է, որ Բաֆֆին ծանօթ էր Տէնի գլխաւոր գործերին և շատ մեծ գին էր տալիս այդ մտածողին: Թէև նա չէր ստացել սիստեմատիք ու բազմակողմանի կրթութիւն, բայց և այնպէս իր գրեածներում նա արտայայտում էր կենսակիրթ աշխարհայնացք: Երբ նա «Խաս-փուշներ», «Բիրի շարանանի», «Հարէմ» ու նման գրեածներում նկարագրում է պարսկական կեանքը, այդ կեանքի բոլոր փտած, լետամնաց, զուտ ասիական կողմերով, — գուք զգում էք մի կողմից, որ նա լաւ ծանօթ է իր նկարագրած միջավայրին, մօտիկ ուսումնասիրել է և կարողանում է տալ նրա իւրատեսակ երանգը, և միւս կողմից էլ, որ նա, կողմնակի դիտողի նման քննադատաբար է վերաբերում տւածին, գնահատում է եւրոպացու տեսակէտից:

Բաֆֆու ժամանակակից հայ կեանքից տուած վէպ ու վիպակի մէջ՝ ինչպէս «Խենթը», «Կայծերը», «Ջէլալէդդինը», շատ անգամ է երևում նրա համակրութիւնը գէպի ճշմարիտ կենսակրթութիւնն ու լուսաւորութիւնը: Ընդգէմ լինելով կեանքից պոխած ու սքոլաստիկ իմաստակութեան մէջ զեզերող գիտութեան ու գրականութեան, նա ջատագով է հանդիսանում այն կրթութեան, որ դռհացնում է ժամանակակից պահանջները, որ յարմարեցրած է ժողովրդի չայտնի կարիքներին: Նա մերկացնում է հին մանկավարժութիւնը, դպրոցական գործի անորմալ դրութիւնը, պեղանտիզմն ու բուտիման: Այն հերոսները, որոնց նա իր իգէպներէ և մտքերի արտայայտիչն է դարձրել, սովորաբար հանդիսանում են, որպէս դարգացած, ինտելլիգենտ և եւրոպացի ազգերի կեանքին լաւ ծանօթ մարդիկ: Այսպէս օրինակ, երազող Դուդուկեանը «Խենթի» մէջ, որ իր շուրջը տիրող իրականութեանը դիտակցաբար վերաբերող «նոր մարդկանցից» մէկն է, կրթութիւնն ստացել է Վենետիկում, Միխիթարեանների մօտ, ապա գնացել Պարիզ, ու ոտով գլխով ընկել Ֆրանսիական մտաւոր կեանքի յորձանքի մէջ: Նա դարձել է հայրենիք բողոքովին

վերածնւած, իւրացրել է նոր կենսակիրթ աշխարհայեացք ու երազում է այն օրւայ մասին, երբ տաճկահայի կեանքում տղիտութիւնը, անշարժութիւնն ու ոչխարութիւնը՝ տեղի կըտան անձնական արժանւարտութեան ու դէպի լոյսը ձգտելու զգացմունքներին: Չէ կարելի այտեղ չընկատել և այն դատապարտութիւնը, որ Նազարեանցի ու նրա զպրոցի Համոզւած Հետևողը՝ Բուֆֆին շարտեց զանազան նախապաշարումների և իրանց օրն անցկացրած Հայեացքների երեսին. այսպէս օրինակ «Ուխտեալ Միանձնուհի» պատկերում նա դատափետում է այն հին սովորութիւնը, որ դեռ էլի գործադրում էին շատ ծնողներ՝ ծնելուց առաջ դատապարտելով իրանց աղջկան անամուսին, միայնակեաց կեանքի: Այդ ամբողջ պատմւածքից անկեղծ զայրոյթ ու ատելութիւն է փչում դէպի մոլեռանդութիւնը, խտատարտութիւնն ու մտաւոր անշարժութիւնը:

Հայ բեմի Համար գրելու, Հայ թատերգութիւն ստեղծելու և Հարստացնելու միտքը Գ. Սոււնդուկեանցի մէջ առաջին անգամ յղացաւ եւրոպական թատերգութեան հետ ծանօթանալու ազդեցութեան տակ: Դեռ զիմնադում եղած ժամանակ՝ Թիֆլիզում նա չէր կշտանում, իր ասելով, Ղիլերի երկերն՝ օրինակ «Նննգութիւնն ու սէրը» կարգալուց և անքուն զիշերներ էր անցկացնում, լաց լինելով խեղճ Ֆերդինանդի ու Ղուրդի տանջանքների վրայ: 1846 թ. նա մի անգամ Պետերբուրգում, արգէն ուսանող, տեսաւ Կարտլիզիսին<sup>1)</sup> Ֆերդինանդի գերում, հիացաւ և այն օրից սկսեց եռանդով թատրոն յաճախել: Նրա ուշադրութիւնը գրաւում էին և Փրանսերէն ներկայացումները, որ այն ժամանակ անպայման հետաքրքրութիւն ունէին, քանի որ մասնակցողների մէջ այնպիսի ուժեր կային, ինչպէս Բերտոն, Սքոու, Պլէսսի և Սլլան: Այդ ներկայացումների ազդեցութեան տակ նա մտածեց Հայ բեմ ստեղծելու մասին, որ այն ժամանակ գոյութիւն չունէր. շատ պաշգ զգաց նա այն դերը, որ կարող էր բեմը խաղալ Հայի կենսակրթական կեանքում:

1) Ռուս հռչակաւոր դերասան 40-ական թւերին: Ծ. խմբ.

Այսպէս ուրիմն, Սոււնդուկեանցի ինքնաւրիպ թատերախաղերը, որ վառ ազդային ու կենցաղական երանդ ունին, մասամբ օտար թատերգութեան ազդեցութեամբ են կեանքի կանչւել: «Մտածարալայից» լետոյ Սոււնդուկեանցը սկսեց ուշադրութեամբ ուսումնասիրել Մոլիէրի, Չէքսպլերի, Սկրիբլի և ուրիշ թաւերաղիւրների երկերը: Իր ամենալաւ պիէսը՝ «Պէպոն» գրելու միտքը Մոլիէրի մի կատակերգութիւնը Հայերէն փոխադրելու ազդեցութեան տակ յղացաւ: Պէպոն յառաջաբանում, որը ուղղւած է զխաւոր դերն ստեղծող դերասան Չմշկեանին, հեղինակն ասում է միջի այլոց. «Մի անգամ թատրոնում ներկայացնում էին Հանգուցեալ Փուղինեանի «Ղուր մարիս, պիտի պատկիս» պիէսը, որ Մոլիէրի կատակերգութեան փոխադրութիւնն էր, և դու խաղում էիր Չամիրի դերը: Քս Հագուստը, դէմքը, շարժմունքը, խաղը, ձայնն այդ դերում յանկարծ իմ մտքում այս Հարցն առաջ բերին, թէ ինչ կանէր Չամիրի նման մարդն այն դէպքում, եթէ մեր Հարստահարիչներից մէկը նրան փող պարտ լինէր ու չուզէնար ճանաչել իր պարտքը: Պիէսի հիմքն այսպիսով գցեց. մնացածն ինքն իրան եկաւ»: Իր թատերախաղերում Սոււնդուկեանցը շատ յաճախ բարձրացնում է եւրոպական կենսակրթութեան Հայերի վրայ արած ազդեցութեան Հարցը: Նա Համակրում է այն մարդկանց, որ անկեղծ կերպով գրաււած են նոր զտափարնեքով ու կուում են բուտինայի դէմ. ինչպէս օրինակ երիտասարդ-իդէալիստ Միքայէլը «Էլի մէկ զոնում», ինչպէս և ինտելիգենցիայի այն ներկայացուցիչներին (ուսումնական գիւղատնտես, վարժուհի, երիտասարդ հեղինակ), որ երևում են նրա «Ամուսիններ» վերջին գործում: Միւս կողմից, Պատկանեանի նման, նա ծաղրում է Հասարակութեան կիսակիրթ խաւերը, որ չեն իւրացրել կենսակրթութեան իսկական, ճշմարիտ ոգին, ու նրա վերջին խօսքն են Համարում մայրենի լեզուն բանի տեղ չըլնելը, դէպի պարտականութիւնը թեթև վերաբերելը, դէպի զուքս ու զարգարանքը և բալերն ունեցած ցաւը, եկամուտների ներածից աւել ապրելը: Հետաքրքրական է այն, որ հնաւանդ, բայց լաւ սրտի աէր ու աղնիւ վա-

*Handwritten notes:*  
 Երկրային  
 Երկրային

ճառական Սսէփը, Սոււնդուկեանցի «Քանդած օջախում», շատ սկեպտիկ կարծիք է յայտնում կիրակիրթ երիտասարդութեան մասին. միևնոյն ժամանակ ինքն եղել է արտասահմանում և համակրանքով է խօսում Եւրոպայի ժողովուրդների և նրանց գրական յատկութիւնների մասին:

Հետաքրքրութիւնը դէպի եւրոպական գրականութիւնը՝ նկատուում է նաև հայ գրականութեան ամենանոր գործիչների մէջ, որոնք յաճախ շատ բան են նրան պարտական: Մի քանի օրինակ. Զիրվանդադէն գեռ ԼՅ տարեկան էր, որ կարգաց Վ. Հիւզօի մի քանի գրեւծները, որ նրա վրայ մեծ ազդեցութիւն արին, մանաւանդ նրան հիացնում էր «Ժողովի գործաւորները», որի մեղմ, մարգասէլ կոլորիտը շատ հայ զրոգների համակրութիւնն է դէպի այդ երկը գրաւել: Զիրվանդադէի ամենից աւելի հասուն ու տաղանդով գրած գործերի մէջ, ինչպէս «Նամուսը», «Արսէն Գիմաքսեանը», «Տասնուհինգ տարի անցած» պատկերը, զգալի է Գողէի, Մոպասանի և Զոլայի ազդեցութիւնը: «Նամուսի» հերոսներից մէկի՝ Ռուստէմի բարբարոս վարմունքի տեսարանը իր կին Սուսաննի հետ, որի վրայ ամուսինը կասկած ունի թէ անհաւատարիմ է, և որի կրճքից՝ սարսափելի ցաւ պատճառելով խեղճ կնկան՝ պոկ է տալիս խալը, գրեւծ է ծայրայեղ բնապաշտութեան բոլոր կանոններով, չըքաշելով ոչ մի մանրամասնութիւնից: Զիրվանդադէի ընդհանուր համակրանքը դէպի Եւրոպայի կենսակրթութիւնը ամենից լաւ ու որոշ արտայայտեց «Արսէն Գիմաքսեան» վէպում, որը մի վառ պատկեր է 80--90-ական թւերի հայ ինտելիգենցիայի: Այդ վէպի լաւագոյն, ամենից աւելի համակրելի հերոսները համոզած արեւմտապաշտներ են և կողմնակից հայերի և ուրիշ լուսաւոր ազգերի կենսակրթական հաղորդակցութեան: Նրանցից մինը՝ Մսերեանը, ընկերական շրջանում շարունակ պնդում է այդ տեսակ հաղորդակցութեան անհրաժեշտութիւնը. «Պարոններ», ասում է նա մի տեղ, «դէմ գնենք մեր սակաւթիւ կուրճքերով՝ չինական պարսպին (այսինքն՝ տգիտութեան ու կղզիացման): Զեռք գարկենք այդ պարիսպը խորտակելուն, որ մեզ հեռու է պահում եւրոպական քաղաքակրթութիւնից»:

Այդ նոյն վէպում մենք տեսնում ենք ինտելիգենտ հայ աղջիկ Կարինեանին, որ գնում է արտասահման ուսումնասիրելու մանկավարժութիւնն ու ընդհանրապէս մեծացնելու իր զիտութեան պաշարը, որ ասպ՝ վերադառնալով, մանկապարտէզ բաց անի և լիովին մանուկների կրթութեան գործին նւիրէ իրան:

Ժամանակակից հայ բելլետրիստներից միւսը՝ Վէօն, որ իր «Քաւառական հերոսների» մէջ ուղղակի իր համակրանքն է արտայայտել դէպի նոր հովերը և ընդդիմութիւն ցոյց տւել դէպի այն ամենը, ինչ փտած է և անկեանք, ինքն է խոստովանում, որ եւրոպական զրոգներից նրա ճաշակի և իղէայների մշակման վրայ ամենից շատ ազդել են Զէքսպիրը, Զիլլերը, Գէօթէն ու կրկին՝ Վիկտոր Հիւզօն: Մուրացանը Բաֆֆու նման արեւմուտքի դասական հեղինակների գործերը կարգացել է Միխիթարեան հայրերի թարգմանութեամբ: Նրա առաջին գրեւծներում, օրինակ «Հարուստները դարձանում են» պատմածքում, նկատելի է մասամբ՝ Ֆրանսիացի բնապաշտ զրոգների ազդեցութիւնը: Վ. Փափագեանը, որ իր «Պատկերներ թիրքախոյոց կեանքից» զբքով իրան ծանօթացրել էր որպէս Բաֆֆու աշակերտ ու հետևող, — ժամանակի ընթացքում բոլորովին ձեռք քաշեց միտումաւոր ստեղծագործութիւնից ու ենթարկեց Սկանդինաւեան գրականութեան՝ Իբսէնի, Իօնաս Լիի ու Բիեօրնսսնի ազդեցութեան: Ներկայումս նա հայ փոքրաթիւ «Նիցշէականներից» մէկն է. իր էսկիզներում ու ակնտրկներում նա տալիս է գերմանացի մտածողի տեսութիւնները — մեղմելով ու դուրս ձգելով այն ամենը, ինչ նրան չափազանց խիստ ու դէմընթաց է թւում և հակառակ՝ հայ ընթերցողի պահանջներին: Փափագեանն առաջինն էր հայերի մէջ, որ թարգմանեց Նիցշէից և ծանօթացրեց ուսահայերին նրա զաղափարների հետ <sup>1)</sup>:

Ա. Խահակեանի ստեղծագործութեան մէջ նկատուում է ոչ միայն Նիցշէի, այլ և ժամանակակից Եւրոպայի բանաստեղծութեան մէջ տիրող հոսանքների՝ մասնաւորապէս սիմ-

<sup>1)</sup> «Մուրճ», 1896 թ.

ւորիցմի ազդեցութիւնը. այդ ուղղութիւնները նոր-նոր սկսում են հայ բանաստեղծութեան մէջ մտնել: Միւս երիտասարդ հայ բանաստեղծները, օրինակ Յ. Յովհաննիսեանը, ու մանաւանդ Ա. Փատուրեանը աշխատում են իրանց ընթերցողներին ծանօթացնել գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի, լեհ և ուրիշ բանաստեղծների լաւագոյն երկերի հետ, ի հարկէ սովորաբար թարգմանելով ռուսերէն թարգմանութիւններից: Լեռնացի ստեղծագործութիւնը, որ անսլայման հետաքրքրական է գաղափարական բովանդակութեան տեսակէտից, թէև շատ պակասաւոր է ձևի կողմից, տեղ-տեղ ազդած է մեր ժամանակի գիտական տեսութիւններից, Գարեխի ենթացողութիւններից կամ դէպի ընկերավարական հարցերն եղած ժամանակակից հետաքրքրութիւնից:

Այսպէս ուրեմն՝ հայ նոր գրականութեան սկզբից մինչև մեր օրերը ուղղակի թէ անուղղակի Արևմուտքն անում էր իր ազդեցութիւնը ռուսահայ գրողների ստեղծագործութեան վրայ: Պատկերն աւելի տպաւորիչ կրդառնար, եթէ այս թուուցիկ ակնարկին կցէինք և այն ամենի ընդհանուր բնորոշումը, ինչ պարտական են արևմտեան Եւրոպայի կենսակրթութեան տաճկահայ գրողները. սրանք զարգացել են ֆրանսիացի բանաստեղծների, թատերագիրների և վիպագիրների՝ Մոլիէրի, Վոլտէրի, Լամարտինի, Հիւգօի, Սկրիբի, Փորտ-Սանի, Էօփէն-Միւի, Սարգուի և ուրիշների գորեղ ազդեցութեան տակ:

Չըպէտք է մոռանալ և այն, որ հայ մամուլն ևս շատ բան է պարտական Արևմուտքին. որ պարբերական հրատարակութիւններից շատերի խմբագրներն ու հրատարակախօսները՝ ինչպէս Արծրունին, Սպանդարեանը, Արզար Յովհաննիսեանը, Արասխանեանը և այլն, արտասահմանում, գերմանական համալսարաններում են կրթութիւն ստացել, որ օտարագրի հրատարակութիւնները մինչև այսօր առատ նիւթ են տալիս հայ թերթ ու լրագրին: Ուրախալի է շատ, որ մինչև այսօր էլ հայ մամուլի մէջ անփոփոխ է մնում գէպի եւրոպական քաղաքակրթութիւնն ու օտար գրականութիւններն եղած հետաքրքրութիւնը: Բոլոր լրագրներն ու ամսագրերը, առանց

դոյնի խտրութեան, բաւականին մեծ տեղ են տալիս արտասահմանի նորութիւններին, կենսակիրթ ազգերի զրականութեան, գիտութեան ու գեղարւեստի մասին եղած յօդածներին, վերջապէս Եւրոպայի դանազան քաղաքներից եկած թրդթակցութիւններին, որոնց գրողները Արևմուտքի շատ համասարանական կենդրոններում եղած ուսանողներն են:

Թէև եւրոպական ազդեցութիւնը ռուսահայ գրականութեան վրայ կարող էր աւելի խորն ու բազմակողմանի լինել, ինչպէս և ինքն՝ այդ զրականութիւնն աւելի հարուստ, — բայց և այնպէս, անկասկած է, որ այդ ազդեցութիւնը, ռուս հեղինակների արած ազդեցութեան նման, արդէն շօշափելի օգուտներ է տուել: Ինչպէս տեսանք, հայ լաւագոյն, ամենից աւելի անդրաձայնող ու առաջաւոր գրողները շատ են ջանք թափել, որ վերատնկեն Եւրոպայի գաղափարներն ու գեղարւեստական իդէալները հայ հողի մէջ: Ընդհանրապէս այդ բանն արգելք չի եղել, որ նրանց երկերը ինքնատիպ էլ լինեն և գեղարւեստական արժանիքներ ունենան: Ի վեր չեն հայերին «Սփայի եւրոպացիներ» անւանում. նրանք շատ հեշտ ու շուտ են իւրացնում կենսակիրթ հայեացքներ ու ձգտումներ, շատ շուտ են օտար լեզուներ սովորում, և իրանց ամենից աւելի տաղանդաւոր ու սրտացաւ ներկայացուցիչներով՝ կարողանում են միաժամանակ հայ ու կենսակիրթ եւրոպացի մնալ: Նրանց վիճակած է անկասկած ժամանակի ընթացքում եւրոպական քաղաքակրթութեան ու քնած միւսիւման Արևելքի մէջ միջնորդի դեր խաղալ:

Վերջապէս ո՞վ գիտէ, չի դալու արդեօք երբ և իցէ՝ թէ-կուղ շատ տարիներ անցնելուց յետոյ՝ (ներկայումս այդ մասին խօսք անգամ չի կարող լինել) այն ըոպէն, երբ դէպի հասարակութեան պահանջները դիւրագրաց հայ գրականութեան կազմի մէջ մտնող բոլոր ինքնատիպ, երանգաւոր, գուտ տեղական տարրերի և եւրոպական հովերի խառնուրդից ստեղծւի մի նոր, իւրակերպ գրականութիւն, որը իր հերթին ընդունակ լինի գոնէ մի քիչ ազդելու եւրոպական գրականութիւններին վրայ... Այլ տեսակ յետադարձ ազդեցութիւններ, քիչ չեն

պատահել համաշխարհային զրականութեան պատմութեան մէջ...

«Հայ Իբսէնը դուցէ առաջներս է!» . այս խօսքը մենք Հանդիպել ենք ռուս հասարակութեանը Հայ գրողների ստեղծագործութեան հետ ծանօթացնելու առաջին փորձի մասին յայտնած կարծիքներից մէկի մէջ:

Ո՞վ գիտէ, դուցէ, իսկապէս մի ժամանակ նրանց օրն էր դայ...


Իւրիյ Վեսելովսկի



# Մ Ե Ր Ս Տ Ի Լ Ի Ս Տ Ն Ե Ր Ը

Ե Ի Լ Ե Զ Ո Ի Ն

(Մի թոուցիկ անշարկ)



արուս սկզբին, մեծ քաղաքական անցքերի շնորհիւ, որ իրանց հետ բերին հասարակական ու տնտեսական նորանոր գործօններ, Հայ ազգն այս նոր և փոփոխւած պայմաններում կարիք զգաց փոփոխութեան և՛ լեզւի մէջ, որ արտայայտեց գրաբառի ու աշխարհաբառի զօրեղ կուտի:

Մի լիսուն տարի առաջ, երբ ներկայ զրական լեզուն գեռ երկունքի մէջ էր, վէճ կարող էր լինել միայն դրաբառի և կենդանի բարբառներից որևէ մէկի վերաբերմամբ: — Կար ժամանակ, որ Նայբանդեանցը երազում էր Մուշի բարբառը զրական դարձնելու մասին, բայց իրերի բերմունքն առաւելութիւն էր տւել ոչ միայն Արարտեան բարբառին, այլ մի Աբովեան, այդ բարբառի ձեռնասունն ու հարգատը, իր ժամանակի համար մի անտակարգ տաղանդով ու բոցով, լուսամփոփ ասրակու նման ի մի հաւաքելով իր մայրենի լեզւի հարստութիւնն՝ արտաշօյեց այնպիսի մի փայլով ու

ջերմութեամբ, որ տեսական վէճերի համար այլևս ժամանակ չէր մնում: Քանի որ ամենքից զգացուած կարիքն ու անհրաժեշտութիւնը լուծել էր գրեթէ մի մարդարէական համարձակութեամբ, քանի որ «Վէրք-Հայաստանի» անասելի աջողութիւնըն ու նրա գործած տպաւորութիւնը ժամանակակից Հասարակութեան վրայ, մեր զրականութեան մէջ գրեթէ նմանը չունեցած մի երևոյթ էր սկսած հէնց Մեսրոպի օրերից: Մինչև այսօր էլ, Աղասին մի այնպիսի հանրաժանօթ ժողովրդական հերոս է, որին նախանձել կարող է նոյն իսկ ալախօսիկ Եղիշէի Վարդանը:

Եւ այդ գիրքը գրուած էր *աշխարհաբառ*. առօրեայ, պարզ, ռամիկ, գրեթէ գոեհիկ, բայց և անզուգական աշխարհաբառ... Նա այնքան անբռնադբոս էր, այնքան ձկուն ու հարուստ, տոյն աստիճան յորդ ու առատ, որ կարող էր վրստահօրէն վիճել ու մրցել Նարեկի հետ... Մի առաւելութեամբ, որ սա կենդանի էր ծայրէծայր, յետևն ունենալով խօսուն ժողովրդի հարիւր հազարաւոր բազմութիւն, մինչ Նարեկի լեզուն մեռած էր ընդ միշտ...

Զընայելով այս անգնահատելի առաւելութիւններին, Աբովեանի անասելի աջողութիւնը ժամանակաւոր էր միայն, քանի որ զրականութեամբ զբաղուող անհատների մեծամասնութիւնը դէմ լինելով զբաբառին, իրօք դեռ խարխափում էր նրա գոլորշիների մէջ... Ուստի Նազարեանցն ու Նալբանդեանցը Աբովեանից անկախ և նրանից առաջ հնարել էին մի կիսալեզու, որ ոչ զբաբառ էր, ոչ աշխարհաբառ, այլ այդ երկուսի մի խառնուրդը:

Ու Պատկանեանը այդ լեզուն մկրտեց իր տաղանդի կիզիչ աւիւնով, կեանք ու հոգի փչեց նրա մէջ, զլորեց լոյս աշխարհ և հրամայեց, որ երգեն: Եւ երգեցին նրա գործերը Գանգէսի ափերից մինչև Նեղոս և Վօլգա: Ժողովրդի լեզու չէր գա այլևս, ռամիկ ու կենդանի, այլ մի փոքրիկ խմբակի ձեռնատուն: Մեծ բանաստեղծի զրոշմը ճակատին, նա այլ ևս երկիւղ չունէր արհամարհելու: — Ժամանակակից կրթած մարդոց հոգեբանութեան ծնունդ էր այդ... Գրաբառեանների ըզ-

գացումները կատարելապէս շուրճ էին սյդտեղ, որովհետև իրանց սիրելի լեզւի բեկորներն առատապէս ծածկում էին այս նորեկի մերկ անդամները. — նրա ստուգաբանութիւնը մեծ մասամբ զբաբառն էր լիշեցնում և իր ապօրինութեան նշանները, — թուրք, թաթար բառերը, հոգածութեամբ փոխարինւած էին ոսկէ դարու կարկատաններով: —

Աշխարհաբառի մոլեռանդ քարոզիչներն էլ դանդատելու տեղիք չունէին, որովհետև այս նոր մանուկը եթէ ոչ լիապէս, գոնէ շատ մասերով լիշեցնում էր իր հարապատ մօրը. — համաձայնական մասը գոնէ անարատ աշխարհաբառ կարելի էր անւանել: Նա նորածին էր և դեռ զարգացման կարօտ: Նրա պաշտպանների զգացումներին չէին կարող խորթ երևալ շատ ու շատ զբաբառ ձևեր ու փոխառութիւններ, քանի որ հէնց իրանք մանկութիւնից վարժ էին այդ ամենին:

Մի խօսքով, իրերի ընթացքն այնպէս էր բերում, որ նոր լեզւին պիտի տրւէին այն ամեն պայմանները, որոնք կարևոր են մի ապօրէն զուակ ընդունել տալու մի հնացած և նահապետական բնտանիքում...

Այդ ամենին անտարակոյս նպաստում էր և այն, որ այս լեզւի իսկական հիմնադիրները, Նալբանդեանց և Պատկանեան, ծանօթ չէին Արարատեան բարբառին հիմնաւորապէս, որպէս զի Աբովեանի սկսած գործն անշեղ առաջ տանէին:

Միւս կողմից, Արարատեան բարբառն աղճատուած և այլանդակուած էր թուրքերէնի ազդեցութեամբ. տնհրաժեշտ էր մաքրել, կոկել և ազնւացնել այն զբաբառի փարթամ փշուրներով, որ ամեն բոպէ առձեռն՝ պատրաստ էր նրանց սպասին:

Եւ այս հանդամանքներում այն պիտի առաջ գար, ինչ որ նկատեցինք վերևը. — Աշխարհաբառի ցնցոտիներ զբաբառի կարկառաններով, որ մենք տեսնում ենք մեր զրականութեան ամենատաղանդաւոր ներկայացուների մէջ:

Այսօր, քսաներորդ դարու շէմին, մի շատ տարածուած, բայց հիմնովին սխալ կարծիք կայ, որ ամեն մի լրագրական համբակ պատրաստ է համոզմամբ լայտարարելու, թէ մեր լեզուների կուլի մէջ, զբաբառը տեղի տուաւ, իսկ աշխարհաբառը յաղթող

գուրս եկաւ: Անտարակոյս, այս նոր լեզուն աւելի մատչելի է քան զբարառը, բայց միևնոյն ժամանակ սա այն կենսունակ մանուկը չէր, ինչ որ մենք տեսնում ենք Աբովեանի երկերում... Սա կոկաճ, չղկաճ և զերճ է Արարատեան բարբառի դռնհիկ և օտար տարրերից, բայց ազատ լինելով նրա պակասութիւններից, այս նորելուկը գուրկ էր նաև նրա ամենափայուն առաւելութիւններից: Նա ապրում է տասնեակ-հարարաւոր կենդանի շրթունքներում, իսկ սա, մեր գրական լեզուն, իր ծնունդից ահա կէս դար յետոյ, հազիւ մի 2—3 հարթ թղթովախօսներ ունի: Սա մի նոր տեսակի գրաբառ է, և մեր լեզուների ուսումնասիրութեամբ թեթեակի զբաղւած անհատների համար մի զաղտնիք չէ այն հանգամանքը, որ աշխարհաբառի յաղթութիւնը մի Պիւռոսի յաղթութիւն էր, և այն, ինչ որ գուցէ երազում էր աշխարհաբառի ամենատողանդաւոր մարտիկն ու հիմնադիրը — մի Աբովեան, — մնաց կատարելապէս ցնորք:

Այս հանգամանքը չէր խանգարում, որ Նալբանդեանցը իր շանթոտ յօդւածներով սթափելու հրաւիրէր քնամոլոր ժողովրդին մի կծու, կրքոտ ու սուր ոճով: Լեզուն չէր նրա մէջ խօսողը, այլ կիրքը, դարերով զիզւած ցաւերի արձագանքն էր այն, որ բռնկում էր և բողբոջւում աստուածային կրակով... Չէր խանգարում, որ Քաթիպան մի հսկայական ճիչ արձակէր երկունքից ազատւած մանկան զարուստն աշխարհին աւետելու ոճի մի չրտեսնւած կենդանութեամբ: Եւ գուցէ ոչ ոք այնքան չէ նպատակ աշխարհաբառի զարգացման ու տարածմանը, ոչ ոք այնպէս զօրեղ կերպով չէ ազդել աշխարհաբառի տարօրինակ քերականութեան վրայ, ինչպէս այս տաղանդները, որոնք մինչև այսօր, մնում են հայի երգիչները թէ ուրախութեան սեղանին և թէ տխրութեան և տառապանքի ժամանակ:

«Արաքսի արցունքներով» Քաթիպան ոչ միայն առաջին անգամ երկնեց հայի դարաւոր ողբը, այլ և այդ ոտանաւորի մէջ նա տաւ ներկայ լեզւի քերականութիւնը:

Մի քիչ ուշ, Քաթիպային մրցակից հանդիտացաւ և վիպական բաժնում առաջնութեան դափնին խլեց մի այլ տա-

ղանդ, իր բողբոջու ու գունեղ ոճով, իր տենդենցիօզ միլամադձով, կաշկանդելով նախ հասարակութեան ուշն ու ուրուշը իր վէպերում ներկայացրած միրաժներով:— Դա Բաֆֆին էր: Քաթիպայի երգի լեզուն սրա մէջ դառնում է մի հրապուրիչ պրօզա, համեմած հարաւի բոյրով, արևելքի ցոլուն գոյներով, տաք և թզաշուն սրտի թրթիւր շուրթին, երազների սլատրանք հազած, ապագայի զառանցալի յոյսերով լի, մի տեսակ Եղիշէ, որ Վարդան ու Աւարայր ծնում էր իր ուղեղից և հաւատ ներշնչում, թէ նրանք իրական են...

Մի երրորդ տաղանդ, Աղայեանցը, չունենալով Պատկանեանի աւելնը, Բաֆֆու տենդենցիօզ բեղմնաւորութիւնն ու փարթամ գոյները, սակայն, ոճի բիրեղային նրբութեամբ, Պատկանեանից էլ բարձր, շնորհիւ իր մայրենի լեզւի մօտիկ խնամութեանը Արարատեանի հետ — մեր գրական լեզւի նրբութիւններն և կատարելութիւններն արտայայտելու գուցէ եզակի, մնաց համեմատաբար անծանօթ և չունեցաւ այն ցանկալի ազդեցութիւնն ու ժողովրդականութիւնը, որ վայել էր նրա առաջնակարգ տաղանդին. — իբրև գուտ տրիւն Հայաբան, նա անգուգական է Եզնիկ Կողբացու նման, իբրև մանկական գրող, նա մեզ այնպիսի դասազրքեր է տւել, որին կարող են նախանձել գերմանացին, ռուսը և ֆրանսիացին հաւասարապէս:

Էլ աւելի անժողովրդական մնաց Չահաղիզը, միակ աչքի բնկնող ներկայացուն բուն Արարատեան գաւառից. մի քանի զողտրիկ և բնուրոյն ոտանաւորով միայն յայտնի մեծ հասարակութեանը:

Այս տաղանդների մէջ մի տեսակ առանձնակի տեղ է զբաղում Պոօշեանցը, իր բեղուն գրչով, որ լեզւի զարգացման խնդրում տարաբախտաբար չունեցաւ իր արժանաւոր տեղն Հէնց այն սլատճառով, որ մենակ, առանց յարելու մեծամասնութեանը, մինչև վերջերս շարունակելու էր ձգտում իր մեծ ուսուցչի դորձը, զրելով գուտ ռամկօրէն, ինչպէս Աբովեանը: Նա մնաց մի տեսակ աղանդաւոր, ուստի և մենակ, թէև նրա զրւածները Արարատեան բարբառի հարստութեան մի-մի շտեմարան են: Նրա պարբերութիւնները լայն են, բնդարձակ և ծաւալուն:

արտայայտութիւնները համարձակ ու ձիգ, ոճը մի տեսակ գերմանական ողի է բուրում. ծանր, հասաստուն և դրեթէ անհարթ: Սյն ինչ, մեր լաւագոյն գրողների լեզուն աւելի ֆրանսիական ողի է լիշեցնում, թեթև, պարզ ու սահուն... որ արդիւնք է մեր արևոտ երկնքի, մեր ձիւնափառ լեռների ու յատակ աղբիւրների:

Սյս տաղանդների ոճն ու լեզուն, ինչպէս ասացինք, զբրբառի և Սրարատեան բարբառի աջող կամ անաջող մի խառնուրդ էր. բայց իր էութեամբ ու ոգով — սակաւ բացառութեամբ — մաքուր հայերէն: Արքան էլ դա խառն էր, անորոշ, անհեռական և առանց հիմնական ուղեցոյցի, դա մի մեծ և էական յատկութիւն ունէր. ոգով զուտ հայկական էր: Ժամանակակից հանդամանքներում աւելին պահանջել անկարելի էր զուցէ...

Հազիւ այդ լեզուն թոթովել էին սկսում մի քանի անհատներ, հազիւ Քաթիպայի էլէզիաները երգել էին սկսում ցանուցիւր հայերի գաղթավայրերում, ծաղեց մի նոր աստղ, — Սրծրունին, որ Նազարեանցի բաց թողած տեղը պիտի զրաւէր: Մի կրքոտ և բոցավառ տեմպերամենտ էր դա, նոր մտքերով և գաղափարներով տոգորած: Գալով լեզւին, նա չըզիտէր ոչ աշխարհաբառ, ոչ գրաբառ և ոչ էլ որևէ բարբառ. իրերի այդ վիճակում, մեր մանուկ լեզուն, քանի որ միակ գէնքն էր այդ տաղանդի ձեռին, նրա բացասական ազդեցութիւնից զերծ պիտի չըմնար և իրօք չըմնաց էլ. գրաբառի և աշխարհաբառի խառնուրդին աւելացաւ մի նոր, բոլորովին պղտոր հոսանք, — օտարաբանութիւններ, սխալ, անքերական ոճեր, դարձաւորներ... և այլ անտեղութիւններ: Չընայելով որ Սրծրունին վերջերը բաւական կոկեց իր լեզուն, բայց նա դրան առհասարակ մեծ նշանակութիւն չէր տալիս. այդ զուցէ և մասամբ ներելի էր նրան, բայց մեր քաղաքական և կուլտուրական պայմաններն այնպէս էին դասաւորւած, որ այդ անհատական պակասութիւնը ստացաւ մի հասարակական չարիքի բնաւորութիւն: Մի ամբողջ սերունդ, որ տասնեակ տարի ձիգ ու ջանք էր թափել սովորելու այն արւեստը, որ փայլուն կոճակներ մուրալու


էր նպաստում, դրա հետ միասին մոռանալու այն, ինչ որ է՝ ծնէ և ժառանգաբար տրւած էր նրան իր պապերից, Սրծրունու պատահական պակասութիւնը այդ գաճաճների համար մի հիանալի ապաստան էր: Նրանք ոչ կամք ունէին, ոչ էլ ցանկութիւն սովորելու այն, ինչ որ չըզիտէին, բայց ուզում էին գրել, ուզում էին մրտել... և ահա, շինեցաւ այն լեզուն, որով այսօր մեր լրագիրներն ու ամսագիրներն են խմբագրում:

Սյս է ահա մեր լեզւի կարճաւօտ, ամենաընդհանուր զրծերով նկարած պատմութեան պատկերն իր տիպալին ներկայացունքի մէջ:

Լեզուն այժմ այլևս չի ստեղծում. լեզուն հիմա շինում է:

Բացառութիւններ կան, բայց մեր ասելիքը վերջանում է:

Գ. Վանցեան



# Փ Ո Ք Ր Ա Ս Ի Ա Ն

Ե Դ

## ՉԻՆԻԵԼԻՔ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ



Ոքր Ասիայում քաղաքական բարենորոգումներ մտցնելու մասին ոչ մի համաձայնութիւն չըկայանալուց լետոյ, եւրոպական մեծ պետութիւնները կարծես թէ ընդ միշտ թաղեցին այդ ինդիերը, սակայն այդ երկրից իրանց համար ստացելիք շահիրը չըմուտցան: Բարենորոգումների առիթով սկսած երկար ու բարակ դիպլոմատիկական բանակցութիւնները դեռ բոլորովին չըվերջացած, մեծ պետութիւնները մէկը միւսի ետեւից մի քանի ծրագրներ ներկայացրին թիւրք կառավարութեան՝ Փոքր Ասիայում երկաթուղային զծեր անցկացնելու վերաբերեալ, և կէս խաթրով, կէս ստիպմամբ, արտօնութիւններ ստացան սուլթանից: Այժմ ինդիերն արդէն վճռւած պիտի համարել. շինելիք զծերից մի քանիսի ուղղութիւնները արդէն քննւած, իսկ մի քանիսն էլ քննելու վրայ են, որից լետոյ—երեւի շատ մօտ ժամանակներում—կըձեռնարկւի և դրանց շինութիւնը:

Երկաթուղին քաղաքակրթիչ մի այնպիսի գորաւոր գոր-

ծօն է, որից լառաշանալիք հետեանքների մասին արժէ մի քանի խորհրդածութիւններ անել, նամանաւանդ որ այդ կառուցելիք երկաթուղային զծերից մի քանիսը պիտի անցնեն Փոքր Ասիայի այն մասերով, որոնց բնակիչները մեծամասնութիւնը հայեր են և հէնց հայերին է վիճակւած իրրև աւելի շուտ քաղաքակրթութեան ազդեցութեանը ենթարկուող տարրի— իրենց ուսերի վրայ տանել զայլիք թէ բարեմասնութիւնները և թէ չարիքները: ♦

Ընդհանրապէս ընդունւած է երկաթուղիներից լառաշացած բարիքները միայն տեսնել. երբ մի որևէ տեղ երկաթուղու նոր զիծ է անցկացոււմ, իսկոյն բնակիչների երևակայութիւնը մի ամբողջ դրախտ է ստեղծոււմ իր համար. այնպիսի դրախտ, որտեղ արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը պիտի ծաղկեն, դրամը պիտի առատանայ, ժողովուրդը պիտի հարստանայ, քաղաքներն ու գիւղերը պիտի բարեկարգւին և այլն և այլն: Երկաթուղիների բարենորոգչական ազդեցութիւն գործելու կարծիքը այն քան ընդհանրացած ու ընդունւած է, որ շատերը նոյն իսկ աւելորդ են համարում այդ մասին վիճելը: Սակայն, դա մի խոշոր թիւրիմացութիւն է, որը առաջ է գալիս նրանից, երբ ինչիւրի վրայ առհասարակ նայում են կամ շատ մակերևոյթօրէն և կամ թէ եւրոպական բուրժուազիայի ակնոցների միջից:

Մի շատ կարճաժամ ակնարկ ձգենք այժմ երկաթուղիների ծագման ու զարգացման պատմութեան վրայ և տեսնենք թէ ում ինչպիսի բարիքներ են բերել երկաթուղիները:

Ամենառաջին երկաթուղային զծերը շինւել են XIX դարի առաջին կիսին՝ Անգլիայում և Փրանսիայում. այսինքն՝ այնպիսի ժամանակ և այն երկրներում, որտեղ խոշոր արդիւնաբերութիւնը և վաճառականութիւնը այն աստիճան զարգացել ու մեծ ծաւալականութիւն էին ստացել, որ աւելի արագընթաց ու կատարելագործւած հաղորդակցութեան միջոցների ընտանիքն պահանջ էր լառաջ եկել: Տեխնիկայի զարգացման շնորհիւ հետզհետէ աճող գործարանական արտադրութիւնների համար աւելի ու աւելի ընդարձակ և հեռաւոր շուկաներ,

սպառող վայրեր գտնելու նպատակին այլ ևս նախկին հաղորդակցութեան դանդաղ միջոցները բաւարարութիւն չէին տալիս: Եւ քանի խոշոր արդիւնագործութիւնը զարգացաւ, նոյնչափ էլ, գուղընթացաբար, կատարելագործւեցին և տարածւեցին երկաթուղիներն ու այլ հաղորդակցութեան միջոցները: Իսկ երբ ամբողջ Եւրոպայի շուկաները լցւեցին գործարանական ապրանքներով և միւս երկրներում էլ զարգացաւ խոշոր արդիւնագործութիւնը, այն ժամանակ եւրոպական բուրժուազիան սկսեց իր ազաւ աչքերը դէպի հեռաւոր Ասիայի, Աֆրիկէի և այլ երկրների խորքերը դարձնել: Արդիւնագործութեան հետզհետէ զարգանալով, բուրժուազիային սպառնում էին՝ մի կողմից արդիւնագործական կրիզիսները, իսկ միւս կողմից շարունակ աճող ըմբոստ պրօլետարիատը: Թէ առաջինից և թէ երկրորդից ազատւելու կամ զոնէ մասամբ թեթեւանալու համար, նրան հարկաւոր էին նոր երկրներ, որպէս զի կարողանայ թէ իր շարունակ աճող ապրանքները վաճառել և թէ աւելորդ պրօլետարիատից զաղթականութիւններ հաստատել: Այսպիսով սկսեց նորագոյն կելոնիական քաղաքականութիւնը, որի պատճառով այսօր Ասիան ու Աֆրիկէն էլ հետզհետէ ծածկւում են երկաթուղիներով:

Այսպէս ուրեմն, երկաթուղիները և այլ կատարելագործւած հաղորդակցութեան միջոցները յառաջ են եկել ու զարգացել են եւրոպական արդիւնագործութեան *մնահան* և անյադ սպահանջներին զոհացում տալու համար միայն: Այդ նպատակին են ծառայում նրանք և Եւրոպայից դուրս երկրներում: Այս վերջին պարագայում երկաթուղիները մի այլ ծառայութիւն էլ են մատուցանում եւրոպական բուրժուազիային. այն է՝ աժան գնով հում նիւթեր են նրանք ստանում իրենց գործարանների համար: Պատահում է, որ նոյն երկաթուղիները երկսայրի սրի դեր էլ են կատարում. նրանց շնորհիւ սկսում է զարգանալ նաև տեղական արդիւնագործութիւնը, որը մրցում է եւրոպականի հետ: Քայց նախ՝ մինչև տեղական արդիւնագործութեան զարգանալը, տասնեակ տարիներ կարող են անցնել և երկրորդ՝ եւրոպական բուրժուազիան շաա հեշտութեամբ

է կարողանում արևստական միջոցներով ինդոզել, ոչնչացնել տեղական արդիւնագործութիւնը: Գրան իբր օրինակ կարող է ծառայել Հնդկաստանը, որ դեռ ոչ շատ հեռու ժամանակներում ամենաարդիւնագործ երկիրն էր համարում և որի մի քանի մանուֆակտուրային (ձեռագործ) սուրանքները ամենայն լաջողութեամբ մրցում էին եւրոպական գործարանական ապրանքների հետ: Քայց անգլիացիները, զրանց միանգամայն ընկճելու և իրենց ապրանքները առաջ քշելու նպատակով, ամենաբարբարոս միջոցների գիմեցին. այն է՝ Հնդկաստանից արտահանող ապրանքների վրայ ահազին մաքսեր նշանակեցին, իսկ Հնդկաստան ներմուծող անգլիական ապրանքները բոլորովին ազատեցին մաքսերից: Գրա հետևանքը այն եղաւ, որ Հնդկաստանի բազմաթիւ արհեստաւորները անդործութիւնից սովի մատնւեցին և «Հնդկաստանի դաշտերը ծածկւեցին կտաւագործ ջուլհակների ոսկորներով»:

Ճիշտ է, Եւրոպայի դաշտերը պակաս չեն ծածկւել խոշոր արդիւնագործութեան շնորհիւ սնանկացած արհեստաւորներին ու պրօլետարի ոսկորներով, բայց այդտեղ պրօլետարիացած ժողովուրդը զոնէ մասամբ աշխատանք է գտնում գործարաններում, այն ինչ Հնդկաստանի նման խոշոր արդիւնագործութիւնից զուրկ երկրներում, սնանկացած արհեստաւորի համար այլ ևս ոչ մի յոյս ու ապաւէն չէ մնում: Այլ խնդիր է, երբ երկրի մէջ տեղական արդիւնագործութիւնն ու կապիտալն է զարգանում և այլ խնդիր է, երբ երկրի մանր արդիւնագործութիւնը ստիպւած է մրցել զրսից եկած մի այլ երկրի խոշոր արդիւնագործութեան արտադրութիւնների հետ: Առաջին պարագայում կապիտալիզմը թէև մի կողմից քանդող, աւերող, բայց միւս կողմից շինող, կառուցանող դեր է կատարում: Այս դէպքում նա զասակարգային մրցում է առաջ բերում, մրցում բուրժուազիայի և պրօլետարիատի միջև: Իսկ երկրորդ պարագայում օտար երկրի կապիտալիզմը երկար տարիների ընթացքում ամեն ինչ միայն քանդում, աւերում և տակն ու վրայ է անում: Թէև այս դէպքում էլ մրցում է ստեղծւում, բայց նա ազգային կերպարանք է ստանում՝ մրցում կապիտալիստ

Եւրոպացիները և տեղական քայքայող բնիկները միջև:

Ճիշտ է, երկաթուղիները չափազանց նպաստում են տեղական կապիտալիզմի զարգանալուն, բայց մինչ այդ, ինչպէս ասացինք, տասնեակ տարիներ կարող են անցնել, որոնց ընթացքում եւրոպական գործարանատէրերը կը հեղեղեն իրենց ապրանքներով երկրի բոլոր շուկաները և կը սպանեն տեղական մանր արդիւնադործութիւնը: Եւրոպացիները շատ լաւ գիտեն բնիկ ժողովրդի պահանջներին յարմարել: Ամենից առաջ նրանք երկրի մէջ արգէն պատրաստող և գործածող ապրանքներից են բերում, իսկ երբ ժողովուրդը կուլտուրապէս զարգանում է և պահանջները լայնանում են, զրա հետ մէկ տեղ և փոխում են ապրանքների տեսակները: Պարզ է, որ գործարաններում պատրաստած ապրանքները թէ՛ աւելի զեղեցիկ և թէ՛ աւելի մատչելի են գները կողմից, ուստի նրանք շատ հեշտութեամբ են մրցում տեղական տնային տնտեսութեամբ և արհեստաւորների ձեռքով պատրաստած ապրանքների հետ: Գրա հետեւանքը այն է լինում, որ տեղական մանր արդիւնադործութիւնը արագութեամբ քայքայւում, ոչնչանում է և նրա տեղը բռնում են եւրոպական խոշոր արդիւնադործութեան արտագրութիւնները: Իսկ ինչ են լինում այն հազարաւոր ընտանիքները, որոնք մինչև եւրոպական ապրանքների ներմուծւելը, զանազան արհեստներով ու մանր արդիւնադործութեամբ պարպելով, կերակրում և լաւ թէ՛ վատ կեանք էին վարում: Գրանք, ի հարկէ, աշխատանքի և ապրուստի միջոցներից զրկւելով, մի բոլորովին աւելորդ տարր են դառնում երկրի մէջ, որոնց համար երկու ելք է մնում միայն. կամ սովամահ լինել ու «ծածկել երկրի դաշտերը իրենց ուկորներով» և կամ նոյն երկաթուղիներով, որոնցով եւրոպական ապրանքներ են բերում, չել, գաղթել Եւրոպա կամ Ամերիկա, որպէս զի աշխատանք գտնեն հէնց նոյն գործարանների մէջ, որոնց արտադրած ապրանքների շնորհիւ իրենք սնանկացան ու դեռ պիտի շարունակեն սնանկանալ իրենց եղբայրակիցները: Գրանց համար կայ և մի երրորդ ելք, բայց ոչ այնքան էլ մօտ ապագայի համար. այն է՝ երբ իրենց հայրենիքումն էլ կը սկսւի ու

կը զարգանայ խոշոր արդիւնադործութիւնը, նրանք կարող կը լինեն իրենց երկրի գործարաններում աշխատել իբրև բանւոր պրօլետարի:

Եւրոպական ապրանքների հետ երկրի մէջ մտնում է և զրամական տնտեսութիւն. ժողովուրդը գնալով աւելի ու աւելի դրամի պահանջ է զգում, թէ՛ շարունակ աճող պետական հարկերը վճարելու և թէ՛ իր նորանոր ծագող սէւաքերն ու պահանջները լրացնելու համար: Գրամի պահանջը մի կողմից և երկաթուղիների ընծայած մի քանի դիւրութիւնները միւս կողմից՝ հարկադրում են գիւղական տարրին՝ կարելիին չափ շատ վաճառել իր հողի արդիւնքից: Բայց որովհետև մանր տնտեսութեամբ արտադրած երկրադործական բերքերը անկարող են լինում բաւականութիւն տալ նրա շարունակ աճող զրամական պահանջներին, ուստի շնա շուտով գիւղական մանր տնտեսութիւնն էլ է քայքայւում և սկսում է գիւղական տարրի պրօլետարիականացումն էլ:

Ժողովրդի տնտեսութեան ընդհանուր քայքայումն, կատարեալ թշուառութիւն, սով, գաղթականութիւն — ահա թէ ինչ են տալիս եւրոպացիների շինած երկաթուղիները՝ յետամնաց երկրներին: Եւ իբրև յետամնաց երկիր, պիտի սպասել որ նոյն ճակատադրին պիտի ենթարկւի Փոքր Ասիայի ժողովուրդը՝ երկաթուղիները շինելուց յետոյ: Սակայն հարց է ծագում, թէ արդեօք կարելի է ասել, որ Փոքր Ասիայի տնտեսութիւնը մինչև օրս բոլորովին ազատ է մնացել վերջիշեալ քայքայումներից:

Մի փոքրիկ հայեացք ձգենք այդ երկրի ներկայ տնտեսական վիճակի վրայ:

## II

Չընայելով թիւրք կառավարութեան ազէտ քաղաքականութեանը — ամեն կերպ ջանալ փակել իր երկրի դռները Եւրոպայից եկող որ և է քաղաքակրթական հոսանքի առաջ ու պահպանել նրան իր նախնի նահապետական վիճակի մէջ — այ-

նուամենայնիւ, իր աշխարհագրական դիրքի շնորհիւ, այդ երկրի տնտեսական կեանքի մէջ շատ փոփոխութիւններ են մտել անցեալ XIX դարի վերջին կէսի ընթացքում: Փոքր Ասիան, երեք կողմից ծովերով շրջապատուած ու Եւրոպայից զէպի Ասիա տանող միակ ցամաքային ճանապարհը լինելով և Եւրոպային էլ այնքան մօտ գտնւելով, առանց երկաթուղիներ ունենալու էլ, շատ շուտ է սկսել եւրոպական ապրանքների շուկայ դառնալ: Մանաւանդ նրա ծովեզերեայ ու ծովից ոչ հեռու մասերը վաղուց են սկսել եւրոպական խոշոր արդիւնադործութեան աւերիչ ազդեցութեանը ենթարկւել: Քանի քանի զանազան արհեստաւորներ, ինչպէս օրինակ՝ կօշկակարներ, դերձակներ, փականակադործեր, մանուսա ու չուխա դործող ջուհակներ, ներկարարներ և այլն և այլն, չրդիմանալով Եւրոպայից բերւած աժանագին ապրանքների մրցմանը, ստիպւել են փակել իրենց արհեստանոցները Զմիւռնայում, Սամսոնում, Տրապիզոնում, Ամասիայում, Մարղանում, Սերաստիայում, Խարբերդում, Էրզրումում և այլ քաղաքներում, ու զաղթել հեռաւոր երկրներ — մինչև իսկ Ամերիկա, օրավարձով իրենց ապրուստը հալթալթելու համար:

Եւրոպական խոշոր արդիւնադործութեան մրցումից սնանկանալու վրայ աւելանում է նաև թիւրք կառավարութեան յուրի ֆինանսական սխառեմի սնանկութիւնը: Իր երկրի սահմաններով՝ անմիջապէս քաղաքակրթւած երկրների կաթած լինելով և վաղուց անտի եւրոպական մեծ պետութիւններից մէկը համարւելով, թիւրք կառավարութիւնը միշտ ստիպւած է եղել զոնէ ըստ արտաքուստ՝ եւրոպական պետութիւններին նմանւել: Իսկ այդ նմանելը ու իր «վերմակի չափով ոտ չըմեկնելը» նրան շատ ու շատ սուղի է նստում: Իր երկրի արդիւնադործութեան ու բարգաւաճման մասին ինամք տանելու անբնդունակ և մինչև իսկ որևէ բարենորոգման հակառակ լինելով հանգերձ, նա ուղեցել է միշտ մեծ պետութիւնների շարքումը մնալ: Իսկ այդ շարքումը մնալու ամենաառաջին պայմանը փողն է. փողով կարելի է միայն լաւ գօրք, ուժեղ նաւատորմիղ և այլ այնպիսի պետական հաստատութիւններ պահել, որ

ունին մեծ պետութիւնները: Բայց սրտեղից վերցնել փողը: Այդ խաւար երկրի տգէտ կառավարիչները, առանց մի վայրկեան հետաքրքրւելու թէ արդեօք ինչ ազբիւրներից են փող հալթալթում Անգլիան, Գերմանիան և միւսները, իրենց մեծաքանակ պետական ծախսերի համար, առանց մտածելու որ իրենց խեղճ հայրենիքում ոչ միայն ծաղկած վաճառականութիւն, խոշոր արդիւնադործութիւն չըլլայ, այլ և շատ տնվերում սև փողի երես չէ տեսնուում ու մինչև իսկ դրա կարիքըն էլ չէ զգացւում, որովհետև երկրի շատ մասերում դեռ դրամական տնտեսութիւն չըլլայ, առանց, — կրկնում ենք, — այդ բոլորի մասին մի լաւ խորհելու — թիւրք կառավարիչները մի գեղեցիկ օր էլ որոշեցին դրամական տնտեսութիւն մտցնել իրենց նահապետական երկրում:

Մինչև այդ ժամանակ բոլոր կառավարչական տուրքերը վճարւում էին երկրի բերքերից, դրամական հարկեր շատ քիչ կալին և այն էլ քաղաքներում միայն: Իսկ այդ յուրի որոշումը վայանալուց լետու, այլ ևս սկսեցին բոլոր հարկերը դրամով պահանջել: Այդ գեռ բաւական չէ, իր շտրունակ աճող բիւջէտը ու պետական պարտքերը զէթ մասամբ լրացնելու համար, կառավարութիւնը տարէցտարի նորանոր հարկեր է հնարում և ժողովրդի վրայ բարդում: Եւ ծիծաղելին այն է, որ հարկեր նշանակելիս էլ է նա աշխատում եւրոպական պետութիւններին նմանել. օրինակի համար՝ առանց որ և է հաղորդակցութեան մի շնորքով ճանապարհ, առանց զէթ մի հատիկ շնորքով ուսումնարան ունենալու, նա հաղորդակցութեան ու կրթական հարկեր է կապել ժողովրդի վզին: Հաղորդակցութեան ու կրթական նախարարներ էլ է պահում, մեծաքանակ ռոճիկներ նշանակելով նրանց: Տաճկական հարկերն ու նրանց հարկահանութեան աւերիչ եղանակները այնքան յայտնի են ամենքին, որ աւելորդ ենք համարում դրանց վրայ երկար կանգ առնել: Սակայն անկտրող ենք չըլիշել այստեղ այն մի նոր տեսակի հարկը, որ նշանակւեց վերջին ժամանակներում և որը տաճկական սրամիտ ֆինանսիստների հնարադիտութեան գլուխ գործողը կարելի է համարել: Մեր

խօսքը այն մասին է, որ որոշել է ճարտարապետական քրն-  
նութեան ենթարկել Թիւրքիայի բոլոր քաղաքները և այն  
տները, որոնք ճարտարապետութեան պահանջներին անհամա-  
պատասխան կը համարուեն, պիտի կամ քանդուեն ու նորից շին-  
ւեն և կամ նրանց տէրերը տուգանքի պիտի ենթարկուեն: Ի  
նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամբողջ Տաճկաստա-  
նում ո՛չ մի քաղաք չըկայ, — հռչակաւոր Պոլիսն էլ մէջը հաշ-  
ւելով, — որը համապատասխան լինի ճարտարապետութեան պա-  
հանջներին, այլ ևս դժուար չէ հասկանալ թէ՛ որ աստիճան  
փողի մեծ կարիք ունի թիւրք կառավարութիւնը...

Բայց սրտեղից պիտի տայ ժողովուրդը այդ շարունակ աճող  
մեծաքանակ հարկերը, երբ երկրի շատ տեղերում, ինչպէ՛ս  
ասացինք, դեռ ընտանի տնտեսութիւնն է տիրում և դրամի  
կատարեալ սով է:

Թէև, ասացինք, Թիւրքիան, իբրև մեծ պետութիւն, իր  
գէրքը պահպանելու համար, ստիպւած էր արևեստական մի-  
ջոցով դրամական հարկային սիստէմ մտցնել իր պետութեան  
սահմաններում, այլապէս նա կորած էր առանց դրամի, բայց  
դրամական հարկային սիստէմ մտցնելով, նա պէտք է և մի-  
ջոցներ ձեռք առնէր իր երկրի արդիւնագործութիւնն ու վա-  
ճառականութիւնը դարգացնելու, ինչպէս այդ արեց և շարու-  
նակում է անել Ռուսիան: Կապիտալիստական երկրների հետ  
չափւելու համար, անհրաժեշտ է իր երկրում դարգացած կապի-  
տալիզմ ունենալ: Բայց թիւրք կառավարութիւնը խոշոր արդիւ-  
նագործութեան քաղաքակրթիչ ազդեցութիւնից սարսափելով և  
ժամանակի ոգին ու պահանջը չըմբռնելով, ոչ մի ջանք չարեց  
այդ ուղղութեամբ և ամեն կողմից փակեց իր երկրի դռները  
որևէ տնտեսական ու քաղաքական բարենորոգումների առաջ:  
Եւրոպայից նա փոխ առաւ միայն դրամական հարկահանութեան  
սիստէմը և բազմատեսակ հարկերը: Դրա հետևանքն այն  
եղաւ, որ մի կողմից եւրոպական ապրանքների մրցումը, իսկ  
միւս կողմից շարունակ աճող դրամի պահանջը հետզհետէ քայքայ-  
ում են ժողովրդի մանր արդիւնագործութիւնն ու տնային տնտե-  
սութիւնը և ուրի ու գաղթականութեան են մատնում նրան:

Փողովուրդը սնանկանում է ոչ միայն քաղաքներում, այլ  
և գիւղերում: Անասալարհների բացակայութեան շնորհիւ, գիւ-  
ղացին անկարող է իր երկրագործական արդիւնաբերութիւնները  
անձամբ վաճառքի հանել, ուստի նա ստիպւած է ամենաչըն-  
չին գներով գիջանել, այդ պարագաներում ամեն տեղ լույս ընկ-  
նող չարչի-վաճառականներին: Եւ քանի որ ամեն տարի բերրի  
չէ լինում և չարչիների հետ կայացրած առևտուրից ստաց-  
ւած զրամները դարձեալ չեն բաւականացնում պետական հար-  
կերը վճարելուն ու գիւղացու պէտքերը զոհացնելուն, ուստի  
նա ծախում է ոչ միայն այս տարւան բերքը, այլև գալ տար-  
ւանը, որ դեռ իսկի քաղաք էլ չէ: Իսկ գալ տարւան հար-  
կերի համար ինչ պիտի անել: Օհ, այդ դէպքում էլ ըստ  
սիրտ տղերակները պատրաստ են օգնութեան հասնել ու ծա-  
ռայութիւններ մատուցանել... իրենց (ուզում էինք ասել՝ գիւ-  
ղացուն): Նրանք մի քանի մէջիդիով<sup>1)</sup> տիրանում են գիւղացու  
բոլոր տնային կայքերին, անասուններին. մի քանի ոսկու հա-  
մար դրաւ են վերցնում գիւղացու տունը, հողերը և այնպիսի  
սոսկալի տոկոսներ են նշանակում, որ խեղճ գիւղացին, մի քա-  
նի երկար տարիների ընթացքում օտար երկրների մէջ թա-  
փած գառն աշխատանքի ամբողջ վաստակը նրանց վճարելով,  
դեռ էլի չէ կարողանում ոչ միայն վերցրած մայր գումարը  
հատուցանել, այլև աւելի ու աւելի աճող տոկոսները զեղջել:  
Վերջ ի վերջոյ՝ նա ստիպւում է իր հողերն էլ, տունն էլ պա-  
րոն վաշխառուին թողնել: Մեզ պատահել է այդ վաշխառու-  
ներից տեսնել ոչ միայն Պոլսում, Բաթումում, Թիֆլիսում,  
այլև հեռաւոր Կորնթոսի ջրանցքում (այդ ջրանցքը բացել  
է գլխաւորապէս Հայաստանից եկած մշակների աշխատանքով  
և այժմ այնտեղ — Կալամարի կոչւած կայարանի մօտ — մի բա-  
ւական մեծ հայկական գերեզմանատուն կայ, որտեղ ջրանցքի  
փլատակների տակ մեռած բանւորներն են թաղւած), Գանու-  
բի ափերում, նոյն իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգներում,  
ուր նրանք եկել էին իրենց տուած 3—4 ոսկու տասնապատ-  
կւած ու հորիւրապատկւած տոկոսները հաւաքելու:

<sup>1)</sup> Տաճկական դրամ 1 ր. 40 կ. արժողութեամբ:

Ահա, այդ դանադան Աւետիս ու Պետրոս աղաների ձեռքն է կամաց կամաց կենդրոնանում Փոքր Ասիայի վարելահողերն ու այլ անշարժ և շարժական հարստութիւնները: Եւ բանը նրանումն է, որ հողերի կենդրոնացման հետ մէկ տեղ երկրում չէ գաբղանում խոշոր հողագործութիւնը, ինչպէ՛ս մենք տեսնում ենք կապիտալիստական երկրներում: Եւ դա շատ բնական է, երբ մի երկրում ոչ կապիտալիզմ և ոչ խոշոր արդիւնագործութիւն կայ, հողագործի զիւլացու աշխատանքի միակ աղբիւրը դարձեալ հողագործութիւնն է մնում, — եթէ՛ նա չէ ցանկանում, ի հարկէ, գաղթել իր երկրից: — Այդ պարագայում հողատիրոջ համար շատ աւելի ձեռնտու է իր հողը մաս-մաս դանադան պայմաններով կապալով տալ նոյն զիւլացիներին ու նրանց աշխատանքի վերջին հիւթը քամել, քան թէ խոշոր տնտեսութեամբ պարապելու անօգուտ փորձեր անել. նամանաւանդ երբ երկրում արտահանութեանը նպաստող երկաթուղիներ էլ չըկան: Հէնց այդ է պատճառը, որ Փոքր Ասիայի մեծաքանակ հողատէրերի գործունէութիւնը չարչի-վաճառականութիւնից ու վաշխառութիւնից հէռու չէ դնում: Գրանք առայժմ ապագայ կապիտալիզմի սաղմն են կազմում: Իսկ երբ այդ երկրում երկաթուղիներ կըշինեն ու դրանց շնորհիւ խոշոր արդիւնագործութեանը նպաստող պայմաններ կըստեղծւեն, հաւանական է, որ հէնց այդ նոյն չարչիները պիտի լինեն Փոքր Ասիայի առաջին խոշոր արդիւնագործները:

Եւ այսպէս, մենք տեսնում ենք, որ դեռ երկաթուղիներ չըշինւած, Փոքր Ասիայի թէ՛ մանր արդիւնագործութիւնը և թէ՛ մանր հողատիրութիւնը արդէն սկսել են քայքայել: Այն, ինչ պէտք էր սպասել երկաթուղիների կառուցանելուց լետուց, սկսել է շատ առաջ, սնանկացած արհեստաւորներից ու հողագործի զիւլացիներից հետզհետէ կազմւում է պրօլետարիատ, բայց պրօլետարիատ առանց կապիտալիզմի, առանց խոշոր արդիւնագործութեան: Այդ պրօլետարիատը իր անելանելի վիճակից ազատելու ելք է փնտռում. նա կամ խլրտում և ամստամբութեան է գիմում և կամ թէ՛ զլուխը ծռած հազարներով գաղթում է երկրագնդի ամենահեռաւոր ան-

Վիւնները, աշխատանք ու մի կտոր հաց ձարելու համար...

Ընդհանրապէ՛ս տարածւած է այն միտքը, թէ Թիւրքիայից գաղթող հայերը ըստ մեծի մասին բարբարոս քրդերի ձեռքից են փախչում, առանց մի րոպէ նրանց վերօլիշեալ տնտեսական քայքայումը ի նկատի առնելու: Այն ինչ մեր խօսքը «հայկական կոտորածներից» առաջ գաղթողների մասին է, որոնց մենք անձամբ տեսել, մանրամասն հարց ու փորձ ենք արել ու քննել ենք դեռ 90 - 95 թւականներին:

Վերօլիշեալ քայքայումից փոքր ի շատէ դեռ ազատ են մնացել այն լեռնաբնակ քրդերը, ասորիները ու հայերը (Գերսիմ, Զուլամերիկ, Զէլթուն և այլն), որոնք, իրենց աշխարհազորական զիրքի շնորհիւ, դեռ ևս կիսանկախ են և շատ չեն ենթարկւում թիւրք կառավարութեան հարկային սիստեմին: Հողորդակցութեան միջոցների բացակայութեան պատճառով, նրանց մէջ դրամական տնտեսութիւնն էլ դեռ շատ քիչ է մտել:

### III

Չատ պարզ է, որ թիւրք կառավարութիւնը, իր ժողովրդին զիտակցաբար թէ՛ անգիտակցաբար քայքայելով հանդերձ, քայքայում է և իր պետական ֆինանսները: Գնալով նա աւելի ու աւելի պարտքերի մէջ է խրւում և օր ըստ օրէ սրնանկութեան է մօտենում: Նրա պետական եկամուտների աղբիւրները, ինչպէ՛ս օրինակ՝ ծխախոտի մենավաճառութիւնը, ծովեղերեայ քաղաքների պօստը, երկաթուղիները և այլն՝ հետըզհետէ պարտատէրերի ձեռքն են անցնում: Իսկ դրա հետեւանքը նախ այն է լինում, որ այդ աղբիւրներից պակասած եկամուտները կառավարութիւնը աշխատում է լրացնել նորանոր ուղղակի և անուղղակի հարկերով, որով աւելի ևս փութացնում է ժողովրդի քայքայումը, և ապա այն, որ Թիւրքիան դնալով աւելի ու աւելի է կորցնում իր քաղաքական

ոյժը և տնտեսականապէս մեծ պետութիւնների վասալն է դառնում:

Ո՞վ կարող է, օրինակի համար, միջամտել, չենք ասում Անգլիայի կամ Ֆրանսիայի, այլ նոյնիսկ փոքրիկ Յունաստանի մաքսային գործերին, այն ինչ, սրանից մի քանի ամիս առաջ, երբ Թիւրքիան ուղեց Եւրոպայից ներմուծող մի քանի ապրանքների մաքսը աւելացնել, ահազին աղմուկ բարձրացրին պետութիւնները և թոյլ չբռնեցին այդ անել: Ել չենք ասում այն մասին, որ համարեա թէ ամեն օր այս կամ այն մեծ պետութիւնը միջամտում է նրա գանազան վարչական ու դատաստանական խնդիրների տւիթով: Ո՞ւմ յայտնի չէ, որ եթէ մինչև օրս Թիւրքիան բոլորովին բաժանւած չէ մեծ պետութիւնների մէջ ու դեռ շարունակում է քաղաքականապէս ըստ երևոյթին անկախ դիրք պահպանել, դա լոկ իր աշխարհագրական դիրքի և այն էլ Բոսֆորի ու Գարգանելի շնորհիւ է: Թիւրք կառավարութիւնը այսօր լոկ մի խրտուիլակի դեր է կատարում, որը զրւած է Բոսֆորի ափերին այդ նեղուցները պաշտպանելու համար: Բայց, եթէ պետութիւնները չըկարողացան համաձայնել, թէ ո՞ւմը պատկանեն այդ նեղուցները, եթէ տաճկական հողերը միմեանց մէջ քաղաքականապէս բաժանելու հնարը չըգտան նրանք, այդ դեռ չէ նշանակում, թէ նրան տնտեսականապէս բաժանելն էլ այնպէս դժւար է: Այդ կարգի վիճելի երկրների վերաբերեալ բուրժուազական դիպլոմատիան մի շատ ճարպիկ էլք է գտել. դա այն է, որ պետութիւններից ամեն մէկը, առանց բաժանելիք երկրի լիշխանութեան քաղաքական իրաւունքները խախտելու, նրա նահանգների մի որոշ մասը իր ազդեցութեան տակ է առնում և բացառապէս ինքն է շահագործում այդ մասի բոլոր հարստութիւնները, այլ խօսքերով՝ ինքն է դառնում տնտեսականապէս, — իսկ աւելի ուշ և քաղաքականապէս, — նրա կատարեալ տէրը:

Թէև դա միևնոյն բանն է, ինչպէս որ առանց մի մարդու գլուխը կտրելու, նրա ձեռքի կամ ոտի երակը բանալ ու արիւնը քամել, բայց և այնպէս, այս եղանակով երկիրը բա-

ժանելու խնդիրը շատ աւելի հեշտութեամբ ու քաղցրութեամբ է լուծւում: Այսպիսի պարագաներում պետութիւնները իրարու նախօրօք չեն ասում թէ՛ «երկրի այս ինչ մասը ես ինձ կը վերցնեմ, իսկ այն ինչ մասը դու քեզ վերցրու», և ոչ էլ նրանք երկրի տիրոջն են ասում թէ՛ «դու անգոր ու անպէտք ես, հեռացիր, որ մենք քո տեղը բռնենք»: Ընդհակառակը՝ նրանք յայտարարում են, թէ վիճելի երկիրը պիտի մնայ անձեռնմխելի ու անբաժան, իսկ վարադուրի ետևից նրանցից ամեն մէկը ամենայն քաղաքավարութեամբ մօտենում է դիցուք Թիւրքիայի պետին և թոյլտուութիւն է խնդրում երկրի այս ինչ կամ այն ինչ մասերով երկաթուղիներ անցկացնել: Գրանից էլ անմեղ ու անվնաս խնդիր, միթէ կարող է լինել: Չէ որ նրա քաղաքական իրաւունքներին ոչ ոք չէ ուզում դիպչել, այնինչ, երկաթուղիների շնորհիւ, երկիրը կարող է մշակել, ժողովուրդը հարստանալ. իսկ հարուստ ժողովրդից աւելի շատ հարկեր կարելի է հաւաքել և շատ հաւանական է, որ մի քանի տարուց յետոյ կառավարութիւնը կըկարողանայ իր Ֆինանսներն էլ կարգի բերել: Բացի դրանից՝ երկրի մէջ հազորակցութեան լաւ միջոցներ լինելով, ըմբօստ ժողովրդի ապստամբական ոգին էլ կըթուլանայ ու մինչև օրս կիսանկախ մնացած ցեղերն էլ կըզսպեն, — որովհետև գորքի փոխադրութիւնը չափազանց կըհեշտանայ, — և առատ հարկէր կըվճարեն...

Հաւատում է Թիւրք կառավարութիւնը այդ քարոզներին, թէ չէ, — չըզիտենք: Գուցէ մասամբ և վախենում է: Բայց իրողութիւնը այն է, որ երկար տատանումներից յետոյ վերջապէս մի քանի դժեք շինելու որոշում տրեցաւ մի անգամից, և այն էլ, — որ շատ մեծ նշանակութիւն ունի, — տարբեր ազգերի կապիտալիստներին:

Այդ հանգամանքը այն մեծ նշանակութիւնն ունի, որ մեծ պետութիւնները իրանց շինած երկաթուղիներով Փոքր Ասիան պիտի մի քանի մասերի բաժանեն, իւրաքանչիւրը իր ազդեցութեան տակ պահելու որոշ տարածութիւն սահմանելով:

Իսկ թէ ինչ են նշանակում «ազդեցութեան սամաններ» բառերը, այդ մենք բացատրեցինք վերևում և շատ լազրիտենք Չինաստանի օրինակից: Դա, ինչպէս ասացինք, վիճելի երկրները բաժանելու մի նոր տեսակն է, աւելի քաղաքավարի ու չափազանց մեղմ խօսքերով արտայայտուած: Թէև, ազդեցութեան սահմանները որոշելուց լետոյ, մի առ ժամանակ երկրի տէրը քաղաքականապէս Թիւրքիան կրմնայ, բայց տնտեսականապէս երկրի իսկական տէրերը կամաց-կամաց եւրոպացիները կը գառնան. արդիւնազործութիւնը, առևտուրը, նոյնիսկ հողերը հետզհետէ եւրոպական կապիտալիստների ու Եւրոպայից գաղթած բախտախնդիրների ձեռքը կանցնեն: Իսկ լետոյ, կապիտալիզմի ազդեցութեան տակ երկրում ծագող նոր տնտեսական պայմանները, ի հարկէ, պիտի պահանջեն և նոր քաղաքական պայմաններ: Ուրեմն թիւրք կառավարութիւնը կամ պիտի կամաց-կամաց զիջանի ու փոխի իր այժմեան բարբարոս միապետական ընթիմը, աւելի քաղաքակիրթ կերպարանք ստանայ, լարմաբեկով ժամանակի պահանջներին, և կամ թէ Չինաստանի նման նա պիտի դիմի մեծ բռունցքի օգնութեանը: Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում տաճկական ընթիմի վախճանը կը լինի...

Վերևում ասացինք, որ երկաթուղիները մեծ դիւրութիւն պիտի տան թիւրքաց զօրքերի տեղափոխութեանը և այդպիսով կըրգւարացնեն երկրի ներսում կիսանկախ ցեղերի ապստամբութիւնը, բայց չըպէտք է մոռանալ և այն, որ այդ նոյն երկաթուղիները մեծ դիւրութիւն կըտան նաև եւրոպական զօրքերի տեղափոխութեանը: Մի՞թէ Բալկանեան թերակղզու մասեր ազգերը, Եգիպտոսը, Վիբանանը և այլ երկիրները նոյն երկաթուղային ու ծովային ճանապարհների շնորհիւ չէր, որ անջատեցին Թիւրքիայից և աւելի կամ պակաս ազատութիւն ըստացան: Չատ տեղին է այստեղ լիշել Ջէմս Բրայսի խօսքերը, որ հայկական խնդրի մասին մի անգամ խօսելիս, ասել էր՝ «խօ մենք չենք կարող անգլիական նաւերը Արարատի զուխը բարձրացնել»:

Իսկ երկաթուղիներ եղած ժամանակ, ո՛չ միայն անգլիա-

կան, այլ և բոլոր մեծ պետութիւնների բանակը կարող է, ի պահանջել հարկին, ամբողջ Փոքր Ասիան հեղեղել, ինչպէս որ նրանք հեղեղեցին Չինաստանը: Որ աստիճան երկաթուղիները միջազգային խաղաղութեանն են նպաստում, նոյնչափ էլ նրանք պատերազմներին են նպաստում...

Այսպէս ուրեմն, Փոքր Ասիայում շինելիք երկաթուղիների պայմանադրերը ստորագրելով, թիւրք կառավարութիւնը իր մօտալուտ մահաւան դատաւիճիւր կնքեց: Այժմ տեսնենք, թէ այդ երկրի ժողովուրդն ինչ սպասելիքներ ունի շինելիք երկաթուղիներից:

## IV

Թէ ինչպիսի տնտեսական քայքայումն են չառաջ բերում ընդհանրապէս երկաթուղիները լետամնաց երկրներում, այդ մենք տեսանք այս յօդուածի առաջին գլխում: Յետոյ մենք ասացինք, որ Փոքր Ասիայի շատ տեղերում, առանց երկաթուղիներ լինելու էլ, արդէն սկսել է այդ քայքայման պրօցէսը: Ուրեմն պարզ է, որ երկաթուղիները պիտի միայն փութացնեն նրան ու աւելի ընդարձակեն նրա սահմանները: Երկաթուղիներով բերած եւրոպական ապրանքները կարճ ժամանակի ընթացքում կըըռնեն Փոքր Ասիայի բոլոր շուկաները: Երկրում դեռ ևս մնացած մասը արդիւնազործութիւնն և տնային տնտեսութիւնը արագութեամբ կանհետանան: Պետական հարկերի աճումը մի կողմից, իսկ նոր կեանքի պայմանները միւս կողմից կըզօրացնեն դրամի պահանջը և ժողովուրդն էլ աւելի կըկաշկանդւի վաշխառուներից ցանցերով: Թէև երկաթուղիները երկրի հում բերքերի առաջ արտահանութեան լայն դռներ բաց կանեն, բայց դրանից շահուղը դարձեալ չարչի-վաճառականը պիտի լինի, այն ինչ ժողովրդի համար միայն մթերքները պիտի թանգանան: Գրան օրինակ կարող է ծառայել դարձեալ Հնդկաստանը, որտեղ ամենաբերրի տարիներում անգամ դիւրացիները շարունակ սովի են

մատնւած, որովհետեւ ժողովուրդը պարտքերի մէջ խեղդւած է և իր ամբողջ եկամուտը վաշխառուին է զիջանում ու ինքը մնում է առանց պաշարի: Նոյն երևոյթը նկատուած է և Ռուսիայում, որտեղ մի քանի տարուց ի վեր սովը կարծես բոյն է գրել ամենաբերրի նահանգներում անգամ, չընայելով որ այդ միւլնոյն նահանգներից իւրաքանչիւր տարի տասնեակ միլիոն փութ հացահատիկ է արտահանուած դէպի Յընասայի, Տագան-բոգի և այլ նաւահանդիստները, այնտեղից էլ արտասահման ասրելու նպատակով:

Նոյն երևոյթը պիտի սպասել և Փոքր Ասիայում և այստեղ հետեանքը աւելի սոսկալի պիտի լինի, որովհետեւ Ռուսիայում դեռ էլի հետզհետէ զարգացող խոշոր արդիւնագործութիւն կայ. պրօլետարիացող ժողովուրդը մասամբ միջոց ունի զանազան գործարաններում աշխատանք գտնելու, այն ինչ Փոքր Ասիայի պրօլետարիատի միակ ելքը զաղթականութիւնն է: Պրօլետարիատը չէ կարող առանց խոշոր արդիւնագործութեան ապրել և քանի որ իր երկրում այդ չըկայ, նա ստիպւած է թողնել իր սիրած հայրենիքը, ընտանիքը և գնալ թէկուզ Միացեալ-Նահանգները, Բրազիլիա, Արգենտին և էլ աւելի հեռու, եթէ միայն նա վստահ է գնացած տեղում աշխատանք գտնելու...

Եւրոպական կապիտալիզմի աւերիչ այլիքները Գերսիմի և այլ լեռնաբնակ ու կիսավայրենի ցեղերին էլ կըհասնեն: Այն, ինչ որ հարիւրաւոր տարիների ընթացքում չըկարողացաւ անել թիւրք կառավարութիւնը, ինչոր անգոր եղաւ անելու եւրոպական դիպլօմատիան, մի քանի տարւայ ընթացքում կանեն տնտեսական նոր պայմանները. բնականաբար եւրոպացիները պիտի պահանջեն ու պիտի օգնեն թիւրք կառավարութեանը կատարելապէս զսպել այդ կիսանկախ թափառական ցեղերին և վերջ գնել նրանց աւազակային արշաւանքներին, որպէս զի ապահով դարձնեն իրանց ապրանքներով բեռնաւորւած երկաթուղիները: Իսկ մի անգամ գրանց զսպելուց յետոյ, թիւրք կառավարութիւնը պիտի սկսի այդ անհոգ կեանքի սովորած ժողովրդի վրայ էլ տարածել իր հարկային սիստէմը:

Կամայ թէ ակամայ այդ ցեղերը պիտի թողնեն իրանց թափառական կեանքը ու պիտի սկսեն կանոնաւոր տնտեսութեամբ պարապել:

Էլ չենք ասում այն, որ երկաթուղիների միջոցով ներս հոսած քաղաքակրթութիւնը ինքն ըստ ինքեան այնպիսի նոր պահանջներ, որ բնն և գրամի կարօտութիւն կըծաղեցնի, որ ժողովուրդը դարձեալ ստիպւած պիտի լինի նոր կուլտուրայի ենթարկել: Եւ որովհետեւ այդ կիսավայրենի ցեղերը բոլորովին պատրաստուած չեն նոր ծաղող պայմանների մէջ ապրելու, ուստի նրանք աւելի հեշտութեամբ պիտի զոհ գնան կապիտալիզմի աւերիչ զոհեցումները. նրանց պրօլետարիականացումը շատ աւելի շուտ պիտի կատարւի և ամենամեծ թշուառները նրանք պիտի լինի...

\* \* \*

Այսպէս անմխիթարական է Փոքր Ասիայի թէ ներկան և թէ մօտիկ ապագան: Եւ մենք շատ յուսետես պիտի լինէինք, եթէ միայն այսօրով ու վաղանով զբաղէինք: Բարեբախտաբար վաղանից յետոյ միւս օրն է զայլիս, իսկ միւս օրւան հեռանկարը մեզ աւելի լաւաւես է դարձնում և մենք, այդչափ չարիքներին դիտակից լինելով հանդերձ, ուրախութեամբ ողջունում ենք Փոքր Ասիայում երկաթուղիներ շինելու որոշումը: Բանը նրանումն է, որ այս յօդւածի սկզբում եւրոպական կապիտալիստների մասին խօսելիս, մենք լռելեայն անցանք մի հանգամանք, որ չափազանց կարեւոր է: Ասացինք, որ Փոքր Ասիայի նման յետամնաց երկրներում երկաթուղիներ շինելիս, եւրոպական կապիտալիստների նպատակն է իրենց աւելի ու աւելի աճող ապրանքների համար նոր շուկաներ գտնել: Բայց ներկայումս Եւրոպայում կապիտալիզմը այնչափ զարգացել ու այնպիսի մեծ ծաւալ է ստացել, որ այժմ եւրոպական բուրժուազիային շուկաներ են հարկաւոր ոչ միայն իրենց ապրանքները սպառելու, այլ և կապիտալները գործածութեան մէջ դը-

ներու համար էլ: «Մի երկրի կապիտալը քանի աճում է, այն քան էլ քիչ տոկոս է բերում», ասում է Վ. Մարքսը: Այդ խօսքերի ճշմարտութիւնը մենք նկատում ենք ամեն քայլափոխում:

Բայց քիչ տոկոսով բաւականանալ չէ սիրում բուրժուազիան, նա միշտ այնպիսի յետումնաց երկրներ է որոնում, որտեղ նրա կապիտալը, գործածութեան դրելով, կարող է, փոխանակ 5—7—10%, 40—50 և աւելի տոկոսներ շահ բերել: «Որքան աւելի մեծ շահ է նախատեսնում բուրժուազիան, նոյնքան էլ մեծ ընկ է անում նա», — ասում է նոյն Մարքսը: Եւ յիշաւի, միթէ այդ նախատեսնելիք մեծ շահը չէ, որ այսօր ստիպում է եւրոպական բուրժուազիային իր կապիտալները տեղափոխել Ռուսիա, Կոնգո, Տրանսուալ և այլ երկրներ:

Միթէ ամբողջ Եւրոպան այսօր այնպիսի մեծ վտանգի կ'ենթարկէր ինքն իրեն Չինաստանում, եթէ այդ երկրից ապագայում ստանալիք շահը չափազանց շլացուցիչ չըլինէր: Թէև օտար երկրներում գործարաններ, երկաթուղիներ և այլն հիմնելով, եւրոպական բուրժուազիան զիտակցաբար թէ անզիտակցաբար մրցակիցներ է ստեղծում ինքն իր դէմ, բայց ինչ արած: Հէնց ճիշտ դրա մէջն է կապիտալիստական սիստէմի ներքին հակասութիւնը. կապիտալիզմի զարգացման հետ զարգանում են և այն պայմանները, որոնք վերջ է վերջոյ պիտի տապալեն կապիտալիստական արդիւնաբերութեան սիստէմը: Այդպէս է նրա ճակատագրական օրէնքը...

Ահա, այս բոլորը աչքի առաջ ունենալով, մենք կատարելապէս լիայոյս ենք, որ Փոքր Ասիայի երկաթուղիները եւրոպական ապրանքների հետ միասին շատ շուտով կրսկսեն տեղափոխել դէպի այդ երկիրը և եւրոպական կապիտալներ: Փոքր Ասիայի նման բնական հարստութիւններով ու աժան բանւորներով լի երկիրը կապիտալների գործածութեան ահագին ասպարէզ է ներկայացնում. նրա լեռների ծոցում թաղւած երկաթը, պղինձը, արծաթը, քարածուխը, նաւթը և այլ հանքերը, նրա հարուստ վարելահողերն ու արօտները շատ շուտով

իրանց վրայ կըղարձեն եւրոպական կապիտալիստների ազաւ աշագործութիւնը: Իսկ եւրոպացիների օրինակից սիրտ առած, տեղական չարչի վաճառականներն էլ կրսկսեն խոշոր արդիւնագործութիւնների մէջ մտցնել իրանց զիղած կապիտալները: Կրսկսի տեղական խոշոր ինդուստրիան և խոշոր հողագործութիւնը: Ասպարէզ կըբացւի և պրօլետարիացած անգործ ժողովրդի համար. սրանք, ի հարկէ, աւելի կըգերազանեն իրենց հայրենիքում մնալ աւելի պակաս օրավարձով աշխատելու, քան թէ գնալ հեռաւոր երկրներ:

Բայց, որչափ էլ երկրի խոշոր արդիւնագործութիւնը զարգանում է, դարձեալ նա չէ կարողանում բոլոր պրօլետարիացած ժողովրդին աշխատանք մտտակարարել. օր ըստ օրէ կատարելագործւող մեքենաները աւելի ու աւելի կրճատում են բանւորների թիւը գործարաններում: Այդպիսով ժողովրդի տրնտեսական վիճակն էլ աւելի կըվատթարանայ Փոքր Ասիայում: Կատարելագործւած մեքենաների շնորհիւ գործարաններից գուրս կըշարսին հազարաւոր գործաւորներ, իսկ նրանց տեղը կանւեն կանայք ու մատղաշ երեխաներ. տեղի կուենայ ընտանիքի քայքայում, բարքերի ապականութիւն: Թէև քաղաքները կաճեն, կըբարեկարգւեն, բայց այդ բարեկարգութեան հետ միասին կըբազմանան թշուառները, անառակներն ու պոռնկանոցները... Սակայն այդ բոլոր չարիքները այն գորաւոր գործօններն են, որոնք մի կողմից՝ կատաղի գայրոյթ են գարթեցնում պրօլետարիատի մէջ, իսկ միւս կողմից՝ նրանց աւելի զիտակցական են դարձնում իրանց գասակարգային շահերի վերաբերեալ: Խեղճութիւնը, թշուառութիւնն ու տառապանքը ամենալաւ դպրոցն է մարդոց՝ մտածել տալու իրենց անելիքի մասին, իսկ գործարանական կեանքը, շարունակ միասին և միմեանց հետ կապւած աշխատելու եղանակը, նրանց սովորեցնում են՝ կազմակերպել, համախմբել իրանց ուժերը և կռիւ մղել իրենց շահագործողների դէմ: Այսպիսով, խոշոր արդիւնագործութեան հետ Փոքր Ասիայում էլ կրսկսի այն մեծ գասակարգային կռիւը, որը բոլոր կապիտալիստական երկրների յատկանիշն ու անհրաժեշտ պայմանն է: Եւ որչափ երկրում կա-

պիտալիզմը զարգանայ, այնքան էլ այդ կռիւր աւելի սուր կերպարանք կընդունի...

Հայ ժողովրդի դէպի իրենց հայրենիքը ունեցած սէրը աչքի առաջ ունենալով, պէտք է յուսալ, որ Փոքր Ասիայում խոշոր արդիւնազորութիւն սկսելուց յետոյ, օտար երկրներում աշխատողներից շատերը կըշաապեն իրենց երկիրը վերագառնալ և Հէնց դրանք պիտի կազմեն սկսելիք դասակարգային կռւի avant garde-ը: Երկար տարիների ընթացքում Ամերիկայի և այլ երկրների գործարաններում աշխատած լինելով, այդ բանուորները արդէն բաւականին կրթւել ու վարժւել են շահագործող դասակարգի դէմ կռւելու միջոցներին, ուստի պէտք է յուսալ, որ դրանց շնորհիւ Փոքր Ասիայի բանուորական կազմակերպութիւնները շատ արագ կըզարգանան ու երկար չեն խաբխափի իրենց տակտիկան ու կռւելու միջոցները որոշելու մէջ:

Իսկ այդ հանգամանքը ահագին նշանակութիւն ունի թէ ներկայի մէջ բանուոր դասակարգի վիճակը թեթեւացնելու և թէ գալիք «մարդկային երանութիւնը» փութացնելու համար:

Այն, փշոտ, շատ փշոտ ու տառապանքներով լի է «մարդկային երանութեանը» հասնելու ճանապարհը, այն երանութեան, երբ մարդիկ հաւատարմապէս պիտի վայելեն յառաջագիմութեան պտուղները. բայց, զժբախտութեամբ, այդ երջանիկ ժամանակներին հասնելու ուրիշ ճանապարհ չըկայ. մարդկային յառաջագիմութեան ընդհանուր բնաւորութիւնը այդպէս է ամեն տեղ:

Բոլոր ազգերն ու երկիրները վաղ թէ ուշ անպատճառ պիտի անցնեն այդ նոյն բովով. հետևապէս որչափ շուտ, այնքան լաւ: Հէնց այս տեսակէտով, կրկնում ենք, երկաթուղիներից ու նրանց միջոցով վարդացող կապիտալիզմից յառաջանալիք ժողովրդային թշուառութեանը, տանջանքներին ու տառապանքներին կատարելապէս զիտակից լինելով հանդերձ, մենք ուրախութեամբ և անհամբեր կերպով սպասում ենք, թէ երբ վերջապէս պիտի սկսեն Փոքր Ասիայում կառուցելիք եր-

կաթուղիների գործը: Յանուն աւելի ուշ գալիք ընդհանուր երջանկութեան ու բարօրութեան՝ արժէ կրել ներկայի մասնակի տառապանքները, նամանաւանդ որ այդ երկրի դժբախտ ժողովուրդը ներկայումս էլ արդէն տառապեալ է:



## ԲՈՎԱՆԳ ԱԿՈՒԹԻՒՆ

### Մ Ա Ս Ն Ա Թ Ա Ջ Ի Ն

երես

Խմբագրութեան կողմից . . . . .	3
Հ. Ղ. Մ. Սլիշանի նամակը (Ֆաբ-սիմիլէ) . . . . .	5
Յ. Յովհաննիսեան. — «Մենք գնում կ'ենք...» (բանաստեղծութիւն) . . . . .	9
Ա. Խասակեան. — Միբոյ երգը (արձ. բանաս.) . . . . .	10
Մ. Ժառուրեան. — Բանաստեղծութիւններ . . . . .	20
Վ. Փափազեան. — Աւետեաց երկրում . . . . .	23
Ա. Խասակեան. — «Ա՛խ մեր սիրտը...» (բան.) . . . . .	33
Ա. Անարոնեան. — Գարձը . . . . .	36
Յովհաննէս Թուֆանեան. — Պօէտն ու Մուգան (երգիծ. պօէմա) . . . . .	64
Վ. Բաշինջաղեան. — Բարերարներ . . . . .	81
Ա. Ժառուրեան. — Կալանաւորի օրագրից (բան.) . . . . .	101
Ս. Հախումեան. — Ընդհատուղ հեկեկանքներ . . . . .	103
Մրինգ. — «Ի՞նչ երգեմ» (բան.) . . . . .	117
Լ. Նազարեան. — Բեկորներ . . . . .	118
Վ. Պոռչեանց. — Հինգերորդ զինագլխի . . . . .	122
Յով. Տէր-Միրաբեան. — Անցած-գնացած օրերից . . . . .	145
Արշակ Զօւլանեան. — Արեւտի կ'ջեր . . . . .	170

երես

Գ. Զուրաբ. — Երագ . . . . .	172
Ռ. Պատկանեան. — Փռտուխին Աւագը (Նոր-Նախիջեւանի բարբառով) . . . . .	182
» Նոյնը գրական լեզուով . . . . .	198
Մ. Նալբանդեանց. — Մի նամակ . . . . .	215
Վ. Փափազեան. — Ըմբոստ երգեր . . . . .	218

### Մ Ա Ս Ն Ե Բ Կ Բ Ո Ր Գ

Հրաչեայ Աջառեան. — Հայոց ծագումը և նախապատմական շրջանը . . . . .	229
Վարդգէս Սուրենեանց. — Հայ ճարտարապետութեան տեղը գեղարվեստի պատմութեան մէջ . . . . .	236
Ե. Շահազիզ. — Հայոց վանքերը և նրանց զերը հայ կեանքում . . . . .	255
Կ. Բասմաջեան. — Զարթնաց եկեղեցոյ պեղումները . . . . .	303
Գ. Խատիսեան. — Հայոց լեզուն և նրա բարբառները . . . . .	306
Լ. Նազարեան. — Հայոց սովորութեան - իրաւունքի սուսմասիրութեան նշանակութիւնը և մեթօդը: . . . . .	322
Մ. Բերքերեան. — Սմբատ Զահ-Աղիզ (էտիւզ) . . . . .	334
Վ. Իւրիյ Վեսելովսկիյ. — Ըրեմտեան-Եւրոպայի ազդեցութիւնը ռուսահայ գրականութեան վրայ . . . . .	369
Գ. Վանցեան. — Մեր ստիլիստները և լեզուն . . . . .	391
Ռ. Խանազատեան. — Փոքր-Ասիան և շինելիք երկաթուղիները . . . . .	398

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Մի քանի աննշան սխալների հետ սպրդել են հետևեալ աչքի ընկնողները.

Երես 205 ներքևից 7-րդ տող. — հարդու, պիտի լինի մարդու:

> 234                   Մանօթութեան մէջ վարպետութեան, պի-  
տի լինի — վարդապետութեան:

> 315 ներքևից 5-րդ տող. — Hautversiedung — Lautversiedung

> 315           > 4-րդ տող. — տասը — տաղը: